ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ 2
DIMANCHE
2 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում) 1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·631 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.631

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

## Մեծն Մխիթար

«Լուսաշող աստղ մը, որ յանկարծ կը յայտնուի Հայոց երկնակամարը պատռող խաւարին մէջ, աւետելու համար վաղուան արշալոյսը՝ որուն հաւատաւոր ու յառաջապահ վկան է ինք», այսպէս կը սկսէր Բարգէն Գաւէդ, այն յօդուածագրքը զոր նուիրած էր Մխիթարի, անոր մահուան 200-ամեակին առթիւ:

Արդարեւ, Մխիթար, բացառիկ դէմք մըն է մեր պատմութեան մէջ, չափազանցուած չէ ըսել թէ հանճարեղ միտք մը, որքան ալ այս որակումները արժեզրկուած ըլլան մեր բառամթերքին մէջ, գործածուած ըլլալով արժանին, ու մանաւանդ չարժանին համար: Անգամ մը դոն, թող գործածուին ճիշդ տեղին, քանի որ ոչ ոք աւելի արժանի է անոնց քան մեծ Սեբաստացին, Մաշտոցէ մը ետք ու կոմիտասէ մը առաջ: Թէեւ, ինք, ինչպէս բոլոր ճշմարիտ մեծերը, պարզ եւ խոնարհ, հեռու էր նման ածականներ փնտռելէ եւ նոյնիսկ ինքն իրեն համար ըսած էր՝ «կոչեցեալն սրբոհայր»:

Աղբրագառնալ միայն այն հեռատեսութեան զոր ունեցաւ դեռ պատանի, 17-րդ դարուն, հիմնելով Մխիթարեան միաբանութիւն մը որ դարերու երկայնքին, անխոխրնելի աշխատանք մը պիտի տանէր ի սպաս Հայ մշակոյթին, իր Ջամչեաններով, Ալպերեաններով, Բագրատունիներով, Ալիշաններով, Զազիկեաններով եւ դեռ, մինչեւ երկի՝ Քիւպարեաններով, Ճեմճեմեաններով եւ Անանեաններով, արդէն իսկ չըշմեցուցիչ է:

Սեբաստիոյ Հողդար դիւղէն, ուր աշխարհ կուգար 1676-ին, մինչեւ Վենետիկ, ան թափառեցաւ երկրէ երկիր, հալածուեցաւ նաեւ հռոմէականացած նկատուած իր արամադրութիւններուն համար եւ այդ հալածանքն ալ, խորքին մէջ, բախտ մը եղաւ Մխիթարի ծրագրին եւ իսկական բարիք մը հայ մտքին համար:

Շատարչէ որ կը վկայէ անոր մահուան 200-ամեակին առթիւ. – «... Ո՞ւր հասած կ'ըլլար հայ մշակոյթը, եթէ Սեբաստացի Մխիթարը վենետիկ չհիմներ 1717-ին, խումբ մը աշակերտներով: Դառնութեամբ թօթափելով Պոլսոյ փոշին: Պիտի ունենայի՞նք այսքան մտաւոր գանձ ու վաստակ եւ ժառանգութիւն – մինչեւ անգամ գաղափար հայկական մշակոյթի հարստութեանց մասին – առանց Մխիթարեան միաբանութեան:

Համեստ վանական, Մխիթար կ'դնուեցաւ, կը գործէր տեսակ մը մարգարէական ներշնչումով: Իրրեւ նոր առաքեալ:

Հոգեւոր տանջարէն դուրս, մտքի տանջար մը կ'երազէր ան: Եւ առաջին հոգն եղաւ հարթել արդի աշխարհաբարի ճամբան: Իր Հայկազեան բառարանն ու էերականութիւնը մինչեւ այսօր ալ կը մնան թանկագին վաւերագիրներ, հոմ նիւթեր՝ լեզուի զարգացման ճամբուն վրայ: Աչքի եւ մտքի հիւթեր քամուեցան, երակներու արիւնը պաթպուեցաւ դեղնած, փոշոտած թուղթերու վրայ: Գիշերաջան տքնութիւններ եւ անխոնջ պրպտումներ՝ այս կամ այն վանքին, դիւանատան ցնուղեներուն մէջ, տաղտաւանի մը կամ ձեռագրի մը գաղտնիքները կորզելու համար»:

*
**

Դարերու եւ մանաւանդ տարիներու ընթացքին պայմանները փոխուեցան:

Դարերու եւ մանաւանդ տարիներու ընթացքին Միաբանութիւնը ունեցաւ բազմաթիւ վերիվայրումներ: Տագնապներ, մոռեսական եւ այլ: Վերջին չրջանին ալ, պարզուած պատկերը, դպրոցներու փակումով Փարիզէն Վենետիկ, ներքին յաւալի հարցերով, չի կրնար չմտահոգել անոնք որոնց համար Մխիթարեանները էին եւ պէտք է մինչ ըլլան յոյսի, լոյսի եւ հաւատոյ ճամբուն աղբիւր մը Սփիւռքի մէջ:

Այդ իսկ պատճառով, կ'ուզենք վանել յոռետեսութիւնը եւ մնալ այն հաստատ համոզումով որ անգամ մը եւս, Միաբանութիւնը պիտի յաջողի յաղթահարել իր բոլոր դժուարութիւնները ի փառս եւ ի սէր՝ Մեծն Մխիթարի:

«ՅԱՌԱՋ»

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

## ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ

Ա՛ւ այժմ, մեր ունեցած լրատուութեան աղբիւրը միայն Թրքական ըլլալով (Անատոլու գործակալութիւն), կ'արձագանգենք անհրաժեշտ վերապահութեամբ:

Ապրիլ 28 թուակիր իր հաղորդումով, Թրքական գործակալութիւնը կը տեղեկացնէ թէ, Ապրիլ 26-ին, Գարնըկի Հիմնարկի ընդունելութեան առեն խօսք առնելով ու նաեւ հարցումներու պատասխանելով, Ռ. Քոչարեան ըսած է որ Հայաստան կը ջանայ «հալեցնել սառը» որ կայ Երեւանի եւ Անգարայի միջեւ: Փոքր եկեղեցական արարողութիւն մը կայ արդէն երկու երկիրներու միջեւ, բայց չի յառաջանար: Անգարա կը մերժէ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել «Ապրիլեան պատկանող Ղարաբաղի» պատճառով: Անգարա կը կրկնէ որ դիրքը չի փոխեր, ցորչափ Հայաստան կը մնայ Ադրբեջանի հողին վրայ: Քոչարեան կ'առարկէ որ չըջանի հարցերու ընթացքը պատճառը Երեւանի եւ Անգարայի միջեւ եկեղեցութեան չգոյութիւնն է: Աւելցուցած է թէ այդ է պատճառը ռուսական խարխխներուն Հայաստան: Ի տարբերութիւն իր նախորդ յայտարարութեանց, այս անգամ, Քոչարեան չէ ակնարկած 1915-ի ցեղասպանութեան: Հայաստան տրամադիր է առանց նախապայմանի դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու:

Թրքական այս լրատուութիւնը ունի նաեւ Քոչարեանին վերագրուած վերջին տող մը զոր կարելի է առնուազն անտեղի նկատել եւ կը խորհինք որ բոլորովին ընդունելի չէ: Արդարեւ, հոն կ'ըսուի.– «Ապահովութիւն տուաւ (Քոչարեան) որ Հայաստան հողային պահանջ չունի Թուրքիայէն»:

Անհրաժեշտ է որ Երեւան հարկ եղած լուսաբանութիւնները տայ, նախագահ Քոչարեանի քուն եւ հարազատ յայտարարութիւններուն մասին, որպէսզի մտքերը չպղտորին Թրքարարոյ աղբիւրներով:

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Ապրիլ 29 / 30)

### ՍԵՒԱՆԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ

Ապրիլ 27-ին Երեւանի Թէքէեան Մշակոյթի կեդրոնին մէջ դիտաժողով մը դումարուած է, նիւթ ունենալով Սեւանի ծանրօրէն մտահոգիչ կացութիւնը: Ծանօթ է որ լիճին կը սպառնայ ծանծաղումի վտանգ, քանի որ վերջին տասնամեակներուն մակերեսը մօտ 300 քառ. քմ., իսկ խորութիւնը դրեթէ 20 մեթր նուազած է: Բնապահպանութեան փոխ – նախարար Ս. Պապեան ըսած է թէ այս տարի ծրագրուած է 198 միլիոն խոր· մեթր ջուր հոսեցնել լիճէն եւ եթէ ատիկա աւելի ըլլայ գեռերէն եւ Արփա-Սեւանէն լիճ հոսող ջուրի քանակէն, մակարդակը կրկին կը ցածնայ: Եւ եթէ ձկնորսութիւնն ալ ներկայի ձեւով չարունակուի, քանի մը տարի ետք սիգը եւ անոր ցեղակիցները տեղ կը զտնեն կարմիր գիրքին մէջ:

Նոյն նախարարութեան ջուրի պաշարներու վարչութենէն Վ. Նարիմանեան ըսած է թէ մասնագէտներու կողմէ մը չհակուած Սեւանի բնապահական հաւասարակշռութիւնը վերականգնելու ծրագիրը կը մնայ թուղթի վրայ, քանի որ կիրարկելու անհրաժեշտ դումարներ չըկան: Կատարուած հաշիւներով հարիւր միլիոնաւոր ամերիկեան տոլար անհրաժեշտ է այդ նպատակին համար ու նախարարութիւնը օգնութեան խնդրանքով դիմած է տարբեր պետութիւններու եւ կազմակերպութիւններու:

*
**

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՕԴԱՆԱԻՐ

Ապրիլ 28-ին Երեւան էջք կատարած է ԱՄՆ-ու մարդասիրական բժշկական օգնութեան օդանաւը, 2,2 միլիոն տոլար արժողութեամբ բեռով: Օդանաւը դիմաւորած է Առողջապահութեան նախարար Հայկ Նիկողոսեան:

*
**

### ԷՍՏՈՆԻԱ Կ'ԱՊՐԻՆ 2000 ՀԱՅԵՐ

Ընդհանուր առումով, Պալթեան Հանրապետութիւններուն մէջ կ'ապրին չուրջ 7000 Հայեր որոնցմէ 2000-ը Էստոնիա: Տալլինի մէջ կը գործէ «Մխիթեռնակ» հայկական ճեմնասփիւռը, կան եկեղեցական դպրոց, հայկ· ակումբ, երգի-պարի հաւմոյթ: Համայնքին դեկավար դէմքն է Գարիկ Իկնայեան: Ներկայիս նորոգման ընթացքին մէջ է Ս. Ըանի եկեղեցին, որ 99 տարուան համար հայ համայնքին տրամադրուած է: Համայնքը կը նախատեսէ այս տարի կազմակերպել հայ մշակոյթի փառատօն:

ԵՒՐՈՄԱՀԱԽԻԱ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՔ ԿԸ ՓՆՏՌՒՒԻ

### ՌՈՒՄԲԵՐ ՊԵԼԿՐԱՏԻ ԲՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ապրիլ 30-է առաւօտեան 3-ին, երկու հրթիռներ ինկած են Պելկրատի փնակելի թաղամասի մը վրայ, քարուքանդ ընելով քանի մը տնակներ եւ ճաշարան մը, ուր այդ ժամուն մարդ չկար: Առաջին լուրերու համաձայն վիրաւորներ կան: Ռումբակոծութեան նպատակն էր Սպայակոյտի կեդրոնատարածքը (խորհրդանիշ թիրախ մը եւս) եւ հոն ալ 3 մեռեալ կայ, մէկը պահակ ոստիկանը, երկու հոգի ալ իրենց կառքին մէջ որ կեցած էր կարմիր ազդանշանի մը: Այս ռմբակոծութեան հրթիռներէն երկուքն են որոնք սխալմամբ բնակարաններու վրայ ինկած են: Ռումբերը չէին բաւեր, Պելկրատ նաեւ երկրաշարժի մըն ալ զոհ եղած է նոյն գիշերը, 5·5 Ռիխթերի վրայ, կը թուի որ մեծ վնասներ չկան:

Մինչ այս ռումբերը կը չարունակեն տեղալ, Զերնոմիրտին կը ջանայ քաղաքական ելք մը գտնել եւ այդ առընչութեամբ, Ապրիլ 29-ին եւ 30-ին Պոն, Հռոմ, ապա՝ Պելկրատ գնաց: ՕԹԱՆ միշտ կ'ուզէ պարտադրել բազմազգեան ուժերու ներկայութիւնը Քոսովօ ինչ որ Միլոսեւիչ բացարձակապէս կը մերժէ: Այս էր կացութիւնը Ապրիլ 30-ին եւ Զերնոմիրտին յուսահատ չէր: Նոյն օրը, Ալպանիա եւ Մակեդոնիա կ'երթար Լ. Ժոսփէն տեղւոյն վրայ քննելու համար կացութիւնը, այցելելու Ֆրանսական ուժերուն (Մակեդոնիա) եւ տեղեկանալու դաղթականներու վիճակին: Այս դաղթականները կը չարունակեն սարսափելի նկարագրութիւններ ընել Քոսովոյի մէջ գործուած չարդերուն մասին, բայց, ինչպէս կարմիր Խաչի ներկայացուցիչներն ալ կը վկայեն, ոչինչ կարելի է ստուգել:

Քոսովօ 1·9 միլիոն բնակիչ ունէր, որու 1·8-ը՝ ալպանացի: Ցարդ 730 հազար կը նկատուի դաղթականներու թիւը:

*
**

Մարտ 24-էն ցայսօր, 15 Հայեր Պելկրատահն Հայաստան վերադարձած են: Այս առընչութեամբ օժանդակութիւնը վայելած են Ռուսաստանի դեսպանատան:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՑԻ ԵՐԿԱԹՈՒՂԻի դործադուլը որ սկսած էր Ապրիլ 28-ին, աւելի ծանրացաւ Ապրիլ 30-ին: Ամէնէն աւելի էՕ-Լ-էՕ-ի եւ արուարձաններու դիծերն են որ կը տուժեն, մասամբ ալ մեծ դիծերը: Ինքնավար Դաշնակցութիւնն է որ սկսաւ չարժումը որու միացան այլ ճիւղեր: Պատճառը 35 ժամերու վերակազմակերպութիւնն է, որմէ դժգոհ են կարգ մը ուղեվարներ:

## «ԷՕԶԿԻԻՐ ՓՈԼԻԹԻՔԱ»ՅԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԻՎ ԹԵՐՆՈՆԻ ՀԵՏ

Թրքական «Էօզկիւր Փոլիթիքա» թերթը, Ապրիլ 29-ի իր թիւին մէջ ամբողջ էջի մը վրայ հարցազրոյց մը ունի տոքթոր Իվ Թերնոնի հետ: Թերթին թղթակիցը Նուրայ Պայընտըր պատմագէտին հետ տեսակցած է Փարիզի իր բնակարանին մէջ: Արծարծուած են դարուս առաջին՝ Հայկական ցեղասպանութեան եւ վերջիններուն հասարակաց դիծերը, զորս Իվ Թերնոն բացի գործածուած մեթոտներու քանի մը տարբերութիւններէ, չատ նման կը նկատէ, քրտական հարցին ներկան, ինչպէս նաեւ հայ եւ թուրք յարաբերութիւնները, որոնց համար պատմագէտը կ'ըսէ թէ դժուար է առողջ հմմտերու վրայ դնել որքան ատեն որ իրականութիւնը ճանչնալու հարց մը կայ եւ այլն, եւայլն: Ամէն պարագայի մէջ թերթին տողերուն ճշդրտութեան հարկ է վերապահութեամբ մօտենալ, քանի որ «լաւատեղեակ» լրագրողը «Հայկական ծագում» վերագրած է Տոքթոր Իվ Թերնոնի, չվարանելով զայն գործածելու նաեւ խորագիրին մէջ:

«Խոնարհի սրտով էեզի կը նուիրեմ, ո՛վ Հայ ժողովուրդ, իմ երկար տարիներու աշխատանքիս պտուղը, իբր սիրոյ ձօն: Սրտանց կը տեսնեմ իմ վաստակս էեզի պարգեւել եւ բոլոր անոնց՝ որ պայմաններուդ մէջ կը գտնուին· որովհետեւ ինչ որ իմս է՝ անիկա էեզի կը պատկանի, եւ ինչ որ էուկդ է՝ անիկա իմս ալ է: Անոր համար՝ ինծի պարծանք է էեզի ծառայել, մանաւանդ քէ ասիկա լրումն է իմ եւ իմիններուս պաշտօնին· որովհետեւ սկիզբէն ի վեր, ինչպէս ես, այս Միաբանութիւնն ալ սահմանուած է Հայ ժողովուրդի մշակութային ծառայութեան եւ Աստուծոյ փառին»:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ· ՍԵԲԱՍՏԱՑԻ

Եղրափակում «Բառգիրք Հայկազեան լեզուի» յառաջաբանին, Վենետիկ 1749

## ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ ՄԱՀՈՒԱՆ 250-ԱՄԵԱԿ

Մխիթար աբբահօր մահուան 250-ամեակին առթիւ (1749, Ապրիլ 27) «Յառաջ»ի այսօրուան թիւը ամբողջութեամբ նուիրած է իր յիշատակին:

## ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

Լիոնէն, Ապրիլ 24-ին ճամբայ ելած 200 մասնակցողներով, բողոքի երթը կը չարունակուի, ամէն օր 25-էն 40 հոգիով: Քալողներուն կ'ընկերանան կառքեր որոնց վրայ դեռեդուած են մեծ պաստառներ՝ «Հայերու մեծ երթը» արձանագրութեամբ: Կան բոլոր տարիքի կիներ, մանուկներ եւ մանաւանդ երիտասարդներ: Ոմանք մէկ հանգրուանով կը զոհանան, բայց Անրի (Կարապետեան), Ռոպէր (Ալէի) եւ Վաչէ (Ներկիզ) 19 հանգրուանները պիտի կատարեն մինչեւ Փարիզ: Ճաշերը կը պատրաստեն Կապոյտ Խաչի Տէսթինի, Լիոնի, Վիէնի մասնաճիւղերու կիները եւ Գոհարիկ Տօնապետեան (Տէսթինի Մշակոյթի Տան խոհարարուհին): Ապահովութեան ալ կը հսկեն Պօղոս Աւետեան եւ իր խումբը:

# ՊԵՏՔ ՊԱՀԱՆՋՎԻ ԴՈՒՀՈՒՆ ՄԱՍԻՆ

(ՆԱՀԱԿ 27, 1749 – ՆԱՀԱԿ 27, 1999)

## 250-ՍՏԵՂՆ

ԴՈՎՀՈՒՆ ՄԱՍԻՆ

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Ինչպես հայտնի է, Նահակ 27-ին Դովհունի Մասնավոր դպրոցը կդառնա 250 տարեկան։ Ուրախալի է, որ այդ առիթով Դովհունի մասին հրատարակվելու է հատուկ գիրք։ Ուրախալի է նաև այն, որ գրքի հեղինակը Դովհունի շրջանավարտ, ուսուցիչ Հ. Կարապետ Սահակյանն է։ Ստորև ներկայացնում ենք գրքի հատվածներ։

Դովհունի դպրոցը հիմնադրվել է 1749 թվականին։ Հիմնադիրը Դովհուն Մասնավոր Մանուկյանն է։ Նա ծնվել է 1720 թվականին Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Ծաղկավան գյուղում։ Ծնողները նրան ուղարկել են Ջրաբերդի վարդապետարան։ Այնտեղ նա ստացել է հայոց լեզվի, քերականության, հայոց պատմության, աշխարհագրության, հաշվի, աստվածաբանության, ինչպես նաև հունարենի և լատիներենի խոր գիտելիքներ։ Ավարտելով վարդապետարանը՝ նա ծառայել է Ջրաբերդի Սուրբ Աստվածածին եկեղեցում։ Ժամանակի ընթացքում նրա մոտ հասունացել է մտքում ծրագրել հիմնել մի դպրոց, որտեղ կարելի լինի ստանալ ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ գիտելիքներ։ Նա ցանկանում էր, որ դպրոցում ուսանողները ստանան ոչ միայն տեսական, այլև գործնական գիտելիքներ։ Դրա համար նա որոշել է դպրոցը հիմնել Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Դովհուն գյուղում, որտեղ նրա ընտանիքն ուներ մեծ կալվածքներ։

Դպրոցի շենքի կառուցման համար Դովհուն Մասնավոր Մանուկյանը գնել է գյուղի արևելյան կողմում գտնվող մի մեծ այգի։ Այգու մեջ կար մի հին տուն, որը նա վերանորոգել է և դարձրել դպրոցի առաջին շենքը։ Դպրոցի առաջին տարում սովորել են 37 աշակերտներ, որոնք հիմնականում եղել են հարևան գյուղերի հոգևորականների զավակներ։ Դպրոցի առաջին ուսուցիչը հենց Դովհուն Մասնավոր Մանուկյանն էր։ Նա դասավանդել է աստվածաբանություն, հայոց լեզու, պատմություն և աշխարհագրություն։

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ ուսումը տևում էր 5 տարի։ Առաջին տարում սովորում էին միայն տղաները, իսկ հետագայում սկսեցին ընդունել նաև աղջիկներ։ Դասերը սկսվում էին առավոտյան ժամը 8-ին և ավարտվում կեսօրին։ Կեսօրից հետո աշակերտները զբաղվում էին տնային աշխատանքներով և գյուղատնտեսական աշխատանքներով։ Դպրոցն ուներ մեծ այգի, որտեղ սովորողները սովորում էին պտղատու ծառեր տնկել և խնամել։

Դպրոցի առաջին շրջանավարտներից մեկը եղել է Հովհաննես Ալավերդյանը, որը հետագայում դարձել է հայտնի գրող և հրապարակախոս։ Նա իր հուշերում գրել է դպրոցի մասին որպես իր կյանքի ամենաերջանիկ տարիների մասին։

Դովհունի դպրոցը գոյատևել է մինչև 1920 թվականը։ Այդ տարի Ղարաբաղում հաստատվեց խորհրդային կարգեր, և դպրոցը փակվեց։ Սակայն նրա ավանդույթները շարունակեցին ապրել շրջանավարտների հիշողության մեջ։

Դպրոցի հիմնադրման 250-ամյակի առիթով Դովհունի շրջանավարտների միությունը որոշել է կազմակերպել հոբելյանական միջոցառումներ։ Նախատեսվում է կազմակերպել գիտաժողով, ցուցահանդես և հրատարակել հուշագիրք։ Միությունը դիմել է նաև կառավարությանը՝ խնդրելով հատկացնել միջոցներ դպրոցի շենքի վերանորոգման համար։

Դպրոցի շրջանավարտների միության նախագահ Արամ Մանուկյանը հայտարարել է. «Մենք պարտավոր ենք պահպանել մեր նախնիների հիշատակը և փոխանցել այն մեր երեխաներին։ Դովհունի դպրոցը մեր ընդհանուր հպարտությունն է, և մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի նրա անունը չմոռացվի»։

Հոբելյանական միջոցառումների ծրագրի համաձայն՝ նախատեսվում է Դովհունի դպրոցի նախկին շենքում բացել թանգարան, որտեղ կցուցադրվեն հին լուսանկարներ, ձեռագրեր և դպրոցի կյանքին վերաբերող այլ նյութեր։ Թանգարանի բացումը նախատեսված է 2000 թվականի հունվարի 1-ին։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարությունները կտևեն մեկ շաբաթ՝ 2000 թվականի հունվարի 1-ից մինչև 7-ը։ Տոնակատարության ընթացքում կանցկացվեն մրցումներ, խաղեր և զանազան զվարճալի միջոցառումներ։ Ամենալավ աշակերտները կպարգևատրվեն հուշանվերներով։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարությանը հրավիրված են բոլոր նախկին շրջանավարտները, ուսուցիչները և աշակերտները։ Կազմակերպիչները հույս ունեն, որ տոնակատարությանը կմասնակցեն ավելի քան 500 հոգի։

Դովհունի դպրոցի 250-ամյակի առիթով հրատարակվելիք հուշագրքի համար նյութեր հավաքելու նպատակով Դովհունի շրջանավարտների միությունը դիմել է նաև «Ազգ» օրաթերթին։ Խնդրում ենք բոլոր նրանց, ովքեր ունեն հին լուսանկարներ, ձեռագրեր կամ այլ նյութեր Դովհունի դպրոցի մասին, դիմել «Ազգ»։ Մենք կհրատարակենք ձեր նյութերը։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարության կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Արամ Մանուկյանը հայտարարել է, որ հանձնաժողովը դիմել է նաև Դովհունի դպրոցի նախկին սաներին՝ խնդրելով նրանց ներդրում կատարել դպրոցի շենքի վերանորոգման համար։ Մինչև հիմա ստացվել է 2 մլն դրամ։ Ակնկալվում է, որ մինչև տոնակատարության սկսվելը կհավաքվի ևս 3 մլն դրամ։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարության կազմակերպչական հանձնաժողովի անդամ Ռուբեն Հակոբյանը հայտարարել է, որ հանձնաժողովը ծրագրում է կազմակերպել նաև մարզական մրցումներ, որոնց մասնակցելու են Դովհունի դպրոցի շրջանավարտների ֆուտբոլային, վոլեյբոլային և բասկետբոլային թիմերը։ Մրցումները կանցկացվեն Դովհունի մարզադաշտում։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարության կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Արամ Մանուկյանը հայտարարել է, որ հանձնաժողովը դիմել է նաև Դովհունի դպրոցի նախկին սաներին՝ խնդրելով նրանց ներդրում կատարել դպրոցի շենքի վերանորոգման համար։ Մինչև հիմա ստացվել է 2 մլն դրամ։ Ակնկալվում է, որ մինչև տոնակատարության սկսվելը կհավաքվի ևս 3 մլն դրամ։

Դովհունի դպրոցի 250-ամյակի տոնակատարության կազմակերպչական հանձնաժողովի անդամ Ռուբեն Հակոբյանը հայտարարել է, որ հանձնաժողովը ծրագրում է կազմակերպել նաև մարզական մրցումներ, որոնց մասնակցելու են Դովհունի դպրոցի շրջանավարտների ֆուտբոլային, վոլեյբոլային և բասկետբոլային թիմերը։ Մրցումները կանցկացվեն Դովհունի մարզադաշտում։

Դովհունի դպրոցի 250-ամյակի առիթով հրատարակվելիք հուշագրքի համար նյութեր հավաքելու նպատակով Դովհունի շրջանավարտների միությունը դիմել է նաև «Ազգ» օրաթերթին։ Խնդրում ենք բոլոր նրանց, ովքեր ունեն հին լուսանկարներ, ձեռագրեր կամ այլ նյութեր Դովհունի դպրոցի մասին, դիմել «Ազգ»։ Մենք կհրատարակենք ձեր նյութերը։

Ցավոք սրտի, բոլոր ակումբները չեն, որ կարող են իրենց անդամներին ապահովել ֆուտբոլի գնդակներով։ Ահա թե ինչու ֆուտբոլային մրցումները կանցկացվեն ոչ թե գնդակով, այլ ... խնձորով։ Այո՛, հենց խնձորով։ Ինչպես հայտնի է, Դովհունի դպրոցի շրջանավարտների միության

Գոյն է։

Մխիթար Մխիթարյանն, աշքերու հետաքրքրական կիսաբաց խոռոչին մէջ ներդրած խառատած ապակիներով, Մխիթարեան Միաբանութեան հոգին է։ Ինչպէ՞ս կրնայ մարդ ապրիլ, ուրիշ բան չընել, միայն ապակի խառատել եւ տեսնել թէ ինչպէս կ՚ընդարձակուի, կը նեղանայ, կը նուազի, կ՚աճի, կը մեծնայ, կը փոքրանայ, կը ծռի, կը ներկուի, կը ներկայանայ, կը ներկայացնէ, կը ներկայաց

# ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ

*Որպէսզի Միօրեայ Վարժարանը միշտ կանգուն մնայ, Տէսինի Արշակ Զամալեան մասնաճիւղը միացած Սէն – Մօրիս Տը Պէնոյի Անահիտ մասնաճիւղին, հովանաւորութեամբ՝*

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆԻ

*Կը կազմակերպեն պարանոցիկ երեկոյ մը, «Արմենիա» նաւագախտմբին ընկերակցութեամբ Շաբաթ, Մայիս 8, երեկոյեան ժամը 19–ին, Սէն – Մօրիս – Տը–Պէնոյի քաղաքապետարանի սրահին մէջ։*

*Հայկական չէն մթնոլորտն ու համեղ ազանդերները կը սպասեն ձեզի։*

*Տեղերը սահմանափակ ըլլալով նախընտրելի է ապահովել ձեր սեղանները, հեռաձայնելով՝*

04 – 78 – 49 – 28 – 87

*կամ՝*

04 – 78 – 55 – 56 – 83

*Թիւերուն։*

*Մուտքը ազատ է։*

UN AN APRES L'ASSEMBLEE NATIONALE
LE SENAT DOIT RECONNAITRE
LE GENOCIDE DU PEUPLE ARMENIEN

# MARCHE
## LYON - PARIS

MARCHE-RELAIS

**Départ: 24 Avril, 16h, Place Bellecour à Lyon;**

**Arrivée : 12 Mai, Palais du Luxembourg, Sénat, Paris.**

Vous pouvez participer à une ou plusieurs étapes.

Renseignements et inscriptions :

**04. 78. 49. 42. 97**

Soyez solidaires. Adressez vos dons à :

CDCA Sénat

**Comité de Commémoration**
**Rhône-Alpes**
**CDCA**
**Héritage**

*
**

PLAN DES ETAPES

05/05 Vermenton → Auxerre (25 kms)
06/05 Auxerre → Joigny (29 kms)
07/05 Joigny → Sens (31 kms)
08/05 Sens → Montereau-Fault-Yonne (32,5 kms)
09/05 Montereau-Fault-Yonne → Melun (30 kms)
10/05 Melun → Evry (25,5 kms)
11/05 Evry → Alfortville (28,5 kms)
12/05 Alfortville → Paris Sénat (12 kms)

# ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ
# ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

ԱՌԹԻԻ

*եւ*

*Նախատօնակ*
Սրբոց Կուսանացն
Հռիփսիմեանց եւ Գայիանեանց

*կազմակերպութեամբ՝*
*Փարիզի*
*Ս. Յով. – Մկրտիչ Մայր Տաճարի*
*Տիկնանց Ճանճախումբին*

*Կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին*

*Առաջնորդարանի*
*«Նուրհան Թրէնկեան» սրահին մէջ*
15, rue Jean-Goujon— Paris 8e

*Մասնակցութեան՝*
Participation aux frais

Pour tous renseignements appeler :
*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*
01 – 43 _ 59 _ 67 _ 03
01 _ 42 _ 59 _ 23 – 33
*կամ՝*
01 – 46 _ 62 _ 01 _ 29

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Շաբլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուիրատուութիւնները։*

«Թերթիկ»

*Տիկին Արշալոյս Ապաչեան 100 Ֆր., Տիկին Սօնա Տօնէլեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Յարութիւնեան 250 Ֆր., Տիկին Ազատի Պարոնեան 100 Ֆր., Տիկին Վարդագարմեան 300 Ֆր.։*

Դպրոց

*Տէր եւ Տիկին Վարուժան Ասատուրեան 100 Ֆր., Տէր եւ Տիկին Հրայր Հրաչեան 500 Ֆր., Տէր եւ Տիկին Արա Արտաշէսեան 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Յակոբ Գասուքճեան 400 Ֆր., Տիկին Սեդա Լըմկէ 500 Ֆր., Տէր եւ Տիկին Մեհեան Նազարեան 250 Ֆր., Տիկին Մարի Թօփալեան 200 Ֆր.։*

Եկեղեցւոյ պայծառութեան

*Օրդ. Անդրէկ Էքսէրեան, Տիկին Պէթրիս Տատուրեան, Տիկին Ալիս Գարագեան 500–ական Ֆրանք։*

Ի յիշատակ

*Էօժէնի Սէհեանի մահուան քառասունքին առթիվ. – Տէր եւ Տիկին Գրիգոր Փափազեան 250 Ֆր., Տիկին Նոէլ Տրէնիօ 200 Ֆր., Տիկին Շնորհիկ Փափազեան 100 Ֆր. (Դպրոցին)։*

# Inscriptions à l'Ecole «TARKMANTCHATZ» d'Issy-les-Moulineaux

Les inscriptions pour l'année scolaire 1999-2000 ont commencé à l'école bilingue TARKMANTCHATZ d'Issy-les-Mlx.

**La MATERNELLE :**

— La maternelle petite section acceptera des enfants de 3 ans (nés en 1996). Des enfants de deux ans pourront être acceptés dans cette section, dans la limite des places disponibles.
— Les enfants de 4 ans (nés en 1995) seront dans la maternelle moyenne section.
— Les enfants de 5 ans (nés en 1994) seront dans la maternelle grande section.

**Le C.P.**

Les enfants nés en 1993 seront accueillis dans cette classe. Parallèlement à l'enseignement de l'arménien, le programme scolaire du C.P. établi par le Ministère de l'Education Nationale sera appliqué, ainsi qu'une heure hebdomadaire d'initiation à l'anglais.

**Le C.E.1 ouvrira ses portes en Septembre.** Les enfants nés en 1992 seront placés dans cette classe. Hormis l'enseignement de l'arménien, le programme scolaire du C.E.1 établi par le Ministère de l'Education Nationale sera appliqué, ainsi qu'une heure hebdomadaire d'anglais. De plus, des cours d'initiation à l'informatique sont envisagés.

**Les parents sont invités à inscrire leurs enfants jusqu'au 15 Mai.**

Prendre R.V. avec la Directirce,
Mme HILDA KALFAYAN-PANOSSIAN,
en téléphonant au **01 46 45 60 55**, entre 10h et 16h.


# EREVAN

**2 vols directs hebdomadaires**
**en Airbus A310**
**de la compagnie**
**ARMENIAN AIRLINES**

**Départ Paris 2690 F**

**Départ Province 2800 F**

Renseignements & inscriptions :

SEVAN VOYAGES
**48, Cours de la Liberté — 69003 LYON**
**Tél. : 04. 78. 60. 13. 66;**
**Fax : 04. 78. 60. 92. 26.**

SABERATOURS
**19, rue Saint-Roch — 75001 PARIS**
**Tél. : 01. 42. 96. 10. 10;**
**Fax : 01. 42. 96. 18. 77**



Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935



**TISSUS DES URSULES**
**Tout le décor de la maison**
**Siège social 7 Place des Ursules**
**Saint-Etienne 04 77 33 71 37**

**SAINT-ETIENNE**
**SAINT-CHAMOND**
**CANNES LA BOCCA**
**VILLENEUVE-LOUBET**



UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE

Venez comme Franck découvrir l'euro à l'UGAB
abcdeuro...



*Conférence sur l'euro*
*par Thierry Lauret*
*Directeur financier de l'Union des Banques Arabes et Françaises*

mercredi 5 mai 1999 à 20h30

Centre Culturel Alex Manoogian
118, rue de Courcelles 75017 Paris
(métro Courcelles)
Tél : 01 42 27 12 26 - 01 45 20 03 18
participation aux frais - membre : 10 fr - non membre : 20 fr



# L'ASSOCIATION MACHTOTZ
POUR LA DEFENSE DE LA LANGUE ARMENIENNE
organise un

## SEJOUR LINGUISTIQUE ARMENIEN
## BEYROUTH (Liban) - du 1er au 19 Juillet

**POUR LES JEUNES DE 8 A 16 ANS**
sous le patronage du Rév. Père KEGHAM KHATCHERIAN
*Prélat des Arméniens du Liban*

Les participants seront hébergés individuellement par des familles sélectionnées, dont ils partageront la vie et avec lesquelles ils communiqueront en langue arménienne.

Des cours d'arménien seront organisés à raison de 30 heures par semaine pour les **débutants francophones** par Mme Hilda Kalfayan-Panossian, avec sa **méthode audiovisuelle** et pour les autres niveaux, par des professeurs expérimentés.

L'encadrement et l'assistance aux jeunes participants seront assurés par les responsables de l'Association Machtotz.

Sont prévues plusieurs excursions comme Baalbek, Byblos, Saïda, Aïnjar, Zemmar, Antélias, la visite des musées et des institutions arméniennes, ainsi que des baignades à la mer et du sport, suivant possibilités

**FRAIS DE PARTICIPATION : 5950 F. par personne comprenant le transport aérien, l'hébergement en pension complète, les cours et les excursions.**

**Renseignements et inscriptions (avant le 31 mai) :**
ASSOCIATION MACHTOTZ
**8, rue Lamennais, 92370 CHAVILLE — Tél. : 01 47 50 97 51.**



# COLONIE DE VACANCES

organisée par l'Association « SIPAN »

pour les enfants de 6 à 12 ans

DU 2 AU 22 JUILLET

Frais de séjour : 2.600 + frais de voyage

*Les dossiers d'inscription peuvent être retirés dans les paroisses catholiques arméniennes*
ou demandés au Secrétariat de l'*Association SIPAN*
10bis, rue Thouin — 75005 PARIS

Tél.: 01 40 51 11 90 (du lundi au vendredi de 14h à 19h).

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 4
MARDI
4 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅՐԱՏԱՊԱՏԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում) 1·350 Ֆ· (շաբաթաթերթի առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·632 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.632

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

## «ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԱԴԱՐՁԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ»

Այսպէս խորագրուած էր համաժողովը որ դումարուեցաւ Ապրիլ 29 – 30–ին Պրիւքսէլի Եւրոպական Խորհրդարանին մէջ, Պելժիոյ Հայկական Կոմիտէին նախաձեռնութեամբ: Ան նախորդեց Եւրոպայի հայկական զաղութներու ներկայացուցչական մարմիններու առաջին ֆորումին որ տեղի ունեցաւ յաջորդ երկու օրերուն:

Շուրջ երեք տասնեակ երկիրէ – Շուէյտէն կիպրոս, Գանատայէն Ալպանիա, նախկին խորհրդային հանրապետութիւններէն, Հայաստանէն, Ղարաբաղէն – աւելի քան երեք հարիւր հոգի մասնակցեցաւ, խօսուն ապացոյցը տալով նման ձեռնարկի մը նկատմամբ անուղղակի մեծ անհամբերութեան: Մանաւանդ որ մասնակիցներուն մէջ լուրջ համեմատութիւն կը ներկայնէր երիտասարդ սերունդը:

Շատ ամփոփ սահմանումով մը՝ երկրորդ զարաւերջի նոր իրաղրութեան մէջ հայութիւնը դիտելու եւ ներկայի առեւթներով յաջորդ հարիւրամեակին անոր ճիշդ ընթացք գծելու նպատակը արտայայտեց: Ո՛ւր էինք, ո՛ւր կը գտնուինք եւ ի՛նչ ճամբով: Համաժողովին նախաձեռնութեան մեկնակէտ եղած էին, այս հարցականներուն հետ, ամէն առիթով ու նաեւ անառիթ կրկնուած՝ միութեան, միասնութեան լոզունգը իրականութեան վերածելու լուրջ փափաքը եւ կանքը· ինչպէս՝ հետեւողական ըլլալու տրամադրութիւն մը:

Ցեղասպանութիւն, մշակոյթ, Սփիւռք, Հայաստան, գլխաւոր թեմաները արդէն կը գծէին ծրագրելի աշխատանքին ու հետաքրքրութեանց չրջանակը: Հայ եւ ոչ հայ երեսունի չափ մասնակիցները իրենց ելոյթներով չօչափեցին այս թեմաներուն զանազան երեսակները, իսկ լսարանէն ուղղուած հարցումները, տրուած լրացուցիչ տեղեկութիւնները, օգնեցին ներկայի իրողութիւնները լոյսի բերելու:

Նոր հարիւրամեակին փոխանցուած գործ պիտի ըլլար ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու աշխատանքը· այնոր կը յաջորդէր Սփիւռքի մանաւանդ նոր կազմաւորուող գաղութներուն մէջ դպրոցական մարզին կարգաւորումը, հայերէնի ուսուցման գլխաւոր մտահոգութեամբ: Եւ վերջապէս՝ Սփիւռք – Հայաստան կապերը այլեւս առողջ հիմերու վրայ դնելու անհրաժեշտութիւնը հայութեան օրակարգին գլխաւոր երրորդութեան մաս կը կազմէր:

Նշելի առաջին տուեալը՝ այն է որ համազգային նման մտահոգութիւններէ թելադրուած նախաքայլ մը առնուած է ու հանդիպումի գեհին մը տրամադրուած, իրարմէ չատ տարբեր հորիզոններէ հասած ներկայացուցիչներու: Աչքառկարիր հայութեան ապրած չուրջ երեսուն երկրի հասցէացանկ մը հաղորդակցութեան բաւական հարուստ ցանց մըն ալ կը նշանակէ բոլոր անոնց համար որոնք միասնութիւնը, գործակցութիւնը չարունակելու տրամադրութիւն ցոյց պիտի տան:

Երկրորդ նշելի պարագան վայրին ընտրութիւնն է որ Եւրոպայի Միութեան հոլովոյթին զուգահեռ դիրքի վրայ կը գտնուի հայութեան իմ. դարու ընթացքը, նոյն ատեն չեչաեւով անոր արեւմտամէտ նկարագիրը: Արհամարհելի չափով չէր պելժիոյ գաղութին կազմակերպչական մարդին մէջ արձանագրածն ալ, մանաւանդ երբ նկատի առնուի այդ հատուածին փոքր թիւը:

Կային անշուշտ սրբագրութեան կարօտ մարդեր. ամէնէն ցաւ պատճառողը զլխաւոր հասարակաց ըլլալու կոչուած լեզուականն էր: Ճիշդ է որ ելոյթներու, նաեւ սրահին լեզուն չատ յաճախ հայերէնը եղաւ· բայց ինչ կը վերաբերի պատրաստուած թղթածրարին հայերէն բաժիններուն, համամիտ թարգմանութեան հայերէն տարբերակին, մտածել տուող բաւական դրներ կային: Կա՛մ կազմակերպչական գործին մէջ նոյն բծախնդրութեան առարկայ չէր եղած լեզուական ոլորտը, կա՛մ ատոր հարկաւոր տարբը պակասած էր:

Կազացնող ազդակ մըն էր ելոյթներուն անհատապար մակարդակն ալ· յատկօրէն կարեւի էր զանազանել անոնք որոնք եկած էին ըսելիք ունենալով եւ այն միւսները որոնք ելոյթ կ'ունենային պարզապէս ներկայութիւն մը արդարացնելու համար: Յաջորդ ձեռնարկներու պատրաստութեան ընթացքին լաւ պիտի ըլլայ նաեւ անջատ չափանիշներով որոշել թէ ո՛վ նիւթակատնով, ո՛վ կազմակերպչական գործունէութեամ եւ ո՛վ մտաւորական ներդրումով պէտք է մասնակցութիւն բերէ:

Այսուհանդերձ, անվիճելի կարեւորագոյնը լուրջ սկիզբ մըն է ու Պրիւսէլի երկօրեան բաւական յատկանիշ ունեցաւ այդ ուղղութեամբ «ձեռք կայ մէկ» մը արձանագրելու· որպէս մեկնակէտ ու լրթան յետագայ քայլերու:

Ա. Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 1 / 3)

### ՍԵՒԾՈՎԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ապրիլ 30–ին, Թիֆլիսի մէջ տեղի ունեցած է Սեւծովեան համագործակցութեան անդամ երկիրներու 13–րդ հերթականի նիստը: Մասնակից 11 երկիրներու ներկայացուցիչներու կարգին էր նաեւ Վ. Օսկանեան. հանդիպումին ներկայ գտնուած են միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Աւտըբրիոյ, Իտալիոյ Արտաքին նախարարութիւններու պատուիրակութիւններ եւս: Օրակարգի գլխաւոր նիւթն էր Եւրոպայի հետ զործակցութիւնը:

*
**

### «ԵՐԿԻՐ» ՎԵՐՍՏԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Հ.Յ.Դ. Հայաստանի կառոյցի «Երկիր» պաշտօնաթերթի խմբագիր Մուշեղ Մքայէլեան որպէս թեկնածու ներկայացած ըլլալով խորհրդարանական ընտրութիւններուն, այդ պաշտօնին զինքը փոխարինած է Շաղիկ Մարուխեան (Հրայր Մարուխեանի աղջիկը): Մինչ այդ թերթը քանի մը օր դադրած է լոյս տեսնելէ եւ յաջորդ թիւը նախատեսուած էր Մայիս 4–ին: Նոր խմբագիրը յայտա-

(Շար·ը Դ· էջ)

## ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

Մայիս 1–ին խումբը ճամբայ ելած է Տիժոնէն եւ հասած Սոնպէրնոն (8–րդ հանգրուան), ապա, Մայիս 2–ին այ՝ Սոնպէրնոնէն Փրէսի – սու – Թիլ:

Ամէն տեղ կ'ընդունուին քաղաքապետարանները եւ կը չարունակեն երբեակ նամակներով տեղեկացնել նախագահը, վարչապետը եւ Եւրոպայի նախագահը:

ԵՒՐՈՄԱՂԱԽԻՍ.

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԱՋԱՑ ԱՐՁԱԿՈՒԵՑԱՆ

## ՌՈՒՄԲԵՐ ՀԱՆՐԱԿԱՌՔԻ ՄԸ ՎՐԱՑ 47 ՄԵՌԵԱԼ

ՍԵՐՊԻԱՆ ՔԱՐՈՒՔԱՆԴ Է

Պատուելի ձէսթ ձէքսընն է որ յաջողեցաւ ձեռք ձգել ամերիկացի երեք գերի ինկած զինուորներու ազատ արձակումը Միլոսեւիչի հետ տեսակցելէ եառք: Պատուելին, որ խոստովանահայրն է Գլինթընի, Պելկրատ գացած էր անձնական նախաձեռնութեամբ, Գլինթընն եւ կառավարութիւնը դէմ ըլլալով: Երեք զինուորները փոխադրուեցան Գերմանիոյ Ռամշթայն քաղաքը ուր կը գտնուի ամերիկեան օդային ուժի կայանը: Ամէն պարագայի մէջ, Գլինթընն ճշդեց որ ոչինչ կը տրուի այս գործողութեան փոխարէն, ընդհակառակն ռմբակոծութիւնները աւելի յաճախակի պիտի ըլլան եւ աւելի ուժգին: Արդէն իսկ, Մայիս 2–էն 3–ի գիշերը քարուքանդ եղած են էլեկտրական ցանցերու կեդրոնները եւ երկրին մեծ մասը մութի մէջ էր այլեւս: Կ'ըսուի թէ այս ռմբակոծութեան համար գործածուած են յատուկ ռումբեր որոնք կը փճացնեն էլեկտրական ցանցերը: Անկէ առաջ, ՕԹԱՆ–ի օդանաւերէն մէկը կրկին «սխալ» գործած էր (6–րդն է) եւ ռմբակոծած էր Փրիշթինայի մօտ Լիւդան կամուրջը, բայց կամուրջը անվնաս մնացած է եւ ռումբերը լինկած են հանրակաթի մը վրայ որ չախչախուած է եւ բոլոր ճամբորդներն ալ մեռած կամ չատ ծանրօրէն վիրաւորուած են: Մեռեալներուն թիւը 47 էր: Այս առթիւ ՕԹԱՆ «կաւ» յայտնած է եւ բանբերն ալ՝ ձէյմի Շիլ յայտարարած է որ ՕԹԱՆ–ի թիրախը «օրինաւոր էր, օդաչուն չէր կրնար մտքէն անցընել որ հանրակաթ մը պիտի գայ»: Ձէյմի Շիլ նկարագրելէն ամէնէն չատականչական կէտն այն է որ միչտ չատ երանելի արտայայտութեամբ մը կը հաղորդէ ամէնէն ծանրակչիռ լուրերը:

– Պատուելի ձէքսըն նամակ մըն ալ ունի յանձնելիք Գլինթընին Միլոսեւիչի կողմէ: Ապաղութեան առաջարկ մըն է, բայց ի չատոյգսանէ Գլինթընի պատասխանը՝ ո՛չ է: Ան կը կրկնէ որ պատմանները ՕԹԱՆ–ը (աւելի ճիշդ ըսել՝ Ամերիկան) կը դնէ եւ Միլոսեւիչ կը համակերպի: Ծանօթ է որ գլխաւոր տարակարծութիւնը բազմազգեան պինեալ ուժերու ներկայութիւնն է Քոսովօ: Միլոսեւիչ համամիտ է որ օտար դէմեր ըլլան, բայց ոչ՝ պինեալ ուժեր:

Ցիշենք որ ձէսթ ձէքսընն Դեմոկրատ կուսակցութեան ձախ թեւին կը պատկանի: Եղած է նախապահական թեկնածու: Անցեալին ալ չատ մի քանի առիթներ կատարած է Ս. Հիւսէյնի եւ այլոց հետ:

– ՕԹԱՆ երկու օդանաւ կորսնցուց չաբաթավերջին: Մէկը չախչախուած է Սերպիոյ հիւսիս – արեւմտեան չրջանը ըստ ՕԹԱՆ–ի, մինչ Պելկրատ կ'ըսէ թէ ինք վար առած է, ուրիշ մըն ալ Ադրիատիկան ինկած է ռազմավարքի մը ընթացքին: Օդաչուները փրկուած են:

– Միլոսեւիչի խաղաղութեան առաջարկները կրկին խաղ մը կը նկատուին: Դիւանագիտական խաղ կը նկատուի նաեւ ամերիկացի երեք զինուորներու ազատ արձակումը: Հիմա որ, կ'ըսուի, Քոսովօն պարպուած է, Միլոսեւիչ կրնայ բանակցութեան մասին խօսիլ: Միւս կողմէ, Միլոսեւիչի կինն ալ յայտարարած է հեռատեսիլի ամերիկեան կայանի մը որ երկիրը քարուքանդ է: Միացեալ – Նահանգներու մէջ ոմանք, հանրապետական ծերակուտականներ ձայն կը բարձրացնեն եւ կ'ուզեն որ Գլինթընն այդքան անզիջող չըլլայ եւ խաղաղութեան ճամբան չփակէ:

– Ջերոմիերզին Ուաշինկթընն գնաց Մայիս 3–ին, նոր առաջարկներով Միլոսեւիչին:

– Ցուսատան միշտ խիստ ընդդիմութիւն մը կ'արտայայտէ ՕԹԱՆ–ի գործողութիւններուն դէմ: Ամիս մըն է արդէն որ ամէնօրեայ ցոյցեր կան Միացեալ – Նահանգներու եւ Մեծն – Բրիտանիոյ դեսպանատուներուն դէմ:

– Ժոսիէն Ալպանիայէն Մակեդոնիա գնաց եւ նիւթական լայն օժանդակութիւններու յանձնառութիւնն առնելէ եառք անցաւ Գահիրէ, ուր կրկին օր ճաշեց նախագահ Մուպարաքի եւ Արաֆաթի հետ նախքան Փարիզ վերադառնալը Մայիս 3–ին: Ցոյս յայտնեց որ խաղաղութեան գործընթացը, աւելի լաւ ճամբու վրայ կը դրուի Մայիս 17–ի իսրայէլեան ընտրութիւններէն եառք:

«LE POINT»

(30 Avril)

## La loi dénaturée

*Կ'ըսէ Գարպասոն այս խորագրին տակ կարգ մը խորհրդածութիւններ կ'ընէ եւ իր գրութեան անկիւնը առանձնաբար չեշտուած է սա նախադասութիւնը· – «Օրէնք մը պէ՞տք է ճանչնալու համար Հայերու ցեղասպանութիւնը: Ծանօթ էինք զուտ պարագայական օրէնքներու, սկսած եօթ ծանօթանալ զուտ բարեացակամական օրէնքներու»:*

*Յօդուածագիրը կը յիչէ որ Ազգային Ժողովը ճանչցաւ Հայերու ցեղասպանութիւնը օրէնքի առաջարկ մը քուէարկելով, Ծերակոյտը, խորհրդածելէ եառք, մերժեց հարցը արձանագրել իր օրակարգին վրայ:*

*Եթէ, կ'ըսէ, կարելի է ազդուիլ կառավարութեան ոգեկոչած պատճառաբանութիւններէն այդ գնագրին դէմ, հակառակն՝ եթէ կարելի է նաեւ հաստկնալ ծանդումով Հայ գաղութին դառնութիւնը որ ցարդ որպէս այդ ճանչցուած չի տեսներ ցեղասպանութիւն մը զոր այլեւս ոչ ոք կը խորհի ուրանալ, չի հասկցուիր, սակայն, որ հարցը դրուի օրէնադրական դեռնի վրայ:*

*Ու Գարպասոն երկարօրէն կը ծանրանայ հարցին այս գնոյթին վրայ, ի՞նչ գործ ունի, կը դրէ, օրէնքը, յիչելէ եառք թէ Տը Կոլ, Միթերան, Շիրաք հարկ եղած բառերը գործածած էին Փրանքեւզերման բարեկամութեան, Վէլ տ'Իվի կամ Վիշիի մասին, առանց որ հարկ եղած ըլլար իրաւական գնոյթ տալ: Եւ կ'ընդունի որ «կէսօ օրէնքն» է որ ճեղք մը բացաւ, ինչ որ աւելի քան մասամբ ճիշդ է:*

*Եւ Հայերն ալ նման ճանաչումներու պէտք չէին ունենար եթէ, նախ Թուրքիա ու նաեւ արեւմտեան պետութիւնները տէր եղած ըլլային իրենց պատասխանատուութիւններուն, ինչպէս Գերմանիա եղաւ: Այդ պարագային Գարպասոն իրաւունք կ'ունենար ժխտելու օրէնադրական գնոյթը: Բայց, այսքան լուրջ հարց մը ծածկելէ եառք, քիչ մը անպատչաճ է, ըստ մեզի, դրութիւնը վերջացնել կատակի տանող օրինակներով եւ ըսել թէ այս գնագրով Խորհրդարանը պիտի ստիպուի օրինաւորն ու ապօրինին ստհմանելու տեղ, ճշմարիտը գտնել: Ինչու, օր մը, երեք յօդուածներով օրէնքի առաջարկութիւն մը չընել, որ միանգամընդմիչտ հաստատէ թէ Անգի Դ–ի ձին ճերմակ էր, Պիւրէնի սիւները դեղեցիկ են կամ թէ Սերպը չար է:*

*Այս անտեղի բաղդատութենէն եառք, Գարպասոն կ'եզրակացնէ Փորթալիսի խօսքով, ըսուած երկու դար առաջ·– «Աւելորդ օրէնքներ պէտք չեն, անոնք կը տկարացնեն անհրաժեչտ օրէնքները»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի նախընտրական մթնոլորտը փոքր ալեկոծում մը արձանագրեց երբ ԼՂՀ Պաշտպանութեան նախարար Ս. Բաբայեան յայտնեց թէ ինք կը զօրակցի «Իրաւունք եւ միասնութիւն» դաշինքին. ատիկա հակադրութիւն մը նկատուեցաւ «Միասնութիւն» միջոցառածին որուն մէջ միացած են Վազգէն Սարգսեան եւ Կարէն Դեմիրճեան: Նոյնիսկ կարծիքներ հնչեցին թէ Ղարաբաղի նախարարը իրաւունք չունէր միջամտելու Հայաստանի ընտրական հոլովոյթին:

Այս միջադէպը, մամուլին արձագանգած սահմանափակներով, մեծ կարեւորութիւն ներկայացնելու չափ յատկանիշ չունի. սակայն, այն երեւոյթը որ յայտնուած կարծիքի մը առիթով այնքան աղմուկ բարձրացաւ, մտածել կուտայ լուռ մնացած ենթախորքի մը մասին: Արդեօք, Ս. Բաբայեանի համակրանքը, կամ նախընտրութիւնը Հայաստանի իշխանութեան վերին մակարդակին մէջ չի՞ կազմուիր ուժերու բաժանումի մը, կամ ձեւացած ճակատի մը հակակշիռ ներկայացնելու մտադրութեան: Այս տրամաբանութեամբ, կարելի չէ՞ մտածել որ Վ. Սարգսեան – Կ. Դեմիրճեան դործակցութեան դէմ, օրինակ՝ Ռ. Քոչարեանի աւելի մօտիկ ճակատ մըն ալ կազմելու հարկը նկատուած է: Մանաւանդ որ կարելի չէ անտեսել Սարգսեան – Դեմիրճեան դաշինքին յաջողութեան կարեւոր հաւանականութիւնը. նաեւ կարելի չէ մոռնալ Պաշտպանութեան նախարար – նախագահ կապերուն եւ ազդեցութիւններուն նախընթաց արդիւնքները: Անկարելի չէ որ Ռ. Քոչարեան «Միասնութեան» ձեւաւորումին մէջ իր աթոռին ուղղուած կարողական վտանգ մը նշմարէ եւ զայն չեզոքացնելու, կամ տկարացնելու քայլերու դիմէ:

Ամիս մը կայ ընտրութեան թուականին ու յառաջիկայ չաբաթները բնական է որ աւելի յստակ լուսաբանութիւն բերեն «արդեօք»ներու, «եթէ»ներու: Մինչ այդ, Ս. Բաբայեան վերածուած է հայաստանեան մամուլին մէջ ամէնէն չատ տեղ զբաղած դարաբաղցի անձնաւորութեան որուն վերոնչեալ արտայայտութիւնը բազմաթիւ հարցականներու պատճառ կ'ըլլայ:

Ստեփանակերտի մէջ «Հայաստան» հիմնադրամին միջոցներով կառուցուած Ֆիղիք – մաթեմաթիկայի վարժարանին բացումին մասնակցած է ինք եւս ու պատասխանած լրագրողներու բազմաթիւ հարցումներուն: Անոնք առընչուած են ընտրութեան, Հայաստան – ԼՂՀ կապերուն եւ ուղղակի ԼՂՀ–ի: Նախ կ'ըսէ որ գլխաւոր ուղածը ընտրութիւններուն աբդար ըլլալն է. այն տպաւորութիւնը ունի որ թեկնածու ներկայացողներուն մեծ մասը իրենք իրենց օգուտին համար ընտրուիլ կը ցանկան: Կը մաղթէ որ այդ խումբին պատկանողներու թիւը քիչ ըլլայ:

Կը հաւատա՞յ որ ուժի լծակները կ'ազդեն արդիւնքին վրայ. ուղղակի պատասխանելէ առաջ, Ս. Բաբայեան կ'ըսէ թէ այդ «ուժերը»ը չափազանցուած են. թէեւ անոնք միշտ ալ ազդեցութիւն կ'ունենան: Բայց ինք առաջնային կը նկատէ ժողովուրդին դերը: «Որեւէ ուժային որեւէ հարց չի կարող փոխել եթէ ժողովուրդը ճիշդ կողմնորոշուի»: Իր տեսակէտը այն է որ չօշափելի ուժ դոյացած ալ չէ, կան միայն անձնաւորութիւններ:

Լրագրողները Ս. Բաբայեանի կը յիշեցնեն 1997–ին յայտնած մէկ կարծիքը թէ 1999–ին կրնայ Ղարաբաղը նոր բախումի դաշտ ըլլալ: Կ'ըսէ թէ կարծիքը չէ փոխած, քանի որ Աղրբեջան եւ Ղարաբաղ դեռ բանակցելու չեն սկսած եւ եթէ մինչեւ Մայիսի վերջ չօշափելի բանակցութիւն չտարուի, այդ վտանգը միշտ ալ կայ:

Հարց տուողներ կ'ըլլան Ղարաբաղ վերադառնալու կամ երթալ – ապրելու կոչերու մասին: Ինք Ղարաբաղցիներուն եւ ոչ Ղարաբաղցիներու միջեւ տարբերութիւն չի տեսներ: Անշուշտ որ փափաքելի է Ղարաբաղցիներու վերադարձը, բայց «բոլոր Հայերը պէտք է ապրեն Ղարաբաղում»: Խնդիրը սակայն այն է որ ատոր պայմանները ստեղծուած չեն: Պէտք է տուն չինուի, աշխատելու տեղ բացուի, կեանքի մակարդակը բարձրացուի:

Ս. Բաբայեանի զօրակցութիւնը «Իրաւունք եւ միասնութիւն» դաշինքին, այլեւայլ մեկնաբանութիւններու դեմին կը պատրաստէ: Ի՞նչ չահադրգռութիւն ունի այդ կեցուածքին մէջ: Պատասխանը բաւական չեշտակի ոճով բանաձեւուած է. ան կ'ըսէ. «Ես Ղարաբաղից այն կողմ ո՛չ ապրելու միտք ունեմ, ո՛չ աշխատելու: Ես կարիերիստ չեմ, Հայաստանում պաշտօնի չեմ ձգտում: Իմ շահը Հայաստանի զարգացումն է»:

Երբ իրեն կը յիշեցնեն թէ Հայաստանի մէջ կան տրամադրութիւններ որ Ղարաբաղը նուազ հետաքրքրուի ընտրութեամբ, կ'ըսէ թէ ինք կը հաւատայ թէ մենք մէկ ժողովուրդ եւ մէկ պետութիւն ենք, մէկ նպատակով: Ինքզինք իր չափով պատասխանատու կը նկատէ թէ՛ յաղթանակի, թէ՛ պարտութեան համար: Գիտէ թէ եթէ պարտութիւն պիտի ըլլայ, պիտի դայ Հայաստանէն:

Ան կը մերժէ Հայաստանի որեւէ իշխանութեան սառար կանդնելու միտքը: Ինք այն անձը չէ որ օգտագործուի ուրիշներու կողմէ: Սառար կը կանդնի ժողովուրդին, իր հասկացողութեան չափով:

Հայաստանի եւ հետեւաբար Ղարաբաղի գլխաւոր խնդիրը, իր կարծիքով տնտեսութեան զարգացումն է: Պէտք է փորձել կացութիւնը չակել, գործատուները աչխատցնել: Մնացեալը ինքնին կը լուծուի: Կը քննադատէ որ Հայաստանի պիւտճէն երկու տարուան մէջ 200 միլիոն տոլար աւելնալով հանդերձ, ժողովուրդին կեանքին մէջ ոչինչով զգալի է ատիկա: «Երկու տարի առաջ նախարարի մեքենայի վրայ ծախսում էին 800 հազար, այսօր՝ 1 միլիոն 200 հազար: ... Եթէ գործարանների տէրերը նստած են խորհրդարանում, կառավարութիւնում, ապա ի՞նչ խօսք կարող է լինել ժողովրդի աշխատանք չունենալու մասին: Եթէ չունի. ո՞վ չի տալիս»: Այս դիտումները եզրակացնել կուտան որ մինչեւ այդ կացութիւնը թոյլատրող օրէնքները չփոխուին, որեւէ փոփոխութիւն անկարելի կ'ըլլայ:

Զգայացունց բաներ կան Ս. Բաբայեանի կեցուածքին ու պատասխաններուն մէջ: Բայց հետաքրքրական են էս դուրսէն – էս ներսէն դիտողի անոր մատնանչումները: Հաւանօրէն մինչեւ Մայիս 30 նախընտրական չրջանը այլ առիթներ պիտի տայ իր ու իր տեսակէտներուն մասին դրելու, խօսելու:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

**ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ**

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Ապրիլ 4–ին Մոսկուայի նախկին ՔԱ – կէ – Պէ–ի չէնքին առջեւ ահաբեկչական արարք մը գործուեցաւ զոր սառանձնեց «Ցեզափոխական նոր այլընտրանք» կազմակերպութիւնը: Անոր պատասխանատուները սառանձնումին հետ ըսին որ արարքը բողոք մըն էր քաղքենի ահաբեկչութեան դէմ որ պետութեան ոստիկանական համակարդը հասատաւեց վարչակազմին հակառակորդներուն հանդէպ:

Շարժումը յայտնուեցաւ 1996–1997–ին, յատկապէս Թիրախ առնելով գինակոչի դրասենեակները: Անոր չարքայինները դէմ էին բռնի զօրակոչին որ տեղի կ'ունենար Զէչէնիոյ պատերազմին ընթացքին: Ահաբեկչական ամէն արարքէ ետք կազմակերպութիւնը Մոսկուայի նոյն կայարանէն ղրկուած նամակով մը կը յայտնէր իր սառանձնումը: Ուչադրաւ է որ անոնց կատարած խափանարարական գործողութիւնները խնամքով պատրաստուած կ'ըլլային, զոհ չպատճառելու յայտնի մտահոգութեամբ: Ապահովութեան պաշտօնեաները հակառակ ամբողջ իրենց ջանքին, չյաջողեցան այդ ահաբեկիչները ձերբակալել ու կազմակերպութիւնն ալ իր մասին չխօսեցուց: Ապրիլ 4–ի պայթումը անոնց մասին մտածել չտուաւ:

Այսուհանդերձ, անիշխանականներու խումբը բաւարար պատճառ ունէր այդ կերպ վարուելու: Անցեալ Նոյեմբերին կրասնոդարի մէջ անոր երկու անդամները ձերբակալուած էին ու յայտնած որ կ'ուզէին ռումբ մը պատրաստել չրջանի կառավարիչը ահաբեկելու համար: Այս երկուքը մօտ աւելէն դատարան պիտի ներկայանան. մինչ այդ անոնց ընկերները ամբողջ երկրին մէջ ցոյցերով կը պահանջեն որ անոնք ազատ արձակուին: Բացառուած ալ չէ որ Մոսկուայի մէջ որոշեն ահաբեկչութեան արարք գործել: Մանաւանդ որ անոնց անդամներէն ոմանք ըսած են բացայայտ կերպով թէ վարչակարգին մեղսակիցներուն դէմ ոճիրները աւելի ու աւելի յաճախակի կը դառնան, իսկ այդ կացութեան լուսադէմն պատասխանը նոր պայթումներ են:

ՔԱՂՀԱՆ

PUBLICATIONS REÇUES

*ISTANBUL PEUT-ETRE*
Photographies de ANTOINE AGOUDJIAN
Texte de MICHEA JACOBI
*Editions Parenthèses*, Marseille

# ԱՊՐԻԼ 24-Ը ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱ

## ԷՔՍ – ԱՆ – ՓՐՈՎԱՆՍ

Հոծ բազմութեան մը ներկայութեան, Էքս – Ան – Փրովանսի Հայերու Մշակութային Միութեան նախագահը հայերէն ճառով մը բացաւ ոգեկոչումը: Արտաւազդ Համբարձումեան խստօրէն դատապարտեց Ֆրանսայի երկդիմի կեցուածքը «որ մէկ ձեռքով կուտայ եւ միւս ձեռքով կ'առնէ»: Ծաղկեպսակները զետեղուեցան Նահատակաց Ցուչարձանին որ կը գտնուի քաղաքի բանուկ փողոցի մը անկիւնը: Քաղաքապետը Ժ. Ֆր. Փիշըրալ, որ ծերակուտական է, յանձնաժողովին հետ (ընկերվարական) չարունակել օրէնսդրական պայքարը: Յայտարարեց որ քաղաքապետական խորհուրդի յաջորդ նիստին Հայկական ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը պիտի ներկայացնէ: 1915 Ապրիլ 24 կոմիտէի անունով ելոյթ ունեցաւ Ժաք Տօնապետեան: Մակար Ա. Քահանայ Նաճարեան «Պահպանիչ»ով, «Հոդւոցո»վ եւ եղբայրակից խօսքերով փակեց ոգեկոչումը հրաւիրելով իւրաքանչիւր Հայ իր ազգային պարտականութեան եւ պարտաճանաչութեան:

***

## ՊՈՒՔ – ՊԷԼ – ԷՌ

Թափօր կազմած բազմութիւնը մեկնեցաւ քաղաքապետարանի հրապարակէն եւ քալեց մինչեւ զերեզմանատան մուտքը ուր զետեղուած է 1915–ի մէկ ու կէս միլիոն նահատակներուն նուիրուած յուշակոթող մը: Տեղւոյն Հայկական Բարեկամականին նախագահը՝ Լ. Սէրէքեան բացաւ հանդիսութիւնը: Ծաղկեպսակներու զետեղումէն եւ վայրկեան մը լռութենէն յետոյ խօսք առաւ քաղաքապետը՝ Ռ. Մայէ: Յայտարարեց իր զօրակցութիւնը Ֆրանսայի Հայ գաղութի պայքարին որ կ'ուզէ իր պատմութեան ճանաչումը: Տարօն Եպիսկոպոս Ձէրէճեան՝ Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսայի համար կարճ աղօթք մը յետոյ բնորոշեց օրուան իմաստը, հրաւիրեց վերացումի պահ մը բայց նոյն ատեն կոչ ըրաւ արժանաւորութեամբ եւ ազգային արժանապատուութեամբ տէր կանգնիլ Հայ ժողովուրդի, իր անմեղ զոհերու արդար եւ անժամանցելի իրաւունքներուն:

***

## ԿԱՌՏԱՆ

Ինչպէս ամէն տարի Կառտանի, Պիվէռի, Մէռէօյի եւ այլ չրջակայ գիւղաքաղաքներու հայ ընտանիքները պատասխանելով իրենց Բարեկամականի կոչին, համախմբուեցան Կառտանի զերեզմանատան մէջ, Հայկական ցեղասպանութիւնը ոգեկոչող յուչաքարին առջեւ: Ծաղկեպսակները զետեղեցին՝ Հայերու Բարեկամականը եւ Կառտանի քաղքապետարանը: Նախագահ՝ Կարապետ Տալոյեան արտասանեց ճառ մը բնութագրելով ջարդերը եւ պահանջելով պատմութեան ճշմարտութիւնը: Երեսփոխան – քաղաքապետ, Ռոժէ Մէյի պատասպարեց 1915–ի ահաւոր դէպքերը որոնք պատմութեան կ'անցնին այն տեսն, պատ, երբ Ազգերու Հատարակապետութիւնը եւ Թուրքիան ճանչնան ցեղասպանութիւնը: Ֆրանսան պէտք է տայ օրինակը, աւելցուց քաղաքապետը եւ կրկնեց իր ամբողջական զօրակցութիւնը հանդէպ Հայ դատին: Մակար Ա. Քհնյ. Նաճարեան արտասանեց «Հոդւոց»ը եւ իր կարգին զօրակոչի հրաւիրեց ժողովուրդը տէր կանգնելու համար իր իրաւունքներուն, եւ ամբողջնդելու համար իր ինքնութիւնը կազմող արժէքները:

***

## ՎԻԹՐՈԼ

Քանի մը տասնեակ հոգի համախմբուեցան 1915–ի զոհերուն նուիրուած յուչաքանին չուրջ, քաղաքի նոր թաղերուն մէջ զետեղուած:

Նկատի առնելով որ Վիթրոլ քաղաքը կը մատակարարէ Ազգային Ճակատը, քաղաքապետ՝ Գաթըրին Մեկրէ, որոշուած է որ ոչ մէկ քաղաքական անձնաւորութեան խօսք պիտի տրուի, անցեալ եւ նախանցեալ տարիներու անհամութիւնները չկրկնելու համար:

Բացումը կատարեց Հայերու Բարեկամականին նախագահուհին՝ Վ. Սամբոլեան: Ապա, մահերդ, եւ ծաղկեպսակներու զետեղում եւ վայրկեան մը լռութիւն: Ժողովուրդը հաւաքաբար երգեց Հայկական Փառերդը՝ Մեր Հայրենիք: Կոմիտաս Վրդ. Պէօճէքեան կատարեց հոգեհանգստեան կարգ եւ հուսկ արտասանեց Ֆրանսերէն, կուռ ճառ մը նկարագրելով ջարդերը եւ անդրադառնալով այժմէականութեան:

Ներկայ գտնուեցան քաղաքապետը՝ Գաթըրին Մեկրէ իր կողդներով, ինչպէս նաեւ այլ կուսակցութիւններու ներկայացուցիչներ:

Ոգեկոչումը աւարտեցաւ ընդունելութեամբ մը:

***

## ԳԱԼԱՍ – ԳԱՊՐԻԷԼ

Ժողովուրդը համախմբուեցաւ քաղաքապետարանի հրապարակը ուր անցեալ տարի բացումը կատարուեցաւ 1915–ի Հայերու ցեղասպանութիւնը ոգեկոչող յուչաքարի մը:

Քաղաքապետարանի եւ տեղւոյն Հայերու Բարեկամականի կողմէ զետեղուեցան ծաղկեպսակներ: Մէկ վայրկեան լռութենէ մը յետոյ, քաղաքապետը՝ Բը Ժիլվ Փիէռ Շարփէն խօսք առաւ ու դատապարտեց Թուրքիան իր պատճառած ահաւոր ողբերգութեան համար: Մարսէյլի 1915 Ապրիլ 24 կոմիտէի անունով ելոյթ ունեցաւ՝ Ժաք Ուլուսեան որ յատկապէս անդրադարձաւ հարցի այժմէականութեան: Եւրոպայի Խորհրդարանի երեսփոխան Ֆ. տ'Օպէրթիի խօսեցաւ Եւրոպայի Խորհրդարանի 1987 Ցունիս 18–ի քուէարկութեան մասին եւ անկէ բխող որոշումներուն որոնց Թուրքիա ստիպուած է հնթարկուիլ:

Վարդավառ Քահանայ Գասպարեանի արտասանած «Հոդւոց»ով վերջ դուաբարողութիւնը:

***

## ԹՈՒԼՈՆ

Ապրիլ 15–ին, Ֆ.Ն.Ա.Ֆ.–ի մէկ սրահին մէջ, Ապրիս Ակումբը եւ Մարսէյլի 1915 Ապրիլ 24 կոմիտէն կազմակերպեցին դասախոսութիւն – գլոյց մը յատկապէս Հայկական հարցի այժմէականութեան չուրջ: Խօսք առին՝ Ս. Ագիլաղեան, Ց. Տօնապետեան եւ Ժ. Ս. Մանուկեան:

Ապրիլ 24–ի առաւօտը, ժամը 10–ին, չուրջ 150 հոգի հաւաքուեցան Աղբրութեան Պալատի դիմացը «Կապրիէլ Փէռի» հրապարակը ուր Մեռելներու Նուիրուած կոթողի մը վրայ զետեղուած է Հայկական

ցեղասպանութիւնը յիշեցնող յուշաքար մը:

Բոցը արձարձեցին Սարգիս Տէյիրմէնճեան, Ջաղերէն վերապրող, 87 տարեկան, եւ Արնօ Ժամկոչեան 17 տարեկան: Ելոյթ ունեցան՝ Ֆ. Պուլկարեան, Ա. Ժամկոչեան եւ Մ. Կրիկորեան: Ասարտին երգուեցաւ «Մեր Հայրենիք» եւ «Լա Մարսէյէզ»: Ներկայ գտնուեցան բազմաթիւ քաղաքական անձնաւորութիւններ, ի մէջ այլոց, երեսփոխան՝ Օհէթ Քազանճեան, քաղաքապետին ներկայացուցիչը եւ կուսակցութեանց պատասխանատուներ:

Ապրիլեան եղեռնի ոգեկոչումը Թուլոն նախաճեռնութիւնն է «Ապրիս Ակումբ»ին:

*
**

## ՏՐԱԿԻՆԵԱՆ

Ժամը 17·30–ին, Ապրիլ 24–ին, շուրջ հարիւր հոգի հաւաքուեցան «Անկլէս հրապարակը», քաղաքապետարանին դիմացը եւ թափօրով ուղղուեցան ոչ շատ հեռու «Ռիւ սը լ'Արմէնի» ուր կը գտնուի Ապրիլեան եղեռնի նուիրուած յուշարձան մը: Ոգեկոչման բացման խօսքը արտասանեց Տրակինեանի Հայերու Բարեկամական փոխ – նախագահը՝ Ժ. Ալվայեան: Հայերէն արտայայտուեցաւ Թամար Կարմիրեան: Հայր Պուայէ, հայերէնով, արտասանեց աղօթք մը ողջոյն յայտնելով մահերգը, վայրկեան մը լռութիւն եւ Տըլէ Եաման:

Ներկայ գտնուեցան Տրակինեանի քաղաքապետը՝ Քրիսթիան Մարթէն, Մաքս փիթելի փոխ – նախագահ Վառ Նահանդի Ընդհանուր Խորհուրդին, քաղաքապետարանի կազմակերպներ:

Ոգեկոչումը վերջ գտաւ դիւնեճօնով մը:

*
**

## ՍԻՓԹԻՄ – ԼԷ – ՎԱԼՈՆ

Սէփթիմ – Լէ – Վալոնի եւ շրջակայքի հայութիւնը լեցուց Սէն – Ժան Եկեղեցին, ժամը 10–ին: Վարդավառ Քահանայ Գասպարեան՝ հոգեւոր հովիւ Սէն – Թ'Ան–Թուանի Ս. Թադէոս Եկեղեցւոյ, կարճ արարողութիւն մը կատարեց պատարագի չարականներով եւ կատարեց հոգեհանգստեան կարգ:

Ապա, հոծ բազմութիւնը թափօր կազմած ուղղուեցաւ «Ռոն Փուէն Արմէնի» եւ հոն յուշարձանին շուրջ տեղի ունեցաւ ոգեկոչում: Սէփթիմ – Լէ – Վալոնի քաղաքապետը ունեցաւ յանդուգն խօսքեր վճռայելով կառավարութիւնը իր ժխտական կեցուածքին համար: Բժիշկ Ա. Յապինճեան երկարաչունչ ճառ մը արտասանեց ցեղասպանութեան պատճառները տալով, դէպքերը ներկայացնելով, Մեծ Եղեռնին դիրքը ճաղկելով:

Ոգեկոչման աւարտին ժողովուրդը հաւաքուեցաւ քաղաքապետական սրահի մը մէջ ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն յիշատակի պատթի մը շուրջ:

ԹՂԹԱԿԻՑ

*
**

## ԿՐԸՆՈՊԼԸ

Կրընոպլի դաղութը, ինչպէս ամէն տարի, խնամքով պատրաստած էր Ապրիլեան ոգեկոչումները:

Ուրբաթ, Ապրիլ 16–ին, Մէզոն տիւ Թուրիզմի մէջ տեղի կ'ունենար դասախօսական երեկոյթ մը, կազմակերպուած Հայ Դատի Յանձնախումբի, Կապոյտ Աչի, Հ.Ց.Դ.–ի եւ A. A. C. G.–ի կողմէ, նիւթ ունենալով՝ «Perspectives pour la reconnaissance internationale du Génocide», նախագահութեամբ Պ. Ժան Ա–յանեանի: Դասախօսեց Տիկին Հիլտա Զոպոյեան՝ Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի նախագահուհին. դասախօսութեան կը մասնակցէին Ժան–Ժագ Քեպատեան եւ Թուրք ըրոշ եւ Թարգմանիչ Ռակըպ Զարաքօլու որ իր կարգին կը հաստատէր ցեղասպանութեան իրողութիւնը եւ կ'ամբաստանէր Թուրք կառավարութիւնը, մինչ բազմաթիւ ունկնդիրներ զարմանքով ու յուզումով կը հետեւէին. եղան հետաքրքրական հարցումներ:

Ապրիլ 23–ին, Հայ Մշակոյթի Տան մէջ տեղի ունեցաւ Գէորգ Գրգճեանի կատարու ցուցահանդէսը: Ապա, հանդիպում մը՝ երեսփոխաններ Տիտիէ Միկոյի, Ռ. Քազընաւի, Քաղաքապետարանի խորհրդական տիկին Մարսէլ Մարտիրոսեանի եւ Տիկին Գլէր Քըրքեաշարեանի հետ: Նախ ներկաները մեծ պատուոյ վրայ դիտեցին կարճ ժապաւէն մը՝ «Un génocide renié», եղեռնէն յուզիչ պատկերներով եւ վերապրողներու վկայութիւններով:

Յետոյ, հանդիսութեան երկրորդ բաժնին, Մշակոյթի Տան նախագահը՝ Պ. Գ. Ադամեան խօսքը տուաւ Ռ. Քազընաւի եւ Տ. Միկոյի որոնք իրենց կարգին ցաւ յայտնեցին Ծերակոյտին մերժումին համար, սակայն քաջալերեցին ներկաները ըսելով թէ պէտք է յանդուգն մնալ ու շարունակել արդարութեան պայքարը: Ներկաներու կողմէ եղան հարցումներ եւ հետաքրքրական առաջարկներ: Եղան եւ հետաքրքրական տեղեկութիւններ օրուան նիւթին շուրջ, Ժան Ֆորեսթիէի, Միշէլ Տիլսիզեանի եւ Շ. Մանուկեանի կողմէ: Այս խորհրդաւոր մթնոլորտին մէջ տեղի ունեցաւ նահատակներու յիշատակին անմար կրակի բոցի արձարձումը եւ ոգեկոչական մեխակները:

Շաբաթ, Ապրիլ 24–ի առաւօտեան ժամը 10–էն սկսեալ Սէն Մարթէն տ'Էրի Նոթրը Տամ ըը լա Տելիվրանս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցան պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն: Իսահակ Քհնյ. Հէքիմեան կատարեց արարողութիւնը եւ իր քարոզին մէջ յիշեց նահատակներուն գողգոթայի արիւնոտ ու փշոտ ճամբան ապա յորդորեց իր ժողովուրդը հայրական պատգամներով, ըսելով՝ «Միասնութեամբ եւ եղբայրասիրութեամբ պէտք է պայքարինք հայ ազգին սուրբ եւ արդար պահանջատիրութեան համար:

Հոգեհանգիստէն եաք ժողովուրդը համախմբուեցաւ Սէն Մարթէն տ'Էրի Ապրիլ 24 հրապարակը, ուր զանազան միութիւններու ներկայացուցիչներ ծաղկեպսակներ զետեղեցին: Տեղւոյն քաղաքապետ Ուրնէ Փրոպիի ելոյթէն եաք Նոր Սերունդին անունով խօսեցաւ Օր. Անահիտ Մարտիրոսեան ու ազդեցիկ չեշտով կոչ ուղղեց ներկաներուն որ «երիտասարդութիւնը կը խոստանայ կատարել իրեն յանձնուած պարտականութիւնները»: Յաջորդաբար հնչեց հայկական եւ ֆրանսական փառերգները:

Բազմութիւնը, որուն մաս կը կազմէին անցեալ տարիներէն աւելի մեծ թիւով երիտասարդներ, հայկական դրօշակներով եւ լոզունգի պաստառներով քալեց դէպի Պուլվար Գլեմանսօ հրապարակը, ուր եւս զետեղուեցան ծաղկեպսակներ: Ազգ. Միութեան կողմէ խօսք առաւ Պ. Խաչօ Անտոնեան, Հայ Դատի Յանձնախումբին կողմէ՝ Օր. Գոբրին Սապունճեան, ինչպէս նաեւ Էլիրոլի քաղաքապետ Տ. Միկօ, Ժիլպէր Պիէսի. վերջաւորութեան Կրընոպլի քաղաքապետ Միշէլ Տեսթօ խօսք առնելով իր ցաւակցութիւնը յայտնեց ներկաներուն, անդամ մը եւս վերյիշելով անարդար Թուրքին գործած ոճիրը:

Ժողովուրդը մեկնեցաւ արդարութեան իրականացման յոյսով...:

ՇԱՒԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*
**

## ԳԼԵՐՄՈՆ-ՖԵՐԱՆ

Գլերմոն–Ֆերանի հայկական Ընկերակցութիւնը ամէն տարի կ'ոգեկոչէ Ապրիլ 24–ը, տխուր յիշատակը չարգիլեր նայիլ դէպի ապագայ. ուստի Ապրիլ 23–ի երեկոյեան Գլերմոն–Ֆերան հրաւիրուած էին Լիոնէն «Ցոյս Հայաստանի համար» ընկերակցութեան անդամներ՝ Տէր եւ Տիկին Արի Թոփուզխանեան, Սիլվիա Թոփուզխանեան (օրթոֆոնիստ), Վարդուհի Մանուկեան (Քինեզիթերափէօթ), որպէսզի ներկայացնեն իրենց տարած աշխատանքը Հայաստանի մէջ, ընդհանրապէս անդամալոյծ մանուկներու մօտ:

Բացման խօսքը արտասանեց Գլերմոն–Ֆերանի հայկ. Ընկերակցութեան նախագահ Ժագլի Շահպազեան, անդրադառնալով թէ մինչեւ այսօր չատ պետութիւններ ու պատմաբաններ կ'ուրանան Հայոց ցեղասպանութեան իրականութիւնը, ապա հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան լռութեամբ յարգելու ցեղասպանութեան զոհերուն յիշատակը:

Սիլվիա եւ Վարդուհի ցոյց տուին սահիկներ՝ լուսանկարուած Հայաստանի մանկատուներու մէջ, ուր կարելի էր տեսնել անդամալոյծ մանուկներ որոնք կ'ապրին չատ դժուար պայմաններու մէջ, մեծամասնութեամբ լքուած իրենց ծնողքներէն. դժբախտաբար կը տեսնէինք նաեւ առողջ մանուկներ նոյն կեդրոններուն մէջ, նմանապէս լքուած նիւթական դժուարութիւն ունեցող ծնողքներէ:

Այս ամբողջը յոռետես ըլլալով, լսեցինք նաեւ լաւատես լուրեր, ինչպէս Թեզայի քոյրերու տունը, Կանաչ Տունի հաստատութիւնը որ կ'աշխատի ծանօթ Ֆրանսուազ Տոլթոյի մեթոտներով, ինչպէս նաեւ Անդամալոյծ Մանուկներու Ծնողքներու Ընկերակցութիւնը՝ «Աստղիկ», որ կը զբաղի բարոյական եւ նիւթական օգնութիւն բերելու հարցերով անդամալոյծ զաւակ ունեցող ընտանիքներուն եւ օրէնքներ ստեղծելու գործով՝ ի նպաստ անդամալոյծ անձերու:

ՀԱՅԿ–ԺԱՆ ԵՈՐԿԻ

*
**

## ՍԹՐԱՋՊՈՒՐԿ

Ապրիլեան զոհերու ոգեկոչման արարողութիւն կատարուած է նաեւ Սթրազպուրկ: Տեղւոյն փոքր բայց լաւ կազմակերպուած հայ համայնքին այս առթիւ տրամադրուած է քաղաքի կեդրոնական եկեղեցիներէն մէկը: Հոգեհանգստեան պաշտօնէն եաք, օրուան հայաստանցի հիւրը՝ մեներգիչ Սրա Աւանեանը հանդիսականներուն ներկայացուցած է նախաձեռնութեան կազմակերպիչ Տիկին Սաթենիկ Սիմոնեան: Ա. Աւանեան երգած է Կոմիտասէն, Ա. Տիգրանեանէն, Ռ. Մելիքեանէն եւ այլ հայ հեղինակներէ գործեր: Իրեն դաշնակով ընկերացած է Կրեթա Սարգսեան: Հանդիսութեան ներկայ եղած են նաեւ Գերմանիոյ սահմանաերձ եւ այլ շրջաններէ եկած բազմաթիւ հայեր:

---

# ՀԱՅ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Գ·

– Իմ՛կ թէ այնպէս ըլլար... ի՞նչ նոր լուր կայ տեսնանք:

Դերկոմսը օրուան լուրերը հաղորդեց ամէն մէկ լուրը վերլուծելով, ատոյգը կասկածելիէն, հաւանականը կարելիէն զատելով եւ եզրակացնելով, թէ հակառակ ներկայ դժնդակ պայմաններուն՝ կացութիւնը յուսահատական չէր եւ թէ ամէն բան լաւագոյն կերպով կարգի պիտի մտնար:

Դերկոմսը անդրդուելի լաւատես մըն էր միշտ եւ այն հաւատքը ունէր, թէ ի վերջոյ ամէն բան «աղէկ պիտի ըլլայ»:

Իր այս լաւատեսութիւնը կը հիմնէր անցած դէպքերու վրայ եւ օրինակներով կ'ապացուցանէր, թէ ինչպէս անել կարծուած կացութիւնները ի վերջոյ ելքի մը գտնած էին:

Բարեգ աղա ուշադրութեամբ մտիկ ըրաւ Դերկոմսին պատճառաբանութիւնները եւ բաւական կազդուրուած դնաց տունը:

Տունը հիւր մը իրեն կը սպասէր. Տիկին Սիբարփին:

Մէջահասակ, նիհար, քառասուն տարեկանի մօտ, թուխ ու համակրելի դէմքով կին մըն էր Սիբարփի, միշտ գործի վրայ, միշտ զբաղած:

Ամուսինը մեծ հաստատութեան մը մէջ կարեւոր պաշտօն մը ունէր եւ իրրեւ կարող ու խելացի մարդ ընդհանուր յարգանք կը վայելէր: Սիբարփի զաւակ չէր ունեցած ու իր բոլոր ժամանակը յատկացուցած էր բարեգործական հաստատութիւններու: Կարմիր Խաչի անդամ, որբանոցի խնամակալուհի, Հայ կիներու Լիկային գործակից, Աղքատախնամի անդամ եւ այլն էր միանգամայն:

– Ինչ բարեբախտութիւն, որ այսօր կանուխ եկաք, – գոչեց Տիկին Սիբարփի՝ Բարեգ աղան տեսնելուն պէս, – իմ բախտս էր այս...

– Ի՞նչ կայ որ, – հարցուց Բարեգ աղա:

– Բերայէն մինչեւ հոս եկայ Տիկին Մաննիկէն բան մը խնդրելու եւ մերժեց:

– Զմերժեցի, այլ ըսի, որ առանց Բարեգ աղայէն կամքը առնելու որոշում չեմ կրնար տալ, – դիտել տուաւ Տիկին Մաննիկ:

– Լաւ, հիմակ Բարեգ աղան եկաւ, ես անոր կամքը կ'առնեմ, ալ ըսելիք կը մնա՞յ:

– Անիկա հա՛ ըսելէն եաքը ես դիտողութիւն մը չունիմ:

– Բայց խնդիրը ի՞նչ բանի վրայ է, – հարցուց Բարեգ աղա:

– Աղջիկներուդ պէտք ունիմ մէկ օրուան համար, այսինքն կիրակի օրուան համար, – պատասխանեց Տիկին Սիբարփի:

– Ի՞նչ բանի համար:

– Մեծ պազար մը կազմակերպած ենք ի նպաստ կարմիր Խաչին, հոն բան պիտի ծախեն:

– Բերայի մէջ աղջիկ չկա՞յ, որ մերինները պէտք կ'ունենաք:

– Կայ, բայց բաւական չեն ... ասկէ զատ կ'ուզենք, որ ազուոր աղջիկները ըլլան ծախողները, որպէսզի յաջողութեամբ գործ տեսնեն ... չատ օտարականներ ալ հրաւիրուած են, Ֆրանսացի, անգլիացի, իտալացի բարձրաստիճան սպաներ, եւրոպական հաստատութիւններու անօրէններ, դեսպանական մարմիններ անձեր, վերջապէս փառաւոր բան մը պիտի ըլլայ:

– Աղէկ, սակայն ես յարմար չեմ տեսնար մեր աղջիկներուն գալը, – դիտել տուաւ Բարեգ աղա:

– Ինչո՞ւ համար, – հարցուց Տիկին Սիբարփի:

– Նախ Նուարդը նշանուած է. նշանած աղջկան մը կը վայելէ՞ այդ տեսակ պազարի մէջ բան ծախել:

– Ա՛ս ի՞նչ խօսք է, – գոչեց Տիկին Սիբարփի, – ո՞ր դարուն մէջ կ'ապրիս կոր, Բարեգ աղա, հիմակ անանկ բաներու նայող կա՞յ:

– Հայտէ մենք չնայինք, բայց ուրիշները կը նային:

– Ուրիշները ի՞նչ կը խառնուին:

– Նուարդը աղատ չէ, նշանած ունի, թերեւս միւսիւ Տիրանը չուզեր:

– Միւսիւ Տիրանը դիտողութիւն չընէր, աւտր վսատահ եղիր, արդէն ան ալ կայ գործին մէջ, կիրակի օրը ինքն ալ պաշտօն ունի, հոն պիտի գտնուի:

– Այն ատեն խնդիրը կը փոխուի... քանի որ Տիրանը հոն է, Նուարդն ալ կրնայ գտնուիլ, այնպէս չէ՞, Մաննիկ:

– Այնպէս է, – հաւանեցաւ Տիկին Մաննիկ:

– Ջապէլին ու Սօնային համար դիտողութիւն մը չունիս, անշուշտ:

– Սօնա՞ն ալ կ'ուզես կոր:

– Հարկաւ...

– Անիկա դեռ չատ փոքր է այդ տեսակ գործերու մէջ մտնելու համար:

– Իրմէ աւելի պզտիկները պիտի գտնուին, – պատասխանեց Տիկին Սիբարփի:

– Բայց նայինք աղջիկները պիտի ուզե՞ն գալ, – դիտել տուաւ Մաննիկ:

– Ինչո՞ւ պիտի չուզեն, աղէկ ժամանակ պիտի անցընեն, մարզու մէջ պիտի մրցանան, չնորհքով անձերու հետ պիտի ծանօթանան:

– Ան չէ ամա ո՞ւր են աղջիկները, – հարցուց Բարեգ աղա:

– Մեսաք էֆէնտիէնց գացին, Սաթենիկը քիչ մը հիւանդ է եղեր, տեսնելու, հիմա կուգան անոնք, – պատասխանեց Տիկին Մաննիկ:

– Ես ուրիշ նպատակ մըն ալ ունիմ աղջիկները տանելով, – ըսաւ Տիկին Սիբարփի:

– Ի՞նչ նպատակ, – հարցուց Մաննիկ:

– Եաքէն կ'իմանաք, – պատասխանեց Սիբարփի խորհրդաւոր ձեւով մը:

– Հիմակուընէ ըսէ՝ տեսնենք ինչ է նպատակդ:

– Կարելի է Ջապէլին համար բախտ մը կ'ըլլայ:

– Ա՛ս ուրկէ՞ հանեցիր, ի՞նչ բախտ պիտի ըլլայ:

– Եա ըսածս պիտեմ ... եթէ յաջողի չատ աղուոր բան պիտի ըլլայ, դուք ալ չատ գոհ պիտի մնաք:

– Հելէ կեցիր մէկ հատը կարգենք, – ըսաւ Բարեգ աղա, – Ջապէլին համար դեռ ժամանակ ունինք:

(Շար. 16)

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑ ՄԱՋի փարիզի Ազչայա թաղէոսեան մանաճիւղի անդամական ժողովը Շաբաթ, Մայիս 8, ժամը 16–ին, սովորական հաւաքատեղին: Դպրոցի հանդէսի պատրաստութիւն: Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ գտնուիլ:

# ՊԱՐԱՆՅԻԿ ԵՐԵԿՈՅԹ

Որպէսզի Մխոբեայ Վարժարանը միշտ կանդուն մնայ, Տէսինի Սրշակ Զամալեան մանաճիւղը միացած Սէն – Մօրիս Տը Պէնոյի Ամահիտ մանաճիւղին, հովանաւորութեամբ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՔԱՐԵԱՆԻ

Կը կազմակերպեն պարանոցիկ երեկոյ մը, «Արմենիա» նուագախումբին ընկերակցութեամբ Շաբաթ, Մայիս 8, երեկոյեան ժամը 19–ին, Սէն – Մօրիս – Տը–Պէնոյի քաղաքապետարանի սրահին մէջ:

Հայկական չէն մթնոլորտն ու համեղ աղանդերները կը սպասեն ձեզի:

Տեղերը սահմանափակ ըլլալով նախընտրելի է ապահովել ձեր տեղանները, հեռաձայնելով՝

04 – 78 – 49 – 28 – 87

կամ՝

04 – 78 – 55 – 56 – 83

Թիւերուն:

Մուտքը ազատ է:

## UN AN APRES L'ASSEMBLEE NATIONALE LE SENAT DOIT RECONNAITRE LE GENOCIDE DU PEUPLE ARMENIEN

# MARCHE
## LYON - PARIS

MARCHE-RELAIS

**Départ: 24 Avril, 16h, Place Bellecour à Lyon;**

**Arrivée : 12 Mai, Palais du Luxembourg, Sénat, Paris.**

Vous pouvez participer à une ou plusieurs étapes.

Renseignements et inscriptions :

**04. 78. 49. 42. 97**

Soyez solidaires. Adressez vos dons à :

CDCA Sénat

**Comité de Commémoration**
**Rhône-Alpes**
**CDCA**
**Héritage**

⁂

PLAN DES ETAPES

06/05 Auxerre → Joigny (29 kms)
07/05 Joigny → Sens (31 kms)
08/05 Sens → Montereau-Fault-Yonne (32,5 kms)
09/05 Montereau-Fault-Yonne → Melun (30 kms)
10/05 Melun → Evry (25,5 kms)
11/05 Evry → Alfortville (28,5 kms)
12/05 Alfortville → Paris Sénat (12 kms)

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

1700-ամեակի չրջանէն ներս՝ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման ի Հայաստան, ուխտադնացութիւն մը կը կազմակերպուի դէպի «Ապէի տիւ Թոռնիէ» վանքը (Վառ նահանգ), Հինգշաբթի Մայիս 13, Համբարձման տօնին առթիւ:

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐՃԷԵԱՆ

կը մատուցանէ պատարագ, ժամը 12–ին, երգեցողութեամբ՝

Սահակ – Մեսրոպ երգչախումբի

ղեկավարութեամբ՝

խմբավար – երաժշտապետ

Խաչիկ Եղմազեանի

Օրհօքարներ կը նախատեսուին ժողովրդին այս ուխտադնացութեան:

Պատարագի աւարտին, մօտակայ վանքապատկան դաշտի մը մէջ «փիք - նիք» կը նախատեսուի. ամէն ընտանիք իր հետը կը բերէ իր ուտելիքը:

Աւծանապրհութիւ համար հեռաձայնել՝

Մայր Եկեղեցի (Փրատօ):

Հեռաձայն. – 04 91 77 84 70

Ֆաքս. – 04 91 77 89 28

## SOUTENANCE DE THESE

GILLES LUSSAC
Doctorat
de psychopathologie fondamentale
et
de psychanalyse de l'Université Paris VII
le 6 Mai à 9 heures, à l'Université Paris VII, place Jussieu, 75005 Paris, 7ème étage de la Tour centrale, salle des thèses

**«LE GENOCIDE DES ARMENIENS : RECHERCHES SUR LA TRANSMISSION ET LES RUPTURES DE FILIATIONS»**

*Jury: Pr. Yves BAUMSTIMLER* (Rapporteur), *Pr. Pierre FEDIDA* (Président), *M. Patrick GUYOMARD, Mme Nicole LAPIERRE, Pr. Jean-Jacques RASSIAL* (Rapporteur), *Mme Anahide TER-MINASSIAN, Pr. Michel TORT* (Directeur d'études), *P. Edouard ZARIFIAN.*

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

(Շար. Ա. էջէն)

բարած է որ թէ ձեւաւորմամբ, թէ բովանդակութեամբ եւ թէ խմբագրական կազմով, գրեթէ ամբողջութեամբ նոր թերթ մը պիտի հրամցնեն ընթերցողներուն:

⁂

### ՆԱԽԱԳԱՀԸ ԱՐԺԱՆԹԻՆ ՀՐԱԻԻՐՈՒԱԾ

Արժանթինի նախագահ Գարլոս Մենէմ նախագահ Քոչարեանին ուղղուած նամակով մը զայն իր երկիրը այցելութեան մը հրաւիրած է: Ան այժմ Թուական չէ ճշդուած:

⁂

### ՕԴԱՆԱԻԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հայաստանի Ապրանք Արտադրողներու հրաւէրով Երեւան այցելած են օդանաւաչինութեան Ռուսաստանի ծանօթ անուններ Միխայիլ Սիմոնով եւ «Աւիամոտոր» ձեռնարկութեան տնօրէն Ցոլհ. Օհանեան: Նախաձեռնարկ՝ Ապրանք Արտադրողներու Միութեան նախագահ Վազգէն Սաֆարեանի տուած տեղեկութեանց համաձայն կը ծրագրուի «ՍՈՒ–29» եւ «ՍՈՒ–31» տիպի փոքր օդանաւերու արտադրութիւնը Հայաստանի մէջ, որոնց արժէքը կը տարուբերի 150–200 հազար տոլարի միջեւ: Ամենայն հաւանականութեամբ, օդանաւներու կազմութեան գործը կը յանձնուի «Հրազդանմաշ» ձեռնարկութեան:

## ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՕՍՄԱՆԵԱՆ արքունի հարստութեան յուցահանդէսին բացումին առիթով Մայիս 3–ին Փարիզ կը ժամանէր Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ՝ Ս. Տէմիրէլ: Նոյն օրուան Թուրք մամուլը կը տեղեկացնէր թէ ան իր պատասխաններն ալ պատրաստած է Փրանսական իշխանութիւններու հաւանական քննադատութիւններուն: Անոնց առաջինը կ'առընչուի Ա. Հօճալանի դատավարութեան հարցին որուն Ս. Տէմիրէլ կը պատասխանէ թէ տուիկա զուտափարական բնոյթ չի կրեր, այլ ոճրային դատ մըն է: Իսկ Թուրքիա օրէնքի երկիր է: Ինչ կը վերաբերի Ա. Չաքըճըի Թուրքիոյ յանձնումին ձգձգումին, Թուրքիոյ նախագահը կը պատասխանէ որ այդ անձը Թուրք է, յանցանքները Թուրքիոյ մէջ գործած է, ուստի պէտք է առանց նախապայմանի յանձնուի Թուրքիոյ:

Ա. Հօճալանի պաշտպան փաստաբանները Ապրիլ 30–ին Անգարայի պետական ապահովութեան Դատարանին մէջ ուր տեղի կ'ունենար ամբաստանեալին քաղաքականութեան նախապատրաստական դատական նիստ մը, խոչընդոտումներու ենթակայ եղած են: Ապահովութեան պաշտօնեաներ ու ցուցարարներ յարձակած են անոնց վրայ, ՓՔՓ–ի դէմ լոզունգներ արձակելով: Պատահարէն անմիջապէս ետք Պոլսոյ փաստաբանական կաճառին նախագահը մամուլի ասուլիսով մը դատապարտած է կատարուածը ու պահանջած որ յարձակումին մասնակից ոստիկանները պաշտօնազրկուին: Աքարքը դատապարտած է Փրանսայի վարչապետութեան արհմիութեան եւ արեւմտեան այլ մարմիններու կողմէ: Հօճալանի դատավարութիւնը կը սկսի Մայիս 31–ին:

ԼՈՆՏՈՆի Սոհօ թաղամասին մէջ, ոճրափորձ մը գործուեցաւ Ապրիլ 30–ին, որու հետեւանքով 3 մեռեալ եւ 80 վիրաւոր կար, որոնց մէջ ամանք ծանր վիճակի մէջ էին: Այս երրորդ ոճրափորձը այն համոզումը ստեղծած էր որ ցեղապաշտ արարքներ են, քանի առաջինը Պէնկլատէշցիներու, երկրորդը սեւերու, այս վերջինն ալ միասեռականներու թաղամասերու մէջ գործուած են եւ տէր եղած էին «Սպիտակ Գայլերը» որ նոր նացիական խմբաւորում մը կը նկատուի: Բայց, Սքոթլանտ Եարտ չաթաթավերջին ձերբակալած էր 22 տարեկան երիտասարդ մը որ խոստովանած էր երեք ոճրափորձերը գրս գործած է ինքնաշխատ եւ ոչ մէկ կապ ունի որեւէ կազմակերպութեան հետ:

ՖՐԱՆՍԱՅԻ երկաթուղիի գործադուլը որ վերջ պէտք է գտնէր Մայիս 3–ի առաւօտուն, երկարաձգուեցաւ անորոշ ժամանակի համար եւ կոչ ալ կայ որ ընդհանուր բնոյթ առնէ: Հարցը կը վերաբերի 35 ժամերու վերակազմակերպան գոր ուղեվարները կը մերժեն: Կացութենէն առաւելաբար կը տուժեն փարիզի արուարձաններու բնակիչները, քանի բայի Մոնփարնասէն բոլոր կայարաններն ալ չատ անկանոն երթեւեկ մը կ'ապահովեն:

ԹԻԱՐԷԹի մէջ (Ալժէի հարաւ – արեւմուտքը) Մայիս 1–էն 2–ի գիշերը 9 հոգի սպաննուած են դինեալ խլամապաշտներու կողմէ:

ՄԱՑԻՍ 1–ի սենտիքաներու աւանդական տոզանցքը միասնական բնոյթ չունեցաւ այս տարի ալ. եթէ Սէ – Ժէ – Թէ եւ Սէ – Էֆ – Տէ – Թէ միասին տոզանցեցին (13·000 հոգի), Մարք Պլոնտելի Բանուորական Ուժը առանձին էր: Նոյն պահակտումը պարզեց այս տարի Աղգային ճակատը, Ժ. Մ. Լը Փէն եւ Պրիւնօ Մեկրէ առանձին թափօրներով մեծարեցին Ժաննա'Առքը:

Ալիեւ Ադրբեջանի նախագահը սրտի վիրաբուժական գործողութեան ենթարկուած է Ապրիլ 29–ին Գլիվլէնտ (Օհայօ, ԱՄՆ) մէկ հիւանդանոցը: Ալիեւ, 75 տարեկան, ՕԹԱՆ–ի 50–ամեակին գացած էր ու քննութեան համար հիւանդանոց մտած ուր յարմար գտուած է պինք գործողութեան ենթարկել: Գործողութեան հսկած է ամերիկահայ ծանօթ սրտաբանը՝ Մայքըլ Տըպաքէ, որ հսկած էր նաեւ Ելցինի պարագային:

### ՓՈՒԹՊՈԼ
### Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Բ. դասակարգի մրցումներու չարքին Նիս 2 – 0 յաղթեց Վալանսի որ այլեւս նախավերջին դիրքի վրայ է, այսինքն 19–րդ 34 կէտով: Գլուխն է Սէն Թ'Էթիէն որ պատրաստ է Ա. դասակարգ անցնելու:

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES

# PÈLERINAGE EN ARMÉNIE

**A L'OCCASION DE LA VISITE HISTORIQUE DU PAPE JEAN-PAUL II**
**LES 2, 3 ET 4 JUILLET**

**Programme:** Participation à toutes les cérémonies. Visite aux lieux saints les plus importants de l'Arménie chrétienne : Khor Virab, St. Etchmiadzine, Ste Hripsimé, Ste Gayané, Haghpat, Odzoun, Sanahine, Noravank, Guéghart, Erevan, Gumri, Garni, Dilidjan, Guétharis, Sevan, Dzaghgatsor.

**Date : VOYAGE DU 1er AU 8 JUILLET**

**Conditions** : Tous frais inclus (sauf visa et taxe d'aéroport à Erevan)
**7 200 F** depuis Paris et la Région Parisienne
**7 400 F** depuis la Province (Lyon, Marseille, Nice)

**Renseignements et inscriptions :**
Par téléphone : **01 40 51 11 90 / 01 44 59 23 50** (de 9h à 18h).
**Les inscriptions seront closes le 10 juin.**

UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE

Venez comme Franck découvrir l'euro à l'UGAB

abcd euro...



Conférence sur l'euro
par Thierry Lauret
Directeur financier de l'Union des Banques Arabes et Françaises

mercredi 5 mai 1999 à 20h30

Centre Culturel Alex Manoogian
118, rue de Courcelles 75017 Paris
(métro Courcelles)
Tél : 01 42 27 12 26 - 01 45 20 03 18
participation aux frais - membre : 10 fr - non membre : 20 fr

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Camp itinérant en Ardèche

**DU 7 AU 27 JUILLET**

**Nombreuses activités sportives et découverte de la région destinées aux adolescents nés entre le 1er juillet 1983 et le 31 décembre 1985.**

**Prix : 3 800 F + voyage**
**Date limite d'inscription : 30 MAI**
**Attention, places limitées.**
**Inscriptions auprès du Conseil d'Administration de la C.B.A.F. au :**
**01. 48. 24. 46. 57**

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 5
MERCREDI
5 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐԱՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ե ANNEE — N° 19.633
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·633

## ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔՈՍՈՎՕ

### ՌՈՒՄԲԵՐԸ ՄԻՇՏ ԿԸ ՏԵՂԱՆ

### ՆՈՐ ԶՈՀԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՋԱՆՔԵՐ

*Մայիս 3–ին, ՕԹԱՆ–ի օգուժը կրկին «ախալ» ամբակոծութիւն մը գործած է հարուածելով հանրակառք մը եւ երկու կաթը Քոսովոյի հիւսիս – արեւմուտքը: 17 մեռեալ եւ 20 վիրաւոր կար: ՕԹԱՆ անմիջապէս չհաստատեց, յայտնելով թէ քննութիւն բացած է, բայց ընդունեցաւ որ ամերիկեան օդանաւ մը, արկածով, ռումբ մը նետած է Մակեդոնիոյ արեւելեան ջրջանի մէկ դիւղին վրայ, բայց զոհ չկայ:*

*– Չերնոմիրդին Ուաչինկթըն հասաւ Մայիս 3–ին եւ տեսնուեցաւ Գլինթընի հետ: Կը թուի որ, առաջին անգամ ըլլալով, Գլինթըն դէմ չէ դադարի մը, պայմանաւ սակայն որ Միլոսեւիչ ընդունի դրուած պայմանները: Ռմբակոծութիւնները պիտի չարունակուին մինչեւ որ ՕԹԱՆ–ը յաղթէ եւ ուրեմն ռումբերը կը տեղան: Սերպիան մուխին մէջ մնացած էր Մայիս 3–ին, նետուած ռումբերը կրաֆիթով յատկութիւնն ունին չէզոքացնելու ելեկտրական բոլոր ցանցերը: Ելեկտրականութենէն զատ, քնակչութիւնը զրկուած է նաեւ ջուրէ եւ ձեմի Շէ, ՕԹԱՆ–ի ծանօթ բաներերը յայտարարած է.– «Ինչ որ ըրինք կը ձգտէր փաստելու մեր կարողութիւնը մարելու ելեկտրական դրութիւնը այն պահուն երբ կ'ուզենք, առանց քանդելու կառոյցը»:*

*– Հինգերորդ անգամ ըլլալով, Շիրաք խօսք առաւ, արդարացնելու համար ՕԹԱՆ–ի ռազմավարութիւնը: Միլոսեւիչի ցոյց տուած բարիկամեցողութիւնը, պինդոմներու ազատ արձակումը եւայլն մի–այն ու միայն խարկանքներ են եւ ուրեմն պիտի պատճառ չհայ ռազմավարութիւնը փոխելու: Եւ նախագահ Շիրաք նոյնիսկ համոզուած կը թուի երբ կ'ըսէ թէ այս գործողութիւնները կը կատարուին յանուն բարոյականի ու կը չեշտէ.–*

*«Ձեր բոլորին եւ մանաւանդ այն սեռնդներուն որոնք պատերազմ չեսան, կ'ուզեմ ըսել որ այսօրուան ճակատամարտը օրինակելի է: Հիմնուած չէ տնտեսական կամ ռազմավիտական յետին մտքերու վրայ, այլ ազգերու բարոյականի եւ պատուոյ ըմբռնումի մը»...:*

*Անկէ մէկ ելոյթին, Շիրաք աւելի բուռն ոճ մը կը գործածէ, նոյնիսկ երբեմն կատաղի, երբ կ'արտայայտուի Միլոսեւիչի վարչակարգին մասին, այն ապատուութիւնը թողլով որ պաշտպան փաստաբանն դատի մը որ այլեւս ոչ ոք կը համոզէ որ տեղին էր եւ այս ձեւով կը լուծուէր:*

*– Ցունաստան կը բողոքէ Եւրոպական Միութեան Ապրիլ 26–ի կոչին դէմ, ուր ան կ'ուզէր որ մարզական միութիւնները չքաջալերեն եուկոսլաւ մարզիկներու մանակցութիւնը իրենց երկիրներուն մէջ տեղի ունեցող մրցումներու: Եւրոպական հարցերու նախարարը՝ Քրանիտոթիս յայտարարած է այս առթիւ.– «Ցունաստան, որ նախապատմական ջրջանէն ու–ղիմպիական աւանդութիւն մը ունի, կը խորհի որ նման միջոցներու պէտք չէ դիմել: Մարզիկները պէտք է հեռու պահուին քաղաքական նկատումներէ: Նախապատմական ջրջանին, Յաղերու ընթացքին պատերազմը կը կենար»:*

ԳՈՐՍԻՔԱ

### ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԿԱԲԵԿՈՒԱԾ

*Զգայացունց անակնկալ մըն էր, Մայիս 3–ի երեկոյեան, Գոյսէքայի նահանգապետ՝ Պերնար Պոնէի ձերբակալութիւնը: Ան դիպաշ կը մնար Մայիս 4–ի առաւօտուն, իր զրասենեակի պետին հետ: Նախորդ իրիկուն, ժամը 9–ի չուրջ է որ, երբ Պ. Պոնէ բաժակ մը կը պարպէր իր զործակիցներուն հետ, դատախազը կը ժամանէր, խումբ մը զինուորական ոստիկաններու հետ եւ կը յայտնէր նահանգապետարանին որ դիպաշ է:*

*Հարցը չատ ծանրակչիռ է, երբ մանաւանդ յիշենք որ դեռ անցեալ չաբթու, Ներքին նախարար՝ Շեվէնման, ապա՝ Ժոսփէն իսկ քուն կերպով կը պաշտպանէին նահանգապետը: Առաջինը կը յայտարարէր թէ ան կը վայելէ իր ամբողջական վստահութիւնը, մինչ Ժոսփէն կանխահաւօրէն ձախող բառախաղ մը կ'ընէր ըսելով՝ պետութեան հարցն է, պետական հարց չէ, աւելցնելով թէ պետութիւն ոչ մէկ պատասխանատու դեր ունեցած է այդ հարցին մէջ: Ծանօթ է որ Ապրիլ 19–էն 20–ի դիշերը, Այաչիոյի ծովափը գտնուող Շէ Ֆրանսիս ճաչարանը հրկիզուած էր եւ որու հետեւանքով ներքինի զինուորական ոստիկաններ որոնք մաս կը կազմեն ժէ–փէ–իւ–ի: Այս խումբը «ապահովութեան դունդերու խումբ» ստեղծուած է 1998–ին եւ հակահարեւչական պաշտօն ունէր: 95 անդամ ունի, երեք դունդերու բաժնուած, մէկուն պաշտօնն էր մերձաւոր պաշտպանութիւնը բարձրաստիճան անձերու, միւս երկուքը, չուքի մէջ, կը զրաղէին մէկը՝ տեղեկատուութեամբ, միւսը՝ միջամտութեամբ: Մրցակցութիւնները չէին պակսեր սակայն դատաւորներուն, Ներքին նախարարութեան, վարչապետութեան եւ նահանգապետարանին միջեւ:*

*Տեղւոյն վրայ ձերբակալուած զինուորական երեք ոստիկանները, որոնցմէ մէկուն ձեռքերն ու դէմքը այրած էին, նախ պնդեցին որ միայն հսկողութեան աչխատանք մը կը տանէին, ի վերջոյ խոստովանեցաւ թէ հրկիզումի հրահանգը ստացած էին զնդապետ Անրի Մազերէն, որ Գորսիքայի զինուորական ոստիկանութեան պետն է: Երեք ոստիկանները երեք անգամ մերժած էին երթալ այրել այդ ճաչարանը, բայց, ի վերջոյ ապառնալիք ստացած էին, որ պատիժ կ'ենթարկուէին, եթէ չհնազանդէին:*

*Այս ամբողջ ցաւոտ պատմութիւնը ունի նաեւ անլուծելի հարց մը կամ աւելի ճիշդ՝ հարցում մը՝ ինչո՞ւ: Արդարեւ, ինչո՞ւ այրել այդ ճաչարանը:*

***

*Անկէ պարագայի մէջ, նոյնիսկ եթէ տեղեակ էր, նահանգապետին պատասխանատուութիւնը կասկած չի վերցներ, իր դերքովն իսկ: Եւ այսօր, իրաւական պետութեան ըմբռնումն իսկ ծիծաղելի է այլեւս կղզիի մը մէջ, ուր այդ կը քարոզուէր Փարիզէն, տարիներէ ի վեր:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՑԱԽ

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Ապրիլ 3/4)

### ՎԱՆՕ ՍԻՐԱԴԵՂԵԱՆ ԵՐԵՒԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

*Մայիս 3–ին Սոֆիա _ Երեւան թռիչքով Երեւան վերադարձած է ՀՀՇ վարչութեան նախագահ Վ. Սիրադեղեան որուն փետրուարին հապճեպով մեկնումէն ետք դվխաւոր դատախազին դիմումով ջնջուած էր երեսփոխանական անձեռնմխելիութիւնը եւ որոշուած՝ քրէական հետապնդումի ձեռնարկել իրեն դէմ: Օդանաւը հազիւ էջք կատարած, ան ձերբակալուած է ու տարուած դվխաւոր դատախազութիւն, մինչ ՀՀՇ–ի չէնքին մէջ հանդիսաւոր ընդունելութիւն պատրաստուած էր զինքը դիմաւորելու համար:*

*ՀՀՇ–ի վարչութենէն Յ. Իգիթեան յառնած է թէ արդէն վեց երեսփոխանի ատորազրութեամբ դիմումնագիր ներկայացուած է դվխաւոր դատախազութեան որ Վ. Սիրադեղեան չբանտարկուի: Ան դատախազութեան առջեւ հաւաքուած լրագրողներուն յայտնած է թէ անհրաժեչտ 500 հազար դրամը հաւաքելու զբաղած են, քանի որ այդ դումարը պահանջուած է որպէս երաչխաւորագին: Յ. Իգիթեան Վ. Սիրադեղեանի ձերբակալութիւնը ապօրինի համարած է, նմանցնելով ՀՅԴ–ի դեկավարներուն ձերբակալութեան:*

*Նոյն իրիկունը ծանօթ փաստաբան Ռուբէն Ռչտունի յայտնած է թէ ընդունած է Վ. Սիրադեղեանի պաչտպանութիւնը ըստանձնել: Ան չէ ըսած թէ որմէ եկած է այդ առաջարկը, բայց աւելցուցած է թէ իր պարտականութեան կը սկսի ենթակայի համաձայնութիւնը ունենալէ ետք: Ռ. Ռչտունին եղած է «Դրօչ»ի դործով մեղադրուած Արմենակ Մոնթոյեանի փաստաբանը:*

*Վ. Սիրադեղեանի ձերբակալութիւնը մեծ պոռթկումի պատճառ եղած է ՀՀՇ–ի չարքերուն մօտ որոնք միացած՝ համակիրներու բազմութեան, փակած են դատախազութեան առջեւի փողոցները եւ «Ազատութի՛ւն Վանօյին» բացագանչած: «Արմէնփրէս»ի թղթակիցին ատացած տեղեկութիւններուն համաձայն, ՀՀՇ բողոքի նամակ մը կը յանձնէ ընտրական յանձնաժողովներուն, ըսելու համար որ դատախազութեան գործողութիւնները կը Սնանկութիւնն է նաեւ Ֆրանսայի տարբներու գործիքական քաղաքականութեան:*

*Այսօր ցնցուած է կառավարութիւնը, Ժոսփէն դիմած է Շիրաքի որ անմիջապէս պաչտօնազրկէ նահանգապետը, նոյնիսկ եթէ անմեղութեան կանխավարկածը կայ միչտ: Բայց եւ այնպէս երբ Շեվէնման ողի ի բուն կը պաչտպանէ նահանգապետը, նոր հարց մը կը ծագի, – կամ Շեվէնմանի համար աուտ կը խօսի, կամ Պոնօ աուտ խօսած է Շեվէնմանի, երկու պարագաներն ալ ծանր են:*

*Ուրախացողներ կան անչուչտ, գլխաւորաբար՝ Գորսիքա, ուր ազգայնականներու մէկ ներկայացուցիչը դեռ քանի մը ամիս առաջ, զսած էր նահանգապետին՝ «ե՞րբ պիտի մեկնիք» ու Պոնօ պատասխանած էր երբ վերջ դանեն ահաբեկչութիւնը, ոաքէթը եւայլն, եւայլն:*

*խոչընդոտեն իրենց թեկնածուին ընտրարչաւը:*

*Վ. Սիրադեղեան, ըստ օրէնքի տրամադրութեան, կրնայ արդելափակուած պահուիլ չորս օր, մինչեւ որ դատախազութիւնը որոչէ թէ հարցաքնութիւնը այդ պայմաններո՞վ տեղի կ'ունենայ, թէ ազատ վիճակով:*

***

### ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒ ԸՆՏՐԱՐՇԱԻԸ ՍԿՍԱԾ

*Մայիս 1–ին, աչխատանքի տօնին օրը, Համայնավար կուսակցութիւնը Ազատութեան հրապարակին վրայ հանրահաւաքով մը բացած է ընտրապայքարը որուն չուրջ տասը հազար հոգի մասնակցած է: Ուչադրութիւն դրաւած են Խորհրդային Հայաստանի դրօչները, Լենինի դիմանկարները, կարմիր փողկապով պիոներները: Ելոյթ ունեցողները՝ Ս. Բաղալեան, Լ. Յակոբեան, Ե. Մանուկեան, Խ. Սարգսեան եւ ուրիչներ ներկայի իչխանութիւնը քննադատած, խորհրդային չրջանը փառաբանած են: Ս. Բաղալեան անդամ մը եւս դատապարտած է ՕԹԱՆ–ի յանոամեակին Ռ. Քոչարեանի բերած մասնակցութիւնը:*

***

### ԿԵԴՐ. ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ԿՈՂՄԻ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ

*Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 1–ին ընդունած է Կեդր. Ընտրական Յանձնաժողովի նորընտիր նախագահ Արտակ Սահրադեանը: Շեչտելով յիշեալ մարմնին կարեւոր դերը, Հանրապետութեան նախագահը ըսած է թէ ընտրութիւններուն օրէնսդրութեան համապատասխան կազմակերպան գործին մէջ ան կը կրէ անմիջական պատասխանատուութիւն:*

***

### ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՅՈՒՑԻԶԻՆ ԵՐԵՒԱՆ ԱՅՑԸ

*Արտաքին նախարար Վ. Օսկանեան Մայիս 1–ին ընդունած է Ֆրէնք Լամպախը, որ Մինսկի խումբի Գերմանիոյ ներկայացուցիչն է ու չրջապտոյտ մը կը կատարէր Կովկաս: Հանդիպումին մասնաւորապէս արծարծուած է ԼՂՀ հարցը: Գերմանացի դիւանագէտը չեչտը դրած է հարցը Մինսկի խումբի չրջանակներուն մէջ բանակցութեանց միջոցաւ լուծելու եւ այդ բանակցութիւնները աւելի աչխոյժ դարձնելու անհրաժեչտութեան վրայ: Վ. Օսկանեան ալ վերջերս Ուաչինկթըն արձանագրուած կարգ մը զարգացումներու մասին տեղեկութիւններ տուած է: Յօսակցութեան նիւթ եղած են նաեւ Եւրոպայի Միութեան հովանիին ներքեւ Յունիս 22–ին նախատեսուած կովկասցի երեք նախագահներու հանդիպումը, Եւրոպայի Խորհուրդին Հայաստանի անդամակցութեան*

(Շար·ը Դ· էջ)

### ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

*Մայիս 3–ին, Մեծ Երթին մասնակցողները ճամբայ ելած են Փրէնի սու Թիլէն եւ հասած են Աւալոն ուր եւս հանդիպում ունեցած են տեղւոյն թաղապետութեան հետ եւ ուրիչ զրկած են երրեակ նամակները:*

# ՄԱՐՄԱՐԱ

## ԳԱՒԱՌԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Գաւառի եկեղեցիներուն մասին խօսիլ, բայց չմիջել գաւառի գերեզմանատուները, կարելի չէ, կամ ճիշդ չէ: Հոն ուր մեր ժողովուրդէն բեկորներ ապրած են, հոն, նոյնիսկ եթէ այդ բեկորները ոչինչ ունեցած են, զպրոց, եկեղեցի, մշակութային ակումբ, եւայլն, գոնէ գերեզմանատուն մը ունեցած են: Կեանքի օրէնքը այսպէս կը թելադրէ: Որովհետեւ հոն ուր կեանք կայ, կայ նաեւ մահ: Եւ հոն ուր մահ կայ, կայ նաեւ գերեզմանատուն: Անշուշտ գիտենք կամ կրնանք ենթադրել թէ որոշ տեղեր մեր ժողովուրդը ինքնուրոյն գերեզմանատուն մը չէ կրցած ունենալ, բայց գոնէ ունեցած է ընդհանուր գերեզմանատուն մը մէջ իր անկիւնը, իր հայկական թաղամասը, ուր հողին յանձնած է իր ննջեցեալները: Այդ թաղամասերը այսօր ալ սրբութիւն կը նկատուին ոչ թէ միայն ննջեցեալներու ընտանիքներուն, այլ ամբողջ մեր ժողովուրդին համար:

Տխուր բան է մտածել թէ մարդիկ, ամէն արտագաղթի ընթացքին, թէեւ չատ բան կրնան տանիլ իրենց հետ, բայց բացարձակապէս չեն կրնար տանիլ իրենց պապերուն գերեզմանները: Ամէն արտագաղթող, միասին տարածներուն քով, չատ բաներ ալ կը թողու իր ետին, ինչպէս անչարժ կալուած, մեծահասակ կարասի, յիշատակներ, բարեկամներ ու ղբացիներ, եւ գեռ այսպիսի դժուար փոխադրելի արժէքներ: Բայց այս բոլորին մէջ ամէնէն սրտաճմլիկը պէտք է նկատի ընտանիքի գերեզմանատունը, հոն թաղուած հայրերու ու մայրերու դամբանները, դամբանաքարերը, որոնք անչարժ են տէրունական կնիքով: Զգայուն մարդոց համար դիւրին չէ այս բաժանումը, թէեւ վստահ գիտենք, թէ բաժանումէն քիչ ժամանակ վերջ, ամէնէն զգայուն մարդն իսկ պիտի վարժուի ու օր մըն ալ պիտի մոռնայ որ հեռաւոր ափերու վրայ, թողած է իր պապերուն դամբարանները: Բայց այստեղ կէտ մը կայ: Դամբարաններ կան, որոնք նոյնիսկ եթէ օր մը մոռցուին ու լքուին իրենց ընտանիքներուն կողմէ, տակաւ կը դառնան ամբողջ ժողովուրդին ապրանքը, անոնք կը դառնան ամբողջ ժողովուրդին գուրգուրանքին արժանի: Եւ ասիկա միայն հոչակաւոր մարդոց պարագային չէ: Օրինակ այսօր Պետրոս Դուրեանի դամբարանը ամբողջ ժողովուրդին կը պատկանի, ո՛չ թէ Դուրեան ընտանիքի չառաւիղներուն, եթէ կան: Բայց այսօր գաւառի անորոշ մէկ անկիւնը, Տիգրանակերտի մը մէջ, կամ Իսքէնտէրունի մը մէջ կան Հայերու գերեզմաններ, այդ գերեզմանները որքան ալ անծանօթ ու անորոշ մարդոց պատկանած ըլլան, նշանակութիւն մը ունին մեզի համար:

Գտնուած են երդիծաբաններ որոնք հայ ժողովուրդը ծաղրանքի ենթարկած են, պնդելով որ հայ ժողովուրդը ողջերուն նայիլ չի գիտեր, բայց չատ լաւ կը նայի իր մեռելներուն, այսինքն հիանալի գերեզմաններ կը շինէ իր մեռելներուն: Եթէ բոլորովին ալ ճիշդ ըլլար այս հեգնանքը: Շիշլիի կամ Պալըքլըի գերեզմանատուներու խնամեալ վիճակը, մեր կարծիքով, փաստ մը չէ այս մասին: Այո՛, այդ գերեզմանատունները այցելուներուն կրնան մեծ հիացում պատճառել, այն վստահութիւնը ներշնչել թէ մենք բացառիկ սէր ու յարգանք ունինք մեր ննջեցեալներուն նկատմամբ, թէ կ'ուզենք ամէնէն թանկարժէք ու զեղակերտ դամբարանները չինել անոնց համար, կանոնաւոր կերպով հոգեհանգստեան պաշտօններ կը կազմակերպենք անոնց հոգւոյն, անկեղծ արցունքներ կը հոսեցնենք մեր ննջեցեալներուն եռեւէն, նոյնիսկ տասնեակ հազարաւոր անգամներ արդարացուցած ըլլալ կը թուինք մեր նշանաւոր այն ասացուածքը որ կ'ըսէ. «Գնա մեռիր, եկո՛ւր սիրեմ», բայց եւ այնպէս, մենք չատ չուտ կը մոռնանք մեր մեռելները եւ այս տեսակէտէն՝ որեւէ կարեւոր տարբերութիւն չունինք ուրիշ որեւէ ազգէ մը: Եւ պարզապէս անմիջական առացուածքն է սա «Գնա մեռիր, եկո՛ւր սիրեմ»ը, որովհետեւ մեռեալներէն ո՛չ մէկը ետ պիտի գայ, որպէսզի սկսինք սիրել զինքը: Այս ասացուածքին մէջ սա «եկուր» բառը կը մատնէ ամբողջ մեր հոգեբանութիւնը: Ինչո՞ւ արդեօք չենք ըսեր. «Գնա մեռիր որ քեզ սիրեմ»: Ինչո՞ւ «եկուր» բառը աւելցուցեր ենք հոն: Որովհետեւ արդեօք մեր խմաստուն պապերը չատ լաւ դիտէին որ զացողները երբեք պիտի չգա՞ն այլեւս:

Մարդկային հաւաքականութիւնները, մանաւանդ փոքրիկ ժողովուրդներու հաւաքականութիւնները զոյատեւման ազդրիւր մը պէտք է տեսնէն գերեզմանատուներու եւ ննջեցեալներու նկատմամբ ցուցաբերուած յարգանքին մէջ: Պապերու յիշատակին առջեւ ամէն յարգանք, ամէն յարգանքի լուութիւն, այդ յարգանքը ցուցաբերողին կը յիշեցնէ թէ որո՞ւն զաւակն է ան: Կը յիշեցնէ թէ ո՞ւր կը գտնուին իր պապերուն ճախիւնները, կամ ո՞ւր ապրած են անոր պապերը: Այսպիսի յիշեցում մը անպայման չատերու մօտ պիտի ունենայ իր բարերար ներգործութիւնը, այսպէս կամ այնպէս անոր բաներ մը պիտի յիշեցնէ իր արմատներէն, եւ անոր պիտի յուշէ այն հրամայականը որ ան գոնէ ապրելակերպի զանազան տեսակներով քիչ մը հաւատարիմ պէտք է մնայ իր այդ արմատներուն:

Վերադառնալով մեր գերեզմանատուներուն, անշուշտ որ գաւառի մէջ ալ ունեցած ենք գերեզմանատուներ, այսօր հոն համայնք մնացած ըլլայ կամ ոչ: Մէկ քանիին տակաւին կրնանք տէր կանգնիլ, քանի որ անոնց չուրջ ունինք բնակիչներ: Օրինակ անցեալ տարի Տիգրանակերտի Հայոց գերեզմանատունէն քաղաքս փոխադրեցինք բազմաթիւ ննջեցեալներու աճիւնները, որովհետեւ գերեզմանատունը պիտի ապատեփականացուէր: Իսկ անդին կան ո՛վ գիտէ որքան չատ գերեզմանատուներ, որոնք այլեւս կորսուած, անհետացած են: Անոնք որ հոն կը ննջեն, ամբողջովին լքուած ու մոռցուած են:

Մխայն թէ մեռեալները մեզի համար միայն գերեզմանի մը մէջ դամբարան չեն նշանակեր: Մեռելներ կան որոնք գերեզման իսկ չեն ունեցած, կամ որոնց գերեզմանները անյայտ են: Իրական դամբարանը՝ մտքին մէջ եղածն է, գաղափարի ու հաւատքի մէջ եղածն է: Իր ցեղին բարքերուն ու սրբութիւններուն հաւատարիմ մնացած ամէն հայ մարդ իր ուղեղին մէջ կը պատրաստէ իր պապերուն գերեզմանատունը: Կամ իր սրտին մէջ: Եւ հո՛ն է որ կրնայ, առանց անպայման հողակոյտ կամ խաչքար փնտռելու, հանդիսաւոր աղօթք մը մրմռալ իրեն ծանօթ ու անծանօթ բիւրաւոր ննջեցեալներու հոգւոյն համար: Եւ այսպէս է որ ան մասամբ կրնայ իրաւունք ունենալ պնդելու թէ կը չարունակէ մնալ որպէս անոնց յաջորդը:

Բայց ասիկա չի նշանակեր որ պիտի լքենք ու պիտի մոռնանք հողի վրայ չինուած որեւէ գերեզմանատուն, ուր որ ալ ըլլայ ան, որքան հեռու ալ ըլլայ ան:

Մեռելներու նկատմամբ յարգա՛նք:

Պէտք է քիչ մը վախնալ այն մարդէն, որ գերեզմանի մը առջեւէն կ'անցնի առանց դոյդն իսկ յուզուելու: Կամ՝ մեռելի մը մասին կը մտածէ առանց սրտին մէջ ցաւ մը զգալու:

Ռ. Հ.

**ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ**

# ՀՆԱԽՈՒԶԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ՄԸ

*Ապրիլի սկիզբը Հարաւային Ամերիկայի Անտեան լեռներուն 6700 մեթր բարձրութեան վրայ որոնք մաս կը կազմեն Ինքանեռու բնակավայրին, երեք պատանիներու մոմիաները գտնուած են: Նուազ 25 աստիճանի ցուրտը անաղարտ պահպանած է անոնց մարմինը ու տեսնողը կը կարծէ թէ քանի մը չաբաթ առաջ մահացած են անոնք:*

*Յայտնաբերող հնախոյզը ամերիկացի է. կը կոչուի Եոհան Ռայնհարտ. ան զբաղած էր Եուանիթա անուանուած մոմիան ալ, չորս տարի առաջ: Կը խոստովանի որ երբեք այսքան լաւ պահպանուած մոմիա չէր տեսած իր կեանքին մէջ: Երեք պատանիներուն մարմինները ներքին զործարաններով, մինչեւ իսկ անոնց սիրտերուն եւ թոքերուն մէջ արիւնի մասնիկներով, հինգ դար սառած մնացած են այդ բարձրութեան վրայ. այսօր ալ սառած վիճակի մէջ կը պահուին արժանթինեան համալսարանի մը մէջ:*

*Պատանիներէն մէկուն թեւին մխուած փետուր մը ենթադրել կուտայ որ անոնք զոհուած են կրօնական մոռայլ ծէսի մը ընթացքին: Անոնցմէ երկուքը աղջիկ են, մէկը մանչ: Այս գտածոն մեծապէս խըթախուսած է Ռայնհարտը որ 18 մոմիա յայտնաբերելէ ետք ասպարէզէն հեռանալու որոշում տուած էր: Յայտնաբերումի վայրը ներկայիս աշխարհի ամէնէն բարձրադիր հնախուզական չրջանն է: Հոն տիրող ցուրտը եւ խոնաւութիւնը հաւանական պատճառը կը նկատուին մարմիններու անվնաս պահպանումին, քանի որ անոնց բոլորովին ցամքիլը կանխարգիլելով սառեցուցած են զանոնք: Մոմիաները քննող թժիշկները չեն կրցած հաւատալ որ սրտի, երիկամներու նման զործարանները կրնան այդ աստիճան անվթար մնացած ըլլալ:*

*Պէտք է սպասել քննութիւններու արդիւնքին, երեք պատանիներուն ստոյգ տարիքները գիտնալու համար: Դատելով անոնց քով գտնուած արձանիկներէն, այլ ընծաներէ, կ'ենթադրուի որ 8 – 15 տարեկանի միջեւ են: Յայտնաբերումը լոյս պիտի սփռէ մարդկային զոհաբերութեան արարողութիւններուն վրայ որոնց մասին վէմեր կան: Ռայնհարտի կարծիքով, կասկած չկայ որ երեք պատանիները սահմանուած էին զոհաբերուելու, հաւանօրէն իրենց ծնծրակին իջած միակ հարուածով մը:*

*Ռայնհարտի գտածոն կարեւոր ազդակ կը համարուի Ինքաներու պատմութեան վրայ նոր լոյս սփռելու եւ զայն կրկին չարադրելու տեսակէտէն:*

ՔԱՂՀԱՆ

## ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

### ԷՏՈՒԱՐ ՏԷՐԻՔԼԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

ՄԱՐՍԻԼ («Յառաջ»).–

Քանի տարի առաջ ճակատագիրը հաւաքեց Տէրիքլեան ընտանիքը: Սահարայի անապատին մէջ, զինուորական ծառայութեան ընթացքին, արկածի մը հետեւանքով ընտանիքին միակ զաւակը Էտուար, իր կեանքի գարունին, մահացաւ անմխիթար ձգելով հայր, մայր, ազգականներ եւ բարեկամներ:

Հայրը՝ Յակոբ Տէրիքլեան ապշային խոր պացումներով եւ ապրումներով տոգորուած մանաւանդ պաչատումնք ունենալով հայ ղէրին եւ խօսքին հանդէպ եւ այդպէս ալ դաստիարակած ըլլալով իր զաւակը, փափաք յայտնեց որ արկածէն եկած նիւթական հատուցումը երթայ ամբողջովին հայկական զպրոցի մը: Այսպէս, համաձայնութիւն կնքուեցաւ Մարսէյլի Համազգայինի զպրոցին հետ: Եւ երբ նորակառոյց զպրոցը կանգնի (գեռ յատակագիծի վրայ է) մանկապարտէզը պիտի կրէ՝ «Էտուար Տէրիքլեան»ի անունը: Դժբախտաբար, հայրը որ քանի մը տարի առաջ մահացաւ ականատես պիտի չըլլայ:

Զորս տարի առաջ, Սեդա Սիմոնեան մտածումն ու նախաձեռնութիւնը ունեցաւ հիմնելու պատանեկան եւ երիտասարդական միութիւն մը Էտուար Տէրիքլեանի անունը կրող: Այս միութեան թատերական, մշակութային, զեղարուեստական ձեռնարկներուն մասին եւ Հայաստան ու Գանատա ճամբորդութիւններու մասին բազմիցս զրած ենք այս սիւնակներուն մէջ:

Կիրակի, Ապրիլ 25–ին, Էտուար Տէրիքլեան Միութիւնը ոգեկոչեց տարաբախտ երիտասարդին մահուան 20–րդ տարելիցը: Կատարել տուաւ յատուկ հոգեհանգստեան պաչօն Գոմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Ապա, Հայ Մշակոյթի Տան մէջ ազգականներ եւ բարեկամներ սարքեցին սիրոյ սեղան մը եւ կատարեցին ոգեկոչման ամփոփ արարողութիւն մը: Միութեան նախագահը Լիոնէլ Պոզեան յուզիչ պատկերներով սկսաւ իր խօսքը: Իր մանկութեան ընկերներէն Ժ. Լ. Գասապալեան ներկայացուց բարեկամը: Բժիշկ Զաւէն Կապրիէլեան անդրադարձաւ Տէրիքլեան ընտանիքի

## ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԷՅՐՈՒԹԻ Լիբանանահայ գրական չրջանակի կազմակերպութեամբ, Ապրիլ 11–ին, դասախօսութիւն մը տեղի ունեցած է նուիրուած Անդրանիկ Անդրէասեանի, ի յուչ անոր 90–ամեակին: Օրուան բանախօսը՝ Ասպետ Ռուբինեան (բուն անունով՝ Յակոբ Տիւնայեան) անդրադարձած է ղրացեալ հրապարակագիր–դրագէտին վաստակին: Փակումը կատարած է մէքր Գասպար Տէրտէրեան:

*
**

ՄՈՆՐԻԱԼԻ Պոլսահայ Միութեան «Հինդլեան» դրադարանին մէջ, Ապրիլ 7ին պոլսահայ «Մէկ» միութեան մշակութային յանձնախումբին նախաձեռնութեամբ դասախօսութիւն մը տեղի ունեցած է: Օրուան դասախօսին՝ Գաբրիէլ Պասմաճեանի նիւթը եղած է 1914 – 1918 երկարող ժամանակաշրջանը:

*
**

ՊԷՅՐՈՒԹԻ Ամերիկեան Համալսարանի «Իսմայլի Հոլ»ին մէջ, Ապրիլ 10–ին, համերգ մը տուած է սոփրանօ Արաքս Դաւթեան, կազմակերպութեամբ՝ Համազգայինի Շրջ. Վարչութեան, որու անունով ողջոյնի խօսք արտասանած է Նորայր Նաճարեան: Արաքս Դաւթեան ընակաւոր յայտագիր մը ներկայացուցած է:

PUBLICATIONS REÇUES

UGAB

— MAGAZINE —

N° 1, Mars 1999

SOMMAIRE :

*DOSSIER* : Les Arméniens de Pologne;

*REPORTAGE* : Le photographe Jean-Martin Le Révérend revient du Haut-Karabagh;

*SUCCESS STORIES* : Rencontre avec un chasseur de diamants. — Un chercheur inspiré: Depuis 20 ans Ara Hovanessian observe minitieusement les cellules humaines.

*CULTURE* : La bibliothèque Nubar. — Rencontre avec R. Guédiguian. — Bratsch joue au diapason de l'Europe Centrale.

*EVENEMENT* : L'Arménie dix ans après le drame. — Les actions de l'UGAB. — Les news internationales.

11, SQUARE ALBONI, 75016 PARIS.
(Paraît 4 fois par an).

# ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՄԱՄԼՈՒՈՅ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ

### «ԱՐՑԱԽԸ ԹՈՂ ԱՊՐԻ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

*Արցախի օգնութեան հարցը Գերմանիոյ մէջ կազմակերպելու նպատակով Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդը հիմնած է «Արցախը թող ապրի» յանձնախումբը, նախագահութեամբ Տոքթոր Ժիրայր Քոչարեանի: Պր. Քոչարեան արդէն 23 անգամ Պառնաուլի Տիկին Քոքսի ընկերակցութեամբ ճամբորդած է Արցախ: Ներկայիս Մարտի 16–էն ի վեր կը գտնուի Հայաստան: Պր. Քոչարեան նոյնպէս լիազօրուած է Արցախի վարչապետ Պր. Ժիրայր Պօղոսեանի կողմէ Գերմանիոյ մէջ Արցախի օգնութիւնը կազմակերպելու գծով: Յանձնախումբը կը հետապնդէ հետեւեալ նպատակները.–*

*– Գերմանիոյ մէջ Արցախի քաղաքական գործակցութիւնը կազմակերպել:*

*– Արցախի անտեսական զարգացման ծրագիրներ մշակել:*

*– Արցախի անմիջական օգնութիւնը կազմակերպել:*

*Հետաքրքրուողները կրնան կապուիլ Պր. Քոչարեանի հետ.*

*Հեռաձայն – 030 / 7713822*

*Ֆաքս. – 030 / 8517974*

*
**

### ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՒՄԲ

*Նկատի ունենալով թէ Գերմանիոյ քաղաքական կեդրոնը այս ամառ Պոնէն կը փոխադրուի Պէրլին, Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդը Պէրլինի մէջ, նախագահութեամբ Տոքթոր Թեսա Հոֆմանի, ստեղծած է «Հայկական գեղասպանութեան ճանաչման աշխատանքի խումբ մը: Այս խումբին կը մասնակցին մինչեւ օրս.– Տիկին Մելինէ Փեհլիվանեան, Տիկին Անոյշ Զէյթունեան, Տիկին Մարկարեթա Թադէոսեան, Օրիորդ Անի Օհանեան, Պր. Ժիրայր Քոչարեան, Պր. Համօ Պետրոսեան, Պր. Վարդգէս Ալեանաք, Պր. Բաֆֆի Դաւիթեան: Այս ուղղութեամբ Թեսա Հոֆմանի եւ Ժիրայր Քոչարեանի կողմէ ներկայացուած է աշխատանքի ծրագրի թուղթ մը:*

*
**

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ՊՈՒՀՈՒՄԻ ՄԷՋ

*Պր. Ազատ Օրտուխանեանի նախաձեռնութեամբ Փետրուար 28–ին Պոխումի մէջ տեղի ունեցաւ Հայ ուսանողներու համախմբում մը որուն մասնակցեցան չուրջ քսան ուսանող – ուսանողուհիներ: Պր. Օրտուխանեանի լայն ներածականէն ետք, Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդի կողմէ ելոյթ ունեցաւ Բաֆֆի Պետիկեան, ներկայացնելով կեդրոնական Խորհուրդի գործունէութիւնը: Տեղի ունեցաւ մըտքերու փոխանակում եւ խրախճանք:*

*
**

### ՀԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐԵՐ ՄԻՒՆԻԽԻ ՄԷՋ

*Մարտ 19 – 20–ին Միւնիխի ամենամեծ հանդիսութեան թանգարաններէն Ֆոլքքունստը Մուզեումի մէջ, Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդի կողմէ կազմակերպուած էին Հայ Մշակոյթի օրեր: Մշակոյթի օրերը հովանաւորուած էին Հայաստանի դեսպանատան կողմէ: Կազմակերպիչ գլխաւոր ուժերն էին մեր կազմակերպութեան երկու ժրաջան անդամները՝ Պր. Ժիլպէռ Մոմճեանը եւ Ռուբէն Վասիլեանը: Ուրբաթ օր թանգարանին տօնօրէն Տոքթոր Ռաունինկը եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Պր. Աշոտ Ոսկանեանը կատարեցին բացումը: Ելոյթ ունեցաւ Միւնիխի Եկեղեցական Միութեան Կոմիտաս երգչախումբը, պետավարութեամբ՝ Պր. Եղուարդ Մունտեանի: Հայբենակցական Միութեան պարախումբը ղեկավարութեամբ՝ Անի Զաքըրի: Ծրագրի հետաքրքրական կէտերէն էր Հալէպի Վասպուրական Միութեան կանոնց կողմէ բերուած Արեւմտեան Հայաստանի տարազներու ցուցադրութիւնը: Ելոյթ ունեցաւ Գերմանացիներու պարախումբ մը որ կատարեց Հայկական պարեր: Այս պարախումբը պատրաստուած է Ֆրանսահայ յայտնի պարուսոյց Էտի Ճօլէանի կողմէ: Սրահին մէջ կատարուեցաւ ցուցահանդէս Հայաստանի մասին, 38 նկարներով: Այս ձեռնարկները չատ դրական արձագանգ ունեցան գերմանի հասարակութեան մօտ:*

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

# ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԼԷՍԻ ՄԷՋ

— ■ —

*Կիւնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ, Ապրիլ 11–ին, տեղի ունեցած է հրապարակային ընդոյց մը Պերճ Զէյթունցեանի հետ: Բացումը կատարած է Արմէն Տօնոյեան: Պերճ Զէյթունցեան խօսած է Հայաստանի անկախութեան առաջին տասնամեայ շրջանի ժողովրդական զարթօնքի եւ քաղաքական ու տնտեսական անկումներու մակընթացութիւններուն մասին, նշած է թէ երկքաղաքացիութեան հարցը ի վերջոյ պիտի լուծուի, թէկուզ որոշ սահմանափակումներով: Ապա, ներկայացնելով «իշխանութիւններուն տասը տարիների կատարած, թոյլ տուած բացթողումները, սխալները, չհամոզական նկրտումները», Պերճ Զէյթունցեան ըսած է թէ «մխայն խորհրդանիշերով չի կարելի ապրիլ»: Հուսկ՝ ան քննադատած է սեփականաշնորհման գործընթացը, կարեւոր ձեռնարկութիւններու վաճառքը, յատկապէս օտարներուն:*

*
**

### ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՑԹ

*Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մէջ, Ապրիլ 9–ին, տեղի ունեցած է Սրեմտեան Թեմի դպրաց դասերու հաւաքոյթը, մասնակցութեամբ Լոս – Անճըլըսի շրջանի, ինչպէս նաեւ Սան – Ֆրանսիսքոյի եւ Ֆրէզնոյի դպիր – դպրուհիներու եւ հոգեւորական դասուն: Ցայտադիրը վարած է Վիդէն Քահանայ Վասիլեան: Խօսք առած են Գրիգոր Վրդ. Զիֆթճեան, Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան, Պարթեւ Աբեղայ Կիւլիւմեան եւ հուսկ՝ առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոս Մարտիրոսեան, գնահատելով դպրաց դասերու դերը եկեղեցւոյ պայծառութեան մէջ:*

ԼՐԱՏՈՒ

# ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

## ՀՌՈՄ

*Շաբաթ, Ապրիլ 24–ին, երեկոյեան ժամը 6–ին, Հռոմի Ս. Նիկողայոս Հայ Եկեղեցւոյ մէջ նշուեցաւ Ապրիլեան նահատակներու ոգեկոչման յիշատակը, հայածէս պատարագով, զոր մատոյց գերապայծառ Եղիա Եղիայեան մեծաւորը Հռոմի Լեւոնեան Հայ Դպրեվանքին:*

*Մեծ բազմութիւն մը (հայ եւ իտալացի) ներկայ էր արարողութեան եւ անոր յաջորդող ոգեկոչման հանդիսութեան կազմակերպուած՝ Հռոմի հայ գաղութի յանձնախումբի կողմէ:*

*Ցուշատօնը սկիզբ առաւ «Հայաստանի Քայլերգ»ով, զոր լսելի ըրաւ գաղութի երգչախումբը պետավարութեամբ՝ Պարթեւ Աբեղայ Կիւլիւմեանի (Անթիլիասէն) դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Հռոմահայ գաղութէն Օր. Քրիստին Ժանժէյի:*

*Բացման խօսքը արտասանեց յանձնախումբի առաջնադպրուհի՝ Տիկին Սոնիա Նիւբփէթլեան, ան ողջունեց մեծաթիւ ներկաները (ի շարս որոնց, Գերապայծառ Եղիա Եղիայեան մեծաւորը Լեւոնեան Դպրեվանքին ու փոխ – մեծաւորը, Անատ Ցղութեան Հայ Քոյրերու մեծաւորուհին ու միաբանակից քոյրերը, Իտալիոյ եւ Վատիկանի մօտ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները, Վատիկանի ձայնասփիւռի հայկական բաժնի տնօրէնը եւ իտալական մամուլէն հայասէր լրագրողները), ապա Տիկին Նիւբփէթլեան խօսեցաւ օրուան յայտադրին մասին, ներկայացնելով՝ օրուան բանախօսը՝ Ղեւոնդ Վրդ. Քէնտիրճեան՝ փոխ – մեծաւորը Լեւոնեան Դպրեվանքին:*

*Հայր Ղեւոնդ զեղեցիկ ոճով, արտասմլիկ խօսքերով վեր առաւ նահատակներու յիշատակը, ան նաեւ սահիկներու ցուցադրութեամբ՝ «Նմանութիւն – բաղդատութիւն» ըրաւ Ցխուսի չարչարանքին ու հայ ազգի նահատակութեան միջեւ. հրաւիրելով հայ ժողովուրդը միութեան, որովհետեւ – ըսաւ ան – Միութեան մէջ է հայ ազգի զօրութիւնը:*

*Երգչախումբը հրամցուց օրուան տօնին պատշաճ այլ երգեր, Տիկին Սիլվիա Իփլիքճեան եւ Պր. Վարուժան Ահարոնեան արտասանեցին: Իսկ օրուան անակնկալը եղաւ Նահատակաց յիշատակին նուիրուած՝ ու ճիշդ այն օրը լոյս տեսած՝ Հռոմահայ երիտասարդ – երիտասարդուհիներու կողմէ պատրաստուած՝ պարբերաթերթին «ԱԽԹԱՄԱՐ»ին՝ նորածին անդրանիկ թիւին ներկայացումը: Ապա ներկաները թափօրով ուղղուեցան դէպի Ծաչքար, զետեղեցին տունկեր ու ծաղիկներ եւ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօնը, «Հուսկ Բանք»ը արտասանեց գերապայծառ Եղիա Եղիայեան եւ օրհնեց «Ախթամար»ի առաջին գիրքը որմէ նաեւ օրինակներ բաժնուեցան ներկաներուն:*

*Ս. Ն. Ժ.*

## ՆԻՍ

*Ինչպէս ամէն Ապրիլ 24–ին, տեղւոյն Հայերը հաւաքուեցան Մեռեալներու յուշարձանին առջեւ, պահանջելով ցեղասպանութեան ճանաչումը:*

*Նոր սերունդին ինկած էր, այս տարի, օրուան ոգեկոչումը կատարել: Կարօ Մարտիրոսեան եւ Օտրէ Ժողէֆ ջերմ խօսքերով արտայայտուեցան, չէչտելով.– «Ճանաչումը բարոյական վերջին չիրիմը պիտի ըլլայ մեր ընտանիքներուն եւ թոյլ պիտի տայ որ զարման գտնէ մղձաւանջային այս հետապնդումը հակագաղութեան եւ արդարութեան»:*

*Ելոյթներէն ետք, ծաղկեպսակներ զետեղուեցան, նաեւ պաշտօնական անձնաւորութիւններու կողմէ: Հուսկ, արարողութիւնը վերջ գտաւ Նարեկ Եպիսկոպոսի եւ Հայր Պլանչիի աղօթքներով:*

*Արարողութեան ներկայ եղան տեղւոյն իշխանութեանց ներկայացուցիչները:*

---

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

**(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)**

**– 1924 - 1925 –**

**ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ**

ԳԼՈՒԽ Գ.

*– Ինչո՞ւ պարապ խօսքեր կ'ընես, Բարսեղ աղա, – գոչեց Սիրարփի, – բախտը ոտքդ գայ նէ, անդի պիտի հրես «դեռ ժամանակ կայ» ըսելով, Զապէլին ճիշդ ամուսնանալիք աւուրն է:*

*– Աղէկ, բայց որո՛ւ մասին է խօսքդ, այն չենք գիտեր:*

*– Եթէ չարմար բան մը չըլլար, ես խօսքը չէի ըներ, յարկաւ ես չարմար տեսեր եմ նէ՝ արժանաւոր է:*

*– Ով է, նէ ան ըսէ, – միջամտեց Մաննիկ:*

*– Չէ՛ք ճանչնար, – պատասխանեց Սիրարփի:*

*– Չե՞նք ճանչնար մի՞...*

*– Պոլսեցի չէ, դուրսէն եկած է, հաւնած աղջիկը գտնայ նէ, պիտի ամուսնանայ ... դուք հիմա Զապէլին բան մը մի ըսէք, թող ինք չգիտնայ, իրարու հետ թող տեսնուին, անկէ ետքը նայինք, ինչ կ'ըլլայ:*

*– Ո՞ւր պիտի տեսնուին:*

*– Ձանըմ, այդ ըսած մարդս պազար պիտի գայ, այդչափ չէ՞ք հասկնար կոր:*

*– Աւ ըսածդ ըլլալիք բան չէ, անճանչ մարդու ինչպէ՞ս կը հաննենք աղջիկ կուտանք:*

*– Անճանա՞չ մի, ո՞վ ըսաւ անճանաչ մարդ է:*

*– Ես ինչ գիտնամ, պոլսեցի չէ, դուրսէն եկած է, ըսիր:*

*– Էյ պոլսեցի չըլլալով անպատճառ անճանա՞չ կ'ըլլայ, ազնուական, քարձր ընտանիքէ մարդ է ու Տիկին Սկամպիլեանին ալ մօտիկ ազգականը:*

*– Սանկ չըսե՞ս, – գոչեց Բարսեղ էֆէնտի:*

*Տիկին Սկամպիլեանի անունը արդարեւ երաչխիք մըն էր գործին լրջութեան: Ծանօթ անձնաւորութեան մը աղջիկը եւ նոյնքան ալ ծանօթ անձնաւորութեան մը այրին, Տիկին Սկամպիլեան Բերայի քարձր դասուն մէջ փայլուն դիրք մը գրաւած էր: Հակառակ իր յորդառատ, զանգուածային մարմնին, յարաչարժ գործունէութեան մը մէջ էր միշտ:*

*Ծօսուն ու լեզուագէտ, յարաբերութիւն մշակած էր օտար բարձր շրջանակներու հետ ու ամէն կողմ համակրանք գրաւած: Որեւէ բարեգործական հաստատութիւն իր մէկ ներկայացումը, հանդէսը, հանգանակութիւնը կամ վիճակահանութիւնը յաջողցնելու համար ստիպուած էր դիմել Տիկին Սկամպիլեանի աջակցութեան, եւ բարեսէր Տիկինը կը հասնէր ամէնուն.*

*– Ես ձեզի առաջուընէ ըսի, որ շընորհքով մարդու մը մասին է խօսքս, – գոչեց Սիրարփի յաղթականօրէն:*

*– Այդ մարդուն գործը ի՞նչ է:*

*– Ագարակատէր է եղեր:*

*– Ագարակատէ՞ր ... ո՞ւր է եղեր իր ագարակը:*

*– Ռումանիա, – պատասխանեց Սիրարփի:*

*– Ըսել է ինք ռումանացի է ու հոն պիտի տանի իր կինը:*

*– Էֆէնտիմ, իր մեծ հայրը պոլսեցի է եղեր, Սկամպիլեանենց ալ մօտիկ ազգական, երիտասարդութեանը Ռումանիա գացեր, հոն հաստատուեր ու հոն ամուսնացեր ու հարստացեր, ագարակներու տէր եղեր է:*

*– Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ, որ մինչեւ հիմա Տիկին Սկամպիլեանը լրեն յարմար աղջիկ մը չէ գտեր, – դիտել տուաւ Բարսեղ աղա:*

*– Քանի մը աղջիկներ տեսեր է, չէ հաւներ:*

*– Ինչէ՞ն դիտես, որ Զապէլին պիտի հաւնի:*

*– Ձանըմ, անպատճառ պիտի հաւնի ըսող կա՞յ ... փորձ մըն է, պիտի ընենք, թող անդամ մը իրար տեսնեն, իրարու հետ խօսակցին, տեսնենք ինչ կ'ըլլայ... բան մը կը կորսնցնե՞նք: Մենք Զապէլը պաշտօնապէս աղջիկտեսի չենք հաներ – կոր... Դիպուածով իրար տեսած պիտի ըլլան, մարդ պիտի չիմանայ, մարդ ուշադրութիւն պիտի չդարձնէ:*

*– Տիկին Սկամպիլեանը տեղեկութիւն ունի՞ այս կարգադրութենէդ:*

*– Ինչ զատ մարդ չի գիտեր, էրկանս անգամ բան մը չեմ ըսած, միայն ես ինքնիրենս յարմար դատեցի:*

*– Քանի՞ տարեկան մարդ է:*

*– Հազիւ երեսուն տարեկան փայլուն երիտասարդ մըն է:*

*– Հայերէն գիտէ՞:*

*– Չէ՛, բայց լաւ ֆրանսերէն կը խօսի, փարիզի մէջ կրթութիւն առած է:*

*– Է՛հ, մեր Զապէլն ալ մայրապետանեղու քով սորված է ֆրանսերէնը, իրարու լեզու կրնան հասկնալ, – ըսաւ Տիկին Մաննիկ:*

*– Ամէն կերպով յարմար են, – վճռեց Սիրարփի:*

*– Ի՞նչ կ'ըսես դուն ասոր, – հարցուց Բարսեղ աղա իր կնոջ:*

*– Թող անդամ մը իրար տեսնեն, բան մը չենք կորսնցներ, – պատասխանեց Մաննիկ:*

*– Ես հարիւրին հարիւր վստահ եմ, որ այս գործը պիտի յաջողի, – ըսաւ Սիրարփի, – ներսէն անանկ կուգայ կոր:*

*– Իշալլահ, – պատասխանեց Բարսեղ աղա:*

(Շար. 17)

## ՀՈԳԵՇԱՆԳՈՒՍՏ

*Պարոյր եւ Պարեա Պետրոսեան կը ծա-նուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Մայիս 9, Շա-բիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին իրենց հօր՝*

### ԺԻՐԱՅՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ-Ի

*մահուան տարելիցին առթիւ։*

*Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։*

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

*1700-ամեակի հրջանէն ներս՝ քրիստո-նէութեան պետական կրօնք հռչակման ի Հայաստան, ուխտագնացութիւն մը կը կազմակերպուի դէպի «Ապէի տիւ Թո-րոնէ» վանքը (Վառ Նահանգ), Հինգշաբթի Մայիս 13, Համբարձման տօնին առթիւ։*

### ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐԻՃԵԱՆ

*Կը մատուցանէ պատարագ, ժամը 12-ին, երկեցողութեամբ՝*
*Սահակ – Մեսրոպ երգչախումբի*
*ղեկավարութեամբ՝*
*խմբավար – երաժշտագէտ*
*Խաչիկ Երմագեանի*

*Օթօբարներ կը նախատեսուին ժողո-վրդային այս ուխտագնացութեան։*

*Պատարագի աւարտին, մօտակայ վան-քապատկան դաշտի մը մէջ «փիք - նիք» կը նախատեսուի. ամէն ընտանիք իր հետը կը բերէ իր ուտելիքը։*

*Արձանագրուելու համար հեռաձայնել՝ Մայր եկեղեցի (Փրատօ)։*

*Հեռաձայն. – 04 91 77 84 70*
*Ֆաքս. – 04 91 77 89 28*

UN AN APRES L'ASSEMBLEE NATIONALE
LE SENAT DOIT RECONNAITRE
LE GENOCIDE DU PEUPLE ARMENIEN

# MARCHE
## LYON - PARIS

MARCHE-RELAIS

**Départ: 24 Avril, 16h, Place Bellecour à Lyon;**
**Arrivée : 12 Mai, Palais du Luxembourg, Sénat, Paris.**

Vous pouvez participer à une ou plusieurs étapes.

Renseignements et inscriptions :
**04. 78. 49. 42. 97**

Soyez solidaires. Adressez vos dons à :
CDCA Sénat

**Comité de Commémoration**
**Rhône-Alpes**
**CDCA**
**Héritage**

***

PLAN DES ETAPES

07/05 Joigny → Sens (31 kms)
08/05 Sens → Montereau-Fault-Yonne (32,5 kms)
09/05 Montereau-Fault-Yonne → Melun (30 kms)
10/05 Melun → Evry (25,5 kms)
11/05 Evry → Alfortville (28,5 kms)
12/05 Alfortville → Paris Sénat (12 kms)

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

*ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Փարիզի Ս. Աշխարհ Թա-դէոսեան մատուռի անդամական ժո-ղովը Շաբաթ, Մայիս 8, ժամը 16-ին, սովորական հաւաքատեղին։ Դպրոցի հանդէսի պատրաստութիւն։ Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ գտնուիլ։*

## «ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

*Նորա եւ Տօրք Տէր – Յակոբեան 750 ֆրանք։*

*ՊՈԼՍԱՀԱՅ*
*ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ*
*ՄԱՐՍԷՅԼ*

## ՄԻՋՎԱՐԺԱՐԱՆԱՑԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

*Կիրակի, Յունիս 6, 1999, ժամը 15·30*
*տեղի կ'ունենայ*
*Հայ Մշակոյթի Տան մէջ*
12-14, rue St-Bazile — Marseille 1er

## ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ

*Որպէսզի Մխիթար Վարժարանը միշտ կանգուն մնայ, Տէհլիի Աբրշակ Ջամալեան մասնաճիւղը միացած Սէն – Մօրիս Տը Պէնոյի Անահիտ մասնաճիւղին, հովանա-ւորութեամբ՝*

*ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆԻ*

*Կը կազմակերպեն պարանոցիկ երեկոյ մը, «Արմենիա» նաւադահամբին ընկե-րակցութեամբ Շաբաթ, Մայիս 8, երե-կոյեան ժամը 19-ին, Սէն – Մօրիս – Տը-Պէնոյի քաղաքապետարանի սրահին մէջ։*

*Հայկական չէն մթնոլորտն ու համեղ ազանդերները կը սպասեն ձեզի։*

*Տեղերը սահմանափակ ըլլալով նա-խընտրելի է ապահովել ձեր տեղանները, հեռաձայնելով՝*

04 – 78 – 49 – 28 – 87
*կամ՝*
04 – 78 – 55 – 56 – 83

*Թիւերուն։*

*Մուտքը ազատ է։*

## UGAB — MARSEILLE

# *Colonie de Vacances*

Pour la 16e fois l'UGAB organise sa colonie mixte pour les enfants de 7 à 14 ans
**du Vendredi 2 Juillet au Vendredi 23 Juillet**

Elle aura lieu cette année comme l'année précédente
à CHAILLOL LA VILLETTE (Hautes-Alpes).

**Prix :** Voyage (Marseille à Marseille) et activités compris
3 400 Francs pour 1 enfant
6 200 Francs pour 2 enfants

*Pour tous renseignements veuillez contacter l'UGAB au :*
327, Bd. Michelet — 13009 MARSEILLE
Tél. : 04 91 22 10 45 — 06 03 74 16 99

★

# *Pension Familiale de l'U.G.A.B.*

**du Samedi 24 Juillet (à partir de 14h)**
**au Samedi 31 Juillet (au matin).**

**Prix :** Pension complète
250 F / jour ((par personne)
1500 F / 7 jours (par personne).

l'U.G.A.B. recrute des *Animateurs — Animatrices* pour sa *Colonie de Vacances* de juillet avec B.A.F.A. complet, envoyer C.V. + photo au :
327, Bd. Michelet — 13009 MARSEILLE

# CENTRE DE VACANCES DE LA CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE - Bellefontaine (Jura)

Près de la frontière suisse et à proximité de Morez, Morbier et les Rousses, le village de Bellefontaine abrite, depuis plus de 40 ans, le centre de vacances de la CBAF. Implanté dans un domaine verdoyant, de 2 hectares, en lisière de forêt, le centre accueille chaque été, en juillet et en août, 350 enfants, encadrés d'une cinquantaine d'animateurs et de directeurs diplômés.

Les enfants évoluent dans une ambiance arménienne, rythmée par des activités variées et enrichissantes (sports, randonnées, travaux manuels, éveil à l'arménité, musique, danse, chant...)

Nous vous invitons à inscrire vos enfants auprès de la section la plus proche de votre domicile soit :

| | | |
|---|---|---|
| **ALFORTVILLE** | Mme Zabounian | 01. 43. 76. 50. 52 |
| **ARNOUVILLE** | Mme Kaldjian | 01. 39. 85. 05. 71 |
| **ASNIERES** | Mme Danoux | 01. 42. 42. 85. 87 |
| **BAGNEUX** | Mme Pekmezian | 01. 46. 63. 10. 48 |
| **CHAVILLE** | Mme Der Kaloustian | 01. 47. 50. 64. 37 |
| **ISSY-LES-MOULINEAUX** | Mme Papazian | 01. 46. 42. 90. 68 |
| **PARIS** | Mlle Karanfilian | 01. 42. 46. 88. 36 |
| **SEVRAN** | Mme Gabintz | 01. 42. 36. 33. 73 |
| **DECINES** | Mme Dolmadjian | 04. 78. 49. 26. 66 |
| **LYON** | Mme Aghayekian | 04. 78. 45. 17. 55 |
| **GRENOBLE** | Mme Saboundjian | 04. 76. 49. 17. 16 |
| **VALENCE** | Mme Baron | 04. 75. 40. 12. 49 |
| **VIENNE** | Mme Raymond | 04. 74. 85. 18. 58 |
| **ST-MAURICE** | Mme Goubatian | 04. 78. 55. 28. 82 |
| **VAULX-EN-VELIN** | Mme Djanikian | 04. 78. 80. 27. 43 |
| **MARSEILLE** | Mme Avedian | 04. 91. 87. 13. 48 |

La colonie organise une fête traditionnelle pour les parents le dimanche 18 juillet et le dimanche 15 août.

Date des séjours : 1*er séjour: du* 6 *au* 28 *juillet*
2*ème séjour : du* 29 *juillet au* 20 *août.*

Prix : 3 400 F + voyage 450 F (Paris et Marseille).

(Շար. Ա. էջէն)

*առընչուող հարցեր։ Երեւանէն եաք, Լամպաս կ'այցելէր նաեւ Մեւեփանակերտ։*

***

### ԵՐԵՍՓոԽԱՆՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԸ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԵՆԹԱՐԿՈՒՄԸ

*Մայիս 1, ժամը 23-ի չուրջ, Սիւնիքի մարզի թիւ 68 ընտրատարածքին արձա-նագրուած երեսփոխանական թեկնածու Արթիւր Յարութիւնեան յարձակումի մը ենթարկուելէ եւ ծանրօրէն վիրաւորուելէ եաք կապանի հիւանդանոցը փոխադրուած է։ Անմիջապէս վիրահատութեան ենթար-կուած է։ Բժիշկներուն համաձայն, վի-ճակը ծանր է։ Կատարուած հետաքննու-թեան առաջին տուեալներէն պարզուած է որ Ա. Յարութիւնեան անձնաւոր մը դանակով յարձակումի ենթարկուած է Արծուանիկ գիւղը, ժամը 20·30-ի չուրջ։ Քննութիւնը վարող կապանի ներքին գոր-ծերու բաժնին համաձայն դաշունահարու-թիւնը որեւէ առընչութիւն չունի զոհին երեսփոխանի թեկնածու հանդամանքին հետ։*

***

### ՍԱՄՓՈ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՄԵՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

*Սոֆիա տեղի ունեցած սամփոյի եւ-րոպական 17-րդ ախոյենութեան, Հա-յաստանի հաւաքականը՝ պատանի, երի-տասարդ եւ չափահասներէ բաղկացած, մեծ յաջողութիւն ձեռք ձգած է։ Մըր-ցաշարքին կը մասնակցէին 16 երկիրնե-րէ աւելի քան 200 մարզիկներ. անոնց միջեւ Հայաստանցի սամփիոնները յաջողած են վայելել նուաճելով 17 մեռալ, որոնցմէ վեցը՝ ոսկի։ Ե-րոպայի ախոյեանի տիտղոսին արժա-նացած են Վահան Խոջոյեան (62 քգ.), Քրիսթինէ Նաճարեան (52 քգ, երկու մե-տալ), Գոհար Գէորգեան (52 քգ.), երի-տասարդներու մէջ՝ Ալլա Աւագեան (52 քգ.), պատանիներու մէջ՝ Ալեքսանդր Գը-րիգորեան։ Հայաստանի մանչերու հաւա-քականը խմբովին գրաւած է երրորդ տե-ղը, աղջիկներունը՝ 5-րդը։*

***

### ԼՂՀ-Ի ԵՒՐՈՊԱԿԱՆ Ա. ՄԵՏԱԼԸ

*Այս մրցաշարքէն ԼՂՀ ալ ստացած է իր բաժինը. արցախցի վազիք Մինասեան երրորդ հանդիսանալով չհաած է պրոն-զէ մետալ ու այսպէսով ԼՂՀ-ի պարգեւած եւրոպական իր առաջին մետալը։*

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

*ՏԷՄԻՐԼԻ Մայիս 2-ին, Պ. Էճէվիթի յանձնեց նոր կառավարութիւն մը կազմե-լու պաշտօնը։ Նոյն օրը, մինչ 550 երես-փոխանները երդում կ'ընէին Ազգային ժողովին մէջ, փոթորիկ մը պայթած է, երբ երեսփոխանուհի Մերվէ Գաւազճը ներս մտած է դլուխը չղարչով ծածկը-ւած։ Էճէվիթ, բարկացած, յայտարա-րած է որ Ազգային Մեծ ժողովին մէջ, կարելի չէ ասպարէզ կարդալ պետու-թեան, մինչ երեսփոխանները՝ «դո՛ւրս, դո՛ւրս» կը պոռային Տիկին Գաւազճըի։ Քիչ եաք, նիստը սկսած է առանց ենթա-կային ներկայութեան. ան նախընտրած է տուն երթալ առանց երդում ընելու։ 31 տարեկան, քանակարդումի (էնֆորմա-թիք) մասնագէտ, Թեքսաս մեծցած, Տի-կին Գաւազճը կը պնդէ որ Թուրքիոյ նին կանոնագրին մէջ ոչինչ կ'արգիլէ որ իր կրօնքին կանոններուն հետեւի։*

*ՄԻԱՑԵԱԼ – ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Պաշտպա-նութեան նախարարութիւնը խոստովանե-ցաւ որ ամերիկեան հալածիչ երկու օդա-նաւեր բնակելի վայր մը ռմբակոծած են Իրաքի հիւսիսը։ Երկու մեռեալ եւ 12 վիրաւոր կայ։*

*«ՄՈԼԻԷՌՆԵՐՈՒ» (Թատերական աս-պարէզի մրցանակները) 13-րդ երեկոյթը տեղի ունեցաւ Մայիս 3-ին, Թէաթր ոէ Շան պ'Էլիզէ։ Բացումը կատարեց Շառլ Ազնաւուր իր «Լէ Գամէտիէն» երգով եւ արժանացաւ «պատուոյ Մոլիէռ»ի մը։*

## ՓՈՒԹՊՈԼ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԽՈՒՄԲԵՐ

*Պուշ–տիւ–Ռոնի Շրջան*
*Հ·Մ·Ը·Մ· Արծիւ (Մարսէյլ) –*
Վիքթրոլ 9 – 1

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 6
JEUDI
6 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐԸ ՄԻԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթաթերթ առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·634 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.634

# ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԳՈՐՍԻՔԱ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՂ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԱԾ

### ՊՈՆԼ ԿԸ ՊՆԴԷ ՈՐ ԱՆՄԵՂ Է…

*Ժոսփէն եւ ընդհանրապէս կառավարութիւնը նեղ կացութեան մատնուած են Գորսիքայի ճաչարանին հրկիզման հարցով, մինչ նահանգապետ Պոնլ դիպլոմ կը մնար եւ իր տեղը կը նշանակուէր նոր մը, Մայիս 5–ին, յանձին Վալ տ'Ուազի նահանգապետ Ժան – Փիէր Լաքրուայի: Այս կարգադրութիւնը ոչինչ կը փոխէ սակայն եւ ոմանք, ինչպէս Փասքուա, կը գտնեն որ Ժոսփէն պարտի հրաժարիլ: Պարզ է որ ընդդիմադիր աջը առաւելագոյնս կ'ուզէ օգտուիլ ստեղծուած կացութենէն, Ժոսփէնի բացատրութիւնները ու լուսաբանութիւնները ոչ ոք կը համոզեն:*

*Մայիս 4–ին, նախարարապետը քանիցս ելոյթ ունեցաւ Ազգային Ժողովին առջեւ, պնդելով որ «տեւ դրասենեակ» մը չկայ վարչապետարանին մէջ մոլեռ գործեր կարգադրելու համար եւ թէ կառավարութեան չրջանակին մէջ ոչ ոք տեղեակ էր Գորսիքա կատարուածէն: Ներքին նախարար Շեվէնմանն ալ նմակ մը կարդաց նահանգապետէն ուր ան «պատասխան վրայ կը պնդէ որ կ'անդիմանար թէ ժի – փի – էմ–ի կամ այլ մխուրներու դիմուորական ոստիկաններ պաշտօններ ունէին Ապրիլ 19–էն 20–ի գիչերը»: Կը թուի թէ Պ. Պոնէի այս յայտարարութիւնը չի համապատասխաներ իրականութեան եւ ոստիկաններու ծանրակչիռ խոստովանութիւններէն զատ, «Գահաւոր Անշէնէ» Մայիս 5–ի իր թիւին մէջ բաւական յայտնութիւններ կ'ընէր եւ որոնցմէ կը պարզուէր որ, Պոնէ ինք իսկ կազմակերպած էր ոճրափորձը դիմուորական երկու ոստիկաններու հետ: Առնցմէ մէկը բոլոր մանրամասնութիւնները պատմած է: Գաղտնի ժողովի մը ընթացքին է, որ չորս չաթաթ առաջ, որոշում տրուեր էր ճաչարանը հրկիզելու եւ այդ ժողովը տեղի ունեցած էր նահանգապետին նախաձեռնութեամբ: Մասնակցողներէն Պերթրան Գավալիէ, դիմուորական ոստիկանութեան ոգայ եւ Պոնէի խորհրդական, կը պատմէ մանրամասնութիւնները: Կը պնդէ որ բուռն կերպով ընդդիմացած է, բայց, դիմքը չեն լսած: Գավալիէի խոստովանութիւններն են արդարացուութեան որ արգելացուցած են Պոնէի անկումը:*

*Ներքին ծանր տագնապ մըն է Ժոսփէնի համար եւ որու ընաւ պէտք չունէր Ռոսովոյի հարցին կողքին: Կը թուի որ իր անմիջական գործակիցները հարկ եղած չափով տեղեակ չեն պահած նախարարապետը Գորսիքայի անցուդարձերէն: Ժոսփէն անմիջապէս լուծեց Ապահովութեան Գունդերու Խումբը (ժէ–փէ–էմ), որ հիմնուած էր 1998–ին, այսինքն ճախի իշխանութեան կողմէ: Ժոսփէն ընդունեցաւ արդէն, որ «հրկիզումի այս հարցը ծանր հարուած մըն է Պեուութեան համար, Հանրապետութեան համար, նաեւ կառավարութեան եւ Գորսիքայի»:*

*Այս ամբողջը չի բացատրեր սակայն, այս պատմութեան «ինչո՞ւ»ն: Արդարեւ, արդարացուութեան մէկ որոշումը թոյլ կուտար ծովափի բոլոր նման ճաչարաններու քանդումը եւ այս մէկինն ալ նախատեսուած էր ի մասոյ: Այս հարցումին պրսիքայի պատասխանատու մը կը պատասխանէ որ ինք ալ չի հասկնար եւ կըրնայ ենթադրութիւն մը ընել, որոնցմէ մէկն է Գորսիքան ապակայունացնելու ծրագիր մը:*

ՔՈՍՈՎՕ

## ՈՒՐ Է ԵԼՔԸ…

*Օրերը կ'անցնին, արդէն աւելի քան 40 օր է որ ՕԹԱՆ անխնայ կը ռմբակոծէ Սերպիան եւ անմիջական ոչ մէկ զրական արդիւնք կայ, քանի զրական կարելի չէ նկատել ամբողջ երկրի մը քանդումը, մէկ միլիոն Քոսովոցիներու տեղահանութիւնը եւ ՕԹԱՆ–ի օդուժին «սխալները» որոնց հետեւանքով տասնեակներով անմեղ մարդիկ մեռան:*

*Հետաքրքրական է նկատել նաեւ որ վերջին 48 ժամերուն Շիրաք չաս աւելի կատաղի զարձած է չարունակելու համար ռմբակոծութիւնները քան Գլինթըն, որ, թերեւս յոգնած, դուռ մը կը փորձէ բանալ: Եւ քանի օրերը կ'անցնին, այս զրծողութիւններուն դէմ յօդուածները կը բազմանան: Այսպէս, «Լիպերասիոն» Մայիս 3–ին, «Վիճարկումները» էջին վրայ երկու հակառնեայ զրութիւններու տեղ տուած է: Եթէ առաջինին հեղինակը Ընկերվարական երեսփոխան մը կողմնակից է ցամաքային պատերազմի մը, անոր կողքին «Համաչխավար յեղափոխական լիկայի» ութ անդամներ չատ խիստ են կատարուածին նկատմամբ: Մորագրով իսկ անոնք կ'ըսեն. – «Եուկոսլաւիոյ աւերակներուն վրայ պիտի աւելցնան աւերակները ձախի մը որ տեղի տուաւ ՕԹԱՆ–ի որպէս զործիք սիեզերական բարոյական նկին»: Անոնք կը չեչտեն որ ՕԹԱՆ–ի փիլտման հրչէչներու դիմուորական միջամտութիւնը ոչ մէկ պարագայի մարդասիրական է եւ ցեղային մաքրագործումը պատերազմին ամէնէն տարրական կանոնները տեղի տալով «ռազմավիտականօրէն պատչաճ»ին: Հիմնարկին տեղեկագիրը չատ խիստ է եւ անօրէնը կը չեչտէ. – «Պալքաններու արչաւանքին համար ճեռք առնուած ռազմավարութիւնը լուրջ հարցեր կը ստեղծէ ինչ կը վերաբերի ՕԹԱՆ–ի կարողութեան ըմբռնելու եւ զործադրելու քաղաքագիտնուորական բարդ զործողութիւններ»:*

*– «Ուաշինկթըն Փոսթ»ի համար, որ ընդհանրապէս լաւատեղեակ է, ՈՒ. Ջէ· Քլ·–ի (Քոսովոյի Ազատագրական Բանակ) անդամներ մարզուած են կայաններու մէջ որոնց զեկավարն էր խլամական պաչտ մեծահարուստ՝ Ուսամա Պէն Լադէն: Ան զրամն ալ կը հայթայթէ:*

*– Սփաչ Թոռն մը չախչախուած է Ալպանիոյ մէջ, Մայիս 4–էն 5–ի գիչերը ռազմափորձի թռիչքի մը ընթացքին: Երկու օդաչուներ մեռած են:*

## ՔԱՆԻ ՄԸ ՏՕՂՈՎ

*ԷՕճԱլԱնի փաստաբանները յայտարարած են որ պիտի քաչուէն, բողոքելով իրենց վրայ եղած ճնչումին դէմ: «Հերոսներ չենք: Մեր աչխատանքը չենք կրնար ընել այս պայմաններուն մէջ» յայտարարած է փաստաբաններու խումբին պետը՝ Ահմետ Զէքի Օքչուօղլու:*

*ԵՐԿԱԹՈՒՂիի զործադուլը կը չարունակուի եւ նոյնիսկ ծաւալ կ'առնէ, ինքնաթիռներու սենթիքային կը մխանան ուրիչներ: Սկ – ժի – Թի–ն ալ կոչ ըրած է որ ուղեվարներու զործադուլը սկսի Մայիս 9–ին, ժամը 20–էն: Շարժումը առաւելաբար կը վնասէ փարիզեան արուարձաններու բնակիչներուն, բայց, Թի–ժի – Վի–ներն ալ սկսան տուժել: Հարցը միչտ կը վերաբերի Մարթին Օպրիի պարտադրած 35 ժամերու, որու չուրջ եղած համաձայնագրին ջնջումը կը պահանջուի: Այս իսկ պատճառաւ խլրտումներ կան սենթիքաներէն ներս: Եւ ըսել որ Փոխադրութեանց նախարարն ալ Համայնավար է…: ԷՍ – ԷՆ – Սի – ԷՖ–ի տնօրէնութիւնը բանակցութեան հրաւէր ըրաւ, Մայիս 10–էն առաջ, որ, հակառակ պարագային ամէնէն ծանր օրը պիտի ըլլայ:*

*ՄԱՐՍԷՅԻի Ֆութպոլի խումբին կողմնակիցները, այսինքն խումբ մը խուլիաններ չեն հանդուրժած որ Մայիս 4–ին, Փարիզի Փարք տէ Փրէնսի մարզադաչտին մէջ, Օլիմփիք տը Մարսէյը 1 – 2 պարտուի Փարի Սէն Ժերմէնէն, որ մեծ համբաւ մըն ալ չի վայելեր այս չրջանին: Ասոր հետեւանքն այն եղած է որ քարուքանդ ըրած են այն հօթը օթոպիւսները որոնք զիրենք կառ տը Լիոն կ'առաջնորդէին, ոչինչ ձգելով: Վարորդները կը պատմեն թէ նման բան չէին տեսած, ոչ ալ կրնային երեւակայել: Ոչինչ մնացած է օթոպիւսներէն բացի անիւներէն եւ չարժակէն: Աւելի ուչ նոյն ձեւով թալանի տուած են Թի – ժի – Վի–ի երկու վակոնները որոնք զիրենք Մարսէյլ կը տանէին:*

*ՊՈԼՍՈՑ բիւրոնպական եկեղեցիներէն Ս· Հեղինէի մէջ «Թրքական ազատ օրմնադրութեան 90–ամեակը: Անոր ներկայ, նչելու համար Թրքական օթեակին հիմնադրութեան 90–ամեակիը: Անոր ներկայի նախագահը բացման խօսքին մէջ ըսած է թէ չարժումին նպատակն է «մարդուն օգնել որ մարդ դառնայ»: Լուրը տալով «Էօզկիւր փոլիթիքա» օրաթերթը կ'ըսէ թէ Թրքական օթեակը հիմնուած է 1909 Օգոստոս 9–ին, այ դէրնեի եպարքոս Թալաաթ փաչայի նախագահութեամբ: Յետագային բացի Էնվէրէն, բոլոր էթթիհատականները մաս կազմած են այդ օթեակին: Երկարատեւ վէճերու նիւթ եղած է Մ· Քէմալի եւս այդ խումբին պատկանած ըլլալու պարագան:*

*երեսփոխանական թեկնածու Վ· Սիրադեղեանի հետ օրական երկու ժամ տեսակցելու կարելութիւն ընծայուի:*

***

### ՊԱՅԹՈՒՅԻԿՈՎ ՄԱՀԱՓՈՐՁ

*Մայիս 4–ին կէսօրուան ժամուն Սամբ Նէվա եւ Աբովեան փողոցներուն անկիւնը չարադործ մը պայթուցիկ նետած է կառքէ մը ներս, պատճառ ըլլալով պայթումի մը եւ վարորդին մահուան: Միջոց մը ետք ստուգուած է որ չարադործը եւ զոհը այդ վախճանին հասած են անձնական յարաբերութիւններու պատճառով:*

***

### ԵՐԵՍՓՈԽԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ԴԱՇՈՒՆԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

*Ինչպէս արդէն հաղորդուած էր, երեսփոխանական ընտրութիւններու թեկնածու Արթիւր Ցարութիւնեան Մայիս 1–ին դաչունահարուած էր եւ պատահարին ծալքերը դեռ ծանօթ չէին: Այս առթիւ բացուած հետաքննութեամբ պարզուած է որ ան իր ընտանիքին կարգ մը անդամներուն հետ միասին հոգային հարցի վիճաբանութենէ մը ետք ձեռնած է Արծուանկիի բնակիչ Գէորգ Ցովակիմեանը, որ ինք ալ սուր զործիքով մը դաչունահարած է Ա· Ցարութիւնեանը ու փախած: Նոյն գիչերը, երկուքն ալ փոխադրուած են հիւանդանոց:*

***

### «ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ» ԴԱՇԻՆՔԻ ԲՈՂՈՔԸ

*«Իրաւունք եւ Միաբանութիւն» դաչինքը Մայիս 4 թուակիր յայտարարութեամբ մը բողոք ներկայացուցած է Ատանի համայնքապետին դէմ· հոն ըսուած է թէ անոր հրահանգով ծեծի ենթարկուած են իրենց չոտպի կարգ մը հերթապահ տղաք, ինչպէս նաեւ համայնքապետ Ռուբէն Հայրապետեան իր մօտ կանչելով մանկապարտէզներու տնօրէններ սպառնացած է անոնց, պահանջելով ընտրութիւններուն գործել ի նպաստ որոշ թեկնածուներու:*

## ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

*Մայիս 4–ին, քալոզները, Աւարտէն համբայ ելած են (11–րդ հանգրուան) հասնելու համար վերմանթոն, ուրկէ եւս ղրկած են երեք նամակները:*

# ԿՐԵՏԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՃԱԽԸ

Հայ – յունական յարաբերութիւնները հին անցեալ ունին եւ կ'երթան մինչեւ նախաքրիստոնէական դարեր: Հայեր Յունաստանի մէջ ապրած են պատմութեան հին ժամանակներէն ի վեր եւ հոծ թիւով հայ բնակչութիւն եղած է մանաւանդ Կրէտէի, Թեսալիոյ, Մակեդոնիոյ եւ Թրակիոյ մէջ:

Յունաստանի այդ հայ գաղութներու չարքին, ուրոյն տեղ ու դեր ունի Կրետէ կղզիին գաղթօճախը, Հայեր Կրէտէի մէջ ապրած են հին դարերէն ի վեր, կղզիի բնակչութեան մէկ ստուար համեմատութիւնը կազմած են, հիմնած են բնակավայրեր, որոնցմէ ոմանց անունները կը փաստեն անոնց հայկական ծագման ատանդութիւնը: Հին գաղթողները ժամանակի ընթացքին ձուլուած ու կորսուած են, եւ մինչեւ այսօր կրէտացի կարգ մը ընտանիքներու մէջ պահուած է հայկական ծագման ատանդութիւն մը: Հին գաղթականներուն յաջորդած են նոր գաղթականները, որոնք վերակենդանացուցած են գաղութը:

## ԿՐԵՏԷ ԿՂԶԻՆ

Կրետէ յունական կղզի մըն է Միջերկրական ծովուն մէջ, 8·261 քառ. քմ. տարածութեամբ: Անիկա լեռնային է, լեռները կ'իջնեն մինչեւ ծով, եւ ատոնք նպաստակ են դաշտային հարթ տարածութիւնները, որոնք սեղմուած են ծովուն եւ լեռներուն միջեւ. բարձրադոյն գագաթը՝ Սֆաւրոս 2·456 մեթր բարձրութիւն ունի: Կղզիին հիւսիսային ծովափնեայ գաւիթներուն կան բազմաթիւ բնական նաւահանգիստներ, ծովախորշեր եւ փոքրիկ դաշտեր, ուր կեդրոնացած են կղզւոյս քաղաքները՝ Խանիա, Ռեթիմնոն եւ Հեռակլիոն: Կղզիին մեծագոյն դաշտը՝ Մեսարա, կ'երկարի հարաւ – կեդրոնական գօտիին մէջ եւ երկրագործական հարուստ չրջան է: Կղզին միայն քանի մը փոքր գետակներ ունի:

Կրետէ նշանաւոր է իր ձիթենիներով եւ եղջիւրի անտառներով, եւ ձիթապտուղի, ձիթի ու եղջիւրի ռուպի արտադրութեան կարեւոր կեդրոն է. կը մշակեն նաեւ նարինջ, կիտրոնային այլ պտուղներ եւ խաղող: Կը բուծանեն ոչխար, այծ եւ այլն: Երկրագործութիւնը աւանդական վիճակի մէջ կը գտնուի եւ միայն Մեսարայի մէջ մեքենայացած է: Կ'արտադրէ ածուխ, դաճ, պղինձ, երկաթ, իսկ ճարտարարուեստական արտադրութիւններն են՝ օճառ, կաշի, պողպատէ գործիքներ, հիւսուածեղէն, չինանիւթ եւ սերամիք:

Կրետացիները, աւելի քան կէս միլիոն, Յոյներ են եւ կը պահեն իրենց ազգային դիմագիծը եւ առանձնայատկութիւնները, ուղղափառ եկեղեցւոյ առանձին ճիւղի մը հետեւորդներ են եւ Պոլսոյ Տիեզերական պատրիարքութեան կապուած են:

Կրետէ նշանաւոր է նաեւ իր հնութիւններով, որոնք կը վկայեն Մինոսեան քաղաքակրթութեան մասին, որ ծաղկած է Ք.ա. 3000 – 1100 տարիներու միջեւ: Կնոսոսի պալատը, Ֆայստոսի պալատը, Կնոսոսի թատրոնը, Կնոսոսի գրադարանը, Կնոսոսի ջրմուղները, Կնոսոսի ներկայացուցչական սենեակը, Կնոսոսի գրութիւնները

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

*ԱՒԶԵՒՆ ՀԵՌԱՁԱՅՆԻՆ ՀԵՏ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԵՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ Է*

Վերոնշեալ խորագրին տակ, Փաթրիէ Պէսոն, շահեկան էրոնիկ մը ստորագրած է «Ֆիկարօ»ի Ապրիլ 29–ի թիւին մէջ:

***

*Երէկ յետմիջօրէին, Միացեալ – Նահանգներու նախագահը բացատրեց որ Քոսովոյի մէջ, պաշտպանելու համար մարդկային իրաւունքները, ամէն գիշեր Նովի Սաւը կը ռմբակոծէին:*

*Այս առթիւ, իմացանք որ Նովի Սաւը Քոսովոյ կը գտնուէր:*

*Մենք կը կարծէինք որ Վոժվոտին կը գտնուի:*

*Քարէկը հակառակէն կը դիտէինք...:*

*Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր զաղթականական արշաւանքները կատարուած են յանուն մարդասիրական սկզբունքներու:*

*Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր զաղթականական պատերազմները կատարուած են յանուն մարդասիրական սկզբունքներու:*

*Եւ, յանուն, մարդասիրական սկզբունքներու է որ 19 հարուստ երկիրներ որոշեցին քարուքանդ ընել փոքրիկ աղքատ ազգ մը կոչուած՝ Եուկոսլաւիա, ռմբակոծելով, ամէն գիշեր, կիներ եւ մանուկներ, տուներու թէ վառարանները մէջ:*

*Ինչ բանի կը վերածուի երկիր մը առանց իր զօրաւոր ներուն, առանց իր ճամբաներուն, առանց իր նաւահանգիստներուն, առանց վառելանիւթի իր պահեստներուն: Բանա մը, ուր յետադայ տարիներուն, վիներ եւ մանուկներ սովէ, ցուրտէ եւ դեղի պակասէն կը մեռնին:*

*Այս բոլորը անուն մը ունի: Ասոր անունն է՝ ցեղասպանութիւն:*

*Իսլց, ան կը զործուի, քաղաքակրթուած եւ ժողովրդավար երկիրներու կողմէ, ուրմէն հարկ է ըսել որ քաղաքակրթուած եւ ժողովրդավար ցեղասպանութիւն մըն է:*

*Մարդասիրական ցեղասպանութիւն մը:*

*20-րդ դարու վերջաւորութիւնը, ուրմէն, ունեցաւ երկու մեծ յեղափոխութիւններ. – Առաջինն հեռաձայնը եւ մարդասիրական ցեղասպանութիւնը:*

*ՕԹԱՆ–ը պէտք է վախնայ Սլաւներու բարկութենէն: Կամայ կամայ կը ծնի, համբերութեամբ կ'ուճի, յետոյ ամէն բան կ'ուզէ իր ճամբուն վրայ: Աւտուծոյ վոճրին է: Քանի մը անգամ արդէն կործանեց Եւրոպան: Կրնայ վերսկսիլ:*

*Նովի Սաւի բնակիչներ, ընդունեցէք բարեկամական զգացումներս, որ Ֆրանսայէ մը կուգայ, եկած բաժնելու ձեր ֆիզիքական և բարոյական տառապանքները: Ձեր եւ իմ միջեւ, կ'ուզեմ կամուրջ մը կառուցանել, զոր ոչ մէկ հրթիռ, ռումբ, պիտի չկարենայ խորտակել:*

# ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*ՄԱՄԼՈՑ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ*

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
84–ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ
ԳԵՐՄԱՆԻՈՑ ՄԷՋ

Մեծ Եղեռնի 84–ամեակի ձեռնարկները սկսան Պէռլինի մէջ, Հինգշաբթի, Ապրիլ 22–ին: Պէռլինի Հայ համայնքը կազմակերպած էր կոկիկ ծրագիրը մը: Բացումը կատարեց Պէռլինի Հայ համայնքի կողմէ Պր. Վարդգէս Ալեանաք: Օրուան գլխաւոր բանախօսն էր Պէռլինի Ազատ համալսարանի դասախօս փրոֆէսէօր Հայօ Ցունքը «Ցիշատակի օրուան մը մարտահրաւէրը» նիւթով: Գեղարուեստական ծրագրին մէջ կար երգ՝ Սիրանոյշ Զալիքեանի, արտասանութիւն՝ Մելինէ Տիլավէրեան: Գրիգոր Մելիքեան, էլքը Հարթման եւ Շթեֆան Հայման կարդացին Մուսա Տաղի քառասուն օրէն հատուածներ: Տեղի ունեցաւ Աւօ Առաքելեանի նկարներու ցուցահանդէսը:

Շաբաթ, Ապրիլ 24–ին Պէռլինի Թրքական հիւպատոսարանին առջեւ տեղի ունեցաւ համախմբում մը:

Շաբաթ, Ապրիլ 24–ին Գերմանահայոց կեդր. Խորհուրդը Պոնի մէջ կազմակերպած էր 4 ձեռնարկներ: Առաւօտուն, Պոնի Քայզըրփլաց հրապարակին վրայ գտնուղ Նայինեներու բռնակալութեան ժամանակ Պոնի քաղաքի զոհերու նուիրուած յուշարձանին առջեւ Գերմանիոյ Հայոց Առաջնորդարանին, Հայաստանի պետպանատան եւ Գերմանահայոց կեդրոնական Խորհուրդի կողմէ զետեղուեցան ծաղկեպսակներ: Աղօթք մը եւ ժողովուրդը մոմերը վառած ուղղուեցաւ Պոնի ամենաճանչցուած եւ հին եկեղեցին՝ Միւնսթըրքիրջը, ուր տեղի ունեցաւ հոգեհանդիստ կատարողութեամբ Գերմանահայոց առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Պեքճեանի: Ան կարդաց լաւ պատրաստուած իր խօսքը: Ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի դեսպան տոքթոր Աշոտ Ոսկանեանը: Ցետոյ տեղի ունեցաւ համախմբում Թրքական դեսպանատան առջեւ: Ամենավերջը տեղի ունեցաւ համաժողով մը «Մարդկային Իրաւունքները եւ ժողովրդավարութիւնը Թուրքիոյ մէջ» նիւթով: Կեդրոնական Խորհուրդի բացման խօսքէն ետք, տոքթոր Ժիրայր Քոճարեանի Հայկական ցեղասպանութեան մասին դասախօսութիւնը կարդաց Սանտրա Ցակոբեան: Պր. Քոչարեանի ծրագիրը վերջին վայրկեանին փոխուած էր, եւ ան մնացած էր Երեւան, ընկերակցելու համար Թրքական «Ցեղասպանութեան հակառակորդները» կազմակերպութեան անդամներու, որոնք այցելած էին Հայաստան, ներողութիւն խնդրելու Հայ ժողովուրդէն: Ասորիներու կեդրոնական կազմակերպութեան կողմէ ելոյթ ունեցաւ Շիմոն Եոնան, Յոյներու կողմէ Եաննիս Յունայիտիս, ներկայացնելով նաեւ Թուրքիոյ մէջ իրենց վրայ գործուած ջարդերը: Ապա ելոյթ ունեցաւ Գերմանիոյ Փիւրա համայնքի նախագահ՝ Պր. Մեհմեթ Թանըլվերտի: Այս ելոյթը շատ դժգոհ ձգեց ներկաները, մանաւանդ որ կը պարունակէր Թրքական ծանօթ յանկերդներ: Ապա «Ցեղասպանութեան հակառակորդներու միութեան» ներկայացուցիչը պատմեց իրենց կատարած աշխատանքներու մասին: Թրքական այս կազմակերպութիւնը հիմնուած է այս տարի Գերմանիոյ մէջ, եւ ինչպէս վերը նշեցինք իրենցմէ վեց հոգինոց պատուիրակութիւն մը կը գտնուի Հայաստան, ներողութիւն խնդրելու Հայ ժողովուրդէն: Նոյն կազմակերպութիւնը արդէն տասը հազար ստորագրութիւն հաւաքած է Թուրքիոյ պետութենէն պահանջելով որ ընդունի Հայկական ցեղասպանութիւնը: Այս ելոյթներէն ետք տեղի ունեցաւ մոքերու փոխանակում:

# ՓՈՔՐ ՀԱՅՔԻ/ՍԵԲԱՍՏԻՈՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՈՒ. ՍԻ. ԷԼ. ԷՅ.Ի ՄԷՋ

*Պատմական Հայաստանի նահանգները եւ քաղաքներուն նուիրուած միջազգային գիտաժողովներու չարքին հինգերորդը՝ նուիրուած Փոքր Հայքի / Սեբաստիա (Սվազ) չրջանին եւ քաղաքներուն – Մարզուան, Ամասիա, Թոզատ, Շապին Գարահիսար, Տիվրիկ, Կիւրէն, եւ Կեմերէկ – տեղի պիտի ունենայ Շաբաթ, Մայիս 15–ին, Եու. – Սի – էլ – էյ համալսարանի Տիքսըն սրահին մէջ:*

*Եու – Սի – էլ – էյ–ի գիտաժողովները կազմակերպած է փրոֆէսէօր Րիչըրտ Ցովհաննիսեան, հովանաւորութեամբ՝ Հայ Կրթական Հիմնարկութեան Հայոց Արդի Պատմութեան ամպիոնին, եւ ակադեմական միութեամբ Հայ Լեզուի եւ Գրականութեան «Նարեկացի» ամպիոնին:*

*Սոյն գիտաժողովին պիտի մասնակցին յայտնի մասնագէտներ Հայաստանէն, Եւրոպայէն, եւ Միացեալ – Նահանգներէն, ներկայացնելու պատմագիտական ուսումնասիրութիւններ Փոքր Հայքի / Սեբաստիոյ հայութեան մասին հնագոյն ժամանակաշրջանէն մինչեւ քսաներորդ դարը:*

*Շաբաթ առաւօտեան ժամը (9·15–13·15) յայտագրին ելոյթ պիտի ունենան հետեւեալ մասնագէտները.–*

*– Րիչըրտ Ցովհաննիսեան (Եու – Սի – էլ – էյ.), «Բացում – Փոքր Հայք».*

*– Նոնա Մանուկեան (Մատենադարանի նախկին գիտաշխատող), «Սեբաստիոյ Քառասուն Մանկանց Պատմութեան ժառանգութիւնը».*

*– Ռոպըրթ Հիւսըն (Ռուտըն Համալսարան), «Փոքր Հայքի Պատմական Աշխարհագրութիւնը».*

*– Ճէյմս Րասըլ (Հարվըրտ Համալսարան), «Տիվրիկը եւ Պաւլիկեան Քրիստոնէութիւնը».*

*– Սուրէն Քոլանճեան (Պատմութեան Ինսթիթուտի նախկին գիտաշխատող), «Սեբաստիոյ Ուխտանէս Եպիսկոպոս».*

*– Փիթըր Քաուի (Եու – Սի – էլ – էյ.), «Հայոց Գաղթը Սեբաստիա, 10–րդ–11–րդ Դարերուն».*

*– Պէրնարդ Քուլի (Լուվէնի Կաթոլիկ Համալսարան), «Սեբաստիոյ Հայկական Ձեռագրերը եւ Գրչութիւնը».*

*– Քրիստինա Մարանչի (Մեսէչուսեց Դեղարուեստական Գոլէճ), «Սեբաստիոյ Հայ Գեղարուեստն ու Ճարտարապետութիւնը».*

*Շաբաթ կէսօրէ ետք (ժամը 2·30–6·15) յայտագիրը պիտի նուիրուի Սեբաստիոյ արդի պատմութեան: Ելոյթ պիտի ունենան. –*

*– Ճրէյնք Սթոն (Քինգսպորթ Համալսարան), «Մարզուանի Աննատոլիա Գոլէճը եւ Սվազի Ամերիկեան Գոլէճը».*

*– Պարպարա Մերկերեան (Journal of Armenian Studies), «Միացեալ – Նահանգներու Հիւպատոսարանը եւ Սեբաստիոյ Հայութիւնը».*

*– Հիլմար Քայզըր (Եւրոպական Համալսարանի Ինսթիթուտ, Իտալիա), «Մարզուանը 1915–ին – Պըրթա Մորլիի Օրատեարը».*

*– Հելէն Սահակեան (Պոսթըն), «Մէյրի Լուիզ Կրէֆըմ, Ընկերս Փարթրիճ, եւ Սեբաստիոյ Հայերը».*

*– Սիմոն Փայասլեան (Եու – Սի – էյ – էյ), «Շապին – Գարահիսարի Հայոց Ինքնապաշտպանութիւնը 1915 թուականին».*

*– Րիչըրտ Ցովհաննիսեան (Եու – Սի – էլ – էյ.), «Սեբաստիան Ցեղասպանութենէն Ետք».*

*Գիտաժողովը բաց է հանրութեան եւ մուտքը ազատ է:*

*Ցաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ Փրոֆ. Րիչըրտ Ցովհաննիսեանի պրասենեակը, e-mail–ով՝*

Hovannis@history.ucla.edu

*կամ Մայիս 1–էն ետք հեռաձայնով՝*

(310) 825-3375:

*Հասցէ՝*

Professor Richard Hovannisian,
Department of History, UCLA,
Los Angeles, CA 90095-1473.

*Եու – Սի – էլ – էյ–ի Պատմական Հայաստանի նահանգներուն եւ քաղաքներուն նուիրուած վեցերորդ միջազգային գիտաժողովը՝ «Տիգրանակերտ / Տիյարպէքիր եւ Եղեսիա / Ուրֆա», տեղի պիտի ունենայ 1999 Նոյեմբեր 13 – 14–ին:*

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Գ.

– Եթէ իրարու հաւնին ու կարգուելիք ըլլան, Նուարդին ու Զապէլին հարանիքը մէկ օր կ'ընենք, – ըսաւ Մաննիկ:

– Շատ աղէկ կ'ըլլայ, – գոչեց Սիրարփի:

– Իրար մի՛ անցնիք, աստնք ետքի խընդիրներ են:

Նոյն միջոցին աղջիկները վերադարձան իրենց այցելութենէն, եւ Տիկին Սիրարփի անոնց հաղորդեց իր զաւուն պատճառը: Երեքն ալ ուրախութեամբ ընդունեցան իրենց եղած առաջարկը:

Սիրարփի մեկնեցաւ գոհ սրտով:

ԳԼՈՒԽ Դ.

Կիրակի օր, Փըթի Շանի թատրոնը, ուր տեղի կ'ունենար ի նպաստ Հայ Կարմիր Խաչին կազմակերպուած հանդէսը, մեծ ոգեւորութիւն մը եւ անսովոր եռուզեռ մը կը տիրէր:

Տիկին Սկամպիլեան, հակառակ իր զիրուածքին, ճապուկ ու դիւրաշարժ, ամէն կողմ էր: Հրահանգներ կուտար, հիւրերը կ'ընդունէր, քաջալերանքներ կ'ուղղէր, անկանոնութիւնները կը մատնանշէր, վերջապէս ամբողջ սրահին կը տիրապետէր:

Բոլոր օրիորդները գործի վրայ էին, ոմանք իրենց ծախու ապրանքները կը ցուցադրէին, ոմանք քօքարտ կ'անցընէին ներս մտնող պարոններու լամբակին, ուրիշներ ծաղիկ կը հրամցնէին:

Նուարդ խոշոր սեղանի մը առջեւ կեցած՝ մեռաքսեղէն ձեռագործներ ծախել կը ջանար ծանօթներու իր նշանածին՝ Տիրանի օժանդակութեամբ:

Իսկ իր քրոջ՝ Զապէլի վիճակուած էր անուշահոտութիւններու վաճառումը, մինչ Սօնա քոքարտներ կը բաշխէր այ ու ճախ:

– Աչքերնիդ բացէ՛ք, Մըզմըզեան Թագուր էֆէնտի կուգայ կոր...

Տիկին Սկամպիլեանն էր, որ այս խօսքերը կ'ուղղէր չուրջը գտնուղ օրիորդներուն:

Մըզմըզեան պատերազմի նոր հարուստներէն էր, յետուն տարեկան, գիրուկ, դռեհիկ դէմքով մարդ մը:

– Մըզմըզեան էֆէնտի, ինչ բան մը չէ՞ք առներ, – ըսաւ օրիորդներէն մին ժպտուն դէմքով մը:

Նոր հարուստը անհամբերութեան չարժումի մը ըրաւ եւ գոչեց.

– Ձանըմ, էեցէ՛ք մէյ մը ներս մտնանք, չորս կողմերնիս նայինք. հոս եկանք նէ՝ արդէն աչքերնիս առինք բան մը առնելը...

– Մըզմըզեան էֆէնտի իր պարտականութիւնը գիտցող մարդ է, – միջամտեց Տիկին Սկամպիլեան, – անիկա միշտ առաջաձեռն գտնուած է կարմիր Խաչի հանդէպ:

– Դեռ անցածները վիճակահանութեան տոմս ըսելով տասը ոսկիս առին, – դիտել տուաւ Մըզմըզեան:

– Ան Դպրոցասիրացի համար էր, – ուղղեց Տիկին Սկամպիլեան:

– Ինչի համար էր՝ չեմ դիտեր, այնչափ չատ են, որ ո՛ր մէկը մխիքերնիս պահենք, ամէն օր բան մը կ'ելլայ մէջտեղ, տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր, վերջը չի դար:

– Ի՛նչ ընենք, աղբերնիս աղքատ է, պէտքերը չատ, ունեցողները պէտք է չունեցողներուն տան, Աւետարանն ալ անանկ չըսե՞ր:

– Մենք ալ կուտանք կո՛ր, Տիկին, մերժած չունինք:

– Գիտեմ, որ այնպէս է, իսլւ թէ ամէն կարողութիւն ունեցող ձեզի չափ տար:

Մըզմըզեան էֆէնտի գոհունակ դէմքով մը ընդունեցաւ այս խօսքերը եւ հեռացաւ:

Հետզհետէ նոր այցելուներ կը հասնէին, ամէնքն ալ ընդհանրապէս Բերայի բարձր դասուն պատկանող ծանօթ անձնաւորութիւններ:

Իրենց առաջին գործը կ'ըլլար նախ գալ Տիկին Սկամպիլեանի յարգանք մատուցանել, հանդէսին փայլուն կազմակերպութեան մասին քանի մը փափուկ չնորհաւորութիւններ քնել ու յետոյ բազմութեան մէջ անյայտանալ:

– Ինչո՛ւ այսպէս ուշ մնացիր, – ըսաւ Տիկին Սկամպիլեան իրեն մօտեցող ու ձեռքը համբուրող շիք երիտասարդի մը ֆրանսերէն լեզուով:

– Աւելի կանուխ կ'ուզէի գալ, բայց պուքրէյէն եկող բարեկամի մը հանդիպեցայ ու չկրցայ օձիքս դիւրաւ ազատել, – պատասխանեց երիտասարդը:

Այս նորեկը՝ Ժորժ Քանտար, Ռումանիայէն եկած, Տիկին Սկամպիլեանի աղակնն էր, որուն ակնարկած էր Տիկին Սիրարփի բարեզ ազգէնց այցելած ատեն:

– Ի՞նչպէս կը գտնես սրահի յարդարումը, – հարցուց տիկինը:

– Հիանալի, – պատասխանեց Ժորժ, – չատ ճաշակաւոր, չատ արթիւթիք:

– Ամբողջ երկու օր աշխատեր եմ, գըրեթէ առանձին... ամենափոքր մանրամասնութիւններուն հակիպ, որպէսզի պակս բան մը չըլլայ:

– Ձեր յոգնութիւնը յաջողութեամբ պսակուած է ուրեմն:

Տիկին Սիրարփի, որ հեռուէն նչմարած էր երիտասարդը, փութաց անոր քով:

(Շար. 18)

# -ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 13, Ս· օր Յինանց։
Տօն է Համբարձմանն Քրիստոսի
Մանուկներու հաղորդութեան օր

*Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։*
*Կը պատարագէ՝*
*ԱՒԵՏԻՍ Ա· ՔՀՆԾ. ՊԱԼԸԳԵԱՆ*

*Կը հրաւիրուին բոլոր «Քրիստոնէական դաստիարակութեան» միջոցաւ Հաղորդութեան պատրաստուած մեր մանուկները ու ղպրոցներու աշակերտները մասնակցիլ պատարագին եւ Հաղորդուիլ։*

*Այս հեռուղութեամբ, այսօրուան պատարագը՝ ղպիրներու կողքին՝ պիտի ըլլան Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի եւ Միօրեայ դասընթացքներու աշակերտները։*

## Ս· ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 13, տօն է Համբարձման։

*Այս առթիւ Լիոնի Ս· Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10–ին, պատարագ կը մատուցուի։*

*Օրուան պատարագը կը մատուցանէ՝*
*ԻՍԱՀԱԿ ՔՀՆԾ. ՀԷՒՒՄԵԱՆ*

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

1700-ամեակի չորեքշաբթի երեկոյեան ժամը 8–ին, Ս· Խաչ եկեղեցւոյ մէջ, Ս· Պատարագ մատուցանելէ ետք, Ս· Խաչի մեծ խաչվերացը դուրս պիտի հանուի եւ ամբողջ ժողովուրդը պիտի օրհնուի։

*1700-ամեակի չորեքշաբթի երեկոյեան՝ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման ի Հայաստան, ուխտադնացութիւն մը կը կազմակերպուի դէպի «Ապէկի տէր Թորոսի» վանքը (Վառ նահանջ), Հինգշաբթի Մայիս 13, Համբարձման տօնին առթիւ։*

*ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐԻՃԵԱՆ*
*կը մատուցանէ պատարագ, ժամը 12–ին,*
*երգեցողութեամբ։*

*Սահակ – Մեսրոպ երգչախումբի*
*ղեկավարութեամբ՝*
*խմբավար – երաժշտապետ*
*Յակիկ Եղլմազեանի*

*Օթօբարները կը նախատեսուին ժողովրդային այս ուխտադնացութեան։*

*Պատարագի աւարտին, մօտակայ վանքապատկան դաշտի մը մէջ «փիկ - նիք» կը նախատեսուի։ ամէն ընտանիք իր հետը կը բերէ իր ուտելիքը։*

*Աբեմանպարուելու համար հեռաձայնել՝ Մայր Եկեղեցի (Փրատօ)։*
*Հեռաձայն· – 04 91 77 84 70*
*Ֆաքս· – 04 91 77 89 28*

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

*ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Փարիզի Աբջալոյս Թադէոսեան մանուկներուն անդամական ժողովը Շաբաթ, Մայիս 8, ժամը 16–ին, սովորական հաւաքատեղին։ Դպրոցի հանդէսի պատրաստութիւն։ Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ գտնուիլ։*

# ՓԱՐԱՆՅԻԿ ԵՐԵԿՈՅԹ

*Որպէսզի Միօրեայ Վարժարանը միշտ կանգուն մնայ, Տէր Յովնան Արշակ Ջամալեան մասնաճիւղը միացած Սէն – Մօրիս Տը Պէնոյի Անահիտ մասնաճիւղին, հովանաւորութեամբ՝*

*ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆԻ*

*կը կազմակերպեն պարանոյիկ երեկոյ մը, «Արմենիա» նուագախումբին ընկերակցութեամբ Շաբաթ, Մայիս 8, երեկոյեան ժամը 19–ին, Սէն – Մօրիս – Տը–Պէնոյի քաղաքապետարանի սրահին մէջ։*

*Հայկական չէն մթնոլորտն ու համեղ ազանդերները կը սպասեն ձեզի։*

*Տեղերը ապահովելի կ՚ըլլայ նախընտրելի է ապահովել ձեր տեղերը, հեռաձայնելով՝*

04 – 78 – 49 – 28 – 87
*կամ՝*
04 – 78 – 55 – 56 – 83

*Թիւերուն։*

*Մուտքը ազատ է։*

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
DE DECINES
CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE section de DECINES

organisent

pour les enfants de 5 à 13 ans

## Un Séjour à Bellefontaine

du 13 à 16 mai prochain
**Renseignements et inscriptions avant le samedi 8 mai :**
à la M.C.A. de Décines —
**Tél. : 04. 78. 49. 42. 97**

## COURS DE CHANT

Ténor professionnel, lauréat de concours internationaux, donnerait leçons particulières de chant à élèves de tous âges. Conditions à débattre auprès de M. Rouben Elbakyan, tél. : **01. 48. 76. 82. 01.**

# ՖՐԱՆՍԱՀԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

*Ֆրանսայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը տեղեկացնում է որ ս/թ Մայիսի 30–ին տեղի կ՚ունենան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի ընտրութիւնները։ Այս նպատակով, ՀՀ ընտրական օբէնսգրքի համաձայն, արտերկրում ՀՀ դիւանագիտական եւ հիւպատոսական ներկայացուցչութիւններում բացուելու են ընտրական տեղամասեր։*

*Ֆրանսայում բնակուող կամ գտնուող, 18 տարին լրացած՝ ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիները կարող են մանակցել համամասնական կարգով անցկացուող ընտրութիւններին։*

*Ընտրութիւնները տեղի կ՚ունենան ՀՀ դեսպանութեան չէնքում*
*Մայիսի 30–ին, տեղական ժամանակով Ժ· 8:00 – 20:00*
*Հասցէն՝*
9, rue Viète — 75017 PARIS.

*Ընտրութիւններին մասնակցող ՀՀ քաղաքացիները ընտրութիւններից առնուազն 5 օր առաջ պէտք է դիմուր յայտ ներկայացնեն Դեսպանութեան Հիւպատոսական բաժին՝*
*Հեռ· 01· 42· 12· 98· 00 / 02։*

*Յայտում նչւում է՝ ընտրողի (ընտրողների)*
– ազգանունը, անունը
– ծննդեան օրը, ամիսը, տարին
– Ֆրանսայում իր բնակութեան հասցէն եւ հեռախօսը

*այն անձինք, որոնց մշտական բնակութեան վայրը գտնուում է Հայաստանի Հանրապետութեան տարածքում՝ նչում են նաեւ Հայաստանի հասցէն։*

*Ընտրութիւններին պէտք է ներկայնալ անձը հաստատող փաստաթղթով (անձնագրով)։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅՈՒՄ*
*ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ*


# 1879-1999

## 120ème anniversaire de l'école TEBROTZASSERE

L'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
ET
L'ASSOCIATION DES DAMES ARMENIENNES
AMIES DES ECOLES TEBROTZASSERE
PRESENTENT

## La Chorale Koghtan et la Chorale de l'Ecole

*dirigées par Haïg SARKISSIAN*

**dimanche 16 mai à 17 heures**

salle Cortot : 78, rue Cardinet — 75017 PARIS
(métro : MALESHERBES)

Participation aux frais — Adultes: 100 F - Enfants: 50 F

Renseignements & réservations :
ECOLE TEBROTZASSERE: 01 43 81 01 72 — U.G.A.B.: 01 45 20 03 18






**150 Ancienne route de Beaujeu - GLEIZE BP 421**
**69653 Villefranche sur Saône**
**Tél : 04 74 62 47 00 - Fax : 04 74 68 20 09**


## L'ASSOCIATION MACHTOTZ

POUR LA DEFENSE DE LA LANGUE ARMENIENNE

organise un

## SEJOUR LINGUISTIQUE ARMENIEN BEYROUTH (Liban) - du 1er au 19 Juillet

**POUR LES JEUNES DE 8 A 16 ANS**

sous le patronage du Rév. Père KEGHAM KHATCHERIAN
*Prélat des Arméniens du Liban*

Les participants seront hébergés individuellement par des familles sélectionnées, dont ils partageront la vie et avec lesquelles ils communiqueront en langue arménienne.

Des cours d'arménien seront organisés à raison de 30 heures par semaine pour les **débutants francophones** par Mme Hilda Kalfayan-Panossian, avec sa **méthode audiovisuelle** et pour les autres niveaux, par des professeurs expérimentés.

L'encadrement et l'assistance aux jeunes participants seront assurés par les responsables de l'Association Machtotz.

Sont prévues plusieurs excursions comme Baalbek, Byblos, Saïda, Aïnjar, Zemmar, Antélias, la visite des musées et des institutions arméniennes, ainsi que des baignades à la mer et du sport, suivant possibilités

**FRAIS DE PARTICIPATION : 5950 F. par personne comprenant le transport aérien, l'hébergement en pension complète, les cours et les excursions.**

**Renseignements et inscriptions (avant le 31 mai) :**
ASSOCIATION MACHTOTZ
**8, rue Lamennais, 92370 CHAVILLE — Tél. : 01 47 50 97 51.**

## CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Camp itinérant en Ardèche

**DU 7 AU 27 JUILLET**

**Nombreuses activités sportives et découverte de la région destinées aux adolescents nés entre le 1er juillet 1983 et le 31 décembre 1985.**

**Prix : 3 800 F + voyage**
**Date limite d'inscription : 30 MAI**
**Attention, places limitées.**
**Inscriptions auprès du Conseil d'Administration de la C.B.A.F. au :**
**01. 48. 24. 46. 57**

ՈՒՐԲԱԹ
ՄԱՅԻՍ 7
VENDREDI
7 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 19,635 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.635

ԳՈՐԾԻՔԱ.

## ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԵՑԱՒ

### ԾԱՆՐ ՏԱԳՆԱՊ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մայիս 5-ի գիշերը, 48 ժամ դիպաց մնալէ ետք, Գորսիքայի նահանգապետը՝ Պերնար Պոնէ քննութեան տակ առնուեցաւ, այսինքն մեղադրանքի եւ յանձնուեցաւ արդարադատութեան: Աւելի ուշ, իր պատեհնեակին պետին Ժ. Փարոնիի հետ, պինուորական օդանաւով փոխադրուեցաւ Փարիզի Սանթէլի բանտին կարեւոր անձնաւորութեանց վերապահուած բաժանմունքը, ուր մէկ պարապ խուց պինք կը բաժնէ պատեհնեակի պետէն որպէսզի վարձեան հաղորդակցիլ:

Ըսուեցաւ թէ նահանգապետը խոստովանած է որ տեղեակ էր Ապրիլ 19-էն 20-ի գիշերը գործուած ոճրափորձէն, բայց, ինք չէր հրահանգած: Այդ պատճառով մեղադրուեցաւ մեղսակցութեան համար միայն: Իր փաստաբանը, սակայն, մէյթր Քիչժման կը պնդէ որ իր յաճախորդը ոչ մէկ խոստովանութիւն ըրած է:

Ամէն պարագայի մէջ, պատահածը չատ ծանրակչիռ բնոյթ ունի եւ վախ կայ որ հետեւանքները չսահմանափակուին Գորսիքա: Արդարեւ, Մաթիւնեան եւ Ներքին նախարարութիւնը չատ նեղ կապուածութիւն մտնուած են եւ ոմանք, արդարօրէն, հարց կուտան որ Ներքին նախարար՝ Շըվէնմանի լ՚նչ պէտք ունէր Ազգային ժողովի նիստին կարդալու նահանգապետին իրեն ուղղուած նամակը, ուր ան կը հաստատէր պատուոյն վրայ որ ոչ մէկ գործ ունեցած է այդ հրկիզման հետ, մինչ հակառակ 24 ժամ եղաք խոստովանութիւններէ եղաք, բանտ կ՚առաջնորդուէր: Դէպքը ինքնին անհասկնալի է, ցոյց կուտայ որ կառավարութիւնը տէրը չէ Գորսիքայի նահանգապետին իշխանութեան տակ տեղի ունեցած անցուդարձերուն: Շըվէնման ալ այսքան անելի մտանուած չէր ըլլար, եթէ նահանգապետը, նախքան դատաւորին ընելու իր խոստովանութիւնները, ճշմարտութիւնը ըսած ըլլար Ներքին նախարարին: Այսօր, չատ կը խօսուի Շըվէնմանի անհրաժեշտ հրաժարման մասին, Այաչիոյի փաստաբանապետը՝ Ա. Սոլաքարօ չի վարանիր ըսելու.- «Եթէ Շըվէնման պատուոյ մարդ է, պէտք է հրաժարի»:

Այս ցաւոտ պատմութեան դրական կողմն այն է որ փաստը արուեցաւ, թէ իշխանութիւնը չի հակակշռեր դատաւորները, չի փորձեր ալ ընել եւ կարելի չէ այլեւս ամէն բան թաղի ընել:

***

Գորսիքայի նոր նահանգապետը՝ Ժան-Փիէր Լաքրուա իր պաշտօնին դլուխը կ՚անցնի Մայիս 10-ին:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՇԱՌԼ ՏԸ ԿՕԼԻ Թոռան՝ Շառլ սը Կօլի արձանագրուիլը Ժ. Մ. Լը Փէնի ցանկին վրայ եւրոպական ընտրութիւններուն համար (Բ. տեղը կը դրաւէ) դայթակղեցուցած է ամբողջ ընտանիքը: Եղբայրը, պարմիկը, հուսկ՝ զօրավարին եղբօր ապրիլի՝ Ժերնվիէյէ Անթոնիոզ սը Կօլ արտայայտած են իրենց վրդովմունքը: Կ՚ուզուի նոյնիսկ որ անունը փոխէ: Ենթական հակազդած է Սթրազպուրկէն, ուր էր Ժ. Մ. Լը Փէնի հետ եւ ըսած.- «Որքան պիտեմ, զարմուհիս ընտանիքին մնացեալ մասին հետ նոյն կարծիքը չունի: 1981-ին ալ Մլթերանի կողմնակիցը էր»:

ԴԱՆԻՈՑ կառավարութիւնը Մարդկային Իրաւանց Եւրոպայի Ատեանին դիմած է, չարչարանքի տարածուն կիրարկութեանը ամբաստանելով Թուրքիան: Դիմումը հիմ ունի ծագումով քիւրտ, Տոմինիկ ապաստանած Թուրքիոյ քաղաքացիի մը բողոքը: Ան որպէս ՓՔՔ-ի համակիր չարչարանքի ենթարկուած է Անգարայի մէջ, ապա Դանիա ապաստանելով դիմած Զարչարանքի զոհերու տեղով Միութեան: Թուրքիոյ դէմ դատական Միութեան: Թուրքիոյ դէմ դատական դիմումը Բ. պարագան է որով Անգարա դէմ յանդիման կը դտնուի պետական ամբաստանութեան մը: Նախընթացը կը պատկանի Կիպրոսի:

ՔՈՍՈՎՕ

## ՌՈՒԿՈՎԱ ՀՌՈՄ ԵԿԱՒ

### «ՕԹԱՆ ՊԻՏԻ ՍԱՍՏԿԱՅՆԷ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՏԿԱՐԱՆԱԼՈՒ» Կ՚ԸՍԷ ԳԼԻՆԹՐԸՆ

*Մայիս 5-ի անակնկալն էր Քոսովոցիներու չափաւոր պետին՝ Իպրահիմ Ռուկովայի ժամանումը Հռոմ իր ընտանիքին հետ միասին: Ան հիւրն է իտալական Պետութեան եւ Իտալիա եկած է Պելկրատի իշխանութեանց հաւանութեամբ: Կը կարծուի որ եկած է լուծում մը դտնելու համար, պէտք է քննուին քաղաքագիտանականական լուծումի մը կարելիութիւնները: Առաջին առթիւ իսկ սիրալիր տեսակցութիւն մը ունեցած է վարչապետ՝ Մասսիմօ Տ՚Ալեմայի հետ: Ատլանտեան կողմը «դրական» կը դտնէ Պելկրատի այս ընթացքը եւ այն յոյսը որ Միլոսեւիչ ելք մը կը փնտռէ:*

*– Գլինթըն Պրիւսէլէն եկաք Գերմանիա անցաւ ուր հանդիպում ունեցաւ ազատ արձակուած ամերիկացի երեք պինուորականներուն հետ: Տիկին Օլպրայթ ալ որ իրեն կ՚ընկերանայ Խանդավառութեամբ բացականչած է պինուորներուն՝ «լաւագոյնները կ՚ք»: Գալով Գլինթընի, չեշտելէ եկաք թէ ՕԹԱՆ պիտի սասկացնէ յարձակումները անդիջող կերպով, անհրաժեշտ նկատած է բացատրելու թէ ինչո՞ւ կը մղեն այս ճակատամարտը եւ ըսած.- «Խնդրոյ առարկայ է 21-րդ դարու մեր ուզած աշխարհը: Կը կռուինք Քոսովոյի մէջ պաշտպանելու համար մարդկութեան մեր հասարակաց ըմբռնումը»...:*

***

*Մայիս 4-ին, Ազգային Ժողովին առջեւ, Ժոսփէն անակնկալի բերած է երեսփոխանները յայտարարելով թէ երկու պայման կայ որպէսզի ռմբակոծութիւնները դադրին, մինչ ՕԹԱՆ, Շիրաքն ալ կը կրկնէ անդադար հինդ պայման կայ: Քիչ եկաք Վեսրին խօսք առած է «սրբագրելու» համար: Այդ երկու պայմաններն էին սերպ ուժերու քաշուիլը Քոսովոյէն եւ պաղթականներու վերադարձը: Եթէ այդ ըլլար, պարզ է, Միլոսեւիչ անմիջապէս կը համաձայնէր:*

*Վեսրին, նոյն իրիկունը զոլոքի մը ընթացքին ըսած է որ Ժոսփէն չատ լաւ ծանօթ է հինդ պայմաններուն, բայց, ըստ պարագաներու եւ եղած հարցումներուն, կը պատասխանէ մէկին կամ միւսին տալով: Կը թուի որ, բոլորին կարծիքով Ժոսփէն չատ յոդնած է:*

***

*Ալպանիոյ մաֆիան հանդոյ դաղթականներուն մէջէն կը գտէ երիտասարդ աղջիկները եւ պոռնկութեան համար ի-տալիա կը փոխադրէ: Միւսներն ալ կը կողոպտուին:*

***

*Մակեդոնիա փակեց Քոսովոյի հետ իր սահմանը որովհետեւ այլեւս պաղթական ընդունելու ի վիճակի չէ:*

***

*Ամերիկա ափաղ երկու թռաններու յօդուածային արկածները (երկրորդ պարագային օդաչուները մեռած էին) կասկածի տակ կը դնէ այդ «կատարելագործուած» դէնքերուն իսկական կարողութիւնը եւ չուք կը ձգէ ամերիկեան ուժին վրայ:*

***

*ՕԹԱՆ «սխալմամբ» ռմբակոծած է «աշխարհի բժիշկներ»ու չարասիւն մը, բայց զոհ չկայ: Շարասիւնը Մակեդոնիոյ Պլաչէ սահմանային կայանէն կ՚անցնէր:*

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

### «ԱՐՄԷՆԳՐԷՍ»

(Մայիս 5 / 6)

### Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Ռ. Քոչարեան պաշտօնավարութեան մէկ տարին ամփոփած է Մայիս 5-ին, մամուլի ասուլիսով մը: Այդ առիթով պատրաստուած զրքոյկի մը մէջ ըսուած է որ անտեսութեան համար յուսալի արդիւնքներ արձանագրուած են: Նախագահը հրաժարած է խօսելով այդ տարուան մասին ըսած է թէ լարուած չրջան մը եղած է, համաշխարհային եւ Ռուսաստանի անտեսական տագնապին պատճառով, բայց կրցած են պահպանել Հայաստանի անտեսութեան կայունութիւնը: Ռ. Քոչարեանի նախագահութեան առաջին տարին զարգացում արձանագրուած է մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ ժողովրդավարական առումով: Անդրադառնալով յատկապէս ընտրութեան, նախագահը ըսած է թէ եթէ յաջողին երազուած չափանիշները իրականացնել, կը նկատէ որ որակապէս այլ երկիր է Հայաստանը:

Նոյն ասուլիսին պատասխանելով հարցումներու խօսած է Ուաչինկթընի զանազան օրերուն իրեն վերագրուած արտայայտութիւններուն եւ անոնց քննադատութեան մասին, ցեղասպանութեան միջազգային ճանաչումին համար անհրաժեշտ համարած է դուրսի աշխարհին մէջ համապատասխան վերաբերում ձեւաւորել. ըսած է թէ Ուաչինկթընի ձեռնարկները մեծ արձագանգ ունեցած են: Հարկաւոր նկատելով հանդերձ յաջորդ Ապրիլ 24-ին երեւան մնալ, աւելցուցած է թէ դեսպանները պէտք է միջոցառումներ կազմակերպեն այլ երկիրներու մէջ եւ որքան բարձրաստիճան պաշտօնեաներ մասնակցին անոնց, արձագանգը նոյնքան մեծ կ՚ըլլայ: Խօսելով ՕԹԱՆ-ի 50-ամեակին իր ներկայութեան մասին ալ, ան յայտարարած է թէ ճիշդ չէ մէկ ծայրայեղութենէն միւսը իյնալ. Հայաստան ոգեւորուած չըլլալով հանդերձ այսօր տեղի ունեցող անցքերով, չի կրնար մեկուսանալ եւ սահմանափակել իր չփումներուն կարելիութիւնները:

Նոյն ասուլիսին Ռ. Քոչարեան համամատական մըն ալ ըրած է Քոսովոյի եւ Ղարաբաղի պարագաներուն միջեւ, յայտ յայտնելով որ առաջինը դրական ազդեցութիւն կ՚ունենայ երկրորդին համար: Ան աւելցուցած է թէ ջերմ կողմնակից մը չըլլալով հանդերձ ՕԹԱՆ-ի իր տեսակէտը պարտադրելու կեցուածքին, չի կրնար ուրանալ դաչինքին հզօրութիւնը:

Նախագահ Ռ. Քոչարեան անդրադառնալով Վ. Սիրադեղեանի ձերբակալութեան, ըսած է թէ դինքը ազատ ձգելու պարագային լարուած աւելորդ կացութիւն կը ստեղծուէր: Ան չեշտած է թէ օրէնքէն դուրս ոչինչ կատարուած է եւ թէ ափսոսալի է որ մարդիկ կը մոռնան ձերբակալութեան պատճառները: Յիշեցուցած է որ անմեղ մարդիկ տարիներով բանտերու մէջ կը պահուէին եւ թէ պարբերաբար պէտք է միտք բերել նաեւ այդ տարիներու իրաղարձութիւնները:

***

### Ֆ. ԼԱՄՊԱԽ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

ԼՂՀ-ի երեւանի ներկայացուցչութեան մէջ Արտաքին Գործերու նախարար Նաիյիրա Մելքումեան ընդունած է Գերմանիոյ յանձնարարութիւններու դեսպան Ֆ. Լամպախը: Այս վերջինը գոհունակութիւն յայտնած է Ստեփանակերտի հանդիպումներէն եւ ողջունած Ղարաբաղի չինուչ կեցուածքը: Ն. Մելքումեանի հետ քննած են հակամարտութեան կարգաւորումին հեռանկարները, չրջանի իրավիճակը եւ կարելի զարգացումները:

***

### Վ. ՍԻՐԱԴԵՂԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Վ. Սիրադեղեանի փաստաբան նշանակուած Ռ. Ռչուունի յայտնած է թէ իր պաշտպանեալը առողջական պատճառներով առ այժմ ի վիճակի չէ հարցաքննութեան պատասխանելու: Ան կը դտնուի Ազգային ապահովութեան մեկուսարանին մէջ եւ ինք դիմում կատարած է որ առողջական վիճակին պատճառով ազատ արձակուի:

Միւս կողմէ, որպէս երեսփոխանական ընտրութեան թեկնածու, Վ. Սիրադեղեանի «վատահուած անձ»երը հակառակ դիխաւոր դատախազին համաձայնութեան, չեն կրցած հանդիպում ունենալ անոր հետ. պատճառը այն է որ կեդրոնական ընտրական յանձնախումբին որոշած կարդին համաձայն թեկնածու մը չի կրնար ուրիչ թեկնածուի մը «վատահուած անձ»ը ըլլալ: Իսկ Վ. Սիրադեղեանի «վստահուած անձ»երը իրենք ալ ՀՀՇ-ի յուցակին վրայ են:

Վ. Սիրադեղեանի պարագան չարժման մղած է ՓՔՆ ակումբն ալ որուն Հայաստան անդամ է 1989-էն ի վեր: Արտայայտութեան ազատութեան, զրողներու իրաւունքներու պաշտպան այդ միութիւնը յայտարարութեամբ մը մտահոգութիւն

(Շար.ը Դ. էջ)

## ՈՐ ՕՍՄԱՆՑԻՆ

*Այս խորագիրով Մայիս 3-ի քրոնիկին մէջ լրատրող էմին Զէօլաչան հետաքրքրական հաստատումներ ու հարցադրումներ կ՚ընէ առընչուած Օսմանեան կայսրութեան որուն 700-ամեակը կը նչուի դանազան ձեռնարկներով:*

*Առաջին հաստատումը այն է որ Օսմանցին ընդարձակ տարածքներու տիրելով հանդերձ, չէ յաջողած դանոնք հայրենիքի վերածել: Գրաւուած հողերը միայն սուերու զօրութեամբ պահուած են եւ տկարացումի առաջին առիթին կորսուած:*

*Երկրորդ հաստատում մը կը վերաբերի թագաւորներու մայրերուն, եպարքոսներուն ազդային պատկանելիութեան. թուրք հեղինակներու իսկ հաստատումով, գրեթէ բոլոր թագաւորներուն մայրերը քրիստոնեաներ են ,որոնք որպէս հարէմի ստրուկ բերուած, յետոյ իսլամացուած են: Նոյնն է պարագան եպարքոսներուն որոնք մեծամասնութեամբ ծագումով քրիստոնեաներ եղած են, ինչպէս բանակը կազմած եէնիչէրիները որոնք բոլորն ալ քրիստոնեայ ընտանիքներու զաւակներէն առնուած են:*

*Ի. Զէօլաչան հպարտութիւն յայտնելէ ետք Օսմանեան կայսրութեան մինչեւ ԺԶ. դարու կէսերու յաջողութիւններուն համար, կը դրէ թէ այդ չրջանէն ետք մոլեռանդ կրօնամոլ տարրը ամէն յառաջդիմութեան դէմ կանդնելով պետութիւնը քայքայումի առաջնորդած է:*

## ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

*Մայիս 5-ին, քալողները ճամբայ ելած են Վերմանթոնէն եւ հասած Օսէռ, ուր ընդունուած են քաղաքապետին կողմէ եւ հիւրասիրուած: Այս 12-րդ հանդրուանին համապատասխան նամակները ղրկուած են Շիրաքի, Ժոսփէնի եւ Փոնսըլէի:*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

# ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԱԴԱՐՁԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

## ԱՊՐԻԼ 29, 30 - ՊՐԻՍԷԼ

Ա.

ԻԱ. զարուն աւելի ծրագրուած միասնական գործակցութիւն մը ունենալու գլխաւոր նպատակը կը հետապնդէր երկօրեայ համաժողովը որ տեղի ունեցաւ Եւրոպայի Խորհրդարանին Պրիւսէլի տպաւորիչ կեդրոնատեղիին մէջ: Տպաւորիչ, եթէ ոչ այնքան գեղեցկութեան առումով, քանի առնուազն քաղաքական խորհրդանիշի իմաստով: Ու ամբողջ աշխարհի 30 երկիրներէն աւելի քան 300 Հայեր խմբուած ձեռնարկին կազմակերպիչներուն՝ Պէյժիոյ Հայկական Կոմիտէի վարչականներուն համար առաջին յաջողութիւն մըն էր վայրին ընտրութիւնն ու ձեռքերու-մը: Այս նշումը պարագայականէն հիմնովին տարբեր խմաստ կը ստանայ երբ նկատի առնուի առնուազն ձեռնարկին նախօրէին իսկ հրապարակուած Թրքական անհանդստութիւնը (տե՛ս «Յառաջ», Ապրիլ 28): Երկրորդ նշելի կէտ մը որ չատ չատերու համար հաճելի անակնկալ եղաւ, չուրջ երեք տասնեակ երկրի լայնատարած հորիզոնն էր. անկեղծօրէն դժուար էր երեւակայել սրահ մը ուր քով քովի նստած ըլլային ԱՄՆ-ու, Գանատայի, Միջին ու արեւմտեան Եւրոպայի երկիրներու քաղաքացի Հայերու հետ Ուկրանիայէն, Ալպանիայէն, Թաթարստանէն, Պալթեան երկիրներէն, Հունգարիայէն, Չեխիայէն, Հայաստանէն, Լեռնային Ղարաբաղէն, Բելառուսիայէն, Ռուսաստանէն, Լեհաստանէն, Մոլտովայէն, Պուլկարիայէն, Ռումանիայէն, Վրաստանէն Հայեր ալ: Խորհրդային կարգերու անկումէն ի վեր թերեւս այսքան բազմազան անմասխաղէպ խմբաւորում մըն էր որ պատասխանած էր նախաձեռնողներու հրաւէրին: Առիկա առաջին ապացոյցը կուտար թէ ո՛րքան համապղպային է մէկհետեւութիւնը, միասին գործելու փափաքը: Այլապէս խօսուն էր մասնակիցներուն մէջ երիտասարդներու կարեւոր համեմատութիւնը:

Դարաշրջի հանդրուանի մը չեմին, որպէս հին անցեալի տէր ու առաւելաբար յիշողութեամբ ապրող ժողովուրդ, ապագան ալ պատրաստելու անհրաժեշտութիւնը մատնանշելով բացման ու ողջոյնի խօսք արտասանեց Պէյժոյ հայկական համագումարին նախագահը՝ Համբիկ Իսկէճեան:

Ձեռնարկին առաջին ուղերձով հանդէս եկաւ Եւրոպական Խորհրդարանին արտաքին գործերու յանձնախումբին նախագահը Թ. Սփենսըր որ որպէս «տանտէր» բարիգալուստ մաղթելէ ետք հպարտութիւն յայտնեց որ նոյն Խորհրդարանը Հայերու ցեղասպանութիւնը առաջին ճանչցողներէն եղած էր ու երկօրեայ համաժողովն ալ հոն տեղի կ'ունենար: Ծանրանալով ցեղասպանութեան մոռացումին ամէն գնով արգելք ըլլալու հրամայականին վրայ, հաւատք յայտնեց որ հայ ժողովուրդը ինչպէս անցեալին, ապագային եւս մշակութային, մտաւորական, քաղաքական առումներով կապուած պիտի ըլլայ Եւրոպայի:

Նոյն այդ ցամաքամասին սահմանները զծելու դժուարութեան անդրադարձաւ Ֆրանսայի հետազօտութիւններու ազգային կեդրոնէն պատմաբան Սեզա Գլեր Մուրատեան, ապա անդրադարձաւ այս ցամաքամասին հետ Հայերու դարաւոր կապերուն, հաստելու համար ներկային: Այսօր հայութեան Եւրոպայի հաստուածները յաջող համարկումի տիպար կը նկատուէին իրենց բազմապիսի հաստատութիւններով: Անոնք իրենց ապրած երկիրներէն ունէին պահանջքներ ալ որոնք դիմաւորարար կը կեդրոնանային ցեղասպանութեան ճանաչումին վրայ:

Եւրոպայի մէջ հայկական ներկայութեան թեմային յատկացուած այդ առաջին նիստին եւրոյթ ունեցան Հայաստանի Մշակոյթի նախարարը Ռ. Շաուոյեան եւ ԼՂՀ Արտաքին Գործերու նախարարուհին Ն. Մելքումեան եւս: Առաջինը չատ ծանօթ խօսքին մէջ երկարօրէն կանդ առաւ Սփիւռք – Հայաստան – Ղարաբաղ միասնութեան պարագաներուն վրայ, մանրամասնելով կազմակերպչական ու կառուցային անհրաժեշտութիւնները, համակարգուած ջանքերու կարեւորութիւնը, նոր համակարգեր ստեղծելու հրամայականը, եւայլն: Ըսաւ թէ Սփիւռքի պարմանութեան մէջ ամէն օր կը գժուարանար հայկական ինքնութիւնը, պատմական յիշողութիւնը պահելու գործը որուն սատար պէտք է կանգնէր անկախացած Հայաստանի պետական կառոյցը:

Հաւանօրէն բաւական մտածուած ու չափի խնամքով չարադրուած եղոյթ մըն էր նախարարինը, բայց մանրամասնութիւններու խճողումը, անհարկի կերպով երկար թուումները եւ ընթերցումի իր փիչ մը միակերպ չեչտը պատճառ եղան որ լսարանը պէտք եղած ձեւով չկարենայ ընկալել զայն: Ծանօթ իրականութիւններու կրկնութենէն անդին չանցաւ Ն. Մելքումեանի եղոյթն ալ որով թելադրուեցաւ անցեալէն դասեր քաղել, աչխարհատպիւռ մեր վիճակը առաւելութեան վերածել ու միաւորուիլ, աչխարհին հետ հաչտ ու խաղաղ գոյակցութեան նպատակով:

Հակառակ որ եղոյթներու ցանկին մէջ Հայաստան եւ Ղարաբաղ մէկմէկ անունով ներկայացուած էին, սրահին մէջ կար Հայաստան – ղարաբաղեան կաբեւոր պատուիրակութիւն մը. հոն էին Եւրոպայի Խորհրդարանին մօտ դեսպան Վիդէն Ձիլինձեան, Գերմանիոյ դեսպան Աչոտ Ոսկանեան, ՕՀՍ – ԵՍ – Ը-ի մօտ դեսպան Ձիւան Թապիսեան, Երեւանի Արտաքին Գործերու նախարարութեան Սփիւռքի բաժինէն Ա. Մովսիսեան, Հայաստանի չրջուն դեսպան Աչոտ Մելիք Շահնազարեան, Փարիզի դեսպանատունէն խորհրդական Հ. Գասպարեան, ԼՂՀ Փարիզի ներկայացուցիչ Ա. Յարութիւնեան, եւայլն:

Օրուան Բ. նիստը սկսաւ Զուիցերիոյ Հայկական Ֆորումէն Թ. Սաղբեանի խօսքով որ նորութեան յատկանիչէն ընդհանրապէս զերծ կրկնութիւններու տարբերակ մըն էր, միասնութեան բարիքները չեչտելու կոչուած: Իսկ բացայայտ կերպով աւելորդ, երկարապատում դասախօսութիւն մը եղաւ Եւրոպական մչակոյթներու համագումարի համակարգող Ալեն Կուաֆրինտի առածը որ նիւթ ունէր ե. Մենուհինի մարդասիրական գործը: Թեմա մը որ մինչեւ աւարտը մտիկ ընդներու իսկ չատ յստակ չեղաւ թէ ինչ առընչութիւն ունէր հայկական մտահոգութիւններու չուրջ կազմակերպուած ձեռնարկին հետ:

Օրուան վերջին եղոյթով որոշ կենսունակութիւն մը բերաւ չուէտուհի Մ. Լինդմ որ Եւրոպայի Խորհրդարանին իրաւական հարցերու կոմիտէին էր: Ան որպէս կանանչներու թեւէն երեսփոխանուհի, պայքարող մըն էր չովինութեան դէմ: Համաժողովին հովանաւոր երեսփոխաններէն էր նաեւ: Կ'ուզէր որ ստեղծուի ընկերութիւն մը ուր ամէնուն ինքնութեան լաւագոյն մասը պահպանուի. այդ առումով, ըսաւ, չատեր սորվելիք ունէին հայկական Սփիւռքի օրինակէն, յատկապէս տարբեր մչակոյթներու միջեւ հաստատակեցութիւնը պահպանելու չարժողութեան համար: Յետոյ այդ չարժողութեան հակադրեց իր երկրին լատին փոքրամասնութեան վիճակը. անոնք հեռացած էին իրենց մչակոյթէն, մոռցած պան, բայց հիւրընկալ երկիրը թելադրած էր սրբագրել կացութիւնը, պահել ինչ որ կը մնար ու այսօր Շուէտի լատինները ունէին պահանջքներ, հեռատեսիլի կայան, եւայլն:

Ապրիլ 29-ի օրը փակուեցաւ Պէյժիոյ կոմիտէին Նուրհան Կայտայլի խօսքով. ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն մը որ կարելիութիւն տուաւ հանդիպումներու, նոր ծանօթութիւններու: Բաներ ո՞րոնք թերեւս աւելի չօչափելի դեր կրնան կատարել բաղձալի նպատակին իրագործումին մէջ, քան պաչտօնական ամպիոններէ արտասանուած չատ մը եղոյթներ:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

# ԿՐԵՏԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՃԱԽԸ

(Բ. եւ վերջին մաս)

### ԹՐՔԱԿԱՆ ԳՐԱԻՈՒՄԷՆ ԵՏՔ

Օսմանցի Թուրքեր 1669-ին կրեթէ ցամաք ելան, պարտութեան մատնեցին Վենեկիկցիները եւ գուրս դրին զանոնք կըղզիկէն: Թրքական գրաւումը ամբողջացաւ եւ օրինաւոր դարձաւ 1715-ին:

Այս ժամանակ Կրեթէի հայութեան մէջ նչանաւոր դարձաւ Աբրահամ Կրեացի. ծնած՝ կղզիին Քանեա (Հերակլիոն) քաղաքին մէջ, ան ազդեցիկ կրօնաւոր դարձաւ, յետոյ Թրակիոյ Խերիքթաղ նախկին Ռոտոսթօ) քաղաքին առաջնորդը դարձաւ եւ 1734-ին ալ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ: Ան կրեթէի հայութեան ամէնէն փայլուն դէմքերէն է եւ կաթողիկոսանալէն ետք մեծ դեր ունեցաւ պատմութեան մէջ, յաջողեցաւ լեզու գտնել պարսից Թահմազ Ղուլի խանին (ապագայ Նատիր չահ) հետ, անոր վստահութիւնը չահեցաւ, ճանչցնել տուաւ էջմիածնի իրաւունքները, Երեւանի մէջ գրամատուն հիմնեց եւ արծաթէ ու պղինձէ դրամներ կտրել տուաւ. նչանաւոր է անոր «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր Շահին պարսից» աչխատութիւնը:

Թրքական տիրապետութեան հաստատումէն ետք, ինչպէս այլուր, անկում ապրեցաւ նաեւ կրեթէն, անտեսութիւնը քայքայուեցաւ, ժողովուրդը սկսաւ թըշուառանալ, սկսան նաեւ հալածանքներ եւ ծայր առաւ բռնի իսլամացման արչաւը:

Այս պայմաններուն տակ անկում ապրեցաւ նաեւ հայ գաղութը, որ զգալիօրէն տկարացաւ, ժամանակի ընթացքին չատեր ձուլուեցան եւ հայկական ընդհանրութենէն կտրուած՝ կորսնցուցին իրենց ինքնութիւնը:

Իրենց հայկական ինքնութիւնը կորսնցուցած եւ ձուլուած հին ընտանիքներէն յիչենք Վենիզելոսները, որոնք կ'ընդունին իրենց հայկական ծագումը. անոնք կրեթէի հիւսիս – արեւմտեան ափերուն գտնուող Խանիա (Քանիա) քաղաքէն երեք քիլոմեթր հարաւ գտնուող Մուրնիէս գիւղին մէջ կեդրոնացած են եւ կղզիին ազդեցիկ ընտանիքներէն են: Անոնցմէ Քիրիաքոս Վենիզելոս ԺԹ. դարուն Օսմանցիներուն դէմ Կրեացիներու պայքարի ղեկավարներէն էր. իսկ անոր զաւակը՝ Էլեֆթերիոս Վենիզելոս Յունաստանի վարչապետ եղաւ եւ մեծապէս օգտակար դարձաւ Հայութեան:

Կրեացիք գործօն մասնակցութիւն բերին 1821-ին սկսած յունական ազգային – ազատագրական յեղափոխութեան. կրետէ արիւնալի կռիւներու թատերաբեմ դարձաւ եւ հակառակ երկարատեւ պայքարին, անիկա դուրս մնաց 1830-ին ստեղծուած յունական պետութեան սահմաններէն: Այդ թուականէն ետք Կրեացիք բազմիցս ապստամբեցան եւ փորձեցին ազատագրուիլ Թրքական տիրապետութենէն ու Յունաստանի միանալ: Բոլոր ապստամբութիւններն ալ, սակայն, արեան մէջ ճմռուեցան:

1880-ական տարիներուն ալիքը սկսաւ Կորնթոսի Ջրանցքին չինարարութիւնը. այս ժամանակ, յատկապէս 1882-ին, բազական թիւով հայ բանուորներ (դլխաւորաբար՝ Մչեցիներ) Յունաստան գացին, Ջրանցքին վրայ աչխատելու համար: Ջրանցքի չինարարութեան աւարտէն ետք բանուորներուն մեծ մասը մնաց եւ մնայուն կերպով Յունաստանի մէջ բնակութիւն հաստատեց. անոնցմէ չատեր ալ կրետէ անցան հոն բնակութեան եւ աչխատանքի նպաստաւոր պայմաններ գըտնելու մտքով եւ հոն ալ բնակութիւն հաստատեցին:

Այնուհետեւ, 1895 – 1896-ի համիտեան կոտորածներէն ետք, բազական թիւով Հայեր Յունաստան գաղթեցին եւ անոնցմէ ոմանք ալ կրետէի մէջ բնակութիւն հաստատեցին:

1897-ին բռնկեցաւ յոյն – թրքական պատերազմը. Հայեր, Յոյներու կողքին գործօն մասնակցութիւն բերին պատերազմին, որուն աւարտին, 1898-ին կրետէ վարչական ինքնավարութիւն ստացաւ եւ բոպական պետութիւններու հովանաւորութեան տակ:

Առաջին 1909-ի կոտորածէն ետք Յունաստան անցնող հայ գաղթականներէն ոմանք կրետէի մէջ բնակութիւն հաստատեցին:

Պալքանեան 1912 – 1913-ի պատերազմէն ետք, 1913-ի Լոնտոնի դաչինքով եւ յոյն – թրքական դաչինքով Կրետէ ապատագրուեցաւ թրքական լուծէն եւ Յունաստանի միացաւ:

### ՄԵՆ ԵՂԵՌՆԷՆ ԵՏՔ

Ա. Աչխարհամարտի տարիներուն, 1915-ին երբ սկսան Ջարդերը, տարբեր դաւառներէ Ջարդերէն ճողոպրած գաղթականներ Յունաստան անցան եւ անոնցմէ ոմանք ալ կրետէի մէջ ապաստան գտան:

Ա. Աչխարհամարտի աւարտէն ետք, 1920-ին ծայր առաւ յոյն – թրքական պատերազմը. յունական բանակը դրաւեց ամբողջ արեւմտեան եւ կեդրոնական Անատոլուն, բայց հետզհետէ զօրացող Մուսթաֆա Քեմալի բանակը, օսար պետութիւններէ լայն օժանդակութիւն ըստանալով, նահանջի մատնեց յունական բանակը եւ վերադրաւեց արեւմտեան Անատոլուն, 1922 Սեպտեմբեր 9-ին Իզմիրը, իսկ Հոկտեմբերին՝ Թրակիան:

Յունական բանակի նահանջին հետ սկսաւ Փոքր Ասիոյ Յոյներուն եւ Հայերուն խուճապահար գաղթը դէպի Յունաստան, եւ աւելի քան մէկ միլիոն Յոյներուն հետ մօտաւորապէս հարիւր հազար Հայեր Յունաստան անցան, եւ անոնց մէկ մասն ալ կրետէի մէջ ապաստան գտաւ. այսպէսով կրետէ հայ գաղթականներու համախմբման գլխաւոր կեդրոններէն մէկը դարձաւ:

Այս ժամանակ, 1923-ին, յունական կառավարութիւնը հայ համայնքի ղեկավարներուն առաջարկեց յունական քաղաքացիութիւն ընդունիլ, բայց Հայերը վճռական կերպով մերժեցին առաջարկը այն յոյսով, որ օր մը կրնային վերադառնալ Թուրքիա եւ վերատիրանալ իրենց կալուածներուն:

Հայութեան մերժումին վրայ Յունաստան որոչեց հայ գաղթականները դուրս դնել երկրէն եւ դիմեց Ազգերու Լիկային՝ գաղթականները երկրէն դուրս հանելու եւ այլ երկիրներ փոխադրելու համար:

Այսպէսով, երբ սկսաւ Հայութեան Յունաստանէն գաղթը դէպի տարբեր երկիրներ, կրետէ ապաստան գտած գաղթականներուն մէկ կարեւոր մասը եւս բռնեց գաղթի ճամբան, ոմանք Խորհրդային Հայաստան ներգաղթեցին, ուրիշներ այլ երկիրներ գրուեցան, որմէ ետք, 1925-ի տուեալներով, մօտաւորապէս ութ հազար Հայեր մնացին կղզիին մէջ. յիչենք, որ այն նոյն օրերուն ամբողջ Յունաստանի Հայութեան թիւը մօտաւորապէս 64 - 65 հազար հոգի կը հաչուէր:

### ԿՐԵՏԷԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Կրետէի հայութիւնը, յունահայ միւս համայնքներուն նման, աստիճանաբար եւ արագօրէն նուազեցաւ յատկապէս 1930-ական տարիներուն, երկրին տնտեսական եւ քաղաքական տագնապներուն պատճառով, եւ 1938-ի տուեալներով, եօթը հարիւր Հայեր մնացած էին կղզիին մէջ. յիչենք, որ նոյն օրերուն ամբողջ Յունաստանի Հայութեան թիւը մօտաւորապէս երեսուն հազար հոգի կը գնահատուէր:

Կրետէի հայութիւնը մեծ դժուարութիւններ դիմագրաւեց Բ. Աչխարհամարտի տարիներուն, երբ Յունաստան գերմանական զրաւման տակ պատերազմի դաչտ դարձած էր, եւ սովն ու կռիւները աւեր կը գործէին, իսկ ծովերու վրայ երթեւեկը վտանգաւոր էր: Կրետէ եւ չրջակայ կղզիները, իրենք իրենց մէջ առանձնացած՝ գոյութեան պըր-

# ՉԱՑՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

## «ՍԱՑԱԹ-ՆՈՎԱ»Ն «ԿՈՏՈՐԱԾ»ՈՎ ԵՂԵՌՆԻ 84-ԱՄԵԱԿԻՆ

Այս տարի Նիսի մէջ, Ապրիլեան զոհերու յիշատակումը չեչտուեցաւ «Սայաթ Նովա» երգչախումբի Ապրիլ 25-ին տուած համերգով Խաչիկ Եըլմազեանի գեկավարութեամբ, այս անգամ տեղւոյն Անգլիական եկեղեցիին մէջ: Երգչախումբը, քանի մը տարիներէ ի վեր Ֆրանսայի երաժշտասէր հասարակութեան ծանօթացուցած ու արժանացած ըլլալով օտար քաղաքներու գնահատանքին՝ հրաւիրուած «Նիս Մաթէնի»ի գանգատն թիւերուն մէջ, ուզեց այս անգամ իր ժողովուրդին ցաւն ու ուրախութիւնը ծանօթացնել Անգլիացիներուն ա՛լ:

Եկեղեցւոյ պարզաշուք պատերն (զերծ՝ զուարթ արձաններէ ու պատկերներէ) ու բարձր գմբէթը բաւական խորհրդաւոր մթնոլորտ մը կը ստեղծէին, պատշաճելով օրուան նիւթին, այս բոլորին կ'ընկերանար եկեղեցիին աքանչելի աքուստիքը:

Համերգը սկսաւ Մակար Եկմալեանի «Մո՛ւրը, Սո՛ւրը»ով, որ Խաչիկ Եըլմազեանի հպատի ճկունութեան եւ «Սայաթ Նովա»ի տպաւորիչ ու ազդեցիկ երգեցողութեան չորհիւ, Նիսի ժողովուրդին համար, վաղուց դաղրած է արդէն եկեղեցական արարողութեան մաս կազմող չափ տարիներ դիմազրաւեցին. մեծապէս տուժեց նաեւ հայութիւնը:

Բ. Աչխարհամարտէն ետք չատ մը Բունահայեր 1947-ին Հայաստան ներդաղթեցին, ոմանք ալ ցրուեցան դէպի Գանատա, Աւժանթին եւ այլ երկիրներ: Այնուհետեւ մօտաւորապէս վաթսուն հայ ընտանիքներ մնային կրետէի մէջ, գլխաւորաբար՝ Հերակլիոնի մէջ, եւ աւելի փոքր համեմատութեամբ ալ՝ Ռեթիմնոնի եւ Սիթիայի մէջ: Կրետահայ ընտանիքներէն չիչենք Մատանեանները, Ազապատեանները, Համբարձումեանները, ձեվահիրեանները եւայլն:

Ներկայիս հազիւ քանի մը տասնեակ հայ ընտանիքներ կը բնակին Կրետէի մէջ, որոնք գլխաւորաբար Հերակլիոնի եւ Ռեթիմնոնի մէջ համախմբուած են եւ հայ կեանքն ալ Հերակլիոնի Ս. Յովհաննէս – Մկրտիչ եկեղեցւոյ չուրջ կեդրոնացած է:

Կրետէի հայկական երբեմնի չէն գաղութին ներկայ սերունդները մեծ խնամքով պահած են հայերէն մագաղաթներ, հին գիրքեր, արձանագրութիւններ եւ պատմական արժէք ներկայացնող հնութիւններ, որոնք ապացոյց են Կրետահայութեան ունեցած մշակութային հարուստ ժառանգութեան: Եկեղեցին եւս հարուստ է մագաղաթներով ու հին գիրքերով: Ցիշենք նաեւ, որ Հերակլիոնի թանգարանին մէջ եւս հայկական արձանագրութիւններ եւ հնութիւններ պահպանուած են՝ իրրեւ մէկ անոխորտելի մասը Կրետէի մշակութային ժառանգութեան:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

## – ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

Աթէնքի մէջ, մեծ չուքով ոգեկոչուած է Ապրիլեան Եղեռնը յաջորդական ձեռնարկներով: Ապրիլ 24-ի առաւօտեան Նէա Զմիւռնիի Հայկական յուչակոթողին առջեւ, նախագահութեամբ յարանուանութեանց պետերու հոգեհանդիստ կատարուած է: Խօսք առած են Ազգային վարչութեան առաջնապետ տոքթոր Արմէն Տէրեան եւ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան: Ծաղկեպսակներ զետեղուած են յոյն կառավարութեան, խորհրդարանին, Հայաստանի դեսպանատան, քաղաքապետարանին եւ դաղութին ներկայացուցիչներու կողմէ: Արարողութեան յաջորդած է ցոյց մը դէպի Թրքական դեսպանատուն: Ապրիլ 25-ին, տեղի ունեցած է քաղաքական հատաքոյթ Ամիքոն թատրոնի սրահը որու նախագահած է Սերգօ Գուրյումճեան եւ ելոյթ ունեցած է, կիպրոսէն հրաւիրուած ընկերվար· Էտէք կուսակցութեան նախագահ՝ Վասոս Լիսարիտես: Ողջոյնի խօսքեր արտասանուած են Ամիքոի նահանգապետարանին, հելլէն խորհրդարանին, քաղաքական կուսակցութիւններուն կողմէ, հուսկ խօսած է դեսպան Արման Կիրակոսեան: Ձեռնարկի ատրճանին ժողովրդային թափօրը ուղղուած է Սինտակմայի հրապարակին Անծանօթ զինուորի յուչատամբանը եւ ծաղկեպսակ զետեղուած է: Ուրբաթ Ապրիլ 23, ժամը 18 մինչեւ առաւօտ ալ երիտասարդական նոտացոյց մը տեղի ունեցած է Թրքական դեսպանատան առջեւ:

***

Սելանիկի մէջ, Ապրիլ 25-ին, նահանգապետարանին եւ Հայ դատի յանձնախումբի գործակցութեամբ քաղաքական ձեռնարկ մը տեղի ունեցած է «Էթէրիա Մաքեռոնիքոն Սփուռոն» սրահին մէջ: Նախագահած է Սեդա Ղազէրեան եւ բանախօսած է Միացեալ – Նահանգներէն հրաւիրուած պատմագէտ – բիւզանդագէտ՝ փրոֆէսէօր Սփիրոս Վրիոնիս:

***

Ֆիրհսի (Ցունաստան) ակումբին Աւետիքեան սրահին մէջ, Ապրիլ 18-ին դրական – գեղարուեստական երեկոյթ մը տեղի ունեցած է նուիրուած Կոմիտասի, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջ. վարչութեան, որու կողմէ խօսք առնելով Քերոբ Էքիզեան ներկայացուցած է Կոմիտասը որպէս ազգային արժէք, չեչտելով թէ մեր մշակոյթի պատմութեան վերջին այս դարուն՝ դրական, գեղարուեստական, հանրային ոչ մէկ դէմք այնքան ժողովրդականութիւն, խորունկ սէր եւ երկիւղած հմայք վայելած է որքան Կոմիտաս: Յաջորդաբար բեմ բարձրացած են Արշաւիր Գազանճեան, Նուարդ Զալեան եւ Համբիկ Յովսէփեան որոնք ներկայացուցած են Կոմիտասի կեանքն ու գործը: Ցայտնութիւն մը եղած է Աթէնքի Ս· Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մանկական երգախումբը կոմիտասեան աչխարհիկ եւ հոգեւոր երգերով զեկավարութեամբ Գոհար Սպարթալեանի:

### ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ·

– Վերջապէս եկաք, պարոն Ժորժ, – ըսէց:

– Արդէն ուչ մնալուս յանդիմանութիւն մը լսեցի, – պատասխանեց երիտասարդը, – կը խնդրեմ, որ դուք աւելի ներողամտութիւն ցոյց տաք:

– Ո՛չ, արժանի չէք ներողամտութեան ... չէ՞ք պիտեր, թէ ամէնքը ձեղի կը սպասեն:

– Որո՞նք են այդ ամէնքը:

– Բայց բոլոր օրիորդները, – ըսաւ Տիկին Սիբարփի խնդալով:

– Ի՛նչ կ'ըսէք, չափազանց մեծ պատիւ ու միանգամայն երջանկութիւն է ինձ համար:

– Եւ դիտէ՞ք, որ դեղեցիկ աղջիկներ չեն պակսիր սրահին մէջ:

– Անոնցմէ մէկ քանի հատը տեսնելու բախտը ունեցայ արդէն ներս մտած ատենս:

– Գրաւ կը դնեմ, սակայն որ դեղեցկադոյնները չէք տեսած:

– Կը յուսամ, որ դուք պիտի հաճիք զանոնք ցոյց տալու:

– Ամենայն սիրով:

– Շատ չնորհակալ եմ:

– Եթէ ուղէք ինծի ընկերանալ՝ ձեղի կրնամ ներկայացնել այդ դեղեցկադոյն օրիորդներէն մէկը:

– Հիմա անմիջապէ՞ս, – հարցուց երիտասարդը:

– Անչուչտ, – պատասխանեց Տիկին Սիբարփի:

– Երթանք ուրեմն:

Վայրկեան մը ետքը Տիկին Սիբարփի Պր· Ժորժ Քանտարն ու Օրիորդ Զապէլը իրարու կը ներկայացնէր:

Զապէլ իրաւցնէ հրապուրիչ աղջիկ մըն էր, ու երիտասարդը չատ դոհ մնաց անոր տեսակցութենէն: Նոյն իսկ որպէսզի առիթ մը ստեղծէ անոր քով աւելի երկար մնալու՝ առաջարկեց անոր օդնել:

– Եթէ կը հաճիք, միասին ծախենք այս ապրանքները, – ըսաւ, – ես Ռումանիոյ մէջ յաճախ մասնակցած եմ այս տեսակ բարեգործական պազառներու եւ փորձառութիւն ունիմ:

– Այս ձանձրոյթը ձեղի տալ չեմ համարձակիր, – պատասխանեց Զապէլ:

– Ձանձրո՞յթ, – դոչեց երիտասարդը, – ընդհակառակն, մեծագոյն հաճոյքը պիտի ըլլայ ինծի համար ձեր մօտը դանուիլս:

– Շատ ազնիւ էք:

Մինչ այսպէս երկու երիտասարդները իրարու հետ ծանօթութիւն կը հաստատէին, Տիկին Սիբարփի կը վերադառնար Տիկին Սկամպիլեանի մօտ:

– Նորէն գործի վրայ ես, – ըսաւ Տիկին Սկամպիլեան իր բարեկամուհիին, – ո՞ւր տարիր Ժորժը:

– Գեղեցիկ օրիորդի մը հետ ծանօթացուցի ... ո՞վ գիտէ, ինչ կընայ պատահիլ, թերեւս պարոն Ժորժ կը սիրահարի յանկարծ, չըլլալիք բաներ չեն ատոնք:

– Ո՞վ է տեսնենք այդ օրիորդը:

– Բարեդ ապագին աղջիկը՝ Զապէլը:

– Հասկցայ ... արդէն ինծի կարծեմ խօսեցար այդ մասին, բայց չատ յոյս մի՛ դներ:

– Ինչո՞ւ համար:

– Ես այնպէս կը տեսնամ, որ Ժորժ ամուսնանալու դիտաւորութիւն չունի. եթէ լրջօրէն այդպիսի դիտաւորութիւն մը ունենար, մինչեւ հիմա բան մը ընելու էր ... ալ երթալը մօտեցաւ:

– Ինչպէ՞ս, Պոլսէն կը մեկնի՞ ...

– Բնականաբար, հոս ի՞նչ գործ ունի, Ռումանիա պիտի դառնայ:

– Ե՞րբ, – հարցուց Սիբարփի:

– Չեմ գիտեր, թերեւս երկու չաբաթէն:

– Ուրեմն չանանք, որ գործը չուտով եփենք:

– Ըսել է անպատճառ կ'ուզես Զապէլը Ժորժին գլո՞ւխը փաթթել:

– Գործածած բացատրութիւնդ չեմ ընդունիր, – ըսաւ Սիբարփի քիչ մը վիրաւորուած, – ես կը փափաքիմ միայն երկու երիտասարդներու երջանկութիւնը ապահովել, ես գործին մէջ չահ մը չունիմ, խըլավուզութիւն չէ, որ կ'ընեմ, այլ բարեկամութիւն ... Զապէլը չատ դեղեցիկ, չատ ուսեալ, չատ ալ պարկեչտ աղջիկ մըն է ու չատ ալ պատուաւոր ընտանիքի մը կը պատկանի, կարծեմ Պր· Ժորժը ատկէ աւելի լաւ ընտրութիւն մը չի կըրնար ընել, եթէ իրաւցնէ ամուսնանալու դիտաւորութիւն ունի:

– Բայց ըսի քեզի, որ իր այդ դիտաւորութեան լրջութեանը մասին կը կասկածիմ, – պատասխանեց Տիկին Սկամպիլեան, – ինչո՞ւ այնքան իրաւ կ'անցնիս ու վիրաւորուածի կերպարանք կ'առնես ... կարծեմ Օրիորդ Զապէլը քու աղգականուհիդ չէ:

– Ես ալ նմանապէս ... Թո՛ղ Ժորժը փափաքի հետը ամուսնանալ, ես սիրով ձեռքէս եկածը կ'ընեմ ... Բարեդ աղան ու Տիկին Մաննիկը համամիտ է՞ն այդ ամուսնութեան:

– Առաջ համամիտ չէին, բայց երբ որ իմացան, որ երիտասարդը քու ազգականդ է, հաւանեցան:

– Ըսել է՝ իրենց հետ խօսեցար այդ մասին:

– Ինչո՞ւ չխօսիմ ... արդէն այդ Պր· Ժորժին խնդիրը մէջտեղ ելնելով էր, որ կրցայ համոզել զիրենք իրենց երեք աղջիկները այսօրուան պազառին զրկելու:

– Զապէլն ալ դիտէ՞, որ անպատճառ կերպով աղջիկաեսի ելած է այսօր:

– Չէ՛, ան բանէ մը տեղեկութիւն չունի:

– Աւելի լաւ, Ժորժի հետ տեսակցութիւնը աւելի համարձակ կ'ըլլայ:

(Շար· 19)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ՝
1918 ՄԱՅԻՍ 28

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

# ՁԱՆ – ՓԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*

*Հ.Ց.Դ. «Զաւարեան» խումբին*

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրէնկիւլեան"
*մասնաճիւղին*

*մասնակցութեամբ՝*

ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ – *ի*

*եւ Անի նուագախումբին*

Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ

Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX

Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
DE DECINES
CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE section de DECINES
organisent
pour les enfants de 5 à 13 ans

## Un Séjour
## à Bellefontaine

du 13 à 16 mai prochain

**Renseignements et inscriptions**
**avant le samedi 8 mai :**
à la M.C.A. de Décines —
**Tél. : 04. 78. 49. 42. 97**

## ESPOIR POUR L'ARMENIE

organise

## un Voyage
## de tourisme humanitaire

**DU 12 AU 19 JUILLET**

— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.

*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**

# -ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 13, Ս. օր Յիսուց:
Տօն է Համբարձման Քրիստոսի
Մանուկներու հաղորդութեան օր

*Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի:*
*կը պատարագէ՝*

*ԱՒԵՏԻՍ Ա. ՔՀՆԳ. ՊԱՒԼԸԳԵԱՆ*

*կը հրաւիրուին բոլոր «Քրիստոնէական դաստիարակութեան» միջոցաւ Հաղորդութեան պատրաստուած մեր մանուկները ու զպրոցներու աշակերտները մասնակցիլ պատարագին եւ Հաղորդուիլ:*

*Այս հեռուտղութեամբ, այսօրուան պատարագը՝ զպիրներու կողքին՝ պիտի երգէն Զպրոցասէր Տիկնանց Վարժարանի եւ Մխոբեայ դասընթացքներու աշակերտները:*

## Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 13, տօն է Համբարձման:

*Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10–ին, պատարագ կը մատուցուի:*

*Օրուան պատարագը կը մատուցանէ՝*
*ԻՍԱՀԱԿ ՔՀՆԳ. ՀԷՔԻՄԵԱՆ*

## ՑՈՒՇԱՏԵՏՐ

*ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Փարիզի Արշալոյս Թաղէոսեան մասնաճիւղի անդամական ժողովը Շաբաթ, Մայիս 8, ժամը 16–ին, սովորական հաւաքատեղին: Դպրոցի հանդէսի պատրաստութիւն: Կը խնդրուի բոլոր ընկերուհիները ներկայ գտնուիլ:*

## ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՔ

*ՄԱՐՍԷՅԼ. – Հայ Մշակոյթի Տան տարեկան հացկերոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիս 26–ին:*

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

*1700-ամեակի չրջանէն ներս՝ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման ի Հայաստան, ուխտագնացութիւն մը կը կազմակերպուի դէպի «Ապէի տիւ Թոռնէ» վանքը (Վառ Նահանջ), Հինգշաբթի Մայիս 13, Համբարձման տօնին առթիւ:*

*ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԻՐԻՃԵԱՆ*

*կը մատուցանէ պատարագ, ժամը 12–ին,*
*երկեցողութեամբ՝*
*Սահակ – Մեսրոպ երգչախումբի*
*ղեկավարութեամբ՝*
*խմբավար – երաժշտապետ*
*Խաչիկ Երզմազեանի*

*Օթօբարներ կը նախատեսուին ժողովրդային այս ուխտագնացութեան:*

*Պատարագի աւարտին, մօտակայ վանքապատկան գաշտի մը մէջ «փիք - նիք» կը նախատեսուի. ամէն ընտանիք իր հետը կը բերէ իր ուտելիքը:*

*Արձանագրուելու համար հեռաձայնել՝*
*Մայր Եկեղեցի (Փրատօ):*

*Հեռաձայն. – 04 91 77 84 70*
*Ֆաքս. – 04 91 77 89 28*

## ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ

*Որպէսզի Միօրեայ Վարժարանը միշտ կանգուն մնայ, Տէսքինի Արշակ Զամալեան մասնաճիւղը միացած Սէն – Մօրիս Տը Պէնոյի Անահիտ մասնաճիւղին, հովանաւորութեամբ՝*

*ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՒԱՐԵԱՆԻ*

*Կը կազմակերպեն պարանցիկ երեկոյ մը, «Արմենիա» նուագախումբին ընկերակցութեամբ Շաբաթ, Մայիս 8, երեկոյեան ժամը 19–ին, Սէն – Մօրիս – Տը–Պէնոյի քաղաքապետարանի սրահին մէջ:*

*Հայկական չէն մթնոլորտն ու համեղ աղանդերները կը սպասեն ձեզի:*

*Տեղերը սահմանափակ ըլլալով նախընտրելի է ապահովել ձեր տեղանները, հեռաձայնելով՝*

04 – 78 – 49 – 28 – 87
*կամ՝*
04 – 78 – 55 – 56 – 83
*թիւերուն:*

*Մուտքը ազատ է:*

## ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ
## ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

ԱՒԹԻԻ

*եւ*

*Նախատօնակ*
Սրբոց Կուսանացն
Հռիփսիմեանց եւ Գայիանեանց

*կազմակերպութեամբ՝*
*Փարիզի*
*Ս. Յովհ. – Մկրտիչ Մայր Տաճարի*
*Տիկնանց Ցանձնախումբին*

*Կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին*

*Առաջնորդարանի*
«Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ
15, rue Jean-Goujon— Paris 8e

*Ծախքերու մասնակցութիւն՝*
Participation aux frais

Pour tous renseignements appeler :
*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*
01 – 43 – 59 – 67 – 03
01 – 42 – 59 – 23 – 33
*կամ՝*
01 – 46 – 62 – 01 – 29

A l'occasion de la
Coupe d'Europe
des Nations
*EURO* **2000**
**Arménie - France**
**Le 8 Septembre 1999**

**Voyage spécial**
**en ARMENIE**

**à Partir de 3980F**
(comprenant l'avion+hôtel+tranferts
+excursion+billet d'entrée au stade)

**Pour tous renseignements :**

**SABERATOURS:**
**19, rue Saint-Roch — 75001 PARIS**
**Téléphone : 01. 42. 96. 10. 10.**

(Շար. Ա. Էջէն)

*յայտնած է Վ. Սիրադեղեանի արգելափակման մասին:*

*ՀՀՇ Երիտասարդական Միութիւնն ալ Մայիս 5 Թուականը յայտարարութեամբ մը պահանջած է ազատ արձակել դինքը:*

*
**

### «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ» ԿԱՐԳԱԽՕՍԸ՝ «ԿԱՌՈՒՑԵՆՔ ԵՒ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ»

*Մայիս 5–ին, Միասնութիւն դաշինքի ղեկավարները՝ Վազգէն Սարգսեան եւ Կարէն Դեմիրճեան իրենց պատուիրակութեամբ եղած են Արարատի մարզի չարք մը ընակավայրերը: Ժողովուրդը ոգեւորութեամբ ընդունած է անոնց կարգախօսը՝ «Կառուցենք եւ պաշտպանենք»: Առաջին հանդիպումը տեղի ունեցած է Մասիս, յաջորդը՝ Արտաշատ: Եղած են բազմաթիւ հարցումներ, որոնց գլխաւորն էր՝ ի՞նչպէս եղաւ որ Վ. Սարգսեան եւ Կ. Դեմիրճեան միացան: Երկուքն ալ պատասխանած են որ պատակոտմի չըրջանները անցած են, հաւաքական ուժով պէտք է ժողովուրդը հանել ընկերային եւ անտեսական ծանր վիճակէն ու ապահովել երկրին ներքին եւ արտաքին պաշտպանութիւնը: Յայտնած են նաեւ թէ դաշինքին մէջ պատրաստ են ընդունելու նոյն նպատակին յարող այլ կուսակցութիւններ եւ անհատներ:*

*
**

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱՅՑԵԼԻ

*Ռ. Քոչարեանի հրաւէրին ընդառաջելով Յունաստանի նախագահ Գ. Սթեֆանոփուլոս պաշտօնական այցելութիւն մը կատայ Հայաստան, Մայիս 11–13–ին: Իրեն կ'ընկերանան Արտաքին Գործերու, Տնտեսութեան փոխ–նախագահները եւ պաշտօնական այլ անձեր:*

*
**

### ԳԻՄ ԲԱԼԱՅԵԱՆԻ ՇՏԱՊԸ ՀՐԿԻԶՈՒՄԸ

*Մայիս 5, առաւօտեան ժամը 3–ի չուրջ անծանօթներ կրակի տուած են Հ.Ց.Դ. անդամ եւ երեսփոխանութեան թեկնածու Գիմ Բալայեանի նախընտրական չտապը որ կը գտնուէր մայրաքաղաքի Բաբայեան փողոցը: Գ. Բալայեան յայտնելէ ետք թէ չտապի արտաքին մասը վնասուած է, չէ կրցած պատահարը վերագրել ստոյգ անձերու. քննութիւն բացուած է:*

**Imprimé sur les Presses du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville — 75010 PARIS**
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

## CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Université d'été aux U.S.A.

Le HOM (Hay Oknoutian Mioutioun) de la Côte Est des Etats-Unis organise une université d'été d'études intensives arméniennes dispensées en langue anglaise, de 3 semaines destinée aux jeunes étudiants de niveau universitaire, âgés de 18 à 25 ans et diplômés d'études secondaires.

**Date:** **du 11 juillet au 1er août**
**Lieu:** **Université Bradford à Bradford (Massachussetts)**
**Direction:** **Dr. Simon PAYASLIAN (directeur du département Histoire UCLA)**
**Programme:** **Langue — Musique — Histoire — Cinéma — Littérature — Danse — Histoire de l'art et autres...**

**Conditions:**
- Hébergement pris en charge par le HOM Côte Est
- Frais d'inscription, non remboursables, 350 USD plus frais de voyage à la charge du participant.

**Délai d'inscription: 30 Mai 1999 au plus tard**
**Renseignements: Conseil d'Administration de la CBAF: 01. 48. 24. 46. 57.**

# COLONIE DE VACANCES

organisée par l'Association « SIPAN »

pour les enfants de 6 à 12 ans

DU 2 AU 22 JUILLET

Frais de séjour : 2.600 + frais de voyage

*Les dossiers d'inscription peuvent être retirés dans les paroisses catholiques arméniennes*
ou demandés au Secrétariat de l'*Association SIPAN*
10bis, rue Thouin — 75005 PARIS

**Tél.: 01 40 51 11 90 (du lundi au vendredi de 14h à 19h).**

ՇԱԲԱԹ
ՄԱՅԻՍ 8
SAMEDI
8 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐԸ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ԴԲԱՐԻ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·636 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.636

## ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

### ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐԿԱԾԻ ՁՈՀ

Ազգային ապահովութեան նախարարութեան խորհրդական պնդապետ Գուրգէն Յարութիւնեան մահացած է Հինդշաբթի, Մայիս 4–ի յառաջացած ժամերուն, ինքնասպանութեան արկածով մը: Սեւան – Երեւան ճամբուն վրայ, մայրաքաղաքին մօտ անոր կառքը բախում ունեցած է բեռնատարի մը: Գ. Յարութիւնեան 52 տարեկան էր: Նախապէս պաշտօն ունեցած էր Ազգային ապահովութեան վարչութեան մէջ որպէս հետախուզական բաժնի պատասխանատու:

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 6 / 7)

### Ֆ. ԼԱՄՊԱԽ ԲԱՔՈՒԻ ՄԷՋ

Օ–ԷՍ–Ը–ի Մինսկի խումբին Ղարաբաղի հարցով Գերմանիոյ ներկայացուցիչը Ֆ. Լամպախ Երեւանէն ուր Սահեփանի նախերեսէն եւք զացած է Բաքու: Հոն Արտաքին Գործերու նախարար Թ. Զուլֆիգարով յայտարարած է թէ Ադրբեջանին ձեռնտու չէ Ղարաբաղի հակամարտութեան անլոյծ մնալը: Իսկ Ֆ. Լամպախ ըսած է թէ Կովկասի կնճռոտներուն կարգաւորման եւ շրջանի երկիրներուն զօրակցութեան զարգացումը նիւթ կ'ըլլան երեք նախագահներու Յունիս 22–ի Լիւքսէնպուրկի հանդիպումին:

Ադրբեջանի Արտաքին Գործերու նախարարը ըսած է նաեւ թէ յառաջիկայ հանդիպումներու համար իրենք կը հիմնուին Ապրիլ 25–ին Ուաշինկթընի մէջ Ռ. Քոչարեան – Հ. Ալիեւ տեսակցութեան ԱՄՆ–ու Արտաքին Գործերու նախարար Մ. Օլպրայթի ներկայացուցած սկզբունքներուն վրայ:

Այդ սկզբունքները Զուլֆիքարովի համաձայն հետեւեալներն են. հարաւային Կովկասի պետութիւններուն տարածքի ամբողջականութիւնը, ղրաբաղ հողերու ապառազրումը եւ գաղթականներու վերադարձը, խաղաղարար միջազգային ուժի մը չրջան փոխադրութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի օդինաւիճակին սահմանումը:

⁂

### Լ. Ղ. Հ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄ

Ազգային Ժողովը Մայիս 6–ի որոշումով Պաշտպանութեան, Ապահովութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Մուրատ Պետրոսեանի պաշտօնին վերջ տուած է: Բացատրութիւնը այն է որ Մ. Պետրոսեանի քաղաքական գործունէութիւնը օրէնքով համատեղելի չէ յանձնաժողովի նախագահի պարտականութեան հետ:

### ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ 538–ԱՄԵԱԿԸ

Պոլսոյ պատրիարքարանին հիմնադրութեան 538–րդ տարեդարձը նչելու համար պատրիարք Մեսրոպ Աբգ. Մութաֆեան Մայիս 6–ին ծաղկեպսակ մը զետեղած է Թաքսիմի հանրապետութեան յուշարձանին: Այս ձեւով ան երախտագիտութիւն յայտնած է Ֆաթիհ Սուլթան Մէհմէտի որ Պոլսոյ գրաւումէն (1453) անմիջապէս ետք, 1461–ին, հրահանգած է որ Հայոց պատրիարքարան մը հիմնուի: Մեսրոպ Աբգ. այս պարագան նչելէ ետք աւելցուցած է թէ պէտք է օրինակ առնել օսմանցիէ վեհապետին այս արարքէն: Ան ապա այցելած է Ա.Թաթիւլքի տուն – թանգարանը:

## ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԿՈՍՈՎՕ

### G7+1 ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ ՈՒՆԻ

ԴԷՊԻ ԼՈՒԾՈՒՄ

Աշխարհի ամէնէն հարուստ 7 երկիրներու (Ժէ 7) յաւելեալ Ռուսաստանի Արտաքին նախարարները հաւաքուած էին Պոն, Մայիս 6–ին եւ առաջին անգամ ըլլալով, կը թուի որ դրական քայլ մը առնուեցաւ Կոսովոյի հարցին կարգաւորման համար: Գոյացած համաձայնութիւնը կը նախատեսէ «քաղաքացիական եւ ապահովութեան միջազգային արդիւնաւոր ներկայութիւններ» Կոսովոյի մէջ, ինչ որ բաւական հետաքրքրական է, այն չափով որ այլեւս «պինեալ» բառը չկայ եւ հոգ է որ Միլոսեւիչ անպիծող էր: Իւրացուած սկզբունքներն են.–

– Անմիջական եւ ստուգելի զադրեցում Կոսովոյի հալածանքին եւ բռնութեան:

– Զինուորական, ոստիկանական եւ զինուորականին զուգահեռ ուժերու հեռացում այդ գաւառէն:

– Ապահովութեան, քաղաքացիական արդիւնաւոր միջազգային ներկայութիւն Կոսովօ, որ ՄԱԿ–ի հաւանութիւնը վայելէ եւ ի վիճակի ըլլայ երաշխաւորելու հասարակաց հեռանկարներու յանգումը:

– Կոսովոյի համար առժամեայ վարչական մարմնի մը հաստատումը, որ նաեւ պէտք է որոշուի ՄԱԿ–ի կողմէ ապահովելու համար խաղաղ կեանքի եւ քնակնան կեանքի մը պայմանները զաւառին բոլոր բնակիչներուն համար:

– Քաղաքական դործընթացի մը ծրագրին կիրարկումը հաստատելու համար քաղաքական առժամեայ համաձայնագիր մը, որ կը նախատեսէ չօչափելի ինքնավարութիւն մը Կոսովոյի համար, նկատի առնելով Ռամպույէի համաձայնութիւնները եւ Եուկոսլաւիոյ ու շրջանի միւս երկիրներուն ինքնիշխանութեան սկզբունքները եւ հողային ամբողջականութիւնը:

– Այս չորսօրեայ մէջ ՈՒ. Զէ. ԿԱ–յի (Կոսովոյի Ազատագրական Բանակ) ապաղինումը:

– Հուսկ՝ նախատեսուած են տնտեսական զարգացման եւ տագնապի մէջ եղող շրջանին կայունացման լայն միջոցներ:

Հարցումներ կը մնան սակայն: Ի՞նչ պայմանաժամ կայ այս որոշումներու գործադրութեան համար եւ ի՞նչ պիտի ըլլայ Միլոսեւիչի դիրքը: Ի՞նչ կը նշանակէ «միջազգային ներկայութիւններ», կ'ենթադրուի որ պինեալ ուժերու առաքում մը պիտի ըլլայ:

⁂

«Զինադիպ Ուժ» գործողութեան 44–րդ օրը, ՕԹԱՆ իր գոհունակութիւնը յայտնած է իր պինեալ գործողութիւններուն համար, թէեւ կ'ընդունի որ միայն 20%–ը փճացուցած է Կոսովօ զոնուող սերպ պինամթերքէն..., քայց, զօրամար Երց (ՕԹԱՆ–ի պինուորական բանբերը) կը բացատրէ որ պինուորական պատմութիւնը ցոյց տուած է որ բանակ մը այլեւս գործ չի կրնար տեսնել, երբ կռուելու իր կարողութեան 50%–ը փճացած է եւ 20%՝ 50%–ին դրեթէ կէսն է:

⁂

Ռուսիոա, Կոսովոցիներու չափաւոր դեկավարը որ Հոռմ է, մամուլի ասուլիս մը տուաւ: Կը յուսայ որ բոլոր զաղթականները կը վերադառնան, ոչ միայն ալպանացի այլեւ սերպ: Միլոսեւիչի հետ իր տեսակցութիւններուն մասին, մանրամասնութիւններ չի տար, ինք համոզուած է որ քաղաքական լուծումի մը ի զօրու պայմանները անոնք են զոր դրած է միջազգային հաւաքականութիւնը: Ասուլիսի վերջաւորութեան Ռուսիոա տեսնուեցաւ ձէք Լանկի հետ, որ իրեն յանձնեց հրաւէր մը վեթերինէն, Ֆրանսա դալու:

ԳՈՐԻՍԻՔԱ

### ՀԱՐՑԸ ՄԵԾ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ Կ'ԱՌՆԷ

ՆՈՐ ԵՒ ԾԱՆՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՄԱՍԻՆ

Մայիս 6–ին, ժամէ ժամ աւելի ծանր հանդամանք առաւ Գորսիքայի ճաշարանի հրկիզման հարցը: Զինուորական ոստիկանութեան ամէնէն բարձրաստիճան պաշտօնեաները սկսան մէկը միւսը ամբաստանել եւ նահանդապետին գործունէութեան մասին ալ արուած տեղեկութիւնները չատ ծանրակչիռ են: Մէթր Քիէժման, Պոնէի փաստաբանը, կը պնդէ որ նահանդապետը ուղղակի դեր չէ ունեցած, այլ թերեւս հարկ եղածին չափ ուշադիր չէ եղած եւ ձգած որ իր չուրջ ծաւալի այն դաշափարը թէ նման արարքներ կարելի են: Փաստաբանը կ'ըսէ թէ նահանդապետը միայն յաջորդ օրը տեղեկացած է Շէֆ Ֆրանսիս ճաշարանի հրկիզումին եւ թէ չուզեր ուրիշներ մեղադրել: Բայց, այդ «ուրիշները» չեն վարանիր զինք մեղադրելու: Ամէնէն աւելի զինադապետ Գավալիէ շատ խօսած է եւ յայտնած նաեւ որ իր «մեծաւորը» պնդապետ Մազէր այլ հրկիզում ալ գործած է անցեալին: Մարտ 7–ին, ծովափի ուրիշ ճաշարանի մը հրկիզումը ցարդ չէր լուսաբանուած: Այս յայտնութիւններէն զատ, Պոնէի կը-րատեներակի պետն ալ՝ Փարոնի բաւական մեղադրանքներ կ'ընէ նահանդապետին մասին: Ան կ'ըսէ.– «Նահանդապետին փափաքը փայտքի մը (յարդէ տաներով շինութիւն ինչպէս էր ճաշարանը) հրկիզումը տեսնելու, քանիցս խօսակցութեան նիւթ եղաւ զնդապետ Մազէրի հետ նախապատրաստական չաբաթներուն: Այն առեն, նահանդապետը ինծի թելադրեց որ տեղւոյն վրայ թուղթ մը գտնել տամ որ կ'ըսէ.– «Ֆերօ ոստիկանի մատնիչ»: Այն առեն այդ թուղթը դրեցի»: (Ֆերօ ճաշարանին տէրն է):

Բոլոր խոստովանութիւններէն, յայտնութիւններէն կը պարզուի որ փայտքերու հրկիզումները ծրագրուած էին եւ Շէֆ Ֆրանսիսը առաջինը չէ (քայց, հաւանարար՝ վերջինը) եւ թէ Պոնէ ամէն բանէ տեղեակ էր:

⁂

Այս կացութեան լ տես, ալ ընդդիմութիւնը ձեռնածալ չէ նստիր, թէեւ բոլոր պարապմունքները նոյն ոճով չեն արտայայտուիր: Սարքոզի (Էմ – Փի – Էմ) աւելի զգոյշ է, մինչ Մատլէն (Ազատական ժողովրդավարութիւն) բառերը չի ծամծմեր եւ կը յիշէ Շեվէնմանի խօսքը Պոնէի նշանակումին առեն.– «Շեվէնման կ'ըսէր ճիշդ մարդը, ճիշդ տեղը: Արդեօք, Շեվէնման, այսօր, ճիշդ մա՞րդն է, ճիշդ տեղը»: Փաստուա Ժոսփէնի ալ հրաժարումը անհրաժեշտ կը դանէ: Բայց, Շեվէնման միտք չունի հրաժարելու: Մարսէյլէն, ուր կը պատուէր Մայիս 6–ին, յայտարարած է թէ երկու վարկած կայ· կամ նահանդապետին չուրջ մթնոլորտ մը ստեղծուած է որ թոյլ տուած է նման արարք մը, կամ նահանդապետը ի'նք ներշնչած է գործողութիւնը, երկու պարագային ալ ծանրակչիռ յանցանք մըն է:

Շիրաք, որ Նանսի գացած էր իր ելոյթին մէջ ակնարկեց Գորսիքայի հարցին, չեշտելով թէ Պետութեան հեղինակութիւնը ծպրտուծանակ եղած է: Ժոսփէնի չրջանակին մէջ, պատասխանատուներ կը տիրէ:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱՆի Արտաքին նախարարութեան խորհրդականը պաշտօնապէս բողոք յայտնած է Ադրբեջանի ստորագրած նաւթի երեք համաձայնագրի դէմ: Ինդրոյ առարկայ համաձայնագիրները ստորագրուած են Բաքուի եւ ամերիկեան ընկերութիւններու միջեւ: Հարցը այն է որ Կասպից ծովու ափի երկիրներուն միջեւ կը չարունակուի այդ ծովուն օգտագործումի ձեւին քննարկումը: Եթէ ծովը բաժնուի անջատ գօտիներու, քարիւղի որոշ չրջաններ որոնք Բաքուի կողմէ ԱՄՆ–էն ընկերութիւններու տրամադրուած են, պիտի պատկանին Իրանի:

ԹՈՒՐՔԻՈՑ արեւելեան չրջաններուն մէջ բախումները դադար չունին. Մայիս 5–ին Թունճէլիի մէջ քիւրտ մարտիկներ ծուղակ մը լարելով Թուրք զինուորներու մահուան պատճառ եղած են: Թուրք մամուլին համաձայն ինը զինուոր մեռած է, քրտականին համաձայն՝ 35:

ԹՈՒՐՔԻՈՑ վարչապետ Եճեւիթ որոշած է դատախազութեան դիմել ու պահանջել որ փակուի կրօնամէտ Առաքինութեան կուսակցութիւնը: Դրդապատճառ եղած է նոյն կուսակցութենէն երեսփոխանուհիի մը լաչակով Ազգային Ժողով մուտքը որ աշխարհականութեան սկզբունքին բռնադարում համարուած է:

ՊԱՊԸ, որու կ'ընկերանայ նաեւ կարդինալ Ղևոնթիէ Պուքրէչ գնաց Մայիս 7–ին:

### ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

Մայիս 6–ին, երթը հասած է Ժուանելի մեկնելով Օսերէն, ուր եւս ընդունուած են Թաղապետութեան կողմէ եւ դրկած ընթացիկ նամակները Շիրաքի, Ժոսփէնի եւ Փոնսըլէի:

## ՎԱՂԸ՝

### «ՅԱՌԱՋ– ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ»

Վաղը լոյս կը տեսնէ «Յառաջ միտք եւ արուեստ»ի նոր (248) թիւը հետեւեալ բովանդակութեամբ.–

Քալէիտոսքոպի արուեստասէրի մը օրագրէն
ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Ձերմակ արծիւներ կամ բանաստեղծութիւնը ըստ Օշականի
ԳՐԻԳՈՐ ՊԼԻՏԵԱՆ

# ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԱԴԱՐՁԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

## ԱՊՐԻԼ 29, 30՝- ՊՐԻՒՍԷԼ

(Բ. եւ վերջին մաս)

Համաժողովին Բ. օրուան (Ապրիլ 30) առաջին նիստը որուն կը նախագահէր Հայ Դատի յանձնախումբի նախագահ Հիլտա Զոպոյեան, նիւթ ունեցաւ ցեղասպանութեան ժառանգութիւնը: Պելժիոյ Ներկայացուցիչն Ալէն Տէսթէքս խօսեցաւ ցեղասպանութեան մը ճանաչումին կարեւորութեան եւ ատոր դէմ ցցուող պատնէշներուն մասին: Ըսաւ թէ դրեթէ ամէն օր բողոքի, դժգոհութեան նամակներ կը ստանայ Թուրքիոյ դեսպանատունէն: Հ. Զոպոյեան ալ աւելցուց թէ Հայերու ցեղասպանութիւնը առնելին միջազգային առեանգէ մը դատապարտուած չըլլալով, այսօր հինցած պարագայ մը կը նկատուի, տարուէ տարի աւելցող մտահոգութեամբ կրկնելով հարցումը թէ մօտ ղար մը եաք ո՞րն է առանց ճանաչումի ու դատապարտութեան մնացած ցեղասպանութիւն մը այժմէականացնելու ձեւը:

Փարիզէն պատմաբան Հելէն Մարաթիւլիաս այդ հարցականին մասամբ պատասխանելու փորձ մը ըրաւ խօսելով դպրոցական դասագիրքերու – յատկապէս Ֆրանսականներուն – մէջ 1915–ի ներկայացման մեծ բացակայութեան մասին: Այդ երեւոյթը համազօր նկատեց ուրացումի արարքին որուն հետեւանքը կ'ըլլար մարդկութեան յաջորդ սերունդներուն յիշողութենէն ջնջել կատարուածը: Տեղին էր ատոր հետեւող Հայաստանի Օ–ԷՍ–Սէ–Ը–ի դեսպան Ճ. Թապիկեանի մատնանշումը թէ դասագիրքերու պարունակութեան մէջ Հայերու ցեղասպանութեան տեղ չտալու երեւոյթը քաղաքական բնոյթի արարք է:

Առաւօտեան յաջորդ թեման լեզուական – մշակութային էր. նախագահ Ա. Տօնապետեան որ ամէն առիթով տեսականն ու բացատրականը կ'առընչէ գործնականին, այժմէականին, ամփոփ կերպով անդրադարձաւ արեւմտահայերէնին ներկային, ապա խօսեցաւ Եւրոպական Խորհուրդին կողմէ փոքրամասնութիւններու լեզուներու դաշինքին մասին: Բացատրեց այդ չրջանակին մէջ արեւմտահայերէնին տեղ տալու նպատակով տարուած ծանօթ ջանքերը, մաղթելով որ Ֆրանսա աւելի չյապաղի ատորագրելու այդ դաշինքը:

Ս. – Գ. – Մուրատեան ժթ. դարու Զարթօնքի չրջանի օրինակով չեշտեց դուրսէն ցոյց տրուած հետաքրքրութեան դրական ազդեցութիւնը, թելադրելով որ դասագիրքերէ 1915–ին բացակայութեան առընչութեամբ ծնողքներ պահանջ ներկայացնեն, բողոքին: Խօսեցաւ նաեւ Սփիւռքի վարժարաններուն դասագիրքերու հարցին մասին:

Յիւրիխէն, պատմական յուշարձաններու պահպանութեան հիմնարկէն Սարգիս Շահինեան ժառանգութեան այս երեսակը նիւթ առաւ: Ցուշարձանները եւս նկատեց ժողովուրդի մը յիշողութեան մասնիկը ու մարդոց բնաջնջումին համազօր չարիք որակեց կոթողներու քանդումը: Տուաւ Նոր Զուղայի տապանաքարերու ծանօթ նոր օրինակը: Որպէս զարմանի մէջոց, առաջարկեց մշակութային – քաղաքական կազմաւորումի մը ստեղծումը:

Այդ առաջարկին դրական եւ տուեալ օրինակ կրնար ըլլալ Վենետիկի Մխիթարեան ուխտէն Հ. Ցարութիւն Պզտիկեանի երկրէն որ Մխիթար Աբբահօր մահուան 250–ամեակին առիթով նիւթ ունեցաւ միաբանութեան դարաւոր վաստակը: Սակայն, ներկայի ծանօթ հարցերը չջնջեցին, անցեալին հետ միայն փաստարկելի ներկայի մը պատկերը տալու անոր կեցուածքը սրահէն արդար դիտողութիւններու պատճառ եղաւ:

Լուծումի կարօտ բազմապան հարցերով ներկային մէջ չատ աւելորդ կերպով երկարած երկրի մը Հայաստանի չրջանն դեսպան ու համահայկական ոդիմպիականներու կազմակերպիչ կոմիտէին նախագահ Աչոտ Մելիք Շահնազարեանի ուշադրութեան արժանացաւ: Ան ալ չեշտելէ եաք մարզականին եւս մշակութային յատկանիշը, խօսեցաւ հեռաւոր անցեալին հայ թագաւորներուն մարզական յաջողութիւններուն, արձանագրուած փառքին մասին: Ցետոյ Թուենց յառաջիկայ հայկական ոլիմպիականներուն մասնակցելիք քաղաքներուն անունները, եւայլն:

Առաւօտեան վերջին խօսք առնողը ԺԸ–նեւէն ՄԱԿ–ի Հայաստանի ներկայացուցչութեան խորհրդական Ալին Տէսէեանն էր: Ան իրապաշտ մտահանչումով ըսելէ եաք թէ ներկայի պատկերը Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ կարեւոր ճեղքերով կը ներկայանայ, կան անտարբերութեան, տատամսումի փոխադարձ երեւոյթներ, կարեւոր նկատեց կացութիւնը բարեփոխել. փոխել նաեւ միջազգային հանրութեան, մարմիններու քով Հայաստանի տխուր, խնդրարկու պատկերը, քանի որ տակիկա լաւ տպաւորութիւն գործող բան չէ: Առաջարկեց միջազգային իրաւագէտներու խումբեր կազմել, զարկ տալ ներկայացուցչական գործին ու ամէնէն հմտնականը՝ տալ արդիականութեան չափանիշները եւ նաեւ իր աւանդութիւնները յարգող ժողովուրդի մը պատկերը: Ատոր համար էական էր անշուշտ միասնութիւնը չջափելի գործօնի վերածել, պատասխան դանելով «ի՞նչպէս»ներու:

Ցետիյօրքի նիստին նախագահեց Փարիզէն, Ապրիլ 24–ի կոմիտէի նախագահ Ա. Կէօվճեան որ հոս տարուած աշխատանքներուն անդրադարձաւ, չեշտելով ժողովրդավար ձեւով ընտրուած Եւրոպայի ներկայացուցչական մարմին մը ունենալու անհրաժեշտութիւնը: Որպէս ըսփիւռք Եւրոպայէն եւ աշխարհէն լսելու ըլլալու թեմային նուիրուած նիստին ելոյթ ունեցան երեք ոչ հայ խորհրդարանականներ. անոնցմէ Պելժիոյ Ներկայացուցիչ Ֆ. Մահու Հայերու նկատմամբ հանդէպ յայտնելէ եաք չեշտեց որպէս աչխարհի քաղաքացի՝ «միւս»էն ճանաչումին հարատացնող ազդակը բոլորին համար, ինչպէս ժողովուրդներու փոխադարձ չփումներուն կարեւորութիւնը: Վրաստանէն երեսփոխան Կիվի Շուղարով ամփոփ պատկեր մը տուաւ վիրահայ դարձեալ որ ըսաւ թէ կը հաւատայ Վրաստանի եւ Հայաստանի մտաւոր ուժը եւ Ադրբեջանի քարիւղի պաչարները:

Բաւական գործնական առաջարկներով ելոյթ մը ունեցաւ Ֆրանք Շուալպա – Հոթ որ նախկին անդամ մըն է Եւրոպական Խորհրդարանին: Լոպիական գործունէութիւնը ժամանակակից ժողովրդավարութեան ընդունուած գործելակերպերէն համարելով, թելադրեց ոչ մէկ կացութիւն ամրողջովին անել նկատել: Ըսաւ թէ պէտք էր անպայման ծրագրուած աչխատանք տանիլ. ընտրել ոչ չատ բարդ նպատակ մը, ճշդել անոր ժամանակը ու կեդրոնանալ անհատներու վրայ: Շեշտեց թէ ոչինչ նոյնքան ազդեցիկ կրնայ ըլլալ, որքան հետեւողական աչխատանքը, կըրնկրկթը ծակող ջուրի կաթիլին օրինակով: Անդրադառնալով Եւրոպական Խորհրդարանի մօտակայ ընտրութեան, ըսաւ թէ պահը յարմար էր նոր թափով դործելու, մօտենալով երեսփոխաններուն, նախաձեռնութեան ոգի ցուցաբերելով: Աւելցուց թէ կարեւոր էին Հայաստանէն, Ղարաբաղէն եկողներու հանդիպումները բանալի դիրքերու վրայ գտնուողներու հետ, անշուշտ եթէ պարտելու, դնումները ընելու առաջնահերթութիւնը մէկդի դրուէր:

Այս նիստին ուսանելի չատ բան ունեցող ելոյթ մը ունեցաւ Տաւիտ Սիւսքինտ որ Պելժիոյ աչխարհավար Հրեաներու համայնքային կեդրոնին պատուէրով նախադահն էր: Ան ըսաւ թէ երկու հազարամեայ սփիւռքի մը փորձառութիւնը զիրենք առաջնորդած էր համադրութեան մը ուր կը միանային հրեայ մնալու փափաքը եւ Պելժիոյ լիակատար ազատ քաղաքացի ըլլալու ձգտումը: Իրեն փոխանցուածը յաջորդ սերունդին փոխանցելու պարտքը պերպոյն առաքելութիւն էր իրեն համար: Իր ժողովուրդին օտարի փորձառութիւնը ան կը հիմնէր ոչ թէ Շոայինն, այլ Մովսէսի ժամանակին վրայ երբ Հրեաները Եգիպտոսի մէջ: Ճնշուած ըլլալուն պիտակութիւնն ալ յաջորդ սերունդին փոխանցելի ժառանգութիւն էր, քանի որ կար այլեւս երբեք նման կացութեան մէջ չգտնուելու վճռակամութիւնը: Ան ցեղասպանութիւնը մեղմելու արարք նկատեց ո՛չ թէ խումբի մը ըրածին, այլ եղածին համար: «Եթէ յիշողութիւնս չմշակեմ, ապագայ չունիմ» ըսաւ ան, եղրակացնելով որ քաղաքակրթութիւնը բուռածը ի վերջոյ բոլորիս ունեցածին դումարն է եւ ոչ ոք որեւէ բանի մենաչնորհին տէր է:

Նոյն նիստին հետաքրքրական մէկ ելոյթն էր «Մոնտ ափրըմաթի»ի երիտասարդ լրագրող Վիդէն Զէթերեանի խօսքը: Ան ծանրացաւ նոր, այժմէական դաղափարներ մշակելու առաջնահերթութեան վրայ: Ըսաւ թէ ներկայի սերոդական մօտեցումներով կարելի չէ մեր ակնկալած յաջողութեան հասնիլ: Հպարտութեամբ ան աւելցուց թէ յանցանքը մերն էր եթէ 84 տարիէ ի վեր չէինք յաջողած ցեղասպանութեան ճանաչում ապահովել, կամ եթէ այսօր նոր սերունդը հայերէն չէր խօսեր: Պէտք էր անպայման արհեստավարժի մօտեցումով նոր մարտավարութիւն որոշել, սահեղծելու համար նորովի մտածող ու գործող Հայու նոր տիպար մը, ինչ որ բնականաբար դիւրին գործ չէր:

Նոյն նիստին գործնական առաջարկով մը հանդէս եկաւ Գերմանիայէն Րաֆֆի Քանդեան, սեղան բերելով Թուրքերու հետ երկխօսութեան կարելիութիւններու հեռանկարը. ըսաւ թէ կար լուսամիտ տարր մը, խմբուած՝ Մարդկային Իրաւանց Միութեան չուրջ, որ կը պայքարէր հայկական հարցերու համար ալ, ինչպէս եղած էր Պոմոնթիի Մխիթարեան վարժարանին չէնքէն արտաքսումի պարագային: Փոխանակ սպասելու պետութեան հետ երկխօսութեան մը այսօր անկարելի նկատուող պայմաններուն, աւելի վեհացի գործ կ'ըլլար չփում հաստատել նման խումբերու հետ:

Հետաքրքրական էր լսել Ամերիկայի Հայկական Համագումարէն Արփի Վարդանեանի դեկուցումն ալ. այդ համագումարը Եւրոպայի համար ամրողջութեամբ օրինակելի նախադէպ չըլլալով հանդերձ, կազմակերպուած գործունէութեան բաւական յաջողած տիպար մը կը հանդիսանար հայկական իրականութեան մէջ:

Նիստը աւարտեցաւ ԻՒ – ՏԷ – ԷՖ կուսակցութեան Ազգային Խորհուրդէն Անի Փիլիպոսեանի հակիրճ զեկուցումով որ նիւթ ունէր Սփիւռքի կառոյցներու չատ ամփոփ դասաւորում մը. ան եւս չեշտեց ժողովրդավարական ձեւով ընտրելի կառոյցի մը անհրաժեշտութիւնը:

Երկօրեայի վերջին ելոյթները նիւթ ունէին Հայաստան – Եւրոպա, Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները: Եւրոպական Խորհուրդէն Եան – Ուիլլեմ Պէքթէնս, Գ. Գորպօ, Հայաստանէն Ա. Ասոնց խօսեցան եւրոպական օժանդակութեան ծրագիրներու, Տրասեկայի, չըրջանային գործակցութեան ներկային ու հեռանկարներու մասին:

Եզրափակիչ նիստով մը վերջ գտաւ համաժողովը որուն առիթով հայաստան–

---

ԱԿՆԱՐԿ

# ՌԱԶՄԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակուող բռնազաղթ, չարունակուող ոմբակոծումներ ու քանդումներ:

Կ'ապրինք արտառոզոր դէպքեր, որոնք չատերու համար սկսած են մաս կազմել սովորական առօրեային:

Առհասարակ համաչափ արձագանգող ու նոյնանման հակազդող ընկերութեան մը հեղձուցիչ ճնչումին տակ իսկապէս դժուար է պատեզազմի անխուսափելիութեան գաղափարախօսութեան քննադատութիւնը:

Կայ բռնատէր մը, կան անոր սարսափազդու արարքները: Լուծում՝ բռնատէրին անժամանելի չէզոքացումը պատերազմի ճամբով: Այսպէս դրուած է խընդիրը եւ այս լուծումը ընդունած է արեւմտեան ընկերութիւնը:

Թերեւս նպատակ ահաւոր իրականութիւնը տեսած ու ապրած արեւմտեան եւրոպական ընկերութեան համար անխուսափելի է նման հարցի մը այսպիսի ընկալում եւ այսպիսի հակազդեցութիւն: Նպատակ ուրուականը միչտ ապակ է Արեւմուտքի հաւաքական յիչողութեան մէջ: Հետեւաբար այդ օրերու պատկերները յիչեցնող ամէն երեւոյթ առիթ կուտայ հաւաքական բնազդներու արտայայտութեան:

Երեւոյթը առողջ ու օրինակելի է ինքնին, այնքան ատեն որ հարցը կը վերաբերի ցեղապաչտութեան ու անոր զազրացումին դէմ պայքարին:

Բայց ... անիկա կրնայ յանգիլ նաեւ այսօրուան Պելկրատին ու Եուկոսլաւիոյ միւս քաղաքներուն, որոնք անխնայ կաւերուին յանուն բռնատիրութեան պայքարի՝ ռազմապաչտութեան խելայեղ ալիքի մը անհանդիստ հարուածներուն տակ:

Համոզուած ենք, որ այս երեւոյթը արեւմտեան ընկերութեան իրապատկութեան ժամանակ էր եղիպտոսի մէջ: Ճնշուած ըլլալուն պիտակութիւնն ալ յաջորդ սերունդին փոխանցելի ժառանգութիւն էր, քանի որ կար այլեւս երբեք նման կացութեան մէջ չգտնուելու վճռակամութիւնը: Ան ցեղասպանութիւնը մեղմելու արարք նկատեց ո՛չ թէ խումբի մը ըրածին, այլ եղածին համար: «Եթէ յիշողութիւնս չմշակեմ, ապագայ չունիմ» ըսաւ ան, եղրակացնելով որ քաղաքակրթութիւնը բուռածը ի վերջոյ բոլորիս ունեցածին դումարն է եւ ոչ ոք որեւէ բանի մենաչնորհին տէր է:

Նոյն նիստին հետաքրքրական մէկ ելոյթն էր «Մոնտ ափրըմաթի»ի երիտասարդ լրագրող Վիդէն Զէթերեանի խօսքը: Ան ծանրացաւ նոր, այժմէական դաղափարներ մշակելու առաջնահերթութեան վրայ: Ըսաւ թէ ներկայի սերոդական մօտեցումներով կարելի չէ մեր ակնկալած յաջողութեան հասնիլ: Հպարտութեամբ ան աւելցուց թէ յանցանքը մերն էր եթէ 84 տարիէ ի վեր չէինք յաջողած ցեղասպանութեան ճանաչում ապահովել, կամ եթէ այսօր նոր սերունդը հայերէն չէր խօսեր: Պէտք էր անպայման արհեստավարժի մօտեցումով նոր մարտավարութիւն որոշել, սահեղծելու համար նորովի մտածող ու գործող Հայու նոր տիպար մը, ինչ որ բնականաբար դիւրին գործ չէր:

Նոյն նիստին գործնական առաջարկով մը հանդէս եկաւ Գերմանիայէն Րաֆֆի Քանդեան, սեղան բերելով Թուրքերու հետ երկխօսութեան կարելիութիւններու հեռանկարը. ըսաւ թէ կար լուսամիտ տարր մը, խմբուած՝ Մարդկային Իրաւանց Միութեան չուրջ, որ կը պայքարէր հայկական հարցերու համար ալ, ինչպէս եղած էր Պոմոնթիի Մխիթարեան վարժարանին չէնքէն արտաքսումի պարագային: Փոխանակ սպասելու պետութեան հետ երկխօսութեան մը այսօր անկարելի նկատուող պայմաններուն, աւելի վեհացի գործ կ'ըլլար չփում հաստատել նման խումբերու հետ:

Հետաքրքրական էր լսել Ամերիկայի Հայկական Համագումարէն Արփի Վարդանեանի զեկուցումն ալ. այդ համագումարը Եւրոպայի համար ամրողջութեամբ օրինակելի նախադէպ չըլլալով հանդերձ, կազմակերպուած գործունէութեան բաւական յաջողած տիպար մը կը հանդիսանար հայկական իրականութեան մէջ:

Նիստը աւարտեցաւ ԻՒ – ՏԷ – ԷՖ կուսակցութեան Ազգային Խորհուրդէն Անի Փիլիպոսեանի հակիրճ զեկուցումով որ նիւթ ունէր Սփիւռքի կառոյցներու չատ ամփոփ դասաւորում մը. ան եւս չեշտեց ժողովրդավարական ձեւով ընտրելի կառոյցի մը անհրաժեշտութիւնը:

Երկօրեայի վերջին ելոյթները նիւթ ունէին Հայաստան – Եւրոպա, Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները: Եւրոպական Խորհուրդէն Եան – Ուիլլեմ Պէքթէնս, Գ. Գորպօ, Հայաստանէն Ա. Ասոնց խօսեցան եւրոպական օժանդակութեան ծրագիրներու, Տրասեկայի, չըրջանային գործակցութեան ներկային ու հեռանկարներու մասին:

Եզրափակիչ նիստով մը վերջ գտաւ համաժողովը որուն առիթով հայաստան–եան լուսանկարներու եւ նկարչուհի Ասիլ վայի պատառաններու ցուցահանդէս մըն ալ սարքուած էր Խորհրդարանին մէջ:

Ձեռնարկը ուչադրաւ նախաքայլ մը կազմելուն հետ, յետագայ նման նախաձեռնութիւններու համար որոչ ուղեցոյցի դեր մըն ալ կատարել: Այդ դերով մեծ օգուտ պիտի բերէ օրինակ այն երկու մարզերուն որոնց սրբագրութիւնը ամէնէն առաջնահերթն է. անոնցմէ գլխաւորը ելոյթներու թէ՛ որակով, թէ՛ պարունակութեամբ անհատասար մակարդակն էր: Ատոր հետ՝ նաեւ անտեսուած դէմքերու պարագան: Բաներ որոնք հրաւիրեալներու ընտրութեան գործին մէջ ձեռնհասութեան պակաս մը կը մատնեն: Անհրաժեչտ է նաեւ որ նման յաջորդ պարագաներու աւելի առողջ մօտեցումով կատարուի գործի բաչխումը ու ընդունելի չափանիչներով որոչուին կազմակերպչական ու մտաւորական աչխատանք կատարելիք կամ նիւթական հայթայթելու ձեռնարկելիք անձերը:

Սրբագրութեան լրջօրէն կարօտ երկրորդ կարեւոր մարզը լեզուականն է: Երկօրեայ հաւաքի մը ուր տիրող լեզուն հայերէնն է, անընդունելի է որ թղթածրարին հայերէն էջերը – ժամանակացոյց, նիւթերու ներկայացում, եւայլն – լեզուական, ուղղագրական բաբելոնեան խառնիճաղանճ մը պարզեն, մինչեւ իսկ արտանդակելով հայկական անձնանունները, ինչպէս՝ «Սարկիսյան», «Փիլիբոսյան», «Համպիկ», եւայլն: Նոյն էջերը տակաւին տեղ տուած էին «Սուրբ Ղազար միաբանութեան մը...: Արեւմտեան Սփիւռքի սրտին վրայ եւ մշակոյթ պահպանելու թեմայով բազմաթիւ ելոյթներու տեղ տրուած նման ձեռնարկի մը համար զրեթէ ինքնաժխտումի արարքի համազօր չէ ֆրանսերէնն եւ անդլերէնն ելոյթներու միանչանակ արեւելահայերէնի թարգմանութիւնը: Մանաւանդ որ տեղւոյն վրայ կազմակերպչական գործին լծուած երիտասարդ – երիտասարդուհիներու զրեթէ բոլորը սահուն հայախօս էին, կամ որեւէ ձեւով դժուար չէր արեւմտահայերէնի դիտակ թարգման մը ճարել: Ինչպէս չատ իրաւացի կերպով դիտել տրուեցաւ դասագիրքերու առընչութեամբ, այս մէկին ալ քաղաքական կեցուածքի հարց է, նոյնիսկ եթէ լսարանին մէջ կար արեւելահայերէն խօսողներու որոչ թիւ մը:

Ցետագայ ծրագիրներու պատրաստութեան ընթացքին նկատի առնուելիք առաջարկներ ալ եղան ելոյթներու յաջորդած հարցումներու բաժիններուն: Անոնցմէ էին օրինակ՝ մամուլի գրասենեակ մը հաստատելու, հայութեան վիճակագրական տուեալները ճշդելու, խմբելու աչխատանքին ձեռնարկելու առաջարկները:

Ինչպէս հաւատաց Եւրոպական Խորհրդարանի անդամ մասնակիցներէն մէկը, հայութիւնը մէկ, կամ երկու տարի եաք կրկին պիտի հիւրնկալուէր Եւրոպական Խորհրդարանին մէջ, չարունակելու համար կազմակերպչական աչխատանքները: Նոյնիսկ այդ հեռանկարով, մեր օգուտին է արժեւորել կատարուածը, իմաստով դասաւորել դրականներն ու ժխտականները, անցնելու համար յաջորդ քայլերու:

ԱՐՓԻ ԹՈՒՐՈՅԵԱՆ

## ԶԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

# ԾԱՂՐԱՆԿԱՐԻՉ ՀՈՎԻՒ-ԻՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

ՄԱՐՍԷՅԼ («Յառաջ»).–

Ապրիլ 24–ի ոգեկոչումներու շրջագծին մէջ, Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը ներկայացուց ինքնաթիռ ցուցահանդէս մը հանրածանօթ ծաղրանկարիչ Հովիւի գծագրութիւններով որոնց մեծ մասը նոր արտադրութիւններ էին, յատկապէս պատրաստուած այս առիթով եւ օրուան նիւթին չուրջ:

«Տեսէ՛ք, Ապրիլ 24–ը գոյութիւն չունի» ըսել կուտայ իր անձերէն մէկուն որ առանց վարանումի օրացոյցի մը թերթիկները զարձնելով կ'անցնի Ապրիլ 23–էն 25:

Այս եւ այլ գործերու մէջ Հովիւ կրցած է միախառնել եւ՛ հիւմուրը, եւ՛ ողբերգութիւնը: Կ'ըսուի թէ, պատմութեան մէջ, անարդարութիւններու եւ կամայականութիւններու ենթակայ փոքրամասնութիւնները գործածած են որպէս զէնք՝ հիւմուրը որ պատկերացումն է ոդիի մը, արամադրութեան մը, արտադրութիւնն է մտային արժէքներու:

Հովիւ իր ներշնչումը կը գտնէ առօրեային եւ այժմէականութեան մէջ: Գծագրին մը միշտ իրականութենէն անդին կ'երթայ, կ'ըսէ Հովիւ, բացայայտ կերպով: Գծագրական արտայայտութեան մէջ ճշգրտութիւնը, երեւակայութիւնը, նրբամտութիւնը եւ բառերու ճարտարանքը արուեստի մակարդակին կը բարձրացնեն ծաղրանկարչութիւնը: Հովիւ հասած է այդ չափանիշին. փաստ՝ իր երկար եւ փայլուն ասպարէզը քննադատ մը ներս ուր դժուար է պատուանդան մը ունենալ եւ զրաւել իրայատուկ տեղ:

Բուն անունով Ռուբէն Հովհաննէսեան, ծնած է Վիէն, Իզմիրի նահանգը: 1946–ին մտած է Լիոնի գեղարուեստանոցը եւ հրատարակած է իր առաջին գծագրութիւնները: 1947–ին, ընտանիքին հետ, մեկնած է Սովետական Հայաստան: 1954–ին, աքսորուած է Սիպիր, ուր փայտահատութեամբ կը զբաղէր: 1957–ին, վերադարձած է Մոսկուա եւ աշխատած չարժանթկարի աշխատանոցներու մէջ: Վերադարձած է Ֆրանսա, 1964–ին, եւ գործակցած պարբերաթերթերու՝ «Էհոսոն», «Մարիիւս», «Փարի – Մաչ», «Լիւի», «Իսի – Փարի», «Էլ», «Ժուռնու տը Ֆրանս», «Վի – Էմ – Տէ», «Փլէ Պոյ» եւայլն...: 1983–ին, իրագործած է քաղաքական գործադրութիւնները «Քոթիտիէն տը Փարի»ի համար եւ ապա «Փուէն» չաթէթերին, ինչպէս նաեւ «Թելէ – Լուազիր»ի:

Հովիւի գծագրութիւնները հրատարակուած են նաեւ՝ Գերմանիա, Իտալիա, Սպանիա, Միացեալ – Նահանգներ, Արժանթին, Զուիցերիա եւ այլ երկիրներու մէջ: Լոյս ընծայած է երկու albumներ:

Հովիւի ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ Ապրիլ 19–ին, հետաքրքիր բազմութեան մը ներկայութեամբ: Տեղական թերթերը «Լա Փրովանս» եւ «Լա Մարսէյէզ» լայն արձագանգ տուին: Նկատի ունենալով ցուցահանդէսին դառած յաջողութիւնը, դեռ քաց կը մնայ մինչեւ Մայիսի կէսին:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

## ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹի Ց. Տէր – Մելքոնեան պրահին մէջ, Ապրիլ 24–ին տեղի ունեցած է Ապրիլեան ոգեկոչումը: Բացման խօսքը արտասանած է Զօհրապ Ղազարեան: Առաջին քանախօսը եղած է Յակոբ Տէմիրճեան (Ս.Դ.Հ.Կ.), որու յաջորդած են Սեւակ Փափազեան (ՌԱԿ), Տիգրան Ձիւնպաչեան (ՀՅԴ): Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Ապրիլ 23–ին ալ, Հայ քաղաքական կուսակցութիւններէն Երիտասարդական եւ Ուսանողական Միութիւններու կազմակերպութեամբ, Անթիլիասի մայրավանքին մէջ, տեղի ունեցած է հանդում: Վարժարաններու մէջ ալ, աշակերտութիւնը պահանջատիրական ձեռնարկներ կազմակերպած է:

***

ՊԷՅՐՈՒԹի Հայ կաթողիկէ պատրիարքարանի բակին մէջ եւ Ապրիլեան Եղեռնի նահատակներու յիշատակին նուիրուած կոթողին առջեւ, Ապրիլ 23–ին, հանդում կատարուած է կազմակերպութեամբ Հայ կաթողիկէ երիտասարդական կազմակերպութիւններուն: Գեղարուեստական կոկիկ յայտագրէ մը ետք, խօսք առած են Տիկին Միմի Եողկաճեան եւ տոքթոր Վաչէ Նիւրքէճեան: Ցաջորդ օրն ալ կատարուած է Հոգեհանգստեան պաշտօն:

***

ՄՈՆՐԷԱԼի մէջ, Ապրիլ 23, 24 եւ 25–ին տեղի ունեցած են զանազան ձեռնարկներ նուիրուած Ապրիլեան Եղեռնին: Ապրիլ 23–ին, Մոնրէալի համալսարանի մէկ սրահին մէջ, ցուցադրուած է Թորոնթէ Ֆորմայի «Է ուոլ օֆ սայլընս» (Լռութեան պատ մը) վաւերագրական ժապաւէնը: Նոյն դիշերը տեղւոյն ՀՑԴ երիտասարդական Լևոն Շանթ մտնակճիւղի կազմակերպութեամբ հանդում կատարուած է ցեղասպանութեան յուշարձանին առջեւ (չուրջ 300 երիտասարդներ): Ապրիլ 24–ին հոգեհանգստեան զանազան արարողութիւններ կատարուած են եւ Ապրիլ 25–ին ալ պաշտօնական հանդիսութիւն տեղի ունեցած է Հայ Կեդրոնի ՀՄԸՄ – կամք մարզասրահին մէջ, կազմակերպութեամբ ՌԱԿ–ի Հայ Իրաւանց Յանձնախումբին եւ ՀՑԴ Լաւալի եւ Մոնրէալի Հայ Դատի Յանձնախումբերուն: Խօսք առած են քաղաքապետական գործադիր խորհուրդի փոխ – նախագահ Նուչիկ Էլոյեան, Լաւալի քաղաքապետ՝ Ժիլ Վայանքուռ, երեսփոխան Իվան Պորտելօ, Քէպէքի հանրային ապահովութեան նախարար՝ Սերժ Մինար, Մատլէն Տալֆոն – Կիբար, Էլէնի Պաքոփանոս, Տոքթոր Ժիրայր Պաստաճեան, «Ապագայ»ի խմբագրապիր Արսէն – Նուպար Մամուրեան (Հայերէն) Հայ Դատի Յանձնախումբի առենապետ Ռուբէն Գուլումճեան (Ֆրանսերէն): Գործադրուած է գեղարուեստական պատշաճ յայտագիր մը:

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

Նոյն միջոցին երեսունըհինգ տարեկան երիտասարդ մը մօտեցաւ երկու տիկիններուն ու ծեքծեքոտ յարգանքով մը բարեւեց պիրենք: Աթիկ պէյն էր, երկայնահասակ, չոր, թուխ, ակնոցաւոր, վեր ցցուած սեւ պեխերով: Երկրորդական վարժարանէ մը հազիւ շրջանաւարտ, Աթիկ պէյ դատարկապորտ կեանք մը կ'անցընէր տարիներէ ի վեր իր հօրը թողած հարստութիւնը կամաց – կամաց մըխելով: Ոեւէ ըր ուրջ աշխատանքի անկողջ իր ժամանակը կ'անցընէր թղթախաղով կամ կիսաշխարհիկ զբօսանքներով: Աւելի գիշերները կ'ապրէր, քան ցերեկները: Միշտ զրկարաց կ'ընդունուէր բարձր դասու շրջանակներուն մէջ, որովհետեւ հարթաւուտը էր իր չարախօսութիւններով ու օրուան գայթակղութիւններու մասին իր ունեցած մտնոպիտութեամբ: Աթիկ պէյ ի հարկին զրպանէն դրամ կը ծախսէր ընտանեկան լպրծուն պատճառներ իմանալու եւ զանոնք հոս ու հոն տարածելու համար: Ասով միայն կրցած էր ինքզինք բաղձալի դարձնել բնակերական շրջանակներու մէջ:

– Կը չնորհաւորեմ, տիկին, ձեր այսօրուան նոր յաջողութիւնը, – լսաւ երիտասարդը պզտիկ խոնարհութիւն մը ընելով Տիկին Սկամպիլեանի առջեւ, – արդարեւ հրաշքներ գործելու կարող էք, ապրը պէտք է, որ ձեր արձանը կանգնեցնէ, իրրեւ երախտագիտութեան նշան:

– Ի՞նչ, վրա՞ս կը խնդաս կոր, – պատասխանեց տիկինը:

– Ձեր վրայ խնդա՞լ, ո՞վ տուեր է, աչխարհի վրայ այդ համարձակութիւնը որեւէ մէկու մը. պարզապէս ճշմարտութիւնն է, որ կը յայտարարեմ:

– Բայց այնչափ մեծ բան մը չէ մեր ըրածը, – դիտել տուաւ տիկինը համեստութեամբ:

– Ինչպէ՞ս, – պոչեց Աթիկ պէյ, – բոլոր Բերայի դեղանի աղջիկները կը հաւաքէք ու հոս կը ժողվէք եւ առով ալ չգոհանալով գեղերէն ալ բերել կուտաք, ասկէ աւելի մեծ գործ ի՞նչպէս կարելի է երեւակայել:

– Եթէ այդ է միակ արժանիքս՝ չատ չեմ պարծենար:

– Ըսածներս չխեղաթիւրենք, ձեր արժանիքներէն մէկն է միայն, բայց ամէնէն հաճելին:

– Շատո՞նց է, որ եկաք պազար:

– Բաւական եղաւ ու բաւական ալ սօթեցայ, գրեթէ քովի եղած դրամս ըսպառեցաւ:

– Այդ աղէկ, գոնէ չատկեկ բերա՞ծ էիք միասին:

– Չեմ գիտեր, բայց թերեւս 50 – 60 ոսկիի չափ:

– Ի՞նչ նորութիւն կայ տեսնենք, Աթիկ պէյ, – միջամտեց Տիկին Սիրարփի խօսքը երիտասարդին ուղղելով, – անպատճառ նոր դայթակղութեան մը լուրը ունիս:

– Գայթակղութեան մեծը ձեր աչքերուն առջեւն է, չտեսա՞ք, – ըսաւ Աթիկ ակնոցը չտկելով:

– Ի՞նչ գայթակղութիւն, – հարցուց Տիկին Սիրարփի հետաքրքիր:

– Տիկին Թաթիկեանը ... քիչ մը առաջ հոսկէ անցաւ, վարի կողմէն կուգար կոր, անչուչտ տեսած ըլլալու էք:

– Տեսանք, այո՛, – հաստատեց Տիկին Սկամպիլեան:

– Ամբրոսիոս էֆէնտիին հետ թեւ թեւի:

– Այդ ալ ճիշդ է, յետո՞յ ... այդ իրողութի՞ւնն է, որ իրրեւ մեծ գայթակղութիւն մեզի կը ծանուցանես, կ'երեւայ, որ այսօր լուրերու կողմէ չատ աղքատ ես:

– Ես աղքատ չեմ, միայն թէ դուք անցած – դարձածէն տեղեկութիւն չունիք:

– Ի՞նչ նշանակութիւն ունի եթէ Տիկին Թաթիկեան Ամբրոսիոս էֆէնտիի հետ պազարին մէջ թեւ – թեւի պտըտին:

– Եւ Թաթիկեան էֆէնտի ալ բացակայ ըլլայ, – չեչտեց Աթիկ պէյ չարամիտ ժպիտով մը:

– Արդէն Թաթիկեան էֆէնտի եւ Տիկին նոր երբեք իրարու հետ չեն գտնուիր, – դիտել տուաւ Տիկին Սիրարփի:

– Այո՛, այդ մասին կ'երեւայ, որ մէջերնին բարեկամական դաշինք մը կայ, – ըսաւ երիտասարդը խնդալով:

– Նորէն չարախօսութեան չկսինք, – պատասխանեց Տիկին Սկամպիլեան:

– Ե՞ս, չարախո՞ս, – բողոքեց Աթիկ պէյ, – երբե՞ք, ինծի լինչ, ամէն մարդ ազատ է ուզածին պէս ապրելու, մանաւանդ այս ներկայ ժամանակիս:

– Բայց ըրածդ պարզապէս անտեղի բամբասանք մըն է, դուն ալ աղէկ գիտես, որ Թաթիկեան էֆէնտի չատ զբաղած մարդ է ու ժամանակ չունի մէչտ իր կնոջ ընկերանալու:

– Եւ այդ հոգը չանձնած է բարեկամներու, – դիտել տուաւ երիտասարդը:

– Կրնայ ըլլալ ... ի՞նչ դէչութիւն կը տեսնես ատոր մէջ:

– Ո՛չ մէկ դէչութիւն, ընդհակառակն աղէկութիւն, գոնէ բարեկամին համար, միայն թէ պէտք է ընդունիլ, որ Տիկին Թաթիկեանի պէս գեղեցիկ եւ հրապուրիչ ու քիչ մըն ալ ... սանձարձակ կին մը բարեկամներու հոգածութեան վստահիլը չատ խելացի գործ մը չէ պատուախնդիր ամուսինի մը համար:

– Մինչ մարդ անկեղծ ու պատուաւոր բարեկամ չի՞ կրնար ունենալ, որուն իր կինը վստահի թատրոն կամ հանդէսի մը երթալու համար:

(Շար. 20)

## Ի ՅԻՇԱՏԱԿ

*Տիկին Սրբուհի Ադապեկի յիշատակին Տիկին Գոհարեան եւ Փիէր Կարապետեան զնտանիքը 200 ֆրանք կը նուիրեն «Ցառաջ»ին։*

## ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

*ՀՄՄ – ԿԱՅԾ ՆՄՄ*

**ՃԱՇ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ**

*Շաբաթ, Յունիս 19*

*Իսի–լէ–Մուլինօ*

*P. A. C. I.*

*մասնակցութեամբ՝*

*ԱՏԻՄ ՀԱՄՄԱՆՏԵԱՆ-Ի*

*եւ իր*

*նուագախումբին*

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

## ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

*ԱՌԹԻԻ*

*եւ*

*Նախարածնակ*
*Սրբոց Կուսանացն*
*Հռիփսիմեանց եւ Գայիանեանց*

*կազմակերպութեամբ՝*
*Փարիզի*
*Ս. Յովհ. – Մկրտիչ Մայր Տաճարի*
*Տիկնանց Յանձնախումբին*

*Կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին*

*Առաջնորդարանի*
*«Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ*
15, rue Jean-Goujon— Paris 8e

*Մասնակցութիւն՝*
Participation aux frais

Pour tous renseignements appeler :
*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*
01 – 43 – 59 – 67 – 03
01 – 42 – 59 – 23 – 33
*կամ՝*
01 – 46 – 62 – 01 – 29

**EREVAN**

2 vols directs hebdomadaires
en Airbus A310
de la compagnie
ARMENIAN AIRLINES

Départ Paris 2690 F
Départ Province 2800 F

Renseignements & inscriptions :

SEVAN VOYAGES
48, Cours de la Liberté — 69003 LYON
Tél. : 04. 78. 60. 13. 66;
Fax : 04. 78. 60. 92. 26.

SABERATOURS
19, rue Saint-Roch — 75001 PARIS
Tél. : 01. 42. 96. 10. 10;
Fax : 01. 42. 96. 18. 77

## -ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-

### Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 13, Խ· օր Յինանց։ Տօն է Համբարձմանն Քրիստոսի Մանուկներու հաղորդութեան օր *Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։ Կը պատարագէ՝*

*ԱԻԵՏԻՍ Ա. ՔՀՆԱ. ՊԱԼԸԳԵԱՆ*

*Կը հրաւիրուին բոլոր «Քրիստոնէական դաստիարակութեան» միջոցաւ Հաղորդութեան պատրաստուած մեր մանուկներն ու դպրոցներու աշակերտները մասնակցիլ պատարագին եւ Հաղորդուիլ։*

*Այս հեռեւոդութեամբ, այսօրուան պատարագը՝ դպիրներու կողքին՝ պիտի երգեն Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի եւ Մխոբեայ դասընթացքներու աշակերտները։*

### Ս· ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

Հինգշաբթի Մայիս 13

*Խ· օր Յինանց· Համբարձումն Քրիստոսի։*

*Պատարագ ժամը 10–ին։*

*Այս օրը յատկացուած է նաեւ մանուկներու հաղորդութեան։*

### Ս· ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 13, տօն է Համբարձման։

*Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10–ին, պատարագ կը մատուցուի։*

*Օրուան պատարագը կը մատուցանէ՝*
*ԻՍԱՀԱԿ ՔՀՆԱ. ՀԷՔԻՄԵԱՆ*

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

### ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

***5-րդ հանահանդէս***

*Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կեդրոնական վարչութեան ծրագրած Հայ համալսարանականներու 5–րդ համախմբումը տեղի կ'ունենայ՝*

ՅՈՒԼԻՍ 17–ԷՆ – ՕԳՈՍՏՈՍ 1

*Պէյրութի Համազգայինի Ն. Փալանճեան ճեմարանին մէջ։*

*Նորակազմ համախմբումը առաջին չորս տարիներուն եկաւ փաստելու, որ աշխարհասփիւռ Հայ ուսանողութիւնը պատեհ առիթը երբեք չի փախցըներ ու հաճոյքով կուգայ համախմբուիլ մէկ յարկի տակ, այս հայրերոյր միջավայրին մէջ դաստիարակչական եւ ընկերային անփոխարինելի մթնոլորտ մը միասնաբար ապրելու նպատակով։*

*Համախմբումի կեդրոնական յանձնախումբը կը հրաւիրէ նաեւ ձեզ որ այս տարի դուք ալ օգտուիք այս առիթէն եւ ապրիք ձեր ուսանողական կեանքի ամենայիշատակելի պահերէն մէկը։*

*Տեղեկութեանց համար դիմել՝*
*ՍԻԼՎԱ ԹՆՃՈՒԿԵԱՆ*
*Հեռաձայն. –*
00 _ 44 17 – 16 _ 03 – 84 – 52
E-mail : Stenjouk@aol.com
*ՀՈՒՐԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ*
*Հեռաձայն. –*
01 – 42 – 29 – 10 – 24
E-mail : navasti@wanadoo.fr.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ
1918 ՄԱՅԻՍ 28
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

## ՃԱՇ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*
*Հ.Յ.Դ. «Զաւարեան» խումբին*
Ֆրանսահայ կապոյտ խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրէնկիւեան"
*մասնաճիւղին*
*մասնակցութեամբ՝*
ՓՕԼ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ-Ի
*եւ Անի նուագախումբին*
Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ
Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX
Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

# LEGS et DONATIONS au Fonds Arménien de France
# Les enfants d'Arménie sont vos enfants. Donnez-leur un meilleur avenir

*Le Fonds Arménien de France est une institution de bienfaisance qui regroupe l'ensemble des composantes de notre communauté, notamment les églises arméniennes Apostolique, Catholique et Évangélique. L'aide aux enfants d'Arménie et du Karabagh est au centre de son action humanitaire: construction d'écoles, création de cliniques (maternités, maladies infantiles,...), pensions mensuelles versées aux orphelins de la guerre, Bourses d'études, etc. Ces enfants souffrent des difficultés nées du blocus économique, des conséquences de la guerre et du séisme. Votre don peut améliorer sensiblement leurs conditions de vie. Ensemble, nous pouvons leur donner un meilleur avenir.*

***Inscrivez votre nom sur la terre d'Arménie.***

### Particuliers
**récupérez 50 % de vos dons au Fonds Arménien de France**



Notre statut fiscal permet à un particulier de déduire de ses impôts 50 % des dons effectués au profit du Fonds au cours d'une année fiscale, dans la limite de 6 % de ses revenus nets imposables. Ainsi une famille disposant de 100 000 F de revenus nets annuels imposables peut déduire du montant de son impôt jusqu'à 3 000 F pour un don de 6 000 F sur présentation d'un reçu cerfa délivré par nos soins. On peut allier ainsi un avantage fiscal non négligeable à une action de solidarité envers l'Arménie qui a tant besoin de se sentir soutenue en ces moments cruciaux pour son avenir.

### Les legs et donations
**au Fonds Arménien de France sont exempts de droits**

Vous pouvez aussi désigner le Fonds Arménien de France comme bénéficiaire de dons ou de legs qui sont alors exonérés en totalité des droits de mutation.

Il peut s'agir d'argent, mais aussi de biens mobiliers et immobiliers.

Le legs est inclus dans un testament et ne prend effet qu'après le décès de son auteur, alors que la donation est faite du vivant de ce dernier. Dans ces deux cas, il est recommandé de se faire conseiller et assister par votre notaire.

Pour toute demande d'informations complémentaires relatives à ces questions, vous pouvez contacter le Fonds Arménien de France, qui peut également, si vous le souhaitez, vous mettre en relation avec son notaire.

### Entreprises
**déduisez de vos bénéfices la totalité de vos dons**

Les entreprises peuvent également profiter de déductions fiscales. Elles peuvent déduire de leurs bénéfices la totalité de la somme donnée, jusqu'à 3,25 pour mille de leur chiffre d'affaires.

On ne saurait donc trop encourager les chefs d'entreprises qui génèrent des bénéfices à faire preuve de générosité sans que cela grève les résultats de leurs sociétés.

Ainsi une entreprise qui génère un chiffre d'affaires de 5 Millions de Francs peut déduire de ses bénéfices imposables quelque 16 000 F de don à une association de bienfaisance comme la nôtre.

**Tél. : 01 43 68 29 29 - Fax : 01 43 68 15 91**
**Fonds Arménien de France,**
**BP 12 - 75660 Paris - Cedex 14**

## *50 F par mois, 100 F par mois, plus...*
## *Il n'y a pas de petits dons*



La constance est le plus précieux des dons et le prélèvement mensuel en est la meilleure expression. Cette forme de don convient particulièrement aux salariés et pensionnés et elle assure au Fonds des ressources stables qui lui permettent de mieux planifier ses actions. Souscrivez et faites souscrire un prélèvement mensuel selon vos moyens. Vous serez sûr, ainsi de ne pas oublier ceux qui ont tant besoin de nous.

**Merci de renvoyer dès aujourd'hui l'autorisation ci-dessous accompagnée d'un RIB, RIP ou RICE**

**AUTORISATION DE PRELEVEMENT** l'autorise l'établissement teneur de mon compte à effectuer sur ce dernier, si sa situation le permet, tous les prélèvements ordonnés par le Fonds Arménien de France. En cas de litige sur un prélèvement, je pourrai en faire suspendre l'exécution, par simple demande à l'établissement teneur de mon compte. Je réglerai directement le différent avec le Fonds Arménien de France.

NUMERO NATIONAL D'EMETTEUR
406553

**DEMANDE DE PRELEVEMENT.**
Valable jusqu'à annulation de ma part
Je soussigné(e) .....
.....
autorise le Fonds Arménien de France à prélever le 10 de chaque mois sur mon compte la somme de :
☐ 50 F (cinquante francs)
☐ 100 F (cent francs)
☐ 150 F (cent cinquante francs)
☐ 200 F (deux cents francs)
☐ ... F ( ..... francs)
*(Cochez la case de votre choix)*
Date :
Signature :

**Nom, prénom et adresse du débiteur**

N° DE TELEPHONE (facultatif) :

DESIGNATION DU COMPTE A DEBITER
Code Banque | Code Guichet | Numéro de compte | Clé RIB

**Date**

**Signature**

**Nom et adresse du créancier :**
**FONDS ARMENIEN DE FRANCE**
**B.P. 12, 75 660 PARIS CEDEX 14**

**Nom et adresse de l'établissement teneur du compte à débiter (votre banque, ou CCP, ou Caisse d'Epargne)**

Prière de renvoyer les deux parties de cet imprimé au créancier sans les séparer, en y joignant obligatoirement un relevé d'identité bancaire (RIB), postal (RIP) ou de Caisse d'Epargne (RICE).

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍ 9
DIMANCHE 9 MAI
1999
LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

## ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թիւ 248

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·637 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.637

# ՃԵՐՄԱԿ ԱՐԾԻՒՆԵՐ(*) ԿԱՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ՕՇԱԿԱՆԻ

ԳՐԵՑ՝
ԳՐԻԳՈՐ ՊՐԼՏԵԱՆ

Լուծարկել որոշ հաստատումներ բանաստեղծութեան մասին, ուրիշներ ծայրագոյնս ընդարձակել՝ ահա այստեղ փորձուածը։ Յ. Օշականի առթիւ, անոր գրութեան մէջ, բայց Օշական այստեղ իրրեւ պատրուակ։ Կամ չեղանգը։ Աւելի մօտաւոր թուականներ, պեղումներ, անդրադարձ։

Ըսեմ սկիզբէն, որ հարցը չի վերաբերիր Օշականի իսկ բանաստեղծութեան, նկատի ունիմ այն քանի մը ոտանաւորները, որոնք հրատարակուած են հոս-հոն եւ որոնք բանաստեղծի սիրոյս մը չեն կրնար տալ զանոնք գրողին։

### ՏԱԳՆԱՊ

Բայց ամէնէն առաջ արդեօք Օշականի մօտ բանաստեղծութեան հարց մը գոյութիւն ունի՞ եւ եթէ այո, ապա ի՞նչ ձեւի տակ կամ ի՞նչ տարազումով։

Մայրիներու շուբիւն տակին մէջ, Օշականի հարցազրոյցի ամբողջ մէկ մասը կը խորագրէ "բանաստեղծական տաղնապ"։ Կը նշէ որ «բանաստեղծութեան տաղնապ մը գոյութիւն չունի։ Պակասողը բանաստեղծն է»(ՄՇՏ 46)։ Սակայն դիտել կու տայ, որ վերջին տասնամեակին (քանական թուականներուն) «ոչ մէկ բանաստեղծի եղանակ բաւական եղաւ ինքզինք հարկադրելու, նչան մըն է ատիկա, թէ ամէն ինչ ծփուն է տակաւին չրջանին մէջ...» (ՄՇՏ 47)։

Աւելի ուշ, Պատերազմէն եաք, երբ Վահան Թէքէեանի առիթով "իրաւ բանաստեղծութեան յղացքին" կը նուիրէ ամբողջ հատոր մը, բանաստեղծութեան տաղնապը հաստատուած է. «Անչուշտ սա լքումները (ճակատի), բռնադիր հանդամանքները ու ասոնց հետեւանք կիրքերը, ուրացումները, աղմուկը չեն յօրիներ մեր Սփիւռքին բանաստեղծական տաղնապը, որ, մեզմէ դուրս, արեւմտեան մեծ գրականութիւններուն ալ ներքոյ հաստատելի իրողութիւն է» (ՍՓ 44)։ Իսկ հատորը ունի իրրեւ առաջադրութիւն այդ տաղնապէն խօսիլը. «Բայց իմ առաջադրութիւնն է իրաւ բանաստեղծութեան տաղնապէ մը խօսիլ» (ՍՓ 44)։ Եթէ քանանական թուականներուն բանաստեղծութեան տաղնապ մը չկար, այլ կը պակսէր միայն բանաստեղծը, քանի տարի ետք՝ տաղնապը կայ, եւ Օշական զայն կը կոչէ "անբանաստեղծութիւն"։

Ինչո՞ւ բանաստեղծութեան տաղնապ մը կը յայտնուի 1945-ին եւ չկար 1932-ին։

Օշական դիտէ եւ կը յիշատակէ բոլոր այն հատորները որոնք հրատարակուած են այդ ժամանակաշրջանին, Սփիւռքի բոլոր կողմերը եւ որոնք ի հարկէ կը տասակին "անձնականութեան պակասէն" (թերեւս ալ խնդրոյ առարկայ կը դարձնեն բանաստեղծութեան օշականեան համակարգը)(1)։ Անոնցմէ կը բացակայի բանաստեղծութիւնը։ Ասոր համար Օշական կը յայտարարէ, թէ «Սփիւռքը իր գոյացութիւնը չէ ազատագրած իր քերթողական դիւաններուն մէջ։ Ու ճիշդ այս անբաւականութենէն կը մեկնի ներքին փորձին թելադիր պարագան» (ՍՓ 19)։ Ձգայնութեան ու ազատագրումի խնդրին պիտի անդրադառնամ աւելի անդին։ Նչեմ պարզապէս որ հատորը կը դրուի հրատարակուած քերթողական դիւաններուն անբաւականութենէն, որ ուրիշ մէկ անունն է անբանաստեղծութեան։ Սփիւռքի բանաստեղծները անկարող են եղած զգայնութիւն մը պարտադրելու. չեմ մանրամասներ, քանի որ այդ զգայնութիւնը որքան ալ իրենց անձինն է, նոյնքան ալ իրենց սերունդինն է, կամ ըլլալու է։ Որով այդ բանաստեղծութիւնը թերի, անբաւական ոտանաւոր մըն է։ Օշականի գրչին տակ յաճախ կը հանդիպինք այս "անբանաստեղծ Սփիւռք" դարձուածքին (ՍՓ 33) կամ "Սփիւռքը կը մնայ առանց բանաստեղծութեան" (նոյն)։ Այս հաստատումները ոչ այնքան իրրեւ արհամարհանք ու հերքում կը դրուին, որքան կը թարգմանեն "բարատոքսալ իրականութիւն" մը, ինչպէս կ'ըսէ, այսինքն՝ բանաստեղծական տաղնապ մը։

Գրական տաղնապ մը որեւէ տեղ, որեւէ մշակոյթի մէջ կընայ յայտնուիլ։ Բայց թէ նման բանաստեղծական տաղնապի մը առկեւ կը դնուի Օշական 1945-ին բոլորովին զուրկ չէ խմաստէ, քանի որ տաղնապ մը յաճախ կը զարդանայ իրրեւ գոյութիւն ունեցող արժէքներու, տեսութիւններու, կիրարկումներու կամ գաղափարախօսութեան խնդրականացում, որովհետեւ ատոնք բոլորը անկարող են այլեւս բանելու։ Տաղնապ մը փոփոխութեան մը սկիզբն է, որ գոյ կացութիւն մը, դրութիւն մը, համակարգ մը կը խախտէ, կը բեկէ, կը հատէ, դէպի լաւը, վատը կամ պարզապէս տարբերը։ Արդ՝ Սփիւռքը, Օշականի համար, "ծիւրախոտ հայ հոգիին" (ՍՓ 29), անոր նըսեմաստանը, ծայրագոյն կացութիւն մըն է, այն չափով որ այդ հոգիին չիջումը կը դուժէ (մնալու համար Օշականի մտածումի տրամաբանութեան մէջ)։ Ոչ միայն հայ հոգիին փնտռտուքը կամ գիւտը տեղի չունենար հոն, այլ անոր սպառումը, ինչ որ ուրիչ տեղ կոչած եմ "հայկական հիւանդութիւնը", աղէտով յատկանշուած։ Որով տաղնապը յետեղեռնեան բանաստեղծութեան մը կարելիութեան կը վերաբերի, ոչ բանաստեղծի պակասի։

### ԻՐԱՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Այդ տաղնապին առթիւ կը դրուի "իրաւ բանաստեղծութեան" յղացքը, որ հիմնայղացք մըն է, կարելի է ըսել, անչրջանցելի, եւ ուրեմն՝ ճակատում պարտադրող։ Ըսեմ սկիզբէն, որ անիկա միեւնոյն տեսն նման է համայաբառի, կը բանի իրրեւ անտարազելի բայց ուժեղ համաստեղութիւն մը, որուն չուրջ կը բեւեռուին երկրորդական մոթիֆներ, ենթայղացքներ։ Միակ զժուարութիւնը այն է որ այս բոլորը կազմած մը կը թեւայդեղնի, որ չունենալով դուռ փիլիսոփայական ընթածիր կը դրաւէ սակայն անոր տեղը, ունի անոր դոյնը, պիտի ըսէի։

Այս յղացքը Օշականի մօտ չի յայտնուիր 1945-ին, անիկա ներկայ է արդէն առաջին հատորներուն Համապատկերի մէջ։ Որոշ հանգիստութիւններ ունի Արբայ Հանրի Պրէմոնի "անխառն բանաստեղծութիւն" յղացքին հետ, որ քանանական թուականներուն երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ Ֆրանսայի մէջ(2)։ Օշական բազմաթիւ անգամ կը խօսի "անխառն բանաստեղծութեան" մասին եւ կը յիշատակէ Պրէմոնի տեսութիւնը։ Պրէմոնի մօտ անխառն բանաստեղծութիւնը կը վերաբերի ineffableին, որ կարելի է թարգմանել իրրեւ անճառելի, անպատում, բայց ոչ անասելի. անխառն բանաստեղծութիւնը զուտ բանաստեղծութիւնն է, բանաստեղծութեան խտութիւնը իրրեւ այդ, որուն մէջէն երբ նկարագրութիւն, պաղափար, արտայայտութիւն, բոլոր ամփոփելի ու թարգմանելի բաները կը հանուին, ինչ մը սակայն կը չարունակէ մեզ հմայել։ Այդ մնացորդն է որ Պրէմոն կը կոչէ անճառելի։ Իրրեւ այդ անճառելին կը մօտեցնէ բանաստեղծական փորձառութիւնը միստիք փորձառութեան(3), որ երկու պարագաներուն ալ "saisie, possession du réel" մըն է (իրականի ըմբռնում, գրաւում)։ Ինչ որ կարեւոր է այն ալ անճառելիին, այսինքն՝ անխառն բանաստեղծութեան հակաբնապաչտ եզրն է, հաստարակաց անխառն բանաստեղծութեան եւ իրաւ բանաստեղծութեան (տեսութիւններուն)։

Ի՞նչ է իրաւ բանաստեղծութիւնը։

Նչմարենք անմիջապէս որ հարցումը ի՞նչ է բանաստեղծութիւնը չէ։ Օշական բազմիցս կը դրէ, որ բանաստեղծութեան "իսկութիւնը" անվերածելի է։ Երբեմն զայն կը կոչէ "անորակելի", երբեմն՝ "անվերածելի"։ Որով իրաւ բանաստեղծութիւնն ալ "խորհրդաւոր հարց" մըն է (ՍՓ 18), բայց կը թուի աւելի մատչելի։ Հատորին մէջ Օշական չի փորձուիր սահմանում մը ընել, բայց մատծողական յաջորդական այլացումներով, տարբերակումներով կը չանայ հարցը պարզել։ Ասիկա չի դադրիր ռազմավարութիւն մը ըլլալէ, որ կը խուսափի "բանաստեղծութեան" նման թէ՛ բացայայտ, թէ ալ տարտամ յղացք մը, իսկութիւն մը որոշադրելէ։ Շեշտը բանաստեղծութենէն տարուած է իրաւին վրայ, անկասկած, բայց որոշիչին բացայայտումը որոշ չափով բացայայտումն է նաեւ որոշելիին։

Նախ՝ իրաւութիւնը իրականութիւնը չէ (ՍՓ 62), այն իմաստով որ անիկա դուրսը գտնուղ բան մը ըլլար։ Անիկա որակ մըն է, կարելի է մտածել, ըլլալու կերպ մը, երբ ինչ որ է է ինքզինք։ Իրաւը ճշմարտութեան կերպն է։ Ասոր համար Օշականի իրաւ բանաստեղծութեան յղացքը, հակապղատոնական արարքով մը, բանաստեղծութիւնը կը գետեղէ ճշմարտութեան կալուածին մէջ։ Պղատոն բանաստեղծութիւնը կը դնէ ճշմարտութեան ընկալումէն հեռու, որովհետեւ բանաստեղծութիւնը անկարող է "տրամախոհական մտածումին", որ յատուկ է փիլիսոփայութեան։ Օշականի մօտ, իրաւութիւնը քերթուածով եկող ներքին ապրումն է իրրեւ անխառն, զուտ ապրում։

Նայինք թէ ինչպէ՞ս ասիկա կը դրուի իր էջերուն մէջ եւ կը կազմէ ի վերջոյ բանաստեղծական ըմբռնում մը։

«Իրաւութիւնը ոչ տաղանդ է, ոչ կըրթութիւն, ոչ գրական հանգանակ։ Զայն սահմանել դրեթէ համազօր է բանաստեղծութիւնը սահմանելուն, այսինքն՝ ընել բան մը որ չի դիմանար։ Հոգի՞ն, ներքին ձայնե՞րը, Աստո՞ւածը, Երկինքի մուրա՞ղը։ Արուեստի սարսո՞ւռը։ ...Իրաւութիւնը չի չափուիր կշիռներովը կեանքի ու արուեստի մէջ։ Իրաւութիւնը հարազատութիւն, ընդօրինակութիւն, duplicate չի նշանակեր արուեստին մէջ... Մենք իրաւ կ'ըլլանք ոչ՝ միշտ մեր խելքովը, բայց իրաւին մէջն ենք գրեթէ միշտ մեր զգացումներովը»(ՀԲ 250-251)։

Սահմանումի մը վտանգին առաջքն առնելէ ետք Օշական ինք անմիջապէս իրաւութիւնը կը հակադրէ ընդօրինակութեան, որ կը բնորոշէ իրրեւ duplicate։ Իրաւը բանի մը երկրորդը չէ, անոր արտագրութիւնը, ընդօրինակութիւնը, անոր պատկերը, ըսենք։ Իրաւը բնատիպն է, այստեղ՝ ապրումը։ Եւ այդ բնատիպին գալը արուեստին մէջ կը կոչուի հարազատութիւնը։ Ուրիշ տեղ Օշական "իրաւութեան զգայարանքը" կ'որոշադրէ իրրեւ անկեղծութիւն, ներշնչեալութիւն, հարազատութիւն, այսինքն՝ բնատիպին արուելը իրրեւ այդ։ «...Իրաւին նկարագիրն է ապրիլ... Իրաւութիւնը զգայութեան ուրիշ կերպարանք մը չէ, այլ այդ իրաւութիւնը իր ամէնէն անկողոպտելի արժանիքներուն մէջ։ Իմաստասէրները գիտակցութիւն բառը կը գործածեն հոգեկան զանազան վիճակները մէկ գումարի տակ տեսնել երբ ուզեն։ Իմ իրաւութիւնն ալ նման տարողութիւն մը ունի սա տողերուն վրայ։ ...Անկեղծութիւնը, ներշնչեալութիւնը... հարազատութիւնը...» (ՀԲ 370)։ Իրաւութիւնը համազգրական հանգամանք ունի, ինչպէս կը տեսնուի, որ կը վերաբերի ապրումի արուելուն իրրեւ ապրում։

Ըսի վերը, ապրումը իրրեւ ապրում, անմիջական կերպով, ըսել կ'ուզեմ, առանց միջնորդի, առանց միջանկեալ տարրի. «Բանաստեղծական ապրումը, իրաւ յուզումը, հաղորդական է առանց միջնորդի, որ հոս կը թարգմանուի տաղաչափութիւն եւ իր կշիռը» (ՍՓ 16)։ Ինչպէս կը տեսնուի իրաւութիւնը ճշդրտութեան մէջ չէ որով ապրումը կը փոխանցուի տաղաչափական տարրերով։ Որոշ չափով ինքնագոյ, էութեան պատկանող "յատկանիշ" մըն է, աւելի ճիշդ՝ ապրումին ըլլալու կերպը, առանձին, ինքնին, առանց որեւէ յաւելեալ բարդումի։ Իսկ ինչ որ "բանաստեղծական ապրում" կը կոչուի հոս բանաստեղծութեան չնորհիւ փոխանցուած ապրումն է. անիկա բանաստեղծին ապրածն է եւ ոչ անշուշտ անոր կողմէ յօրինուած ապրումը(4)։ Տարբերութիւնը զուցէ չատ նրբին է, բայց չի դադրիր էական ըլլալէ։ Որովհետեւ Օշականի համար ապրումը, յուզումը չի ստեղծուիր, կայ։ Պարզապէս գայն պէտք է փոխադրել այնպէս ինչպէս որ կայ։ Մէկ բան յստակ է. այս այնպէս ինչպէսը նմանութեան եզր մը կը կրէ իր մէջ, ճիշդ այդ duplicateին սկիզբը թելադրող եզր մը, որովհետեւ այն որ է հարկ է ըլլայ ինչ որ է, ինքզինք ըլլայ ու մնայ, ինքն իրենին հաւասարութեան մը մէջ։

### ՅՈՒԶՈՒՄ

Ինչպէս կը տեսնուի արդէն իրաւը, բանաստեղծութեան մէջ, կամ իրաւ բանաստեղծութիւնը ուղղակիօրէն առընչուած է ապրումին, յուզումին կամ զգայութեան հետ։ Ի հարկէ այս երեք յղացքները նոյն բանը չեն նշանակեր, սակայն Օշականի գրութեան մօտ, անոնք են որոնք կը յայտնուին փոխ ի փոխ եւ կը բանին նոյն կերպով։ Ճգացային բոյլը որուն կ'ակնարկէի վերը այստեղ աւելի կը սերտանայ։

Այսպէս՝ «...իրաւ բանաստեղծութեան յղացքը, ըսել կ'ուզեմ ինքնիրմով պայմանաւոր յուզումը որով կը համակուինք երբ կու գանք արուեստի իրաւ գործի մը հետ» (ՀԲ 230-231)։ Ուրիշ տեղ. «Բանաստեղծ մը բառերու բանուոր մը ըլլալէ առաջ, բիւրաւոր ապրումներու կծիկ մըն է» (ՀԲ 201)։ Կամ «Արուեստագէտներուն զգայութեանց բաժակը, որմէ վերափոխում մըն է–տուէք բառին իսկական միստիքը– արուեստի ամէն հարազատ գործ» (ՄՇՏ 97)։ Վերջապէս՝ ամէնէն վճռական հաստատումը, որ այնքան նըմանն է սահմանումի մը. «Բայց բանաստեղծութի՞ւնը։ Աչխինքն այն պարզուկ սարսո՞ւռը, յո՞յզը, խռո՞վքը որոնք ի-

(Շար·ը Գ· էջ)

(*) Այս գրութիւնը հատուած մըն է այն գեկուցումէն որ ներկայացուեցաւ Յ· Օշականի նուիրուած գիտաժողովին, կազմակերպուած Մ· Նշանեանի կողմէ, Գրանմպիա Համալսարանի մէջ, Նիւ-Եորք, 1998 Նոյ· 22-ին։



# ԲԱԼԵՏՈՍՔՈՓ

## արուեստաւէրի մը օրագրեմ

ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Հոկտեմբեր 9, 1998
Սրահ ժան–Ռընուար / Պուա–Գոլոմպ

## ՍՈՒԶԱՆՆԱ ՄԻԼՏՈՆԵԱՆ

*Տաւիղին երգացանկը գրեթէ իր ամբողջութեանը մէջ աչխատած ու նուագած է համերգներու ընթացքին: Միլտոնեան աւելցուցած է նաեւ անոր գանազան գործիքներու համար յօրինուած երկերու մշակումն ու յարմարութիւնները տաւիղին: Ընդօծին տաղանդի մը արգասիքը: Համերգը կը սկսի Փեռքեթթիի մէկ սոնաթով, որուն կը հետեւին Հայր Անթոնիօ Սոլէրի ու Պաթէօ Ալպէնիկի նոյն քնքոյշ ոճով գրուած երկու գործերը: Տաննութերորդ դարու այս պատուոյ գոհարներէն ետք, Միլտոնեան Տէպլիւսիի Արապեսքները կու տայ, տաւիղին բոլոր կարելիութիւններովը համեմուած, նման դիւրաւոուլ ալիքներու զուգաճախութեան մը:*

*Յայտագրի երկրորդ մասին մէջ աւելի ժամանակակից երաժշտութեան տեղ տրուած է, ինչպէս Փրոքոֆիեւի Նախերգանքը եւ մանաւանդ Սալզէտոյի հին թեմայի մը վրայ յօրինած փոփոխական տարբերակները: Տաւիղի երգացանկին ամենաժուարին գործերէն մին, որ Միլտոնեանի մատներուն յանձնուած, հեչտօրէն կը հոսի: Գեղեցիկ յայտագիր· գեղեցիկ մեկնաբանութիւն:*

*Մեր լաւագոյն տաւղահարուհին՝ Սուզաննա Միլտոնեան:*

*Համերգին կազմակերպութիւնը կը պարտինք Թիրայր Տէնտենեանի որ կը հարստացնէ մեզ ճաշակաւոր խիտ յայտագիրներով ու կը հրաւիրէ ծանօթ մեկնաբաններ Պուա–Գոմոմպի իր հիւրընկալ, լատեռողական լաւ պայմաններով օժտուած սրահը:*

Հոկտեմբեր 10, 1998
Թէաթր տէ Շաճ գ'էլիզէ

## ՓԻԷՐ ԱԼԷՔԻՆՍՔԻ

*Նկարիչ, փորագրիչ, գրող, երաժիշտ, այս յառաջամուխ Պելժիացին, Փարիզ հաստատուած կանուխէն, ունի իր գործերը աչխարհի զանազան թանգարաններուն մէջ: Որով չափով ազդուած է չինական գծագրական արուեստէն: Ամպարտն է որ գիտէ յարմարիլ աչխատանքի բոլոր կերպերուն: Ընդհանրապէս թուղթերու վրայ աչխատելով գիտէ նաեւ ճարտարօրէն խեչակել: Արտայայտիչ է գիծը ու խմաստալից պատգամը: Գոպրա չարժումին առաջին խումբին մաս կազմած էր ի Պրիւսէլ: Բաժնուելով յետոյ սակայն հիմնած է տեսակարար խմբաւորումներ:*

*Գոյներու համադրութեան մէջ գերիչխող ճաշակով, աչխոյժ գծագրիչ Ալէչինսքիի արդի նկարչութեան յառաջապահներէն կրնայ նկատուիլ, մնալով դասական: Թէօ ոը Փօմի իր այս հարիւրի չուրջ ստեղծագործութիւններով ապացոյցը կը բերէ իր անուրանալի տաղանդին:*

Հոկտեմբեր 11, 1998
Թէաթր տէ Շաճ գ'էլիզէ

## ԱՆԱՀՈՓԻ ՄՈՒԹԷՐ ԼԱՄՊԷՐ ՕՐԳԻՄ

*Քիչերու տրուած է համարձակութիւնը, Պէթհովէնի չութակ–դաշնակի համար գրուած բոլոր սոնաթները տալ հեռուզական երեք համերգներու ընթացքին եւ օրինակելի մեկնաբանութիւններ հրամցնել:*

*Երկու բախտակիցներ այս գոյգը՝ Լամպէր Օրգիս ու իր սերունդին ամենավստահելի զգայուն չութակահարուհին՝ Ան–Սոֆի Մութէր:*

*Ամբողջական գործին՝ տասը սոնաթներուն՝ բոլոր մանրամասնութիւնները բազմիցս փորձուած կ'երեւին՝ յանգելու այս ինքնօրինակ մեկնաբանութեան բիւրեղացած ձեւին: Հաստատուն է խարիսխը, խիստ արհեստավարժ մերձեցումով մը զօրացած: Պէթհովէն կ'ունկնդրենք: Օրգիս աւելի ընկերացողի դերին մէջ կը մնայ երբեմն, մինչ այս սոնաթները համասար չափով պահանջը ունին մեկին մեկնաբանութեան որպէսզի մնան դուրգընթացօրէն հոգեզմայլ: Մութէր ունէր սակայն երաժշտական յագեցնող ազօթք մը՝ ուղղուած մեղի զոր խանդակաթոռ ընդունեցաւ սրահը: Այս չարքը յիչեցուց Յունիր 1962–ի բերկրալի օրերը, ուր Օյսթրախ – Օպորին զերիչխան գոյգը տուած էր նոյն այս տասը սոնաթները:*

*Երազային անմոռանալի դիչերներ որոնց սկզբնական աչխատանքի ժամերը կ'անցնէին մեր տան մէջ, առաւօտեան կանուխ ժամերուն:*

*Բանտարկուած կը մնան մտքիս խորը այդ աչխատանքի ժամերը այսօր, ուր կը փորձէի հասկնալ իրաւ մեկնաբանութեան գաղտնիքը, կարենալ զանազանելու համար մեծը՝ լաւէն, արուեստագէտը՝ արհեստավարժէն:*

Մարտ 10, 1999
Արդի Արուեստի Թանգարան

## ՄԱՐՔ ՌՈԹՔՈ

*Փարիզ պահած է տակաւին իր քաշողական յարաբերական ուժը արուեստի դեմնին վրայ, առանց սակայն իր գերիչխան դիրքին, որ կորսնցուցած է ի չահ Նիւ–Եորքի: Նոյնն է կացութիւնը երաժշտութեան ու նորաձեւութեան գետիններէն ալ ներս: Նիւ–Եորք, Լոնտոն, Միլանօ խլած են Լոյս Քաղաքին դափնեպսակները վերջին երեսուն տարիներու ընթացքին: Պատասխանատուութեան մեծ բաժին կ'իյնայ անչուչտ իրերայաջորդ անհեթեթ Մշակոյթի նախարարներու վրան քաղաքականութեան ու տուած որոչումներուն որոնք անհեռատես գտնուած են, անտարբեր մնալով Ֆրանսական դպրոցին, նախընտրելով ամերիկեանը: Ֆրանսա չէ գիտցած օգտագործել իր հանճարեղ կողմը:*

*Բարեբախտաբար Փարիզ կը մնայ միչտ այն հրաչակերտ քաղաքը կենսունակ, ուր կրնաս տակաւին նոյն օրուան ընթացքին աչխարհահռչակ երեք նկարիչներու յետահայեաց ցուցահանդէսներ տեսնել ու դժուարանալ գիշերուան համերգ ընտրելու:*

*Այսօր կրցայ տեսնել Մարք Ռոթքոյի ցուցահանդէսը:*

*Մարկուս Ռոթքովիչ՝ գաղթական ռուս–հրեայ Ամերիկացին քառասնամեայ էր երբ ինքզինքը ծանօթացուց աչխարհին: Ասպարէզը չատ երկար կեանք չունեցաւ: Աներկիւղ անճնասպան եղաւ: Ունէր բարձր կոչումը արուեստագէտին: Սոյն ցուցահանդէսը կու տայ ամբողջական գործին կարեւոր չրջանները: Իրապաչտ, դերիրապաչտ, վերացական: Առաջին երկուքը երազել չեն տար: Ճչդրիտ նըրբանցքներ գուչէ՝ գտնելու իր ուղին: Եւ ի՜նչ լոյս, ինչ լիութիւն բուն վերացական չրջանի գործերուն մէջ: Թափանցիկ նիւթերով լուսաւորուած զուգահեռ մրմռացող կարմիրներով՝ նարինջներ կը պարտկին, ու կապոյտներ: Վերջին տարիներուն գորչ, մոխրագոյն սեւեր: Սեւերէն եաք կը մարի սէրը: Աւարտած է իր գործը: Արուեստագէտը մարդկութեան մաս չի կազմեր այլեւս. քնաչրջիկ մըն է որ կը գառնայ վերջին կտաւներուն չուրջ: Ժամանակն է մարելու ճրագը, դնելու վերջակէտը: Կ'երթայ միանալ Ճեքսըն Փոլոքնեւու, Արչիլ Կորքինեւու, Նիքալա տը Սթաելներու փաղանգին: Անմահ գժբախտ նկարիչներու չարքին: Անճնասպան:*

*Փարիզի թանգարանները հարուստ չեն անոնց արտայայտիչ նչանակալից գործերով, բայց Լոյս Քաղաքը կը քաչէ զանոնք իրեն, հարուստ նկարահանդէսներով: Անոնցմէ մին, ահա՛· կեանքէն զրժգոհ Մարք Ռոթքոյի զգլխիչ ցուցահանդէսը:*

Մարտ 22, 1999
Սալի ուիկինդրուքիւմ

## ՅԱՄԱՒԿ ՍԻՒՐՄՔԼԷԱՆ

*Ալպերթօ Ճինաստերայի գործերուն յատկացուցած իր վերջին խոտացեալ սալը լսեցի, ո՛չ միայն հիացիկ հետաքրքրութեամբ, այլ նաեւ զարմանքով: Հարց տալով ինքզինքիս թէ ան ինչո՞ւ ցարդ չէ վայելած աչխարհահռչակ դաչնակահարուհիի վարկ: Բայց այսօր, հայ առաջնակարգ ուեէ մենակատար կրնա՞յ իր իսկ տաղանդովը գինուած միայն դասնալ աչխարհահռչակ: Տարակուսելի է: Քանի չունի որմնուած պատ մը, որուն կարենար կռթնիլ: Ներկայ լատեռողական աչխարհը այնպիսի հրամայական պահանջքներ ունի որ արուեստագէտը, մանաւանդ երիտասարդ, չի կրնար յաղթահարել մինակը, իր դէմ ցցուղ բազմատեսակ խոչընդոտներուն: Արուեստի տեսակարար չուկան կատաղի չլատիչ ուժեր կը ցցէ իր դիմաց: Ունի՞նք բաւարար փորձառութիւնը աչխարհահռչակ արուեստագէտ հասցնելու: Ունինք արժէքներ: Նիւթը ծանրակչիռ ըլլալով չատ աւելի լայն հորիզոնով աստւգաբանութեան կարօտ... վերադառնանք ունկնդրութեան: Առաջին վայրկեաններէն իսկ Սիւրմէլեան Ճինաստերայի հետ հոգեկան կապ մը կը ստեղծէ: Բարախուն է իր կշռաւոր հուրը: Ունի նաեւ լրիւ համակայողութիւնը դործին: Արհեստավարժ գիտութեամբ մը յայտնի զայն փոխանցելու վերին կարողութիւնը ունի մեկնաբանը:*

*Արդի երաժշտութեան ազգային եւ անդներ ու կշռոյթներ ներմուծած այս Պուէնոս–Այրէս ծնած լատին երգահանը ունի գեղեցիկ երգացանկ՝ դաչնակի համար յօրինուած: Արտայայտիչ լատինդոյն երիներանդ փունջը գիտցած է կազմել անոնցմով Սիւրմէլեան, տալով ի մասնաւորի Առաջին սոնաթը, Գրէյոյ պարերը, Ռոնտոն ու տասներկու գեղեցիկ նախերգանքները: Ամբողջական տեսիլք մը կու գայ ժամուան մը ընթացքին:*

*Յաամիկ Սիւրմէլեան գորովագին կը մօտենայ այս գործերէն ոմանց երբ անոնք տխուր ու սրտայոյզ մեղեդիներ են, իսկ փոթորկոտ ու հրաբուն՝ երբ կշռոյթը հոգենորոգ պարերու կ'առաջնորդէ:*

*Թաթը կայ այս սալին մէջ իրաւ մեկնաբանի խմորին որ գիտէ ճաշակով ու գիտակցութեամբ ընտրել եւ հեչտօրէն կատարել, տալով գործին էական բնոյթը:*

Ապրիլ 10, 1999
Կալըրի Ֆրամոն

## ԺՈՐԺ ՌՈՒՀՆԷՐ

*Չի՞ կորսուիր վայրկեանի մադնիսականութիւնը որ պիտի ունենայիր եթէ առաջին անգամ տեսնէիր լրացած նկարը: Անակնկալ յուզումդ: Ռոհնէրի հետ մեր առօրեայ հանդիպումները, որոչ չափով զրկեցին զիս անակնկալներէ երբ մէկտեղել չանացի չուրջ քառասուն նկարներ՝ կազմելու համար ցուցահանդէս մը որ պիտի ցոյց տար իր յետ–խորանարդապաչտ ու գերիրապաչտ մօտեցումները իրերուն: Անճնական անկիւնով: Ըսաւ՝ գաղափարը ունեցար քանի, դո՛ւն ընտրէ նկարները: Անճնական հաւաքածոներէ առնուած ու իր մօտ գտնուած գործերով է կազմուած ցուցահանդէսը: Ցոյց կու տայ որոչապէս թէ ութառունվեց տարու այս երիտասարդը ունի իր ուրոյն ոճը: Դպրոցի մարդ չէ: Իրերը կը մնան միչտ կերպընկալ գիծերով միջոցին մէջ, ստեղծել տալով անոնց բանաստեղծական մթնոլորտը: Ու որոչապէս խմաստալից խորք, միանգամայն հրապուրիչ ձեւափոխումներ որոնել տալով դիտողին մտքին: Հո՛ղ է որ իր գերիրապաչտ ոգին ի յայտ կու գայ: Առաւելապէս հզօր կը մնան կատոյցն ու հրնչականութիւնը գոյներուն:*

*Երբ սալտը, կեռաս, խնձոր, այլ կարմիրը, դեղին, կանաչները ծպտուած պըտուղներ, կը հայթայթեն նախաչարժիչ ուժը այն երեւակայական խաղին որ մեր ինքնաթելադրութեամբ ծնունդ կ'առնէ: Եւ որուն տեսքը, նկարչութիւն կ'անուանենք: Եթէ արուեստագէտը կարող է ցոյց տալ ամենապարզ առարկան նոր տարազով, նոր լոյսով, իր իսկ միջոցին մէջ յղացած, ինքնուրոյն է ոճը: Նման ժորժ Ռոհնէրի, որուն այս «Երկրային բերքը» հերկողին չիտուն տարուան աչխատանքը կը ներկայացնէ:*

Ապրիլ 6, 1999
Մայեոլ Թանգարան

## ՎԻԵՅՐԱ ՏԱ ՍԻԼՎԱ

*Հատուածաճեւ ցուցահանդէս՝ ծաղկաքաղը ընդհանուր դործին: Ճարտարապետական հիւսուածք: Շարժուն տարածութեան մը հեռահայեացքով կրցեր է նկարիչը կերպաւորել բանաստեղծական ոճով: Կարծէք քնարական քերթուած մը կերտել ուզած ըլլար այս գոյացն նկարչուհին, հասկնալի մնալով ընդհանուր մարդկութեան: Ցուցահանդէսը ունի չլացուցիչ տարածոյթը անոր գործին որ կ'երկարի ամբողջ իր կեանքին ընթացքին: Տմոյն գոյներ՝ ապնուական ոճ մը վերացական: Սոյն զպրոցին լատինդոյն ներկայացուցիչներէն մին: Կրկին տեսնել:*

Ապրիլ 13, 1999
Սուրբ Մեսրոպ Մշակ. կեդրոն

## ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ՝ ՉԵՒ ԵՒ ԳՈՅՆ

*Հ. Յարութիւն Պզտիկեան մէկտեղած է իր վերջին տարիներու նկարչական հունձքը այդ անզուգական տատրոգելիներուն հովանիին ներքեւ: Փնտռելով՝ ներդաշնակութիւնը անոնցմով ստեղծած իր մտային ու յուզական երեւակայական աչխարհին: Նկարահանդէսին կու տայ այդ ենթախորագիրը ստոյգիկեան յանձնառութեամբ: «Գոյներու եւ Չեւերու Ներդաչնակութիւն»:*

*Իրաւացի է իր մօտեցման սահմաններուն մէջ:*

*Որքա՜ն յատկանչական է գիծը՝ իբրեւ նկարիչի մը հոգեկան յուզումը արտայայտող բնորոչիչ ազդակ: Գիծը որ գիտէ չնչել, գիծը որ գիտէ սուրալ թէ տեղքայլ ընել, ստեղծելով միջոցին մէջ տարածքային ուժեր:*

*Զգացնելով յուզման աստիճանը արուեստագէտին: Փոխանցիկ յուզում: Գոյնը կրնայ խարել, գիծը՝ երբեք: Եւ որքան զգալի ու զանազան է կշռոյթը յատուկ, արուեստագէտէ արուեստագէտ փոփոխուն, այդ գիծերու տարուբերող հոսանքին:*

*Կարուկ, ոլորուն թէ արտայայտիչ:*

*Հ. Պզտիկեան ունի գոյներու հարուստ թաթ. ներկի պնակը բազմերանգ, գործածելով իսկ իր պատրաստած նախնութիւնները, –ինչպէս ապակեփոչին խառնուած ջրաներկ թէ խէժ– կու տան երկնային փայլ մը իր վերացական նկարներուն:*

*Հոն կան յատկանչական հրաբխային կարմիրներ: Կապոյտ ու կանաչներ կարեն միջոցը, կը սլանան դէպի անջրպետային տարածութիւններ· գիծեր խաչաձեւ՝ գիրկընդխառն կ'ողջագուրուին: Երաժշտական ներդաչնակութեան մը յանդելով: Ջմռռնալ· վարդապետը պըրդ՝ սիրահար է երաժշտութեան: Այո՛, կայ հո՛ն, իր լատադոյն գործերուն մէջ երրորդութեան մը բոյրը գուչէ· երեւակայութեան պտուղ լուսաւոր այս թըղթիկներուն վրայ Չեւեր ու Գոյներ կը կերպաւորուին ճգտելով երաժշտական աչխարհին յատուկ ներդաչնակութեան:*

Ապրիլ 18, 1999
Կրաճ Փայէ

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

*Բուրգե՛ր ... բուրգերու չրջանը: Չի կայսրութիւնը որ կ'երկարի աւելի քան*

# ՁԵՐՄԱԿ ԱՐԾԻՒՆԵՐ ԿԱՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ՕՇԱԿԱՆԻ

(Շար. Ա. Էջէն)

բաւ քերթուածէ մը մեզի կ'անցնին անվրէպ» (ՍՓ 12)։ Կարելի է մտածել, որ Օշական նկատի ունի ոչ թէ բանաստեղծութիւնը այլ անկէ բխող, ընթերցողի անցնող յուզումը։ Բայց ինչպէս դիւրին է նկատել, յուզումը, ապրումը, զգայնութիւնը կը զանուին բանաստեղծութեան մեկնակէտին, անոր յօրինումին, ինչպէս անոր ընթերցումին մէջ։

Յուզական տարրը կը կազմէ բանաստեղծութեան "նախանիւթը"։ Զարեանի աթիւ կը գրէ. «...չենք կրնար կառուցանել գործ մը, ուրկէ պակսի բանաստեղծական ամէն գործի հիմնական նախանիւթը–զգայնութիւնը» (ՄԾՏ 42)։ Ուրիշ տեղ նոյնպէս ըսուած է. «Բայց այդ ապրումը նախանիւթ մըն է որուն արուած կերպարանքն է որ կ'ապահովէ քերթուածին ճակատագիրը» (ՍՓ 36–37)։ Ապրում, յուզում, զգայնութիւն նախանիւթն են բանաստեղծութեան, կը կազմեն զոնէ անոր կէսը (ՀԲ 131)։ Այդ յուզական տարրն է որ կը հիմնէ անձէ անձ տարբերութիւնը։ Իրրև նախանիւթ՝ տարբեր չէ խորքէն կամ ինչ որ խորք կը կոչ Օշական, երբ կը խօսի անձնականութենէ. «Անձնականութիւնը, խորքի առորոգելի, երբ փոխադրուի ձեւին կատարելի, կը պայմանէ ինքնատպութիւնը որ արուեստի յատկանիշներէն մէկն է գործ» (ՀԲ 395)։ Ցաւակ է անշուշտ որ յուզումը, մարմնական ազդմունք, իրաւ բանաստեղծութեան խորքը կը կազմէ, անոր "հոգին", անոր "անորակելի խմկութիւնը" (ՀՂ 295)։ Ապրումը, յուզումը, զգայնութիւնը տեսակ մը նախապայմաններ են, իրաւ բանաստեղծութեան պայմանները, զոր կարելի գործնող յատակ ու դեմին (առանք փոխաբերութիւններ չեն ի հարկէ, այլ օշականեան թելադրանքներ)։ Անոր համար "բանաստեղծական ապրումը" չի հակադրուիր անբանաստեղծական ապրումին, այլ պարզապէս կը նշէ բանաստեղծութեան էութեան յուզական նկարագիրը։

Իսկ յուզումը ինք, կիրքին ու պերկութեան գիտակցութեան հոսանուտին նըման, շարժուն, հեղուկ, ներքին բնոյթ մը ունի։ «Բանաստեղծութիւն ըսուածը –իրաւը– սրբազան ծորումի ակունքէ մը կու գայ» (ՀԲ 242)։ Այդ անհակնապի սրբազան ծորումը ըմբռնելի կը դառնայ անմիջապէս երբ նկատի առնենք միւս հաստատումը, որ Օշականի գրականութեան սահմանումին մէկ տարրերակն է. «Բանաստեղծութիւնը արեան երեւոյթ է...» (ՀԲ 139)։ Օշական սապէս կը տարբերակ օրինակ Պէչիկթաշլեանի տաղերը. «Ինծի կու գայ թէ Մկրտիչ Պէչիկթաշլեանի մօտ ջերմութիւնը գրական առաքինութիւն մը ըլլալէ առաջ, մարմնական հոսում մըն է։ Ինք այդ մարմինին հիւծումովը, սպառումովն էր որ անունդ տուաւ իր տաղերուն» (ՀԲ 247)։ Այստեղ դէմ յանդիման կը գտնուինք այլեւս բանաստեղծութեան "բնախօսական" ըմբռնումի մը, որ Օշական կը տարածէ քերթուածի մը դրեթէ բոլոր մասերուն։ Կը թելադրէ որ "կը դրենք մեր թոքերով" (ՀԲ 407–408) եւ Դուբեանի առթիւ կը գրէ. «Քերթուածներուն մէջ նախադասութիւնը օրգանիք տարր մըն է։ Անոր կազմը կը հետաքրքրէ քանի մը զգայարանք միեւնոյն առեն։ Անոր մարմինը կը հպատակի բնախօսական մեծ երեւոյթի մը... [նօթով] որ սերտ կապ ունի հեղինակին բնախօսական կազմին հետ։ Ըստ այդ վարդապետութեան կարծքն է որ կ'որոշադրէ նախադասութիւնը, զայն ընելով լայն կամ կծկուն, թաւալուն կամ կտրատուն» (ՀԲ 303)։ Բանաստեղծութեան այս բնախօսաբիւնը յետին, ծայրագոյն կէտն է, յատակը, հիմը, պիտի ըսէի, Օշականի ըմբռնումին։

Իական է այս յուզական տարրին ներքին ըլլալը, անոր "հնթակայական" հանդամանքը։ Ասոր համար է որ Օշական յաճախ չեչոը կը դնէ ապրումին վրայ։ Հարց է թէ կարելի՞ է յուզական տարրը նկատել սոսկապէս հնթակայական վիճակ, ապրումը՝ դուրսէն կտրուած ներքին, կրաւորական իրողութիւն, զուտ առացում, որ եսը կը բանտարկէ ինքն իր մէջ, տեսակ մը ներհայեցութեան մը չըլլանակին։ Ժ.–Փ. Սարթր օրինակ յուզումը կը նկատէ "որոշ եղանակ մը աշխարհը ընկալելու... ուր յուզուած հնթական եւ յուզող առարկան միացած են իրարու անառարքաղդրելի համադրութեամբ մը"(5)։ Յուզումը մեզ մեզմէ դուրս առնող չարժումն է, թոքերէն, կոկորդէն բացուող դէպի աշխարհ ու դէպի խօսք։ Յուզումը առանց իր դիմման կէտին, որ մարդուն ու աշխարհին հանդիման կէտն է, առանց այդ խօսքին, յուզում կոչուածը ոչինչ ունի ստեղծարար։ Անառարկայ յուզում մը նման է պարապ զգայնութեան մը, զուրկ այլի մը վրայ բացուելու հնարաւորութենէն։

ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ

Հարցը այն է, եթէ հարց է, որ Օշական այդ յուզական տարրը, զգայնութիւնը, արիւնը կը հակադրէ խմացականին, մտքին, ուղեղին, չատ դասական, դրեթէ աւանդական հակադրութեամբ մը, որուն հետաղնաց հետեւանքները այնքան անտպասելի պիտի ըլլան։ Արդարեւ՝ վերը նչուած հատուածէն մը մէջ Օշական կ'ըսէ արդէն. «Օշական կը յատկնի զբեելը ազատագրած ըլլալ մտքէն, զայն դատանելով արեան, ուրեմն կեանքի երեւոյթ» (ՀԲ 355)։ Այս հատուածը կը կրկնուի բանաստեղծութեան կալուածին մէջ. «Բանաստեղծութիւնը արեան երեւոյթ է ու չի սնանիր ուղեղով» (ՀԲ 139)։ Հակաբանապաշտ այս հատուածները կը բանին քիչ մը ամէն տեղ, մինչեւ արուեստի իսկ ընդհանրութեան մէջ. «Արուեստը կը սնանի մեր անդիտակից եսէն» (ՀԿ 120)։ Դասական սիրտ/միտք հակադրութենէն, մինչեւ Ֆրէօտեան անդիտակից/գիտակից հակադրութիւնը, այսինքն՝ երբեմն իրարու այնքան ներհակ վարդապետութեանց էամասեր յառաջ կը քաչուին Օշականի կողմէ, բանաձեւելու համար հակաբանապաշտ ըմբռնում մը, որ իր յանդման մէջ հասարակաց է Ժ.–Ի. դարու քանի մը բանաստեղծական ձգտումներու. խորհրդապաշտութիւն, անխառն բանաստեղծութիւն, դերիրապաշտութիւն, հեթանոսութիւն, տպաւորապաշտութիւն, եւայլն, որոնք բոլորն ալ, վիպապաշտութեան արժանի ժառանգորդներ, միտքը, խմացականութիւնը կ'արտաքսեն բանաստեղծութենէն, արուեստէն ընդհանրապէս։

Եթէ տեսականօրէն մտածում/զգայնութիւն հակադրութիւնը կարելի է, գործնականօրէն անհնար է, եւ խորքին մէջ, տեսութիւնը ուրիշ բան չըներ եթէ ոչ փորձել "խորհրդաւոր հարցը" պարզել միակողմանի կերպով, բանաստեղծութիւնը զերծելով մտքէն, խմացականութեան ծիրէն։ Օշական դիտէ որ քերթուած մը այս կամ այն չափով մտածումի խառ մը կը կրէ իր մէջ։ Այդ խառը անչուշտ ցանկալի չէ. «Քերթուածի մը մէջ մտածումը յաճախ տկարութեան աղդակ մըն է ու զայն տարօրէն արագ հինցնող արատ մը (tare), եթէ կը ներուի այսպէս ըսել...» (ՀԲ 237 նօթ)։ Նման հատուածներ կը վկատան Օշականի գրութեան մէջ եւ թէ կը կազմեն հակաբանապաշտ ռազմավարութեան ամէնէն զօրաւոր հատուածներէն մէկը։

Միայն թէ Օշական գրական փաստերուն առջեւ կը ջանայ եթէ ոչ մեղմել, առնուազն աւելի սրել, նրբացնել դիտողութիւնը։ Այսպէս կը խօսի "խմացական զգայութիւններ"ու մասին(ՀՋ 163), ինչ որ բաւական զարմանալի բաղադրութիւն մըն է խմացականութեան եւ զգայութեան, տեսակ մը խմացականացուած զգայութեան մը յղուող, որ կարելի կը դարձնէ "խմացական քերթողութեան յըղացքը" կամ "խմացական բարեխառնութիւն" (ՀՋ 143)։ Նման քերթողութեան ներկայացուցիչն է ի հարկէ Վահան Թէքէեան, որուն առթիւ Օշական կը գրէ. «Մտածումը չենք դատապարտեր ինքն իր մէջ։ Վահան Թէքէեանի ոտանաւորին մէջ անոր տեղն ու տարողութիւնը անփոխարինելի կը մնան։ Պէտք չէ չփոթել մտածումը այն ապրումէն բխող փորձառութեան, դառնութեան պատգամին հետ, որ անհատական տառապանքը կը բիւրեղացնէ ու կեանքը արագ կարուած խորհրդանիշներու (symbole) կը վերածէ» (ՀԲ 237 նօթ)։ Ըստ երեւոյթին՝ ապրումէն բխող փորձառութեան եւ մտածումին միջեւ կը յայտնուին խորհրդանիշները՝ անհատական ապրումի իւոտացումներ, բիւրեղացումներ։

Զգացում ու մտածում եզերու հաստեցման այս փորձը խորհրդանշանին չըննորհիւ չահեկան է անոր համար որ Օշական կ'անդրադառնայ երկփեղկումին առթած դժուարութիւններուն։ Նօթի մը մէջ կը գրէ. «Առանձին հարց է մտածում–զգացում քիչ մը բռնի դրուած տարրաղը վերլուծել, անկէ ստանալու համար երբեմն հակաստական արդիւնքներ, քանի որ տարաղը հասկնալու կեցուածքը կը ճշդէ եզրերուն տարողութիւնը։ Իրողութիւն է անշուշտ որ քնարական տարրը գրեթէ միշտ միս մինակը պիտի բաւէ բանաստեղծի մը գործը անուցանելու եւ պաշտպանելու անոր վարկը։ Ցիշեցէք սա տողերուն հետ ամէնէն չքեղ բանաստեղծները։ Գրեթէ պիտի զարմանաք որ չըլլաք մտածած այդ մարդոց խմացական արտակարգ աղքատութեան, բոպիկութեան։ Բայց մի՛ վրդովիք։ Այդ մարդերը խմաստասէրներ չէին ծնած։ Ու ճշմարիտ բանաստեղծութիւնը Հոմերոսէն մինչեւ Լամարթին՝ ուրիշ ազբիւր չունեցաւ զինքը լիացնող։ Այս մասին ամէն առարկութիւն կը մնայ անընդունելի։ Եւ սակայն մեր օրերուն քերթուած մը կըրնա՞յ արհամարհել խմաստը թելադրելու բաղձանքը, խմաստի բարեխառնութիւն մը։ Չեմ երթար առաջ, խմաստ բառին տակ դրուածին մանաւորումը ուրանալու, թէեւ առոր իրաւունքը կու տան ինծի դարձեալ բազմահնչակ հատորներ։ Մի վախնաք դժուարակնճիռ լեզուէն որով գրուած են Մաղթունիս, Բճուճիս..., բոլորն ալ եկեղեցական բանաստեղծի մը մտածում–զգացումները կերպաղրող դիւանները։ Ու ըսէք ինծի թէ ա՞յդ է մտածում յղացքին հետ զուգորդ խմացական գործնէութիւնը» (ՀԵ 163 նօթ)։ Առանցքած օրինակը (Ալիչան) բանաւիճային նկարագիր մը ունի եւ իրրեւ այդ չօգներ հարցի պարզաբանումին։ Ընդհակառակն կը սահմանափակէ զայն։ Անոր վրայ յենել մտածողական քերթողութիւն մը հերքելու համար ի հարկէ անբաւական է։

Պահպանելով հանդերձ մտածում–զգայում հակադրութիւնը փաստօրէն Օշական "խմաստի բարեխառնութիւն" կոչուած տարրին տեղ մը կը ձգէ բանաստեղծութեան մէջ, մանաւանդ մեր օրերուն համար, ինչպէս կ'ըսէ։ Ինչո՞ւ։

Օշական դիտէ, որ միայն զգայութեամբ պայմանաւոր քերթողութիւն մը թէական է, բանաստեղծութեան ժամանակակից պատմութիւնը հակառակին փաստերը բերած ըլլալով։ Իսկ ի՞նչ է այս խմաստը, մտածումը, որ անդադար կ'ոդեկոչուի եւ անդադար կը մերժուի։ Առանք մարդկային խմացական արտադրութիւններն են անշուշտ, վերին, եսքէն եկող, մտքէն, ուղեղային գործունէութենէն տարրեր, որոնք արեան ու կեանքին հետ կապ չունին։ Այդ խմաստն ու մտածումը քերթուածի մը մէջ տարաղած, բանաձեւուած դաղափարներ են։ Ցաւակ է որ Օշական կը չփոթէ կամ, ինչ որ ոչինչ կը փոխէ հարցէն, կամովին կը նոյնացնէ դաղափար ու մտածում, այսինքն՝ յղացքի փչրանքները, խմաստի տարազները եւ զանոնք արտադրող բարդ գործնդութիւնը։ Օշականի համար քերթուածի մը ստեղծումը, դրելը առ հասարակ, ենթխմացական գործ մըն է, կամքի, մտքի, ճիգի հակակշռէն զերծ ու դուրս։ Ասոր համար գրելը կիրքի վերածող տարազը ամէնէն առաջ կոչ մըն է դէպի բնազդը, դէպի ներքին մղումնները, դէպի մարմինը՝ բայց հասկցուած իրրեւ զուտ կենսական կենսաբանական միջոց։

Մտածումը իրրեւ բանաստեղծութեան մը կառուցման չեմաներու ազբիւր, մտածումը իրրեւ զգայականին մէջ բանող, պատկերով գործող, բայց երբեք չբանաձեւուող ստեղծման ուժ, մտածումը խորհրդանշանականացման ու պատկերացման սկզբունք, որ բնական ու վարժուի կրթանքով մը կը տանձնէ լեզուական ու յուզական տարրերը, զանոնք կը կերպաղրէ, նման մտածում փաստօրէն անբերեւակայելի բան մըն է։ Օշականի համար։

## Վ. ԵՐԱՓՈԽՈՒՄ

Ի՞նչ է ստեղծումը, բանաստեղծումը, ըսենք Օշականի համար։ Հարցումը չեմ կրնար չղնել, քանի որ յուզումի տարրը սոսկական նախանիւթ մըն է, այսինքն՝ "քերթուածի մը կէսը"։ Ինչպէ՞ս է որ այդ նախանիւթը կը դառնայ քերթուած։ Աչխատանք մը կայ, որ յուզական տարրը կը դարձնէ բանաստեղծական ապրում։ Այդ աչխատանքը Օշականի մօտ կը տարազուի քանի մը տարբեր բառերով. փոխադրութիւն, ազատագրում, փոխակերպում, վեհացում։ Գրուած է. «Ապրումը նախանիւթ մըն է որուն տրբուած կերպարանքն է որ կ'ապատագրէ քերթուածին ճակատագիրը» (ՍՓ 36–37)։ Ուրիշ տեղ. «Արուեստագէտ մը չատ բաներ ըլլալէ առաջ, նախաւորօրէն զգայնութիւն մըն է... Բայց նոյն ատեն դրածաւոր մը՝ այդ զգայութիւնը աւելի կամ նուազ յաջողակ կերպարանքներու ձեւին տակ բանող մը, արտաքնացնող մը... Անշուշտ մենք մեր զգայութեան նախատարերքը կը բերենք մեր արեան անդունդներէն, մեր գերեզմաններէն։ Ու նոյնքան իրաւ նոյն ատեն՝ միւս հատատումը որով մենք մեր չուրջէն կը ճանրենք փչրանքները դիտութեան որ մեզ կ'ընէ ընդունակ մեր հաւաքումները մարմնաւորելու...» (ՀԲ 377)։ Բանաստեղծը, Թէքէեան, "դասական զգայութիւնները" կը փոխակերպէ "խմացական վայելքի", ինչպէս կը ձգտի «Սէրը տապանքէ ծնած տրամութիւնները վեր-

●▶

---

Ապրիլ 20, 1999
Փոմփիտու Մշակ. կեդրոն

## ՏԷՅՎԻՏ ՀՈՒԴՆԷՅ

Աչխարհահռչակ այս անգլիացի նկարիչը՝ հաստատուած Գալիֆորնիա, իր բնազդին անձնատուր իրապաշտ նկարիչ մըն է։ Լաւատես աչք մը որ բնութիւնը կը դիտէ ու յետոյ երեւակայական պարտէզներ կը կարգաւորէ։ Աչքին հեշտ հիւսուածքներ՝ թելադրիչ ուժգնութեամբ։ Սկզբնական չըլլանի գործերը կը ձգեն տպաւորութիւնը փորձառու պարտիզպանի, որ իր հերկած նկարչական արտին մէջ կը պտակի անվհատ։ Լաւատեսը՝ իր ծննդավայրին տեսարանները։ Անգլիական գիւղը իր դոլորչի ճամբաներով։ Բնութիւնը՝ զեղատեսիլ բնապաշտ մօտեցումով։ Վարանոտ ու երկդիմի դուրս կ'ելլես սակայն ցուցահանդէսին ուր իր վերջին գործերը յատկացուած «Մեծ Բանիոն»ին զոր կը կոչէ «աչխարհի մեծագոյն ծակը» դժուար հասկընալի են իրենց արեան կարմիրներով եւ զուրկ՝ ներչնչումէ, մնալով կարծես թերի նկարչական փորձեր։ Մինչ փակուած բազմաթիւ տուներամած թղթիկներով չինել յաջողած իր «առարկանեները», խաղին սահմանը անցնելով կը ներկայանան իրրեւ հրապուրիչ արուեստի չահեկան գործեր։

Մեր ժամանակներուն պատուղն է այս խորհիլ տուող նկարչութիւնը իր հակասական երեսակներով՝ ուր արուեստագէտին յայտնի տաղանդը սքօղուած է երբեմն իր ուսումնական տենչանքով։

Փարիզ, Ապրիլ 20

---

հինգ դարերու ընթացքին՝ Ն. Ք. 2700 – 2200, տեսակ մը ոսկեդարի հանդամանք ունի։ Ինքնին ուսանդավէպ մը։

Շրջան որ կ'ընթանայ Քէոփս, Քեֆրէն, Միքերինոս թէ հետեւակից արքայացեղ իշխանիկներով, որոնց համար է որ կառուցուեր են այս հսկայ բուրգերը, պարմանահրաչ պերեզմանները, դեղեցիկ ձեռական աչխատութիւններով ու ակնախիղ հարստութիւններով լեցուն։ Այս կարգի յետահայեաց ցուցահանդէս մը չենք ցարդ ունեցած, որ կը սկսի Փարիզի, չարունակուելու համար Նիւ–Եորք։

Նշանակալից են զանազան արտայայտիչ ոճերը, երբեմն չատ պարզ, երբեմն տարապայման հետեւով օգուտն կրօնական թէ քաղաքական մթնոլորտին։ Համընթաց՝ տիրող արքային նկարագրին ու ճաշակին։ Զարդարիչ առարկաներու չինութեան մէջ առաւելապէս։

Ցուցահանդէսը՝ հրաչալիօրէն կազմակերպուած ու ցուցադրուած, երբ կ'անցնի ընթացքին մէկ ոճէն միւսը, որոշ չափով կ'ընդգծէ նաեւ չրջանին եղիպտական պատմութիւնը։ Ու եթէ կը ճանչնանք քանի մը անուններ պատմական, ծանօթ՝ իրենց քաջագործութիւններով, կ'աւելնան անոնց քանի մը նորեր։ Շատ աւելի սփոփարար է սակայն վերանալ այս աննման հրաչալիքներուն հիացումովը յագեցած։

Ու ի՞նչպէս հանդուրժել այն գաղափարին թէ չորս հազար տարիներ առաջ ալ արուեստը նորարար ոգիով էր գործնուած։

Պեղելով ու պեղելով անոր ճապուկ ուղին, վանելով ընդմիչտ յառաջացման առասպելը արուեստին մէջ՝ մեծահաւատ։

մայնել (բառը գործածուած է հոգեվերլուծական առումով)" (ՀՋ 162–163): Երբ յուզական տարրը չազատագրուիր, ինչպէս Տաղարանի պարագան է, այն առեն կ'ըլլայ "խորքի կորանք" (ՍՓ նօթ):

Ապրումները առարկայել, ազատագրել, անդրափոխել(6), կերպարանք տալ, մարմնաւորել, փոխակերպել, վսեմացրնել, բոլորն ալ կը կոչեն արարք մը, որ կրնանք դեռեզել "վերափոխում"ի կալուածին մէջ, պահպանելով հանդերձ անոնց յատկութիւնները. «Արուեստագէտներուն ղեկավարութեանց բժիշկը, որմէ վերափոխում մըն է –ուշէք բառին իսկական միտքը– արուեստի ամէն հարազատ գործ» (ՄԾՏ 97): Վերափոխումին միտք, կրօնական նշանակութիւնը (assomption) ուղղակի յղում մըն է Մարիամի երկինք բարձրացումի խորհուրդին կամ առասպելին(7):

Այս չատ ընդհանուր սրոշադրումին մէջ կարելի է երկու փուլ նկատի ունենալ, որոնք կապ չունին վերափոխումին միտք եւ վսեմացումին սեռային դունաւորումին հետ: Ստեղծումի արարքը մէկ կողմէ՝ մարմնաւորում է, կերպարանքի տուչութիւն, միւս կողմէ՝ անդրափոխում, փոխակերպում, վերափոխում, յուզումի տարրին հոգէն (սեռէն, արիւնէն) վեր բարձրացում–սրբագացում: Անկարելի է չնշմարել, որ մարմնի խնդիր մը կայ, աւելի ճիշդ՝ տարրի մը խնդիրը: Ցուզումը կը մարմնաւորուի, կը կերպարուի, որովհետեւ չունի մարմին ու կերպարանք: Ներքին է: Նոյն առեն յուզումը կը տարուի վեր, դուրս, դէպի լոյսն ու փայլի փառաւորումը, կը փոխադրուի մարմնովին, ինչպէս Աստուածածինը վերափոխման ընթացքին: Այս վերափոխման սխեման պարագայական նշանակութիւն մը չունի անշուշտ, քանի որ անով կը թեւադրուի բանաստեղծական արարքին էապէս վսեմ ու սրբազան նկարագիրը:

Այդ վերը, դուրսը բառերու, պատկերի, փոխաբերութեանց աշխարհն է: Բանաստեղծ մը բառերու բանուոր մըն ալ է, կ'ըսէր Օշական: Այդ բառերն են, այսինքն՝ լեզուն, լեզուէն անդին տաղաչափական կազմածը որ կերպարանք մը կու տան յուզումին: Անոնք են միջնորդները: Վերին, բարձրին տեղը ուրիշ տեղ մը չէ քան լեզուն, "հաղորդակցութեան միջոցը": Հո՛ն, ձեւերը կան: Հո՛ն, անոնք կը դառնան չօչափելի, լսելի, տեսանելի, ըմբռնելի: Արդ՝ այդ վերը, դուրսը արտաքինն է· Օշական արդէն բանաստեղծը կը նկատէր "արտաքնացնող" մը (ՀԺ 377): Այդ արտ–ը, այդ արտաքինը արտահանումին ու արտայայտութեան բացն է: Օշականի համակարգը կը բանի արտայայտութեան կայուածին մէջ եւ ի վերջոյ բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ, իրեն համար, եթէ ոչ արտայայտութիւնը յուզական տարրին:

## ՄՈՒՐԱՄԱՆ

Ամբողջ հարցը այս կերպաւորման մէջ յուզումին վերափոխումն է կամ արտաքնացումը առանց տուժի, առանց կորուստի: Հո՛ն, է որ քերթուածի մը ճակատագիրը կ'որոշուի, պիտի ըսէի, ըստ Օշականի: Երբ խորքը կը պակսի, երբ յուզումը չի յայտնուիր, կը սիրապետեն լեզուական տարրերը: Ուրեմն՝ բանաստեղծական հարցը գլխաւորաբար լեզուականին նուազումն է ի նպաստ յուզականին: Ճիշդ է որ Օշական կ'ընդունի կրուստի բաժին մը, որ կը նկատէ "պարտադրեալ դժբախտութիւն" մը (ՀՍ 4): Բայց այդ կորուստը նուազագոյնն ըլլալու է: Ցաճախ չէ՞ որ Օշական յուզումի կերպադրման աշխատանքը, բանիլը, արտայայտութեան, ճեւի տուչութեան աշխատանք մը կը նկատէ, սակայն այդ աշխատանքը պարտի բառերը զանգել, զերծել, վերաձեւել, պիտի ըսէի, որով ձեւը, կերպը կը զերծուի իր արտաքնութենէն. կը դադրի ձեւ ու բառ ըլլալէ: Վերափոխուող մարմինը պարտի ըլլալ փայլ ու փառք, սպառի լոյսին մէջ:

Ի՞նչ են բառերը: Բառային մակարդակին մէջ կը ներառնեմ ի հարկէ տաղաչափութիւնը, պատկերը, բանաձարձումները, լեզուական բոլոր իրողութիւնները: Նայած տեսանկիւնին, Օշականին կեցուածքը բառին ու լեզուականին հանդէպ զրեթէ միշտ ժխտական է: Բառերը մեռեալ տարրեր են, մոխիր են, անոտիք, բարբառի չորիւն: Արտաքին, ոչ–էական բաներ: Միւս կողմէ, բանաստեղծը ան է որ կը կենդանագործէ այդ մեռեալ տարրը: Այսպէս, Սայմթ Նովա կը պատգամէ, որ "Բառերը տապանաքարեր են"(ՀԿ 89): Աւելի անդին՝ «Բայց բառերը ինքնագըլուխ ապրումներ չեն: Անոնք մարդու մը դէչին տակ, անոր մտքին, ներքին իրականութեան կերպարանքներէն անխուսափելի վկայութիւններ են» (ՀԿ 104): Հակասութիւն գոչելէ առաջ, անդրադառնալու է միայն անոնց յատկարծային դրութեան, որ որեւէ մէկ միջնորդի դերութիւնն է· բառերը կը մասնակցին յուզումին, զայն կը փոխադրեն, կը մարմնաւորեն, բայց յուզումը չեն: Մէկն են եւ դուրսը, նոյն առեն: Ներքին իրականութիւնը կը կերպարանեն, այդ իրականութիւնը չկայ առանց իրենց, բայց այդ իրականութիւնը չեն: Այնէն բառ ապրումի, զգացումի, յուզումի, կրակի "նախատարեր" կը մթերէ (ՀԿ 25), բայց առնք չէ, այնպէս ինչպէս տապանաքարը մեռեալը չէ: Անոր իսկական օրինավճակն է ըլլալ առանց ըլլալու, յայտնաբերել ապրումը առանց յայտնաբերուելու, յուզել առանց յուզումն ըլլալու: Ուրիշ սահմանում չկայ թաւխանցկութեան, թերեւս ալ անդոյութեան:

Բառերու այս օրինավիճակը կարելի է փոխադրել քերթուածին ալ:

Օշական ինք արդէն կատարած է այս փոխադրութիւնը իր "Մահուան ծոցիկներ" խորագիրը կրող գրութեան մէջ, ուր··· քերթուած մը կ'առաջարկէ նորերուն: Կտորի ուարաին դրուած է· «Եւ անդնդէն / աղալ քերթուած մոխրամանին / մեր բառերուն: / Մոխիր է հոս քերթուած այս խեղճ / կէս դարէ վերջ / Զեզ պատմելու զոհը մթին / Փրթող սըրտին, պատռող սրտին»(8): Բառերը մոխրաման են, քերթուածն ալ՝ մոխիր, անշուշտ մնացորդ մը՝ անցած կրակէն: Ինչպէս համապատկերողը կը մանէ մեռելներու աշխարհին մէջ հոնկէ կեանք բերելու համար, այնպէս ալ, հակադրաբար, բանաստեղծը յուզումն ու կեանքը կ'անդրափոխէ մեռեալ բառերով, մոխրամաններով, կը յօրինէ տեսակ մը տապանաքարեր, առաւելագոյն պարագային յուշարձաններ:

Մխտիք վերափոխումէն եաք կը մնայ, ի հարկէ, մոխիրը:

## ԿԵՐՊԱԴՐՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Օշականի մօտ բանաստեղծութեան հարցը կը զետեղուի արտայայտչութեան համակարգին մէջ: Այո, քերթուած մը նըկարագրութիւն չէ իրեն համար, բայց արտայայտութիւնն է յուզումներու աշխարհին: Այդ աշխարհին անմիջնորդ, անմիջական հաղորդութիւնն է, որուն յօրինումին մէջ մտածումը քիչ բաժին ունի: Քերթուածը արեան հարց մըն էր, չէ՞:

Այսպէս խտացուած՝ հասկնալի է որ Օշականի բանաստեղծութեան ըմբռնումը կը հիմնուի բնախօսական խրամատին վրայ, որ կը բաժնէ զգացումը մտածումէն: Այս երկու գործօններուն միջեւ՝ ոչ մէկ զոդիչ կամուրջ: Անչահեկան չէ դիտել տալ, որ Օշական չի մօտենար, դուցէ չի կրնար, երեւակայութեան, այն գործօնին որ ըստ Բանթի, մարդկային խմացականութեան հիմնական մղիչ ուժն է: Ինչ որ կերպադրում կը կոչէ Օշական, ես պիտի մօտեցնեմ ոչ այնքան ձեւաւորումի արտաքին արարքին, որուն կը վերածէ ինք, որքան յուզական աշխարհի ինչպէս արտաքին աշխարհի (որ կը հայելանայ այդ յուզական աշխարհին մէջ) պատկերումին: Կերպադրումը (figuration) կը կազմէ երեւակայութեան կարողութիւնը ամէն բան բերելու պատկերի, կշռոյթի, ձեւի: Արդ՝ կերպադրումը երեւակայելու, երեւան բերելու, ամէն բան տեսանելի դարձնելու, անգոն գոյի բերելու, բաղդատելու, չրջագիծ մը տալու, դուրս յայտեցնելու եղրն է երեւակայութեան: Անոր չնորհիւ՝ տրուեալը կու գայ այլապէս, իբրեւ այլ: Այլապէս քան ինչպէս որ ան կը թուի թէ կայ: Որով կերպադրումն է որ հնարաւոր կը դարձնէ բան մը ուրիշի մը տեղ բերելը, փոխաբերութիւնը, անդրափոխումը, այլակերպումը:

Արտայայտութեան ծայրագոյն տագնապով մը բռնուած՝ Օշական յաճախ քերթուածը կը վերածէ իրականութեան դուտ արտադրութեան, իր իսկ կողմէ մերժուած duplicateին, Սիմանթոյի "ճերմակ արձիւներ" դարձուածքին մէջ անհեթեթութիւն տեսնելով(9): Ճերմակ արձիւները աւելի անհեթեթ չեն քան լուսաւոր մութն ու բոլոր հակաբանութիւնները: Միակ հարցը տեսողականին, յուզականին եւրն ու մէջ մտածողական գործողութեան հարցն է: Սիմանթոյի քերթուածը կ'իրացնէ՞ առիկա: Այլապէս՝ քերթուած մը չափել սովորական տեսողութեամբ, իրականի չափով, արդեօք չի՞ թարգմաններ հիմնական թիւրիմացութիւն մը:

Օշականի համակարգին մէջ մտածումը եթէ ոչ արտաքսուած է, առնուազն լուսանցքի մէջ նետուած է, իբրեւ տակրութեան նշան, զգայնութեան, բնազդին կամ յուզումին տրուած առանձնաչնորհեալ դիրքին պատճառով: (Իմացական քերթողութեան յղացքը կարկառան մըն է): Որով լեզուական ամբողջ տարածքը մէկ չարժումով կը վերածուի զուտ պարունակի, տեսակ մը պարապ ձեւի մը: Արդ՝ բանաստեղծութիւնը գործողութիւն մըն է, ոչ արտայայտութիւն մը: Գործողութիւն մը ուր կը բանի ոչ միայն յուզական տարրը, այլեւս մտածողական տարրը, երկուքն ալ արձակուած կերպաւորման ուժէն: Քերթուած մը անշուշտ զաղափարներու հանդէս մը չէ, ոչ ալ սակայն յոյզերու կամ հոգեկան վիճակներու: Քերթուած մը զգայական մէջ մտածման կերպադրում մըն է, ուր մտածումը առարկան չէ կերպադրումին իմաստին, նշանակութեան որպէս տարազում, այլ ձեւ ու պատկեր, կշռոյթ ու փոխաբերութիւն, ձայն ու կախարդանք արտադրող կազմած մըն է, որ կայ միայն իր արտադրածին մէջ: Այլապէս յատկանշական կը գտնեմ այն որ Օշական մէկ հատիկ նախադասութիւն իսկ չունի ոչ թէ չունէի, այլ կշռոյթի, ռիթմի մասին, այնքան էական քերթուածի մը "հոգիին" համար, եթէ այդ հոգին իսկ չէ:

Բանաստեղծութիւնը կը մտածէ պատկերով: Բանաստեղծութիւնը կը մտածէ կշռոյթով:

Որքան չենք հանդուրժեր զաղափարներու դրուագումը բանաստեղծօրէն, ինչպէս կ'ըսեն, նոյնքան չենք հանդուրժեր բանաստեղծութեան վերածումը զգայութիւններու արտայայտութեան:

Ի հարկէ ոչ ոք պիտի ուզէր, պիտի փորձուէր յուզումը արտաքսել քերթուածէն, որովհետեւ ոչինչ արտաքսելի է քերթուածէն: Բայց այդ յուզումը մտածել որ կայ ինքն իր մէջ, անկախ իսօքէն, անկախ բառէն ու կշռոյթէն, ահա թէականը: Օշական չի՞ գիտեր որ բանաստեղծական յուզումը երբեմն ձայնն է, կշռոյթն է, անսպիւտ տողն է, անյայտէն եկող բայց երկու, երեք բառի մէջ ամփոփուող խտութիւնն է, որուն եաին միայն կիրք ու տաքութիւնն է, որուն եաին միայն կիրք ու զգայնութիւն տեսնելը մարդկային միտքը, բանաստեղծական մտածումը վերածել է նախնական դեաինի մը: Դէպի նախնականը, հում առաղձը զայող ճգտումներն անդամ կը բխին բանաստեղծական մտածումէն:

Արտայայտչական համակարգը յուզականի առանձնաչնորհումով, տիրապետութեամբ, բանաստեղծական փորձառութեան մը բոլոր հարցերը կը չէզոքացընէ: Օշական տեղեակ է անշուշտ արդի բանաստեղծութեան մէկ ամբողջ հատուածին, որ ոչ չիզերու դրութիւն մը կը հետապնդէ, ոչ ալ հոգեկան բխում մը, այլ կը կատարէ բանաստեղծական փորձառութիւն մը: Օշական կը յիշէ Նեցչէն, Ռեմպոն, Վալերին, Ռընէ Կիլը, Կուրմոնը, Լաֆորկը: Կրնար ցանկը երկարել: Անոնք «Խառնուածքէ աւելի հետաքրքրութեան, նորոգման բռնաւոր ճըշմարիտ մը տակ ստեղծեցին իրենց ոտանաւորները, բարբարոս, ոչ–ուղղափառ, մթին, առնուազն դժուար, բայց որոնց բոլորին համար ալ արտայայտութեան տագնապը աժան ֆրազաբանութիւնը կամ քերականապիտութիւնը չէ մեր զրաբառոլ քերթողներուն··· Կրնան չսիրուիլ այդ քերթողները: Ոչ ոք պիտի համարձակի անոնց զլանալ արդար փառքը իրենց արկածախնդրութեան» (ՀՋ 143): Բացայայտ է անշուշտ, որ Օշականի համար արդի բանաստեղծութեան տագնապը արտայայտութեան տագնապ մըն է եւ ոչ բանաստեղծութիւնն իսկ այլապէս մտածելու խնդիր: Եւ ասոր համար՝ նոյնիսկ երբ այդ բանաստեղծներու առթիւ կը խօսի "քերթողական փորձառութեան (expérience poétique)" մասին (ՀՋ 142), Օշական նման փորձառութիւն նկատի չառներ Ինտրայի, Վարուժանի, Թէքէեանի գրքերուն մէջ, այդ յղացքը չի խորացներ, պարզապէս այդ երեք բանաստեղծներէն միայն առաջինին մօտ "արտայայտութեան" խնդիր մը կը տեսնէ:

Քերթողական փորձառութեան յղացքը օչականեան ստորոգութիւն մը չէ, չի կրնար ալ ըլլալ, այնքան կեանքը փակցնելով գիրքին, կեանքի ու գիրքի բարդ ճակատումի երկայնքին գիրքին (լեզու, գրական աւանդութիւն, սեռեր) կը վերապահէ կրաւորական պաշտօն մը:

Թէ մարդ մը, բանաստեղծական գործունէութիւն կամ քնարական ես, գրելու արարքով ճակատի ոչ միայն իր յուզումներու արտաբերումին, այլեւ աշխարհի մը, իրի մը, կամ քերթուածի մը արտաբոումին, եւ քերթուածները չըլլան առանձին առանձին պահերու եւ ապրումներու արտաքնացումներ, այլ գոյութեան մը կերպարանքները, ահա թերեւս տիեզերքը ճերմակ արձիւներուն: Ի հարկէ, Օշական իր ժամանակակից հայ գրողներու մօտ, գոնէ բացայայտ կերպով, նման արկածախնդրութեան մը գուցէ չէր հանդիպած: Ասիկա ոչինչ կը փաստէ, բացի անկէ, որ ամէն քննադատութիւն պայմանաւոր է իր սահմաններով, որոնք իր ժամանակինն ալ են. երբեմն, բայց ոչ միշտ:

Բանաստեղծութեան հարցը արտայայտութեան հարց մը չէ: Ըլլալո՛ւ հարց մըն է: Այդ ըլլալու տագնապին մէջ կը մտնեն ոչ միայն յուզումը, երեւակայութիւնը, մտածումը, այլեւ այդ բոլորը իր մէջ ընդունող լեզուն, որ ոչ կրաւորական պարունակ մըն է, ոչ ալ զուտ հնչունային համակարգ մը: Մարմին մը, անշուշտ, իմացականութիւն մը, անկասկած, բայց ոչ տրամախոհական միտքը, ոչ տրամաբանութիւնը, այլ գուցէ անկէ վար, զայն ոտքի հանող երեւակայութիւնը, որ կը մտածէ իրրեւ պատկեր ու կառուցուածք, իրրեւ ձայն ու կշռոյթ:

Բանաստեղծումը կը մտածէ պատկերով ու կշռոյթով, Օշական ի՞նչ գիտէ առիկա: Ասիկա գրելով անշուշտ տակաւին ոչինչ գիտէ բանաստեղծութենէն:

ԳՐ. ՊՐԻՏԵԱՆ

---

(1) Նկատի ունիմ Սարաֆեանի հատորները, որոնց հանդէպ Օշականի հակազդեցութիւնը կը մատնէ արմատական անհասկացողութիւն մը:

(2) Henry Brémond, *La poésie pure*, Grasset, 1926, *Prière et poésie*, Grasset, 1926· Առաջին հատորը այդ բանավէճին թղթածարարն է: Աբբայ Պրէմոն հեղինակն է բազմահատոր աշխատութեան մը, որուն ակնարկութիւններ կ'ընէ Օշական իր *Համապատկերի* առթիւ· *Histoire littéraire du sentiment religieux en France depuis la fin des guerres de religion jusqu'à nos jours.*

(3) Պրէմոն ամբողջ գիրք մը կը յատկացնէ բանաստեղծութեան ու աղօթքին, տե՛ս· վերի ծօթը:

(4) Վճռական էջեր ունի բանաստեղծ Փիէռ Ռըվերտի, այս ուղղութեամբ: Տե՛ս· *Cette émotion appelée poésie*, Flammarion, 1974: Համանուն յօդուածը գրուած է 1950–ին:

(5) "L'émotion est une certaine manière d'appréhender le monde" կամ "Le sujet ému et l'objet émouvant sont unis dans une synthèse indissoluble". Տե՛ս· *Esquisse d'une théorie des émotions* (1939), Paris, 1965, p. 37.

(6) Աստուածաբանութեան մէջ հսկայ գրականութիւն կայ Մարիամի երկինք բարձրացումին շուրջ, որուն մասին Աստուարանը չի խօսիր անշուշտ· աւանդութիւնը կը սկսի Ե· դարու վերջերուն: Ընդունուած աւանդութեան համաձայն Քրիստոս իջաւ երկինքէն եւ Մարիամը տարաւ այնտեղ ոչ հոգին միայն, այլ ամբողջ անձը, ներառեալ մարմինը: Տե՛ս·, ի միջի այլոց, Թ· Տասնապետեան, *Տիրամայր* (բնագիրներ), Հայկ· Մատենաշար Գ· Կիւլպէնկեան հիմնարկութեան, Լիզպոն, 1998:

(7) Տե՛ս· *Ծուսաբեր դրական*, 1947 Մայիս 16, էջ 11:

(8) «Վերի կտորին մէջ դուք դիտեցիք անշուշտ անհեթեթութիւնը ներմակ արձիւներուն, որոնք չեմ գիտեր, քէ ո՞ւր է տեսած ամէն գոյն իր բմայքին համեմատող գործածող այս զգայախաբը» (ՀՔ 261):

Ցղումները՝ "Համապատկեր"ի շարքին, "Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծութիւնը" եւ "Երբ հիները կը կարդացին" հատորներուն:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris Commission Paritaire: N° 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 11
MARDI
11 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·638 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.638

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

## ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

### ՎԱՆՕ ՍԻՐԱԴԵՂԵԱՆ ԲԱՆՏԷՆ ԵԼԱՒ, ԲԱՅՑ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԿԸ ՄՆԱՅ

Ինչպէս կը սպասուէր, 96 ժամ դիպահ մնալէ ետք, Ուրբաթ Մայիս 7, ժամը 15·30–ին ՀՀՇ–ի նախագահ, նախկին ներքին նախարար՝ Վանօ Սիրադեղեան բանտէն ելաւ:

Սիրադեղեանի փաստաբան՝ Ռուբէն Հայունի, յայտնեց որ Սիրադեղեանը ազատ արձակելու փաստաթուղթը իր պաշտպանեալին յանձնուած էր ժամը 13·30–ին՝ օրէնքով սահմանուած ժամկէտէն երկու ժամ առաջ:

Ըստ փաստաբանին, դատախազութեան յանձնուած է երկու անձերու ստորագրութեամբ երաշխաւորագիր մը զոր ո–րուն, Սիրադեղեան պիտի չհրապարակի իր բնակավայրէն, եւ վճարուած է երաշխաւորագին մը՝ Հայաստանի մէկ նուազագոյն աշխատավարձի 500–ապատիկ չափով:

Ի յառնին տեղեկացուց նաեւ, որ ձերբակալութեան ընթացքին Սիրադեղեան ցուցմունքներ տալ չէ ուզած առողջական պատճառներով: Սիրադեղեան դատախազութիւն պիտի ներկայանայ՝ քննչական յետագայ գործողութիւններուն մասնակցելու համար: Վանօ Սիրադեղեան իր ազատ արձակումէն վերջ 3 ժամ իր բնակարանը մնացած է, ապա գացած ՀՀՇ–ի գրասենեակը, սակայն մերժած է պատասխանել հոն հաւաքուած լրագրողներու հարցումներուն, ըսելով թէ՝ «ես ծանօթ չեմ քաղաքական իրավիճակին»: Ան խոստացած է բոլոր հարցումներուն պատասխանել «96 ժամէն» ետք նարքելի մամլոյ ասուլիսի ընթացքին:

Միւս կողմէ, ՀՀՇ վարչութեան փոխնախագահ՝ Արարատ Զուրաբեան մամուլին յայտնած է, թէ Սիրադեղեանի նկատմամբ ճնշում չէ գործադրուած եւ ոչ ալ որեւէ պայման առաջարկուած է անոր:

Ուրբաթ օր, Սիրադեղեանի ազատ արձակումին դէմ բողոքի ցոյց մը կազմակերպուած էր Հայաստանի «Սախարով» մարդկային իրաւունքներու պաշտպանութեան հայկական ֆոնտի կողմէ: Ցոյցէն ետք, Հայաստանցի բազմաթիւ քաղաքացիներ, որոնք Սիրադեղեանի գործունէութեան մասին ամիսներ առաջ դանդատներ եւ բողոքներ ներկայացուցած էին այդ ֆոնտին, սաքած են մամլոյ ասուլիս մը: «Վանօ Սիրադեղեան յանցագործութիւնները առանձինն չէ կատարած եւ դատարանի առջեւ հաշիւ պէտք է տան բոլոր անոնք, որոնք կանդնած են անոր ետին», յայտարարած են այդ անձերը: Բողոքի ցոյցի մասնակիցներու զայրոյթը աւելի սաստկացած է, երբ անոնք տեղեկացած են որ Սիրադեղեան ազատ արձակուած է բանտէն:

Ցոյցի մասնակիցներու կարծիքին եղած են Վարուժան Աբրահամեանի եւ Ցոլա Հանննէս Սուքիասեանի ազգականները: Վերոյիշեալ երկու անձերը գնդակահարուած էին Հայաստանի երկաթուղիի վարչութեան պետ՝ Համբարձում Գանդիլեանի հետ միասին (ըստ հետաքննչական վարկածի, Սիրադեղեան մեղսակից է այդ յանցագործութեան): Ցոյցի ընթացքին խիստ ելոյթներ ունեցած նաեւ Հայաստանի օդային սպասարկութեան վարչութեան նախկին պետ՝ Դմիտրի Ատապաշեան, որ անցեալները ձերբակալուած էր կեղծ մեղադրանքով մը, Հ· Ց· Դաշնակցութեան անդամ՝ Կիմ Բալայեան, որ ձերբակալուած էր 1996–ի նախագահական ընտրութիւններուն հետ առընչակից իրաւարձութիւններու պատճառաւ եւ ուրիշներ: Ելոյթ ունեցած է նաեւ Հայաստանի նախագահ Լեւոն Տէր–Պետրոսեան ժողովուրդին կոչ ուղղած է որպէսզի ան այս դժուարին իրավիճակին մէջ չկորնչցնէ համբերութիւնն ու լաւատեսութիւնը, համոզում յայտնելով որ ամէն բան պիտի չտկուի Հայաստանի մէջ:

Մինչ կողմէ, «Ազ» հեռատեսիլ Թղթակիցը ՀՀՇ–ի գրասենեակին մէջ հանդիպում մը ունեցած է Սիրադեղեանի «վստահուած անձ»երէն՝ մէկուն Վասակ Դարբինեանի հետ, որ յայտնած է թէ Ազգային Անվտանգութեան Նախարարութեան պատասխանատուները մինչեւ Սիրադեղեանի ազատ արձակուիլը, իրեն «Հայք» թերթի գլխաւոր խմբագիր՝ Արմէն Պաղտասարեանին եւ Սմբատ Սիրադեղեանին ալոճանած էին տեսակցիլ Սիրադեղեանի հետ՝ յիշեալ նախարարութեան մեկուսարանին մէջ: Աւելցուցած է որ քննիչներու կողմէ Փիլիքական ուժ չէր գործադրուած՝ Սիրադեղեանի վրայ: Վասակ Դարբինեան յայտնած է նաեւ որ Սիրադեղեան ցուցմունքներ չէ տուած, եւ առ այժմ ըսելիք մը չունի, սակայն ազատ արձակուելէ երկու չաբաթ ետք, հաւանական է որ ան ակռ ցուցմունքներ ընել:

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 8 / 10)

### ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պուտափէչեան վերադարձին ուր հայկական պատուիրակութիւնը մասնակցած է Եւրոպական Խորհուրդին 50–ամեակին, Վ· Օսկանեան հարցազրոյց մը տուած է «Արմէնփրէս»ին: Խօսելով այդ կազմակերպութեան հետ Հայաստանի յարաբերութիւններուն մասին, նախարարը ըսած է թէ անոր անդամակցութիւնը արտաքին քաղաքականութեան առաջնային խնդիրներէն է: Այդ անդամակցութեան համար ան պատրաստ դեռին նկատած է Եւրոպայի հետ Հայաստանի զարաւոր կապերը, արեւմտամէտ նկարագիրը ու երկրին մէջ կորսուած եւրոպական կենսաձեւի չափանիշները վերահաստատելու կարեւորութիւնը:

Պուտափէչեան եղած ատեն, Վ· Օսկանեան ելոյթ ունեցած էր Մայիս 7–ին, եւ չեչտած թէ Հայաստան ժողովրդավար գործընթացներու ձեռնամուխ չէր եղած պարզապէս Խորհուրդին անդամակցելու համար:

***

### ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԳՈՂՅՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՑ

Մոսկուայի մէջ զոզցուած է Ռուսաստանի պիտութեան ակադեմիայի անդամ Օլեզ Կոչտոյեանցի հաւաքածոն որ կը պարունակէր Ալվազովսկիի, Սարեանի ու արտասահմանցի ու ռուս նկարիչներու պատառներ, ժէ· – Ի· զարու հազուագիւտ գրամներ· զողերը տարած են նաեւ 13·500 տոլար, սրբանկարներ եւ ոսկերչական իրեր: Օ· Կոչտոյեանց որդին է խորհրդային յայտնի բնապէտ Աշխատաւոր Կոչտոյեանցի:

***

### ՊԱՏԱՆԴՆԵՐՈՒ ԹԻԻԵՐ

Կարմիր Խաչի տուեալներով Հայաստանի, ԼՂՀ եւ Ադրբեջանի մէջ մօտ 20 պատանդ եւ հազար ալ անհետ կորսուածներ կան: Կազմակերպութեան Հայաստանի ներկայացուցիչը ըսած է թէ իրենք պարբերաբար կ'այցելեն պատանդներուն ու կը փորձեն կապեր հաստատել անոնց ընտանիքներուն անդամներուն հետ:

*ՔՈՍՈՎՕ*

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

## ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ

### ՀԱԿԱՄԵՐԻԿԵԱՆ ՑՈՑՑԵՐԸ ԿԸ ԲԱԶՄԱՆԱՆ ՓԵՔԻՆ ԵՒ ԱՑԼՈՒՐ

Ուրբաթ, Մայիս 7–ի ռմբակոծութեան 7–րդ «սխալ»էն ետք Նիւի Չուկային վրայ, ուր առնուազն 15 մեռեալ կար եւ 70 վիրաւոր որոնց 50–ը ծանր վիճակի մէջ, Մայիս 7–էն 8–ի լուսնալիք գիշերը, ՕԹԱՆ զործեց ութերորդ ծանրակշիռ «սխալը» որ նաեւ դիւանագիտական դեռնի վրայ դեռ կընայ հետեւանքներ ունենալ: Արդարեւ, Պելկրատի այս նոր յարձակման առեն, ռումբերը ինկան Չինաստանի դեսպանատան վրայ, ուր 4 մեռեալ (2–ը լրագրող) եւ քսան վիրաւոր կար: Ինչպէս միշտ, յապաղումով խոստովանելէ ետք այս նոր վրիպումը, ՕԹԱՆ նախ բացատրեց որ քիչ անդին կար ռազմամթերքի պահեստանոց չէնք մը, աւելի վերջ ընդունելով որ այդ չէնքն էր Թիրանը եւ ուրեմն տեղեկատուութեան պակաս մը կայ, չէին դիտեր որ երկու տարի է այդ չէնքը Չինաստանի դեսպանատան վերածուած է, ինչ որ բաւական լուրջ թերացում մըն է ամերիկեան տեղեկատուութեանց (ՍԷ–Ի–Ա) սպասարկութեան համար: Մինչ ՕԹԱՆ, Ամերիկա, ՄԱԿ յաջորդաբար ներողութիւն կը խնդրէին, յուն կը յայտնէին, պնդելով որ երբեք դիտակցաբար չէր ռմբակոծուած Չինաստանի դեսպանատունը, Չինաստան զայթակղած էր, Փէքինի մէջ կը բազմանային հակաամերիկեան ցոյցերը, Միացեալ – Նահանգներու դեսպանատունը կը չրջապատուէր աւելի քան 20 հազար ցուցարարներով, չէնքը կը քարկոծուէր եւ այս ամբողջը իշխանութեան օրհնութեամբ: Մայիս 10–ին, կը հաստատուէր որ Միացեալ – Նահանգներու դեսպանատունը պաշարուած էր, դեսպանն ու անձնակազմն ալ պատանդի վերածուած էին: Կիրակի, Մայիս 9–ին, ցուցարարներու թիւը 200 հազարէ աւելի էր, լոզունգներն ալ խօսուն՝ «Գլինթըն՝ Բ· Հիթլէր», «ՕԹԱՆ՝ ձեր տունը գայէք»: Չինաստան պատերազմական ոճիր, բարբարոս արարք եւ նման որակումներով կ'արտայայտէր իր վրդովումը, մինչ Գլինթըն կ'ըսէր որ բարբարոս Միլոսեւիչն է եւ այս պատահածը, մեկն ցաւալի սրկած մըն է: Ռուսաստանի Արտաքին նախարարը անմիջապէս կը ջնջէր Լոնտոն կատարելիք իր այցելութիւնը Մայիս 8–ին, ցայց, Զերնոմիրդին Պոն կ'երթար չարունակելու համար իր առաքելութիւնը: Ելցին չէր ծածկեր իր բարկութիւնը ՕԹԱՆ–ի դէմ, Չինաստան Ապահովութեան Խորհուրդի նիստ կը պահանջէր:

***

Դէպքէն 48 ժամ ետք ալ մթնոլորտը լարուած կը մնար եւ ամերիկեան չանքերը հանդարտեցնելու համար Չինացիները ի դերեւ կ'ելլէին: Օգաչուն սխալ տեղեկութիւն ունեցեր է եւ դեսպանատունը չփոթուեր է պինամթերքի եուկոսլաւ պատուիրակութեան կեդրոնավայրին հետ: Յանցաւորները կան, ցայց, ՕԹԱՆ–ի Ընդհանուր քարտուղարը՝ Խ· Սոլանա յայտարարած է թէ չի խորհիր որ ռեւէ մէկը պէտք է պաչտօնազրկուի: Այնուամենայնիւ Ամերիկա վճռած է չարունակել ռմբակոծութիւնները «սոքի» մը ըսելէ ետք զործուած սխալներուն եւ մեռեալներուն ու վիրաւորներուն համար, թէեւ

(Շար·ը Դ· էջ)

### ԼԻՈՆ–ՓԱՐԻԶ ԵՐԹԸ

Չորեքչաբթի Մայիս 12–ին երթին վերջին հանգրուանն է Ծերակոյտը: Ժամանակացոյցն է. – Ժամը 9–ին հաւաքուիլ Ալֆորվիլի քաղաքապետարանը, ժամը 12·30–ին Փարիզ, Օթէլ տը Վիլ, 14–ին՝ Ազգային Ժողով, 15·30–ին Ծերակոյտ:

### ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

## ՊՐԷԹ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿԸ ԴԻՄԷ

Ռոնի երեսփոխան եւ Վիլէօրպանի քաղաքապետ կցորդ Ժան – Փօլ Պրէթ յարաեւութեամբ կը չարունակէ իր աչխատանքը որպէսզի Ծերակոյտը իր օրակարգին վրայ արձանագրէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերող օրէնքի առաջարկը:

Այս առընչութեամբ, նկատի առնելով որ Ծերակոյտի նախագահներու ժողովը կրկին օրակարգի այս հարցը պիտի ձգէ, նամակ մը զրկած է բոլոր ծերակուտականներուն, ուր երեք պատճառաբանութիւններ կը ներկայացնէ պիրենք համոզելու համար. – Ա.) Ազգային Ժողովի 1998, Մայիս 29–ի միաձայնութեամբ քուէարկուած օրէնքի առաջարկը: Բ) Ռէալ փոլիթիքի սահմանները եւ Գ) այդ ճանապարհը ոչ մէկ հետեւանք կրնայ ունենալ կովկասեան հակամարտութիւններուն վրայ:

# Ի ՅՈՒԶ ՎԱՐՊԵՏԻՆ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

## ՏՔՐԸ ՕԳՆԵՑ ԻՆԾԻ...

«Պայքար»ի խմբագրութիւն եւ Պայքար Հասատատութիւն իր շաբաթական հանդիպումները ճշդուած կանոնաւորութիւն մը ունէին: Ներառեալ կը պատահէր միայն Պաթքընի խստաչունչ ձմրան, երբ մասնաւորաբար սառնամանիքը վտանգաւոր կը դարձնէր հետիոտն շրջագայութիւնները, յատկապէս տարեց անձերու համար:

Սփիւռքի եւ Հայաստանի ընդհանուր կեանքին առընչուող խօսակցութիւնէ ետք, որոնց ընթացքին իր մտածումները – երբեմն ընդվզումը – յայտնած կ'ըլլար, իմ կողմէս հարցումը կ'ուղղուէր իր գործին մասին: Գիտէի որ խղճամիտ պաշտօնեայ մը ուելի կանոնաւորութեամբ կ'աշխատէր, կը ստեղծագործէր իր տան մէկ օրն ի բուն: Այս նկատառումով՝ յաւիտենական երիտասարդն էր ան, համակ եռանդ եւ ուիւն: Երբեմն իր տարած աշխատանքէն բխած խանդավառութիւնը այնքան բարձր կ'ըլլար, որ խօսակցութեան կարգավիճակը կը շրջուէր իր կողմէ:

– Վերջին շաբաթ սկսայ Դանիէլ Վարուժանի «Հային երգը»ի բանաստեղծութիւններէն չարքի մը եղանակաւորումը:

Նշեց առաջին երկու ստացուած երգերուն տիտղոսները, իր անզսպելի հիացումը յայտնելով քերթուածներուն, – «ի՛նչ դեղեցիկ բանաստեղծութիւններ են»...: Պատանեկան ուրախութիւն կար իր արտայայտութեան մէջ: Մինդ մը՝ որ միայն կրնային ըմբռնել եւ զայն բաժնել անոնք, որոնք տեղեակ էին Վարպետը ներշնչող ազգային մայր երակին: Վարուժանի ծննդեան հարիւրամեակի համազգային տօնակատարութեան տարին իր ստացին կը գտնուէր, սակայն կարելի չէր որ հայ բանաստեղծութեան նմա՛ն տիտանի մը դարաւարձի հանդիսութիւնները վերջ գտնէին առանց իր մասնակցութեան: Ամէն պարագայի, առաջին անգամ չէ որ ան ներշնչուած էր Վարուժանի դործերէն: բանաստեղծին «Վարուժանական» բանաստեղծութեան երաժշտագրութիւնը ինքնուրոյն գրաւչութեամբ ստեղծագործութիւն մը՝ տասնամեակներէ ի վեր իր մնայուն տեղը գրաւած էր համերգներու յայտագիրներուն մէջ, – «Աղուո՛ր, Աղուո՛ր, Աղուո՛ր, վարդն իմ Գարունիս...»:

Օր մը մասնաւոր եռանդով պատմեց «Վարդանանց» քանթաթային ծննդոցը: Թուական՝ 1951: Վայր՝ Լիբանանի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքը: Կաթողիկոս՝ պատմական դէմք մը – Գարեգին Ա. Յովսէփեանց: Համազգային շուքով պիտի տօնախմբուի Վարդանանց դիւցազնամարտին 1500–ամեակը մայրաքաղաքի չարժանկարի մէկ մեծ սրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գարեգին Ա. երջանկայիշատակ Հայրապետին: Հանդիսութեան երեք չաբաթ մնացած է երբ Գարեգին Կաթողիկոս դինք կը կանչէ իր մօտ, Վեհարան: Ինք երաժշտութեան ուսուցիչ է Դպրեվանքի եւ հայկական այլ վարժարաններու մէջ: Հայրապետը իրեն կ'ըսէ.

– Պր. Պէրպէրեան, ուզում եմ որ մի գործ գրէք Վարդանանց տօնակատարութեան առթիւ:

Վարպետը, որ ոչինչ կրնար եւ պիտի ուզէր մերժել մեծանուն Կաթողիկոսին, ցոյց կուտայ ընդդիմադրութիւն մը: Ինչպէ՞ս: Ո՛չ գործը պատրաստ է եւ ոչ ալ երգչախումբը: Ու դեռ կայ Դպրեվանքի եւ հայ գպրոցներու ուսուցչութեան արդելքները: Հետեւաբար՝ «Անկարելի է, Վեհափառ»:

Սարսափազդու ճակատագրական մասնակցած մեր օրերու Ղեւոնդ Երէցը կը մնայ հաստատակամ: Շեչոր հայրապետական է.

– Համբարձո՛ւմ, դու կարող ես...դու տաղանդ ունես... Տէրը քեզ կ'օգնի...:

Ամրոզ յանձն կ'առնէ հայ վարժարաններու, անօրէնութիւններուն հետ կարգադրել որ Պր. Պէրպէրեանը մի քանի չաբաթ ուսուցումէ ազատ կացուցանուի: Վարպետը ճղնաւորի նման կ'առանձնանայ տան սենեակը: «Պահապան հրեշտակս էր կինս՝ Սրբուհին, որ դիս կը քաջալերէր եւ կը պաշտպանէր»: Տիկին Պէրպէրեան աշխատասենեակին դուռը կը փակէ անհատիր բոլորին առջեւ: Գրեթէ «մէկ չունչով գրեցի «Վարդանանց Պատերազմը» քանթաթան, Վահան Թէքէեանի բառերով»: Կը սկսին երգչախմբային տեղադրութիւններ, անդուլ փորձերը: Հանդիսութեան օրը ամէն ինչ պատրաստ է: Քանթաթան կը թնդայ սրահին մէջ որպէս ազգային պատերազմի որոտընդոստ յաղթերգ:

Երջանկայիշատակ Գարեգին Ա. պիտէր թէ ինչո՛ւ կը պնդէր եւ թէ «անկարելի» չէր իր ակնկալութիւնը: Երկու տարի առաջ Լիբանանահայութիւնը հանդիսատորապէս նշած էր իր ծննդեան 80–ամեակը, գրական եւ պետական գործունէութեան 60–ամեակը եւ քահանայութեան 50–ամեակը, եւ այդ առթիւ Մայր Տաճարին մէջ երգչախումբի – նուագախումբի կատարումով հնչած էր Պէրպէրեանի «Եկեղեցին Հայկական» օրատորիօն, միշտ Թէքէեանի բառերով: Գործը 1950–ին հրատարակուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին կողմէ, ուր կը կարդացուէր հեղինակին հետեւեալ ձօնը. «Ձօն՝ առ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս, որուն հոգիին համայիչ ներգործութիւնը 1935 Թուականի առաջին հանդիպումին դիս համակեց Հայ Եկեղեցիի խորհուրդով եւ ինձի վերապրիլ տուաւ Վ. Թէքէեանի անմահ քերթուածը՝ "Եկեղեցին Հայկական"»:

Վարպետը վարակիչ յուզումով կը վերապրէր այդ պահերը պատմելու ժամանակ, խոր երախտապիտութեամբ եւ հիացումով յիշելով նաեւ երջանկայիշատակ Ծովսէփեանց Կաթողիկոսին անունը: Մինչեւ վերջ կ'ուզէր խորհիլ թէ «հրաշք»ի համազօր էր այդ պայմաններուն մէջ քանթաթային երկնումը եւ գործադրութիւնը, եւ իր պատումը կ'աւարտէր իրը ընդելով Հայրապետին խօսքը.

– ՏԷՐԸ ՕԳՆԵՑ ԻՆԾԻ...:

## Ե՞ՐԲ Է ԳԻՆԵՁՕՆԸ...

Տանս հեռաձայնը հնչեց: Իր ձայնն էր, միշտ ուրոյն հնչեղութեամբ.

– Ինչպէ՞ս էք ընկեր Քէօսէեան: Համբարձում Պէրպէրեանն է...

Պէտք չունէր անունը տալու, քանի երկարամեայ մտերմութիւն մը ունէր իր ձայնը: Չէր ակնկալեր, չէր սպասեր որ մենք, ուելի քան սերունդով մը անջրպետուած իր կրտսէրները դինք փրնտրէինք, պարբերաբար իրեն հեռաձայնէինք որպէս գնահատանքի նշան՝ իր ճոխ, հայ երաժշտական գանձարանը հարստացնող վաստակին, եւ նաեւ որպէս յարգանք՝ ազգային – հասարակական խոր համոզումներու տէր անհատին, որ իր 94 տարիներու կատարին պահած էր իր երիտասարդական նոյն հետաքրքրութիւնը հանդէպ ամէն ինչի որ հայկական էր: Ինք մնաց միշտ մտաչելի եւ խոնարհ: Նաեւ յարգալիր:

Տեղեակ էի թէ իր առողջութիւնը վերանորոգուած աստիճանով վատթարացած էր, ու կը խորհէի իրեն այցելութիւն տալ եթէ ի վիճակի էր դիս ընդունելու: Հետեւաբար իր այս հեռաձայնը որքան անակնկալ՝ նոյնքան եւ ուելի հրճուելի էր ու թանկագին:

Ու մի քանի վայրկեան խօսակցութենէ ետք՝ յանկարծ հարցումը:

– Ե՞րբ պիտի կատարուի ձեր դիրքին պինեճօնը, դեռ ե՞րբ պիտի կատարէն...

Անհամբերութեան չեշտ մը ունէր իր հարցումը: Բացատրեցի թէ Մեծադոյն Պոսթընի Մշակութային Ցանձնախումբը որոշած էր երեկոյթ մը նուիրել դիրքիս հրատարակութեան, սակայն մեր քաղաքին համար փետրուարը եւ Մարտը յանձնարարելի ամիսներ չէին հրապարակային ձեռնարկելու համար: Անակնկալ ձիւնամրրիկ մը կրնար խանգարել ձեռնարկները: Ցիլեցուցի բանաստեղծ Զարեհ Մելքոնեանի նուիրուած երեկոն՝ երբ մայր բնութեան վերապահած անակնկալը արդելք եղած էր որ նոյնիսկ բանախօսն ու հանդիսավարը կարենային իրենց տունէն ինքնաշարժով ճամբայ ելլել:

Շատ համոզիչ չդտաւ: կրկնեց հարցումը. «Ե՞րբ»... ու ապա՝ «չուտով պէտք է կազմակերպել»...: Ինք ունէր իր հաստատ կարծիքը, ինչպէս չատ մը ուրիշ պարագաներու:

Ներողամտութիւնը հայցեցի թէ ուշացած էի գիրքէս օրինակ մը իրեն նուիրելու, եւ առաջարկեցի անձամբ իրեն յանձնել կամ իր հասցէով ուղարկել հատորը: Մերժեց.

– Գինեճօնի օրը կը յանձնես:

Այդ ձիւնառատ օրը, սակայն, ինք բացակայ էր. կը գտնուէր իր հիւանդի մահիճին մէջ եւ յաջորդ օրը, Մարտ 13–ին, պիտի չիմէր: Միայն որոշ ափոփանք ունեցած էի, երբ երեք չաբաթ առաջ հիւանդանոց այցելութեանս, դրկած գիրքս տեսած էի իր սենեակի պատուհանի եզրին: Հատորը ստացած եւ թղթատած էր:

Վարպետին վերջին հեռաձայնին տուն ուղղ պատճառը քիչ մը ուելի եւս կը խորացնէ իր կորուստով զգացած վիշտս: Իր յառաջացած տարիքին եւ առողջական վիճակին մէջ՝ ան մտածած էր թէ կազմակերպութիւններ պէտք չէ որ թերանային գնահատելու մեր ազգային կեանքի մէջ վաստակ մը կամ վաստակաւոր նը– կատուած անձ մը, – ան ըլլայ հեղինակ, խմբագիր, արուեստագէտ, դաստիարակ կամ ազգային – հասարակական գործիչ: Անհետացած սերունդի մը ներկայացուցիչն էր ան, որ մեզի կը յուշէր մեր պատասխանատուութիւնները, ի հարկին՝ բարձրաձայն...:

## ՎԵՐՋԻՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ – «ՄԱ՛ՐԴ ԵՂԻՐ»...

Կեանքի մէջ ստացուած ցաւեր կան, պատճառուած խոցեր՝ որոնք ժամանակի ընթացքին կը սպիանան, ոմանք միւսներէն աւելի ուշ: Դառն պատահարները կը ժխտունին եւ կը մղուին ենթակայական յիշողութեան մութ եւ անծանօթ ծալքերուն մէջ: Տասնամեակներէ ետք երբ վերջնականապէս ամէն ինչ մոռցուած կը կարծուի ըլլալ, յանկարծ անոնցմէ ոմանք, ամէնէն մգկամիչ ցաւ պատճառածներէն մէկը կամ միւսը, կը ցայտեն դուրս, կը կանգնին անհատին դէմ՝ անոր կեանքի վերջալոյսին, մասնաւորաբար կեանքի հետ հաշուեփակի համրուած ժամերուն: Վէրքը միշտ հո՛ն է իր երբեմնի պատճառած կրակիծով, որուն վրայ համբօրէն աւելցած է տարիներու դառնութիւնը:

Նմանօրինակ վերապրում մը ունեցած էր Վարպետը հիւանդանոցին մէջ, գոծողութենէն ետք, իր չիմումին չորս չաբան առաջ:

Դէպքը պատահած էր Հալէպ, հատնարար Բ. Աչխարհամարտի աւարտէն ճիշդ առաջ, որմէ ետք Պէրպէրեան ընտանիքը պիտի փոխադրուէր Պէյրութ:

Վարպետը կ'ուզէր ներկայացնել իր հղինակած օփերան, տեղական եւ ժամանակաշրջանի պայմաններով: կը խորհէր որ անոր մեկենասը կրնար ըլլալ ունեւոր ազգայիններէն մէկը, որ փայտի վաճառական մըն էր: Պէրպէրեան ազգայինը կը հրաւիրէ ընթրիքի. ամէն ինչ եղած է որ սեղանը ըլլայ ճոխ՝ հակառակ բազմանդամ ընտանիքին նիւթական անճոռնի վիճակին: Մթնոլորտը նպաստաւոր է մերձանալու նիւթին հայկական փառաւոր ընթրիքէն եւ ջերմ խօսակցութենէն ետք: Վարպետը կը յայտնէ իր ծրագիրը եւ կ'ընէ իր առաջարկը: Այդքանը բաւ է, որ մթնոլորտը տրամագծօրէն մթագնի եւ ամէն ինչ չրջուի: Մարդը կը պատասխանէ յստակ եւ հատու.

– Ի՞նչ պարապ բաներով կը զբաղիս. երաժշտութիւն կ'ընես, երգ կը սորվեցնես: Գնա՛, քիչ մը դրա՛մ չահիլ եւ ինծի պէս եղիր: Մա՛րդ եղիր...

Իր դամբանականն էր որ, կարծես, երաժշտահոնը կը լսէր...

Շէյքսփիր «Ճուլիոս Կեսար»ին մէջ կը յայտնէ մտածում մը, որ այս պարագային ճիշդ կը պատկերազրէ կացութիւնը. «Զարիքը գոր կը պատճառեն մարդիկ, կը վերապրի իրենցմէ ետք. բարիքը յաճախ կը թաղուի իրենց ոսկորներուն հետ»:

Փայտի վաճառականին մահէն տասնամեակներ ետք, անոր պատճառած հոգեկան չարիքը վերապրած էր արուեստագէտին հոգիին մէջ: Սպիին թաղանդը կրցած էր միայն մակերեսը ծածկել: Եւ հիմա, յիսունհինգ տարիներ ետք, հիւանդանոցի մահիճին վրայ երկարած, վերյիշելով պատահարը, Պէրպէրեան իր մօտ կանգնած միջնեկ որդուին՝ Վահէին տրամօրէն կ'ըսէր, կարծես կը մրմռար իր մնացած չունչովը՝

– Ինծի լսաւ որ մարդ ըլլամ...

## Ի՞ՆՉ ԼՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ...

Հայկական Հիւանդապահ Տան մէջ, Մեծն Պոսթընի, ուր չաբաթէ մը ի վեր վոհմտրուած էր հիւանդանոցին:

Պր. Պէրպէրեան նստած է սրահը. հիւանդապահուհիի մը կարգադրութեամբ ձայներիզի վրայ կ'ունկնդրէ Շուպէրթի

# ԹՈՒՐՔԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ ԳԱՅԼԵՐԸ

1995–ի ընտրութեան արդիւնքէն ի վեր կրօնամոլ տարրը անչրջանցելի առանցքական մարզին: Մինչդեռ անցեալ Ապրիլ 18–ի քուէահամարը «Դորշ Գայլեր»ու անակնկալ վերադարձ մը նշեց: Ծայրայեղ աջակողմեան այդ կազմակերպութիւնը որ 1965–ին զնդապետ Ա. Թուրքէշի կողմէ հիմնուած էր, 19 տարիէ ի վեր իշխանութենէն հեռու մնացած էր: Իսկ այսօր քուէներու 18%–ով հանդիսացաւ երկրին քաղաքական երկրորդ ուժը:

Բաւական հետաքրքրական է անդրադառնալ որ 1975 – 80 փողոցային արիւնալի կռիւներով իրար սպանելէ ու չուրջ վեց հազար զոհ տալէ քանի տարի ետք, էճեվիթի ժողովրդավար ճակատ եւ ազգայնամոլ ՄՀՓ–ն որուն այսօր գլխավորը կը կոչուի Տ. Պահչէլի, կը պատրաստուին միասին կառավարելու երկիրը: Արդէն կ'ըսուի թէ չատ մը կէտերու մէջ համաձայնութիւն կայ երկուքին միջեւ, ինչպէս՝ Եւրոպայի նկատմամբ վերապահութեան, քրտական հարցին մէջ անզիջող ըլլալու առընչութեամբ, եւլն.: Աւտնց անմիջապէս կը հետեւի նշումն ալ թէ Թուրքիոյ կուսակցութիւնը 1970–ական թուականներու դիմագիծը չի պահեր, ամբողջովին այլափոխուած է:

Ինչ որ ալ ըլլայ ներկան, ՄՀՓ–ի անցեալը բաւական հակասական դիծեր ունի: 70–ական թուականներուն անոր չարքայիններէն մէկ կողմէն թափանցած են աւանդական աջակողմեան կուսակցութիւններէ ներս, միւս կողմէ հայթայթած են չատուկ ջոկատներու տարրերը որոնք թրքական Փիւրախտանին մէկ քրտական դատի բազմաթիւ մարտիկնե-

---

մէկ քոնչէրթօն, երբ Վահէն իրեն կ'այցելէ: Վահէն՝ տաղանդաւոր թաւջութակահար եւ մենահամերգներով հանդէս եկած երաժիշտ՝ մինչեւ վերջին տարին Վարիչն էր Փենսիլվանիոյ Գլենրիըն համալսարանի երաժշտութեան բաժանմունքի Տեսութեան բաժնին: Այժմ հանգրուանն կոչուած է Պատուակալ Փրոֆէսօրի տիտղոսով, միշտ պահելով իր դրասենեակը համալսարանին մէջ:

Վարպետը իր տղուն դառնալով կ'ըսէ հետացած՝

– Տես ի՛նչ տաղանդ է, ի՛նչ լաւ գործացումներով ((տէվըլոփմանն) օժտուած գործ մըն է: Ներկայիս երաժշտական կազմակերպները խորք չունին, պարապ կը հրնչեն...:

Ծօսքը կը դառնայ հայ եւ Հայաստանի երաժիշտներուն մասին.

– Հայը տաղանդաւոր արուեստագէտներ ունի, սակայն հիմա, ներկայ պայմաններով, անոնք ի վիճակի չեն համաչափ հարհային ճանաչում գտնելու: Եթէ երգահան մը չլսէ իր գործին ունկնդրութիւնը, ան ոչ քաջալերանք կը ստանայ, ոչ ալ կրնայ զարգանալ: Իր գործերու կատարումին չնորհիւ է նաեւ որ երգահան մը ինքզինք կը սրբագրէ, կը յառաջդիմէ: Խորհրդային Միութեան չրջանին, հայ արուեստագէտը այս կերպով զարգանալու կարելիութիւնը ունէր: Իրեն առիթ կը տրուէր Հայաստանէն դուրս, Խորհրդային Միութեան մէջ ծանօթացուելու եւ ապա նաեւ՝ Միութեան սահմաններէն դուրս: Արամ Խաչատուրեան մը, ներկայ պայմաններով, դատապարտուած պիտի պայմաններով, դատապարտուած պիտի չլսուր անծանօթ մնալու Աբեմուտքի մէջ:

Իր առողջութիւնը քայքայումի վերջին աստիճաններուն հասած էր: Շաբաթով մը միայն հեռու էր իր վախճանէն, սակայն ասիկա արդելք մը չէր որ Հայութեան, Հայաստանի, Հայոց հայրենիքին կացութիւնը դաղրէր իր առօրեայ մտահոգութեան մաս կազմել: կը հետաքրքրուի հայրենի վերջին լուրերով, ապա՝ տրտում, կարծես կոտրած եւ ինքնավստի՝ կ'արտայայտէ իր վիչտը:

– Վեց հարիւր տարի սպասեցինք որ ունենանք ազատ եւ անկախ հայրենիք մը, սակայն Հայաստանի հիմակուան ներքին դրութի՛ւնը...

Պոսթընի

րու եւ քիւրտ մտաւորականներու ոպա-
նութեան մէջ դեր կատարած են: Այդ
շրջանակէն կու գան Ալի Ազճա որ Պա-
ղին դէմ 1982-ի մահափորձին հեղինակն
է եւ սպաննողը լրագրող Ա. Իփէքճին,
մաֆիական յայտնի պետ Ա. Զաքըրճըն
որ ներկայիս արդելափակուած է Ֆրան-
սա, նաեւ Թմրեցուցիչի մաքսանենգ,
մեծ գումարներ իւրացուցած Ա. Զաթլըն:
Պալքաններէն մինչեւ Պայթալ Թրքաստօ
դօսի մը ստեղծելու կողմնակից այս
դէմքերը որոնք պաշտօնական մարմին-
ներէ տրուած դիւանագիտական «կեղծ»
անցագրերու տէր էին, 1995-ին ալ
մաս կազմեցին Ադրբեջանի նախագահը
տապալելու փորձի մը:

Հակառակ հիմնադիր Ա. Թիւրքէշի
մահուան յաջորդած պառակտումներուն,
ծայրայեղ ազգայնականութեան այս կազմա-
րումը լայն ներկայութիւն ունի ոստիկա-
նութեան պաշտօնատարներուն, վարչա-
կան դպրոցներու եւ յատուկ ուժերու մէջ:
Ծէր է տարօծուն ցանցի մը որուն շնոր-
հիւ իրենք զիրենք «խէյալիստ» անուա-
նող այդ երիտասարդները թաղէ-թաղ,
տունէ-տուն շրջելով ազդեցիկ ընտրա-
պայքարի տարին: Անոնց համար ամէ-
նէն կարեւոր թիրախներն էին ՓՓՖ-ի
դէմ կռիւներու պահուած երիտասարդ
գիւղորներու հարազատները: Շատ կը
խօսուի այն մասին թէ ՄՀՓ-ն իր բոլոր
քուէները չահած է այն օրը երբ մահա-
պատիժ պահանջած է Ա. Իօճալանի հա-
մար:

Հետաքրքրական երեւոյթ մըն ալ այն է
որ իսլամական-ազգայնական համագրու-
թեան մը ձախողութենէն ետք Ազգ.
Շարժումի Կուսակցութիւնը (ՄՀՓ) սը-
նանեցաւ կրօնամոլ ընտրողներու քուէ-
ներով. իսկ ատոր մէջ մեծ դեր կատա-
րած է Առաքինութիւն կուսակցութեան
գաղափարները, տեսակէտները իւրացը-
նելու գործօնը: Ատոր ապացոյցներէն կը
պատուի քուէներու հրապարակման օ-
րը ազգայնական երիտասարդներու կոչե-
րը թէ կը կատրեն այն ձեռքերը որոնք
կ'երկարին Թրքուհիներու լաչակներուն:
Թուրքիոյ իսլամական տարրը չեզոքաց-
նելու անյաջողութեան վրայ այս կերպով
կ'աւելնայ ծայրայեղ ազգայնականներու
ներկայութեամբ ծագած հարցն ալ: Մա-
նաւանդ որ իր լեզուին ուսուցումին սիրոյն
պայքարող 15-20 միլիոն Քիւրտերու քով
կայ ալեւի փոքրամասնութիւնը որ նոյն
դարը գայլերուն կիերարկած սպանդնե-
րու զոհ եղած է 1978-ին, 1979-ին, 1993-
ին: Այս տարբերուն համար աւելիս մը
է ՄՀՓ-ի քաղաքական բեմ վերադարձը:

ՔԱՂՀԱՆ

## LIVRES REÇUS

WARRANT FOR GENOCIDE
Key elements of Turko-armenian conflict
*VAHAKN N. DADRIAN*
Transaction Publishers
New Brunswick (USA) and London (U.K.)

## ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

### ՍԷՆ Թ'ԷԹԻԷՆ

Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումը այս
տարի նշուեցաւ մեծ չուքով, կազմա-
կերպութեամբ քաղաքիս Հայ Դատի
պաշտպանութեան կոմիտէին եւ ՍԷՆ
Թ'ԷԹԻԷՆ – ՍԷՆ Շամոնի Նոր Սերունդին:

Ուրբաթ, Ապրիլ 23-ին հսկում տեղի
ունեցաւ երեկոյեան ժամը 18·30-էն մին-
չեւ առաւօտեան ժամը մէկ, Հայաստան
հրապարակը, ուր կը գտնուին ցեղաս-
պանութեան յուշարձանը եւ խաչքարը,
մեծկակ ամպհովանիի մը տակ, անընդ-
հատ տեղացող անձրեւին պատճառով:
Այցելուները հոն կը գտնեն մեծաւատ
գրութիւններ եւ նկարներ՝ լայնօրէն ծա-
նօթանալու ցեղասպանութեան պատմու-
թեան, զոհերու կրած չարչարանքնե-
րուն եւ Հայոց մշակոյթին: Ցետոյ, մո-
մավառութիւն եւ մեխակներու զետեղում
այցելուներու կողմէ:

Շաբաթ, Ապրիլ 24-ին, պատարագ կը
մատուցանէր Տաթեւ Քհնյ., որմէ ետք
ժողովուրդը հաւաքուած էր յուշարձա-
նին չուրջ, ուր ներկայ էր նաեւ քաղա-
քապետը իր ղեկաւար գործակիցներով:
Ներկայ էին նաեւ յոյն համայնքէն ներ-
կայացուցիչներ: Հայ Դատի բանբերը
չնորհակալութիւն յայտնեց քաղաքապե-
տին եւ իր չքախումբին, ինչպէս նաեւ
բոլոր ներկաներուն, որ պատասխանած
էին եղած կոչին ու հրաւիրեց Դպրաց
Դասի երգչախումբը որ ներդաշնակու-
թեամբ երգեց «Մեր Հայրենիք» փառեր-
գը, ընկերակցութեամբ Տաթեւ Քհնյ.ի,
ղեկավարութեամբ՝ Արշամ Սվաճեանի:

Ծաղկեպսակներ զետեղուեցան յոյն
համայնքին եւ Ազգ. Միութեան կողմէ,
որու նախագահը՝ Պ. Օվիկեան քանի
մը խօսքով դատապարտեց իշխանու-
թեանց երկդիմի կեցուածքը:

Նոր Սերունդի երիտասարդ ներկայա-
ցուցիչը փաստերով պատմականը ըրաւ
համխաեան եւ Ատանայի Ջարդերուն, ո-
րոնք ըսաւ, նախաքայլերն էին Երիտ-
թուրքերու կողմէ կանխամտածուած Հա-
յոց 1915-ի ընդհանուր տեղահանութիւն-
ներուն եւ անոնց հետեւած Ջարդերուն,
վերջնապէս լուծելու համար «Հայոց
հարցը»: 1915-ին կատարուածը Ի. դա-
րու առաջին ցեղասպանութիւնն է փաս-
տուած մասնագէտներու կողմէ տասնը-
եակ լեզուներով լեռնակուտակ գիրքե-
րով եւ ոչ ոք կրնայ ուրանալ զայն:

Կիրակի, Ապրիլ 25-ին հոգեհանգիստ
եւ պատարագ կատարուեցաւ Եղեռնի
նահատակներուն նուիրուած, ձեռամբ՝
Տաթեւ Քհնյ.ի. Նաեւ առաջին անգամ
ըլլալով եկեղեցւոյ մէջ գեղարուեստա-
կան յատուկ բաժին մը տեղի ունեցաւ:
«Մահերգ»ը երգչոնով կը նուագէր Տի-
կին Սարաֆեան. 12 դպրոցականներու
թափօրը վերամբարձ եղեռնի երկու նը-
կարներով, մուտք գործեց եկեղեցիէն
ներս ու ուղղուեցաւ դէպի գոց խորա-
նը: Տիկին Մարի Պուճիկեան արտասա-
նեց «Հայրենիքիս հետ»ը: Դպրաց Դասը
երգեց «Ատանայի կոտորածը» եւ «Գե-
տաչէնը», Հերմինէ Անտրիկեան մեներ-
գեց «Պարզիր Աղբիւր»ը, Հոգեհանգիստը
ապրումով կարդաց Տիկին Էլմիր Սա-
րաֆեան, Աղաւնի եւ Սամուէլ Խանճեան՝
«Անլռելի զանգակատունը», Գլերմոնէն
Սեդրակ Մարգարեան՝ «Կորսուած ար-
դարութիւնը» արտասանեցին:

Բ. բաժնին, դպրոցականներու թափօ-
րը այս անգամ վերամբարձ ընելով Եռա-
գոյնը եւ հայդուկներու նկարներ, մուտք
գործեց. «Երեւան-Իրեւունի» եւ «Սար-
դարապատ» խմբերգներէն ետք Արշամ
Սվաճեան արտասանեց «Մենք քիչ ենք,
բայց մեզ հայ են ասում» ,ապա Տաթեւ
Քհնյ. իւրայատուկ ոճով ներկայացուց
ցեղասպանութիւնն ու ընդգծեց զայն
մինչ յիշելու հրամայականը: Որպէս-
զի յարատեւէ եւ ստեղծագործէ Հայու-
թիւնը, ըսաւ ան, ձեր զաւակներուն ձեռ-
քէն բռնած, բերէք զանոնք եկեղեցի եւ
դպրոց, որպէսզի սոլմին ու խօսին մեր
Մեծասքանչը, ըլլան արժանի յաջորդ-
ները մեր նախնիներուն, զօրացնեն Մայր
Հայաստանը. օր մը բոլորս միասին եր-
թանք հոն, չարունակեց ան, Արարատի
գագաթին ծփայ Եռագոյնը, մէկ հայ-
րենիք եւ մէկ ժողովուրդ հաւաքուինք
Ս. Էջմիածնի չուրջը: Պ. Արշամ Սվաճ-
եան Ֆրանսերէնի կը թարգմանէր ըս-
ուածները: «Մեր Հայրենիք»ով կը փակ-
ուէր ոգեկոչման արարողութիւնը եւ ժո-
ղովուրդը կիյ սրահը անցնելով կը հիւ-
րասիրուէր տաք ու պաղ խմիչքներով:

ՍՕՍ-ՊԱՐԻՏ

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՊԱՐԱՁԱՆՈՎԻ 75-ԱՄԵԱԿԸ

Մայիս 3-ին Երեւանի չարժանկարի
տան մէջ բացուած է Ս. Պարաճանովի
ծննդեան 75-ամեակը նշող չարժանկարի
փառատօնը: Դատախազի նախկին Սօս
Սարգսեանի խօսքէն ետք ներկայացուած
է Ռ. Գէորգեանցի «Վերջին քոլաժը» ժա-
պահէնը: Փառատօնին ներկայացուած են
հայ, ռուս, ուկրանացի, յոյն, Ֆրանսա-
ցի բեմադիրներու չուրջ 20 գործեր: Փա-
ռատօնը վերջ գտած է Մայիս 7-ին:

*
**

### «ՀԱՒԱՏՔ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» ՇԱՐԺՈՒՄԸ

Մայիս 1 – 2-ին Հայաստանէն եւ Ար-
ցախէն չուրջ 17 հազար պատանիներու
մասնակցութեամբ չատ իւրայատուկ ձե-
ւով նշուած է քրիստոնէութեան 1700-ամ-
եակը: 14-18 տարեկան պատանիներ աւելի
քան 800 վանքերու եւ արգելանոցներու
տարածքին մէջ մաքրութեան աշխատանք
կատարած են: Այդ առիթով Գարեգին Ա.
գնահատութեան եւ քաջալերութեան ու-
ղերձ մը յղած է մասնակիցներուն, ձեռ-
նարկը, համարելով հոգեւոր լաւագոյն
դասընթացք:

*
**

### ՄԱԿ-Ի ՅԱՏԿԱՑՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Մայիս 3-ին, Երեւանի մէջ, ընկերային
Ապահովութեան նախարար Գ. Եգանեան
եւ ՄԱԿ-ի գաղթականներու գերագոյն
յանձնակատար Թ. Բիրթ ստորագրած
են գործակցութեան պայմանագիր մը: Ա-
նով ՄԱԿ-ը գաղթականներուն համար
Հայաստանին կը տրամադրէ 2·5 միլիոն
տոլար:

## ԳՕՂՈՒԹՔ ԳՕՂՈՒԹ

ԹՈՐՈՆԹՈՑԻ մէջ, Ապրիլ 23-ին 24-ին
եւ 25-ին, զանազան ձեռնարկներով ոգե-
կոչուած է Ապրիլեան Եղեռնի 84-րդ տա-
րելիցը: Յաջորդաբար տեղի ունեցած են
աշակերտական հանդիսութիւններ, երի-
տասարդական հսկում, պատարագ, հա-
ւաքական աղօթք եւ քաղաքական հաւա-
քոյթ: Այս վերջինը տեղի ունեցած է Հայ
Կեդրոնի սրահին մէջ, կազմակերպու-
թեամբ Հայ Կեդրոնին եւ Հ. Բ. Ը. Մ.-ի
Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրո-
նին: Օրուան հանդիսավարը՝ Հ.Բ.Ը.Մ.ի
տեղական վարչութեան առենապետ՝
Հրանդ Պարտագճեան բացման խօսքը
կատարած է անդլերէն, անդրադառնալով
դարուս առաջին ցեղասպանութեան: Հա-
յերէն արտայայտած է Հայ Կեդրոնի նա-
խագահ՝ Մհեր Առաքելեան որ չեշտած է
հայ ժողովուրդի պահանջատիրութեան
[illegible]: Երիտասարդական կազմակեր-
պութեանց կողմէ խօսք առած է Նորա
Տէմիրճեան: Օրուան բանախօսը եղած է
Ճէյմս Ռասըլ որ դասախօս է ԱՄՆ-ու
Հարվարտ համալսարանը, որ խօսած է
նախ հայերէն, ապա՝ անգլերէն: Հրեայ
պատմաբանը 45 վայրկեան, պահանջ ներ-
կայացնելով Հայոց ցեղասպանութեան
ճանաչումը միջազգային ընտանիքին եւ
Թուրքիոյ կողմէ եւ Արեւմտեան Հայաս-
տանի վերադարձը Հայ ժողովուրդին:
Յաջորդաբար խօսք առած են քաղաքական
անձնաւորութիւններ քաղաքապետարանի,
դաշնակցային խորհրդարանի կողմէ,
նաեւ կուսակցական ներկայացուցիչներ:

*
**

ՊՈԼՍՈՑ Աթաթիւրք Մշակոյթի Կեդրո-
նին մէջ, Ապրիլ 20-ին եւ 22-ին յաջող հա-
մերգներ տուած է Կեդրոնական երգչա-
խումբը, հրամցնելով Տիգրան Ջուհա-
ճեանի «Լէպլէպիճի հօրհօր ազա»ն:

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

– Ահաւասիկ հիմա եկանք բուն խընդ-
րին, – դոչեց Աթիկ պէյ յաղթականօ-
րէն, – մարդ կրնայ թերեւս մէկ բարեկամ
ունենալ անկեղծ ու պատուախնդիր, բայց
նոյն խմորով չաղուած մէկ քանի բարե-
կամներ չի կրնար ունենալ ... գոնէ փոր-
ձը մինչեւ հիմա այդպէս ցոյց կուտայ:

– Ի՞նչ ըսել կ'ուզես:

– Ըսել կ'ուզեմ, որ ձեր տեսութիւնը
ճիշդ կ'ըլլար, եթէ Տիկին Թաթիկեան
միշտ միեւնոյն «բարեկամ»ին հետ տես-
նուէր հանրային վայրերը: Արդ, Ամբրո-
սիոս էֆէնտի կը յաջորդէ Գալուստ էֆէն-
տիի, որ իր կարգին, յաջորդած էր Մի-
սաք պէյի:

– Ա՛խ, այդ քու լեզուդ, – դոչեց Տի-
կին Սիրարփի, – Սատանան մարդ քու
բերանդ չձգէ:

– Սատանան յանցանք չունի, իրենք ի-
րենցմէ կուգան, բերանս կ'իյնան:

– Երեւոյթներու կամ հնթադրութիւն-
ներու վրայ հիմնուելով կին մը բամբասել
պատուաւոր մարդու գործ չէ, – ըսաւ
Տիկին Սկամպիլեան հանդիսաւոր չեշտով
մը:

– Ես ալ բացարձակապէս ձեր կարծի-
քէն եմ, – պատասխանեց Աթիկ պէյ:

– Այն ատեն ի՞նչ կը նշանակեն ձեր ը-
րած խօսքերը:

– Կը նշանակեն, որ երեւոյթներու կամ
հնթադրութիւններու վրայ հիմնուելով
չէ, որ կը խօսիմ, այլ իրողութիւններու
... դուք չէք գիտեր, թէ վերջին օրերս
ինչ անցած – զարճած է Ամբրոսիոս է-
ֆէնտիի, Գալուստ էֆէնտիի ու Տիկին
Թաթիկեանի միջեւ:

– Ի՞նչ անցած – զարճած է, – հարցուց
Տիկին Սիրարփի:

– Զլուսած խաղքութիւն մը:

– Որ միայն դուն իմացած ես:

– Ես ու ինծի հետ մէկ քանիները, բայց
այդ տեսակ բաներ ծածուկ չեն մնար, վա-
ղը ամէն մարդ պիտի իմանայ:

– Սուտ խօսքեր, թշնամիի բամբա-
սանքներ, – ըսաւ Տիկին Սկամպիլեան:

– Թո՛ղ այնպէս ըլլայ, այո՛, իրաւունք
ունիք, բոլորը բամբասանքներ են, Տիկին
Թաթիկեանը սրբուհի մըն է, առաքինու-
թեան ծաղիկ մը, հաւատարիմ կնոջ տի-
պար մը...

– Չեմ ըսեր, որ սրբուհի մըն է, բայց
վերջապէս ձեր ըսածին պէս փողոցի կին
մը չէ:

– Ես երբեք այդ տեսակ խօսք չըրի:

– Ուղղակի չըսիք, բայց այնպէս հաս-
կընել ուզեցիք:

– Ինչ որ է, քանի որ խօսքերս անախորժ
են, գոցենք այս խնդիրը ու ալ տիկին Թա-
թիկեանով չզբաղինք, – ըսաւ երիտասար-
դը ու պահ մը լռելով՝ դրպանէն սիկա-
ռեթի տուփը հանեց ու հատ մը վառեց:

Բայց խօսակցութեան այս ընդհատումը
ո՛չ Տիկին Սիրարփի եւ ո՛չ ալ Տիկին
Սկամպիլեանի գործին կուգար: Երկուքն
ալ հետաքրքիր էին լսելու, թէ ի՛նչ խաղ-
քութիւն պատահած էր Ամբրոսիոս էֆէն-
տիի, Գալուստ էֆէնտիի եւ Տիկին Թա-
թիկեանի միջեւ: Իրենց թերահաւատու-
թիւնը կեղծ էր, ու դիտմամբ որպէսզի
աւելի դրդուեն երիտասարդը իր գիտցած-
ները պատմելու:

– Մենք դիտես, որ միշտ հաճոյքով մը-
տիկ կ'ընենք քեզի, – ըսաւ Տիկին Սիրար-
փի, – միայն թէ վախ մը ունինք...

– Ի՞նչ վախ, – ընդմիջեց Աթիկ պէյ:

– Կը վախնանք, որ սխալ կամ սուտ բան
մը լսած կ'ըլլաս, մեզի կը պատմես, մենք
ալ ուրիշներուն կ'ըսենք:

– Իմ ո՞ր պատմածս սուտ ելեր է, –
բողոքեց երիտասարդը:

– Չէ՛, Աթիկ պէյը սուտ բաներ չը-
սեր, – միջամտեց Տիկին Սկամպիլեան, –
միայն թէ երբեմն կը չափազանցէ եւ կամ
կը զարդարէ:

– Լաւ ուրեմն, պատուոյս վրայ խօսք
կուտամ, որ այս պատմելիքիս մէջ ոչ չա-
փազանցութիւն կայ եւ ոչ ալ զարդարանք:
Տեղն ի տեղոք իմացած եմ ականատես
վկայէ, այսինքն բո՛ւն իսկ յոյն տանտի-
րուհիէն:

– Ձոյն տանտիրուհին ո՞վ է:

– Ճանըմ, այն ժամադրութեան տունը,
ուր Տիկին Թաթիկեան եւ Գալուստ էֆէն-
տի չարաթը քանի մը անգամ իրարու կը
հանդիպէին:

– Տեղեկութիւն չունինք ... մենք այդ
տեսակ տուներ ուրկէ՞ պիտի գիտնանք:

– Գիտեմ, որ չէք գիտեր, բայց գոնէ
լսած էք:

– Ո՛չ գիտենք, ո՛չ ալ լսած ենք, – պա-
տասխանեց Տիկին Սիրարփի վճռաբար:

– Տիկին Քաթինային ժամադրութեան
տունը չէ՞ք լսած, – պնդեց երիտասար-
դը:

– Ուրկէ՞ ուր պիտի լսենք:

– Զարմանալի բան, ուրիշ անգամներ
խօսքը անցած է ձեր տունը:

– Կարելի է, բայց չեմ յիշեր կոր, –
պատասխանեց Տիկին Սկամպիլեան: – Ինչ
որ է, խօսքդ չարունակէ:

– Այդ Տիկին Քաթինան իմ հին բարե-
կամուհիս է:

(Շար. 21)

(Շար. Ա. էջէն)

առաջին անձամբ ըլլալով Պելկրատ խնայեցաւ Մայիս 9–էն 10 լուսնալիք դիշերը:

– Զինաստան առևտրական չվումները դուռ ունէր ԱՄՆ–ի հետ, ինչպէս նաեւ մարդկային իրաւանց վերաբերող երկխօսութիւնը: Փեքինի «Ռոքիտիէն տիւ Փէօփլ»ը կը մատնանշէ «արեան տուրքը դուռ ՕԹԱՆ ունի Զինաստանի հանդէպ», չեչտելով թէ ՕԹԱՆ եւ Միացեալ Նահանգները պէտք է առանձնեն իշենց պատասխանատուութիւնները:

⁂

Բաւական պզտոր են Ռուսկովայի խորհրդարանական՝ Ֆեհմի Ականիի մահուան պարագաները: Ականի, 66 տարեկան, Քոսովոյի չափաւոր հոսանքը կը ներկայացնէր և մեռած է Մայիս 6ին Փրիսթինա (Քոսովոյի մայրաքաղաքը): Ըստ պերմանական աղբիւրներու, սպաննուած է սերպ ոստիկանութեան կողմէ: Սերպերը կը հերքեն եւ կ'ամբաստանեն ՈՒԶԿ-ի ծայրայեղ տարրերը: Կ'ըսուէր թէ Ականի ձերբակալուած էր Մայիս 6–ին, երբ կառախումբի մը մէջ էր եւ մեռած դիպուկ եղած ատենը: Դիակը գտնուած էր 30 քիլոմեթր Փրիսթինայի հարաւը: Ըստ աղբիւրներուն, կը խորհի որ սերպ ոստիկանութեան գոհն է:

⁂

Քաղաքական պեռնի վրայ Երէօսէր կը չարունակէ իր ջանքերը եւ չէ յուսահատած, հակառակ անոր որ պերմանական թերթը կը գրէր. – «Ցաջողած էինք Ռուսերը նաւ թարձացնել եւ ելանք Չինացիները ջուրը նետեցինք»: Երէօսէր տեսնուեցաւ Չերնոմիրտինի հետ որ Պելկրատէն անցնելով Մոսկուա վերադարձաւ:

⁂

ՈՒ–ԶԿ–ԲԱ–ն բացարձակապէս կը մերժէ ժէ ժէ 8–ի խաղաղութեան ծրագիրը:

⁂

Գաղթականաց վերին մարմինը էմմանական ծանր տագնապի մը սպառնալիքին տակ է, արեւմտեան պետութիւններու օժանդակութեան չդոյութեան պատճառաւ: Երեք ամսուան ընթացքին, ծախքերը գնահատուած են 143 միլիոն տոլար, բայց, միայն 78 միլիոն հաւաքուած է եւ ամբողջովին ծախսուած:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՔԱՑԻ նախկին նահանգապետը՝ Պ. Պոնէ, Մայիս 7–ի առաւօտը հացադուլի դիմած էր, բայց, հետեւելով փաստաբանին թելադրանքին հրաժարեցաւ նոյն իրիկունը: Դատաւորը հրահանգած է որ Պոնէ եւ դրասենեակի իր պետը՝ Փարտինի հոգեվերլուծական եւ հոգեբուժական քննութիւններու ենթարկուին: Գորսիքայի ճաչարանին (կամ ճաշարաններու) հրկիզումը կը չարունակէ լուրջ տագնապ մը ստեղծել քաղաքական եւ պետական շրջանակներու մէջ: Ոմանք կը չարունակեն ժոսփէնի հրաժարումը պահանջել, մինչ Պոնէ կը չեշտէ որ կառավարութիւնը ոչ մէկ մեղք ունի այս հարցին մէջ եւ հրամանատար Անրի Մաղէրի ծանրակշիռ ամբաստանութիւններէն ետք, կ'ուզէ որ դէմ առ դէմ հանդիպում մը ըլլայ:

ՅՈՎՀ. ՊՕՂՈՍ Բ. հաչտութիւն քարոզեց Պուքրէշ կատարած իր այցելութեան ընթացքին: Առաջին անգամն է որ Պապը օրթոտոքս երկիր մը կ'երթար եւ ռումէն եկեղեցւոյ Թէօքթիսթ պատրիարքին հետ, բացօթեայ մեծ պատարագ մը ետք, ողջունուեցաւ հսկայ բազմութեան մը կողմէ: Նախապէս, պատրիարքարանը խօսած իր ճառին մէջ, Ցովհ. Պօղոս Բ. չնորհակալութիւն յայտնած էր եւ «անմոռանալի այցելութիւն» որակելէ ետք իր ճամբորդութիւնը, աւելցուցած էր՝ «հո՛ս, յոյսի սեմը անցանք»: Միաժամանակ երկու կրօնապետերը կոչ ըրած են որ դէնքերը վար դրուին:

ՖՐԱՆՍԱՑԻ երկաթուղիի գործադուլը վերջ գտաւ Մայիս 8–ին, 10 օր ետք: Ընկերութեան արժած է 300 միլիոն ֆրանք:

ԻՐԱՆի մէջ զօրակցութեան ցոյցեր տեղի ունեցած են ի նպաստ թուրք երեսփոխանուհիին որ յամառած էր լաչակով Ազգային ժողով մտնել ու երդում ընել: Թուրքիոյ վարչապետը խստիւ հակազդած է այդ ցոյցին, ըսելով թէ դրացնութեան անվայել կեցուածք մըն է ատիկա եւ Իրան կը ջանայ իր գաղափարաբանութիւնը արտածել դէպի Թուրքիա: Աւելցուցած է թէ Իրան գօրավիգ ալ կը կանգնի քրտական ահաբեկչութեան: Նոյնիմաստ արտայայտութիւններ ունեցած էր նախապէս նախագահ Ս. Տէմիրէլ ալ որուն համար ընդառաջի բողոքով պատասխանած է Թեհրան:

ԹՈՒՐՔ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ուժեր Հաքքեարիի մօտ գնդակահարած են վեց քիւրտ երիտասարդներ եւ անչափահաս մը, ապա դլխատած անոնցմէ մէկը: Քրտական օրաթերթը լուրը տալով կ'ըսէ թէ անոնք չրջակայ գիւղէ մը հեղուկ վառելանիւթ ծախելու գացած էին հոն ու բաբթարոսապար սպանուեցան պինեալ ուժերու կողմէ որոնք իրենց գոհերը որպէս ահաբեկիչ ներկայացուցին:

## ՓՈՒՏՊՈԼ
## Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Բ. դասակարգի մրցումներու կարգին, Վարանս 1 – 0 յաղթեց Լաւալի այս վերջնոյն դաշտին վրայ: Ա.ժամ 18–րդ է 37 կէտով: Գլուխն է միշտ Սէն – Ժէրմէնէն 67 կէտով, 20–րդ եւ վերջին է Պովէ 32 կէտով:

## Ի ՅԻՇԱՏԱԿ

ՆԻՄ. – Պ. Սագօ կէտիկ իր սիրեցեալ կնոջ՝

Լկլաւթիա – Լիւսէթ կէտիկի

մահուան Դ. տարելիցին առթիւ (1995, Մայիս 11) 1000 Ֆր. կը նուիրէ «Ցառաջ»ին:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի, Մայիս 16, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Դպրոցասէր Տիկնանց վարժարանի հանգուցեալ խնամակալներուն համար, ինչպէս նաեւ հանդուցեալ սանուհիներուն, Փարիզի Սուրբ Ցովհաննէս – Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ:

## Ի ՅԻՇԱՏԱԿ

Սիրելի ընկերուհի Մարի Դաւիթեանի մահուան քառասունքին ի յիշատակ Սեդա Սիմոնեան (կառաան) 250 Ֆր. կը նուիրէ «Ցառաջ»ին:


**Fête Paroissiale**

LUNDI DE PENTECOTE
24 MAI

AU PROGRAMME :

11h30 : *Culte;*

A partir de 12h : *Repas*
*Spécialités arméniennes:*

Stands :
*Pâtisseries arméniennes*
*Librairie, Brocante, etc...*
*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE ARMENIENNE

55, avenue Victor-Cresson /
28, avenue Bourgain
92130 Issy-les-Mlx


## ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

ԱՌԹԻԻ

եւ

Նախատօնակ
Սրբոց Կուսանացն
Հռիփսիմեանց եւ Գայիանեանց

*Կազմակերպութեամբ՝*
*Փարիզի*
*Ս. Ցովհ. – Մկրտիչ Մայր Տաճարի*
*Տիկնանց Ցանձնախումբին*

Կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին

*Առաջնորդարանի*
«Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ
15, rue Jean-Goujon— Paris 8e

*Մուտքերու մասնակցութիւն՝*
Participation aux frais

Pour tous renseignements appeler :
*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*
01 – 43 _ 59 _ 67 _ 03
01 _ 42 _ 59 _ 23 – 33
*կամ՝*
01 – 46 _ 62 _ 01 _ 29

# -ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 13, Խ. օր Ցիսուց:
Տօն է Համբարձմանն Քրիստոսի
Մանուկներու հաղորդութեան օր
*Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի:*
*Կը պատարագէ՝*
*ԱՒԵՏԻՍ Ա. ՔՀՆԱ. ՊԱԼԸԳԵԱՆ*
*Կը հրաւիրուին բոլոր «Քրիստոնէական դաստիարակութեան» միջոցաւ Հաղորդութեան պատրաստուած մեր մանուկներն ու դպրոցներու աշակերտները մասնակցիլ պատարագին եւ Հաղորդուիլ:*
*Այս հետեւողութեամբ, այսօրուան պատարագը՝ դպիրներու կողքին՝ պիտի երգեն Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի եւ Միօրեայ դասընթացքներու աշակերտները:*

## Ս· ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՄԻ

Հինգշաբթի Մայիս 13
*Խ· օր Ցինանց· Համբարձման Քրիստոսի:*
*Պատարագ ժամը 10–ին:*
*Այս օրը յատկացուած է նաեւ մանուկներու հաղորդութեան:*

## Ս· ՑԱԿՈԲ — ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 13, տօն է Համբարձման:
*Այս առթիւ Լիոնի Ս. Ցակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10–ին, պատարագ կը մատուցուի:*
*Օրուան պատարագը կը մատուցանէ՝*
*ԻՍԱՀԱԿ ՔՀՆԱ. ՀԷՔԻՄԵԱՆ*


Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935



ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ
1918 ՄԱՅԻՍ 28
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

**ՁԱՁ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ**

*կազմակերպութեամբ՝*
*Հ.Ց.Դ. «Զաւարեան» խումբին*
Ֆրանսահայ Կապոյտ Խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրբենկիպեան"
*մասնաճիւղին*
*մասնակցութեամբ՝*
ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ–ի
եւ ԱՆԻ Նուագախումբին
Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ
Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX
Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

**L'ASSOCIATION ARMÉNIENNE D'AIDE SOCIALE**
RECHERCHE
pour la Maison de Retraite de Montmorency
1) INFIRMIERE PLEIN TEMPS
2) AIDE SOIGNANT(E)
A partir de Juin 1999
Envoyer C.V. à la Maison de Retraite arménienne
44-50, avenue Charles-de-Gaulle
95160 MONTMORENCY

**ESPOIR POUR L'ARMENIE**
organise
un Voyage de tourisme humanitaire
DU 12 AU 19 JUILLET
— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.
*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**

1879-1999
120ème anniversaire de l'école TEBROTZASSERE
l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
ET
l'ASSOCIATION DES DAMES ARMENIENNES
AMIES DES ECOLES TEBROTZASSERE
PRESENTENT
*La Chorale Koghtan et la Chorale de l'Ecole*
*dirigées par Haïg SARKISSIAN*
**dimanche 16 mai à 17 heures**
salle Cortot : 78, rue Cardinet — 75017 PARIS
(métro : MALESHERBES)
Participation aux frais — Adultes: 100 F - Enfants: 50 F
Renseignements & réservations :
ECOLE TEBROTZASSERE: 01 43 81 01 72 — U.G.A.B.: 01 45 20 03 18

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

ՀԱՅՐԱՆԻՔ

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 12
MERCREDI
12 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·639 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.639

# ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔՈՍՈՎՕ

## ՊԵԼԿՐԱՏ ՄԱՍԱՄԲ ԿԸ ՔԱՇԷ ԻՐ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԸ

## ԱՐԵՒՄՈՒՏՔԸ, ՄԱՆԱՒԱՆԴ ՈՒԱՇԻՆԿԹՐԼՆ ԹԵՐԱՀԱՒԱՏ ԵՆ

### ՄԱԿ ԶՈՒԶԵՐ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ՋԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

Խորամանկ, անվստահելի մենատէր մը ըլլալու անպատեհութիւններէն մէկն ալ այն է որ ոչ ոք հաւատաք կ'ընծայէ Միլոսեւիչի լսածին կամ ըրածին, կամ ընելիքին: Այսպէս, Մայիս 10–ին, Պելկրատի մամուլի Թանեուկ գործակալութիւնը կը յայտարարէր որ «կարծեցեալ ՈՒ.ՋԷ.ՔՍ-ի դէմ գործողութիւնները վերջ գտած ըլլալով» Պելկրատ սկսած է մասամբ քաշել զինուորական եւ ոստիկանական իր ուժերը: Այս լուրը գործակալութիւնը կուտար հիմնուած բանակի հրամանատարութեան մէկ դեկոյգին վրայ: Ասիկա, անշուշտ, զրական երեւոյթ մըն է ինքնին եւ պայմաններէն մէկը ՕԹԱՆ–ի, զբաղեցնելու համար իր ամրակոծութիւնները, բայց, հարցը հոն է որ արեւմտեան կողմն աշխարհի եւ մանաւանդ Ուաշինկթընն ոչ ոք կը հաւատայ: Նոր խաղ մը կը նկատուի Միլոսեւիչի կողմէ, օգտուելով Զինաստանի դեսպանատան ամրակոծութեան առեղծած հակա–օթան մթնոլորտէն: Հարկ է, կ'ըսուի, վստահ ըլլալ, կարենալ սուզել: ՕԹԱՆ–ի բանբերը՝ Ճեմի Շիի կ'ըսէ. – «Եթէ նախագահ Միլոսեւիչ խոկացած էր հրահանգած է Քոսովոյի իր ուժերուն մասնակի նահանջը, ատիկա փաստն է որ ՕԹԱՆ–ի օդանաւային արշաւանքը սկսած է իր ազդեցութիւնը ունենալ եւ նախագահ Միլոսեւիչ կը զգայ»: Բայց եւ այնպէս թէ՛ տահաւատաւորը չատ են, ի մասնաւորի Գերմանիա եւ Մեծն – Բրիտանիա: Գերմանիոյ Արտաքին նախարարին համար՝ փարեփոխել ռազմավարութիւն մը «քարոզչական խաղի մը պատճառով կոպտօրէն անխորհուրդ կ'ըլլար»: Իսկ, Տիկին Օլպրայթ անբաւարար կը գտնէ բաղդատմամբ ՕԹԱՆ–ի դրած հինգ պայմաններուն: Շիրաք ալ, որ Հելսինքի է, կրկնած է հինգ պայմաններու անհրաժեշտութիւնը, չեշտելով. – «Ինչ որ կ'անցնի կը դառնայ Քոսովօ, այդ անունին արժանի ոչ մէկ եւրոպացի կըրնայ ընդունիլ: Բարբարոսութեան դիմաց, եւրոպան անթերի զօրակցութիւն մը ցոյց տուաւ, հիմա, պէտք է այդ տադնապին դասերը քաղէ»: Մամուլի մէջ, կը չարուներկին բաղմանալ այն յօդուածները որոնք ցոյց կուտան որ համոզիչ չեն այս տեսակէտները: Տը Կօլի նախկին երեք գործակիցներ («Ֆիկարօ», Մայիս 11) կը բացատրեն որ Ֆրանսա պատերազմի մը մէջ է որ իր կենսական շահերուն չի վերաբերիր, յետոյ միշտ կը կրկնուի նոյն տրամաբանական տարակուսութիւնը: Եթէ, Միլոսեւիչի վարուելակերպը անհանդուրժելի էր, ինչպէս ամէն օր կ'ըսուի մաշած յանկերգի մը նման, եւ Քոսովոյցիներու վիճակը սարսափելի, ինչո՞ւ անտեսել որ ան կը նմանի Թիպէթցիներու եւ Քիւրտերու կացութեան եւ դեռ Պելկրատ ընդունած էր իր հողամասին վրայ Օ – ԷՍ – ՍԷ – Բ–ի դէմքերը:

– Քենքին կը ջանայ մեղմացնել իր բարկութիւնը, ձգելով հանդերձ որ որոշ գոյքեր չառուծուին Փեքինի ամերիկեան դեսպանատան դէմ, բայց եւ այնպէս չի զոհանար դատակնութիւններով եւ «սորի»–ներով: Համոզուած է որ դաւ մը կայ եւ թէ ամբակոծութիւնը դիտումնաւոր էր: Ամէն պարագայի մէջ, Ազահովութեան Խորհուրդը մերժեց դատապարտել Զինաստանի դեսպանատան ամբակոծութիւնը: Այս «սխալին» վերջին եւ վերջնական բացատրութիւն մը տուաւ ԱՄՆ-ու Պաշտպանութեան Նախարարը՝ Տոհէն: Ան ըսաւ որ, ժամանակաւրջան, ՕԹԱՆ հին քարտէսներ ունէր միայն եւ օգտչուն Պելկրատի 1992–ի քարտէս մը գործածելէ է, երբ Զինաստանի դեսպանատունը հոն չէր: Այսքանը չի բաւարարեր Զինաստանը, որու նախագահը յայտարարած է որ դեսպանատան յարձակումը «դիւանագիտական պատմութեան մէջ չինական ինքնիշխանութեան հաղուագիւտ բռնաբարում մըն է եւ մանաւանդ բարբարոս արարք մը»: Գլինթըն նոյնն նեղսրտութիւն յանդրած է նամակով (նախագահ Եանկ Զէմին մերժած էր հեռաձայնով հետը խօսիլ) եւ բացատրած թէ ինչո՛ւ կը ամբակոծեն Պելկրատը:

– Ռուկովա, Քոսովոյի չափաւորը ղեկավարը, որ միշտ Հոմի է եւ ընդունուեցաւ Պապին կողմէ, Մայիս 10–ին յայտարարեց թէ Քոսովօ ալ պէտք է անկախ ըլլայ ինչպէս Խրուատիա եւ Պոսնիան: Նախապէս, կողմնակից էր 3 տարուան փոխանցման չրջանի մը: ՈՒ–ՋԷ–ՔՍ–ն, թէեւ որեւէ հաւատաք չունի Ռուկովայի նկատմամբ եւ արտաքսհմանի իր մէկ ներկայացուցիչը այս ամրողջին մէջ «արեւմտեան եւ արեւելեան մեզակցութիւն մը» կը տեսնէ:

– Պելկրատ բողոք մը ներկայացուցած է, Ապրիլ 29–ին, Լա Հէյի արդարադատութեան Միջազգային Ատեանին առջեւ ՕԹԱՆ–ի 10 պետութիւններու դէմ որպէսզի դադրեցնեն ամբակոծութիւնները:

– Եուկոսլաւիոյ նախկին փոխ – վարչապետ՝ Տրաքովիչ, որ հեռացուեցաւ կառավարութենէն, հարցազրոյց մը տուած է «Ֆիկարօ»ի (Մայիս 11) ուր «յատուկ ինքնավարութեան մը» սկզբունքը կը պաշտպանէ Քոսովոյի համար: Կ'ըսէ թէ Եուկոսլաւիա չկայ այլեւս, սերպ երկու փոքր պետութիւններ կան.– Սերպան եւ Մոնթենեկրօն:

– Վիճաբանութիւն մըն ալ ծագած է Քոսովօ եւ Քոսովա հնչումներու մասին, որովհետեւ առաջինը կը պատկանի Սերպերուն, երկրորդը՝ Ալպանացիներուն, ուրեմն հարկ է կողմնակցութիւն չարտայայտել, ուրեմն կ'առաջարկուի միայն Քոսով ըսել:

## ՇԻՐԼԻԻ ՓՈԽ–ՋԱՂԱՔԱՊԵՏԸ ՎԱԶԳԷՆ ՊԱՐԸՆ

Մայիս 3–ին, Շիլլիի քաղաքապետարանի չէնքին մէջ, համայնքը եւ ի մասնաւորի տեղւոյն Հայկական համայնքները նաեւ ներկայացուցիչները մասնակից եղած են անմոռանալի երեւոյթի մը: Շիլլիի նորընտիր քաղաքապետը՝ Մուսթաֆա Սարըկիւլ մամուլի ասուլիս մը սարքած է Հայկական հաստատութեանց ներկայացուցիչներուն համար եւ այդ առթիւ յայտնած է որ քաղաքապետարանի փոխանորդ նշանակած է Վազգէն Պարընը: Յայտնած է նաեւ որ նահանգային ընդհանուր խորհուրդի անդամ ընտրուած է Ֆերիւպիւզի ազգայիններէն՝ Սեդրակ Կիւլէը: Պատմական դէպք մը կը նկատուի այս մէկը, որ թէ զարմանք թէ ուրախութիւն պատճառած է:

## Շուշիի յաղթանակին հօբելեանակը Հայաստանի դեսպանատան մէջ

— ● —

Շուշիի ազատագրումին հօբելեանակը նշուեցաւ Մայիս 10–ի երեկոյեան, չուրջ 3 – 4 տասնեակ հրաւիրեալներու ներկայութեան: Հրաւիրուած էին լրատուիներու ներկայացուցիչներ ու դեսպանատան բարեկամներու միութեան անդամներ: Փարիզի դեսպանը է. Նարպանտեան ողջունեց ներկաները ուրախութիւն արտայայտելով Շուշիի յաղթանակին որ արդիւնք եղած էր ազգային միասնութեան: Ներկայիս, զինուորականէն հօր դիւանագիտական պայքարին ժամանակն է, ըսաւ. բան մը որ նոյն միասնութիւնը կենսական կը դարձնէր: Ապա ծանրացաւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան ճորտահաստատ ներկայացուցչութեան նուիթապէս զօրակցելու հրամայականին վրայ որպէսզի կարելի ըլլար ծանօթացման գործը: Աւելի կենսական կարեւորութիւն ունեցող բան էր երբ նկատի առնուէր Թուրքիոյ անհամեմատական կերպով հզօր քարոզչական մեքենային Ազերբէյճանի բերած անդնահատելի նեցուկը:

Իրեն յաջորդեց ԼՂՀ ներկայացուցչուհին զրասենեակին պատասխանատու Արտակ Յարութիւնեան որ ֆրանսերէն տեղեկատուութիւն մը կատարեց: Ըսաւ թէ ոչ միայն Ֆրանսայի մէջ, այլեւ ամբողջ Եւրոպայի, պէտք էր քարոզչական աշխատանք տանիլ, մինչդեռ զրասենեակը միայն 40 անդամ ունէր իր գործունէութեան հարկաւոր պիւտճէն ապահովելու համար: Առաջարկեց որ Շուշիի ազատագրութեան օրը՝ Մայիս 9–ին ամէն մարդ այդ օրանկան յատկացնէ քաղաքին կառուցումի հիմնադրամին: Ծրագիրը կար նաեւ զրասենեակին կողմէ թերթ մը հրատարակելու, ինչ որ նոյնպէս կախում ունէր նիւթական միջոցներէ:

Երեկոյթը աւարտեցաւ Շուշիի համար կառուցներու գումարին մէկ տեսագրութեամբ:

## ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ԳԱՆՆԻ ՓԱՌԱՏՕՆ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՑՔ ԱԼԷՆ ԹԷՐԶԵԱՆԻ ՀԵՏ

Շարժանկարի Գաննի Փառատօնին առթիւ (Մայիս 12) մամուլը լայն արձագանգներ կուտայ: «Մաչ» չարաթաթերթը ընտրած է չորս արտադրողներ, զրոս կ'ուզակէ «Ֆրանսական չարժանկարի հրացանակիրները» եւ որոնց չարքին է Ալէն Թէրզեան: Ան կը բացատրէ թէ ուրկէ՞ ունեցած է այդ կոչումը: կը պատմէ որ մեծ սէր ունեցած է սինեմայի հանդիպ եւ ամէն ձեւով կ'ուզէր իրականացնել իր երազները: 15 – 16 տարեկանին բախտն ունեցած է հանդիպելու Ժան – Փօլ Պելմոնտոյի, որ առիթ տուած է իր կոչումը իրականացնելու, երկրորդ բախտը եղած է Գլօտ Լըլուշի հետ հանդիպումը որու մօտ սորված է արտադրութեան զաղտնիքները: Ապա, Ա. Թէրզեան կը մանրամասնէ իր արհեստը, որուշ ֆիլմերու մեծ յաջողութիւնը: Եզրակացութեան մէջ, կ'ակնարկէ այն վտանգներուն որոնք կը սպառնան արտադրողին: Շատ են, կ'ըսէ, անանկացած արտադրողները որոնք առասպելական զարճած են եւ մեռած առանց մէկ սանթիմի:

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 10 / 11)

### ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 7–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼՂՀ ՄԷՋ

Երեւանի մէջ Մայիս 8–ին, զանազան նախաձեռնութիւններով նշուած է Շուշիի ազատագրման 7–րդ տարեդարձը եւ Երկրապահի Օրը: Առաւօտեան ժամը 10–ին, մայրաքաղաքի «Ցաղթանակ» զրօսայդիէն դէպի Եռաբլուր չահերով երթ մը կազմակերպուած է: կէսօրին Ցաղթական Կամարին մօտ զետեղուած են ծաղկեպսակներ, որմէ ետք Սեւենեկային Երաժշտութեան Տան մէջ տեղի ունեցած է տօնական համերգ: Նոյն օրը, Նկարիչներու Միութեան մէջ բացումը կատարուած է «Հայրենիքի պաշտպանները կերպարուեստում» ցուցահանդէսին:

ԼՂՀ–ի մէջ եւս նշուած է Ցաղթանակի եւ ԼՂՀ պաշտպանութեան բանակի օրը եւ Շուշիի ազատագրման 7–րդ տարեդարձը: Մայիս 8–ին Ազգ. Ժողովի յատուկ նիստը նուիրուած է տարեդարձին: Շնորհաւորական խօսք արտասանած են ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասեան, Ազգ. Ժողովի նախագահ Օլեգ Եսայեան, Արցախի Թեմի առաջնորդ Պարգեւ Եպիսկ. Մարտիրոսեան, պատերազմի վեթերաններ: Նիստի վերջաւորութեան խումբ մը զինուորականներ պարգեւատրուած են «Մարտական Խաչ»ով եւ «Արիութեան համար» ու «Շուշիի ազատագրման համար» մետալներով: Տօնական հանդիսութիւնները չարունակուած են նաեւ Մայիս 9–ին, Վերածնունդի հրապարակը, Ստեփանակերտի մարզադաշտը եւ այլուր տեղի ունեցած համերգներով:

*
**

### ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Երեւան զացած է Մեծն – Բրիտանիոյ խորհրդարանէն արտաքին կապերու յանձնաժողովի պատուիրակութիւն մը: Անոնք հանդիպումներ ունեցած են Արտաքին Գործերու նախարար Վ. Օսկանեանի եւ Ազգային Ժողովի նախագահ Ա. Յարութիւնեանի հետ: Նախարարը խօսելով Ղարաբաղի հարցին մասին, կրկնած է թէ Մինսկի խումբին վերջին առաջարկներուն ընդառաջելով Հայաստան անգամ մը եւս փաստը տուած է չինիչ եւ ճկուն մօտեցումի մը, մինչ Ադրբեջան կը չարունակէ անգիջող կեցուածքը պահել: Տեսակցութեան նիւթ եղած են Հայաստան – Եւրոպա փոխ – յարաբերութիւնները ալ:

Մայիս 10–ի բրիտանական պատուիրակութիւնը ընդունուած է Ազգային Ժողովի նախագահին կողմէ որ ներկայացուցած է բնտրութեան պատրաստութիւնները, ապա անդրադարձած Ռուսաստանի հետ Հայաստանի չարաբերութիւններուն ընդգծելով չեշտած է թէ ուզուած չեն որեւէ երրորդ կողմի դէմ:

## ՇԱՐԺԱՆԿԱՐ

### ՖՐԱՆՍԱՀԱՅԵՑ ԽՈՒՄԲԵՐ

*Փարիզեան Շրջան*
Հ·Մ·Ը·Մ· Ֆրանս – Էթիւտիան Մարթինիէ 1 – 0
Լը Փերէօ – Ա·Ս·Օ· Արմէնիէն (Խսկ) 1 – 1
Իւ·ժի· Արմէնիէն (Ալֆորվիլ) – Տամարի 0 – 1
ԷՖ· Սէ ԱՒԱԿՍ (Արնուվիլ) – Պոմոն 3 – 1

*Լիոնի Շրջան*
Հ·Մ·Ը·Մ· Լիոն Տէսին – Հերիէօ 1 – 1

*Իզէրի Շրջան*
Հ·Մ·Ը·Մ· Վիէն – Ֆեզէն 3 – 1

*Տրոմ–Արահէլի Շրջան*
Ալէքս ժի· Էս – Հ·Մ·Ը·Մ· Վալանս 0 – 5

*Պուշ–տիւ–Ռոնի Շրջան*
Ա·Էս·Փէ·Թէ·Թէ Մարսէյլ – Հ·Մ·Ը·Մ· Արծիւ 1 – 0

# ՆԱՄԱԿ (ՈՋ ՄԵՐ) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

*Հաւաքականութեան մը ոչ պաշտօնական հաստատէն կենդանի պատկերներ ունենալու լաւագոյն աղբիւրներէն են մամուլին մէջ տեղ գտած նամականիի էջերը: Պարզ է որ այդ բաժիններուն ղրկուած նամականիները չափազանց մեծամասնութեամբ դժգոհութիւններ, բարկութիւններ կ'արտայայտեն: Կերպով մը պոռթկումները պարպելու, առանց քով չառ թէական հետաքրքրութիւն մը դնելու մղումը դրել կուտայ գանոնք: Այդ անկիւններուն մէջ տեղ կը գտնեն ընկերային կեանքի մանրամասնութիւններ որոնք ոչ մէկ կերպով արձագանգ կ'ունենային մամուլէն: Առաջին ակնարկով չատ անձնական թնոյթի այդ մանրամասնութիւնները յաճախ բաւական իրապաշտ գիծերով կը պատմեն փողոցի, չուկայի մարդոց առօրեան, իր խնդիրներով, երբեմն նաեւ անակնկալ ուրախութիւններով:*

*Հայաստանեան մամուլին մէջ 88-էն անմիջապէս ետք նամականիի չատ հետաքրքրական բաժիններ ունէր պատանիներու չարաթաթերթ «Կանչ»ը. հոն պատանեկան դիւրիներով երբեմն չատ հասուն խնդիրներ կը ներկայացուէին, անպրպարծներ, մտածումներ գրի կ'առնուէին: Ջափազանցութիւն չէ ըսել որ մեծ փոփոխութիւններու այդ շրջանին մտայնութիւններու, մօտեցումներու, կեցուածքներու դժուարին անցքին մէջ, չատ հանօրէն ոչ միայն պատանիներուն համար, կարեւոր դեր կատարեց այդ չարաթաթերթը: Անոր պատանի գրողները կարդալով, մարդ վստահութիւն կ'ունենար որ առողջ յայտրդ սերունդ մը ունենալու գործը անկարելի պիտի չըլլայ Հայաստանի համար: Ոչ ոք անչուչտ կ'երեւակայէր այդ օրերուն թէ տասնամեակ մը չբոլորած, այնքան յոյսեր ու լաւատեսութիւն պայթած փուչիկներու պիտի վերածուէին:*

*Նամականիի գրեթէ կանոնաւոր բաժին մը ունի »Գարուն» ամսաթերթն ալ, «Լուսաւորիչ 15» խորագիրով որ հասցէն է թերթին: Հակառակ որ «Գարուն»ը առաւելաբար գրական պարունակով թերթ է, նամականիին հասած գրութիւնները կը չօշափեն բազմազան հարցեր:*

*Ընթերցողներէ նամականիներու պարբերաբար տեղ տուող մամուլի անուններէն է «Հայաստանի հանրապետութիւն»ը: Ընդհանրապէս միայնակ ծերերու, դժուար կացութեան մէջ գտնուող թոչակառուներու հարցերը հանրութեան, կամ պատկան իշխանաւորներու չանճնելու նպատակը հետապնդող էջերը լոյս կը տեսնեն այդ սիւնակներուն մէջ:*

*Այս կարգի աւանդութեամբ ամէնէն հարուստը «Իրաւունք»ն է սակայն. պարզապէս տեղ տալէ զատ, անոր խմբագրութիւնը հոգածութիւնն ալ ցոյց կուտայ ընթերցողներու հարցումները հասցէատէրերուն հասցնելու եւ պատասխան ուզելու. եւ պատասխաններն ալ հարցումներուն հետ կը տրուին այդ ծառայութեան յատկացուած թիւերու մէջ:*

«Հայաստանի հանրապետութեան» (Ապրիլ 16) ուղղուած նամակ մը լոյս տեսած է, «Նամակ խմբագրութեան» խորագրով: Անիկա քիչերէն է այդ կարգի սիւնակներու մէջ ընթերցողին ներկայացուածներէն, քանի որ ներքին կեանքի ցաւոտ կէտ մը չեչտելով չի բաւականանար եւ «դուրս»ին ուշադրութեան ալ բաներ կը յանձնէ: Նամակագիրը Երեւանի թիւ 119 դպրոցին տնօրէնն է, կը կոչուի Հ. Կարապետեան: Բաւական զարմանալի է նկատել որ առաջին պարբերութիւնը ուրախութիւն մը կ'արտայայտէ: Կորսուած կարծուած բան մը վերագտնելու ուրախութիւնն է ան: Հ. Կարապետեան այդ զգացումը ունեցած է իր վարժարանին ղրկուած գիրքերը մաքսային վարչութեան հրաւէրով օգակայանէն առնելու ընթացքին: Ինչ որ դուրսին ուշադրութիւնը կ'ենթադրէ, այդ գիրքերուն Ֆրանսայէն ղրկուած ըլլալու պարագան է: Այսինքն, բարեսիրական գործունէութեան դաշտն է որ անգամ մըն ալ ինկած է փչոտ տեղեր:

Դպրոցին տնօրէնին գրածին համաձայն, իրենց կամքէն անկախ պատճառներով նշուած պայմանաժամէն 2 օր ուշ կ'երթան գիրքերը առնելու: Իսկ տուիկ պատճառ կ'ըլլայ որ մաքսատան աշխատակիցները հարիւր հազար դրամ տուգանք պահանջեն: Տնօրէնը եւ իրեն կերակցողները ճարահատ կ'երթան մաքսային վարչութեան պետը դտնելու: Անոր քով գիրենք կը գարմացնէ նախ անձին «ծայր աստիճան բաղաճավարի վերաբերմունքը, դիմացինին ուշադիր լսելու եւ հասկանալու կարողութիւնը»: Ան գիրենք մտիկ ընելէ եառ անմիջապէս կը ջնջէ պահանջուած տուգանքը ու հարկաւոր կարգադրութիւնը կ'ընէ որպէսզի դպրոցին ներկայացուցիչները առանձին իրենց ղրկուած ծրարները:

Այս բարեդէպ կարգադրութիւնը այնքան մեծ ազդեցութիւն կը գործէ անոր էչերին վրայ որ պարտք կը նկատէ հրապարակաւ գոհունակութիւն ու շնորհակալութիւն յայտնելու:

Ինչ որ ուշագրաւ է եւ բաւական բան կ'ըսէ դուրսի ընթերցողին, նախ այն զարմանքն է որ կը պատճառէ քաղաքավար պաշտօնեայի մը գոյութիւնը. ապա անոր մարդկային յատկանիշը: Կարդալէ ետք Հ. Կարապետեանի տողերն ու անոնց աւարտին յայտնուած երախտագիտութիւնը, անկարելի է հարց չտալ թէ իրա՞ւ, այդքան չնաչխարհի՞կ արարած է «քաղաքավար մարդ» կոչուածը Հայաստանի պաշտօնէութեան մէջ: Ա՞յդ աստիճան այլասերած է հայաստանեան ընկերութիւնը:

Ինչ կը վերաբերի բուն խնդրին, նախ զարմացնող է որպէս բարեսիրութիւն ղրկուած դպրոցական դասագիրքերու համար այդքան դիւրութեամբ 100 հազար դրամի տուգանք պահանջելու երեւոյթը: Յայտնապէս, օրէնքով պահանջելի չէ այդ գումարը, քանի որ նոյնքան դիւրութեամբ ալ ջնջուած է պահանջողին վերադասին կողմէ:

Անկարելի չէ նամակին ընթերցումէն եառ մտածել ծանօթութեան, բարեկամութեան ազդակին մասին. չի՞ կրնար մաքսային վարչութեան պետին ի նպաստ քարոզչական փոքր ժեսթ մը ըլլալ թիւ 119 դպրոցին տնօրէնին նամակը: Եղած են նման օրինակներ: Նոյնիսկ նման վարկածի մը հեռանկարը ոչինչ կը փոխէ նամակին էական կէտէն. յատկապէս Սփիւռքէն ընթերցողներու համար, որոնք երկկ դիրք ղրկած են, վազն ալ կրկին դէղ կամ հարկաւոր որեւէ բան պիտի ղրկեն: Ամէն տեսակ ենթադրութիւններէ, մտածումներէ առաջ ու եառ կը մնայ այդ էական կէտը. այն որ երկու օրուան յապաղում մը պատրուակ կը ծառայէ որպէս նուէր ղրկուած դիրքերու համար հարիւր հազար դրամ «տուգանք» պահանջելու...:

ԱՐՓԻ ԹՈՓՈՁԵԱՆ

## ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՅ – ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայաստան – Ֆրանսիա» ընկերութիւն
Երեւան, 1999

# ԳԻՐՔ, ՈՐԸ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ԱՄԷՆ ՄԻ ՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

## (ՈՒՇԱԳԱԾ ԿԱՐԾԻՔ)

*Վերջերս Ֆրանսիացի նախկին դործընկերներից մէկը, որն իմ տարիքն ունի եւ ուրեմն ինձ նման անցել է կանխաթոշակի (préretraite), պարծանքով պատմում էր, թէ որոշել է իր տոհմածառն ուսումնասիրել եւ որ պրպտումներն իրեն հասցրել են մինչեւ ԺԵ. դար:*

*Նա պատմում էր իր նախնիների մասին, իսկ ես զարմանքից ապշած երեսին էի նայում, մտքիս մէջ հաշուելով, որ մարդը պարզել է իր ընտանիքի չուրջ հինգ հարիւր տարուայ պատմութիւնը: Փորձում էի հասկանալ լսածիս նչանակութիւնը: Իսկ նչանակութիւնն այն էր, որ այս Փուարիէ ազգանունով «միջին» Ֆրանսիացին իր ընտանիքի պատմութեան մէջ ետ էր գնացել 15–16 սերունդ (ընդունուած է, որ սերունդները փոխւում են 30 տարին մէկ) եւ որ այս ժողովրդի պատմութիւնը ոչ ոք չի գողացել, հրդեհի տուել կամ ուղղակի ոչնչացրել, այլ դարերից ի վեր խնամքով պահպանւում է Պետութեան դիւաններում:*

*Մարդը միտքս պղտորեց, ես էլ ցանկութիւն ունեցայ իմանալու թէ ո՞րտեղից եմ գալիս...:*

*Որոշեցի անպայման պրպտել, բայց աւ՛ղ, ճանապարհս անհաւատալի կարճ եղաւ եւ քանի որ կարճ է, պատմեմ:*

*Մնուել եմ վերջին աշխարհամարտի նախօրէին Արարատի փէչերին՝ Արտաչատում:*

*Հանդուցեալ հայրս պատմում էր, թէ մեր նախնիները սալմաստցիներ են, իսկ մայրս յիշում է, որ իմ ծնուելու օրերին հոդին աւանդել է հօրս, այսինքն իր ամուսնու մեծ–հայրը, որին Մաչատուր էին կոչում:*

*Այսքան: Այս Մաչատուրեանից այն կողմ... ոչինչ:*

*Հայկական Հանրապետարանի օգնութեամբ պարզում եմ, որ Սալմաստը գրանուելիս է եղել Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Զարեհաւան գաւառում, Կապուտան (Ուրմիա) լճից 18–20 քմ. արեւմուտք: Իմանում եմ նաեւ, որ սալմաստցիները 1828–30 թթ. Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքուած Թուրքմէնչայի պայմանագրով գաղթել են Ա-րարատեան Դաշտ, հիմնելով այն գիւղը, ուր ես պատիւ եմ ունեցել աշխարհ գալու: Հաշուարկներս ցոյց են տալիս, որ այս գաղթականների մէջ է եղել Մաչատուր պապիս հայրը, որի մասին ինչ խօսք, որ ոչինչ յայտնի չէ: Նորից եմ հաշիւ անում: Ստացւում է չորս սերունդ, որից չորրորդի անունն իսկ չգիտեմ: Անցնելով մօրս կողմը, որը Հայաստանի հիւսիսի՝ Լոռուայ գաւառի ծնունդ է, մօտաւորապէս այդքան էլ այս կողմից եմ կարողանում ետ գնալ: Բայց թէ իմ խեղճ ու կրակ չորս սերունդն ո՛ւր, Ֆրանսացի ընկերոջս 16 սերունդն ուր: Ինքս ինձ մխիթարում եմ նրանով, որ ես դեռ գոնէ չորս սերունդ ետ գնացի, իսկ ուրիշնե՛րը...*

*Զարդից, կողոպուտներից մազապուրծ եղած գաղթական ազգիս ներկայացուցիչներից քանի՞սը կարող են գոնէ չորս սերունդ ետ գնալ իրենց պատմութեան մէջ:*

*Գողացել են մեզնից ե՛ւ մեր հայրենին եւ մեր պատմութիւնը: Ի՞նչ դիտենք մեր պատմութեան մասին, բացի մի քանի հայ կամ յոյն պատմիչների յաճախ հէքեաթաբարոյ պատմութիւններից եւ կամ մի քանի հարտարապետական կոթողներից: Անի, Ախթամա՞ր: Կարելի է չհասկանալ, որ եւս երկու–երեք սերունդ եւ սրանք էլ կամ պիտի ոչնչացուեն եւ կամ լաւագոյն դէպքում թուրքացուեն: Կարսի «Աւագեկոցն» արդէն մզկիթ է, տեսնենք Ախթամարի հերթը երբ է գալու... Մեր պատմութեան իրական, առարկայական վկաները, թաղուած են այսօր Թուրքիային պատկանող հողերի տակ:*

*Դեռ նախորդ դարի վերջին Ֆրանսիացի հնագէտ, ազգագրագէտ եւ պատմաբան Ժագ տը Մորկանը ահա թէ ինչ է գրել Արեւմտեան Հայաստանի տարածքի հնագիտական հետազօտութիւնների վերաբերեալ.*

«Au point de vue archéologique, nous ne connaissons absolument rien de toute la contrée comprise à l'ouest du 42ème degré(*) de longitude jusqu'au centre de l'Asie Mineure, c'est-à-dire en ce qui regarde les districts d'Akhalkhalaki, Akhaltzikh, Kars, Artvin, Erzeroum, Erzindjan, Karahissar, de la chaîne pontique du Lasistan...Malheureusement la barbarie des Turcs, maîtres de ces provinces, n'a pas permis aux archéologues de les explorer. Là, bien certainement se feront, dans l'avenir, des découvertes du plus haut intérêt. Les massifs plus méridionaux, jusqu'à la plaine mésopotamienne, sont encore, eux aussi, totalement inexplorés» («La préhistoire orientale», t. 3, «L'Asie antérieure», p. 189, Paris, Libr. Orientaliste Paul Ceuthner, 1927).

*Ի միջի այլոց, Ժ. տը Մորկանի հնադիտական հետազօտութիւնները համոզիչ ձեւով ցոյց են տուել, որ Հայաստան աշխարհը դեռ Քրիստոսից առաջ ե. հազարամեակում պղնձի եւ նրա համաձուլուածքների ստեղծման օրրանն է եղել:*

*Մենք սակայն այս յօդուածում Ժ. տը Մորկանի աշխատանքների մասին չէ, որ ուզում ենք խօսել: Այն, ինչ որ պատմական-հնաբանն անուանում է «barbarie des Turcs», դժբախտաբար չարունակում է եւ պիտի չարունակուի: Ուստի եւ հատնարար Ժ. տը Մորկանի ապագայի հետ կապուած յոյսերը, ինչ վերաբերում է Հայաստանին եւ հայ ժողովրդի պատմութեանը, երբեք չպիտի իրականանան: Թուրքերը երբեք չպիտի մեզ վերադարձնեն ոչ մեր հողերը եւ ոչ էլ դրանց տակ թաղուած մեր պատմութիւնը:*

*Գիրքը, որի մասին ուզում ենք խօսել, գրել է Volkmar Gantzhon անունով մի գերմանացի եւ կոչւում է «Le tapis chrétien oriental», տպագրուած 1991 թ., գերմանական «Benedikt Taschen» հրատարակչութեան կողմից:*

*Ինչպէս նշում է հեղինակն իր «Նախաբան»ում, այն հրատարակուել է գերմաներէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Հինգ հարիւր երեսուն էջ ունեցող այս հոյակապ աշխատութեան վրայ հեղինակն աշխատել է տասնամեակներ եւ 1987 թ. ներկայացրել որպէս դոկտորայի թեզ Թիւպինկէնի (Շեթուիկարթից ոչ հեռու) համալսարանում: Մինչ այդ Գոլբմար Կանդոնը ուսումնասիրել է արուեստի, փիլիսոփայութեան, նկարչութեան եւ կրաֆիք արուեստի, աշխարհագրութեան եւ լրագրութեան պատմութիւն: Դասաւանդել է զանազան դպրոցներում: Եղել է նկարիչ եւ գծագրիչ, քանդակագործ ու լուսանկարիչ: Հետաքրքրական է, որ ինչպէս ինքն է խոստովանում, աշխատանքի սկզբում նա մտադիր է եղել արեւելեան գորգերի պատմութիւնն ուսումնասիրել առանց նոյնիսկ կասկածելու, որ գորգերն ի յայտ են եկել Միջին Ասիայի տափաստաններում, քոչուոր մուսուլման ցեղերի մօտ: Այդպիսին էր մասնագէտների ընդունուած կարծիքը: Սակայն հարցի խորն ուսումնասիրութիւնները համոզել են Գոլբմար Կանդոնին, որ գորգը քրիստոնէական ծագում ունի եւ ստեղծուել է այն հայ ժողովրդի կողմից:*

*Արդէն նախքան գիրքը բացելը նրա չափաթերթի վրայ կարդում ենք.-*

«Deux mille ans et demi d'art de la tapisserie sont présentés et analysés dans ce volume. Les recherches de l'auteur ont livré des connaissances nouvelles et ont permis de jeter un regard neuf sur l'art de la tapisserie. Cet ouvrage est une révision de l'histoire du tapis oriental. Il a été découvert que les motifs des tapis sont liés aux traditions phrigiennes et autres, traditions qui ont été transmises par les Arméniens jusqu'au début de ce siècle... Le tapis d'Orient n'est pas d'origine nomade; il ne provient pas non plus d'Asie Centrale. Il est un produit de civilisations avancées de l'Orient ancien, né sur les hauts plateaux arméniens, au croisement de voies commerciales très anciennes entre l'Est et l'Ouest, le Nord et le Sud».

*Գիրքը բացելուց եւ թերթելուց յետոյ չուտով ընթերցողը համոզւում է, որ այն*

ամբողջովին նուիրուած է հայ ժողովրդին ու իր պատմութեանը:

Իրենց խորութեամբ եւ պրոֆեսիոնալիզմի բարձրագոյն մակարդակով ներկայացած մեկնաբանութիւններով լեցուն է գիրքը: Լինեն դրանք պատմաբանական, աշխարհագրական, թէ ուղղակի գործնական գործութեանը նուիրուած՝ նեղ մասնագիտական:

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ նոյնիսկ աշխարհի կողմից ճանաչած Հայոց մատենագրութիւնը կամ ճարտարապետութիւնը երբեք եւ ոչ մի օտարազգի մասնագէտի կողմից այս ձեւով չեն ներկայացուել:

Ֆոլմար Կանցոնը գանում է, որ գործը հանդիսանում է «la plus grande contribution de l'art arménien à l'histoire de l'art du monde entier» և ապա չարունակում է՝ «Ceci devrait un peu servir de réparation à un peuple qui, au cours de son histoire de plus de 2000 ans, a souffert plus que tout autre à cause de sa situation géographique entre l'Orient et l'Occident. Il fut divisé d'innombrables fois, exploité, volé, contrait à l'émigration, déporté, asservi, assassiné et déshonoré, dépouillé même de son art —la paternité de ses œuvres ayant été attribuée par la suite aux envahisseurs, soit par manque de connaissance, soit par manipulation. Le patrimoine des motifs des tapis orientaux est un élément important de l'identité arménienne et il se doit être considéré en tant que tel»:

Այսպէս է սկսում այս հիասքանչ աշխատութիւնը եւ աւարտու է այն ... Հայոց Այբուբենով: Ի՞նչ կարելի է ասել: Ոչինչ: Պէտք է միայն գլուխները խոնարհենք մեծ մարդու եւ գիտնականի առջեւ:

Այս գիրքը սակայն հիացմունքի հետ միաժամանակ եւ ցաւ է պատճառում հետեւեալ պատճառներով.

ա) ինչո՞վ բացատրել որ մեր ժողովրդի համար այսքան կարեւոր հետազօտութեան եւ յայտնագործութեան հեղինակը գերմանացի է, այլ ոչ հայ:

բ) Այս մեծութեան նուէրը ենք ստացել մի օտարականից: Ո՞ւր է մեր արեւելեան երախտագիտութիւնը, որեւիցէ ձեւով չնորհակալութիւն յայտնել՞ ենք այս մարդուն եւ վերջապէս,

գ) Որեւիցէ ձեւով փորձե՞լ ենք օգտագործել այսքան կարեւոր սոյն յայտնագործութիւնը:

Ժամանակին ողբերիս հեղինակը իր ուժերը ներածին չափով փորձեց տարածել գիրքը, մի քանի տասնեակ օրինակներ նուիրելով իր ծանօթներին այստեղ՝ Ֆրանսիայում, նաև Գերմանիայում, Ռուսաստանում եւ Հայաստանում: Նրա ջանքերով մէկ օրինակ հասցուեց նոյնիսկ Հանրապետութեան նախագահ Լ. Տէր-Պետրոսեանին:

Արդի՞ւնքը, լռութիւն:

Կարելի է երեւակայել, թէ եթէ մեր փոխարէն Հրեաներին ընձեռուէր նման մի առիթ նրանք ինչպէս կը վարուէին: Կասկած չի կարող լինել, որ արդէն տեսակ – տեսակ չարժանկարներ ու հեռատեսիլային հաղորդումներ, վկայութիւններ եւ նշանաւոր անձանց ստորագրութիւններով գրքեր ողողած կը լինէին աշխարհը:

Իսկ մե՞նք: Մենք չարունակում ենք մեր կարեւորը ոչ կարեւորից չտարբերելու պատմական հիւանդութիւնը:

Սպասում ենք, որ մի թուրք կամ ադրբեջանցի «պատմաբան» անհեթեթութիւններ ասի, որ մենք էլ հերքենք, հասասարուելով դրանց անհեթեթութիւններին: Չենք կարողանում հասկանալ այն պարզ ճշմարտութիւնը, որ պաշտպանութեան լաւագոյն միջոցը յարձակումն է:

Թուրքերը զողացան, աւերեցին, թալանեցին մեր երկիրն ու պատմութիւնը, թողնելով մեզ վշրանքներ: Նրանք իրենց «եղբայրներ»ի հետ մէկտեղ չարունակելու են այդ նոյն քաղաքականութիւնը նաեւ երրորդ հազարամեակում:

Ժամանակը չէ՞ արդեօք սթափուելու: Ժամանակը չէ՞ արդեօք, որ մեր ունեցած հնարաւորութիւնները հարկ եղած ձեւով օգտագործելու պետական քաղաքականութիւն մշակել: Չէ՞ որ հիմա մեզ այլեւս ոչ ոք չի արգելում այդ անելու:

Հ. ԳԵՂԱՄԵԱՆ

Փարիզ

---

(*) Մենք կ'ապիհիֆ «40ème degré»:

## ԳԱՂՈՒԹՔ ԳԱՂՈՒԹ

ԳՈՒՄԳՈՒԲՈՒԻ (Պուլիս) Ս. Աստուածածածին Եկեղեցւոյ մէջ, Ապրիլ 25–ին, կատարած են Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մատաղօրհնութիւնը եւ կեդրոնական վարժարանի 113–րդ տարեդարձը: Կրօնական հանդիսութեան նախագահած է Պատրիարքը, որ նաեւ քարոզած է: Պատարագին յաջորդած է սիրոյ սեղան մը Պէզճեան Ամիրա սրահին մէջ: Բացման խօսքը արտասանած է կեդրոնական խնամակալութեան անդամ՝ Նազարէթ Պալ, որմէ ետք տեսնապետը՝ Արմէն Շիրին ներկայացուցած է վարժարանին տեղեկագիրը: Ան նշած է որ այս տարի, վարժարանը 265 աշակերտներով, 26 ուսուցիչներով, եւ 16 հոգիանոց անձնակազմով կը չարունակէ իր գործունէութիւնը, կրթական նոր օրէնքին համաձայն: Պ. Նալպանտ հրաւիրած է ներկաները իրենց նիւթական օժանդակութիւնը բերելու: Գործադրուած է պեղարուեստական յայտագիր մը եւ Հուսկ Բանքը արտասանած է Մեսրոպ Արքեպիսկոպոս:

*
**

ԹՈՐՈՆԹՈՑԻ համալսարանի «Հարթ Հաուզ» սրահին մէջ, Ապրիլ 14–ին տեղի ունեցած է «Տարեցներու Միջազգային Տարուան» չրջանի 48 մրցանակներու բաշխումը: 1999–ը ՄԱԿ–ի կողմէ «տարեցներու միջազգային տարի» հռչակուած ըլլալով, Օնթարիոյ կառավարութիւնը որոշում տուած էր նահանգի 130 տարեցներու գնահատական մրցանակներ չնորհել: Առանց կարգին էր «Հորիզոն»ի աշխատակից եւ ցանկին միակ Հայը՝ Գրիգոր Հոճոյեան:

## ՀԱՑԱՍՏԱՆ

ՃՈՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ
70–ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԱԾ

Մայիս 5–ին, Գիտութիւններու Ազգ. Ակադեմիան նշած է պատմաբան, հրապարակախօս, հանրային–քաղաքական ու պետական գործիչ Ճոն Կիրակոսեանի (1929 – 1985) ծննդեան 70–ամեակը: Բացման ելոյթը կատարած է Ակադեմիայի նախագահ Ֆ. Սարգսեան: Մեծարեալին գիտական եւ հանրային գործունէութեան մասին խօսած են պատմաբան Նորայր Սարուխանեան, բանասիրութեան տոքթ. Կարլէն Դալլաքեան, գրող Զօրի Բալայեան եւ ուրիշներ: Ներկաներուն բաշխուած է Զօրի Բալայեանի վերջերս ռուսերէն եւ հայերէն լեզուներով հրատարակուած «Կեանք եւ Հմտութիւն» գիրքը որ նուիրուած է Ճոն Կիրակոսեանի ծննդեան 70–ամեակին:

*
**

ՍԵՒԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ
ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Սեւանի ազգային փարքի աւագ անտառապետ Հ. Թիմոյեան ահազանգ հնչեցնելով ըսած է թէ եթէ յառաջիկայ տարիներուն պետական մակարդակով լուծում մը չգտնուի բնակչութեան վառելիքի խնդրին, Սեւանի անտառին կը սպառնայ ամբողջովին անհետանալու վտանգը: Լճի շրջակայքին վերջին տարիներուն տնկուած 22 հեկտար ծառերուն չուրջ 40 տոկոսը արդէն ապօրինի հատումի ենթարկուած է: Ան աւելցուցած է որ այդ անտառները յիսունական թուականներուն ստեղծուած էին լիճին ցամքած մասերուն վրայ, աւազին ամրապընդման նպատակով:

## ՈՒԿՐԱՆԱԿԱՆ ՆԻՒՐՆՊԷՐԿԸ

Ուկրանիոյ մէջ նիւրնպէրկեան նոր դատավարութիւն մը օրակարգի նիւթ է: «Աբեւելքի բանուորները»ու 400 հոգինոց խումբ մը բողոք ներկայացուցած է վերմանական ձեռնարկութիւններու դէմ: Այդ խումբը կազմուած է այն բանուորներէն որոնք Բ. Աչխարհամարտին բռնադատուած են աշխատելու վերմանական ճարտարարուեստի ծանօթ անուններուն համար:

Նիւրնպէրկի պատարանը սկսած է քննել առաջին բողոք մը որուն վճիռը կ'արձակուի Մայիսի ընթացքին: Այդ հաստատութիւնը պատերազմի տարիներուն Ռայխի զինուորներուն համազգեստները պատրաստած է ու մեծ հարստութեան տիրացած: Ուկրանացի բանուորներու անկէ պահանջած հատուցումին գումարը 20 – 50 հազար մարք է: Այդ թիւերը չատ օրինաւոր կը նկատուին, քանի որ հիմնուած են այդ չրջանի աչխատավարձերուն վրայ:

«Բ. Նիւրնպէրկ»ի սկսելէն քանի մը օր առաջ վերմանական երկու ձեռնարկութիւն յայտարարած են թէ հատուցումի իրենց յատուկ հիմնադրամով ստեղծելու վրայ են եւ տրամադիր են վճարումներ ընելու եթէ ենթակաները հրաժարին դատարան դիմելէ:

Հիմնուած է «Հաչտութեան եւ համաձայնութեան» հիմնարկ մըն ալ որ այս խնդիրով կը զբաղի: Ցատկապէս կ'աչխատի յայտնաբերել նացիական վարչակարգի զոհերը. կ'ըսուի թէ արդէն ցանկագրած են աւելի քան կէս միլիոն հոգի: Անոնք պատրաստած են արեւելքի բանուոր չահագործած վերմանական 26 ձեռնարկութիւններու ցանկ մըն ալ: «Բ. Նիւրնպէրկ»ի դատավարութեան սկիզբին վերմանական 12 հատատութիւններու հետ Գերմանական դրամատունն ու վերմանական երկաթուղին ալ յայտնած են թէ հատուցումի հիմնադրամ կը ստեղծեն ուկրանացի զոհերուն իրաւունքը հատուցանելու համար: Ըսած են սակայն նաեւ թէ այդ զոհերը մատամբ միայն պիտի կրնան հատուցումի գումարները ստանալ. մնացեալը պիտի յատկացուի նոր թանգարաններու եւ յուչակոթողներու չինութեան: Այդպէս որոշած են ճարտարարուեստի գերմանացի պատասխանատուները...:

ՔԱՂՀԱՆ

## ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

– Չեմ զարմանար, – ըսաւ Տիկին Սիրարփի խնդալով:

– Իր տանը զաղանիքները ո՛չ մէկուն կ'ըսէ, բայց ինծի կը յայտնէ:

– Աղուոր պատմութիւններ չատ լսած ըլլալու ես երեմէ:

– Այո՛, եւ որոնցմէ մէկ քանին դուք ալ հաճոյքով մտիկ ըրած էք:

– Բայց սա վերջին դէպքին գանք, չատ ժամանակ չունիմ տրաթաղրելի, պէտք է, որ հիւրերս մեծարեմ, – դիտել տուաւ Տիկին Սկամպիլեան:

– Ձիշդ է, մեր վայրկեաններդ համրըւած են, – երկրորդեց Տիկին Սիրարփի:

– Այն առեն լաւագոյն է, որ ուրիշ անգամուան թողունք իմ պատմելիքս, – պատասխանեց Աթիկ պէյ՝ չարամտօրէն ժպտալով:

– Չէ՛, չէ՛, հիմա պատմէ՛, քանի որ սկսար, – գոչեցին երկու կիները միասին:

– Լաւ ուրեմն, երէկ պատահմամբ գացած էի Քաթինան տեսնելու. հոսկէ – հոնկէ խօսելէ ետքը, խորհրդաւոր ձեւով մը ըսաւ ինծի. «Աչքի օր տանս մէջ խաղքութիւն մը պատահեցաւ որ...» Հարցուցի, թէ ինչ էր պատահածը եւ խօսք առնելէ ետքը, որ մարդու պիտի չըսեմ, պատմեց, թէ առչի օր, երբ ըստ սովորութեան Տիկին Թաթիկեան եկեր է եւ առանձին իրեն ըսեր է. «Ինչ ետքը էֆէնտի մը պիտի գայ, ինծի պիտի հարցնէ, սենեակս առաջնորդէ»: «Եկողը Գալուստ էֆէնտին չէ՞, հարցուցեր է Քաթինա»: «Չէ՛, ուրիշ մէկն է, – պատասխաներ է»: Ապրաբեւ, ջինչ մը ետքը չնորհքով էֆէնտի մը եկեր ու Տիկին Թաթիկեանը հարցուցեր է, ու Քաթինան ալ զայն տարեր է տիկինին քով...

– Ո՞վ է եղեր այդ նոր էֆէնտին, – հարցուց Տիկին Սիրարփի:

– Ջինչ մը համբերէ, կը հասկնաս, – պատասխանեց Աթիկ պէյ:

– Շարունակէ՛ պատմութիւնդ, – գոչեց Տիկին Սկամպիլեան անհամբեր:

– Հապա թէ Տիկին Թաթիկեան եւ անծանօթ էֆէնտին սենեակ մը առանձնացած էին, – չարունակեց Աթիկ պէյ, – Գալուստ էֆէնտի կուգայ եւ կը հարցնէ, թէ ո՞ր սենեակը կը դանուի Տիկին Թաթիկեան: Քաթինա կը վարանի եւ ի վերջոյ կ'ըսէ, թէ Տիկին Թաթիկեանը հոն չէ: Ասոր վրայ Գալուստ էֆէնտի խնդալով կը պատասխանէ, թէ սուտ խօսելու պէտք չկայ, թէ Տիկին Թաթիկեանը ինք առաջնորդած է քիչ մը առաջ մինչեւ հոն, թէ ինք յետոյ գացած է Ամբրոսիոս էֆէնտին գտնելու եւ ղրկելու, թէ երեքը միասին ժամադիր եղած են, եւայլն: Վերջապէս այնպիսի լեզու մը կը բանեցնէ, որ Քաթինա կը խաբուի ու գոյց կուտայ սենեակը:

– Է՛յ, – գոչեց Տիկին Սիրարփի՝ աչքերը հետաքրքիր բացած:

– Գալուստ էֆէնտի չիտակ կ'երթայ դէպի գոյց տրուած սենեակը եւ դուռը կը զարնէ. «Ո՞վ է այն», – կը պոռայ ներսէն էֆէնտին, որ ի՞նչպէս հասկցաք Ամբրոսիոսն էր: «Ես եմ, Գալուստ էֆէնտին, բացէ՛ք դուռը», – կը գոչէ միւսը: Ներսէն ձայէ չելլեր ու դուռը չի բացուիր: Այն առեն Գալուստ էֆէնտի ուսովը ուժգին հարուած մը կուտայ դրան եւ կը բանայ: Կ'երեւակայէք տեսարանը, Տիկին Թաթիկեան ու Ամբրոսիոս միեւնոյն անկողինին մէջ...

– Իրաւ խաղքութիւն, – կը գոչէ Տիկին Սկամպիլեան:

– Իրաւ խայտառակութիւն, – կ'աւելցնէ Տիկին Սիրարփի:

– Այս տեսարանին վրայ, – կը շարունակէ Աթիկ պէյ, – Գալուստ էֆէնտի բերանը կը չանայ ու կը սկսի նախատինքներ տեղացնել Տիկին Թաթիկեանի դէմ, զայն իբրեւ անհատասիրիմ ամբաստանել, անբարոյական, րոպ, եւ այլն անուանել...

– Ինչ իրաւունքով ոտկայ, վերջապէս ինք էրիկը չէ, – դիտել տուաւ Տիկին Սիրարփի:

– Բայց սիրահարն է, – ըսաւ Աթիկ:

– Ատիկա իրաւունք մը չէ:

– Չէ, բայց կ'երեւայ, որ Գալուստ էֆէնտի չափազանց նախանձոտ է ու նախանձի ազդեցութեան ներքեւ գործած է: Ջերկնցնեմ, Ամբրոսիոս էֆէնտի անկողինէն վար կը ցատքէ, կը յարձակի Գալուստ էֆէնտիին վրայ ու փառաւոր ծեծ ծեծուբուռ մը կը սկսի երկուքին միջեւ: Վերջապէս Քաթինան ու իր ծառան կը միջամտեն ու երկու հակառակորդները իրարմէ կը բաժնեն: Գալուստ հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղալով՝ կ'առնէ կը քալէ:

– Ի՞նչ սպառնալիք:

– Կ'ըսէ, որ ամէն բան իմաց պիտի տայ Թաթիկեանի:

– Եթէ այդ է ընելիքը, կարեւորութիւն չունի, – ըսաւ Սիրարփի խնդալով, – Թաթիկեան իր կնոջ մասին այդ տեսակ բաներ չատ լսած է:

– Այսպէս ուրեմն, երեք օրէ ի վեր յարաբերութիւնները խզուած են Տիկին Թաթիկեանի ու Գալուստ էֆէնտիի միջեւ ու այս վերջինին յաջորդած է Ամբրոսիոս էֆէնտի...

– Մինչեւ ցնոր անօրինութիւն, – ընդմիջեց Տիկին Սիրարփի:

– Եթէ այս պատմութիւնը իրաւ է, չիտակը մեծ խաղքութիւն, – ըսաւ Տիկին Սկամպիլեան:

– Ծայրէ ծայր իրաւ է, ես միայն Քաթինան խօսելով չդտայ, այլ ծառան ալ խօսեցուցի: Լամծներուս մէջ չափազանցութիւն չկայ բնաւ:

– Ցայտնի է, որ Աթիկ պէյի պատմածը ճիշդ է, – յայտարարեց Սիրարփի:

– Ինչ ամօթ...

– Ինչ երեսով ալ ելեր այսօր հոս եկեր է:

– Ու Ամբրոսիոս էֆէնտիին հէ՞ա...

– Կ'երեւայ, որ կը կարծէ, թէ մարդ բանէ մը լուր չունի, – դիտել տուաւ Աթիկ պէյ:

(Շար. 22)

## Communiqué de Presse

# Marche de Protestation de Lyon à Paris

**pour**

**la reconnaissance par le Sénat du génocide des Arméniens perpétré par la Turquie en 1915**

Plus de 300 marcheurs de tous âges participent, depuis le 24 avril 1999, à une marche-relais de protestation et d'alerte de Lyon à Paris, une marche de plus de 500 kilomètres comprenant 19 étapes et qui arrivera à Paris devant le Sénat le mercredi 12 mai 1999.

**Pourquoi une marche ?**

Le 29 mai 1998, l'Assemblée Nationale avait adopté à l'unanimité une proposition de loi reconnaissant publiquement le génocide des Arméniens de 1915. **Depuis cette date, la procédure est bloquée.**

Alors que la grande majorité des Sénateurs se déclare disposée à voter le texte, la Conférence des Présidents, fortement influencée par les objections formulées parle Pouvoir exécutif et le Chef de l'Etat, bloque le processus d'inscription de ce texte à l'ordre du jour des travaux de la Haute Assemblée.

Les Citoyens français d'origine arménienne, de même que l'ensemble des hommes et des femmes épris de justice et de fidélité aux valeurs dont la France a toujours été le défenseur, ne comprennent pas que des considérations à caractère mercantile, privent les Sénateurs de leur droit d'expression. La France ne doit pas céder aux chantages économiques exercés par la Turquie.

Des centaines de marcheurs veulent rappeler à notre pays son devoir de mémoire. Ils entendent aussi, par cette initiative sans précédent, contribuer au travail de prévention des crimes contre l'humanité. L'impunité dont jouissent leurs auteurs constitue un encouragement coupable pour les actes de génocide et de déportation présents et à venir.

**Au cours des 1 8 journées écoulées, les habitants et les élus des villes et villages traversés ont accueilli chaleureusement les participants de la longue Marche. Leur sympathie et leur solidarité active nous ont convaincus que la France profonde, celle des régions, des départements et des communes, veut la reconnaissance du génocide arménien.**

Le Président de la République, le gouvernement et le Sénat doivent entendre le message de soutien et de solidarité que l'ensemble de la population française vient de nous transmettre tout au long de la marche de protestation.

Nous leur demandons solennellement de faire en sorte que le Sénat puisse achever le travail commencé à l'Assemblée Nationale et déclarer à son tour que **«La France reconnaît publiquement le génocide arménien de 1915».**

Paris, le 10 mai 1999

∴

MERCREDI 12 MAI

— **9h** — Hôtel de Ville d'Alfortville
☛ **POINT PRESSE**
RASSEMBLEMENT DES MARCHEURS
— **10h** — Hôtel de Ville d'Alfortville
DEPART DE LA MARCHE
—**12h30** — Arrivée à l'Hôtel de Ville de Paris
ACCUEIL A L'HOTEL DE VILLE
— **13h** — Départ pour l'Assemblée Nationale
— **13h45-14h** — Arrivée à l'Assemblée Nationale
ACCUEIL A LA PRESIDENCE
RENCONTRE AVEC LES DEPUTES
—**14h45-15h** — Départ pour le Sénat
— **15h45-16h** — Arrivée au Sénat
ACCUEIL A LA PRESIDENCE
RASSEMBLEMENT
☛ **POINT PRESSE**
— **18h-19h** — Fin du rassemblement.

Contacts :
Laurence RITTER 06.08.92.61.77
Maral ASSADOURIAN 06.07.22.01.62

## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes — 92130 Issy-les-Moulineaux.

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Իսիլ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւարքութիւնը առաջաւ սոյն նուիրատուութիւնները Արշալոյս Բուլուրի մահուան առիթով։*

*Տէր եւ Տիկին Յակոբ Էօլչէր, Տէր եւ Տիկին Յարութիւն Էօլչէր, Տէր եւ Տիկին Սիրաք Շնորհքեան 500–ական Ֆր., Պր. Սարգիս Քալուստեան 300 Ֆր., Տէր եւ Տիկին Մեսրոպ Քէօսէտաղ 200 Ֆր., Տէր եւ Տիկին Խաչիկ Բումբուլ 100 Ֆր.։*

*Նաեւ Միսաք Պէնկեաճի մահուան տարեդարձի առիթով ստացաւ՝ Տէր եւ Տիկին Պարգեւ Սայլինէ 200 Ֆր., Տէր եւ Տիկին Անդրանիկ Ալթունեանէ 100 Ֆր.։*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ՝
1918 ՄԱՅԻՍ 28

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

# ՁԱՇ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*
*Հ.Ց.Դ. «Զաւարեան» խումբին*
Ֆրանսահայ կապոյտ Խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրէնկիւլեան"
*մասնաճիւղին*

*մասնակցութեամբ՝*
ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ–ի
*եւ* ԱՆԻ Նուագախումբին

Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ

Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX

Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

# 1879-1999

## 120ème anniversaire de l'école TEBROTZASSERE

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
ET
l'ASSOCIATION DES DAMES ARMENIENNES
AMIES DES ECOLES TEBROTZASSERE
PRESENTENT

## La Chorale Koghtan et la Chorale de l'Ecole

*dirigées par Haïg SARKISSIAN*

**dimanche 16 mai à 17 heures**

salle Cortot : 78, rue Cardinet — 75017 PARIS
(métro : MALESHERBES)

Participation aux frais — Adultes: 100 F - Enfants: 50 F

Renseignements & réservations :
ECOLE TEBROTZASSERE: 01 43 81 01 72 — U.G.A.B.: 01 45 20 03 18

# CENTRE DE VACANCES DE LA CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE - Bellefontaine (Jura)

Près de la frontière suisse et à proximité de Morez, Morbier et les Rousses, le village de Bellefontaine abrite, depuis plus de 40 ans, le centre de vacances de la CBAF. Implanté dans un domaine verdoyant, de 2 hectares, en lisière de forêt, le centre accueille chaque été, en juillet et en août, 350 enfants, encadrés d'une cinquantaine d'animateurs et de directeurs diplômés.

Les enfants évoluent dans une ambiance arménienne, rythmée par des activités variées et enrichissantes (sports, randonnées, travaux manuels, éveil à l'arménité, musique, danse, chant...)

Nous vous invitons à inscrire vos enfants auprès de la section la plus proche de votre domicile soit :

| | | |
|---|---|---|
| **ALFORTVILLE** | Mme Zabounian | **01. 43. 76. 50. 52** |
| **ARNOUVILLE** | Mme Kaldjian | **01. 39. 85. 05. 71** |
| **ASNIERES** | Mme Danoux | **01. 42. 42. 85. 87** |
| **BAGNEUX** | Mme Pekmezian | **01. 46. 63. 10. 48** |
| **CHAVILLE** | Mme Der Kaloustian | **01. 47. 50. 64. 37** |
| **ISSY-LES-MOULINEAUX** | Mme Papazian | **01. 46. 42. 90. 68** |
| **PARIS** | Mlle Karanfilian | **01. 42. 46. 88. 36** |
| **SEVRAN** | Mme Gabintz | **01. 42. 36. 33. 73** |
| **DECINES** | Mme Dolmadjian | **04. 78. 49. 26. 66** |
| **LYON** | Mme Aghayekian | **04. 78. 45. 17. 55** |
| **GRENOBLE** | Mme Saboundjian | **04. 76. 49. 17. 16** |
| **VALENCE** | Mme Baron | **04. 75. 40. 12. 49** |
| **VIENNE** | Mme Raymond | **04. 74. 85. 18. 58** |
| **ST-MAURICE** | Mme Goubatian | **04. 78. 55. 28. 82** |
| **VAULX-EN-VELIN** | Mme Djanikian | **04. 78. 80. 27. 43** |
| **MARSEILLE** | Mme Avedian | **04. 91. 87. 13. 48** |

La colonie organise une fête traditionnelle pour les parents le dimanche 18 juillet et le dimanche 15 août.

Date des séjours : 1*er séjour: du 6 au 28 juillet*
2*ème séjour : du 29 juillet au 20 août.*

Prix : 3 400 F + voyage 450 F (Paris et Marseille).

# -ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 13, Խ· օր Յինանց։
Տօն է Համբարձմանն Քրիստոսի
Մանուկներու հաղորդութեան օր
*Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։*
*կը պատարագէ՝*
*ԱՒԵՏԻՍ Ա. ՔՀՆԾ. ՊԱԼԸԳԵԱՆ*
*կը հրաւիրուին բոլոր «Քրիստոնէական դաստիարակութեան» միջոցաւ Հաղորդութեան պատրաստուած մեր մանուկներն ու զպրոցներու աշակերտները մասնակցիլ պատարագին եւ Հաղորդուիլ։*
*Այս հեռուտեսութեամբ, այսօրուան պատարագը՝ զպիրներու կողքին՝ պիտի երգեն Զպրոցասէր Տիկնանց Վարժարանի եւ Մխոբեան դասընթացքներու աշակերտները։*

## Ս· ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

Հինգշաբթի Մայիս 13
*Խ· օր Յինանց· Համբարձումն Քրիստոսի։*
*Պատարագ ժամը 10–ին։*
*Այս օրը յատկացուած է նաեւ մանուկներու հաղորդութեան։*

## Ս· ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 13, տօն է Համբարձման։
*Այս առթիւ Լիոնի Ս· Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10–ին, պատարագ կը մատուցուի։*
*Օրուան պատարագը կը մատուցանէ՝*
*ԻՍԱՀԱԿ ՔՀՆԾ. ՀԷՔԻՄԵԱՆ*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

*Կիրակի, Մայիս 16, Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Զպրոցասէր Տիկնանց Վարժարանի հանգուցեալ խնամակալներուն համար, ինչպէս նաեւ հանգուցեալ սանուհիներուն, Փարիզի Սուրբ Յովհաննէս – Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ։*

## L'ASSOCIATION ARMÉNIENNE D'AIDE SOCIALE

**RECHERCHE**

**pour la Maison de Retraite de Montmorency**

**1) INFIRMIERE PLEIN TEMPS**
**2) AIDE SOIGNANT(E)**

**A partir de Juin 1999**

Envoyer C.V. à la Maison de Retraite arménienne
44-50, avenue Charles-de-Gaulle
95160 MONTMORENCY

## *Vie Arménie*

ՖՐԱՆՍԱՀԱՅԻՆԵՐ՝ ՀԱՅԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ

*Մայիսէն է վեր սկսած է Vie Arménie Բարեսիրական Միութիւն մը որ գլխաւոր նպատակն է օգնել Գիւմրիի մանուկներուն, աշակերտներուն, զպրոցին եւ այլ կարիքներու, կարելիութեան սահմաններուն մէջ։ Նախաձեռնողները փրոֆեսոգի են։ Նոժան լը Ռուայի Ժան-Մուլէն վարժարանը 1994–ին ընդունած էր այրեալ Գիւմրիի զպրոցէն մանուկներ, մօտէն կրցած են ծանօթանալ տեղւոյն կացութեան եւ երկրաշարժին հետեւանքներուն։ Անկէ ի վեր կապ հաստատած է եւ միութիւն մը հիմնած որ գանգատ ձեռնարկներով Սուսաէ Շուքրութ, Միկէի վաճառք եւայլն եկամուտ կ'ապահովէ օգնելու համար Գիւմրիի։ Իրենց գործունէութեան արձագանգած են հայատառեան թերթերը, նաեւ չրլանային ֆրանսական թերթեր։ Կ'ուզեն նաեւ կոչ ընել հայ գաղութին։*

*VIE ARMENIE*
Gisèle PINAULT (Présidente)
9, rue de Villiers
28210 NÉRON

**Imprimé sur les Presses du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville, 75010 Paris**
**SIRET : 571 027 317 000 15**
**Commission Paritaire : N° 55935**

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 13
JEUDI
13 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում) 1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ԲԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·640 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 74e ANNEE — N° 19.640

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

## Դարադարձի հաշուեփակ մը եւ Անկէ Զեղջուածը

«Մոնտ» օրաթերթը նչելու համար դարադարձի հանդրուանը, Մայիս 7–ին քառասուն էջնոց յատկացուած մը հրատարակած է. ան լրագրական ոճով մը ներկայացուցած ինքնատիպ մէկ ամփոփումն է աւարտող դարուն: Բազմաթիւ բաժիններով – քաղաքականէն մինչեւ նոր յայտնագործութիւն – այդ էջերը ամէն մարդի մայր գիծերով կուտան դարուն պատկերը:

Բնական է որ ամենալայն տեղը պրաւած է քաղաքական ոլորտը, գլխաւորաբար զոյգ աշխարհամարտերով, համայնավարութեան 1937–ի սարսափներով, Հալիայով, Վիեթնամի պատերազմով, Ֆրանսայի դէպքերուն, դէմքերուն յատկացուած էջերով: Տարբեր բաժիններու մէջ տեղ գտած են առաջին ինքնաչարժէն մինչեւ համակարգիչ ու համացանց հասած գիտական նուաճումները, սակարաններու վերելայարումները, լուսնին վրայ մարդկային առաջին քայլը, դարուն մեծերէն Ալնչթայնը, Ֆրոյտը, Քենրտին եւ ուրիշներ, Շոայէն վերապրողի մը լման երկու էջով վկայութիւնները, Նոպէլեան դափնեկիրները, Պիւիցըները, եւայլն, եւայլն:

Ճանկարային այս համայնապատկերին մէջ ոչ խակ եղկու տողով նչուած է 1915–ը, նոյնիսկ որպէս յետադայ բազմաթիւ ոճիրներու նախընթաց. ոճիրներ որոնց հեղինակներուն համար անպայմանն քաղաքական եղաւ օրինակը թէ ժողովուրդի մը բնաջնջումը կրնայ 84 տարի ետքն ալ ժխտուիլ ու անպատժելի ձգուիլ: «Մոնտ»ի անտեսումը տխուր զուգահեռն ալ կը կազմէ «մարդկութեան դէմ ոճիր»ներու ուրացումին ղեկավար ամէնօրեայ դատապարտումին հետ:

Այդ անտեսումին հակադրելին նոյն էջերուն մէջ տրուած Շոայի վերապրողին վկայութիւնը չէ անշուշտ: Բայց տեսնել որ 1915–ը նոյնիսկ փոկերու որսին մասին Մ. Եուրսընարի մէկ նամակին չափ ալ կարեւորութիւն դատած չէ, նոր դատնութեամբ կը համակէ հայ ընթերցողը:

Յաւելուածը ունի խմբագրական մրն ալ որ 1928–ի լրագրական դրուագի մը կ'անդրադառնայ, լրագրող Ա. Լոնտրի քանաձեւումը կրկնելով թէ մամուլի մարդուն պարտականութիւնն է «գրիչը թաթխել վէրքին մէջ»: Ապա կը նչէ «ազատ ու անկախ» մամուլի հանդանակը որուն «կամքը ունենալ բաւարար չէ, հարկ է նաեւ անոր արժանի ըլլալ»: Կ'ըսէ թէ այդ մարդին մէջ անմիջականութիւնը եւ դրամը վտանգաւոր զոյգ օձեր են որոնց դէմ լրագրութիւնը պարտ է նախ ինք իրմէ զգուշանալու: «Մոնտ» այս սպառնալիքներուն գիտակցութեամբ ճամբայ ելած է 1944–ին ու հասած 55.ամեակի հանդրուանին: Նոյն գիտակցութեամբ ու անկախութեան նոյն հանդանակով կը պատրաստուի մուտք գործել Ի՛Ա. դար:

Յատկապէս ակնյ չզլարկին մէջ 1915–ին վանցառումը, դառնութեան անպատմելի ալիքը ըլլալէ զատ, հետաքրքրութիւն չարժող ազգակ է: Արդեօք ի՞նչպէս պիտի բացատրէր ատիկա խմբագրութիւնը մանաւանդ մամուլի իր դատնած սկզբունքներուն լոյսին տակ:

Հարցականէն ու հաւանական պատասխաններէ կամ նոր լուսթենէ մը աւելի պերճախօս է սակայն երեւոյթը երբ կը չափէ մե՛ր արժանաւորութեան հասնելու հարկաւոր աշխատանքը: Ան որ կը մնայ կատարելի՝ անտեսումի, ժխտումի բոլո՛ր պատասխաններուն դէմ. մինչ տասնամեակն քիչ մը աւելին մկայն մնացած է 1915–ի դատապարտին:

Ա. Թ.

ՔՈՍՈՎՕ

## ՈՒԱՇԻՆԿԹՐԸՆ ԿԸ ԳՏՆԷ ՈՐ ՓԵՓԻՆ ԿԸ ՁԱՓԱՁԱՆՑԷ

### ՊՐԻՄԱԿՈՎ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒԵՑԱԻ

Մինչ, Միացեալ – Նահանգներէն եաք, ՕԹԱՆ հաւատաք չէր ընծայեր սերպ ուժերու Քոսովոյի քայուելու լուրին, Ուաշինկթընն սկսած էր արտայայտել իր ջղագրգռութիւնը ի լուր Զինաստանի անվնջող դիրքին: Զորս օր է, Զինաստանի նախագահը կը մերժէր հեռաձայնով խօսիլ Գլինթընի հետ, նոյն դիրքը կը բռնէր Արտաքին նախարարը որ չէր պատասխաներ Տիկին Օլպրայթի: Ամերիկա չի կրնար հակնալ որ դեսպանատան ռմբակոծութենէն եաք, երբ ցաւ յայտնած է, «տրի»ն բռած է, Զինաստան դեռ գլուխ կը բռնէ եւ նախապայման կը դնէ որեւէ խաղաղ լուծումի համար: Նախապայման է ռմբակոծութեանց դադրեցումը: Ամերիկա կ'ըսէ թէ «արդար վրդովում մը» հասկնալի է, բայց, ինչ որ Զինաստան կ'ընէ արտայայտութիւնն է ամբողջատիրական վարչակարգի մը:

Դիւանագիտական գետնի վրայ, սակայն, կարելի չէ արհամարհել Զինաստանը որ, ինչպէս միւս չորս մեծերը, վէթոյի իրաւունք ունի Ապահովութեան Խորհուրդին մէջ եւ ոչ մէկ բանաձեւ կընայ քուէարկուիլ առանց իր հաւանութեան: Այդ իսկ պատճառով, ամէն մարդ Զինաստանի դուռը կը բախէ: Այսպէս, Մայիս 11–ին, Ջերնոմիրտինի երթուղարձին կը յայտնէր Գերմանիոյ վարչապետ՝ Շրէօտէրի այցելութիւնը: Բայց եւ այնպէս, Զինաստան մեղմացնելով հանդերձ իր դիրքը (այլեւս չի պահանջեր ՄԱԿ-ի կողմէ իր դեսպանատան ռմբակոծութեան դատապարտումը) կը չարունակէ պահանջել ռմբակոծութեան դադրեցումը: Այս պահանջը դրած էր արդէն առաջին մէկ օրէն, այսինքն Մարտ 24–ին: Ռուսաստանի հետ Զինաստանի այս դիրքը բաւական կարեւոր դեր մը կուտայ իրենց առերեսութեան պետութեանց դիմաց եւ այս խոչընդոտն է որ անընդունելի է Ամերիկա կողմէ: Դիւանագիտական գետնի վրայ, ՕԹԱՆ անելի մասնուած է:

Այս նոյն դիւանագիտական կարգադրութեան մը հարցերն են որոնք Շերաքը Մոսկուա տարին: Ի՞նչ պիտի կարենայ ընել, չատ յայտնի չէ: Հաստատ այն է հուն, երբ Ելցին պաշտօնանկ կ'ընէր իր նախարարապետը՝ Պրիմակով եւ անոր տեղը կը նչանակէր, փոխանցման չրջանի մը համար Ներքին նախարարը՝ Ստեպաշինն: Դեռ նախորդ օրը Մայիս 11–ին, կը հերքուէր քաղաքական տագնապի մը հաստատնութիւնը, իսկ յաջորդ օրը, Մայիս 13–ին, Դուման պիտի քննէր Ելցինի պաշտօնազրկման հարցը: Հարց կայ սակայն Ելցինի առողջական եւ նոյնիսկ մտային վիճակին մասին: Առջի օր, Ռուսաստանի մետիաները բոլորովին լուռ անցած են Մայիս 7–ին իր արտասանած անկապ խօսքերուն վրայէն ու սպրած հին ելոյթ մը:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՐԻԶի մեծ դատարանը իրաւունք տուաւ Ժ. Մ. Լը Փէնի որպէս տէրն ու տիրականը Ազգային Ճակատին: Այս վերջինը զատի դիմած էր որպէսզի Մեկրէ չկարենայ դործածել այդ տարազը եւ առայժմ զատը չահեցաւ: Մեկրէ վերաքննութեան դիմած է եւ մինչ այդ «Ազգային Շաբաթ» տարազը պիտի գործածէ:

ԺՈՍՓէն դէմ դնելու համար ալ ընդդիմութեան յարձակումներուն Մայիս 11–ի Ազգային ժողովի նիստին, յիշեցուց որ Գոլսթիքայի նահանգապետը՝ Պ. Պոնէ առաջարկուած էր Ներքին նախարարին կողմէ, սպա ետացած իր հաստատութիւնը, հուսկ՝ վաւերացուած նախագահ Շիրաքի կողմէ: Այլ խօսքով, ամէն ճախող գործի պատասխանատուն միայն ճախը չէ:

## ԵՐԹԸ ՓԱՐԻԶ ՀԱՍԱՒ

Ապրիլ 24–ին Լիոնի Պելքուր հրապարակէն մեկնած երթը փաթիլ հասաւ, ինչպէս նախատեսուած էր Մայիս 12–ին: Ժուանլեբէին եաք, յաջորդական հանդրուաններն էին Սանս, Մոնթըրօ - Ֆօ – Եոն, Մըլէօն, Էվրի եւ Մայիս 11–ին՝ Ալֆորվիլ, ուր ընդունելութիւն մը տեղի կ'ունենար տեղւոյն քաղաքապետին՝ Ռընէ Ռուքէի կողմէ: Գաղութին ալ չատ չերմ կերպով կ'ողջունէր երթին մասնակցողները:

Քաղաքապետարանին մէջ, երեսփոխան – քաղաքապետը՝ Ռ. Ռուքէ կ'ողջունէր երթին մասնակցողները բարի գալուստ մաղթելով եւ իր ուրախութիւնը կը յայտնէր որ Ալֆորվիլը ընտրուած էր որպէս վերջին հանդրուան: Պատիւ է, կ'ըսէր Ալֆորվիլի, տեղւոյն Հայերուն եւ քաղաքապետին համար: Իրեն կը յաջորդէին Անահիտ Ալի, Տիգրան Չերմանեան: Այս վերջինը կը թացատրէր երթին նպատակը՝ Ծերակոյտին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումին պահանջը: Այս 18–րդ հանդրուանի առաջին, Ռընէ Ռուքէ, ինչպէս նախորդ հանդրուաններու իր պաշտօնակիցները, ստորագրեց այն ազերբաղիրը որ Ծերակոյտէն կը պահանջէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման օրէնքին արձանագրութիւնը օրակարգին վրայ:

Նոյն իրիկունը, կայքէ մը եաք Աչտարակ հրապարակը, բազմութիւնը կը հաւաքուէր Լէօ Վակրանժ սրահը ուր տեղի կ'ունենար Ապրիլ 24 Կոմիտէի կազմակերպած հանդիսաժողովը: Հոն խօսք կ'առնէին երեսփոխան եւ Վիլէօրպանի փոխ – քաղաքապետ՝ Ժան – Փօլ Պրէթ, որ նախաձեռնողն էր ցեղասպանութեան ճանաչման օրէնքի առաջարկին, Ռընէ Ռուքէ որ նոյն առաջարկին զեկուցաբերն էր Ազգային Ժողովի Մայիս 29–ի նիստին, համայնավար Ծերակուտական Տիկին Հելէն Լիւք, Ազգ. Գրիզորեան եւ Ալէքսի Կէօվճեան: Բոլոր խօսք առնողները կը չեշտէին նոյն պահանջը որ Ծերակոյտի օրակարգի արձանագրութիւնն է:

Չորեքչաբթի առտու, Մայիս 12–ին, համախմբուելէ եաք Ալֆորվիլի քաղաքապետարանին առջեւ, երթը ճամբայ կ'ելլէր ժամը 10–ին հասնելու համար Փարիզ ժամը 12·30–ին, ապա Ազգային Ժողով ժամը 14–ին, հուսկ՝ Ծերակոյտ ժամը 16–ի չուրջ:

ԾԱՆՕԹ ԳՐՈՂ

## ԵԱՇԱՐ ՔԷՄԱԼ ԹՈՒՐՔԻՈՑ ՄԷՋ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մարդկային Իրաւունքներու Միութեան կողմէ դաղափարներու ազատութեան նուիրուած քարոզչական արչաւի մը քիւրտ ծանօթ վիպագիր Եաշար Քէմալ ելոյթով մը քննադատած է Թուրքիոյ կացութիւնը: Ան ըսած է որ քաղաքակիրթ աչխարհին մէջ ամէն օր կը չեչտուին ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու սահմանները, մինչդեռ Թուրքիոյ մէջ այդ ուղղութեամբ ոչինչ տեղի կ'ունենայ: «Մենք մեծ ճնշումի ենթակայ ենք. կամ պիտի խօսինք ու բանտարկուինք, կամ պիտի լռենք: Ես կը նախընտրեմ բանտարկուիլ» ըսած է յայտնի վիպագիրը ու չարունակած. «Ես ոչ մէկ յանցանք գործած եմ, բայց օր մը եթէ առիթը գտնեն կը բանտարկեն զիս, որովհետեւ Թուրքիոյ օրէնքները թոյլատու են նման բանի»:

Ե. Քէմալ խօսելով ամբողջ աչխարհին Թուրքիոյ ուղղուած քննադատութիւնները մասին, յայտնած է թէ Անկարա ոչ մէկ կարեւորութիւն կուտայ անոնց ու ոչինչ կը փոխէ: Կրնան պինքը ամենայն հանդստութեամբ տասը տարուան բանտարկութեան դատապարտել: Ոչ թագմաթիւ լեզուներու թարգմանուած հեղինակ ըլլալու պարագան, ոչ ալ տարիքը կրնան արգելք ըլլալ այդ հեռանկարին:

Քիւրտ վիպագիրը ըսելով որ հակառակ ամէն բանի լինք պայքարը չարունակելու վճռակամ է, ըսած է թէ քրտական հարցը ժողովրդավարական իր պայքարին մաս կը կազմէ եւ թէ ամբողջ կեանքին ընթացքին ազատութեան համար պայքար մղած է: Ան քննադատած է Թրքական լրատփիւռներն ալ որոնք հազիւ քանի մը տողով արձագանգած են դատարանին մէջ կատարած իր ինքնապաչտպանութեան, մինչդեռ զերմանական, ամերիկեան, Քրանսական մամուլը լայն տեղ տուած է անոր:

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 11 / 12)

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Մայիս 11–ին Զուարթնոց էջք կատարած է Յունաստանի նախագահ Գ. Ստեֆանոփուլոսի օդանաւը: Անոր ընկերացած են Արտաքին Գործերու եւ Տնտեսութեան փոխ – նախարարները, պաշտօնատարներ: Զիրենք դիմաւորած են նախագահ Ռ. Քոչարեան, Արտաքին Գործերու նախարար Վ. Օսկանեան, Յունաստանի դեսպանը եւ այլ պաշտօնատարներ: Յոյն նախագահը ըսած է թէ ամենախոր զգացումներով դացած է Երեւան. ողեկոչած է երկու ժողովուրդներուն զարաւոր կապերը, նաեւ ներկայի լաւագոյն յարաբերութիւնները: Ան աւելցուցած է որ ընդհանուր հետաքրքրութեան հարցերու չուրջ զրուցելու եկած է նախագահ Քոչարեանի հետ:

Մայիս 12–ին, նախագահը զանազան հանդիպումներ կ'ունենար եւ այցելութիւններ կը կատարէր:

***

### Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՄԵԾՆ – ԲՐԻՏԱՆԻՈՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Արտաքին Գործերու նախարարէն եւ Ազգային Ժողովի նախագահէն եաք, Մայիս 11–ին նախագահ Ռ. Քոչարեան ընդունած է Մեծն – Բրիտանիոյ պատուիրակութիւնը որ կը բաղկանայ Խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին կարգ մը անդամներէն: Նախագահը կարեւորութիւնը չեչտելով նման այցերու, ըսած է որ անոնք առիթ կուտան հայատանեան անցքերուն առընչութեամբ աւելի ճիշդ պատկերացում ունենալու: Խօսելով Ղարաբաղի խնդրին մասին, նախագահը նչած է սկզբունքներ որոնք հիմք պէտք է կազմեն խնդրին կարգաւորումին: Անոնք են կողմերու իրաւահաւասարութիւնը, Ղարաբաղի Հայաստանի հետ կապին պահպանումը, անոր բնակչութեան ապահովութեան համար միջազգային երաչխիքները:

***

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՄԲԻՇՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի ազատ ոճի երիտասարդ ըմբիչները մասնակցած են Իրանի ուսանողական «Նուրբի Բաժակ» մրցաչարքին, որուն ներկայ էին Իրանի, Թուրքիոյ, Ճափոնի, Թիւրքմէնիստանի, Տաճիկստանի, Աֆղանիստանի եւ Ադրբեջանի ըմբիշները, ընդհանուր թիւով՝ 150 մարզիկներ: Հայաստանի բոլոր ներկայացուցիչներն ալ դասաւորման մէջ տեղեր գրաւած են. անոնցմէ դիմբեցի Գէորգ Մելքոնեան՝ արծաթ, երեւանցի Աւետիք Վարդանեան եւ դիմբեցի Սամուէլ Ճարութիւնեան պրոնզ մետալ չահած են: Հայկական հաւաքականը դասաւորման մէջ գրաւած է 3–րդ տեղը, առաջին դիրքերը գիջելով Իրանի եւ Թուրքիոյ:

---

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ տօնին առթիւ, «Ցառաջ» լոյս չի տեսներ Հինգշաբթի, Մայիս 13–ին (Ուրբաթ, Մայիս 14–ի թիւ): Մեր յաջորդ թիւը՝ Շաբաթ – կիրակի, Մայիս 15/16:

# ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԿ. ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՖՈՐՈՒՄԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

## Պրիւսէլ, Մայիս 1-2

1998-ի Յուլիս 18 – 20 օրերուն, Ժընեւի մէջ հաւաքուած եւրոպական հօթը երկիրներու միութիւններու ներկայացուցիչները, նախապատրաստական ժողով ունեցան հիմնելու համար Եւրոպայի Հայկական Միութիւններու Ֆորում մը, որուն նպատակն էր Եւրոպայի Հայկական Սփիւռքին մէջ գտնուող ամէն տեսակի միութիւնները եւ կազմակերպութիւնները հաւաքել եւրոպական մէկ կազմակերպութեան մէջ որ իր ներկայացուցչութիւնը ունենայ Եւրոպայի Ազգերու Միութեան մէջ:

Կարելի է ըսել որ հիմնականին մէջ նախապատրաստական այդ ժողովին երկու օրուան աշխատանքին ընթացքին Ֆորումին հիմը դրուեցաւ, այն խոր համոզումով որ նպատակը կարեւոր է եւ կարելի է այլ երկիրներու մասնակցութիւնն ալ ապահովել: Որոշուեցաւ անմիջապէս կապ հաստատել եւրոպական զանազան երկիրներու հետ, ինչպէս նաեւ Պրիւսէլի Եւրոպայի Ազգերու Միութեան գրասենեակին հետ եւ, ընդունելով առաջարկը, Պելժիոյ Հայկական Կոմիտէին ներկայացուցչին յանձնուեցաւ տարեկան առաջին ընդհանուր հանդիպումին կազմակերպութիւնը, Պրիւսէլ քաղաքին մէջ: Ուրեմն, Մայիս 1 – 2-ի հաւաքոյթը կը բլլէր այդ որոշումէն:

Պէտք է ըսել որ Պելժիոյ Հայկական կոմիտէն սպասուածէն աւելի մեծ եւ կարեւոր դործ տեսած էր, պատրաստելով չորս օրուան ծրագիր մը. Ապրիլ 29 եւ 30-ին համար Եւրոպական Խորհրդարանի անմիջական աջակցութեամբ խորհրդաժողով մը, նիւթ ունենալով «1999 – Հայութիւնը դարաշրջանի հանդրուանին»: Ներշփուած նիւթերուն եւ նիստերը վարող անձերուն որակը եւ մակարդակը այս խորհրդաժողովը կը դեղեցկին կարեւոր աստիճանի մը վրայ եւ անոր լրատուութիւնը կ'ապահովէին Հայ մամուլի հոն ներկայ աշխատակիցները: Ուրախալի երեւոյթ էր տեսնել աշխարհի ամէն կողմէն հարիւրաւոր Հայերու մասնակցութիւնը:

Այս մեծ հաւաքոյթին իբրեւ չորսնակութիւն, յաջորդող երկու օրերու ընթացքին՝ Մայիս 1 – 2-ին, Պրիւսէլի Հայ Տան մէջ տեղի ունեցաւ Ֆորումին տարեկան առաջին հաւաքոյթը: Բացի հիմնադիր վեց երկիրներէն, անդամակցելու կարելիութիւնը քննարկող տասնէ աւելի նոր երկիրներու ներկայացուցիչները հոն էին: Ընդամէնը մօտ հարիւր չհասն հոգի: Իրբեւ դիտող - հետեւող ներկայ էին նաեւ եւրոպական քանի մը երկիրներու Հայաստանի դեսպանները:

Այսքան մեծ թիւով անձերու միասին աշխատելուն համար Հայ Տան սրահները անբաւարար հանդիսացան եւ ժողովին տահուն դործունէութեան արդելք եղան: Ցաւալի էր ջազդդուութիւնը եւ, մանաւանդ նորեկներու դժդոհութիւնը. անոնք կը չնային իրենց կողմէ աւելի ճիդ նը-կատուած ձեւականութիւն մը կիլլարկել տալ լաւագոյնս վարելու համար ժողովին ընթացքը. բան մը որ կազմակերպիչներու հաւանութիւնը չէր ստանար: Սակայն, ի վերջոյ, նպատակին կարեւորութիւնը եւ զայն ձեւականութեան պահանջքէն աւելի առաջնահերթ եւ դերադանց նկատելու խոհեմութիւնը հարթեցին ճամբան եւ աշխատանքի կարելի ձեւ մը ընդունելի եղաւ:

Կազմուեցան աշխատանքային 6 խումբեր որոնք առանձնացան զատ զատ սենեակներու մէջ, մշակելու եւ ծրագրելու համար որոշուած նիւթը եւ հաւաքոյթին վերջաւորութենէն առաջ հաղորդելու իրենց եզրակացութիւնը:

Տրուած նիւթերը հետեւեալներն էին.

– Մամուլ եւ լրատուութիւն
– Օրէնսդրական հարցեր
– Տնտեսական հարցեր
– Ցեղասպանութեան ճանաչում
– Լոպիական դործունէութիւն
– Հայկական մշակոյթի եւ արուեստի տարածում
– Հայոց լեզուի տարածում, հայկական դպրոցներ:

Անդրադառնալով այս վերջինին, դրեթէ բոլոր մասնակցողներուն ամէնէն ընտրանի լեզուները անգլերէնը եւ ֆրանսերէնը ըլլալով, խօսակցութիւնները յաճախ կ'ընթանային այդ լեզուներով, մանաւանդ յանձնաժողովներուն մէջ, բան մը որ արգելք չեղաւ սակայն արդիւնքին որակին: Կային պատրաստուած երիտասարդներ որոնք դիտակցութեամբ կը մասնակցէին այս յանձնաժողովներուն:

Որոշ ատեն մը աշխատանքները ընդհատուեցան ընդունելու համար հայկական պատուիրակութեան մը այցելութիւնը. Հայաստանի Մշակոյթի նախարար Ռոլանտ Շաուոյեան, ԼՂՀ Աղտաքին Գործոց նախարարուհի Ն. Մելքումեան, Սփիւռքի հետ կապերու բաժինէն Ճիվան Մովսիսեան, որ ի պատճէն հետաքրքրուած էր Եւրոպահայերու Ֆորումով: Շնորհաւորական, երախտաւորական խօսքեր արտասանեցին եւ յայտնեցին Հայաստանի եւ Ղարաբաղի մեծ հետաքրքրութիւնը եւ յոյսերը որոնք կը կապուին Ֆորումի նման կազմակերպութեան մը:

Ապա քննարկուեցաւ Ժընեւի հաւաքոյթին պատրաստուած տասը կէտերէ բաղկացած Ֆորումի սկզբունքներու ցանկը, ինչպէս նաեւ կանոնադիրը: Եղան փոփոխութիւններ եւ առաջարկներ եւ բացատրական լուսաբանութիւններ: Ինչպէս կռահելի էր, արեւմտեան Եւրոպայի եւ արեւելքի մշակոյթներուն պատկանող անձեր, կամ իրբեւ մայրենի լեզու արեւմտահայերէնը կամ արեւելահայերէնը դործածողներ, նոյն բառին տարբեր համանումներով կը մօտենային, յաճախ ադաւաղելով անոր իրաւական կամ լեզուաբանական իմաստը եւ գործածութեան նպատակը: Որով որոշուեցաւ վերամշակել Ֆորումի սկզբունքներուն ցանկը, կարմել նոր կանոնադիր մը ներառնելով, այս ժողովին ընթացքին արծարծուած միտքերը եւ գանոնք չաղաղրել անգլերէն կամ Ֆրանսերէն լեզուներու իրաւական յատուկ նշանակութիւն ունեցող բառերով, որպէսզի գործածուի իրբեւ հիմք, «մայր» կարելի ըլլայ ոչ միայն արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի, այլ նաեւ ամէն մասնակից երկրի տեղական լեզուին թարգմանել, անաղարտ պահելով «մայր» չարադրութիւնը կազմող բառերուն իրաւական արժէքները: Այս «մայր» չարադրութիւնն է որ, ընկերացած որեւէ թարգմանութեան, պէտք է հաստատէ իրաւական արժէքը եւ նշանակութիւնը: Կազմուեցաւ եօթը հոգինոց յանձնախումբ մը զանազան երկիրներէ, դրաղելու համար այս փաստաթուղթերու չարադրութեամբ եւ լիազօրութիւն տրուեցաւ Ֆորումի քարտուղար՝ Թորոս Սաղրճեանին որ այսպիսի փաստաթուղթերու չարադրութեան մասնագէտ իրաւաբանի մը օժանդակութեան դիմէ:

Բոլոր այս խօսակցութիւններուն, թեր ու դէմ կարծիքներով, մասնակցեցան բոլոր երկիրներու ներկայացուցիչները, անկախ՝ Ֆորումին մասնակցելու կամ չմասնակցելու իրենց որոշումէն: Մինչ որոշ երկիրներ անմիջապէս տուին իրենց մասնակցութեան հաւանութիւնը, ուրիշներ պիտի սպասեն կանոնադրին վերջնական չարադրութեան ու խորհրդակցին իրենց երկրի կազմակերպութիւններուն հետ, որոշելու համար մասնակցութեան պարագան: Բացի հիմնադիր վեց երկիրներէն՝ Զուիցերիա, Անգլիա, Իտալիա, Հունգարիա, Պելժիա, Ռուսաստան, (Ֆրանսա, որ ներկայ էր Ժընեւի ժողովին, ձեռնպահ մնացած էր խորհրդակցելու համար Ֆրանսահայ միւս կազմակերպութիւններուն հետ. այս անդամ ալ թէեւ ներկայ եւ գործօն կերպով մասնակից բոլոր վիճաբանութիւններուն, նոյնպէս անորոշ մնաց մասնակցութեան), ներկայ էին հետեւեալ երկիրները. Գերմանիա, Շուէտ, Նորվեկիա, Պուլկարիա, Հոլանտա, Լիթուանիա, Լատվիա, Էսթոնիա, Զեխիա, Բելառուսիա, Ուկրանիա, Լեհաստան:

Քննարկելով Ֆորումի կեդրոնական գրասենեակին վայրի հարցը, դիւանի եւ քարտուղարութեան աշխատանքին կապուած ծախքերը, որոշուեցաւ չարունակել օգտադործել Ժընեւի կարելիութիւնները:

Պիւճէի ծախքերը հաւասար կերպով կը բաժնուին երկիրներուն միջեւ. ամէն երկիր իր կարգին կը բաժնէ այն կազմակերպութիւններուն միջեւ, զոր ինք կը ներկայացնէ: Պէտք է աշխատիլ ամէն երկրի մէջ գտնել բարերարներ որոնք ամբողջութեամբ կամ մէկ մասով մասնակցին ծախքերուն:

Նկատի առնուած է պահեստի տարեկան դումար մը որ պիտի տրամադրուի արեւելեան այն երկիրներուն որոնք գոնէ սկզբնական շրջանին, չունին կարելիութիւնը ամբողջովին կամ մէկ մասով ծախքերը դիմադրաւելու: Իրբեւ սկզբունք ընդունուած է որ Ֆորումին մասնակցութիւնը վճարումի պարտադրանք չունենայ:

Ինչպէս կարելի է ենթադրել Ֆորումին վերաբերեալ այս տեղադրութենէն, աշխատանքը եղած է արդիւնաւոր եւ, ինչ որ կարեւոր է, մասնակից երկիրներուն բոլոր ներկայացուցիչները խոր համոզումը դոյացուցին որ Ֆորումը պատմական անկիւնադարձ մը կը ներկայացնէ Եւրոպայի Հայկական Սփիւռքի կեանքին եւ ապադային համար. ուստի ամէն ջանք պէտք է գործադրել աւելի լաւ կազմակերպուելու, Եւրոպական Միութեան հետ սերտ կապեր ստեղծելու միջոցները գտնելու եւ, Պրիւսէլի մէջ տեւական դրասենեակ մը պահելու համար:

Ամբողջ տարուան մը աշխատանք կայ տանելիք ժողովէն ծագած գուգմունքները իրականացնելու եւ պատրաստուելու համար 2000-ի Մայիսին Պուտափէշտէի մէջ տեղի ունենալիք հաւաքոյթին որուն պատասխանատուութեան գործը ստանձնեց Հունգարիոյ Հայ ազդային ընկերակցութիւնը:

Վ. Բ.

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԺՈՂՈՎ - «ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ»

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Գործակցութեան եւ մասնակցութեան դռները լայնարաց են անխտիր բոլոր բարի կամեցողութեան տէր Հայերու առջեւ: Ո՛չ միայն բարի գալուստի մաղթանք կ'ըլլայ ամէն կողմի եւ դասի Հայուն, այլեւ մանաւանդ ամէն ճիգ կը թափուի որ դաւթը մարդ կամ խումբ չմնայ, ան կոչուի «չեզոք հայ», թէ «լուռ մեծամասնութեան» պատկանող դանդուած: Անմասն մնացած ամէն ուժ, մեծ թէ փոքր, կորուստ մըն է ընդհանուր գործութեան եւ գործունէութեան արդիւնաւորումին տեսանկիւնէն: Նկատի առնուած են Սփիւռքի բազմազանութիւնը եւ բարդ կառոյցը, մոռ որ «Սփիւռքի գործութիւնը իր բազմազանութեան մէջ է», ինչպէս ըսաւ նախագահ Քոչարեան: Համաժողովին գերագոյն նպատակը կը կազմէ գոյատեւումը համազգային մարմնի մը, կամ մեքենականութեան մը՝ որ նման կարենայ միասնականութիւն ստեղծել եւ համագործակցութիւն ապահովել սփիւռքահայ չերտերէն ներս եռամսեան ծրագրի չուրջ, - «Հայաստանի պետականութեան ամրացում, Արցախի հարցի կարգաւորում եւ Սփիւռքի ինքնութեան յաւերժացում»:

Նպատակը որքան մեծ եւ անհրաժեշտ նոյնքան նաեւ իր առջեւ ցցուած ունի խոչընդոտներու եւ արգելքներու չարք մը, որոնք աւելի մեծմէ ղ որ կը յառաջանան քան թէ արտաքին աշխարհի պարտադրանքներէն: Եւ ասոր դիտակից են հայրենի պատասխանատուները: Գոնէ այս առաջին հանդրուանին համար տիրոջն է իրապաշտ դատումը. «Մեր առջեւ ֆանթաստիկ նպատակներ չենք դնում», ըսաւ Քոչարեան: Այսուհանդերձ ծրագիրը ինքնին «ֆանթաստիկ» է, մեծդի:

***

Նախ բարձր դնահատանք մը երեւանի կազմակերպիչ կեդրոնական մարմնին, եւ մասնաւորաբար Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեանին, որ գործած է Սփիւռք – Հայաստան համաժողովին հաւատարիմ եւ ձեռնհաս միխոնարը: Մեր դատումը էնթակայական տուեալ չունի, որքան ալ ընդունինք թէ ծագումով սփիւռքահայու մը կողմէ քարոզուած բարի խօսքը աւելի անմիջական լսողականներ կ'ունենայ մասնաւորաբար վերջին չրջանին, երբ հայրենի իրականութիւնը եւ հոն գործող որոշ դերակատարներ տեսանելի վերապահութիւն եւ նախատելի անվստահութիւն կը յառաջացնեն արտատահմանի մէջ: Նախարար Օսկանեան չատերու կողմէ կը նկատուի «մեր տղան», որ կը ճանչնայ Սփիւռքը: Խօսքը միայն Ամերիկահայուն չի վերաբերիր, այլ նաեւ այլ երկրամասերու Հայերուն: Օսկանեան՝ ինքնին բարի պատգամատուր մը երբեմնի Սփիւռք–Հայաստան մշակութային կապերուն՝ ինքզինք նոյնքան հարազատ զգալով երբ կը գայ հայրենի աշխարհին եւ Ժողովուրդին: Իր խօսքին համոզուած եւ համոզիչ քարոզիչը՝ ինքնին վստահութիւն ներչնչող կոմբորդ մըն է: Եթէ ծրագիրը յաջող ընթացք մը կը խոստանայ, անոր մէջ անկասկած իրենց կարեւոր դերը ունին կազմակերպիչները, իրենց հարցին մերօրեայ մերձեցումով եւ – ըսենք – յաջող լոպիինկով:

Ուաշինկթընի հաւաքը – նոյնպէս նաեւ Փարիզի եւ Պուտափէշտի հաւաքները, ինչպէս որ կը վկայուին – տեղի ունեցաւ ջերմութեան, անկեղծութեան եւ ապահովութիւն ներչնչող մթնոլորտի մը մէջ ներկաներուն զգացնել տալով իրենց կարեւորութիւնը: Անոնք կը գտնէին ուշադիր ականջներ: Կը խնդրուէր առանց վերապահութեան բոլոր հարցերը արծարծել, կարծիքները բանաձեւել, մասնադրութիւնները պարզել՝ յորնուամն «բանաձեւին որ հնարաւորութիւն կուտայ միացնել բոլորս», կամ որպէսզի «կողմնորոշումը ըլլայ ճիշդ»: Սփիւռքի Հայը կը հրաւիրուէր ըլլալու գործընկեր համազգային նպատակի մը իրագործումին եւ իրեն կ'ըսուէր թէ Երեւան դիտէ նպատակը, սակայն եկած է հարցնելու զայն իրագործելու ձեւը, միխանաթար որոնելու միջոցը, քանի եթէ ինք տեղեակ է «ինչին», «չի պիտեր ինչպէսը» (Օսկանեան)..., չունի այն բազդատաարերը

որոնք յաջողութիւնը պիտի ապահովեն նպատակին:

Սփիւռքը հաւաքարար ինքզինք այս եռանակով եւ կազմով այսքան չոյուած եւ յարգուած չէր զգացած իր պատմութեան մէջ:

⁂

Այս բոլորէն ետք կը մնայ հակառը, այն հարցերը որոնք իրենց ամբարտաւան դլուխը կը ցցեն:

Որքանո՞վ սփիւռքի բազմադոյն կազմակերպութիւնները եւ կուսակցութիւնները պատրաստ են արժանաւորապէս պատասխանելու համազգային այս մարտահրաւէրին, իսկ մեւս կողմէ՝ որքա՞ն երեւանի այս թէ յաջորդ իշխանութիւնները ինքզինքնին հեռու պիտի պահեն նման կարեւոր իրագործում մը ներքին չուկայի մէջ օպտապործելու փորձութենէն: Կողմերուն ներշնչած փոխադարձ վստահութիւնը կը պայմանաւորէ առաջիկայ հանդրուանին յաջողութիւնը:

Սփիւռքը միշտ պէտքը զգացած է իր գաղութներէն համազգային մարմիններու առեղծումին, նախ ընդհանրային մակարդակով, ապա՝ համազգայնին ներկայացուցչական կեդրոնական խորհուրդի տարողով: Փոքր, աչխարհի չորս ցամաքամասերուն վրայ տարտղնած Հայու բեկորները, որքան ալ ներքնապէս կազմակերպուած ըլլային միութիւններու – յանձին այլամերժ – ցանցով մը, անոնց դործունէութիւնը դատապարտուած էր մնալու սահմանափակ եւ ամուլ՝ միջազգային հոսանքներու խաչուղիին վրայ: Մեր սուղ միջոցները միացնելով եւ զանոնք խնայզաբար գործածելով է միայն, որ կարելի պիտի ըլլար արդիւնաւորել մեր ճիդերը: Այդ ուղղութեամբ ցայժմ տարուած բոլոր աչխատանքները եւ կոչերը մնացած են ապարդիւն, չանաչի բացատրելի պատճառներով:

Ահա այսօր միասնական աչխատանքի ժամը հնչած է: Նախ Երեւանի իշխանութիւններուն կողմէ կը թուի փոխուած ըլլալ իրենց դիրքը եւ մերձեցումը Սփիւռքի եւ Հայաստանի ներքին իրականութեան հանդէպ: Երեւոյթները ցոյց կուտան թէ յանձին Սփիւռքահայուն՝ Երեւան կ'ուզէ տեսնել գործընկեր մը, եւ ոչ թէ չհարկումի ազբիւր մը: Յարաբերութիւնները, հաղորդակցութիւնները եւ չահերը պիտի ըլլան երկուղի: Որեւէ կազմակերպութեան չահկալուիր որ ան դիմէ ինքնալուծարքի կամ ինքնուրացումի, այլ կոչ կ'ըլլայ իր կարելիութիւններուն մէկտեղումին՝ սփիւռքահայ բազմաթնոյթ եւ բազմաչերտ ուժերու հետ: Ի վերջոյ, «Սփիւռքի ինքնութեան պահպանումը» նաեւ հայկան հարց է:

Կը մնայ հաչուի նստիլ մեր Հայու մըտքին, խղճին, մեր գոյութեան իրաւունքին, զայն պայմանաւորող ազդակներուն, ու մեր ամբողջ պատմութեան հետ, տալու համար սպասուած պատասխանը եւ առնելու պատասխան քայլերը: Եթէ Սփիւռքը ուժ է, ինչպէս կը յայտարարենք ի ժամու եւ տարաժամու, այդ պարտադին պէտք է անյապաղ վերանայիլ եւ վերամչակել մեր բոլոր գործունէութիւններուն ծրագիրներն ու կանոնադիրները, աչխատանքի ձեւերը, ներազգային փոխ յարաբերութիւններու քնոյթը: Եթէ Հայուն համազգային մտահոգութիւնը եւ հետապնդումը կը զանան միեւնոյն առանցքին չուրջ, ան ցոյց պէտք է տայ գործնական մօտեցումի՝ վերաքննութեան ենթարկելու համար Սփիւռք – Հայաստան կապերը Սեպտեմբերի համաժողովին քննարկելի հարցերը բազմազան են եւ բարդ, որոնց կարգին՝ լեզուական – ուղղագրական հարցը, եւ բոլորին կողմէ կը պահանջուի եսերու մոռացում: Առանց այս վերահաստութեան եւ համապատասխան դիրքորոչումի՝ ամէն կարգի նախաձեռնութիւն անվերականգնելի վնաս մը պիտի նկատուի ազդային մեր բոլոր նպատակներուն: Պետականութիւն ունեցող հայութիւնը պարտի ընդգրկել համահայկական ծրագիր, սուրացող ժամանակին մէջ:

Պարզամիտ պէտք չէ ըլլալ, ակնկալելու համար թէ մինչեւ Սեպտեմբեր սփիւռքահայ կազմակերպութիւնները հրաչագործ աւազանի մը մէջ թաթխուելով պիտի այլափոխուին, մէկ օրէն միւսը թօթափելով իրենց մէկ դար երկարող դիմագրականութիւնը: Երկարաչունչ աչխատանք պահանջող գործ մըն է, որ պիտի իրականանայ հանդրուաններով, եւ որ կը կարօտի մանաւանդ նախապատրաստական լուրջ ուսումնասիրութիւններու՝ մանաւանդ մարմիններու կողմէ, որոնց վարմերը նոյնիսկ դեռ չեն նչանակուած: Հետեւաբար ժամանակի դէմ արչաւ մըն ալ զգալի է: Այսուհանդերձ, կարեւորը առաջին քայլն է, հիմնականը չարժումն է դէպի նպատակը, որ կը կայանայ բոլոր ուժերու ներկայացուցչական մասնակցութեամբ: Նոր կառոյցի մը գոյառումին, որ իր կարգին պիտի հովանաւորէ եւ համակարգէ համազգային որոչումները, եւ իր ճիգառումներով եւ ցանցերով կարելի դարձընէ անոնց գործնականացումը:

Սեպտեմբերին Երեւանի մէջ արծարծուած եւ քննարկուած բազմատասնեակ հարցերը իրենց բանաձեւումներով պիտի մնան տեսական մակարդակի վրայ, եթէ երբեք կարելի պիտի չըլլայ գտնել եւ ոտքի կանգնել այդ տիպար կառոյցը: Մաղթենք որ բոլոր կողմերը եւ բազմահարիւր մասնակիցները պիտի մխանան այդ ըմբռնողութեամբ, ի մտի ունենալով որ առիթներ կորսնցնելու ո՛չ կարելիութիւնը ունինք, ոչ ալ պերճանքը:

Գ. Ֆ.

Պոսթըն

# ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

## «ՓՐՈՎԱՆՍ - ԱՐՄԷՆԻ» ՄԻՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐՍԷԼ (Ցառագ)

1999–ին, Մարսէյլի գաղութային կեանքը հարստացաւ նոր կառոյցով՝ «Փրովանս – Արմէնի» Միութիւնը: Նպատակն է ծաւալել համակամութեան գործօղութիւններ դէպի Հայաստան, միայն ու միայն մարզական քնագաւառէն ներս:

Այս միութիւնը իր ծննդեան վկայագիրը ստորագրեց Յունուար 19–ին, բացումը ակտարելով իր կեդրոնատեղիին, Պոմոնի Հայկազեան Թաղամասին մէջ: Բացումի մը որուն ներկայ եղան եւ Միութեան բերին իրենց բարոյական երաչխաւորութիւնը՝ Եուրի Ճորքայէֆ, Ալէն Պօղոսեան իրենց հետ բերելով համաչխարհային բաժակը, եւ Փութպոլի աչխարհի ու մարզական այլ յայտնի դէմքեր, ախոյեաններ ինչպէս՝ Միչէլ Իտալիօ, Էրիք Տիմէքօ, Պիմաօնթի (քարաթէի աչխարհի ախոյեան) եւայլն...: Փութպոլի համաչխարհային ախոյեանները ներկայ էին Մարսէյլ, որովհետեւ յաջորդ օրը, Ֆրանսայի Ազգային խումբը բարեկամական մրցում մը պիտի ունենար Մարոքի Ազգային խումբին դէմ, Օլիմփիք Տը Մարսէյլի դաչտին վրայ: Միայն զուգադիպութիւն մը չէր, այլ նախապէս պատրաստուած եւ Փութպոլի Ֆրանսայի դաչնակցութեան արտօնութիւնը ստացած:

Բնականաբար քաղաքական անձնաւորութիւնները փութացին. Մարսէյլ քաղաքի մարզական կացորդը՝ բժիչկ Ռ. Վիլանի, երեսփոխան՝ Մարիուս Մաս, քաղաքապետական խորհուրդի անդամ՝ Ս. Պոթէ, Պուչ տիւ Ռոն նահանգի Ընդհանուր Խորհուրդի նախագահին ներկայացուցիչը՝ Ժրիսթոֆ Մաս եւայլն...: Ժողովուրդը հրմշտուքի ենթարկուեցաւ: Մեհեանները լայն արձագանգ տուին, սիւնակներ տրամադրելով կրկնակի եւ դունատոր նկարներով:

«Փրովանս – Արմէնի» բաց է բոլորին առջեւ, հայ թէ ոչ: Ամիսէ ամիս կը բազմապատկէ իր անդամներուն թիւը: Կը հաչուէ արդէն հարիւրէ աւելի անդամ: Անդամակցութիւնը կը կատարուի տարեկան անդամավճարով մը, երկու – հարիւր Ֆրանք: Ունի պատուոյ անդամներ: Պատուոյ նախագահն է՝ Ալպէր Արսթանեան, էքս – Ան – Փրովանսի մօտ «Տօմէն տը Թուռնոն»ի տէրը ուր Հայաստանի Ազգային խումբը տարին երկու անդամ «սթաժ» կը կատարէ: Ալպէր Արսթանեան Հայաստանի Փութպոլի Դաչնակցութեան ներկայացուցիչն է Փութպոլի Միջազգային Դաչնակցութեան (Ֆ.Ի.Ֆ.Ա.) մօտ: Ան կը բերէ իր փորձառութիւնը, իր յանձնառութիւնը, իր յարաբերութիւնները լայն ցանցը: Սակայն, այս նորաստեղծ Միութեան սիրն ու բաղումն է՝ Ցակոբիկ Խաչատուրեան: Հիմնադիրը նախագահի իր պաշտօնին մէջ առանց յոգնելու, առանց հաչուելու կուտայ իր ժամանակին, իր ձեռներէցութիւններին, իր նիւթականին: Ցակոբիկ Խաչատուրեան իր չուրջը ունի ամուր, միատարր եւ այլ միութիւններու մէջ չմտած ուստի «չհինցած» խմբակ մը՝ բժիչկ Ռիչարտ Վարդոքեան (քարտուղար), Անրի Մահիքեան (հաչուապահ), Էլոտի Մալաթրէ (մամուլի կացորդ) եւ խորհրդականներ՝ Միչէլ Կէտան, Ֆրանսուա Կայատ, Արմէն Ութուգեան, Անարէ Պերթոլօ, ժան – Փօլ Պոռէլի:

«Փրովանս – Արմէնի» առաջին ձեռնարկը եղաւ խմբական համբորդութիւն մը կատմակերպել Ֆրանս – Հայաստան մրցումին առթիւ, Մարտ 31–ին, «Սթատ Տը Ֆրանս»: Երեք խումբ, չուրջ երկու-հարիւր հոգի, մեկնեցան Մարսէյլ – Փրովանսի օդակայանէն «Փրովանս – Արմէնի»ի դոյներուն տակ: Մրցումէն յետոյ բոլոր Մարսէյլցիները եւ այլ անձեր ժամադրուեցան Անկլէնի քազինոն ուր մինչեւ վաղ առաւօտեան, Հայաստանի Ազգային խումբի խաղացողներու ներկայութեամբ եւ մասնակցութեամբ, հայկական նուագով, երգերով եւ պարերով ապրեցան եւ բաժնեցին ուրախութեան ու խրախճանքի ժամեր:

Այժմ, կը պատրաստուի դարձի մրցումին, Երեւան, Սեպտեմբեր 7–ին: Կարճ կամ մէկ չարթուան ճամբորդութիւններու կը ձեռնարկէ: Սակայն, ինչ որ բացառիկ է, Սեպտեմբեր 6–ին եւ 7–ին, կը կազմակերպէ «Rallye – automobile» մը, Երեւանի չուրջ, ծանօթ դէմքերու մասնակցութեամբ՝ Ռընէ Մէհճ, Փաթրիք Թամպէ, Անրի Փէսքարոլօ, Լիւք Ալֆան եւ ուրիշներ: Միութիւնը, նախորդող չարթնեռուն Մարսէյլէն պիտի առաքէ երկու «քոնթէյներ» մարզական գանազան սարքաւորումներով լեցուած: Նոյնպէս՝ «Փրովանս – Արմէնի» մասնաւոր աչխատանք կը տանի նիւթապէս օժանդակելու համար նոր մարզադաչտի մը չինութեան համաճայն Փութպոլի միջազգային հրամայականներուն եւ կանոններուն:

Բարի երթ կը մաղթենք այս Միութեան որ զինուած է կորովով, թարմ ուժերով, եռանդով, նոր ծրագիրներով, նուիրումով: Մէկ վերապահութիւն սակայն. առաջին քայլերու խանդավառութեամբ տարուած չբացուիլ ամէն հորիզոններուն վրայ, բոլոր հովերուն առջեւ չհանդիպելու համար փոթորիկներու մինչեւ այն տաեն երբ Սփիւռք – Հայաստան եւ Հայաստան – Սփիւռք կապերը ճշդուին եւ ամէն ինչ պատրաստ պիտի ըլլայ թէ ո՞վ ով է:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

– Ռաւտէվուի տան մը մէջ պատահած դէպք մը ծածուկ կրնա՞յ մնալ. մանաւանդ երբ խնդիրը ծանօթ անձերու չուրջ կը դառնայ:

– Ես եթէ Տիկին Թաթիկեանի տեղ ըլլայի, քանի մը չարաթ տունէ դուրս չէի ելլեր, – յայտարարեց Տիկին Սկամպիլեան:

– Իր ըրածը պարզապէս հանրային կարծիքը արհամարհել է, – աւելցուց Տիկին Սիրարփի:

– Այդ տեսակ կիներուն պէտք է դաս մը տալ, վերջապէս բարոյական ըսուած բան մը կայ:

– Ի՞նչ դաս կ'ուզես տալ, երբ իր ամուսինը ամէն բան գիտնալով՝ լուռ կը մնայ:

– Ամուսինը ինչ կ'ուզէ, թող ընէ, բայց ուրիշները նոյն ներողամտութիւնը ցոյց տալու սովորած չեն:

– Ըստ իս՝ պէտք է երես դարձնել իրմէ ու հետը չտեսնուիլ:

– Արդիւնելու է իրեն պատուաւոր ընտանիքներու մէջ մտնելը:

– Բարեւն ալ կտրելու է իրմէ:

Մինչ երկու կիները փոխն ի փոխ այս խօսքերը կ'արտասանէին, Աթիկ պէյ դատելով, որ իր պաշտօնը աւարտած է, հրաժեչտ առաւ ու հեռացաւ:

Քիչ յետոյ երեւցաւ Տիկին Թաթիկեան, այս անգամ առանձին:

– Դէպի հոս կուգայ կոր, – ըսաւ Տիկին Սիրարփի թեթեւ մը իր բարեկամուհիին թեւին զարնելով:

– Չտեսնելու զարվ, – պատասխանեց միւսը:

– Անկարելի է, չիտակ հոս կ'ուղղուի...

Արդարեւ Տիկին Թաթիկեան ժպտուն դէմքով մը մօտեցաւ երկու տիկիններուն եւ անոնց ձեռքը թօթուեց:

– Կարծեմ թէ քաւական մեծ հատոյթ մը պիտի ապահովէ, – ըսաւ:

– Այնպէս կը յուսամ, – պատասխանեց Տիկին Սկամպիլեան:

– Բոլոր ցուցադրուած առարկաները դրեթէ ծախուած են:

– Տակաւին որոչ բան մը չեմ գիտեր:

– Ես աչքովս տեսայ, ամէն կողմ պըտտեցայ, բաւական բան առնել տուի Ամբրոսիոս էֆէնտիին, կարծեմ մարդը ղղջաց հետս դալուն թէեւ կալաման իմ խնդիրք չմերժեց:

– Իսկ Թաթիկեան էֆէնտի՞ն, – հարցուց Տիկին Սիրարփի, – չեկա՞ւ ձեզի հետ միասին:

– Հաւատացէ՛ք, որ երկուընկ ի վեր երեսը չեմ տեսեր, – պատասխանեց Տիկին Թաթիկեան:

– Ի՞նչպէս կ'ըլլայ այդ:

– Երկկ իրիկուն երբ տուն գացինք, արդէն պառկած էր, այս առտու երբ անկողինէս ելայ, արդէն ինք դուրս ելած էր:

– Տիպար ընտանեկան բոյն մը ունիք:

– Այսպէս աւելի աղէկ է, եթէ շատ իրար տեսնենք, կուիւ կ'ընենք. որչափ իրարու երես քիչ տեսնենք, այնքան խաղաղ կ'ապրինք:

– Ես եթէ օր մը էրկանս երեսը չտեսնամ, կը խենթենամ, – ըսաւ Տիկին Սիրարփի միամիտ դէմքով մը:

– Ուրեմն դուն հին օրէնքի պատկանող կին մըն ես:

– Հինը նորը չեմ գիտեր, բայց ես այսպէս եմ:

– Հիմա անանկ բան չկայ, Տիկին Սիրարփի, հիմակ ազատ չրջանի մը մէջ կ'ապրինք կոր, չուրջդ չե՞ս նայիր, ամէն մարդ ի՞նչպէս կ'ապրի կոր... բարքերը փոխուած են այժմ...

– Ահաւասիկ Գալուստ էֆէնտին, որ Միսաք պէյին հետ դէպի հոս կուգան, – ըսաւ Տիկին Սկամպիլեան Տիկին Թաթիկեանի խօսքը ընդմիջելով, – կ'երեւայ որ քեզ տեսաւ ու անոր համար վազայ կոր:

– Ո՞վ ինծի համար պիտի գայ, – հարցուց Տիկին Թաթիկեան դէմքը խստացնելով:

– Գալուստ էֆէնտին:

– Բնաւ երբեք:

– Ինչո՞ւ համար:

– Գալուստ էֆէնտին ինծի հետ ի՞նչ գործ ունի:

– Զարմանալի բան, բարեկամ չէ՞ք, իրարու հետ չէ՞ք տեսնուիր:

– Դժբախտաբար ծանօթացած եմ այդ մարդուն հետ, – ըսաւ Տիկին Թաթիկեան, բայց ալ հետը տեսնուած չունիմ:

– Սեւ կատո՞ւ, անցաւ մէջերնիդ, – հարցուց Տիկին Սիրարփի խնդալով:

– Սեւ կատու անցնելու խնդիր չկայ, վարնոց մարդուն մէկն է, այսչափ:

– Բայց մինչեւ հիմա չատ բարեկամ էիք մէկտեղ:

– Զինքը մարդ կարծած էի... ինչ է նէ, մնաք բարով, ուշ մնացի պէտք է, որ երթամ, Ամբրոսիոս էֆէնտին դրանը առջեւ ինծի կը սպասէ կոր:

Այս խօսքերը արտասանելով՝ Տիկին Թաթիկեան արագ քայլերով հեռացաւ ճիշդ այն միջոցին, ուր Գալուստ էֆէնտի եւ Միսաք պէյ կը մօտենային Տիկին Սկամպիլեանի ու Սիրարփիի:

Գալուստ էֆէնտի մեծամիտ անբարտաւան, կնամոլ ու ինքնահաւան, քառասունհինգ տարեկան մարդ մըն էր, երկայնահասակ, խոշոր թաւ պեխերով, ինքնավստահ քայլուածքով: Կը հաւատար, թէ բոլոր ամուսնացած կիները սիրահարած են իրեն եւ եթէ չեն սիրահարած՝ պարտաւոր էին սիրահարիլ: Իր այս յատկանիչին կը հիմնէր ֆիզիքական ի՛նչ – ի՛նչ առաւելութիւններու վրայ՝ որոնց ծանուցումը ինքն էր, որ կ'ընէր, գրեթէ անպատկառօրէն:

(Շար. 23)

L'Ecole de la Langue et de la Culture Arméniennes
**« KHATCHADOUR ABOVIAN »**
de la
Cathédrale Apostolique Arménienne
de Marseille
vous invite à sa

# Fête Annuelle

suivie de la

# Kermesse

# ՏՕՆԱՎԱՃԱՌ

**Samedi 5 Juin**
de 14h30 à 19h
Dans la cour de la Cathédrale
**Serpotz Tarkmantchatz**
339, avenue du Prado — 13008 Marseille
Tirage de la TOMBOLA sur place
avec de nombreux lots
**Venez nombreux**
encourager nos élèves
et déguster les spécialités arméniennes
dans une ambiance familiale

Ֆաչալեբեցէք ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ
եւ ազգային դաստիարակութիւնը

---

**le Centre Culturel**
**SAINT MESROB**
**à PARIS**
**expose du 18 au 28 mai**
LES PHOTOS GRANDEUR NATURE
DES

# VITRAUX

réalisés par **Reine AVEDISSIAN**
sur le thème :
L'ART ET LA RELIGION,
SYMBOLES DE PAIX
Les sentiments religieux
dans l'Architecture et l'Art
sous les diverses formes
dans les grandes civilisations.

**Vernissage,**
**le Mardi 18 Mai à 19h**

10 bis, rue Thouin — Paris Ve
Entrée libre — Cocktail
**(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)**

Tél. : 01 44 59 23 50
ou 01 40 51 11 90
Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

---

# Fête Paroissiale

LUNDI DE PENTECOTE
24 MAI

AU PROGRAMME :
11h30 : *Culte;*
A partir de 12h : *Repas*
*Spécialités arméniennes;*
Stands :
*Pâtisseries arméniennes*
*Librairie, Brocante, etc...*
*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE ARMENIENNE

55, avenue Victor-Cresson /
28, avenue Bourgain
92130 ISSY-LES-MLX

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Կապոյտ Ծաչի Մարսէյլ քաղաքի Սօսէ Մայրիկ մասնաճիւղը շնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուէրները փոխան ծաղկեպսակի :*

*Կարապետ Մելէմէճեանի մահուան առթիւ.– Գուլումճեան ընտանիք, Տէր եւ Տիկին Արմենակ Եկաւեան 500–ական Ֆր.:*

*Բրաիհոն Պարոնեանի մահուան առթիւ.– Օր. Գլեմանս Թիւթիւեան 200 Ֆր.: Վարդանոյշ Զուխուրեանի մահուան առթիւ.– Պր. Լ. Եօթնեղբայրեան 500 Ֆր.:*

*Մարի Դաւիթեանի մահուան առթիւ.– Տէր եւ Տիկին Ժան Գազարեան 500 Ֆր., Օր. Էլիզապէթ Փափազեան 450 Ֆր., Տիկին Փիէռիթ Պալթիկոնէ 100 Ֆր., Տէր եւ Տիկին Ժակ Պօղոսեան 500 Ֆր., Տիկին Սիրվարդ Ճամուղեան 200 Ֆր.:*

*Մասնաճիւղը իր յատակագիծները կը յայտնէ սիրելի ընկերուհի Մարի Դաւիթեանի ընտանիքին, ան միշտ պիտի յիշուի :*

## ՀՈԳԵՇԱՀՈՒԹԻՒՆ

*Կիրակի, Մայիս 16, Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Դպրոցասէր Տիկնանց վարժարանի հանդուցեալ խնամակալներուն համար, ինչպէս նաեւ հանրուցեալ սանուհիներուն, Փարիզի Սուրբ Յովհաննէս – Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ :*

---

## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes — 92130 Issy-les-Moulineaux.

---

## L'ASSOCIATION ARMÉNIENNE D'AIDE SOCIALE

**RECHERCHE**
**pour la Maison de Retraite de Montmorency**

**1) INFIRMIERE PLEIN TEMPS**
**2) AIDE SOIGNANT(E)**
**A partir de Juin 1999**

Envoyer C.V. à la Maison de Retraite arménienne
44-50, avenue Charles-de-Gaulle
95160 MONTMORENCY

---

**Imprimé sur les Presses du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville, 75010 Paris**
**SIRET : 571 027 317 000 15**
**Commission Paritaire : N° 55935**

---

## L'ASSOCIATION MACHTOTZ

POUR LA DEFENSE DE LA LANGUE ARMENIENNE
organise un

## SEJOUR LINGUISTIQUE ARMENIEN
## BEYROUTH (Liban) - du 1er au 19 Juillet

**POUR LES JEUNES DE 8 A 16 ANS**
sous le patronage du Rév. Père KEGHAM KHATCHERIAN
*Prélat des Arméniens du Liban*

Les participants seront hébergés individuellement par des familles sélectionnées, dont ils partageront la vie et avec lesquelles ils communiqueront en langue arménienne.

Des cours d'arménien seront organisés à raison de 30 heures par semaine pour les **débutants francophones** par Mme Hilda Kalfayan-Panossian, avec sa **méthode audiovisuelle** et pour les autres niveaux, par des professeurs expérimentés.

L'encadrement et l'assistance aux jeunes participants seront assurés par les responsables de l'Association Machtotz.

Sont prévues plusieurs excursions comme Baalbek, Byblos, Saïda, Aïnjar, Zemmar, Antélias, la visite des musées et des institutions arméniennes, ainsi que des baignades à la mer et du sport, suivant possibilités

**FRAIS DE PARTICIPATION : 5950 F. par personne comprenant le transport aérien, l'hébergement en pension complète, les cours et les excursions.**

**Renseignements et inscriptions (avant le 31 mai) :**
ASSOCIATION MACHTOTZ
**8, rue Lamennais, 92370 CHAVILLE — Tél. : 01 47 50 97 51.**

---

# 1879-1999

## 120ème anniversaire de l'école TEBROTZASSERE

L'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
ET
L'ASSOCIATION DES DAMES ARMENIENNES AMIES DES ECOLES TEBROTZASSERE
PRESENTENT

## *La Chorale Koghtan et la Chorale de l'Ecole*

*dirigées par Haïg SARKISSIAN*
**dimanche 16 mai à 17 heures**
salle Cortot : 78, rue Cardinet — 75017 PARIS
(métro : MALESHERBES)
Participation aux frais — Adultes: 100 F - Enfants: 50 F
Renseignements & réservations :
ECOLE TEBROTZASSERE: 01 43 81 01 72 — U.G.A.B.: 01 45 20 03 18

---

## ESPOIR POUR L'ARMENIE

organise

# un Voyage de tourisme humanitaire

**DU 12 AU 19 JUILLET**

— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.

*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**

---

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Camp itinérant en Ardèche

**DU 7 AU 27 JUILLET**

**Nombreuses activités sportives et découverte de la région destinées aux adolescents nés entre le 1er juillet 1983 et le 31 décembre 1985.**

**Prix : 3 800 F + voyage**
**Date limite d'inscription : 30 MAI**
**Attention, places limitées.**
**Inscriptions auprès du Conseil d'Administration de la C.B.A.F. au :**
**01. 48. 24. 46. 57**

---

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Université d'été aux U.S.A.

Le HOM (Hay Oknoutian Mioutioun) de la Côte Est des Etats-Unis organise une université d'été d'études intensives arméniennes dispensées en langue anglaise, de 3 semaines destinée aux jeunes étudiants de niveau universitaire, âgés de 18 à 25 ans et diplômés d'études secondaires.

**Date:** **du 11 juillet au 1er août**
**Lieu:** **Université Bradford à Bradford (Massachussetts)**
**Direction:** **Dr. Simon PAYASLIAN (directeur du département Histoire UCLA)**
**Programme:** **Langue — Musique — Histoire — Cinéma — Littérature — Danse — Histoire de l'art et autres...**

**Conditions:**
- Hébergement pris en charge par le HOM Côte Est
- Frais d'inscription, non remboursables, 350 USD plus frais de voyage à la charge du participant.

**Délai d'inscription: 30 Mai 1999 au plus tard**
**Renseignements: Conseil d'Administration de la CBAF: 01. 48. 24. 46. 57.**

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ 15-16
SAMEDI - DIMANCHE
15-16 MAI
1999
LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅՐԱՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐԱՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻԻ 19·641 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.641

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 12 / 14)

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՅՑԸ

Մայիս 12–ին տեղի ունեցած է Ռ. Քոչարեանի եւ Յունաստանի նախագահ Կ. Սթեֆանոփուլոսի հանդիպումը որուն ընթացքին քննարկուած են երկկողմանի յարաբերութիւններու հեռանկարները, Եւրոպայի Խորհուրդին Հայաստանի անդամակցութեան խնդիրն ու Յունաստանի անդրկուլիսեան ներդրումները։ Բանակցութիւններու արդիւնքով երկու երկիրներուն միջեւ եղած փաստաթուղթ եւ չորք մը համաձայնութիւններ ստորագրուած են։

Մայիս 12–ին Կ. Սթեֆանոփուլոս Ռ. Քոչարեանի ընկերակցութեամբ այցելած է Մխիթեանակարերդի յուշարձանը եւ ցեղասպանութեան թանգարանը։ Յունաստանի նախագահը ծաղկեպսակ դնած է եղեռնի զոհերու յուշարձանին եւ եղեւին մը տնկած։ ապա յուշամատեանին մէջ ստորագրած է հետեւեալ արձանագրութիւնը. «Յարգանքով, յուզումով եւ բողոքելով այն ոճիրին համար որ գործուեցաւ անմեղ ժողովուրդի մը դէմ, անգամ մը եւս յանուն յոյն ժողովուրդին կը դատապարտեմ Հայերու ցեղասպանութիւնը որ զուգադիպեցաւ Պոնտոսի յոյներու ցեղասպանութեան։ Ատիկա քարբարոսութիւն է իր ամբողջ արտայայտութեամբ»։

Յունաստանի նախագահը, մեկնելէն առաջ, տեսակցութիւն մըն ալ ունեցած է Գարեգին Ա.–ի հետ։

***

### ԱԼԻԵԻ ՂԱՐԱԲԱՂԻ ՀՐԱԴԱՐԱՐԻՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի նախագահը Հ. Ալիեւ Մայիս 12–ին յայտարարութեամբ մը ըսած է թէ իր երկիրը հրաժարարի չրջանին յաղթած է կանոնաւոր բանակ ստեղծել ու ամրացնել պետականութիւնը, անտեսական, ժողովրդավարական բարեփոխումներ կատարել։ Ան աւելցուցած է թէ Ղարաբաղի կարգաւորման հիմը կը կազմեն Ադրբեջանի ու Հայաստանի տարածքային ամբողջականութեան ճանաչումը, Ղարաբաղին Ադրբեջանի կազմին մէջ ինքնավարութեան բարձր աստիճանի հաստատութիւնը եւ ապահովութեան ընդհանուր համակարգը։ Ալիեւ յայտնած է թէ իր երկիրը մինչեւ վերջնական պինդ պատ կը պահպանէ հրաժարարը։

***

### ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԻՍՏԸ

Մայիս 12–ին էջմիածնի մէջ Գարեգին Ա.–ի նախագահութեամբ, Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքներուն ատենապետութեամբ բացուած է Գերագոյն հոգեւոր Խորհուրդին ընդլայնուած փակ նիստը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջոյնէն ետք կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին Արք. Ներսիսեան զեկուցած է անցեալ Օգոստոսէն մինչեւ 1999 Մարտ Մայր Աթոռի գործունէութեան մասին։ Համբարձման ոճնին ընդմիջումէն ետք նիստը կը շարունակուի Մայիս 14 – 15–ին։ Օրակարգի նիւթերը են եկեղեցիի կանոնադրութեան, Ցոփ. – Պօղոս Բ.–ի այցելութեան, միջեկեղեցական յարաբերութիւններու, 1700–ամեակի նշումներուն առընչուած հարցեր։ Նիստին կը մասնակցին եվիպտոսի, ԱՄՆ Արեւմտեան թեմին, Փարիզի, Վրաստանի, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի, Ռուսաստանի, Արժանթինի, Արցախի, ԱՄՆ Արեւելեան թեմի, Ուկրանիոյ, Գանատայի առաջնորդները, Մայր Աթոռի դիւանապետը, Գերագոյն հոգեւոր խորհուրդի աշխատակազմի անդամները, կրօնքի գործերու խորհուրդի նախագահը։

***

### ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՏԻՒՐՈՒՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՕՐԱԽՈՒՄԲԻՆ ՀԱՄԱՐ

Հայեւթրքական սահմանը պաշտպանող ռուսական սահմանապահներու «Արմենիա» զօրախումբը այսուհետեւ ոչ թէ Ռուսաստանի հիւսիսկովկասեան հրամանատարութեան ենթակայ պիտի ըլլայ, այլ՝ ուղղակի Մոսկուայի։ Զօրախումբին կարդավիճակը անփոփոխ մնալով հանդերձ, հատանական կը նկատուին հրամանատարի եւ պաշտօնատարներու փոփոխութիւնները։ Նոյն սահմանը հայ եւ ռուս սահմանապահներու պաշտպանութեան յանձնուած է 1998–ի պայմանագրով մը։ Զօրախումբին պիտակէն հատուած բաժնուած էր երկու երկիրներուն միջեւ, սակայն վերջերս Հայաստան հարկադրուած է աւելցնել իր մասը։

***

### «ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ»Ը Ա.ԶԳԱՅԻՆ ՓԲԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

Նախընտրական չրջանի դաշինքներէն «Իրաւունք եւ միաբանութեան» ղեկավար Արտաչէս Գեղամեան Մայիս 12–ին երեւանի համալսարանին մէջ հանդիպումի մը ընթացքին յայտ է թէ «Միաբանութիւն» դաշինքի ղեկավարներէն Պաշտպանութեան նախարար Վ. Սարգսեանի դործակցութեան հաւանական հրաւէրը կըսբանականպէս կը մերժեն ու չեն բաժներ նոյն դաշինքին յարելու Ռ. Քոչարեանի յայտարարութիւնը։ Ա. Գեղամեան նկարագրելով Հայաստանի քաղաքական վիճակը, յայտ է թէ նախորդ իշխանութեան ներուժը տակաւին կը գործէ եւ անոնք ընտրութիւնը մերժելով, կամ զանազան յայտարարութիւններով կը փորձեն երկիրը ապակայունացնել որպէսզի ծածկեն իրենց չրջանի թալանը եւ սպանութիւնները։ Ան դժգոհած է որ անտեսութիւնն ալ վատթարացած վիճակի մէջ է եւ չկայ պետական զարգացման ծրագիր։ Ան ելքի համար հարկաւոր նկատած է «ազգային փրկութեան ծրագիր» մը որ կ'ենթադրէ բոլոր կուսակցութիւններուն լուծարումը, պետական միջամտութեամբ մէկ – երկու մեծ կուսակցութեան հիմնումը որոնք այդ ծրագրին պատրաստութեամբ կը զբաղին։

***

### ՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Վարչապետ Ա. Դարբինեան Մայիս 12–ին ընդունած է Իսրայէլի Արտաքին Գործերու նախարարութեան գլխաւոր քարտուղարի տեղակալին գլխաւորած պատուիրակութիւնը որ Երեւան գացած էր քաղաքական խորհրդակցութիւններ ունենալու։ Երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման հեռանկարներն ալ քննարկուած են անտեսական գործակցութեան կարելիութիւններ։

***

### ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒ ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԾԵԾՈՒԱԾ

Կատայքի Քաղաքի գլուխն նախընտրական հանդիպումին ծեծուած է Համայնավար կուսակցութեան Հրապարակի չրջանային Կոմիտէի Ա. քարտուղար Վանիկ Ոսկանեան։ Ան վէճ ունեցած է նոյն ընտրատարածքին թեկնածուներէն մէկուն հետ որուն եղբայրը բռունցքով հարուածած է գլխուն։ Վ. Ոսկանեան արդի տուկնապով հիւանդանոց փոխադրուած է։

## ԵՐԹԻՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ՝ ԾԵՐԱԿՈՅՏ

Չորեքշաբթի, Մայիս 12, ժամը 15·30ի չուրջ քանի մը տասնեակ հին անոնք ռոնք կը սպասէին թափօրին ժամանման։ Երթին վերջին հանդրուանն էր, մեկնած էր առաւօտուն Ալֆորվիլլէն, հասած Փարիզի քաղաքապետարանը, ապա՝ Ազգային Ժողովի, հուսկ Ծերակոյտ։ Թափօրին առջեւն էին ընկերացող կառքը, նախկին Ռամկիներու գրօչակները։ Ապրիլ 24 Կոմիտէի հովանաւորութեամբ կազմակերպուած ցոյցերու վերջինն էր, չուրջ 500 հոգիով որ կը համախմբուէր Ծերակոյտին առջեւ, Տեղական ընտրութիւններէ զատ կային բազմաթիւ խորհրդարանականներ, որոնք ուզած էին իրենց ներկայութեամբ հասատաւել իրենց գօրակցութիւնը Հայ գաղութին։ Ցիշենք՝ Ժան – Փօլ Պրէթ, Ռոնի երեսփոխան, Տիկին Հելէն Լիւք, ծերակուտական, նախագահ Համայնավար խմբակին, Տիկին Պուտօ, ծերակուտական (Վալ տ'Ուազ) Տիկին Թերատ, ծերակուտական (Պուշ–տիւ–Ռոն), Կլ Ֆիշէր, ծերակուտական (Ռոն), Սերժ Լակօշ, ծերակուտական (Վալ տը Մարն), Մարսէլ տը Պարժ, ծերակուտական (Սէն–Սէն–Տընի)։

Ապրիլ 24–ի Կոմիտէի նախագահ Ալեքսի Կէօվճեանի դիմաւորութեամբ, Կոմիտէի անդամներէ, քալողներէ եւ խորհրդարանականներէ (մասնաւորաբար Ժ. Փ. Պրէթ, Հ. Լիւք, Կ. Ֆիշէր, Ռոպէր Պրէթ) կազմուած պատուիրակութիւն մը ընդունուեցաւ, Ծերակոյտի նախագահին գրասենեակին պետին Պ. Մէրի, Նիքոլա տը լա Կրանվիլի (խորհրդական) եւ Ժակ Ուտէնի (Ֆրանս – Արմէնի Բարեկամական խումբին նախագահ) կողմէ։ Մինչ պատուիրակութեան վերադարձին կը սպասուէր, Թալին Թաշճեան յայտարարութիւն մը կարդաց ուր կը ձագկուէր քաղաքական դէմքերու կեղծաւորութիւնը եւ կը պահանջուէր արդար լուծում մը Հայ ժողովուրդին համար։

Սերժ Լակօշ խօսք առնելով իր գործընկերները յայտնեց, յաւելով Ծերակոյտի նախագահներու ժողովին որդեգրած դիրքին համար եւ վստահեցուց որ նոյն կորովով պիտի աշխատի որպէսզի Ծերակոյտը ընդունի օրէնքի առաջարկը։

Սպասման այս չրջանին, բազմութիւնը լզուենդներով արդարութիւն կը պահանջէր, դատապարտելով Հանրապետութեան նախագահին եւ վարչապետին դիրքը։ Մէկ ժամ եւթ, պատուիրակութիւնը վերադարձաւ։ Կոմիտէի նախագահը՝ Ա. Կէօվճեան ամփոփեց խօսակցութիւնը, հաստատելով թէ ոչ մէկ յառաջդիմութիւն կար, թէ երկրին դերադոյն շահերը կը դերադասուէին։ Ըլլան ալ անմիջական արդիւնք մը չէր յուսար, չծածկեց որ յուսախաբ էր, բայց, պայքարը կը շարունակուէր։ Շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր խորհրդարանականներուն որոնք զօրավիղ կը մնային, մասնաւորաբար Ժ. Փ. Պրէթ որ ջերմ ծափահարութիւններու արժանացաւ, Տիկին Հ. Լիւք որու դիրքը օրինակելի է Ծերակոյտին մէջ։ Ոգջունեց նաեւ քալողները որոնք քաջութեան եւ արժանաւորութեան տիպարներ եղած են ինչպէս նաեւ կազմակերպիչները մասնաւորաբար Անահիտ Ալի եւ Հիլտա Զոպոյեան որու փոխանցեց խօսքը։

Տիկին Զոպոյեան, իր կարգին, մեծարեց քալողները, մաղթելով որ քաղաքական ղեկավարները պիտակներ հիմնարկներու գործելակերպի չդոյութեան։ Ցուսախաբ ենք, բայց ոչ յուսահատած, ըսաւ, եթէ ինչպէս ըսաւ Պ. Մէր հոս–հոն ճնշում բանեցուցինք խումբերու նախագահներու վրայ, պիտի չարունակենք մեր տեսակցութիւնները մէկ առ մէկ որպէսզի իրենց յանձնառութիւնը ձեռք ձգենք, յոյս չունէինք, պատութեան մեքենան դանդաղ է, բայց մեր միաւնութիւնը թոյլ պիտի տայ որ յաղթենք։ Կարդը եկած էր Ժան – Փօլ Պրէթի, ինք ալ ողջունեց քալողները, թուեց յուսախաբութեանց քանի մը դէրդադարձները։ Հաղուադէպ անկեղծութեամբ մըն է որ իր վերապահութիւնները յայտնեց կառավարութեան հանդէպ չեչտելով որ ռէալփոլիթիքը (իրատես քաղաքականութիւն) իրական քաղաքականութիւն մը չէ, որովհետեւ Թուրքիան վտանգելու չոյսը ապարդիւն է։ Նկատել տուաւ որ, երբ Ազգային Ժողովը, հակառակ կառավարութեան վերապահութիւններուն, մխճախնութեամբ քուէարկեց օրէնքի առաջարկը, չէր հասկնար որ ինչ դան կ'արդիլէր որ նոյնն ընէ Ծերակոյտը։ Համոզում յայտնեց որ, ի վերջոյ, ծերակուտականներ պիտի քուէարկեն օրէնքի այդ առաջարկը, յաղթանակը անխուսափելի է, միակ անորոշութիւնը պարմանեժամն է, եթէ չարաթներու հարց չէ, առաւելագոյն ամիսներու հարց է։

Ապա, Ա. Կէօվճեան, կրկնելով իր երախտագիտութիւնը, խօսքը տուաւ Տիկին Հելէն Լիւքի, չմոռնալով յիշելու թէ օրէնքի առաջարկը առնուազն ինն անգամ ներկայացուցած էր նախագահներու ժողովին։ Տիկին Լիւք յայտնեց թէ ինք եւ իր խումբին ծերակուտականները 85–րդ տարեդիին պիտի չապահեն ճանչնալ տալու համար ցեղասպանութիւնը։ Ոչ ոք կրնայ գայն ուրանալ, ոչ ալ անոր պատմական տարողութիւնը։ Կարելի չէ մէկ ձեւով խօսիլ եւ այլ կերպ գործել։ Ի՞նչ է մեր պարգած պատկերը։ Շեչտեց իր վճռակամութիւնը եւ ճչդեց որ եթէ նախագահներու ժողովը յամառէր օրակարգին վրայ չդնել Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը, այլ միջոցներու կը դիմէր։ Ա. Կէօվճեան ուղեց որ եղբայրական խօսքը տրուի քալողներուն, որոնց անունով արտայայտուեցաւ Անահիտ Ալի։ Ան շնորհակալութիւն յայտնեց այն հարիւրաւոր քալողներուն, որոնք հանդրուան առ հանդրուան իրարու կը յաջորդէին։ Շնորհակալութիւն նաեւ բոլոր քաղաքապետարաններուն որոնք ջերմ ընդունելութիւն մը շնորհած էին եւ վերատահութիւն յայտնեց դէպի ապագայ։

Բազմութիւնը գրուեցաւ, յուսախաբ, բայց գօտեպնդուած Ապրիլ 24–ի Կոմիտէին եւ բոլոր համակիրներուն վճռակամութեամբ։

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

### ԿՈՍՈՎՕ

## ԵԼՑԻՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՑ ՉՄԻՋՆՈՐԴԵԼ

Շիրաք, որ Մոսկուա հասած էր ճիշդ այն պահուն երբ Ելցին պաշտօնանկ կ'ընէր վարչապետ եւ կառավարութիւն, բառական ըաւատես վերադարձաւ, հակառակ Ելցինի սպառնալիքին։ Այս վերջինը յայտարարած էր թէ Ռուսաստան վերջ կու տայ իր միջնորդութեան, եթէ ռմբակոծութիւնները չդադրին։ Արդարեւ, այս դադրեցումը նախապայման է որեւէ բանակցութեան համար, նոյնն է Չինաստանի դիրքը։ Բայց, Շիրաք լաւատես կը մնայ, «այն զգացումը չունեցայ, կ'ըսէ, որ Ռուսաստան պիտի քաչուի խաղաղութեան գործընթացէն», թէեւ ԱՄՆ–ու Արտաքին Նախարարն ալ չի ծածկեր որ տարակարծութիւններ

(Շար·ը Դ· էջ)

տայ որ յաղթենք։ Կարդը եկած էր Ժան – Փօլ Պրէթի, ինք ալ ողջունեց քալողները, թուեց յուսախաբութեանց քանի մը դէրդադարձները։ Հաղուադէպ անկեղծութեամբ մըն է որ իր վերապահութիւնները յայտնեց կառավարութեան հանդէպ չեչտելով որ ռէալփոլիթիքը (իրատես քաղաքականութիւն) իրական քաղաքականութիւն մը չէ, որովհետեւ Թուրքիան վտանգելու չոյսը ապարդիւն է։ Նկատել տուաւ որ, երբ Ազգային Ժողովը, հակառակ կառավարութեան վերապահութիւններուն, մխճախնութեամբ քուէարկեց օրէնքի առաջարկը, չէր հասկնար որ ինչ դան կ'արդիլէր որ նոյնն ընէ Ծերակոյտը։ Համոզում յայտնեց որ, ի վերջոյ, ծերակուտականներ պիտի քուէարկեն օրէնքի այդ առաջարկը, յաղթանակը անխուսափելի է, միակ անորոշութիւնը պարմանեժամն է, եթէ չարաթներու հարց չէ, առաւելագոյն ամիսներու հարց է։

Ապա, Ա. Կէօվճեան, կրկնելով իր երախտագիտութիւնը, խօսքը տուաւ Տիկին Հելէն Լիւքի, չմոռնալով յիշելու թէ օրէնքի առաջարկը առնուազն ինն անգամ ներկայացուցած էր նախագահներու ժողովին։ Տիկին Լիւք յայտնեց թէ ինք եւ իր խումբին ծերակուտականները 85–րդ տարեդիին պիտի չապահեն ճանչնալ տալու համար ցեղասպանութիւնը։ Ոչ ոք կրնայ գայն ուրանալ, ոչ ալ անոր պատմական տարողութիւնը։ Կարելի չէ մէկ ձեւով խօսիլ եւ այլ կերպ գործել։ Ի՞նչ է մեր պարգած պատկերը։ Շեչտեց իր վճռակամութիւնը եւ ճչդեց որ եթէ նախագահներու ժողովը յամառէր օրակարգին վրայ չդնել Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը, այլ միջոցներու կը դիմէր։ Ա. Կէօվճեան ուղեց որ եղբայրական խօսքը տրուի քալողներուն, որոնց անունով արտայայտուեցաւ Անահիտ Ալի։ Ան շնորհակալութիւն յայտնեց այն հարիւրաւոր քալողներուն, որոնք հանդրուան առ հանդրուան իրարու կը յաջորդէին։ Շնորհակալութիւն նաեւ բոլոր քաղաքապետարաններուն որոնք ջերմ ընդունելութիւն մը շնորհած էին եւ վերատահութիւն յայտնեց դէպի ապագայ։

Բազմութիւնը գրուեցաւ, յուսախաբ, բայց գօտեպնդուած Ապրիլ 24–ի Կոմիտէին եւ բոլոր համակիրներուն վճռակամութեամբ։

# ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄՐՑԱՉԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻԻՆ՝ «ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԿԱՐԵԼ»

Հայաստանի մէջ աշխոյժ թափով առաջ կը տարուին Մայիս 30–ի խորհրդարանական ընտրութեան պատրաստութիւնները: Լրատիւները արդէն սկսած են տեղեկացնել մէկ ու միւս կուսակցութեան, դաշինքին հանրահաւաքներուն մասին: Կան նախկին չրջանի արդար կարծիքներ չհագցուծղներ, պատմութեան ծիրանիով ներկայացողներ. ասով հանդերձ, ամէն ճառ ու լոզունգ աւելի տպաւորով, աւելի բարձր ապագայի խոստումով կուտայ: Իսկ թէ այդ հանրահաւաքներուն ներկաները ու բացակաները ի՛նչ կը խորհին – եթէ տակաւին արտադրութիւն ունին մտիկ ընելու եւ այդ մասին խորհելու – ըսուածին ու ըսողներուն հաւատքին, լրատիւները չատ չատախ լուռ կը մնան: Այնպէս կը թուի որ կարեւորը ըսուածին արձագանդէն է եւ ոչ՝ ըսողին:

Նախընտրական չրջան վրչուած խելայեղ մրցումի այս օրերը սկսան առաջադրելի կուսակցութիւններուն համար ստորագրութիւն հաւաքելու աչխատանքով: Ամէն մէկը պէտք է նուազագոյն 30 հազար զօրավիդ անձի ստորագրութիւն ներկայացնէր Կեդրոնական ընտրական յանձնախումբին: Այդ յանձնախումբը, ինչպէս յայտարարուեցաւ, ընտրովի ձեւով պէտք է երկու – երեք օրուան մէջ ստորագրութիւնները %2 նմոյչ ստուգէր ու ատոր արդիւնքին համաձայն վաւերացնէր ցանկը ու արձանագրէր տուեալ կուսակցութիւնը, կամ մերժէր:

Նման կանոնակարգ բաւական զարմանալի ձեւ մը ըլլալով հանդերձ, տակաւին չարմար դատուածը: Բնական է որ ստորագրութիւններ հաւաքելու գործը ընտրական կանոն մը չարգելուն հետ, նաեւ տպաւորելու, գլխաւորութիւն մը վաստելու առիթ կ'ըլլայ ամէն մէկ կուսակցութեան համար: Ու կը տկսի քիչ մը խենթ պայքար մը. մամուլը յաջորդական թիւերով կուտայ քաղաքական կազմակերպութիւններու ձեռք ձգած արդիւնքները: Հայաստանի նման փոքր ու երեք միլիոնոց բնակչութեան տէր երկրի մը համար, մանաւանդ փոխադրութեան, հաղորդակցութեան քիչ – չատ յայտնի պայմաններով, իսկապէս ստուարաչխատ են անոնք: Կարելի՞ է դնդի – դուռ, ոստանէ – ոստան չրաչգայութեան արդիւնք նկատել տրուած հարիւր հազարաւոր, տասնեակ հազարաւոր թիւերը: Աչխուհանդերձ, վերջնական արդիւնքներով առաջին տեղը կը պրաւէ Դեմիրճեան – Սարգսեան «Միասնութիւն»ը, յետոյ կուգան Հզօր Հայրենիք»ը, «Օրինաց երկիր»ը, «Հայրենիք»ը, ՀՅԴ–ն, եւայլն: Այս հինգ անուններուն հաւաքած ստորագրութիւնները 465·560էն 180·366–ի միջեւ են:

Հայաստանեան իրականութեան քիչ մը դժուար համեմատական այս թիւերը Ապրիլի վերջին օրերու Հայաստանեան մամուլին մէջ պատճառ եղած են ուչագրաւ մտահոգչումներու եւ մեկնաբանութիւններու: Անոնք բաւական համոզիչ բացատրութիւն կը բերեն ա՛յդ աստիճանի փարթամ թիւերու առթիւ ծագած հարցականներու:

Նախ Ապրիլ 20 – 26–ի թիւով «Իրաւունք»ը մատը կը դնէ այդ քիչ մը փափուկ հարցին վրայ, «կեցցէ՛ արտադրութիւնը, կամ՝ ինչպէս կեդծել կէս միլիոն ստորագրութիւն եւ չբռնուիլ» խորագրուած դրութեամբ մը, ստորագրուած՝ Հ. Տէր – Վահանեան: Ան համեմատելով տրուած թիւերն ու քաղաքացիներու կարծիքը չօչափող հարցումներուն պատասխանները, կ'եզրակացնէ թէ առաւելագոյն ստորագրութիւններու ցանկը գըլխաւորողները նուազ զօրավիդներ ունին, քան այն կազմակերպութիւնները որոնք աւելի տրամաբանական թիւով ստորագրութիւն հաւաքած են: Ցետոյ կը ներկայացնէ նախընտրական դրասենեակիներէն քաղուած այն մեթոտները որոնք կը վերաբերին ստորագրութիւն բազմացնելու թէքնիքներուն: Դիտուած գըլխաւորներն են պաչտօնական տարբեր դրասենեակներէ, կուսակցութիւններու մատանիներէն ընդօրինակել քաղաքացիներու անձնագրային տուեալները. դիւղերու մէջ բնակիչներու անձնագրերը վարչական միջոցներով հաւաքել եւ ընդօրինակել տուեալները: Կայ տակաւին ստորագրութիւն հաւաքելու մատեանը 50 անդամ բազմացնելու ձեւը. ատոր համար կը բաւէ առաջին մատեան մը վաւերական ստորագրութիւններով լրացնել, յետոյ նոյն անունները ընդօրինակել 49 պարապ մատեանի մէջ, ամէն ընդօրինակութեան՝ ցանկերը չեղելով տասնական անուն: Այդ ձեւով 500 ստորագրութիւն հաւաքելէ ետք կարելի է քիչ մը համբերութեամբ ունենալ 25 հազար: Իսկ ըստուգման աչխատանքին համար քանի որ 2% մը պիտի քննուի, այդ թիւէն առաւելագոյն չափով 500 ստորագրութիւն կրնայ ջնջուիլ: Հ. Տէր Վահանեան չի մոռնար անչուշտ ի հարկին գնելու միջոցով ալ ստորագրութիւն ունենալու կարելիութիւնը որ թէեւ վերոնչեալ պայմաններուն մէջ փողոց նետուած դրամ, կամ միջոց պիտի նչանակէր:

Ստորագրութիւն «հաւաքելու» այս կերպերուն պէտք է աւելցնել «Հայաստանի Հանրապետութեան» մէջ (Ապրիլ 27) նոյն նիւթով էջի մը տուեալն ալ, թէ եղած են դէպքեր երբ, ինչպէս կը դրէ Մարիետա Մկրտչեան, կարօտ քաղաքացիներու օժանդակութեան «Փարոս» ծրագրի անուանացանկերը ընդօրինակուած են, իսկ կեդրոնական ընտրական յանձնախումբը ի վիճակի չէ ահռելի թիւով ստորագրութիւն ստուգելու ամբողջ Հայաստանի տարածքին:

Կայ ուրիչ ձեւ մըն ալ որուն մասին կեդրոնական ընտրական յանձնախումբին Ֆ. Բերիկեան «Հայոց աչխարհ»ի մէջ (Ապրիլ 27) պատասխանելով Սոնա Տըրտուզեանի հարցումներուն, կ'ըսէ թէ տակաւին կարգ մը կուսակցութիւններու իրարու ցանկերէն ընդօրինակելու երեւոյթն է: Ինչ ստուգած է ՀՌԱԿ–ի պաչտօնաթերթիկները, տեսած է կեղծ ստորագրութիւններ որոնք յայտնապէս ընդօրինակուած են ուրիչ կուսակցութեան մը պաչտօնաթերթիկէն: Ձգտած է որ համապատասխան են անուն – մականուններն ու հասցէները, սակայն տարբեր՝ անձնագրերու թիւերը, կամ ստորագրութիւններ: Նոյն ատեն ուչադրութեան արժանի է որ ՀՌԱԿ–ը ընդօրինակած է Միասնութեան թերթիկներէն, բայց պարզուած է որ այս վերջինն ալ օգտըւած է արձանագրութեան դրասենեակի մը հին անձնագրերու թիւերէն որոնք ընդօրինակուած են, իսկ ստորագրութիւնները՝ կեղծուած: Նոյն անձին համաձայն, «շատ են համբնկնում «Կոմունիստական եւ ընկերվարական կուսակցութիւնների միութեան», «Միասնութեան» եւ ՀՌԱԿ–ի ստորագրութիւնները»:

Մամուլի նոյն էջերը կը կրկնեն առաջատար անուններուն հաւաքած ստորագրութիւններուն թիւերը. ապա անվաւեր հռչակուածները: Ամբողջէն 2%–ին ըստուգումը կ'առաջնորդէ իւրաքանչիւր անվաւեր նկատուածին 50–ով բազմապատկութեան. այսինքն՝ մէկ անվաւեր ստորագրութիւն պատճառ կ'ըլլայ որ ջնջուի 50 անուն ու մնացածով կ'որոչուի կուսակցութեան մը արձանագրելի ըլլալ – չըլլալու պարագան: Թէ՛ «Հայոց աչխարհ»ի, թէ՛ «Հայաստանի Հանրապետութեան» մէջ կ'ըսուի թէ անվաւեր նըկատուած ստորագրութիւններու մեծագոյն թիւը (360) ունի ՀՅԴ–ն. տակաւին կը նչանակէ որ 18 հազար անուն ջնջուած են ներկայացուած ցանկերէն: Անոր հետ կը տրուի ՀՌԱԿ–ի անունն ալ, անվաւեր 255 ստորագրութեամբ (ջնջուած՝ 12·750): Այս վիճակը արդարօրէն ըսել կուտայ Ֆ. Բերիկեանի թէ «եթէ այս մրցավազքը չլիներ, կուսակցութիւնները հաւնգիստ կր հաւաքէին 30 հազար ստորագրութիւն եւ այսքան կեղծիք չէր արձանագրուի»:

Ընտրութեան առաջին քայլին ուչըադրաւած այս պատկերը թերահաւատութեան տրամադրութիւններ կը ստեղծէ Մայիս 30–ին, արդար, օրինաւոր, ազատ ընտրութեան նկատմամբ: Մանաւանդ որ 30 հազար ստորագրութիւնը բաւական էր պաչտօնական արձանագրութեան համար: Տեղին է յանձնախումբի անդամ Ֆ. Բերիկեանի եզրակացութիւնը թէ օրէնքով ստորագրութիւն հաւաքելու հարկր վճռելի ըլլալով հանդերձ, «օրէնքը, հօ, չէր ասել՝ գնացէք, ստորագրութիւն նկատէք»...:

ԱՐՓԻ ԹՈՓՈՉԵԱՆ

# ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒԻՄՆԵՐ

## ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ

Մօտ երեք ու կէս ժամ տեւող կեդրոնական ճեռնարկով, Շաբաթ, Ապրիլ 24–ի երեկոյեան, Պուէնոս – Այրէսի Հայ դատի ոգեկոչեց Հայկական ցեղասպանութեան 84–ամեակը: Ձեռնարկը կազմակերպած էին Ազգային Առաջնորդարանը եւ Ապրիլ 24–ի Ոգեկոչման Յանձնախումբը, որուն մաս կազմած են 18 կազմակերպութիւններ (երեք յարանուանութիւնները, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մարի Մանուկեան, Մխիթարեան, Վ. Լոփէս, Պաղչճեան եւ Աւծրունի վարժարանները, Արմենիո – Արմենթինա դըպրոցը, Թէքէեան, Շարժում եւ Աւժանթինահայ Մչակութային Միութիւնները, Հ.Բ.Ը.Մ., «Հայաստան» Հիմնադրամը, Համնոյ եւ Մարաչի Հայրենակցական Միութիւնները): Հ. Յ. Դաչնակցութիւնը եւ իր քոյր կազմակերպութիւնները համազաղութային կազմակերպութեան մասնակցելէ հրաժարած են: Ոգեկոչական հանդիսութեան, որ միաժամանակ, քաղաքական հաւաքի ցուցադրութիւն մը կը ձգտէր ըլլալ, ներկայ էին Պուէնոս – Այրէսի քաղաքի Երեսփոխանական ժողովի անդամներ, օտար հիւրեր, զաղութային տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:

Յիչատակելի է, որ «Գոլխէօ» թատերաբառհին մուտքը ցուցադրուած էր լուսանկարիչ Մարթին Քեսքինեանի ցուցահանդէսը, որ կը ներկայացնէր Հայկական ցեղասպանութեան տարբեր յուչարձաններու նկարները՝ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ:

Հանդիսավարներ՝ Մարիա – Լաուրա Եորդանճեան (սպաներէնի) եւ Ռոսալիա Սարաֆեան (հայերէնի) զորձադրեցին օրուան յայտագիրը, որ բաղկացած էր զեղարուեստական եւ բանախոսական բաժիններէ: Գեղարուեստական առաջին բաժնին ելոյթ ունեցան ժողովրդային երգիչներ Ազթուրօ Գուլումճեան եւ Մերթա Սաչեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան (դեկավար՝ Անտրէա Պաղտասարեան) եւ Մարի Մանուկեան Կրթական Հաստատութեան (դեկավար՝ Տիանա Գաբրիէլեան – Սարաֆեան) մանկական երգչախումբերը, «Գայանէ» (դեկավար՝ Ալիսիա Անդրէասեան) եւ «Մասիս» (դեկավար՝ Զաւէն Կնեազեան) պարախումբերը, եւ «Արեւագալ» երգչախումբը (դեկավար՝ Ռոսալիա Օնիկեան):

Անմիջապէս ետք խօսք առին օրուան բանախոսները: Առաջին հերթին, աչխարհագրագէտ փրոֆ. Ասոլֆօ Գուլումճեան անդրադարձաւ 1915–ի ցեղասպանութեան անպատժելիութեան, որ տուն տուած է այնուհետեւ տեղի ունեցած դարու բոլոր ոճիրներուն՝ ցեղասպանական թէ «էթնիկ մաքրագործում»ի: Ընդգծեց, որ Մեծ եղեռնի վերապրողները կամաց – կամաց հրաժեչտ կուտան կեանքին, առանց որ արդարութիւն գործադրուած ըլլայ Թուրքիոյ թէ Միջազգային Ատեաններու կողմէ, եւ կոչ ուղղեց չարունակել պայքարը յանուն աւելի արդար միջազգային կարգի մը, որ կանխէ նման զանգուածային ոճիրներու կրկնութիւնը, ինչպէս ներկայիս կը պատահի Եուկոսլաւիոյ մէջ:

Պատմաբան տոքթոր Փասքուալ Օհանեան հիմնաւորեց, սպառիչ կերպով, Թուրքիոյ անցեալ ու ներկայ պատասխանատուութիւնը ցեղասպանութեան գործադրումին մէջ, ու անդրադարձաւ Իսլամի դէմ գործուած ոճիրներուն, ինչպէս եւ թրքական ամբողջատիրական նկրտումներուն, որոնք այսօր ուղղուած են Քիւրտերու դէմ: Մխիթարեան Արժանթինի կառավարութեան կողմէ ցեղասպանութեան ճանաչումն ու Միջազգային Ատեաններու ներկայացումը:

Յանուն Պուէնոս – Այրէս քաղաքի կառավարութեան պետ եւ ընդդիմադիր Դաչինքի նախագահական թեկնածու տոքթոր Ֆերնանտօ տէ լա Ռուայի, քաղաքի կառավարութեան համայնքներու հետ յարաբերութեան քարտուղար Ռոպէրթօ – Ռոտրիկէս Վակարիա քաղաքի ու արժանթինեան հանրութեան անունով իր համակամութեան խօսքը բերաւ, չմոռնալով յիչել, որ նախկին նախագահ Ալֆոնսին անձամբ ճանչցած է ցեղասպանութիւնը եւ ներկայ նախագահ Մենէմ անցեալ տարի այցելած է ու ծիծեռնակարբերդի յուչահամալիրին մէջ պատուած է պատերու յիչատակը:

Վերջապէս, Հայաստանի Հանրապետութեան պետական Արա Այվազեան անդրադարձաւ ցեղասպանութեան փաստին, չբերելով որ անոր ճանաչումին հետապնդումը Հայաստանի պետական քաղաքականութեան օրակարգին մէջ տեղ կը գրաւէ, եւ որ երեք մակարդակներու վրայ (պետութիւններու, միջազգային տեսանեներու եւ Թուրքիոյ) այդ հետապնդումը կը չարունակուի:

Գեղարուեստական երրորդ ու եզրափակիչ բաժնին ելոյթ ունեցան Աւծրունի, Մխիթարեան եւ Վիսենթէ Լոփէսի ազգային վարժարանի աչակերտներու մանկական մխացեալ երգչախումբը (դեկավար՝ Անտրէա Ստեփանեան), Պեղչճեան (դեկավար՝ Սուսաննա Հայրապետեան – Ձէնտէրճեան) եւ Արմենիո – Արմենթինա (դեկավար՝ Զաւէն Կնեազեան) վարժարաններու պարախումբերը, «Կոմիտաս» (դեկավար՝ Մաքրուհի Էօլմէսքեան), «Շնորհալի» (դեկավար՝ Տիանա Գաբրիէլեան – Սարաֆեան), «Ալագեազ» (դեկավար՝ Անտրէա Ստեփանեան) եւ «Արաքս» (դեկավար՝ Ժան Ալմուխեան) երգչախումբերը: Նիկոլա Առաքելեան արտասանեց Ցովհաննէս Շիրազի «Հանճարեղ խենթ» բանաստեղծութիւնը:

Փակման խօսքը արտասանեց Աւժանթինահայոց առաջնորդ Գիտակ Արքեպիսկոպոս Մուրատեան, որ հայերէնն քանի մը խօսքերէ ետք, ուր ակնարկեց այս տարի եւս դրսեւորուած հաստատամտական երեւոյթներու, հակառակ բոլոր չանքերուն, սպանութիւնով անդրադարձաւ Աւժանթինի մօտ Թուրքիոյ դեսպանի ելոյթին, որ «Գլարին» օրաթերթին նամակ ուղղելով՝ քննադատելու համար Տանիէլլ Միթերանի քրտանգատուհոյ յօդուածը (արտատպուած «Լը Մոնտ»էն), ընդունած էր, որ ներկայ Թուրքիան ժառանգորդն էր Օսմանեան կայսրութեան: Հետեւաբար, ըստ Գիտակ Արք., «չնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել Թուրք դեսպանին, որ առաջին անգամ ըլլալով ընդունած է նման բան: Եւ քանի որ Թուրքիան ժառանգորդն է Օսմանեան կայսրութեան, ուրեմն պարտի ամբողջութեամբ ընդունիլ այդ ժառանգութիւնը, այսինքն, յանձն առնել իր պատասխանատուութիւնը ցեղասպանութեան կապակցութեամբ»:

Ձեռնարկը փակուեցաւ «Երեւան երգուընի» երգով, զոր մեկնաբանեցին «Արաքս», «Կոմիտաս», «Շնորհալի», «Ալագեազ» եւ «Արաքս» երգչախումբերը միասնաբար, դեկավարութեամբ՝ Ժան Ալմուխեանի:

Վերջաւորութեան Գիտակ Արքեպիսկոպոս «Պահպանիչ»էն ետք, երգուեցաւ «Քայլ Մեր»ը:

ԹՂԹԱԿԻՑ

## ԼՈՆՏՈՆ

(ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ)

Այս տարի Ապրիլ 24–ի մնայուն յանձնախումբը ազգանպաստ նոր ղաղափարներ մտածեց եւ իր ժողովներուն հրաւիրեց երիտասարդ տաղանդաւոր նոր ուժեր որպէսզի բացառիկ փայլով ոգեկոչուի մեկու կէս միլիոն նահատակներուն յիչատակը:

Նախքան քայլարչաւի պաչտօնական ցոյցը, արդէն մի քանի ճեռնարկներ տեղի ունեցան Նաւասարդեան եւ Հայաչէն սրահներուն մէջ: Հայաչէնի մէջ, Ապրիլ 18–ին Կիրակի երեկոյեան հաւաքոյթը նուիրուած էր Ուրֆայի Հայերուն 1915–ի դառն ողբերգական պատմութեան, որուն թացման խօսքը ըրաւ երիտասարդ պատմաբան Արա Սարաֆեան եւ հակիրճ նախադասութիւններով ներկայացուց դասախօս՝ տոքթոր Քարլոս Տէր – Պետրոսեանն եւ իր կինը, որոնք յատկապէս Ամերիկայէն Լոնտոն եկած էին ներկայացնելու համար Ուրֆայի հայկական դատին երբեմնի զարթօնքի օրերը եւ յետագային ողբերգական վախճանը:

Տէր եւ Տիկին Տէր – Պետրոսեան այցելած են Ուրֆա եւ յաչողած են դաղտնի նկարներ առնել արուեստած չըջանէրէն: Այցելած են իրենց պապենական տունը, որ ներկայիս կը գործածուի որպէս ոստիկանատուն, ինչպէս նաեւ Ամերիկեան Միսիոնարական Ընկերութեան շէնքերը, որոնք ներկայիս կը գործածուին որպէս զինուորական կազմակերպութիւններու կեդրոններ: Ցուցադրուած նկարները ցոյց կուտան որ Ուրֆայի հայկական թաղերը ամբողջովին աւերակ դարձած են

կան բնակարանները՝ որոնք ներկայիս կը գործածուին Թուրքերուն կողմէ զանազան նպատակներուն համար։ Սահիկներու վրայ ցոյց տուին հայկական թաղամասեր, եկեղեցիներ, եւ զանազան հայկական պատմական կոթողներ եւ արձանագրութիւններ։ Բողոքական եւ Առաքելական եկեղեցիներ՝ որոնք ներկայիս կը գործածուին որպէս մզկիթներ։ Անդրադառնալով այն օրերուն Գերմանացիներուն ներկայութեան, Տոքթոր Քարլոս ըսաւ՝ «Գերմանացիները Հայերէն դրամ կ'ուզէին վերջնք պաշտպանելու պատճառաբանութեամբ, սակայն դժբախտաբար կը խաբուէին զերմանացի պաշտօնեաներուն սոսկօս արարքներէն, ու վերջաւորութեան կը քշուէին ուրիշներուն պէս դէպի սպանդանոցները»։ Սահիկներու վրայ ցոյց տուին նաեւ բազմաթիւ հայկական բնակարաններ, ուր ներկայիս Քիւրտեր կը բնակին։ Հայաշէնի փոքրիկ սրահին մէջ համախմբուած ունկնդիրները լսեցին եւ ցնցուղեցան ու վրդովմունքով լեցուեցան ի տես յուղիչ տեսարաններու եւ պատմական իրողութիւններու։ Վերջաբոլթեան եղաւ հարց ու պատասխան։

Ապրիլ 22–ին դիչերը ժամը 19։30–ին Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նախաձեռնութեամբ առաջնորդին եւ մասնակցութեամբ Շնորհք Քհնյ. Պաղտասարեանի։ Վերջաւորութեան կարկիկ հաւատացեալներու ներկայութեամբ դուրսը՝ յուշանին առջեւ, տոքթոր Արմէն Սարգսեանին հրաւէրով մէկ վայրկեանի լռութեան մէջ, մոմի լոյսերով յարգուեցաւ մեր նահատակներուն յիշատակը։

Ամերիկահայ ժողովուրդէն մաս մը դեռ ցարդ թրքական դեսպանատան, միանալու համար ցուցարարներուն ուր կային 50 անձեր մեծամասնութեամբ ՀՄԸՄ–ականներ։ Պաստառներով եւ մոմերով 24–րդ տարելիցին առթիւ լռոզքներ եւ պահանջներ կը ներկայացնէին։

Ապրիլ 23–ին դարձեալ Հայաշէնի մէջ ցուցադրուեցաւ «Դէպի Արարատի գագաթը արշաւելու եւ հանելու ներընչումով» հետաքրքրական պատմական ժապաւէնը մը։ Նոյն դիչերը Նաւասարդեան սրահին մէջ տեղի ունեցաւ զրական եւ զեղարուեստական ճոխ յայտագիր մը։ Որպէսզի նորութիւն մը եղած ըլլայ Լոնտոնի զբաղաքը հասարակութեան համար, Ապրիլ 24–ի յանձնախումբը զեղեցիկ գաղափարը ունեցաւ որ այս տարի բացառաբար Հայաստանի զրագէտներուն եւ բանաստեղծներուն անուններուն նուիրուի յարգանքի եւ յիչողութեան արժանի երեկոյթը։ Այս առիթով օրուան բանախօսը Պր. Կարլոս Եսայեան յարգանքով եւ խանդաղատանքով ոգեկոչեց եանք յիշատակը մեր սուրբ մեռելներուն, ակնարկով մը անդրադարձաւ արեւելահայ զրականութեան ծագման, քաղաքական, մշակութային եւ ընկերային պայմաններուն։ Ներկայացուց վիպագիչ շրջանը (1860 – 1890) իրապաչտ շրջանը (1890 – 1905), զեղապչտ շրջանը (1905 – 1920) եւ խորհրդային շրջանը (1920 – 1990)–ի գրողներուն արուեստի հանդանակը եւ ներդրումները։ Ցիշատակեց անուններ ականաւոր քերթողներուն, վիպասաններուն, թատերագիրներուն եւ պատմուածագիրներուն։

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ տաղանդաւոր անձերը Էվենտիլի Սոնաթ Քիւրճը, Ռիպէքա Կրինսթրիթի Չութակ, եւ Լիլիպակիթ Վօթքրհուս դաչնամուր, Ժենեա Նեւսխեան, յաջորդաբար արտասանեց «Տէր Զօր» Գէորգ Էմին, «Մօրս հաճար զաղել» Եղիչէ Զարենց, «Սպիտակ ձիաւորը» Ցովհաննէս Շիրազ եւ «Քէյէ լաօ» Սիլվա Կապուտիկեան։ Դալար Օզգայեան, «Աղբերս ու ես ու Հայաստան» մենախոսը։ Նելլա Մինասեան – 1915 գալուստ Յանենց։ Փառքուհի Մինասեան – «Ամենայն սրտով» Ցովհաննէս Շիրազ։ Արեգ Գունտուրճեան «Գորալ», Ա. Բաբայեանեան եւ «Գարուն ա» Կոմիտաս Անդրիասեան «Դաչնամուր»։

Ապրիլ 24–ին, առաւօտեան ժամը 11–ին 350 ցուցարարներ համախմբուեցան Ուէսթմինսթըր Մայր տաճարին բակը, ուր հանդիսաւոր եկեղեցական արարողութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նախագահութեամբ առաջնորդին եղիչէ Ս.Բ.ի մասնակցութեամբ աբբայարանի դլխաւոր աւագերէցին եւ Շնորհք Քհնյ. Պաղտասարեանի ու դբացաց դասին։

Այնուհետեւ թափօրը դէպի Թրաֆալկար հրապարակը ուղղուեցաւ ոտիկանական ներու հակողութեամբ։ Առանց ազմուկի եւ բարձրախօսի, լուռ քայլարչաւը յառաջացաւ, առաջնորդութեամբ աւանդութեան վերածուած Հ. Մ. Ը. Մ.–ական նեերուն պատատ քայլերուն։ Ճամբուն վրայ, Անդանօթ Զինուորին յուշարձանին առջեւ, ծաղկեպսակ մը վեհերեցին Բաֆֆի Սարգիսեան եւ տոքթոր Ռոստոմ Ստեփանեան. իսկ Եղիչէ Ս.Ը.ի աղօթքէն ետք, թափօրը չարունակեց յառաջանալ մինչեւ Թրաֆալկար հրապարակը։

Նիլսընի բարձրադոյց արձանին առջեւ Հ. Մ. Ը. Մ.ի տղաքն ու աղջիկները երկայն պատառ մը պարզեցին հանրութեան առջեւ ուր գրուած էր խոչոր դիրերով. – Մէկ ու կէս միլիոն Հայերուն Ջարդը Թուրքերուն կողմէ։ Այս տարի Ապրիլ 24–ի յանձնախումբի կազմը որոչեց հրապարակել բարձրադոյն ձայնով կարճ ուղերձներով ելոյթ ունեցան։ Սթան Նիուզ – Եւրոպայի Խորհրդարանի անդամ, ձէրէմի Քորպին երեսփոխան – Վիլ Փրէտ Վօնկ – Խորհրդարանի պաշտօնեայ։ Քրիսթըֆըր Վօքըր – պատմաբան։ Քրոուհի Ալէֆ, միջանկեանութեան քիւրտ կազմակերպութեան քարտուղարուհի։ Ձօնն Հաճի, յոյն ընդհանուր քարտուղար ազգային համադաչնակցութեան, եւ Րաֆֆի Սարգիսեան, համայնքի եւ եկեղեցական խորհուրդի առենապետը, իսկ պարոնուհի Գոդա եւ Թոնի Պէն կարեւոր գործի պատճառներով չկարողացան ներկայ ըլլալ, սակայն հեռաձայնով – բեռնացի, դատապարտեցին Թուրքիան։

Ցաջորդաբար ելոյթ ունեցան բանախօսները, դրեթէ վեր ի վերոյ նոյն արտայայտութիւններով, բայց տարբեր տառդներով պարտաւեցին Թուրքիան։ Կոչ երին Անգլիոյ կառավարութեան, որ պաշտօնապէս ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը։ Մասնաւորաբար որեւէ ցեղասպանութիւն պէտք է դատապարտուի բոլոր պետութիւններէն որպէս մարդկային իրաւունք, որ ուրիշ առթիւ չկրկնուի նման ողբերգական արարք մը որեւէ ժողովուրդի պատմութեան մէջ։ Քրոուհին՝ Օր. Ալէֆ, դատապարտեց քիւրտ ցեղասպանութիւնը Թուրքերուն կողմէ 1915–ին Հայկական ջարդերուն։

Իսկ Քրիսթըֆըր Վօքըր անդրադարձաւ 1916–ին դրուած – Պոռ – Պուֆ վաւերագրքին, ուր յիշուած է Հայոց կոտորածը։ Լօրտ Պրայս եւ պատմաբան Թօյնպիի կողմէ, ու զարմանք յայտնեց որ ինչո՞ւ ներկայիս Անգլիոյ կառավարութիւնը պաշտօնապէս չընդունիր եւ չի ճանչնար Հայոց ցեղասպանութիւնը։ Թէեւ չարթիներ առաջ, Պարոնէս Գոդա–ի ներկայացուցած «Հայոց ցեղասպանութեան առաջարկը պաշտօնապէս մերժուած էր Լորտերու պալատին մէջ, իրենց դիւանագիտական եւ անտեսական զանազան պատճառներով։

Յաւելի էր նկատել որ սկզբնական ժամերուն քայլարչաւին մասնակցող մեր հայրենակիցներուն թիւը երթալով պակսեցաւ։ Իսկ երբ բանախօսները սկսան ելոյթ ունենալ, դիմացի Հարաւային Ափրիկէի դեսպանատան առջեւի հատարաւոր ցուցարարներուն աղմուկը մեծապէս խանգարեց մեր յայտագիրը։ Աւելին, ընդառաջակ հրապարակին վրայ մնացին 175 Հայեր – 15 Քիւրտեր եւ երկու Ցոյն ու անցորդ զբօսաչրջիկներ։ Ախսոս որ 2500 պահարաններու մէկ ցուցած ամբողջ ոգեկոչումներուն ժամանակացոյցը ամօթալի արդիւնք մը արձանագրեց մեր դատին։ Արդեօք միանալ բացականերուն հետ եւ մեր հանդիստը չխանգարե՞լ այլեւս, թէ կիպրացի Ցոյներուն պէս երկու հոգիով տաղաւարի մը մէջ, տարիներու ընթացքին դիչեր – ցերեկ թրքական դեսպանատան առջեւ հոգային պահանջք կամ ալ արդարութիւն պահանջել Թուրքերէն։

Քայլարչաւ – ցոյցը վերջ գտաւ «Մեր Հայրենիք» քայլերգով։

Ռուբէն Թաթուլեան եւ Լէյլա Ներսխեան ընթերցեցին «Յարգանք քեզ» – Աւետիս Ահարոնեան։ Օլիվըր Լանկֆորտ եւ Մաքսուէլ Կրինմուտ չութակ եւ դաչնամուր. ներկայացուցին «Ծիրանի Ծառ» եւ «Ախ Մարալ Ջան» – Կոմիտասէն։ Սուսաննա Թաթուլեան, Ղօզանջ Եղեռնական՝ Պարոյր Սեւակ։ Արիս Նազարեան (պարիտոն) եւ Էլենա Բարայեան դաչնամուր, Արշակ Բ.ի Արիան, Տիգրան Զուհաճեան – Արշակ Բ. օփերա։

Ապրիլ 24–ի յանձնախումբի առենապետը՝ տոքթոր Ռոստոմ Ստեփանեան խօսք առնելով քանի մը կարեւոր յայտարարութիւններ ըրաւ օրակարգի վրայ դնուող ապագայ ծրագիրներուն մասին, եւ չէզոր դրաւ Հայոց ցեղասպանութիւնը օտարներուն ծանօթացնելու պատասխանատու՝ ծանր աչխատանքներուն գործադրութեան անմիջական կարիքներուն վերայ եւ խնդրեց ներկաներէն որ ցոյցին ներկայ ըլլան։

Սոյն յարկանքի երեկոյթին «Հուսկ Բանք»ը կատարեց եղիչէ Աբգ. Կիպիրեան, հետեւեալ ազգայնաչունչ խօսքերով. – «Պատմութիւնը մեր ժողովուրդի ճակատին վրայ գրած է ո՛չ թէ մեռնիլ այլ ապրիլ ու ստեղծագործել։ Այո՛, Հայ ժողովուրդը վերապրեցաւ այդ ահաւոր ազէտին չնորհիւ իր ապրելու ու գոյատեւելու անմեռ կամքին։ Ցառաջդիմութեան ընդունակ հայ ժողովուրդը այսօր, հայրենիքի եւ սփիւռքի մէջ հրաչալիքներ կը գործէ կրօնական, ազգային, կրթական, գիտական, արուեստի ու մչակոյթի բոլոր մարզերուն մէջ։ Ուրեմն ուխտենք որպէս մեր նահատակներու արժանաւոր զաւակները՝ անոնց նման տէր մնալ հայկական դատին եւ ամբողջացնել անոնց անաւարտ առաքելութիւնը»։

Կիրակի, Ապրիլ 25–ին հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուեցաւ մէկ ու կէս միլիոն նահատակներուն հոգիներուն համար երեք տարբեր եկեղեցիներու մէջ. Ս. Աստուածածին, Մանչէսթըր Ս. Երրորդութիւն եւ (Գալուստ Կիւլպէնկեան) Ս. Սարգիս Եկեղեցիներուն մէջ։

Իսկ նոյն դիչերը կազմակերպուած էր երաժչտական յայտագիր մը Ռօյալ Ֆէսթիվալ – Հօլ Փըրսիլ փոքրիկ սրահին մէջ, նուիրուած 1915–ի Հայոց ցեղասպանութեան։ Դժբախտաբար բաւական պարապ աթոռներ կային։

Ծանօթ տաղանդաւոր արուեստագէտներ – Արմէն Պապախանեան դաչնամուր, Ալեքսանդր Շուչեան թաւ չութակ, Փիէր Պէնտա չութակ, եւ Սամուէլ Բարսեղեան չութակ, որոնք ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին հասարակութեան համար իրենց բացառիկ յաջող նուագներով եւ ծափահարուեցան ներկաներէն ու վերջաւորութեան չատեր անձամբ չնորհաւորեցին արուեստագէտները։

ՄՈՎՍԷՍ ՋԱՓԱՐԵԱՆ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԵԹՈՎպԻԱ – ԷՐԻԹՐԻԱ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Ինչպէս ծանօթ է, երկար ամիսներէ ի վեր բուռն պատերազմ տեղի կ'ունենայ Եթովպիոյ եւ Էրիթրիոյ միջեւ։ Ափրիկեան այս երկու երկիրներու Պատրիարքները օրին դիմեցին Արամ Ա. Կաթողիկոսին, որպէսզի Եկեղեցիներու Հայաչխարհային Խորհուրդի ճամբով միջամտութիւն մը կատարուի դադրեցնելու համար այս երկու դրացի երկիրներուն միջեւ տեղի ունեցող պատերազմը։ Այս գծով Էրիթրիոյ Պատրիարքը նաեւ Անթիլիաս այցելեց մի քանի ամիսներ առաջ եւ հանդիպում ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ։

Վեհափառ Հայրապետին կատարած աչխատանքներուն որպէս արդիւնք, Եկեղեցիներու Համաչխարհային Խորհուրդը երկու հակամարտ կողմերուն համաձայնութեամբ պիտի փորձէ հաչտարար դեր մը խաղալ։ Զորս հոգիներէ բաղկացած յանձնախումբ մը, գլխաւորութեամբ Եկեղեցիներու Համաչխարհային Խորհուրդի միջադգային հարցերու բաժանմունքի տնօրէնին պիտի այցելէ նախ Ադամաս, Էրիթրիոյ մայրաքաղաքը, եւ ապա Ադիս Ապաբա, Եթովպիոյ մայրաքաղաքը, հանդիպումներ ունենալու համար քաղաքական ու կրօնական պատասխանատուներու հետ։

Սոյն հաչտարար յանձնախումբին վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ մաս պիտի կազմէ նաեւ Կաթողիկոսարանի միջ – եկեղեցական բաժանմունքի վարիչ Նարեկ Ծ. Վրդ. Ալեքսմզեան։

Հաչտարար յանձնախումբը Էրիթրիա մեկնեցաւ, Կիրակի, Մայիս 9–ին։

## ՀԱՑՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆ

Մայիս 2, Կիրակի, Լա Սէոթայի Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյ մէջ պատարագի ընթացքին տեղի ունեցաւ պարզեւատրում՝ Մակար Քահանայ Նաճարեանի։

Գարեգին Ա. Ծայրագոյն Պատրիարք ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մակար Քահանայի չնորհեց Ա.ԻԱԳՈՒԹեան պատիւ ու տիտղոս։

Այդ Կիրակին, Ս. Փրկիչ Եկեղեցին լեցուած էր՝ թաղեցիներով, Մարսէյլի հեռաւոր արուարձաններէը բնակող Մակար Քահանայի ծուխերով եւ բարեկամներով, որոնք եկած էին ներկայ ըլլալու այս իրայատուկ արարողութեան, որ տեղի ունեցաւ Հարաւային Ֆրանսայի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Տարօն Եպիսկոպոս Ձէրէճեանի հովանաւորութեան տակ։ Պատարագը երդուեցաւ Մարսէյլի Սահակ – Մեսրոպ երդչախումբի մէկ քանի անդամներու եւ դեկավար՝ Մաչիկ Եըմատեանի կողմէ, երդչոնի ընկերակցութեամբ՝ Տիկին Ժիւլիէթ Եըմատեանի։

«Հայր Մեր»էն առաջ եւ «Ուրախ լեր»ի երգեցողութենէն վերջ, Տարօն Եպիսկոպոս Հայրապետական Կոնդակ–ի ընթերցումով փոխանցեց այս անօրինութիւնը եւ առաւ բացատրութիւն հաւատացեալներուն ըսելով. «Համաճայն մեր աւանդութեան, քահանայ մը տաբիներու իր հոգեւոր ծառայութեան իբր գնահատանք Եպիսկոպոսին առաջարկով Կաթողիկոսէն կը ստանայ Լանջախաչ կրելու իրաւունք, որ արդէն իսկ ստացած էր Տէր Մակարը, այսօր ձեր Եկեղեցւոյ վարչութեան առաջարկով եւ մեր խնդրանքով Գարեգին Ա., Տէր Հօր՝ իր բազում տարիներու հեռուզաղան գործունէութեան իբ գնահատանք, անոր չնորհած է Աւագութեան պատիւ եւ տիտղոս եւ Սեւ Ծագկեայ Փիլոն կրելու իրաւունք», ապա դնելով ծագկեայ փիլոնը Տէր Հօր աւելցուց՝ «Հպատութեամբ գործածէ զայն, Սուրբ Հոգւոյ չնորհներով օժտէ, ունենալով աւելի արդիւնալից հոգեւոր ծառայութիւն, ապրելով ժողովուրդին հետ եւ ապրեցնելով անոր հոգեւոր կեանքը»։ Տարօն Եպիսկոպոս տուաւ նաեւ Տէր Մակարի կենսագրականը, չեչտելով թէ ան քահանայ ձեռնադրուած է 1968–ին ձեռամբ Գարեգին Եպիսկոպոս Սարգիսեանի, այսինքն այժմու Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Պատարագէն վերջ ի պատիւ իրեն, տեղի ունեցաւ ճաչ, կոկիկ բազմութեան մը մասնակցութեամբ։

Ճաչին բացման խօսքը արտասանեց՝ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ առենապետ՝ Աբրահամ Կարապետեան, չնորհաւորեց Մակար Քահանան եւ վարչութեան անունով նեկայացուց համեստ նուէր մը։ Մտերմիկ մթնոլորտի մը մէջ չարունակուող ճաչի ընթացքին խօսք տրուեցաւ Աչիկ Եըմատեանի, որ ի մասնաւորի ծանրացաւ Տէր Հօր չարականապիտութեան եւ ծիսակատարութեան մէջ Մակար Քահանայի բերծախնդրութեան վրայ եւ ըսաւ՝ «գործերու մէջէն մեղի հասած հոգեւոր երգերը, առաւօտեան ժամերգութեան երգուած գեղեցիկ չարականները, որքան հնութիւն ներքան ալ այժմէականութիւն ունին եւ մեր պարտականութիւնն է մեղի հասած այս չարականները փոխանցել, իսկ այդ մէկին ալ կարելի է միայն՝ անոնք երգելով»։

Ապա, խօսք տրուեցաւ Մակար Աւագ Քհնյ. Նաճարեանի, որ յուզումնախառն ուրախութեամբ արտայայտեց իր զգացումներն եւ ըսաւ. «Աստուծոյ սէրը, մեր 30 երկար տարիներու ծառայութեան ընթացքին ուժը դարձաւ, ինչ որ ըրինք զան կը պարտինք Աստուծոյ։ Հայ Եկեղեցին ընդարձակ ու մեծ այգի մըն է որ պէտք ունի լուրջ ու նուիրեալ ծառայող հոգեւորականներու, որոնք կրնան լաւ մչակել այս դեղեցիկ այգին։ Հայ Եկեղեցին ամուր ամրոցն է հայ հոգիներու, Հայոց հաւատքին, բազմադարեան ու անկորնչելի մեր լեզուին ու մչակոյթին։ Մենք ալ ունինք հոգեկան ուրախութիւնը, այդ այգիին ծառայած ըլլալու»։ Ցայտնեց իր չնորհակալութիւնը եւ ի մասնաւորի քաջառողջութեան մաղթանքները Ամենայն Հայոց Հայրապետին, ինչպէս նաեւ Գիւտ Արք.ի, Տարօն Եպիսկոպոսի եւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ վարչութեան։

Ճաչը փակուեցաւ Տարօն Եպիսկոպոսի «Հուսկ Բանք»ով եւ միասնաբար երգուած «Հայր Մեր»ով։

ԱՆԻ ՑՈՎՍԷՓԵԱՆ

(Շար. Ա. Էջէն)

կան ՕԹՄԱՆ–ի եւ Ռուսաստանի միջեւ։

Ռմբակոծութիւնները կը չարունակուին անխնայ, 50–րդ օրն ալ եւ կրաֆիքով ռումբերը կրկին մուխին մէջ ձգած են Պելկրատն ու չրջակայքը Մայիս 13–ին։ Ըստ Պելկրատի Արտաքին նախարարութեան, ցարդ 1200 բնակիչ մեռած է եւ չուրջ 5000 ալ վիրաւոր կայ։

– Տեղահաններու հոսքը կը չարունակուի։ Շատեր չեն ուզեր Ալպանիա երթալ ուր մաֆիան իրենց վրայ ձեռք կը դնէ։ Գաղթականներու ընդհանուր թիւը 910 հազար կը գնահատուի։

– Սերպ ուժերու մառնակի փոքր նահանջ մը նկատելի եղած է, բայց, անբաւարար է։ Ձեմի Շի կրկնած է.–«Սերպ ուժերու ամբողջական քաչուիլը Քոսովոյէն, միակ բանն է որ իմաստ ունի»։

⁂

Ռեժիս Տըպրէ, գրագէտ եւ փիլիսոփայ (ձախ) մեծ ազմուկ կը բարձրացնէ մեռիաններու մօտ այն բոլոր նամակին պատճառաւ զոր ուղղած էր նախագահ Շիրաքի, Մոնտի միջոցաւ (Մայիս 13)։ Տըպրէ չորս օր Սերպիա եւ չորս օր ալ Քոսովօ անցուցած է եւ իր տեսածը կը պարզէ նախագահին, որու խօսքերը, կը գրէ չեն համապատասխաներ իր տեսած կացութեան։ Իր կարծիքով մըղուած պատերազմը սերպ ժողովուրդին եւ երկրին դէմ է, ոչ թէ Միլոսեւիչի։ Կը յիշէ թէ ընդդիմադիրները նկատել տուած են իրեն որ մենատէր Միլոսեւիչը երեք անգամ ընտրուած է, մինչ մենատէրերը մէկ անգամ կ'ընտրուին։ Սերպ ուժերը չեն քանդուած, այլ քանդուած են կամուրջներ, պարապ զօրանոցներ եւլն. եւլն.։ Ու երկար նկարագրութենէն եառք իր տեսածին ու լսածին, կը վերջացնէ այն սահմանումով զոր տը Կօլ կու տար ՕԹԱՆ–ին. – «Ատլանտեան զինակցութեան պարտադրուած կազմակերպութիւն որ միայն զինուրական եւ քաղաքական Արեւմտեան Եւրոպայի ենթակայութիւնն է Միացեալ – Նահանգներուն»։

Բարձրացած ազմուկը ահաւոր է։ Նախ, Պերնար–Անրի Լեւի որ Մոնտի յաջորդ թիւին մէջ իսկ բուռն պատասխան մը գրած է խորագրուած «Ատիէօ, Ռեժիս Տըպրէ», Մայիս 14–ին ալ Լիպերասիոն առաջին էջէն կը վերլուծէ «Ռեժիս Տըպրէի պարագան»։ Այլ խօսքով եւ ինչպէս դիտել կու տար լրագրող մը հեռատեսիլէն, միայն Ֆրանսայի մէջ է որ Քոսովոյի չուրջ վիճարկում չկայ եւ ով որ համաձայնի ընդունուած բանաձեւերէն տարբեր բան մը ըսելու փորձ ընել, այսինքն «միակ մտածում»էն չեզոքել, յարձակումը անխուսափելի է։ Այլուր վիճաբանութիւններ չատ են։

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՑ նախագահ ընտրուեցաւ նախկին վարչապետ, կեդրոնական դրամատան նախկին կառավարիչ, ծանօթ որպէս անաչառ եւ անկաշառելի անձ մը՝ Գարլօ Ազելիօ Չիամփի։ Ինքզինք կը սահմանէ որպէս «Եւրոպայի քաղաքացի մը Իտալիա ծնած»։ 78 տարեկան, կաթողիկէ, բայց ոչ ջերմեռանդ, ընտրուեցաւ 1010–ի վրայ 707 ձայնով։

ՊԻԼՅԵԼՏԻ (Գերմանիա) մէջ ուր սեղի կ'ունենար կանաչներու համագումարը, ահաւոր իրարանցում մը ստեղծուեցաւ եւ միջադէպ ու քախում իրարու յաջորդեցին։ Կանաչները դէմ են ռմբակոծութիւններուն եւ չեն կրնար հանդուրժել որ իրենցմէ մէկը – կանաչ մը – Արտաքին նախարար մնայ ու Եոչքա Ֆիշէրի գլխուն թափեցին կարմիր ներկի տուփը, վիրաւորեցին նաեւ նախարարին ականջի ծայրը։ Ի վերջոյ կարելի եղաւ միջին ճամբայ մը գտնել եւ քուէարկել բանաձեւ մը ուր կը պահանջուէր ռմբակոծութիւններու առժամեայ առկախումը, նաեւ Քոսովոյիներու վերադարձը։

ՄԵՐՎԷ ԳԱՒԱԳՃԸ, որ գայթակղութիւն առեղծեց Թուրքիոյ Ազգային ժողովին մէջ լաչակով մուտք գործելով, չի կրնար երեսփոխանական իր պաշտօնը կատարել որովհետեւ ամերիկահպատակ է։ Վարչապետ Պ. Էճեվիթ յայտարարած է որ ենթական այդ հպատակութիւնը ստացած է առանց նախապէս թրքական իշխանութեանց արտօնութիւնն առնելու։

ԻՐԱՔԻ հիւսիսը՝ Նինուէի գաւառի ամերիկեան ռմբակոծութիւններու հետեւանքով 12 Իրաքցիներ մեռած են եւ քսանմօթիւ ուրիշներ ալ վիրաւորուած։ Օգային ամս գործողութիւնները կը կատարուին Թուրքիոյ Ինճիրլիք վայրէն։

## Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

### ՍԷՆԹ' ԱՆԹՈՒԱՆ ՄԱՐՍԷՑԼ

# ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՕԾՄԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

*Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ*

*կը պատարագէ եւ կը քարոզէ՝*
*ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ*
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց

*Սկիզբ ժամերգութեանց ժամը 9–ին։*
*Պատարագ ժամը 10–ին։*
*Ցաւարտ պատարագի՝*
*ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱՇ*
*Պատուոյ նախագահութեամբ՝*
*ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՊԱՅԵԱՆԻ*
Ատենապետ Շրջանային Խորհուրդի
*Ճաշը կը պատրաստուի Լ'Հերմիթաժ Ճպչարանին մէջ։*
*Հեռաձայն.–*
04 – 91 – 65 – 56 – 75
*Ապահովեցէք ձեր տեղերը։*

## Jeunes de la Communauté Arménienne de Marseille

### Communiqué de Presse

La communauté arménienne intégrée à la ville de Marseille depuis cinq générations maintenant, a à cœur de manifester son attachement à sa ville en apportant sa contribution active aux festivités du vingt-sixième centenaire de Massalia, cité riche de son passé, de ses différences, de sa pluralité culturelle.

Le 19 juin 1999 aura lieu une grande parade terrestre unissant les communautés faisant partie de l'Histoire de Marseille.

La musique, la danse, les costumes traditionnels seront au rendez-vous.

Jeunes Arméniens, venez nombreux participer à cette fête de l'amitié et du partage.

Vous témoignerez, ainsi, de votre attachement à vos racines et à la ville qui vous a vu naître.

Pour vous inscrire et avoir des précisions, téléphonez au :

● 04 91 77 84 70
● 04 91 91 46 95

Nous comptons sur vous !

## ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

### FRANCE 3

*«ՅԱԿՈԲԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ»Ը*

*Մայիս 19, Չորեքշաբթի ժամը 16·05–ին հեռատեսիլի «Ֆրանս 3» կայանը «Մակսիմէ» յայտագրով նիւթ կ'ընէ Մարսէյլի Յակոբեան ընտանիքին պատմութիւնը։ Հայրը՝ Լիւք 1926–ին ծնած է ցեղասպանութենէն վերապրողներ Մարսէյլ փոխադրող նաւու մը վրայ։ 1947–ին կը ներգաղթէ։ Ցետոյ իր կեանքին նպատակը կ'ըլլայ վերադառնալ Մարսէյլ։*


le Centre Culturel
SAINT MESROB
à PARIS
expose du 18 au 28 mai
LES PHOTOS GRANDEUR NATURE
DES
VITRAUX
réalisés par Reine AVEDISSIAN
sur le thème :
L'ART ET LA RELIGION,
SYMBOLES DE PAIX
Les sentiments religieux
dans l'Architecture et l'Art
sous les diverses formes
dans les grandes civilisations.
Vernissage,
le Mardi 18 Mai à 19h
10 bis, rue Thouin — Paris Ve
Entrée libre — Cocktail
(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)
Tél. : 01 44 59 23 50
ou 01 40 51 11 90
Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

Roma - Armenia
Catalogue sous la direction de Claude MUTAFIAN
Edition de Luca
(Exposition Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, jusqu'au 16 juillet)
Edition en langue française disponible à la Librairie H. SAMUELIAN :
51, rue Monsieur-le-Prince — 75006 PARIS
Prix 295 F + Frais de port.

EREVAN
2 vols directs hebdomadaires
en Airbus A310
de la compagnie
ARMENIAN AIRLINES
Départ Paris 2690 F
Départ Province 2800 F
Renseignements & inscriptions :
SEVAN VOYAGES
48, Cours de la Liberté — 69003 LYON
Tél. : 04. 78. 60. 13. 66;
Fax : 04. 78. 60. 92. 26.
SABERATOURS
19, rue Saint-Roch — 75001 PARIS
Tél. : 01. 42. 96. 10. 10;
Fax : 01. 42. 96. 18. 77

Fête Paroissiale
LUNDI DE PENTECOTE
24 MAI
AU PROGRAMME :
11h30 : Culte;
A partir de 12h : Repas
Spécialités arméniennes;
Stands :
Pâtisseries arméniennes
Librairie, Brocante, etc...
Animation musicale.
EGLISE EVANGELIQUE ARMENIENNE
55, avenue Victor-Cresson / 28, avenue Bourgain
92130 ISSY-LES-MLX


## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes – 92130 Issy-les-Moulineaux.


CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

CENTRE DE VACANCES DE BELLEFONTAINE
(Jura)

**Le séjour du mois de juillet étant complet, nous vous invitons à inscrire vos enfants pour le mois d'août :**
**Dates : du 29 juillet au 20 août**
**Prix : 3 400 + 450 F (transport Paris et Marseille)**
**Ages : enfants nés entre le 01/01/84 et le 31/12/92**
**Veuillez contacter la section la plus proche de votre domicile ou téléphoner au Conseil d'Administration de la CBAF au : 01. 48. 24. 46. 57.**


L'Ecole de la Langue et de la Culture Arméniennes
« KHATCHADOUR ABOVIAN »
de la
Cathédrale Apostolique Arménienne
de Marseille
vous invite à sa

Fête Annuelle
suivie de la
Kermesse
ՏՕՆԱՎԱՃԱՌ
**Samedi 5 Juin**
de 14h30 à 19h
Dans la cour de la Cathédrale
**Serpotz Tarkmantchatz**
339, avenue du Prado — 13008 Marseille
Tirage de la TOMBOLA sur place
avec de nombreux lots
**Venez nombreux**
encourager nos élèves
et déguster les spécialités arméniennes
dans une ambiance familiale

## ՓՈՒԹՊՈԼ

Հ·Մ·Ը·Մ·–ՖՐԱՆՍԻ ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ՝ 7 – 0

*Յետաձգուած մրցումներու չարքին, Համբարձման օրը՝ Մայիս 13–ին, ՀՄԸՄ–Ֆրանս Նանթէսի դէմ, այս վերջնոյն դաշտին վրայ չախչախիչ յաղթանակ մը տարաւ խաղը 7 – 0 չհեղլով։ Այսպէսով աւելի քան յաւակնորդ կը դառնայ դասակարգ բարձրանալու եւ այդ առումով իսկ այս կիրակի, Մայիս 16–ի մրցումը Համր եւ խուլերու դէմ յատուկ կարեւորութիւն կը ստանայ։ Ուրեմն հարկ է մեծ քաջալերութիւն մեր երիտասարդներուն։ Ժամադրութիւն՝ Գուրնէօվի դաշտը, ժամը 15·30–ին։*

*Մեծ թիւով եկէք զօրավիդ ըլլալու ՀՄԸՄ–Ֆրանսին, ճակատագրական այս մրցումին։*

Շ. Ո.


Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris



Քաջալերեցէք ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ եւ ազգային դաստիարակութիւնը

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 18
MARDI
18 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱԽԱՐԺ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·642 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.642

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 15 / 17)

### ԱՇՈՏ ԲԼԷԵԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Մայիս 14–ի կէսօրին ձերբակալուած է Ազգ. Ուղղ. կուսակցութեան նախկին գործ. Մխիթար Սեբաստացի կրթական համալիրին անօրէն Ա. Բլէեան: Ձերբակալութիւնը տեղի ունեցած է ՀՀՇ–ի կեդրոնատեղին կազմակերպուած կլոր սեղանէն առաջ ուր պիտի հաւաքուէր Բլէեանի պաշտպանութեան խորհուրդը: Այդ խորհուրդին անդամ Գ. Ճակոբեան ըսած է որ վինք ձերբակալած են իր ղեկավարած կրթական համալիրին բակը աշակերտներու եւ ուսուցիչներու ներկայութեան: Ա. Բլէեան իի դէմ դատախազութիւնը դիմած է պատրան որպէսզի արգելափակման որոշումը տրուի:

Ա. Բլէեան Մարտ 23–ին դատախազութեան կողմէ հարցաքննութեան ենթարկուած էր պաշտօնի չարաշահումի եւ մեծ գումարները իւրացնելու ամբաստանութեամբ. իրեն արգիլուած էր Երեւանէն հեռանալ: (Տես՝ «Յառաջ», Մարտ 26):

***

### ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԱԾ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 14–ին հիւրընկալած է Գերագոյն հոգեւոր Խորհուրդին անդամները. ողջունելով հիւրերը ան ըսած է թէ եկեղեցին պետութեան հիմնական նեցուկն է եւ հայութիւնը մխոցող կառոյց: Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին Արք. փոխանցած է Գարեգին Ա.ի ողջոյնները, ապա ըսած թէ եկեղեցին պատրաստ է ամբողջ կարողութեամբն ու կառոյցներով զօրակցելու պետականութեան: Ապա իր հիւրերուն խնդրանքով Ռ. Քոչարեան ներկայացուցած է վերջին մէկ տարուան քաղաքական անցքերը, ընտրութեան նախապատրաստութիւնը, Սիւնիք – Հայաստան յարաբերութիւններուն մէջ նոր մօտեցումներու անհրաժեշտութիւնը, եւայլն:

***

### ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

Գեղարքունիքի Գաւառ քաղաքին մէջ Մայիս 13 եւ 14–ին տեղի ունեցած են ընտրապայքարի հանդրահատաքները: Նախ ընտրողներուն խօսք ուղղած են «Իրաւունք եւ միաբանութիւն» դաշինքէն Ա. Գեղամեան, Հ. Մաշտոցեան եւ Ռ. Դաշեան, ներկաներուն քննադատելով իշխանութիւնները թէ վարկերը չեն դրուիր ժողովուրդին ծառայութեան, եւայլն: Շատ քիչ թիւով համակիր ներած է հանրահաւաքը:

Յաջորդ օրը նոյն վայրին մէջ ընտրապայքարի ելոյթ ունեցած է Համայնավար կուսակցութեան ղեկավար Ս. Բաղալեան: Հրապարակը զբաղարուած է կարմիր դրօշներով եւ համայնավար առաջնորդներու դիմանկարներով: Ս. Բաղալեանն առաջ ժողովուրդին դիմողներ խիստ քննադատութիւն ուղղած են յետխորհրդային իշխանութիւններուն եւ յիշած Յովհաննէս Սարուխանեանի խօսքը թէ «կը ճօճին կախաղաններու վրայ, բայց յետպոլոխութեան չեն դատաճաններ»:

Ս. Բաղալեանի ելոյթը յատկապէս թիրախ առած է նախագահ Ռ. Քոչարեանը որ լուութեան կը մատնէ Ռուսաստան – Բելառուս դաշինքին միանալու Հայաստանի ժողովուրդին կամքը, անտեսելով այն իրողութիւնը թէ Հայաստան չի կրնար դադարեցնել առանց Ռուսաստանի հետ վերամիանալու: Ան քննադատած է նաեւ Ռ. Քոչարեանի նախագահ Գրիգորեանի հետ հանդիպումը:

Ուրբաթ, Մայիս 14–ին, «Հայրենիք» դաշինքի ներկայացուցիչներն ալ այցելած են Արագածոտնի չրջանը: Ընտրողներուն հետ հանդիպումներ ունեցած են Աշտարակի եւ Թալինի մէջ: Ելոյթներ ունեցած են Եդուարդ Եղոյեան, Պետրոս Մակէեան եւ Սօս (Մկրտիչ) Գիմիչեան: Դաշինքի ներկայացուցիչները յաջորդաբար կ'այցելէին նաեւ Գեղարքունիք, Տաւուշ եւ Լոռի:

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓՈՍՈՎՕ

### 87 ՄԵՌԵԱԼ, 78 ՎԻՐԱՒՈՐ ԵՒ ԴԵՌ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՍԱՍՏԿԱՆԱՆ, Կ'ԸՍԷ ՕԹԱՆ

Հինգշաբթիէն Ուրբաթ, Մայիս 14–էն 15–ի լուսնալիք գիշերը, ՕԹԱՆ–ի երեք օդանաւերը ամբակոծած են Քոսովոյի հարաւը գտնուող գիւղ մը Քորիչա եւ շատ Պելկրատի ազբիւրներուն 87 մեռեալ եւ 78 ծանր վիրաւորներ կան, որոնք քոսովոյի դաշնականներ են: Ծնած բանակէն, այս առթիւ, այդ օրուընէ ի վեր կը դրաղեցնէ մեռիանները: ՕԹԱՆ չուրանար որ իր ռումբերն էին սպանդին պատասխանատուները, բայց, կ'ուրանայ որ նոր «սըխալ» մը ըլլայ, ինչ որ Ֆրանսայինները պաւիւռ որակած էին եւ այդ պարագային 9–րդը կ'ըլլայ եւ ամէնէն աղէտալին: ՕԹԱՆ–ի համար, ամբակոծուած վայրը, ազարակը, քարէսին վրայ զինուորական պահեստանոց մըն է, ուրեմն թիրախը՝ ճիշդ է եւ եթէ զոհեր կան, պատճառն այն է որ այդ գաղթականները պէտք չէ հոն ըլլային: ԱՄՆ–ու Պաշտպանութեան նախարարութիւնը աւելի հեռու կ'երթայ եւ իր ռումբերով սպանուածներուն, մանաւանդ պատասխանատուն կը նկատէ Միլոսեւիչը, որ այդ զօրանոցին մէջ, բանի տեղաւորել տուած է դէպի Ալպանիա գաղթող Քոսովոցիները, որպէսզի օրէցս մարդկային վահան ծառայեն: Պէտք է ըսել որ ՕԹԱՆ այսքան հեռու չէրթար, աւելի խոհեմ է եւ կը նախընտրէ քննութիւն կատարել: Մինչ որ ոչ ՕԹԱՆ–ը, ոչ ալ Փենթակոնը (ամերիկեան Պաշտպանութեան նախարարութիւնը) կրցած են որեւէ փաստ բերել այսքան ծանրակչիռ ամբաստանութեան մը: Ռուսաստան խիստ կերպով դատապարտեց «Զինակցութեան այս նոր ոճիրը» եւ սպառնաց, անգամ մը եւս քաշուիլ խաղաղութեան գործընթացի խօսակցութիւններէն:

Ամէն պարագայի մէջ, հարիւրաւոր, հազարաւոր մեռեալ կամ վիրաւոր բան չեն փոխեր Ամերիկայի վճռակամութեան, աւելի եւ աւելի սատակութեամբ չարունակելու ռմբակոծութիւնները: Մինչ, Մայիս 15–ին 24 ժամուան մէջ, 300 ռմբակոծութիւններ կատարուած են եւ 50 օր է դեռ կարելի չէ եղած Միլոսեւիչը ծունկի բերել, բայց, կարելի եղած է մէկէ աւելի ծանր հարցեր ստեղծել:

Առանցքէ չդարձածուած ռումբերու ճակատագիրը, որ խորտակել տուած էր «Մոնտ»ի (Մայիս 16 / 17)· – «Ազբիականը, զինամթերքի գերեզմանատուն»: Արդարեւ, Իտալիոյ վարչապետը՝ Մասիմօ տ'Ալեմա, հաղորդագրութիւն մը

(Շար·ը Դ· էջ)

## ՄԱՄՈՒԼ

### «LE FIGARO»

(17 Mai)

FESTIVAL DE CANNES

### Atom EGOYAN: «Que faisons-nous de notre passé»

#### «ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ՄԻՇՏ ՆԵՐԿԱՅ Է ՄԻՋՍ»

Երկուշաբթի, Մայիս 17–ին է որ Գաննի փառատօնին կը ներկայացուի Ատոմ Եղոյեանի նոր ֆիլմը՝ «Ֆելիսիայի համբոյրը»: Այս առթիւ, «Ֆիկարօ»ի թղթակիցը հարցազրոյց մը ունեցած է հետը: Ան կ'ըսէ, սկիզբէն, եթէ սինեմայով չզբաղէր, հոգեբուժութեամբ կը զբաղէր: Ու լրագրողը կ'ըսէ թէ ան մեծ հետաքրքրող մըն է անցեալի հոգեխոցերու եւ ներմղուած վիշերու: Այս նոր ֆիլմը պատմութիւնն է աղանձին մարդու մը, քիչ մը տարօրինակ որ անօթեւան կինեբու ապաստան կուտայ եւ այդպէս կ'ընդունի Ֆելիսիան, իրմանացի մը Անգլիա եկած փնտռելու համար ծնելիք իր զաւկին հայրը: Ֆիլմը քաղուած է Թրեւորի գործէն: Եղոյեան կը բացատրէ իր հիացումը հեղինակին հանդէպ: Լրագրողին այն հարցումէն թէ ուրկէ՞ կուգայ իր մէջ անցեալի այդ մղձաւանջը, Եղոյեան կը պատասխանէ· – Հաւանաբար հայկական ծագումէս: Հայ մշակոյթը շատ ներկայ է մէջս: 18 տարեկանիս է միայն որ Թորոնթօ եկած եմ: Ինչպէս բոլոր Հայերը, ժառանգած եմ մեր ժողովուրդին ջարդին եւ անոր ուրացումին հոգեբեկումը: Ինծի համար, խօսիլ անցեալի մասին, կը նշանակէ ուրացումի, ներմղումի հարցը դնել: Հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը հրապարակաւ ժխտուեցաւ: Յետոյ, սինեման գործ մը ունի անցեալին հետ: Արուեստն է կորսուած պահ մը բռնելու· Կարօտալի եւ սարսափելի բան մը կայ սինեմային վերստեղծելու այդ կարողութեան մէջ»:

Եղոյեան դեռ կը բացատրէ որ սինեմայի պասընթացքի չէ հետեւած, ինքնուս է, ուրեմն նախ հետաքրքրուած է լեզուի եւ ոճի հարցերով: Կը խորհի մինչ, կ'ըսէ, թէ ի՞նչ պատճառներով դամբարան հոս թէ հոն պէտք է դնել, դիպուածի հարց չէ, բայց կ'աւելցնէ, աւելի կը ներչնչուի դերասաններու ոդիով: Երթալով աւելի կը հաւատամ դէմքերուն, ինչպէս Պերկման կամ Փազոլինի «Աւետարանը ըստ Մատթէոսի»ի մէջ, զոր կրկին դիտեցի վերջերս:

***

### «MARIANNE»

(10-16 Mai)

*. . . PUISQUE LES GRANDES NATIONS ONT DIT QUE LE GENOCIDE ARMENIEN N'EN ETAIT PAS UN*

Նամականիի բաժնին մէջ, չաբաթաթերթը նամակ մը հրատարակած է Միշէլ Մայարէ, ուր ան բաւական հեգնանքով կ'անդրադառնայ «Մարդկային իրաւանց այս քաջ պաշտպաններուն» ու կը յանդիմանայ Թուրքիոյ վրայ, զոր կ'ըսէ կարելի չէ յաղդատել Հիթլէրի հետ, քանի այս վերջինը մեծածաւալ ցեղասպանութիւն մը դործեց, իսկ Թուրքիա՝ ոչ, քանի մեծ պետութիւնները ըսին որ Հայկական ցեղասպանութիւնը ցեղասպանութիւն չէր ու նոյն հեգնանքով կը չարունակէ·– «Եթէ Թուրքիա 1974–ին կիպրոսի վրայ յարձակեցաւ խաղաղութիւնը վերահաստատելու համար էր: Եթէ դեռ դրաւած է կղզիին 40%–ը, 30 հազար զինուորներով, մտադրելով թղթատել ՄԱԿ–ի բանաձեւները որ իր բանակին նահանջը կը պահանջէին, պաշտպանելու համար է Թուրք կիպրացիներու 18%–ի փոքրամասնութիւնները որոնց կը սպառնան յոյն կիպրացիները»···:

## Ա. ԷՕՃԱԼԱՆԻ ԵՂԲՕՐ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

*ՓՐՓՐ–ի ղեկավար Ա. Էօճալանի առեւանգումէն ու Թուրքիա փոխադրուելէն ի վեր կազմակերպութիւնը կը գլխաւորէ եղբայրը՝ Օսման Էօճալան: Ան Եւրոպա հրատարակուող քրտական օրաթերթին «Էօզկիւր փոլիթիքա»յի Մայիս 15 – 16 – 17–ի թիւերուն մէջ լոյս տեսած ընդարձակ հարցազրոյցով մը անդրադարձած չուրջ երկու տասնամեակէ ի վեր չարունակուող իրենց պայքարին, Թուրքիոյ ցեղասպան ու ցեղասպանական քաղաքականութեան, իրենց մօտալուտ ազգային համագումարին, եւայլն: Զրոյցին վերջին մասին մէջ նիւթ եղած է Ա. Էօճալանի դատավարութիւնը: ՓՐՓՐ–ի նոր ղեկավարը չեչտելով երկու ժողովուրդներուն միջեւ ուշ կամ կանուխ երկխօսութիւն հաստատելու անխուսափելի հանդրուանը, ըսած է թէ առանց տասը երկու կողմն ալ կործանումի պիտի առաջնորդուին: «Մեր ղեկավարին գերեվարումը ոչինչով տկարացուցած է մեզ. այսինքն՝ եթէ լուծում մը չգտնուի, վերջին ծայր կործանարար պատերազմ մը պիտի ծաւալի: Մեր կուսակցութեան ռազմական զօրութիւնը աւելի քան երբեք ներկայ է ու 40 միլիոնոց բրտական զանգուածը աշխարհի որեւէ մէկ շրջանին մէջ պատրաստ է իր կառողականութիւնը մեր կուսակցութեան ղեկավարութեամբ պատերազմիք ծառայեցնելու: Մեր հզօրացումին գլխաւոր ազդակն են այն աւելի քան հինգ հազար նոր փէտայիները որոնցմով կարելի է այնպիսի զարգացումներ արձանագրել որոնք կը ցնցեն ոչ միայն Թուրքիան, այլ նաեւ ամբողջ աշխարհը» ըսած է ան, ապա խօսքը աւարտած է կրկնելով որ եթէ Թուրքիա իրենց առաջարկած «ժողովրդավարական միութիւն»ը իրականացնելու քայլերու չդիմէ, մեծ սխալ մը գործած կ'ըլլայ դատ բանալով մեծ կործանումի մը որ իրենց նպատակը չէ:

## ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԸՄԲՉԱՓԱՐՏ

Սոֆիա տեղի ունեցած ըմբշամարտի յունա–հռոմէական ոճի Եւրոպայի ախոյենութեան հայ մարզիկները յաջող արդիւնքներ արձանագրած են. այնուամենայնիւ Հայաստան ստիպուած եղած է գոհանալ միայն մէկ պրոնզէ մետալով, միւս երկու մետալակիր Հայերը այլ Պետութիւններու ներկայացուցիչներ ըլլալով: Այսպէս 54 քգ· դասակարգին մէջ Դանիէլեան արժանացած է ոսկի մետալի սակայն Ռուսաստանի հաշուոյն: Միայն Մնացականեանն է որ 58 քգ· դասակարգին մէջ պրոնզէ մետալ ապահոված է Հայաստանին: Այս նոյն դասակարգին մէջ Նազարեան որ Պուլկարիոյ հաշուոյն կը պայքարէր, բացառիկ յաջողութիւններ ձեռք ձգած է, կէս աւարտականներուն ալ 12 – 0 յաղթելով իր թուրք մրցակիցին: Ան արժանանալէ զատ ոսկի մետալի, արժանացած էր նաեւ էքիփ թերթի դրուատալից տողերուն, որ գինքը կը հռչակէր այս մրցաշարքին աստղը:

***

### ՓՈՒԹ–ՊՈԼ

ՖՐԱՆՍԱՀԱՑ ԽՈՒՄԲԵՐ

Փարիզեան Շրջան
Սուտ Է Միէ – ՀՄԸՄ Ֆրանս 1 – 1
Էֆ· Սէ· Ա.Ս.Ք.Ս (Արճուվիլ) – Պուֆրմոն 3 – 4
Սէն Տընի Սէն Լէօ – Ա.Ս.Օ· Արմէնիէն (Իսի) 1 – 2
Պրէվան – Իւ· ժի· Ա· (Ալֆորվիլ) 0 – 1

Լիոնի Շրջան
Սէն Մարթէն տ'Էռ – ՀՄԸՄ Լիոն Տէսին 2 – 1

Իզէրի Շրջան
Սոլէզ Սերէզ – ՀՄԸՄ Վիէն 5 – 1

Տրոմ–Արտէշի Շրջան
ՀՄԸՄ Վալանս – Ֆլաւիաճ 7 – 4

Շ· Ո·

# ՊԵՐՃԱԽՕՍ ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՂՀ Պաշտպանութեան նախարար Ս. Բարսեղեանի մէկ յայտարարութեամբ Հայաստանի նախընտրական շրջանի առաջիկայ ամէնէն ազմկալի դրուագը նշուեցաւ: Այդ յայտարարութիւնը նախասրութիւն մը կը մատնէր Հայաստանի քաղաքական մարդին խմբաւորումներէն մէկուն նկատմամբ, քանի որ զարթարաղցի նախարարը ըսած էր թէ ընտրարշաւի շրջանակին մէջ իր համակրանքը կ'ուղղուէր «Իրաւունք եւ միաբանութիւն» դաշինքին: Այդ արտայայտութիւնը միջամտութիւն նկատուեցաւ Հայաստանի ներքին գործերուն ու ազդարարուեցաւ որ Ղարաբաղցիները նման քանի իրաւունք չունին:

Այս հակազդեցութիւնը որ եղաւ քաղաքական բարձրաստիճան դէմքերու կողմէ, անմերժելի յստակութեամբ սեղան բերաւ Հայաստանցի – զարթարաղցի հակադրութիւն մը որ անհանդուրժողական չեչոլուած բնոյթ կը կրէր: Այլ խօսքով՝ բացայայտ կերպով հրապարակուեցաւ Ղարաբաղցիներու հանդէպ մերժումի խուլ հոսանք մը որ զոյութիւն ունէր առեներ մը ի վեր, բայց առաւելապէս զգալի եղած էր Ռ. Քոչարեանի Հայաստանի նախագահ դառնալուն հետ ու անկէ եաք ալ չարունակուած:

Հարցը այն չէ որ Ս. Բարսեղեանի զօրակցութիւնը կրնա՞յ, կամ եթէ այո, ի՞նչ առիճանի գործնական ազդակ ըլլալ յիշուած դաշինքին քուէները աւելցնելու նպատակին. ան՝ այն որ Հայաստանցի – զարթարաղցի հակադրութիւնը բաւական չօշափելի բան է այսօր, քանի որ համակրական արտայայտութիւն մը անգամ հակազդելու կը մղէ: Կարելի՞ է ըսել որ ԼՂՀ Պաշտպանութեան նախարարը այնքան մեծ ժողովրդականութիւն կը վայելէ Հայաստանի ժողովուրդէն որ իր համակրանքը քուէներու թեւաղրութիւն նկատուի եւ որպէս այդ, արդիւնքին ազդելու գործօն: Մանաւանդ երբ քաղաքական չըբլանակի երկու առաջնային անուններէն՝ Կ. Դեմիրճեան եւ Վ. Սարգսեան առեղծած են «Միասնութիւն» դաշինքը որուն համար քուէներու մինչեւ 50%–ը, կամ նոյնիսկ աւելին առանալու նախատեսութիւններ կ'ըլլան: Աւտր քով ՍԻՄ–ի (Սահմանադրական իրաւունք Միութիւն – նախագահ Հրանտ Մաչսարեան), «Ազգային միաբանութեան» (նախագահ Արտաշէս Գեղամեան), «Գարդմանք»ի (նախագահ Ռոպէրտ Դաշեան) եւ «Ազգամբ – Հայաստան»ի (նախագահ Սերգէյ Մելքումեան) միացումով կազմուած «Իրաւունք եւ միաբանութիւն»ը որքա՞ն վախ պատճառող մրցակից կրնայ նկատուիլ «Միասնութեան» որ յայտնուած համակրանք մը այնքա՛ն յաւակի թղթածրար մը բանալու մղում կ'ըլլայ:

Ղարաբաղեան չըբլանակն ալ բնական է որ անտարբեր մնացած չէ այս երեւոյթին դէմ: Ապրիլ 24–ի «Ազատ Արցախ» օրաթերթը մատը կը դնէ անոր վրայ, գրելով. «Վերջերս բաղաքական որոշ ուժերի կողմից անհարկի շահարկւում է արցախահայութեան մասնակցութիւնը ներքնտրական պայքարի գործընթացին: Բանը հասել է նրան որ ԼՂՀ–ն, Ղարաբաղի ժողովուրդը աշխուժօրէն ներկայացւում են իբրեւ օտարերկրեայ մի գործօն, որից կախուած է ընտրութիւնների ողջ ընթացքը»: Ու որպէս, խնդիրը լուսաբանելու յարմար խօսակից՝ ԼՂՀ Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ Ազահովութեան յանձնաժողովի նախագահ Մուրատ Պետրոսեանը զրոյցի հրաւիրուած է:

Ան պատասխանելով Ղարաբաղէն ծագող լրագրող Վահրամ Ադալեանի հարցումներուն, նախ կը բացատրէ հակազարաբաղեան տրամադրութիւններու մեկնակէտերը. առաջինը՝ մայրաքաղաքին աւանդական անհանդուրժող կեցուածքն է մեծ քաղաքներու եւ պատասխանատու այն ներկայացուցիչներուն դէմ որոնք գեկավար դիրքերու կը ձգտին, կամ տէր են այդպիսի պաշտօններու, կ'րսէ թէ այդպէս եղած է միշտ, ամէն տեղ. երեւանցիները ուզած են վանել Լենինականցիները, Քաթուցիները՝ Նախիջեւանցիները, Ստեփանակերտցիները՝ Մարտունիներն, եւայլն: Աւտվ կը բացատրուին մասամբ, Ռ. Քոչարեանի նախագահութեան դէմ յայտնուած կեցուածքներն ալ: Մ. Պետրոսեան աւտր որպէս ամէնէն արտայայտիչ դրուագ մը, կը յիշէ հանրահաքի մը ճամբորդներէն կին մը որ մէկուն ձեռքի թերթին մէջ Ռ. Քոչարեանի նկարը տեսնելով, քմծիծաղով մը կ'ըսէ. «ևա՞ պիտի մեզ դեկավարի, երեւացիները մեռե՞լ են, խէ»:

Մերժումի տրամաբանութեան Բ. մեկնակէտ եղած են լայն խաւերու անկատար մնացած յոյսերը. յոյսեր որոնք կապուած էին Ռ. Քոչարեանի դեկավարութեան ու պէտք է բարելաւէին ընկերատնտեսական եւ իրաւական ոլորտները:

Այս երկու գլխաւոր գործօնները, ինչպէս կ'ըսէ յանձնաժողովի այսօր պաշտօնական նախագահը, եղած են «բարեբար հողը որտեղ որոշակի շրջանակներ սկսել են ցանել «հակաղարաբաղեան» փսիխոզ»ի սերմերը»: Մինչդեռ Ս. Բարսեղեանի համակրական արտայայտութիւնը կապուած է, իր կարծիքով, այն իրականութեան որ «Ղարաբաղեան հարցի լուծումը հիմնականում կախուած է Հայաստանի դեկավարութեան դիւրորոշումից եւ տրամադրուածութիւնից: Եւ Ղարաբաղցիները իրաւունք չունեն անմասն մնալ մի մարմնի կազմաւորման գործընթացից, որից կախուած է լինելու իրենց ճակատագիրը, մի մարմին, որը որոշելու է իրենց թափած արեան գինը»: Մ. Պետրոսեան այս ընդհանուրէն կ'առանձնացնէ Ս. Բարսեղեանի պարագան, ըսելով. «Այդ գործընթացից մանաւանդ անմասն չի կարող մնալ մի մարդ, որը Արցախի ճակատագրի համար ամէնից շատ է պատասխանատու ժողովրդի առջեւ»: Մանաւանդ որ ինչպէս յաղթանակի պարագային պատիւ ու մեծարանք, պարտութեան պարագային ալ մեղադրանք ու տառապանք այդ նոյն պատասխանատուին յաժին կ'իյնան:

Մ. Պետրոսեան բարոյականի հարց մըն ալ կը դնէ իր պատճառաբանութեան մէջ. քան մը որ չատ սեղմ արտայայտութիւն կը գտնէ, բայց մտածումի թեզը բաւական հեռուն տանելու զօրութիւն, ունի: Ան կ'ըսէ. «բոլոր նրանք ովքեր հայրենիքի շահերը վեր են դասում անձնական շահերից, գիտակցում են որ Ղարաբաղի յաջողութիւնները կախուած են Հայաստանի բնակչութեան քարեկեցութիւնից: Իսկ այդ բարեկեցութիւնն էլ իր հերթին կախուած է այն բանից թէ Հայաստանի, եւ առաջին հերթին նրա ներքին բաղաքականութիւնը որոշող մարդիկ ի՞նչ չափով եւ ի՞նչբանով են առաքինի»: Այլ խօսքով, դժուար չէ հետեւցնել որ եթէ ոչ ուրիշ բան, առ նուազն Ս. Բարսեղեան առաւել «առաքինի» կը նկատէ իր նախընտրութեան ճակատը որուն համակրանք յայտնած է հրապարակաւ:

Մ. Պետրոսեան ալ կուտայ անուններ, իր կարծիքին նախընտրելի նկատածներէն. անոնք զանազան կուսակցութիւններէ են. Ալէքսան Յակոբեան, Սամսոն Ղազարեան (ՀՀՇ), Ալպէր Բազէեան (Երկրապահ), Ալմարդ Պետրոսեան (ՀՅԴ), նաեւ Ռաֆայէլ Ղազարեան, Սուրէն Յարութիւնեան, Լիւսիա Յարութիւնեան, Հենրիկ Իգիթեան, Բաֆֆի Յովհաննէսեան, եւայլն: Ան կ'ուզէ նոր Խորհրդարանին մէջ տեսնել նաեւ Պ. Հայրիկեանը, Լ. Յակոբեանը եւ Դ. Շահնազարեանը: Գնահատական յատուկ արտայայտութիւններ ալ կ'ունենայ ՍԺՄ նախագահ, նախկին վարչապետ, Պաշտպանութեան նախկին նախարար Վազգէն Մանուկեանի մասին. կ'ըսէ թէ ան իր ըրջապատին մէջ չէր հանդուրժեր խաբեբաներու եւ դողերու. իր հանդիպած չափազանց խելացի մարդոցմէ մէկին է եւ վիթխարի ծառայութիւն ունի զարթարաղեան չարժումին: Այսուհանդերձ, կը նշէ նաեւ երկու պարագայ որոնք սահման կը դնեն իր վարձանքին. առաջինը նախագահական վերջին ընտրութենէն ի վեր Ղարաբաղի ղարցը ըրջանցելու կեցուածքն է, երկրորդը՝ չափազանց չեչտուած ինքնահաստատութիւնը:

Ինչ կը վերաբերի քաղաքական բեմին վրայ անկնկալ յայտնութեամբ բոլոր հաւանները տակնուվրայ ըրած Կ. Դեմիրճեանի, Մ. Պետրոսեան բաւական խիստ դատում ունի անոր հանդէպ. խիստ, բայց ոչ անարդար. կը քննադատէ որ լուռ մնացած է երբ կը բանարարուէր պետութիւնը: Ժողովուրդը միայն անցեալ տարի յիշեց, կ'ըսէ, երբ ատիկա ընելով բարոյական ու նիւթական վնաս չէր կրեր: Երկրորդ, խորհրդային ժամանակներու այդ դեկավարին անձին մէջ կը տեսնէ. «յարմարողականութեան եւ երկերեսանիութեան» համակարգի մարդը որ եթէ այդ յատկանիշները ունեցած չըլլար, «չէր կարող հասնել պետական կամ կուսակցական հիերարխիայի միջին աստիճանին, էլ ո՞ւր մնաց նրա ամենավերին մասին»:

Մ. Պետրոսեան հաստատ համակրանք ունի Ր. Յովհաննէսեանի նկատմամբ. աննեղելի կը գտնէ որ «այսչափ բարդ ժամանակներում նրան ոչ մէկը չի յիշում»: Անոր մոռացումին մէջ մեղքի բաժին մը կը վերագրէ Ժ. Լիպարիտեանին ալ:

Մ. Պետրոսեանի բացատրութիւնները անգամ մըն ալ սեղան կը բերեն Հայաստանցի – զարթարաղցի այն չատ վճռանգաւոր ճեղքը զոր զոյացնելու չանք ընողներ կան, ընտրութեան նախորդող ներկայի ըրջանին: Մինչդեռ, հակառակ՝ այս կամ այն արդարացուցիչ հանգամանքին, ամէնէն պարզ ճշմարտութիւնն է որ Ղարաբաղի հարցին լուծումը կախում ունի Հայաստանի դեկավարութեան կեցուածքէն եւ տրամադրութեան աստիճանէն:

Կայ երկրորդ պարագայ մըն ալ որ կը յայտնուի «Ազատ Արցախ»ի այս զրոյցէն. հայաստանցի – զարթարաղցի զանազանութեան մէջ նախագահ Ռ. Քոչարեանը թիւրախ առնող կեցուածքն է ատիկա, մանաւանդ երբ մարդ անդրադառնայ այս վերջինին համակրանքին որ ուղղուած է ոչ թէ «Միասնութիւն» դաշինքին, այլ՝ «Իրաւունք եւ միաբանութիւն» կոչուածին: Անդամ մը եւս ինքզինք կը պարտադրէ մտածումը թէ Վ. Սարգսեան – Կ. Դեմիրճեան գործակցութիւնը խորքին մէջ ընտրութեան յաղթելու նպատակին հետ, կամ նոյնիսկ անկէ առաջ, ուղղուած չէ՞ Ռ. Քոչարեանի դիրքին:

Նշուած բեւեռացումին զարթարաղեան երկարաձգումին նիւթն ալ օրակարգի կուգայ այս բոլորին հետ, երբ նկատի առնուի որ Մ. Պետրոսեան հարցազրոյցը տալէն կարճ ժամանակ մը եաք (Մայիս 6) պաշտօնանկ եղած է, թէեւ բոլորովին տարբեր պատճառաբանութեամբ:

ԱՐՓԻ ԹՈՒՐՈՑԵԱՆ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԱՑ ԼԻՈՆԷՆ

### «24 ԱՊՐԻԼ 1915 ՀԱՑԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՓՈՂՈՑ» ՄԵԶԻԷՕՑԻ ՄԷՋ

Հայ դատի հետ կապուած քաղաքական յաջողութիւն մը եւս արձանագրուեցաւ Կիրակի, Ապրիլ 25–ին «Ապրիլ 24, 1915, Հայկական ցեղասպանութիւն» փողոցի բացումով, Մեզիէօլի մէջ:

Տէսինի արեւելակողմը գտնուող այս քաղաքը, Ժան Փոլբըլէնի քաղաքապետութեան տարիներուն, սկսաւ աւելի բարգաւաճիլ եւ գարգանալ թէ՛ ազգաբնակութեան տեսակէտէն եւ թէ՛ ճարտարարուեստական մարզին նեցս: Տէսինէն բազմաթիւ Հայեր քաղաքաչինարարական այդ տարիներուն հաստատուիլ սկսան Մեզիէօլի մէջ, եւ այսօր չուրջ 350 Հայ ընտանիքներ կ'ապրին հոն:

Քանի մը տարի առաջ հիմնուեցաւ «Ամասք» Մշակութային Միութիւն մը. (Ասոսիասիոն Մաժոլան Արմենիէն բուր լա Սոլիտարիթէ է լա Քիւլթիւր) նախագահութեամբ Պր. Անթօ Էքոյի:

Մեզիէօլի քաղաքապետարանի եւ «Ամասք» կազմակերպութեան նախաձեռնութեամբ է որ Կիրակի, Ապրիլ 25–ին կէսօրէ եաք ժամը 15–ին տեղի ունեցաւ բացման հանդիսութիւնը:

Պայծառ եղանակը նպաստեց որպէսզի ամէն բան լաւ անցնի: Ներկայ էր հոծ բազմութիւն մը, պետական եւ կրօնական բարձրաստիճան անձնաւորութիւններու չարքին յիշենք Ռոն Նահանգի համալսարանի ծերակուտական՝ Կի Ֆիշըր, Մեզիէօլի քաղաքապետ՝ Միշէլ Թրիպէ, Նորվեկիոյ Եպիսկոպոս Զաքարեան, վերապատուելի Գրիգոր Պալիկեան, նախագահ Ռոպէր Քոչարեանի խորհրդական՝ Հ. Յ. Դ. Նազարեանի դեսպանը մարմնէն՝ Վահան Յովհաննիսեան, իր կնոջ հետ, Հայաստանի Հանրապետութեան Փարիզի պատասխանատուն՝ Պր. Համլէթ Գասպարեան, Ֆրանսական եւ հայկական կազմակերպութիւններու նախագահները եւ նախագահուհիները:

Օրուան հանդիսավարը հրաւիրեց քաղաքապետ՝ Պր. Միշէլ Թրիպէն եւ Պր. Վահան Յովհաննիսեանը վերցնելու համար Ֆրանսական Եռագոյնը յուցասախտակին վրայէն որ կը ծածանէր «Ապրիլ 24» փողոցին որպէսզանապրութիւնը:

Ծափահարութիւններէ վերջ Նորվեկիոյ Եպիսկոպոս Զաքարեան օրհնեց հիմնաքարը՝ որ գետեղուած էր կլոր հրապարակին վրայ, գալիք ժամանակի մէջ կատարելիք Ապրիլեան եղեռնի յուշարձանին:

Այս օրհնութենէն եաք յաջորդաբար խօսք առին «Ամասք»ի նախագահը՝ տոքթոր Գէորգ Քէվէնկեանը, Պր. Վահան Յովհաննիսեանը եւ քաղաքապետը:

Բոլոր խօսողները իրենց ճառերուն մէջ ընդգծեցին այս կէտը, թէ Ֆրանսան ճանչցուած է իբրեւ մարգկային իրաւանց պաշտպան օրինակելի երկիր մը, բայց յաւ յայտնեցին թէ տնտեսական ու քաղաքական չահերու պատճառաւ եւ մանաւանդ Թուրքիոյ կողմէ բանեցուած ճնշումներու հետեւանքով, Ցեղասպանութեան մարտին մերժած է Հայոց ցեղասպանութեան օրէնքը արձանագրել իր օրացարդին վրայ: Այս մերժումը ստիպեցին ճառախօսները, պէտք չէ յուսահատեցնէ «մարդկութեան դէմ ոճիրի» դատի հետապնդողները, այլ աւելի պէտք է զօրեղանայ զանոնք մինչեւ որ յաղթէ արդարութիւնը:

Պր. Վահան Յովհաննիսեան 1915–ի ցեղասպանութեան եւ 1988–ի Սումգայիթի սպանդին միջեւ զուգահեռներ ընդգծեց եւ 1915–ի փորձառութիւնը դաս եղաւ, ըսաւ ան, – որպէսզի անարդարութիւնը անպատմ մը եւս չյաղթանակէ զարթարաեան դէպքերու առեն:

Պաշտօնական այս հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն մը «Ժան Փոլբըլէն Մշակութային Կեդրոն»ին մէջ: Այստեղ, Մեզիէօլի քաղաքապետը յուշամատեան մը նուիրեց Պր. Վահան Յովհաննիսեանին, իսկ փոխադարձաբար Պր. Յովհաննիսեան քաղաքապետ՝ Պր. Միշէլ Թրիպէին նուիրեց մշակութային կոթողներու վերաբերեալ Հայաստանեան հրատարակութիւն մը:

Երեկոյեան ժողովրդական ճաշ մը տեղի ունեցաւ Տէսինի «Լը Քուէրոն» ճաշասրահին մէջ: Փարիզէն երգչուհի՝ Տիլիի Ալթունեան, ազգային եւ հայրենասիրական երգերով չէն մթնոլորտ մը ստեղծեց, առանց որեւէ ստուեր մը ձգելու Ապրիլեան ոդեկոչումի մթնոլորտին վրայ:

*
**

### ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հինգշաբթի, Ապրիլ 29–ին կանխաւ ծանուցուածին համաձայն կարպիս Մանուկեան հանդիսասրահին մէջ երեկոյեան ժամը 8·30–ին գումարուեցաւ Լիոնի Հայ Ազգային Միութեան ընդհանուր անդամական ժողովը:

1997–ին բանաւոր պատճառներով ընդհանուր ժողով կարելի չէր եղած գումարել: Ուստի այս տարի 1997 եւ 1998 տարիներու քարտուղարական եւ նիւթական տեղեկագիրները միաժամանակ ներկայացուցան:

Երախտաչատ գործունէութիւն մը իրականացուցած է Լիոնի Հայ Առաքելական եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ, այս տարիները պիտի յիշուին որպէս բեղուն տարիներ: Բեղուն՝ ո՛չ թէ անոր համար որ Պր. Ռոպէր Տօնիկեանի գլխաւորած վարչական խմբակը, համադործակցութեամբ Նորվեկիոյ Եպիսկոպոս Զաքարեանի չանքերուն եղաւ իրագործելու՝ Մարգարեանի Փափաղեան վարժարանի հողի գնման եւ չէնքի կառուցման ծրագիրը, կամ ուրիշ օգտաչատ չինարարական աշխատանքներ, այլև որովհետեւ այս տարիները նաեւ եղաւ նաեւ դաստիարակչական տեսակէտէն հոգեմտաւոր ասպարէզին նեցս: Կը յուսանք թէ ներ–ազգային գա-

# – ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՊՔՏՐՈՒԹԻ Ֆրանսական դեսպանատան մէջ, Ուրբաթ, Մայիս 7–ին, դեսպան՝ Տանիէլ Ժուանօ պաշտօնական ճաշ մը տուած է ի պատիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին: Ներկայ եղած են նաեւ կաթողիկոսական Ընդհ. Փոխանորդ Արտաշէզ Արք. Թրթռեան, Լիբանանի առաջնորդ՝ Գեղամ Ծ. Վրդ. Աշճերեան, պետական անձնաւորութիւններ, երեսփոխաններ, Ազգային Կեդրոնական վարչութեան անդամներ, կուսակցական ներկայացուցիչներ: Ելոյթ ունենալով, դեսպանը ոգեկոչած է հայ-ֆրանսական հին կապերը: Իր կարգին Արամ Ա. չէտած է որ այդ կապերը եւ գործակցութիւնը լրենց չօշափելի արտայայտութիւնը գտած են յատկապէս Կիլիկեան քաղաքութեան չորրանին եւ չարունակուած են մինչեւ մեր օրերը:

⁂

ՊՈՍՔՐԳԻՒՂի (Պոլիս) Եւնուս էմրէ պարին մէջ, Մայիս 4–ին, Պէզճեան Սա-

---

պարակչական սկսուած այս գործը հետզհետէ կը ծաւալի, կ'ուռճանայ, ապագային բարի պտուղներ բերելով:

Հայ տհմիկ մշակոյթ մը ծաւալելու նպատակով քաղաքակրթութիւն մը մշակած չէ տակաւին, բայց ժամանակն է այդ մասին մտածելու:

Ինչպէս յայտնի է հայասիրութիւնը անձնական բնազատաէն դուրս պոռթկալու եւ հաւաքական դիմագիծ առնելու հեռանկար մը չուրուագծեր առ այժմ, բայց յուսահատելու չեն Ազգային Միութեան անդամները եւ վարչականները այդ համբուն վրայ նոր քայլեր առնելու:

Տնտեսական տեղեկագիրը, ի բացակայութեան քննիչ – հաշուապահի եւ դասընթացի, ներկայացուց ընդհանուր ժողովի առենապետ՝ Պր. Ռոպէր Տօնիկեան:

Եթէ հաշուի չառնենք Մարզպետեան – փափազեան վարժարանի կառուցման առթիւ դրամատուն փոխ առնուած դրամին պարտքը, անտեսական տարեհաշիւը պատշաճ սահմաններուն մէջ կը դտնուի:

Ներկաները այս առթիւ ջնահատական խօսքեր արտայայտեցին վարչականներուն, իրրեւ նշան գոհունակութեան անոնց մատակարարելու եղանակին:

ԼԻՈՆՑԻ

(Մնացեալը յաջորդիվ)

նուց Մխիթեան Փոլկլորիք խումբը ազգային պարերու ներկայացում մը տուած է որ մեծ յաջողութիւն արձանագրած է: Քնար նուագախումբի ընկերակցութեամբ գործադրած է երգերու եւ պարերու յայտագիր մը: Բացումը կատարուած է «Տըլէ Եաման»ով, ապա հանդէս եկած է հանդիսավար եղիսաբէթ Զաքմանալան որ բացատրած է ազգագրական պատերու տեղը մեր մշակոյթին մէջ: Յետոյ, արտայայտուած է Պէզճեան Սանուց Մխիթեան առենապետը՝ կարեւոր Եարտըմ որ յայտնուած է թէ իրենց գործունէութեան նպատակն է երիտասարդները համախմբել նոյն տանիքին տակ եւ պատրաստել զանոնք հրաւիրել որ տեւականացնեն մեր մշակոյթը: Երգերով, պարերով, նուագով գործադրուած է յայտագիրը: Կենդանի պատկերները, դաւառի պատմական բազմաթիւ շրջաններէն՝ Վան, Տիյարպէքիր, Բալու, արեւելեան Անատոլու, Սասուն գաղափար մը տուած են տեղւոյն փոլկլորէն: Պարախումբը բաղկացած է քսան աղջիկներէ եւ 11 տղոցմէ:

⁂

ԳՈՒՄԳԱԲՈՒԻ (Պոլիս) Պէզճեան Ամիրա սրահին մէջ, Մայիս 2–ին, տեղի ունեցած է Սայաթ Նովա մանկապատանեական երգչախումբի տասնամեակի համերոյթը: 84 դեռատի անդամներէ բաղկացած երգչախումբը որակաւոր յայտագիր մը ներկայացուցած է որ խանդավառած է հանդիսականները: Այս տասնամեակին առթիւ, հրատարակուած էր խնամեալ եւ ճաշակաւոր գրքոյկ մը որ կը բովանդակէր պատրիարքին «Օրհնութեան գիր»ը եւ գանազան գրութիւններ մտաւորականներէ, համակիրներէ եւ Մանկանց երգչախումբի նախկին անդամներէ:

⁂

ՊՈԼՍՈՑ Հիլթըն պանդոկի մեծ սրահին մէջ, Մայիս 9–ին, նշուած են Մխիթարեան վարժարանի 174–րդ տարեդարձը եւ անոր կողքին Հ. Յակորոս Վ. Զոփուրեանի եւ Հ. Մեսրոպ Վրդ. Թօփալեանի ձեռնադրութիւններուն 25–ամեակը: Հաւաքոյթին նախագահած է հայ կաթողիկէ վիճակաւոր Յովհ. Արք. Զօլաքեան: Օրուան հանդիսավարն էր դպրոցի Բ. տնօրէնն՝ Գարեգին Պարսամեան: Բացումը կատարած է խնամակալ մարմնի առենապետ Յարութիւն Գահրաման որ տեղեկութիւններ տուած է հաւաքոյթին իմաստին եւ նպատակին մասին: Ճաշի աւարտին սկսած է յոբելենական բուն հանդիսութիւնը, Հ. Սարգիս Վրդ. Էրմէնի ուղերձով: Ան ողջունած է վարժարանին 174 տարիներու կրթական ծառայութիւնը, ապա երկու յոբելեար վարդապետները: Կարդացած է նաեւ Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան ընդհանրական աբբահօր՝ Հ. Պօղոս Վրդ. Գոճանեանի ողջոյնի խօսքը: Բեմ հրաւիրուած է վարժարանի տնօրէնն՝ Շահին Զընար որ ղպրոցը նմանցուցած է լուսատիւռ ջահի մը որ 174 տարի է ուսում կը ջամբէ քաղաքին մէջ: Յետոյ, խօսք առած է Ս. Խաչ Դպրեվանքի տնօրէնն՝ Հայկ Նշան որ տնօրէններու անունով չնորհաւորական ուղերձ մը կարդացած է: Ելոյթ ունենալու հրաւիրուած է Ռ. Հատտէճեան, Մխիթարեանցի մը, որ հպարտ է Մխիթարեանցիի իր ղիմապիծով եւ որմով հպարտ են բոլոր Մխիթարեանցիները: Ռ. Հատտէճեան բացատրած է այդ ծանօթացման պատճառները, յայտնելով թէ ինք վարժարանին անունը ամէն օր եւ ամէն վայրկեան կը կրէ իր ճակտին վրայ, կուրծքին վրայ ու մանաւանդ սրտին մէջ: Ողջունած է նաեւ երկու յոբելեարները, յաւ յայտնելով թէ նորընծաներ չկան անոնց չուրջ: Յաջորդաբար արտայայտուած են Հ. Մեսրոպ եւ Հ. Յակոբոս, որմէ ետք իրենց նուիրուած է մէկմէկ ձեռագ խաչ ձեռամբ Յովհ. Արքեպիսկոպոսի, որ արտասանած է նաեւ հուսկ բանքը:

⁂

ԳՈՒՄԳԱԲՈՒԻ (Պոլիս) Մայր Եկեղեցւոյ Պէզճեան Ամիրա սրահին մէջ, Մայիս 9–ին, Պէզճեանցիները ալ տօնած են իրենց Նորաստեղծ աւանդութիւնը՝ բաժակի օրը: Աւելի քան 400 հոգիներու մասնակցութեամբ տեղի ունեցած է ճաշը: Հանդիսավարը եղած է Տիկին Եղիսաբէթ Զաքմանալան որ նշած է թէ հաւաքուած են տօնելու Պէզճեան վարժարանի 1948 – 1949 տարեշրջանի շրջանաւարտներուն յիսնամեակը եւ 1973 – 1974–ի շրջանի քսանեհինգամեակը: Բեմ հրաւիրուած է Պէզճեան Սանուց Մխիթեան առենապետ՝ Կարապետ Եարտըմ որ պարզած է իրենց գործունէութեան ծրագիրը, Թաղային Խորհուրդի անունով խօսք առած է Նազարէթ Դաւիթեան, ուրախութիւն յայտնելով որ Պէզճեանի օրը կը զուգադիպի Մայրերու Օրուան: Արտայայտուած է Պէզճեանի հիմնադիրը՝ Տօքթ. Ովսաննա Գարագուշ, յիշեցնելով որ անցեալ տարի հիմնուած էր Պէզճեանցիներու Օրը եւ այս երկրորդն էր զոր կը տօնէին: Բեմ հրաւիրուած է 1930–ի շրջանաւարտ երիցադոյն պէզճեանցի՝ Մարի Ծաղիկեան եւ 1935–ի շրջանաւարտներէն Մարի Գամպալեան: Տնօրէնուհին՝ Գլեմանս Չէլիք յայտնած է որ, վարժարանը ներկայիս 200 աշակերտ ունի, 14 ուսուցիչ եւ 6 պաշտօնեայ: Գործադրուած է զեղարուեստական յայտագիր մը: Փակման խօսքը արտասանած է Հայր Զաքէոս:

## ՄԵԾԱՐԱՆՔ ՏՕՔԹ. ԶԱՒԷՆ ԵԿԱՒԵԱՆԻ

ՀՌՈՄ.–

Կիրակի, Մայիս 2–ին, Հռոմի Ս. Նիկողայոս Հայ Եկեղեցւոյ մէջ, Յովհաննէս – Պետրոս 18–րդ Գասպարեան Կաթողիկոս պատրիարքը, հանդիսաւոր պատարագ մատոյց եւ որու ընթացքին, Ս. Սերեզատրոս Պապի Ասպետի չքանչանով՝ պատուեց Տօքթոր Զաւէն Եկաւեան՝ տնօրէնը Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքի առ ի դնահատութիւն անոր անվերապահ նուիրումին ու անխոնջ գործունէութեան ի նպաստ հայ կաթողիկէ ղպրոցներուն կըրթական վերելքին եւ հայ ազգին երիտասարդ սերունդներուն դաստիարակութեան եւ կրթութեան:

Յաւարտ Ս. Ճոհին մեծարեալը Ս. Սեզրեստրոսի հրամանատարի աւանդական համազգեստով ներկայացաւ խորան. Կաթողիկոսը իր դնահատական խօսքը ուղղեց մեծարեալին, յիշելով անոր արժէքաւոր վաստակը, եւ ապա անոր յանձնեց չքանչանը. Գերպ. Եղիա Եղիայեան, մեծաւորը՝ Լեւոնեան Հայ Դպրեվանքին, կարդաց Պապին դիրը: Հուսկ՝ խօսք առաւ մեծարեալը Պր. Զաւէն Եկաւեան, չնորհակալութեան իր խօսքը արտասանելու, Յովհ. – Պետրոս ԺԸ.ի ու ներկայ կաթողիկէ նուիրապետութեան, ու նաեւ՝ բոլոր ներկաներուն:

Շնորհաւորելու ու մօտէն ճանչնալու համար հայազգի Ս. Սեզրեստրոսի նոր հրամանատարը, Լեւոնեան վարժարանի չքեղ դահլիճին մէջ կոկիկ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ:

Իսկ Հռոմի հայ երիտասարդներուն հետ ունեցած իր զրոյցին ընթացքին Տօքթոր Եկաւեան իր ուրախութիւնը յայտնեց, որ այս փոքր դաղութին մէջ, երիտասարդները, կը պահեն իրենց լեզուն, կ'ապրին իրենց հայկականութիւնը, ու քաջալերեց անոնց հայապահպանման ի խնդիր տարած ջանքերը:

Այս առթիւ վարժարանի մեծաւորը, ճաշ մը սարքեց ի պատիւ Տօքթոր Եկաւեանին:

Տօքթոր Զաւէն Եկաւեան, ծնած է Հալէպ, փոքր տարիքին իր ծնողքին հետ փոխադրուած է Ֆրանսա: Փարիզի մէջ կատարած է նախնական, ու բարձրագոյն ուսումները, ստանալով Մագիստրոսի տիտղոսը լեզուաբանութեան դիտութիւններու. ապա անցած է Հայաստան հոն աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական կաճառը. որմէ ետք Փարիզի Սորպոնի համալսարանէն ստացած է կիրարական լեզուաբանական դիտութիւններու տոքթորան: Ան ջրջանաւարտ է նաեւ Ֆրանսայի վարչապետութեան պետական վարժարանէն: Հեղինակ է տասը մենագրութիւններու, նաեւ ունի Երեւանի պետական համալսարանի Ազգային դիտութեան ակադեմիայի պատուոյ տոքթորի տիտղոսը, 1985–էն ի վեր անոր կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքի. Տօքթոր Զաւէն նախապէս պարգեւատրուած էր Ս. Մեսրոպ չքանչանով, վիէննայի Մխիթարեաններու կողմէ՝ Մխիթարեան Աբբահօր չքանչանով եւ Ֆրանսայի նախագահ՝ Ժակ Շիրաքի կողմէ ալ, ընդունած է «Արժանաւորաց Ասպետի» չքանչանը:

Ս. Ն. Ժ.

---

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

Իսկ Մխաք պէյ երեսունըհինգ տարեկան, նիհար, հիւանդկախ երիտասարդ մըն էր, որ իր հօր Թաղած ժառանգութիւնը մսխելէ ետք, անոր Թափթփուքներուվը կ'ապրէր, միշտ իր յարաբերութիւնը պահելով «Բարձր դաս»ին հետ:

Երկու նորեկները եկան տիկիններուն քով, զանոնք ողջունեցին, քանի մը վարկեան խօսքեր փոխանակեցին եւ յետոյ Տիկին Սիլվարփի ըսաւ՝ խօսքը Գալուստ էֆէնտիի ուղղելով:

– Ի՞նչ է այս, ձեր ու Տիկին Թաթիկեանի մէջեւ սեւ կատո՞ւ մը անցեր է:

– Վա՞յ, ինք է այդ խօսքը ընողը, – պատասխանեց Գալուստ էֆէնտի:

– Ձեր դէպի հոս գալը տեսնելուն պէս հեռացաւ մեր քովէն:

– Այո՛, հեռուէն տեսայ:

– Հեռացաւ, որովհետեւ Ամբրոսիոս էֆէնտին Թատրոնի դրան առջեւ իրեն կը սպասէ եղեր, – ըսաւ Տիկին Սկամպիլեան, որ կ'ուզէր զրգռել իր խօսակիցը:

– Թող քիչ մըն ալ անոր համը նայի, – պատասխանեց Գալուստ էֆէնտի անպատկառօրէն:

– Ա՛ա ի՞նչ խօսք է, – գոչեցին երկու կիներըն՝ ձեռքերով իրենց երեսը ծածկելու ձեւ մը ընելով, իբր Թէ ամչնալուն:

– Հասկցողին համար չատ չիտակ խօսք է:

– Մենք չենք հասկնար, – պատասխանեց Տիկին Սկամպիլեան:

– Կրնայ ըլլալ ... նորէն մի՛ հասկնաք, բայց իրողութիւնը այն է, որ այդ Տիկին Թաթիկեանը ա՛լ բոլորովին ճամբան փոխած է:

– Շաբաթ մը առաջ միչտ միասին էիք, – դիտել տուաւ Տիկին Սիլվարփի:

– Մէկ չաբթուան մէջ կրնան չատ բաներ պատահիլ... խեղճ Թաթիկեան էֆէնտին կը մեղքնամ, որ ասանկ կնոջ մը հետ ամուսնացեր է:

– Այդ տեսակ ամուսիններէն մեղքնալու բանական տարօրինակ ձեւ մը ունիք, – ըսաւ Տիկին Սիլվարփի խնդալով:

– Ի՞նչպէս, – հարցուց Գալուստ էֆէնտի:

– Այսինքն անոնց կիներուն հետ կը սիրաբանիք:

– Հաւատացէ՛ք, որ ես երբեք որեւէ կին դլխէ չեմ հանած:

– Օ՛, օ՛, – գոչեց Տիկին Սիլվարփի:

– Ճշմարիտ կը խօսիմ...

– Բայց մէջտեղն է ձեր վարած կեանքը, ալ մեղքը՞ ա՛լ պիտի վկայեցնէք...

– Դուք երեւոյթներէն կը դատէք ամէն բան, նորէն կը կրկնեմ, ես որեւէ կին դլխէ չեմ հանած:

– Հապա՞...

– Կիներն են, որ՝ զիս դլխէ հանած են:

– Ուրեմն Տիկին Թաթիկեանն ալ այդ կիներէն մէկն է:

– Ես անուն չեմ ուզեր տալ:

– Բայց ամբաստանութիւններ կ'ընէք:

– Ի՞նչ ամբաստանութիւն:

– Քիչ մը առաջ ըսիք, որ կը մեղքնաք Թաթիկեան էֆէնտին, որ այդ տեսակ կնոջ մը հետ ամուսնացած է, ասիկա ամբաստանութիւն մըն է Տիկին Թաթիկեանի դէմ:

– Ես չարախօսութիւններէ չեմ սիրեր, դոյնք այս խօսքերը, – ըսաւ Գալուստ էֆէնտի նեղացած դէմքով մը, – միայն սաչափը կ'ըսեմ, որ այդ Տիկին Թաթիկեանը չա՛տ դէչ ճամբու մը կը հեռեւի կոր, այդ ատոհմանը ներելի չէ... մնաք բարով:

Հազիւ Թէ երկու անձերը հեռացած էին Ժորժ եւ Զապէլ մօտեցան:

– Ի՞նչ է այս, – գոչեց Սկամպիլեան՝ խօսքը Զապէլին ուղղելով, – փոխանակ դործիդ գլուխը կենալու՝ այսպէս պատ-մի կ'ելլես:

– Ա՛լ գործ չմնաց, խանութը գոցեցինք, – պատասխանեց Զապէլ խնդալով:

– Ի՞նչպէս, ամէն բան ծախեցի՞ք:

– Այո՛, եւ եկայ դրամները յանձնելու ... առատաձեռն պարոն մը մեղքցաւ ինծի ու ամբողջ մնացած առարկաները ծախու առաւ նչանակուած դիներուն կըրկնակը վճարելով:

– Ժորժն է անպատճառ այդ պարոնը, – գոչեց Տիկին Սկամպիլեան:

– Այո՛, կը ներէք, ես եմ, – պատասխանեց երիտասարդը յանդուգն կերպարանք մը առնելով:

– Լա՛ւ, լա՛ւ, ներելի է, քանի որ բարեգործական նպատակի մը պիտի ծառայէ այդ չռայլութիւնդ:

Զապէլ փութաց քովի դրամները յանձնելու տիկնոջ:

– Հիմակ կարծեմ ազատ ենք օրիորդին հետ քիչ մը զբօսնելու, – ըսաւ Ժորժ:

– Ի՞նչ կ'ուզէք ընել:

– Նախ պիւֆէն հանդիսալի ու զովացուցիչ ըմպելի մը խմել, յետոյ պատյտ մը կատարել պարտէզը ուր արդէն նուագը սկսած է:

– Գացէ՛ք եւ զբօսնեցէ՛ք, – թոյլատրեց Տիկին Սկամպիլեան:

Երկու երիտասարդները զուարթօրէն հեռացան:

– Կարծեմ Թէ գործը եփելու վրայ է, – ըսաւ Տիկին Սիլվարփի կամաց մը իր բարեկամուհիին:

– Զարմանալի խօսքեր կ'ընես, առաջին տեսակցութենէն ի՞նչ յայտնի կ'ըլլայ:

– Իրողութիւնը այն է, որ Զապէլ լաւ տպաւորութիւն մը Թողած է Պր. Ժորժի վրայ:

(Շար. 24)

(Շար. Ա. Էջէն)

*հրապարակած է, ուր բացատրութիւնները կը պահանջէ ՕԹԱՆ-էն այն մասին որ օպտչունները, որոնք մինչեւ ծայրը չեն կրցած իրենց պաշտօնը կատարել Եուկոսլաւիա (այսինքն ապահով իրենց ռումբերը) մնացած ռումբերն ու հրթիռները կը թափեն Ադրիականի մէջ: ՕԹԱՆ կը բացատրէ որ այդ կ'ընեն ստուգելէ ետք որ մարդ չկայ, որովհետեւ ռումբերով չեն կրնար էջք կատարել, այլապէս կրնան պայթիլ օդանաւին հետ:*

*Ուրիշ աղէտ մըն է ալպանական մաֆիային հարցը: Ծանօթ է որ Ալպանիոյ հիւսիսային չրջանը թմրեցուցիչի եւրոպական կեդրոն մը կը նկատուի: Այժմ, այդ չհատակութեամբ զրաղողները ճըն-չում կը բանեցնեն Քոսովոյէն զաղթող իրենց հայրենակիցներուն վրայ: Եւ երբ, այդ զաղթականները կ'ապաստանին եւրոպական երկիրներ (Յունաստան, Իտալիա, Գերմանիա) կը զառնան «մաս-նաճիւղեր»: Ինչպէս պիտի կուսար քննիչ մը, ցարդ անոնք Սփիւռք չունէին, իրենց ապրանքը չրջագայութեան դնելու եւ յաճախորդ գտնելու համար, այժմ՝ ունին: Ալպանական մաֆիան հսկայ հարստութիւն կը դիզէ զաղթականներու տեզափոխութիւնով դէպի Իտալիա: Դեռ «անցնողներն» ալ չեն վարանիր մանուկները ծովը նետելու, երբ իտալական ոստիկանութեան մօտենալը կը տեսնեն: Անցքի համար, 4000-էն 8000 ֆրանք պէտք է վճարել մարդ զլուխ:*

***

*Քորիչայի զոհերուն հարցը քանավէճի նիւթ զարձած է, քանի ՕԹԱՆ-ի տուած բացատրութիւնը չի համոզեր բոլորը: ՕԹԱՆ-ի մէկ բանբերը կ'ըսէ. – «Եթէ զաղթականներ կան զինուորական թիրախի մը վայրը, ՕԹԱՆ-ը չէ որ զիրենք հոն զրած է»...: Որքան ալ ՕԹԱՆ կը պնդէ «մարզկային վահան»ներու օգտագործման պարագան, ի վիճակի չէ ոչեւէ փաստ ներկայացնելու, կը կրկնէ՝ «յարձակումին թիրախը զինուորական օբիեատ թիրախ մըն էր»:*

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

*Բ. ԵԼՑԻՆ փրկուեցաւ, Դուման (Ռուսաստանի երեսփոխանական ժողով) հարկ եղած մեծամասնութիւնը (2/3-րդի) չկրցաւ ապահովել այն հինգ ամբաստանութիւններուն չուրջ որոնք ներկայացուած էին պաշտօնազրկելու համար Ռուսաստանի նախագահը: Ամբաստանագրին հեղինակը համայնավար խմբակին էր եւ անոնց պետը՝ Զիուգանով չվարանեցաւ ըսելու քուէարկութենէն եաք.– «Անոնք որոնք պաշտօնազրկման դէմ քուէարկեցին դաւաճանեցին Ռուսաստանի: Վաղը, ժողովուրդը իրենց անունները պիտի կարդայ մամուլին մէջ»: Հարուածը ծանր է համայնավարներուն համար: «Մեր Տունը՝ Ռուսաստան» կուսակցութեան պարագլուխը՝ Ռիժկով ամպիոն կը բարձրանայ, ի պաշտպանութիւն Ելցինի ու Զիուգանովի երեսին կը բացագանչէ.– «Դուք, Զիուգանով, կ'ըսէք որ Ռուսերու 98%-ը, այսօր, Ելցինի դէմ է, բայց, 1917-ին, ժողովուրդին 98%-ը կը հրաւիրէր Նիքոլա Բ.ը որ հրաժարի եւ արդիւնքը տեսանք»: Ի վերջոյ, չնորհիւ ազգայնականներուն եւ բացականերուն, Ելցին աթոռը կը պահէ:*

*ԱՔՆԹի զերմանական դեսպանատան դէմ ռճրափորձ մը զործուած է Մայիս 16-ին: Զոհ չկայ: Կը կարծուի որ ահաբեկչական «Նոյեմբեր 17» խմբակն է որ դէմ է ՕԹԱՆ-ի ռմբակոծութիւններուն Եուկոսլաւիոյ վրայ:*

*ՏԻՑԱՐՊԼՔԻՐԻ մօտ չատ ծանր բախումներ տեղի ունեցած են Մայիս 14-ին, որոնց հետեւանքով ՓՔՔ-ի 37 պինուրեալներ սպաննուած են եւ հինգ Թուրք պինուրներ:*

*ԹՐՔԱԿԱՆ պինեալ ուժերու Իրաքի հիւսիսային զօտիին մէջ կիրարկած զործողութիւնները կը չարունակուին: Շաբաթավերջին 15 հազար հոգինոց զօրաբաժիններ թափանցած են Իրաքի սահմանէն մինչեւ 20 քիլոմեթր ներս, ռազմական օդանաւերու եւ ուղղաթիռներու նեցուկով: Ռմբակոծուած են Իրաքեան այն չրջանները ուր Անգարա վախ ունի որ քրտական պինեալ խմբաւորումներ զարնանային յարձակումներու կը պատրաստուին: Թրքական աղբիւրներու տուեալներով 45 քիւրտ մարտիկ ու հինգ Թուրք պինուոր զոհուած են:*

*ՌՈՒՍԱՍՏԱՆի Դուման Մայիս 12-ի նիստին ընդունած է բանաձեւ մը ուր կը նշուի թէ Թուրքիա Քիւրտերուն դէմ ցեղասպանութեան եւ ցեղասպանական քաղաքականութիւն մը կը կիրարկէ: Նոյն նիստին այս նիւթով քուէարկուած բնագիր մը ղրկուած է ՕԹԱՆ-ի երկիրներուն, ՄԱԿ-ին, Եւրոպայի Խորհուրդին, Խորհրդարանին եւ Թուրքիոյ:*

Շ. ՓԱՍՔՈՒԱՑԻ եւրոպական ընտրութիւններուն ցանկին վրայ 25-րդ տեղը կը զրաւէ փրոֆ. Ռոպէր Ասատուրեան (Մարսէյլէն):

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

## AVIS DE MESSE

Le **Lundi 24 mai, lundi de Pentecôte,** une messe sera célebrée à la Chapelle Saint Jean du Home Arménien par **Monseigneur Geredjian,** Archevêque des Arméniens du Sud de la France.

Un déjeuner est prévu à 13h au sein du Home Arménien.

Participation au déjeuner : 150 F.

Merci de nous communiquer les réservations au 04. 94. 19. 51. 50 avant le 19 mai.

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Մայիս 22
Յիշատակ Աշխարհազօրաց
եւ Զօրավարացն Հայոց, որք կատարեցան
ի Հերոսամարտին Սարդարապատի
1918 Ամի,
վասն հաւատոյ եւ հայրենեաց

*Այս առթիւ, փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 16·30-ին, կիրակամուտի ժամերգութիւն կը կատարուի եւ հոգեհանգիստ Սարդարապատի հերոսներուն համար:*

*Կը հրաւիրուինք ամէնքս այդ օր՝ աղօթքով եւ ինքնամփոփ ներկայութեամբ վերանորոգել մեր յարգանքը այդ հերոսներու յիշատակին:*

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28-ին)
Հոչակման 81-րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18-ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու ատարին Հանրապետական Մաղթանք կ'ըլլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատունութեան եւ բարգաւաճման համար:*

## ՀՌՈՄ ԱՑՑԵԼՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

*Անարատ Զղութեան Հայ Քոյրերու Միաբանութիւնը կը ծանուցանէ թէ Հռոմի իր Մայրավանքին կից, Մանթվերատէլ զեղատեսիլ չրջանին մէջ, ունի հանգստատէտ պանդոկ, հիւրընկալելու յատկապէս հայ ուխտաւորները, զբօսաչրջիկները, այցելուները յարմարագոյն պայմաններով:*

*Դիմել.–*

**Congregazione delle suore armene**
Via Vincenzo Monti 9
00152 ROMA
Tél. : 39 (06) 583. 20. 343.

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Կապոյտ Աչքի Պօմոնի Նայիրի մասնաճիւղը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները.–*

*Տիկին Մարի – Ռօզի Թադման առթիւ՝ Տէր եւ Տիկին Ժիլպէր Մարգոեան 200 ֆրանք, Բիւզանդ Պէրպէրեանի հոգեհանգստեան առթիւ՝ Տիկին Աբշալոյս Պէրպէրեան 500 Ֆր., Գէորգ Տէմիրճեանի մահուան առթիւ՝ Պր. Զինար Յարութիւնեան, Բեռնէքեան եւ Քէօչեան ընտանիքներ 100-ական Ֆր., Աբգիւր Աբրութեանի մահուան առթիւ՝ Տէր եւ Տիկին Ժան Գազարեան 500 Ֆր., Տէր եւ Տիկին Ղազար Գազարեան 100 Ֆր.:*

*Ջատկուան առթիւ.– Տիկին Գըլըճեան, Տիկին Թամարա Աբրահամեան 100-ական Ֆրանք, Գուլումեան ընտանիք 200 Ֆր., Տէր եւ Տիկին Հրանդ Աբրահամեան, Տէր եւ Տիկին Աբթիւր Կալեանց 100-ական Ֆր.:*

## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes — 92130 Issy-les-Moulineaux.

**le Centre Culturel**
**SAINT MESROB**
**à PARIS**
**expose du 18 au 28 mai**
LES PHOTOS GRANDEUR NATURE
DES
**VITRAUX**
réalisés par **Reine AVEDISSIAN**
sur le thème :
L'ART ET LA RELIGION,
SYMBOLES DE PAIX
Les sentiments religieux
dans l'Architecture et l'Art
sous les diverses formes
dans les grandes civilisations.

**Vernissage,**
**le Mardi 18 Mai à 19h**

10 bis, rue Thouin — Paris Ve
Entrée libre — Cocktail

**(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)**

Tél. : 01 44 59 23 50
ou 01 40 51 11 90
Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

## ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՔ

*ՀՄՄ – ԿԱՑՔ ՆՄՄ*

**ՃԱՇ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ**

*Շաբաթ, Յունիս 19*
*Իսի-լէ-Մուլինօ*
*P. A. C. I.*

*մասնակցութեամբ՝*
*ԱՏԻՍ ՀԱՄՄԱՆՏԵԱՆ-ի*
*եւ իր*
*նուագախումբին*

## Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

**ՍԷՆԹ' ԱՆԹՈՒԱՆ ՄԱՐՍԷՅԼ**

## ՀԱՆԴԻՍԱՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՕԾՄԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

*Եպիսկոպոսական Հանդիսաւոր պատարագ*

*Կը պատարագէ եւ կը քարոզէ՝*
*ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԼՔՃՃԵԱՆ*
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց

*ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 6*

*Սկիզբ ժամերգութեանց ժամը 9-ին:*
*Պատարագ ժամը 10-ին:*
*Յաւարտ պատարագի՝*
*ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱՇ*
*Պատուոյ նախագահութեամբ՝*
*ՏՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՊԱՅԵԱՆի*
Ատենապետ Շրջանային Խորհուրդի
*Ճաշը կը պատրաստուի Լ'Հերմիթաժ ճաշարանին մէջ:*
*Հեռաձայն.–*
04 – 91 – 65 – 56 – 75
*Ապահովեցէք ձեր տեղերը:*

**Fête Paroissiale**

LUNDI DE PENTECOTE
24 MAI

AU PROGRAMME :
11h30 : *Culte;*
A partir de 12h : *Repas Spécialités arméniennes;*
Stands :
*Pâtisseries arméniennes*
*Librairie, Brocante, etc...*
*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE ARMENIENNE
55, avenue Victor-Cresson /
28, avenue Bourgain
92130 ISSY-LES-MLX

**ESPOIR POUR L'ARMENIE**
organise
un Voyage
de tourisme humanitaire
**DU 12 AU 19 JUILLET**
— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.
*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

## CENTRE DE VACANCES DE BELLEFONTAINE (Jura)

**Le séjour du mois de juillet étant complet, nous vous invitons à inscrire vos enfants pour le mois d'août :**
**Dates : du 29 juillet au 20 août**
**Prix : 3 400 + 450 F (transport Paris et Marseille)**
**Ages : enfants nés entre le 01/01/84 et le 31/12/92**
**Veuillez contacter la section la plus proche de votre domicile ou téléphoner au Conseil d'Administration de la CBAF au : 01. 48. 24. 46. 57.**

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 19
MERCREDI
19 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում) 1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

ՀԱՐՑ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·643 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.643

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 17 / 18)

### Ա. ԲԼԷՔԵԱՆԻ ԴԷՄ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՏՐՈՒԱԾ

Ընդառաջելով Երեւանի դատախազութեան պահանջին, կեդրոն եւ Նորք – Մարաշ համայնքներու առաջին առեանը Մայիս 15–ին Ա. Բլէեանը բանտարկելու որոշում տուած է: Ամիկա պատճառ եղած է որ անոր պահակավարած Մխիթար Սեբաստացի վարժարանին ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը Մայիս 17–ին բողոքի ցոյց ընէ Հայաստանի դատախազութեան առջեւ: Նաեւ ուսուցիչները ամբողջ կազմով գործադուլի դիմած են, պահանջելով որ փոխուի Ա. Բլէեանի դէմ բանտարկութեան որոշումը, բժշկական օգնութիւն ցոյց տրուի անոր քանի որ հաստատուած է. ուսուցիչները պահանջած են անկէ ալ որ վերջ տայ հայազրկութեան: Ուսուցչուհիներէն Սուսաննա Մարկոսեան ըսած է թէ կը պատրաստուին քաղաքական ուժերուն, նախագահ Ռ. Քոչարեանին եւ այլ մարմիններու դիմել, պահանջելով որ կամայականութիւններու վերջ տրուի:

Նոյն օրը դլխաւոր դատախազ Ա. Յովսէփեան ընդունած է վարժարանին պատուիրակութիւնը:

***

### ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՅՑԵՐԸ

Մայիս 15–ին Գիւմրի այցելած է նախագահ Ռ. Քոչարեան, դլխաւորաբար ծանօթանալու համար չինարարական աշխատանքին: Հանդիպումներ ունեցած է մարզպետի պաշտօնակատար Սէյրան Պետրոսեանի, քաղաքապետ Մկրտիչ Վարդանեանի, բնակիչներու հետ: Անկէ անցած է Սպիտակ, Ստեփանաւան: Հոն ևս հետաքրքրուած է 1998–ի չինարարական գործունէութեան արդիւնքներով: Կոսի մարզպետարանին մէջ աշխատակիցներու, համայնքներու եւ չինարարական կազմակերպութիւններու դեկավարներուն հետ կոնֆրդակցութիւն ունենալէ ետք կարճ ասուլիս մը տուած է ներկայ լրագրողներուն:

***

### ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԱԾ ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Ռ. Քոչարեան Մայիս 17–ին ընդունած է Թուրքիոյ Հայոց Պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանը եւ անոր ընկերացած Պոլսահայերը: Հանդիպումին նիւթ եղած են Ղարաբաղի կարգաւորումին հոլովոյթը, հայ-թրքական յարաբերութիւններու ներկան եւ զարգացման կարելի հեռանկարները: Պոլսահայ պատուիրակութեան դործի մարդոց խնդրանքով նախագահ Ռ. Քոչարեան ներկայացուցած է կառավարութեան տնտեսական քաղաքականութեան հիմնական ուղղութիւնները ու առաջնահերթութիւնները:

***

### ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

Մայիս 15–ին «Միասնութիւն» դաշինքին երկու պարագլուխները Կ. Դեմիրճեան եւ Վ. Սարգսեան Արագածոտնի մարզին մէջ ներկայացուցած են նախընտրական իրենց ծրագիրը: Կ. Դեմիրճեան չեղած է տնտեսութեան մէջ պետութեան կարդադործող դերին անհրաժեշտութիւնը. Վ. Սարգսեան ըսած է թէ անցած տարիները անկախութեան, ազգային ազատագրական պայքարի, չուկայի անտեսութեան վարկաբեկումին առաջնորդած են: «Մենք պատրաստ ենք մեր վրայ բաղաքական պատասխանատուութիւն վերցնել» յայտարարած են անոնք, Ազգային ժողովին մէջ իրենց միամանական գործունէութեան որպէս առաջին քայլ նչելով երեսփոխանական անձեռնմխելիութեան ջնջումին մասին օրէնքին ընդունումը: Կ. Դեմիրճեան ըսած է որ 2000 Յունիս մկկին դաշինքի երեսփոխանները Ազգային ժողովի իրենց մկկ տարուան դործունէութեան հաշուետուութիւնը կը ներկայացնեն պերճնք ընտրողներուն:

Նոյն օրը Վանաձորի մէջ հանրահաւաք կազմակերպած է «Իրաւունք եւ միաբանութիւն» դաշինքը: Անոր դեկավարները Արտաշէս Գեղամեան, Հրանդ Մաչատրեան, Հայկ Բարսեղեան, Լեւոն Ադալովեան, Սերգէյ Մելքումեան հանդիպում ունեցած են ընտրողներուն հետ: Անոնք ներկայացուցած են իրենց ծրագիրը եւ երկիրը դանուած ծանր վիճակէն դուրս բերելու մարտավարութիւնը:

***

### ԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Իջեւանի համայնքին դեկավար արատկարգ ընտրութիւնը տեղի ունեցած է Մայիս 15–ին, ընտրողներու եւ թեկնածուներու բողոքներով յարուցած մթնոլորտի մը մէջ: Նախնական տուեալներով 11·857 ընտրողներէն 6414 հոդի քուէարկած են եւ առաւելագոյն քուէները ստացած է Վարուժան Ներսիսեան: Եղած են ուժ թեկնածուներ:

***

### Գ. ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՅԱՐԳՈՒԱԾ

Ատանի թիւ 177 դպրոցին մէջ նչուած է ծննդեան 53–ամեակը ռուս երեսփոխանուհի Գալինա Ստարովոյտովայի որ անցեալ տարի Ս. Պետերբուրգի տանը մուտքին սպաննուեցաւ: Ներկայ եղած են անոր ծրագրընկերները եւ Ռուսաստանի դեսպանատունէն, Երեւանի քաղաքապետարանէն, Ատանի թաղապետարանէն դէմքեր:

***

### ԱՐԿԱԾ

Մայիս 16–ին Երեւանի Ծառուստանի դեսպանատան կցորդը Բաղրամեան փողոցին վրայ ինքնաշարժով զարնուած է Ռ. Սիմոնեան անուն քաղաքացիին ու վիրաւորած գայն: Ան հիւանդանոց տարուած է, պատահարին մասին ալ քննութիւն բացուած:

***

### ՁԱՀՐԱՏ 75

Հայաստանի Գրողներու Միութեան մէջ Մայիս 14–ին նչուած է պոլսահայ բանաստեղծ Զահրատի 75–ամեակը, ներկայութեամբ Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանի: Ողջոյնի խօսքով Միութեան նախագահ Հ. Մաթեւոսեան չնորհաւորած է բանաստեղծը, ըսելով. «Դարավերջի հայ բանաստեղծութիւնը Զահրատով իր խօսքն ասաց դարին»: Ասոր առած են բազմաթիւ դրչեղբայրներ ու կիթարկուած է դեղարուեստական բաժին մը: Զահրատ ընդունուած է Մշակոյթի նախարար Ռ. Շառոյեանէ: Նաեւ պարդեւատրուած Մ. Խորենացի չքանչանով:

***

### ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ ՍՓԻՒՌՔ – ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՊԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Գերմանիոյ դեսպանը Աչոտ Ոսկանեան պատասխանելով Շուշանիկ Հայրապետեանի, ըսած է թէ ժամանակը հասած է որ Սփիւռքի հայութիւնը մտահոգի իր ապրած երկրին քաղաքական կեանքին, որպէսզի կարենայ մասնակից ըլլալ Հայաստանի առընչութեամբ որոշելիք որոշումներու: Իհար կարեւոր նկատելով տնտեսական օժանդակութիւնը: Ա. Ոսկանեան թերադրած է միասնական քաղաքականութիւն վարել ազգային շահու նպատակով: Ինչ կը վերաբերի Գերմանիոյ կողմէ ցեղասպանութեան ճանաչումին, դեսպանը ըսած է թէ ատիկա աւելի դժուար է, քան Ֆրանսայի պարագան ուր արդէն հարցը տարիներէ ի վեր կ'արծարծուի. մինչդեռ այսօր երբ ցեղասպանութեան դերմանական մասնակցութիւնը կը քննարկուի եւ բանավէճի նիւթ է, պերմանական կառավարութիւնը վերապահ դիրք բռնած է: Այսուհանդերձ, Ա. Ոսկանեան վստահ է որ կը հասնի այն օրը երբ Գերմանիա կ'ըսէ թէ միայն Հրեաներու ցեղասպանութիւն կատարուած չէ:

## ԹԱՆՆԻ ՓԱՌԱՏՕՆ

### Ա. ԵՂՕՑԵԱՆԻ ՖԻԼՄԸ ԵՒ ԱՐՍԻՆԷ ԽԱՆՃԵԱՆ

Մայիս 17–ի երեկոյեան Գաննի փառատօնին կը ներկայացուէր Աթոմ Եղոյեանի Ֆիլմը՝ «Ֆելիսիայի ամբողջութիւնը» եւ այս առթիւ, նոյն իրիկունը, հեռատեսիլի կայաններ հարցազրոյցներ սփռեցին իրեն հետ:

Ըստ երեւոյթին, այս անդամ, որոշ յուսախաբութիւն առեղծած է ֆիլմը, ինչպէս կը պատահի երբ ի յառաջագունէ մեծ են ակնկալութիւնները եւ ֆիլմը կը նկատուի մրցանակի արժանի: Կայ նաեւ Եղոյեանի փառաւոր անցեալը որ պատճառ է դժուարահամ ըլլալու:

Մայիս 18–ին, Ֆիկարօ չէր ծածկեր իր բացասական կարծիքը, խիստ քննադատութեամբ մը: Լիպերասիոն, նոյն օրը, կ'անդրադառնար թէ՛ ֆիլմին եւ թէ անոր դլխաւոր դերասանուհի՝ Արսինէ Խանճեանի, այսինքն Եղոյեանի կնոջ: Յօդուածագիրը դիտել կու տայ որ սքսել պիտի ըլլար Արսինէ Խանճեանը նկատել միայն որպէս Եղոյեանի կինը: Այս Լիբանանահայը, կը դրէ, այնքան դեղեցիկ որքան թուխ, ամէն բանէ առաջ նուրբ դերասանուհի մըն է բեմի վրայ թէ սինեմայի մէջ, որ կրնայ շատ տարբեր դերեր ստանձնել, այն աստիճանի որ մէկ դերէն միւսը հազիւ ճանչելի է: Բայց, դերերը զորս կը ստանձնէ Եղոյեանի ֆիլմերուն մէջ, յատուկ արձագանգ մը ունին ամոլին կեանքին հետ, 15 տարիներու զոյդ մը, հինդ ու կէս տարեկան մանչուկի մը ծնողք: Արսինէ Խանճեան կ'ըսէ թէ Աթոմ դինք կը տեսնէ զանազան անկիւններէ եւ չուզեր անոր պարտադրել դիմագիծ մը որ իրը չըլլայ: «Ինչ որ հոյակապ է, կ'ըսէ, մեր զոյդին մէջ, աշխատանքի թէ մտերմութեան, այն է որ այդ նպատակը կ'ընթանայ տարիներու եւ ֆիլմերու երկայնքին: Կը խորհիմ որ դիտակցարար ճիդ կը թափէ հեռաւորութիւն մը պահելու համար իր կնոջ եւ իր դեկավարած դերասանուհիին միջեւ»:

Ինչ կը վերաբերի ֆիլմին, հոս ալ յուսախաբութիւն կը տիրէ: Յօդուածագիրը կ'ըսէ թէ սիրոյմի երկայնքին յուսախաբութիւնը համեմատական էր այն փափաքին, զոր ունէինք վերջին տասը տարիներու ամէնէն ստեղծագործ հեղինակներէն մէկուն նոր օփիւս–ը տեսնելու: Այն, երկու տարի առաջ, Գաննի փառատօնին «Գեղեցիկ վաղորդայններով» կատարելութեան բացարձակապէս ցուցնող կէտի մը հասած էր: Ու յօդուածագիրը կ'ուեւլցնէ թէ լինչ ջանք ալ թափուի, բան դուրս չի դար:

---

ղրոյց մը տուած է «Վա վուա տիւ Նոր» թերթին (Մայիս 18) ուր կ'ըսէ թէ ամուսինը կարեւոր յայտնութիւններ ունի ընելիք լինչ կը վերաբերի նահանդապետ Խրիմեանի սպանութեան: Որոշ փաստաթուղթեր պահած է արկղի մը մէջ, արտասահման:

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

# ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ «ԿԵՆԱՑ ԵՐԳԵՐ» ԳԻՐՔԸ

Մանուկի դաստիարակութեան մէջ երաժշտութեան ունեցած դերին անդրադարձած են ԺԹ. դարու սկիզբի մեր մեծ դէմքերը, սկսած Խաչատուր Աբովեանէն: Արեւելահայ աշխարհաբարը գրականութեան հիմնադիր Խաչատուր Աբովեան, մանկավարժութեան նուիրուած իր աշխատութիւններուն մէջ չեշտած է երաժշտութեան բացառիկ դերը մանուկներու դաստիարակութեան գործին մէջ: Ան հաւատացած է որ ամէն մարդ պէտք է սորվի երաժշտութիւնը եւ հայկական դպրոցներու կրթական ծրագիրը կազմելու առեն մասնաւոր տեղ պէտք է տալ երաժշտութեան: «Ոչ մի այլ միջոցով չենք կարողանայ աւելի լաւ ու արագ հասնել կրթութեան ու լուսաւորութեան, քան արուեստի՝ պոէզիայի, երաժշտութեան եւ նկարչութեան միջոցով» գրած է ան:

ԺԹ. դարու երկրորդ կէսին Հայ ժողովուրդի մշակութային կեանքին մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները իրենց արտացոլումը գտան նաեւ երաժշտութեան մէջ, սկիզբը դնելով հայ երաժշտութեան պատմութեան նոր գլուխի մը: Հայ ազգային մշակոյթի կազմաւորման ընթացքը վաղուած էր մեծ կեդրոններու մշակութային կեանքին հետ, ուր կ'ապրէին մեծ թիւով Հայեր, ինչպէս՝ Թիֆլիս, Բաքու, Կ. Պոլիս, Մոսկուա, Պետերբուրգ, իսկ բուն Հայաստանի մէջ յարաբերաբար աշխոյժ էր Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գիւմրի) երաժշտական կեանքը:

Այդ ժամանակաշրջանին է որ կը հիմնուին երաժշտական ընկերակցութիւններ, որոնց նպատակը կ'ըլլայ երաժշտական կրթութիւն տարածել, աջակցիլ հայ երաժշտութեան զարգացման եւ խրախուսել հայ երաժիշտները, մեկնաբանները, ուսուցիչները եւ ընդհանրապէս երաժշտութեան մէջ ընդունակ Հայերը: Այս ընկերակցութիւնները կը կազմակերպեն մատչելի դասախօսութիւններ, համերգներ եւ զեղարուեստական այլազան ձեռնարկներ, բոլորն ալ ձրի, երաժշտական դաստիարակութիւն ջամբելու համար հայ ժողովուրդին:

Երաժշտական ընկերակցութիւններու գործունէութեան առընթեր սկիզբ կ'առնէ նաեւ երաժշտական գործերու հրատարակութեան չարժումը: Լոյս կ'ընծայուին հայ երգահաններու գործերը, որոնք կ'ընդգրկուին երգչախումբերու, նուագախումբերու եւ մենակատարներու երգացանկերուն մէջ: Այսպիսով աշխոյժ չարժում մը կը ստեղծուի հայ երգի ու երաժշտութեան տարածման մարզին մէջ:

Հայ իրականութեան մէջ երգարուեստի տարածման մեծ նպաստ բերած են ձեռնարկը եւ մանաւանդ տպագիր երգարանները: Առաջին երգարանը՝ «Ազգային երգարան Հայոց» խորագրով, որ կազմած է Գամառ – Քաթիպա, տպագրուած է Պետերբուրգի մէջ, 1856–ին: Ան կ'ընդգրկէ ո՛չ միայն քառաստեղծական բնագրեր, այլեւ նոթայի յաւելուած մը՝ երգային 31 մեղեդիներ՝ դաշնակի ընկերակցութեամբ:

Այնուհետեւ, իրարու կը յաջորդեն նոր երգարաններու հրատարակութիւնները, ինչպէս՝ Միքայէլ Մխանսարեանցի «Քնար Հայկական»ը (1868–ին), Արխատակէս Եպիսկոպոս Սեդրակեանի «Քնար Մշեցւոց եւ Վանեցւոց»ը (1874–ին), Եղնիկ Երզնկեանի «Ջայնադրեալ ազգային երգարան»ը (1882–ին), Ղազարոս Ծովակիսեանի «Քնարիկ մանկական»ը (1887–ին), Երուանդ Լալայեանի «Ջաւախքի բուլմունք»ը (1892–ին), Արշակ Բրուտեանի «Ռամկական մրմունջներ»ը (1895–ին), Գրիգոր Քահանայ Գրիգորեանի կազմած՝ «Սոխակ Հայաստանի» (1895–ին) հինգ հատորներէ բաղկացած երգարանները եւ ուրիշներ:

Հարկ է նշել որ այդ երգարանները նախատեսած ըլլալով դանդուածային եւ երաժշտական կեանքի կարիքներու համար, երաժշտական – ազգագրական նկարագրական նիւթի տակաւին յուսադրանմաչ վախճ հետազօտման նպատակ չեն հետապնդած: Նիւթերու ընտրութիւնը պատահական բնոյթ ունեցած է:

Ժողովրդական երաժշտութեան դրառումն ու ուսումնասիրութիւնը, անոր մշակումն ու տարածումը կարեւոր եւ վճռական դեր ունեցան հայկական արհեստավարժ երաժշտութեան զարգացման գործին մէջ, որուն ռահվիրաները կը նկատուին Քրիստափոր Կարա – Մուրզա, Նիկողայոս Տիգրանեան, Մակար Եկմալեան, որոնք 1880–ական թուականներուն եկան վերջ դնելու հայկական ժողովրդական երաժշտական արուեստի նկատմամբ ցոյց տրուած աւանդական անտարբերութեան: Անոնք սկսան գրի առնել, մշակել ու տարածել հայկական ժողովրդական ու ազգային – հայրենասիրական երգեր: Այս երեքակէն յաջորդեց Կոմիտաս Վարդապետ, որ չնորհիւ իր արտակարգ ջանասիրութեան յաջողեցաւ գրի առնել մօտ 4000 ժողովրդական երգեր: Ազգագրական այդ պատկառելի ժառանգութեան մեծ մասը Կոմիտասի ողբերգական ճակատագրի բերումով կորուսած է, սակայն այն ինչ որ պահպանուած է իր դրառումներէն, հսկայական արժէք կը ներկայացնէ:

Կոմիտասի ազգագրական եւ ստեղծագործական ճանապարհին հետեւած է իր աշակերտը՝ Սպիրիդոն Մելիքեան, որ Անուշաւան Տէր – Ղեւոնդեանի հետ միասին ձեռնարկեց Շիրակի երգերու հաւաքման, ապա՝ Գարեգին Գարատաչեանի հետ դրի առաւ Վանայ ժողովրդական երգերը: Ս. Մելիքեանի ոչ միայն հաւաքած եւ ուսումնասիրած է ժողովրդական երգերը, այլեւ մանուկ սերունդի երաժշտական դաստիարակութիւնը ամուր հիմերու վրայ դնելու նպատակով կազմած է դպրոցական երգեցողութեան դասագիրքի երկու պրակները (1912–ին), որոնց մէջ դետեղուած ժողովրդական երգերուն մեծ մասը գրի առնուած է իր իսկ ձեռքով:

Այնուհետեւ Հայկական երաժշտական մշակոյթը զարգացման նոր շրջան մը բոլորեց Ի. դարու առաջին 20–ամեակին, երբ մշակոյթի տարբեր ճիւղերու կողքին աչխուժութիւն տիրեց նաեւ երաժշտութեան մարզին մէջ: Վառ անհատականութեան տէր ստեղծագործողներ, երաժշտական պատշաճ կրթութեամբ զինուած, սկսան գաղտիկ երգեր յօրինել արեւելահայ եւ արեւմտահայ բանաստեղծներու գործերուն հիման վրայ: Տարիներուն հետ չարունակուեցաւ նաեւ ժողովրդական երգերու հաւաքման աշխատանքը, հաւաքուած երգերու մշակման եւ տարածման գործը, հարստացնելով հայ երգի գանձարանը:

Վերջին տասնամեակներուն Սփիւռքի մէջ նման չնորհակալ առաքելութեան նուիրուած է Պետրոս Ալահայտոյեան, հաւաքելով եւ կորուստէ փրկելով պատմական Հայաստանի տարբեր շրջաններու ժողովրդական երգերը: Դարձեալ Սփիւռքի մէջ, վերջին տասնամեակներուն գնահատելի գործ կատարած են Հանէսեան եղբայրները, որոնք գայթմ հրատարակած են չուրջ 30 թիւ երգարաններ, «Շիրակ» անունով, Հայրենի եւ Սփիւռքի հայ երգահաններու գործերը ընդգրկող:

Այսօր, հետեւելով մեր նախնիներու առնղին եւ բաժնելով դաստիարակութեան գործին մէջ հայ երգին ու երաժշտութեան նախնիմամական դերին նկատմամբ առնոնց հաւատքը, Անդինէ Քէչիչեան – Մուրատեան հրատարակած է երգարան մը, որ առաջին իսկ հայեացքով կը տարբերի գայթմ մեր տեսած այլ երգարաններէ: Մինչ այլ երգարանները պարզապէս կ'ընդգրկեն գոյութիւն ունեցող եւ ընդհանրապէս յայտնի ու հոն հնչող երգեր, Անդինէ Քէչիչեան – Մուրատեանի երգարանը գործադրիք մը կարելի է նկատել, ուղղակի իր նպատակին ծառայող հրատարակութիւն մը, այսինքն՝ գիրք մը՝ որ ո՛չ միայն կը ներկայացնէ երգին բառերը, այլեւ կուտայ տեղեկութիւններ գրողին, յօրինողին եւ երգատեսակին մասին:

ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԱՑ ԼԻՈՆԷՆ

(Բ. եւ վերջին մաս)

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՄԱՅԻՍ 2–ԻՆ

Առանձին յօդուածով մը լոյս պիտի տեսնէ Իսահակ Քահանայ Հէքիմեանի ատգաբերման տուչութեան հանդիսութիւնը որ տեղի ունեցաւ Մայիս 2–ին Լիոնի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ պատարագէն անմիջապէս ետք: Մանրամասնութիւնները ուրեմն այդ պատեհին կը թողունք:

Լիոնի Հայ Եկեղեցւոյ Ազգային Մխութիւնը նոյն օրը կազմակերպած էր նաեւ Լիոնահայ Տիկնանց Մխութեան ի պատիւ ընդունելութիւն մը:

1998 տարւոյ պարահանդէսին եկամուտէն Տիկնանց Մխութիւնը վերջերս 126 հազար ֆրանքի նոր նուիրատուութիւն մը կատարած էր Ազգային Մխութեան, դպրոցին պարտքը թեթեւցնելու նպատակով:

Այս նուիրատուութեամբ Լիոնահայ Տիկնանց Մխութիւնը դպրոցաչինութեան մինչեւ օրս նուիրած կ'ըլլայ 650·000 ֆրանք: Պատկառելի գումար մը եւ գեղեցիկ վերաբերմունք մը որ անտարբեր չէր կրնար ձգել Ազգային Մխութեան վարչականները:

Տիկնանց Մխութեան դպրոցին զօրավիգ կանգնելու քարի տրամադրութիւնը սկսած էր Տիկին Մատլէն Պասմաճեանի օրերուն եւ ներկայիս ալ նոր նախագահուհիին՝ Տիկին Էլիզ Զօպանեանի օրով կը չարունակուի մեծ ոգեւորութեամբ եւ թափով:

Պատարագէն ետք կարգին Մանուկեան սրահին մէջ հաւաքուած էր 300 հոգի: Յաջորդաբար խօսք առին Պր. Ռոպէր Տօնիկեան եւ Տիկին Էլիզ Զօպանեան: Առաջինի չնորհակալութեան խօսքերէն ետք, Տիկին Զօպանեան պատասխանեց. – «Ո՞վ որու չնորհակալութիւն պիտի յայտնէ: Մեր կարգին չնորհակալութիւն կը յայտնենք Սրբազան Հօր եւ Եկեղեցւոյ վարչականներուն որոնք դպրոցի նման հոյակապ ծրագիր մը իրագործեցին այս դարուն մէջ»:

Ճառերէն ետք, Տիկնանցի վարչուհիները, Տիկին Արփինէ Մարզարեան, Նորվան Եպիսկոպոս, եւ Ազգային Մխութենէն որոշ անձեր բարձրացան վարժարանի 3–րդ յարկը ուր զետեղուած էր Տիկնանցի անունով յուշատախտակ մը: Տիկին Մարգարեան եւ Տիկին Զօպանեան վար առին սպիտակ լաթը որ կը ծածկէր յուշատախտակին աթճանագրութիւնը:

Այսուհետեւ վարժարանին 3–րդ յարկը կը կրէ Տիկնանցին անունը, ինչպէս առաջին յարկը՝ Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան անունը:

Ճոխ պիւֆէով վախուեցաւ հաճելի այս կիրակնօրեան:

⁂

ԴԱՍԱՐԱՆ «ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ»Ի ԱՆՈՒՆՈՎ

Լիոնահայ գաղութին ծանօթ երեք եղբայրներ՝ Կրէկուար, Փօլ եւ Ժագ Աղբեան, իրենց զաւակներուն հետ միասին, Յովհաննէս Թումանեանի անունով դասարանին բարեբարութիւնը տառնձնեցին Մարգարեան – Փասիազեան վարժարանի նախակրթարանի բաժնին մէջ, ի յիշատակ իրենց ծնողաց՝ Մարտիրոս եւ Ճոհար Աղբեանի:

⁂

ԽՆԱՄԱԿԱԼԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՅԻՍ 6–Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Վարժարանի խնամակալութեան Մայիս 6–ի հերթական նիստը գումարուեցաւ Տիկին Մատլէն Պասմաճեանի նախագահութեամբ: Ընթացիկ հարցերու առթիւ քննուեցան երթեւեկի սպասարկութեան եւ հայերէն լեզուի ուսուցչուհիներու աչխատավարձի խնդիրները:

Հայերէն լեզուի ուսուցչուհիները համանքի հոգատարութեան ենթակայ են: Վարչութիւնը անոնց համար աչխատավարձի յաւելում մը քննարկեց որ ի զոյգ պիտի ըլլայ յառաջիկայ Սեպտեմբերէն սկսեալ:

Իսկ երթեւեկի սպասարկութեան համար ճշդուած են նոր մեկնակէտեր ինչպէս նաեւ չրջագայութեան նոր ուղեգիծեր: Յառաջիկայ օրերուն ծնողներ այս մասին պաչտօնապէս տեղեակ պիտի պահուին:

⁂

ԾՈՒԽ, ԹԵՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԱՌՈՑԻՆ ՄԷՋ

Կարպիս Մանուկեան Հանդիսասրահին մէջ 50 հոգիի չափ ունկնդիրներ եկած էին Մայիս 7–ի երեկոյեան, լսելու Լիոնահայ Տիկնանց Մխութեան կազմակերպած դասախօսութիւնը վերոյիչեալ նիւթի մասին:

Օրուան դասախօսը՝ Պր. Սահակ Սուքիասեան իրեն յատուկ մանկավարժական մեթոտով ծուխի, թեմի դասական սահմանումները ջնջէ ետք, տուաւ պատկերը Հայ Եկեղեցւոյ ծուխերուն եւ թեմերուն, նախքան ցեղասպանութիւնը: Եւ ապա յայտնեց թէ ի՞նչպէս խորհրդային կարգերու հաստատումով նեղցաւ անոնց թիւը: Ակնարկ մըն ալ նետեց Պոլսոյ եւ Ազգային Սահմանադրութեան վրայ:

Մանաւանդ կերպով անդրադարձաւ այսօրուան վիճակին: Թուեց այն թեմերը որոնք ենթակայ են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Կիլիկիոյ Վաթողիկոսութեան, Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքութեանց:

Այս բոլորին մէջ անշուշտ մասնաւոր տեղ յատկացուց Ֆրանսահայ գաղութին: Ցիշեց Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի վերջերս հրատարակած յօդուածը «Յառաջ»ի մէջ Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցիներու մասին: Արեւմուտքի հայ մտքերու պարագային ան գտաւ որ լաւագոյն թեմական կառոյց ունեցողը Ամերիկայի Միացեալ – Նահանգներու Եկեղեցին է, որուն հետեւած է Գերմանիոյ թեմը:

Դասախօսութիւնը տեւեց մէկ ժամէն քիչ մը աւելի, ներկաները շատ հետաքրքրուած էին: Հարց – պատասխաններ ալ նոյնպէս յատկացուեցաւ աւելի քան մէկ ժամ: Հարցումները երբեմն կապ ունէին նիւթին հետ, երբեմն ալ չունէին:

Այս բոլորը ցոյց կուտար կազմակերպուած համայնք մը ունենալու փափաքը, որուն անշուշտ մաս կը պակսի ինքնորոշումը:

ԼԻՈՆՑԻ

Մայիս 10, 1999

## ԳԱՂԹԱԿԱՏԷ ԳԱՂԹԱԿԻ

ՍԱՄԱԹԻՈՑ (Պոլիս) Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, Մայիս 9–ին, նախ եկեղեցական, ապա աչխարհական հանդիսութիւններով նչուած են Սահակեան զարեայ դասուն եւ Սահակեան երգչախումբին կրկնակ տարեդարձները: Կրօնական արարողութեան նախագահած է Մեսրոպ Պատրիարք, որ նաեւ քարոզած է: Ճառարտ պատարագի, սիրոյ սեղան մը տեղի ունեցած է Սահակեան Սանուց Մխութեան սրահին մէջ, նախագահութեամբ Պատրիարքին: Տեղեկագիրը ներկայացուցած է Անդինէ Արզուման եւ յայտնած որ ամէն կիրակի չուրջ 80 մանուկներ կը լեցնեն եկեղեցւոյ զարեայ դասը եւ իրենց մանկակազմութիւնը կը բերեն առաւօտեան ժամերգութեան եւ պատարագին: Գործադրուած է զեղարուեստական յայտագիր մը: Եզրափակիչ խօսքը արտասանած է Պատրիարքը որ դրուատած է զարեայ դասու եւ Սահակեան երգչախումբի բոլոր անդամները: Ցանձնարարած է որ մչակուին եւ նոթագրուին անծանօթ չարականներ ու յայտնած որ 2000–2001 Թուականին ինք Պոլսոյ բոլոր երգչախումբերէն ներկայացուցիչներ ընտրելով, պիտի կազմէ երգչախումբ մը եւ Սէ–Տէ սալի մը վրայ ձայնագրէ չարականները, որպէսզի ամէն աչակերտ մի՝ այն սալը ունկնդրելով կարենայ սորվիլ զանոնք:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

## ԴԵՍՊԱՆ ԱՐԱ ԱՅՎԱԶԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է ԻՐ ՀԱԻԱՏԱՐՄԱԳԻՐՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀ ՄԵՆԷՄԻՆ

Ապրիլ 21–ին, Արժանթինի մօտ Հայաստանի Հանրապետութեան նոր դեսպան Արա Այվազեան իր հաւատարմագիրները յանձնած է նախագահ Կարլոս Մենէմին:

Արարողութենէն եւք տեղի ունեցած ընդունելութեան, դեսպան Այվազեան նախագահ Մենէմի ներքին խնդրանքով համառօտ կերպով ներկայացուցած է Հայաստանի մէջ տըեւող բարեվերափոխումներու եւ ժողովրդավարութեան յաղթանակը, ինչպէս նաեւ Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորումի արդի վիճակը: Արարողութեան մասնակցած են Արժանթինի կրօնական գործերու առաջին փոխ – նախարար Անտրէս Սիմոներա եւ Հայաստանի դեսպանութեան երրորդ քարտուղար Հայկ Յակոբեան:

Յիշենք, որ դեսպան Այվազեան փետրուար 4–ին նշանակուած է իր նոր պաշտօնին (1996 – 1997–ին եղած է Արժանթինի դեսպանատան Բ. քարտուղար), փոխարինելով Դեկտեմբեր ամսուն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնին կանչուած նախորդ դեսպանը՝ Վահան Տէր – Ղեւոնդեանը:

***

## ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՐ ՏԻԼ ՓԼԱԹԱՑԻ ՄԻՋ

Ապրիլի 25–ի առաւօտուն, Մար տէլ փլաթայի Հայերու Հայրենակցական Միութիւնը ոգեկոչած է Մեծ Եղեռնի 84–ամեակը ծովեզերեայ քաղաքի գօրավար Սան Մարթինի յուշարձանին առջեւ, ուր զետեղուած է ծաղկեպսակ մը: Ներկայ էին տարբեր զաղութներու (լիբանանեան, իտալական, սպանական, վարակուայեան, հրեայ, լեհ, ուկրանական, յոյն եւ եւկոսլաւ) ներկայացուցիչներ: Ներկայ էին նաեւ Քաղաքապետական Խորհուրդի առենապետ Օսքար Փահին եւ առենադպիրը՝ Սանթիակօ Փեչ:

Տիկին Ինէս Մզմզեանի բացման խօսքէն եւք, խօսք առած է Հայրենակցական Միութեան վարչութեան անդամներէն Աւետիս Սահակեան:

Ոգեկոչումէն եւք, Միութեան կեդրոնատեղիին մէջ, պատարագած է ու քարոզած՝ Պուէնոս – Այրէսէն հրաւիրուած Մսախ Քահանայ Գուշլամեան: Աւարտին, տեղի ունեցած է մատաղաճաշը:

***

## ՕՐՈՐԱ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ «ՀՈԳԻՆԵՐՈՒ ԱՃՈՒՐԴԸ» ԳԻՐՔԻ ՍՊԱՆԵՐԷՆ ՎԵՐՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ապրիլ 23–ին, Պուէնոս – Այրէս քաղաքի Մշակոյթի Տան մէջ տեղի ունեցած է Մեծ Եղեռնի վերապրող Օրորա (Արշալոյս) Մարտիկեանի «Հոգիներու աճուրդը» վիրքի սպաներէն Թարգմանութեան ներկայացումը: Գիրքը, որ անգլերէն բնագիրէն Թարգմանուելով առաջին անգամ լոյս տեսած էր 1919–ին ու հռչակաւոր ժապաւէնի մը նիւթ դարձած, վերահրատարակուած է Սիրուհի Պեզճրեան – Փիրանեանի հովանաւորութեամբ, «Ապեան» հրատարակչատան կողմէ:

Ռուբէն Մոզեանի բացման խօսքէն եւք, Սիրուհի Պեզճրեան – Փիրանեան բացատրած է այս հրատարակութեան տուն տուող պատճառները:

Այնուհետեւ, Իզապէլ Միւրէքեան կարդացած է վիրքի ընթերցումէն ծնունդ առած արձակ դրուագիւն մը:

Հայաստանի դեսպան Արա Այվազեան անդրադարձած է ցեղասպանութեան եւ այս վիրքի հրատարակութեան փաստին: Այնուհետեւ, քաղաքի փոխ – կառավարիչ Էնրիքէ Օլիվերա փոխանցած է կառավարիչ Ֆերնանտօ տէ լա Ռուային ողջոյնի խօսքը: Գիրքի տարբեր երեսներուն անդրադարձան Ալկէրթօ – Փերալթա Ռամոս, Գերպ. Նեթթոր – Տանիէլ Վիլլա եւ Աուկուսթօ Պալտասառէ: Փակման խօսքը արտասանեց Արժանթինահայոց թեմի առաջնորդ Գիւտակ Արքեպիսկոպոս Մուրատեան:

***

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱԿ–Ի ՄԷՋ»

Ապրիլ 20–ին, այս նիւթով տեղի ունեցած է կլոր սեղան մը Պուէնոս – Այրէսի Գիրքի Միջազգային Ցուցահանդէսին մէջ, զոր կազմակերպած է Հայաստանի տարածաշրջանի Ազգերու Միջազգային Կազմակերպութեան (ՄԱԿ) Տեղեկատուական Կեդրոնը: Կլոր սեղանը վարեց փրոֆէսէօր Ատոլֆօ Գուէթուճեան, որ ներկայացուց օրուան երկու բանախօսները՝ Ատոլֆօ – Փերէս Էսքիվէլ եւ Լէանտրօ Տեսիուէ: Նոպէլեան Խաղաղութեան մրցանակակիր Փերէս Էսքիվէլ՝ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան յայտնի անուն մը Արժանթինի մէջ թէ դուրս, 1984–ին անդամ եղած է Ժողովուրդներու Միջազգային Ատեանի փարիզեան նիստին, ուր դատապարտած է Հայկական Ցեղասպանութիւնը: Իսկ Տեսիուէ եղած է Արժանթինի ներկայացուցիչը ՄԱԿ–ի Մարդկային Իրաւանց Ենթայանձնախումբին մօտ, որ 1985–ին վաւերացուցած է ցեղասպանութեան մասին տեղեկագիրը, զոր պատրաստած էր անգլիացի մասնագէտ Պենճամին Ուիթըքըրը: Երկու բանախօսները անդրադարձան ցեղասպանութեան վաւերացումի հարցերուն՝ ՄԱԿ–ի ծիրէն ներս թէ դուրս, իրենց ունեցած փորձառութեան, եւ ճանաչումի պայքարը շարունակելու անհրաժեշտութեան:

***

## ՍՐԲՈՒՀԻ ՄԱՌՔԻ «ԿԵԱՆՔԻՍ ՆՇՄԱՐՆԵՐ» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ապրիլ 23–ին, Հ. Բ. Ը. Մ.–ի «Ալեք Մանուկեան» Մշակութային Կեդրոնին մէջ ներկայացուած է ամերիկահայ (նախկին պոլսահայ) դրագիտուհի Սրբուհի Մառքի «Կեանքիս նշմարներ» վիրքը: Գրական երեկոյին գլխաւոր բանախօսն էր դրագէտ՝ Վարուժան Աճէմեան, որ ներկայացուցած է հեղինակն ու իր գործը: Տիկին Մառք անդրադարձած է հատորը գրելու դրդապատճառներուն եւ նշած՝ իր դժուարութիւնը, որ պոլսոյ իր նախկին դաստիարակը՝ Պր. Աճէմեանը, որուն թատերական գործերու թեմադրութեան մէջ նոր դեր վերցուցած էր, այժմ ներկայացնէր վիրքը:

Ընթերցումներ կատարած են Մարի Մանուկեան Կրթական Հաստատութեան ուսուցչուհի Սիլվիա Գուշեան եւ նախկին աշակերտուհի Լորենա Պասար:

***

## ՀԱՑ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՏԱՆՈՑ

Հ. Բ. Ը. Մ.–ի Մարի Մանուկեան Կրթական Հաստատութեան միջնակարգի հինգ դասարաններէն բաղկացած հայ արուեստի աշխատանոցը, զոր կը ղեկավարէ ուսուցիչ եւ արուեստագէտ Սարգիս Աշճեան, Ապրիլ 18–ին ներկայացուցած է իր աշխատանքները Գիրքի Միջազգային Ցուցահանդէսի սրահներէն մէկուն մէջ: Գործազրկութեան, պզտոյզի, քարի ու վայրի փորագրութեան, ձեռագիրներու ընդօրինակութեան եւ մանրանկարչութեան իրենց պատրաստած նմոյշներու կողքին, աշակերտները տեղւոյն վրայ ցոյց տուած են իրենց ընդունակութիւնները բազմաթիւ այցելուներու աչքին: Ս. Աշճեան, իր կարգին, տուած է մանրամասն բացատրութիւններ այս աշխատանքներուն մասին:

ԹՂԹԱԿԻՑ

# – ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՄՈՆՐԻԱԼԻ Հայ Կեդրոնի Ա. Ազգային սրահին մէջ, Ապրիլ 16, 17, 18 եւ 19–ին տեղի ունեցած է համաշխարհային Ֆիլադելֆիա–յուշագրող եւ հայկական հին պատմական բացիկներու հատորդ Պերճ Ֆեներճիի անհատական հրատարակած հատաքածոներու ցուցահանդէսը, նախաձեռնութեամբ Համազգայինի Սանահին մասնաճիւղին: Պ. Ֆերենճի ներկայացուցած է 722 բացիկներ զորս ձեռք ձգած է նիւթական եւ բարոյական զոհողութիւններով, 30 տարիներու երկայնքին: Հատաքածոն իր տեսակին մէջ մինակն է եւ ըստ «Թորոնթօ փոսթքարթ Գլէօպ»ի գնահատանքին, համաշխարհային մակարդակով 10 յատնի հատաքածոներու շարքին է:

***

ԹՈՐՈՆԹՈՑԻ Հայ Կեդրոնի սրահին մէջ, Մայիս 2–ին, Համազգայինի Գլաձոր մասնաճիւղի Ժորժ Սարգիսեան թատերախումբը, բեմադրութեամբ Մովսէս Աչըգեանի, ներկայացուցած է Ցակոր Թորոսեանի «Մխլճոնատէրը» երկու արարով կատակերգութիւնը: Բացման խօսքով հանդէս եկած է Սօսի Թաշճեան, ապա, նախքան ներկայացումը, Վարուժան Պասթաճեան հրամցուցած է իր զբաղութաթօսութիւնները:

***

ԳՈՒՔԻՆԻՈՑ (Ճունաստան) Զաւարեան կեդրոնի մարզադաշտին մէջ, Ապրիլ 24–ին տեղի ունեցած է «Հայկ· հարցը 21–րդ դարու սեմին» կլոր սեղան մը, նախաձեռնութեամբ Գոքինիոյ Հ.Ց.Դ· կոմիտէին: Զրոյցը վարած է փաստաբան եւ հեռատեսիլի լրագրող Փանոս Փանաեթոփուլոս: Մասնակցած են բազմաթիւ քաղաքական դէմքեր: Բացումը կատարած է Հայ Դատի Ցանճնախումբի անուանով Պօղոս Զոլաքեան:

---

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

## (ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ե·

Հետեւեալ օրը հայ թերթերը երկարօրէն կը նկարագրէին Փըթի Շանի մէջ տեղի ունեցած բարեգործական վաճառումը, զոյացած հասոյթը եւ գովեստներ կը չռայլէին գործին գլուխը գտնուողներուն, մանաւանդ Տիկին Սկամպիլեանի:

Քանի մը օր ետքը սակայն Գուրգէն Գուրգէնեան «Լապտեր»ի խմբագրատունը եկաւ եւ ուզեց տնօրէնին՝ Արշամ Պերճեանի հետ տեսակցիլ:

– Անպատճառ կարեւոր լուր մը ունիս տալիք, – ըսաւ Արշամ զուարթօրէն:

– Լուր չէ, այլ խիստ կարեւոր բանի մը մասին կ'ուզեմ խօսիլ, – պատասխանեց միւսը:

– Խօսէ՛ ուրեմն:

– Ամէնուն մէջը չէ, առանձին պէտք է տեսնուիմ:

– Առանձի՞ն...

– Այո՛, բոլորովին առանձին:

– Ձիս զոռ կը հանես:

– Զոռ եղելիք բան չկայ, միայն թէ խնդիրը շատ լուրջ է:

– Ուրեմն երթանք իմ սենեակս:

Եւ երկուքը միասին առանձնացան տնօրէնին փոքրիկ գրասենեակը:

Գուրգէն Գուրգէնեան 45 տարեկանի մօտ, նիհար, երկայնահասակ, ածիլուած ու ծաղկահար դէմքով մարդ մըն էր, ծեքծեքուն չարժուձեւերով: Ակնոց կը կրէր ու կը ջանար ինքզինքին Անգլիացիի հով մը տալ, թերեւս անոր համար, որ տարիներ առաջ անգլերէնի ուսուցիչ եւ ուժգնէն աւելի էր, գրեթէ երեք հազար ոսկի:

Մեծ յաջողութիւն մըն էր այս:

ԳԼՈՒԽ Ե·

Հետեւեալ օրը հայ թերթերը երկարօրէն կը նկարագրէին Փըթի Շանի մէջ տեղի ունեցած բարեգործական վաճառումը, զոյացած հասոյթը եւ գովեստներ կը չռայլէին գործին գլուխը գտնուողներուն, մանաւանդ Տիկին Սկամպիլեանի:

Քանի մը օր ետքը սակայն Գուրգէն Գուրգէնեան «Լապտեր»ի խմբագրատունը եկաւ եւ ուզեց տնօրէնին՝ Արշամ Պերճեանի հետ տեսակցիլ:

– Անպատճառ կարեւոր լուր մը ունիս տալիք, – ըսաւ Արշամ զուարթօրէն:

– Լուր չէ, այլ խիստ կարեւոր բանի մը մասին կ'ուզեմ խօսիլ, – պատասխանեց միւսը:

– Խօսէ՛ ուրեմն:

– Ամէնուն մէջը չէ, առանձին պէտք է տեսնուիմ:

– Առանձի՞ն...

– Այո՛, բոլորովին առանձին:

– Ձիս զոռ կը հանես:

– Զոռ եղելիք բան չկայ, միայն թէ խնդիրը շատ լուրջ է:

– Ուրեմն երթանք իմ սենեակս:

Եւ երկուքը միասին առանձնացան տնօրէնին փոքրիկ գրասենեակը:

Գուրգէն Գուրգէնեան 45 տարեկանի մօտ, նիհար, երկայնահասակ, ածիլուած ու ծաղկահար դէմքով մարդ մըն էր, ծեքծեքուն չարժուձեւերով: Ակնոց կը կրէր ու կը ջանար ինքզինքին Անգլիացիի հով մը տալ, թերեւս անոր համար, որ տարիներ առաջ անգլերէնի ուսուցիչ եւ դպրոց մը կը տնօրինէր Պոլսոյ մէջ, ուր ինքզինքը ճանչցուցած էր իբրեւ ազնիւ եւ ազատ մտքի մարդ:

Գուրգէն ելումուտ ունէր Բերայի բոլոր ծանօթ հայ ընտանիքներու տուները եւ տեղեակ էր անոնց ներքին կեանքին, պզտիկ պաղտնիքներուն եւ պայթեցիկ նիւթերուն: Երբեմն թերթերու մէջ ալ յօդուածներ կը գրէր թատերական ու գեղարուեստական հանդէսներու առթիւ:

Այս տեղեկութիւնները տալէ յետոյ զանազան այն սենեակին, ուր առանձնացած էին Գուրգէն եւ Արշամ:

Երբ տնօրէնը իր գրասեղանին առջեւ գրուած սեւ կաշիէ թիկնաթոռին մէջ բազմեցաւ ու հիւրն ալ նստեցուց իր մօտը, ուրիշ թիկնաթոռի մը մէջ, ըսաւ.

– Հիմա կրնաս պարզել գաղտնիքներուդ տոպրակը:

– Գաղտնիք չէ ըսելիքս, քանի որ բաւական անձեր արդէն գիտեն, պատասխանեց Գուրգէն, – եւ թերեւս քու ալ կանջդ հասած է կամ պիտի հասնի:

– Խնդիրը ի՞նչ բանի վրայ է:

– Կիրակի օր Փըթի Շանի թատրոնին մէջ տեղի ունեցած պազարի վրայ:

– Կ'երեւայ, որ մեծ յաջողութիւն մը եղեր է:

– Հանդէսը սքանչելի էր, մեղք որ ղուն չէիր եկած, կ'արժէր տեսնել:

– Ես կիրակի օր գեղեցիկ կնոջ մը հետ ժամադրութիւն ունէի, – ըսաւ Արշամ յաղթականօրէն:

Ինչ որ է, շատ յաջող կերպով կազմակերպուած էր ամէն բան, ինչ որ մեր հայկական հանդէսներուն մէջ քիչ կը տեսնուի, այցելող Եւրոպացիներն ալ շատ գոհ մնացին:

– Երեք հազար ոսկիի մօտ հասոյթ եղեր է, ինչ որ շատ մեծ բան է, թերթին մէջ երկարօրէն գրած էինք արդէն:

– Այո՛, կարղացի ... բայց խնդիրը այդ չէ, բան մը չիմացա՞ք այդ երեք հազար ոսկիին մասին:

– Չէ՛, ի՞նչ կ'ուզես որ իմանամ, – հարցուց տնօրէնը:

– Անլուր պայթեցկութիւն մը, խաղքութիւն մը, որ այդչափ կ'ըլլայ:

– Բայց խօսէ՛, տեսնենք, – գոչեց Արշամ անհամբեր:

– Էֆէնտիմ, ինչպէս յայտնի է, պրայցած հասոյթը երեք հազար ոսկի, Տիկին Սկամպիլեանի քով կը գտնուէր: Հետեւեալ օրը տիկինը այդ գումարը կը յանձնէ Թորոմ Սարուխեանի, որպէսզի հայկական պանքան տանի ու հոն պահ դնէ:

– Թորոմը կարծեմ Տիկին Սկամպիլեանի ազգականն է:

– Իր եղբօրորդին է: Թորոմ կ'առնէ դրամը, յետոյ կ'ըսէ, թէ յանձնած է տնօրէնին: Տիկինը սառցագիրը կ'ուզէ տեսնել, Թորոմ կը պատասխանէ, թէ սառցագիրը թէեւ գրուած է, բայց տնօրէնին քով մնացած է, որովհետեւ նոյն միջոցին պանքային մէջ դրոշմաթուղթ չկայ եղեր, եւ թէ ինքն կարեւոր գործ ունենալուն, չէ ուզած սպասել, թէ տնօրէնը խոստացած է, որ ինք անձամբ սառցագիրը բերէ եւ տիկինին յանձնէ ... վերջապէս այս տեսակ խօսքեր: Տիկինը բարեմտութեամբ կը հաւատայ, մանաւանդ ոեւէ կասկած չէր կրնար ունենալ իր եղբօրորդիին վրայ·

– Իրա՛ւ ալ, Թորոմ Սարուխեան շատ պարկեշտ երիտասարդ մըն է, – դիտել տուաւ տնօրէնը:

(Շար· 25)

ՊՈՒՔՔ – ՊԷԼ – ԷՕ

*Պ. Վարդեվառ Ղամպարեան,*

*Տէր եւ Տիկին Էմման Յոզեան, զաւակներն ու թոռները,*

*Ինչպէս նաեւ Յոզեան, Ռիչար եւ Փաթրիք Ղամպարեան, Սիանի, Գրիգորեան, Պրոնիք, Ապալեան ընտանիքները*

*եւ համայն ընտանեկան պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ եւ հարազատին՝*

**ՏԻԿԻՆ ԱԶՆԻՒ ՂԱՄՊԱՐԵԱՆ-Ի**

(Ծնեալ՝ Խոզեան)

*մահը։*

*Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Չորեքշաբթի, Մայիս 19, ժամը 14·45–ին Մարսէյլ Սէն – Ժերոմի Ս. Սահակ – Մեսրոպ Եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Սէն – Ժերոմի գերեզմանատունը։*

*Մահազդ չսացողներէն կը խնդրուի ներկայս իրրեւ այդ նկատել։*

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Պր. Վ. Ղամպարեանի։

## ՀԱՄԱԶԳԱՑԻՆ

### ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

### *5-րդ հանախմբում*

*Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կեդրոնական վարչութեան ծրագրած Հայ համալսարանականներու 5–րդ համախմբումը տեղի կ'ունենայ՝*

ՅՈՒԼԻՍ 17–ԷՆ _ ՕԳՈՍՏՈՍ 1

*Պէյրութի Համազգայինի Ն. Փալանճեան ճեմարանին մէջ։*

*Նպատակը համախմբումը առաջին տարիներուն եկաւ փաստելու, որ աշխարհասփիւռ հայ ուսանողութիւնը պատեհ առիթը երբեք չի փախցընէր ու հաճոյքով կուգայ համախմբուիլ մէկ յարկի տակ, այս տարբոյր մթնոլորտին մէջ դաստիարակչական եւ ընկերային անվոխարինելի մթնոլորտ մը միասնաբար ապրելու նպատակով։*

*Համախմբումի կեդրոնական յանձնախումբը կը հրաւիրէ նաեւ ձեզ որ այս տարի դուք ալ օգտուիք այս առիթէն եւ ապրիք ձեր ուսանողական կեանքի ամենայիշատակելի պահերէն մէկը։*

*Տեղեկութեանց համար դիմել՝*

*ՍԻԼՎԱ ԹՆՃՈՒԿԵԱՆ*

*Հեռաձայն.* –

00 _ 44 17 – 16 _ 03 – 84 – 52

E-mail : Stenjouk@aol.com

*ՀՈՒՐԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ*

*Հեռաձայն.* –

01 – 42 – 29 – 10 – 24

E-mail : navasti@wanadoo.fr.

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը չնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուիրատուութիւնները Ազատուհի Թաշճըօղլուի մահուան առթիւ. –*

*Սարգիս Զէյիք, Կարպիս Սանդիկեան 200–ական Ֆր., Վազգէն Սիրիք 1000 Ֆր., Աւետիս Տիշճի 200 Ֆր., Ոսկիան Պատուականեան 500 Ֆր., Ժապ Սարոյեան 150 Ֆր., Միհրան Տէմիր 500 Ֆր., Զաքարիա Հազարմազ 300 Ֆր., Կրէկուար Պարսադ 500 Ֆրանք, Մարիամ Իշխէր 200 Ֆրանք, Կրէկուար Մուրատ 300 Ֆրանք, Ամբանթիք էլեկտրականութիւն, Հայ Աւտարատ 500–ական Ֆր., Արսէն Գաբեան, Անանիկիւլ Կիւլէկէր, Մեսրոպ Պէնլի 200–ական Ֆր., Մամոս Ալթընթաս 100 Ֆր., Զաքար Շէն 300 Ֆր., Համբար Ապա 100 Ֆր., Հայրապետ Սրատագ, Վազգէն – Ռաֆֆի Իշխէր, Էլմաս Իփէքճի 200–ական Ֆր., Սիմոն Ալըճը 100 Ֆր., Վեժին Գամբուճեան, Ռաֆֆի 200–ական Ֆրանք, Արմենուհի Զուլհաճըր 100 Ֆր.։*

*(Շար.)*

INFORMATIONS ARTISTIQUES

*La Galerie* ART PRESENT *expose Sculptures:* PAPOVIAN

Exposition du 15 mai au 11 juin

Salle ORPHEE — 75, rue Quincampoix — 75003 PARIS

Ouvert tous les jours sauf le dimanche de 13h à 19h.

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Մայիս 22

Յիշատակ Աշխարհազօրաց եւ Զօրավարացն Հայոց, որք կատարեցան ի Հերոսամարտին Սարդարապատի 1918 Ամի,

վասն հաւատոյ եւ հայրենեաց

*Այս առթիւ, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 16·30–ին, կիրակամուտի ժամերգութիւն կ՚կատարուի եւ հոգեհանգիստ Սարդարապատի հերոսներուն համար։*

*Կը հրաւիրուինք ամէնքս այդ օր՝ աղօթքով եւ ինքնամփոփ ներկայութեամբ վեր յիշատակին։*

Ուրբաթ, Մայիս 28

Հայ պետականութեան՝

Հայաստանի Առաջին Հանրապետութեան

(1918 Մայիս 28–ին)

Հոչակման 81–րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18–ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որուն ատենին Հանրապետական Մաղթանք կ՚ըլլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատունութեան եւ բարգաւաճման համար։*

L'Ecole de la Langue et de la Culture Arméniennes

**« KHATCHADOUR ABOVIAN »**

de la

Cathédrale Apostolique Arménienne de Marseille

vous invite à sa

## Fête Annuelle

suivie de la

## Kermesse

## ՏՕՆԱՎԱՃԱՌ

**Samedi 5 Juin**

de 14h30 à 19h

Dans la cour de la Cathédrale

**Serpotz Tarkmantchatz**

339, avenue du Prado — 13008 Marseille

Tirage de la TOMBOLA sur place avec de nombreux lots

**Venez nombreux**

encourager nos élèves et déguster les spécialités arméniennes dans une ambiance familiale

ՓԱՋԱԼԵՔԵՑԷՔ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

## AVIS DE MESSE

Le **Lundi 24 mai, lundi de Pentecôte,** une messe sera célébrée à la Chapelle Saint Jean du Home Arménien par **Monseigneur Geredjian,** Archevêque des Arméniens du Sud de la France.

Un déjeuner est prévu à 13h au sein du Home Arménien.

Participation au déjeuner : 150 F.

Merci de nous communiquer les réservations au 04. 94. 19. 51. 50 avant le 19 mai.

## ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

### ԱՌԹԻԻ

*եւ*

*Նախաճաշակ*

Սրբոց Կուսաւացւոյ Հռիփսիմեանց եւ Գայիանեանց

*կազմակերպութեամբ՝*

*Փարիզի*

*Ս. Յովհ. _ Մկրտիչ Մայր Տաճարի Տիկնանց Յանձնախումբին*

*կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին*

*Առաջնորդարանի «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ*

15, rue Jean-Goujon— Paris 8e

*Մասնակցութիւն՝*

Participation aux frais

Pour tous renseignements appeler :

*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*

01 – 43 _ 59 _ 67 _ 03

01 _ 42 _ 59 _ 23 – 33

*կամ՝*

01 – 46 _ 62 _ 01 _ 29

*ՊՈԼՍԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՅԼ*

## ՄԻՋՎԱՐԴԱՐԱՆԱՑԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

*Կիրակի, Յունիս 6, 1999, ժամը 15·30*

*տեղի կ՚ունենայ*

*Հայ Մշակոյթի Տան մէջ*

12-14, rue St-Bazile — Marseille 1er

Fête Paroissiale

LUNDI DE PENTECOTE

24 MAI

AU PROGRAMME :

11h30 : *Culte;*

A partir de 12h : *Repas Spécialités arméniennes;*

Stands :

*Pâtisseries arméniennes*

*Librairie, Brocante, etc...*

*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE ARMENIENNE

55, avenue Victor-Cresson / 28, avenue Bourgain

92130 ISSY-LES-MLX

### Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes – 92130 Issy-les-Moulineaux.

**le Centre Culturel SAINT MESROB à PARIS**

**expose du 18 au 28 mai**

LES PHOTOS GRANDEUR NATURE DES

## VITRAUX

réalisés par **Reine AVEDISSIAN** sur le thème :

L'ART ET LA RELIGION, SYMBOLES DE PAIX

Les sentiments religieux dans l'Architecture et l'Art sous les diverses formes dans les grandes civilisations.

10 bis, rue Thouin — Paris Ve

Entrée libre — Cocktail

**(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)**

Tél. : 01 44 59 23 50

ou 01 40 51 11 90

Métro: Cardinal-Lemoine / Monge

RER: Luxembourg

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

## Université d'été aux U.S.A.

Le HOM (Hay Oknoutian Mioutioun) de la Côte Est des Etats-Unis organise une université d'été d'études intensives arméniennes dispensées en langue anglaise, de 3 semaines destinée aux jeunes étudiants de niveau universitaire, âgés de 18 à 25 ans et diplômés d'études secondaires.

**Date:** **du 11 juillet au 1er août**

**Lieu:** **Université Bradford à Bradford (Massachussetts)**

**Direction:** **Dr. Simon PAYASLIAN (directeur du département Histoire UCLA)**

**Programme:** **Langue — Musique — Histoire — Cinéma — Littérature — Danse — Histoire de l'art et autres...**

**Conditions:**

- Hébergement pris en charge par le HOM Côte Est
- Frais d'inscription, non remboursables, 350 USD plus frais de voyage à la charge du participant.

**Délai d'inscription: 30 Mai 1999 au plus tard**

**Renseignements: Conseil d'Administration de la CBAF: 01. 48. 24. 46. 57.**

## COLONIE DE VACANCES

organisée par l'Association « SIPAN »

pour les enfants de 6 à 12 ans

DU 2 AU 22 JUILLET

Frais de séjour : 2.600 + frais de voyage

*Les dossiers d'inscription peuvent être retirés dans les paroisses catholiques arméniennes*

ou demandés au Secrétariat de l'*Association SIPAN*

10bis, rue Thouin — 75005 PARIS

Tél.: 01 40 51 11 90 (du lundi au vendredi de 14h à 19h).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ 1918 ՄԱՅԻՍ 28

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՒՑ ԽԱՉԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

## ՁԱՇ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*

*Հ.Ց.Դ. «Զաւարեան» խումբին*

Ֆրանսահայ կապոյտ խաչի Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրբիսկիսեան" *մասնաճիւղին*

*մասնակցութեամբ՝*

ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ-Ի

*եւ Անի նուագախումբին*

Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ

Palais des Arts et des Congrès d'Issy-les-Moulineaux

25, avenue Victor Cresson — 92130 ISSY-LES-MOULINEAUX

Les billets sont disponibles chez :

**Alice :** au **01 46 42 90 68;**

**Jacqueline :** au **01 40 95 81 33.**

Pour la réservation des tables et billets:

**Garage Carnot : 01 40 95 14 58**

**Eniz Clamart et Arnouville**

**Auprès de toutes les Khatchouhis.**

**Imprimé sur les Presses du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville, 75010 Paris**
**SIRET : 571 027 317 000 15**
**Commission Paritaire : N° 55935**

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 20
JEUDI
20 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·644 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.644

*ԽՈՍՈՎՕ*

## ԹԱՂԱՂ ԼՈՒԾՈՒՄԻ ՅՈՅՍԵՐ

### *ՊԵԼԿՐԱՏ ՏՐԱՄԱԴԻՐ Է ԲԱՆԱԿՑԵԼՈՒ*

*Միլուեւիչ դուս մը բացաւ, Մայիս 18-ին եւ յայնցդ օրն ալ որոշ լաւատեսութիւն մը կը տիրէր: Չերնոմիրտին միշտ կ'ներթայ – կուգայ եւ Փինլանտիոյ նախագահին ալ կարեւոր դեր մը տրուած է քաղաքական կարգադրութեան մը յանդելու համար: Պելկրատ, առաջին անգամ ըլլալով, յայտարարած է որ տրամադիր է խօսելու ԺԷ – 8-ի պատրաստած ծրագրի պայմաններուն շուրջ: Արեւմուտքի նախարարութեան բանբերն ալ գրած է որ անդադրում ռմբակոծութիւնները կը խանգարեն քաղաքական նախաձեռնութիւնները, որքան չուտ դադրին, այնքան աւելի արագ կ'ընթանայ քաղաքական գործընթացը: Ան, դեռ չէ ըսած է որ դիւանագիտական լուծումը պէտք է պահպանէ Եուկոսլաւիոյ ինքնիշխանութիւնը եւ հողային ամբողջականութիւնը: ԺԷ – 8-ի (աչխարհի 7 մեծահարուստ երկիրները առաւել Ռուսաստան) եօթը սկզբունքներն էին. – Սուպելի հրադադար, Բոսովոյէն սերպ ուժերու պարպում, ապահովութեան միջազգային ուժերու դեեղգում Հովանաւորած ՄԱԿ-ի կողմէ, առժամեայ վարչական մարմնի մը հաստատում որոշուած Ապահովութեան Խորհուրդին կողմէ, վերադարձ բոլոր գաղթականներուն ապատ եւ ապահով պայմաններու մէջ, Բոսովոյի չօշափելի ինքնավարութիւն եուկոսլաւիոյ ինքնիշխանութեան յարգանքով եւ ՈՒ-ՉԷ-ՔՍ-ի անկախ ապահովութեան ներու զինաթափում, հուսկ ամբողջական համաձայնութիւն Պալքաններու զարգացման եւ կայունացման համար:*

*– Պուկիարները դէմ են այս «ամերիկեան պատերազմին» որու հետեւանքները ծանր են երկրին անտեսութեան վրայ:*

*– Սերպիոյ Քրուչեւաչ փոքր քաղաքի մէջ 3000 յուգարարներ բողոքած են պատերազմին դէմ՝ «մեր տղաքը կ'ուղենք, ոչ՝ դագաղները» լոզունգով: Մէկ մասը ապահովուած զինուորներու մայրեր էին:*

*– ՈՒ-ՉԷ-ՔՍ-ի չարքերուն մէջ 3 Ֆրանսացի զինուորներ սպաննուած են:*

### ԿԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈԼՍՈՑ Մալթէպէ, Քարթալ թաղամասերուն մէջ չարք մը ռճրափորձեր տեղի ունեցած են Մայիս 18-ին: Լիսէ մը, դրամատուներու մանանճիւղեր եւ սրճարան մը թիրախ եղած են: Վնասները մեծ են, բայց զոհ չկայ: Միւս կողմէ, «Ճումհուրիյէթ»ի մէկ լրագրողը 13 ամսուան բանտարկութեան դատապարտուած է ռոլովհետեւ Խօճալանի հետ երկու հարցազրոյց ըրած էր... 1993-ին: Ան առեն բան մը չէր պատահած, բայց, ապահովութեան Ատեանը հետապնդումի ձեռնարկած է, երբ լոյս տեսած է գիրքը ուր տեղ գտած էին այդ լրագրողին յօդուածները:

ԻՍՐԱՑԷԼԻ նոր ֆինէսէթը (Խորհրդարան) վերջնական արդիւնքներէն եաք, հետեւեալ պատկերը կը պարզէ: Նոր վարչապետին Աչխատաւորական կուսակցութիւնը կը դրաւէ 27 աթոռ, մինչ Նեթանեխահուի Լիքուտը՝ 19: Պարաքի կողքին մեծ յաղթող մըն է Շասը, սեֆարատ ծայրայեղ ուղղափառ կուսակցութիւն, որ 17 աթոռի տէր կը դառնայ, մինչ ընդհանուր ձեւով, կրօնական կուսակցութիւնները կը նահանջեն: Պարաք պիտի ստիպուի կառավարել կեդրոնը եւ պիտի վայելէ նեցուկը կեդրոն կուսակցութիւններուն, ինչպէս՝ Իսրայէլ պէ Ալիա (7 աթոռ), Շինուի (6), կեդրոնի կուսակցութիւն (6), Միայն Մէկ Ժողովուրդ (2)· իրեն զօրավիգ են նաեւ Իսրայէլի երեք արաբական կուսակցութիւնները՝ Հաատաչ (3), Արաբական Միացեալ Ցանկ (5), Ազգ· Ժողովրդավար Ձիներ կուսակցութիւն (2): Բայց, Պարաքի կողքին, դլխաւոր ձախ կուսակցութիւնն ալ կայ՝ Մէրեց որ ինը երեսփոխան ունի: Այս ամբողջը հանգիստ մեծամասնութիւն մը կ'ապահովէ նորընտիր վարչապետին որ 45 օր ունի կառավարութիւնը կազմելու համար: Կրօնամոլները, բացի Շասէն, ծանր պարտութիւն մը կը կրեն, Թորահը 10-էն հինգ աթոռի կ'իջնէ, Ազգ· Կրօնական կուսակցութիւնը՝ 9-էն 5-ի, այլ խօսքով այլեւս իրաւարի դեր չեն կրնար խաղալ: Ռապինի յետ մահու վրկժն է: Պարաք յանձն առաւ չարունակել խաղաղութեան դործընթացը:

*ԹՈՒՐՔ դինեալ ուժերու եւ Քիւրտիստանի ժողովրդական ապատագրութեան*

(Շար·ը Դ· էջ)

## ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐՈՒԱԾ ՉԻՆԱԿԱՆ ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ՊՆԴՈՒԻՍ ԵՒ ԴԱՓՈՂՈՒԹԻՒՆ ԲԱՔՈՒԻ ՄԷՋ

*Ադրբեջանի Արտաքին գործերու նախարարը Թ· Զուլֆիքարով Չինաստանի Բաքուի ներկայացուցիչին բողոքագիր մը յանձնած է ուր կ'ըսուի թէ փէքին անցեալ ամիս հրթիռներու համակարգեր տուած է Հայաստանի, ինչ որ զժգոհութեան պատճառ է իրենց համար: Այդ յանձնումը Բաքու կը նկատէ Կասպից ծովու քարիւղի արտադրութիւնը խոչընդոտելու անուղղակի արարք մը: Զուլֆիքարով ըսած է որ այդ հրթիռներով կարելի է հարուածել ադրբեջանական տարածքը ուրկէ կ'անցնի օրինակ Սուփսայի քարիւղատարը, կամ ուրկէ պիտի անցնի ճէյհան դիմող կազատարը: Ան աւելցուցած է որ Չինաստանի բուն նպատակն է արդիլել ադրբեջանական քարիւղին դէպի Արեւմուտք փոխադրութիւնը եւ ստեղծել այնպիսի կացութիւն մը որ Բաքու հարկադրուի իր քարիւղը դէպի Արեւելք հոսեցնել: Ադրբեջանի Արտաքին գործերու նախարարը ըսած է նաեւ թէ հրթիռները անմիջապէս պէտք է ետ տրուին, հակառակ պարագային իրենք պարտաւոր պիտի ըլլան վերանայելու Չինաստանի հետ իրենց յարաբերութիւնները:*

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 18/19)

### Ա· ԲԼԷՅԱՆԻ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

*«Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի ուսուցչական կազմը Մայիս 18-ին մամուլի ասուլիսի հրաւիրած է լրագրողները եւ անոնց ներկայացուցած հաստատութիւնն ու անոր գործունէութիւնը: Մանկավարժները նշած են որ ծնողքներ ինքնաբուխ կերպով վճարումներ կը կատարեն, որոնք կը ծախսուին աշակերտական պիտոյքներ գնելու համար: Ասոնք առնող մանկավարժուհիները չեչտած են այս հաստատութեան կրեւորութիւնը «այլանդակ» յորջորջուած երախաներու կրթութեան առաքելութեան տեսանկիւնէն, նաեւ դատապարտած են Երեւան քաղաքի դատախազութեան գործելու ոճը, որ անվայել ձեւերով հարցաքննութեան կը կանչէ ծնողքներ, նախկին սաներ· վախ յայտնած են ի տես հաստատութեան փակուելու սպառնալիքին: Այլ մանկավարժուհի մըն ալ չեչտած է այն երեւոյթը թէ հանրութիւնը ընդունած է Ա· Բլէեանի կրթական մօտեցումը, սակայն ոչ՝ անոր անունը: Բոլորն ալ ընդգծած են իրենց արդելափակուած տնօրէնին զօրակցելու անհրաժեշտութիւնը, նչելով որ կը դադրեցնեն իրենց սկսած գործադուլը, վըճռելով այլ ձեւով պայքար տանիլ Բլէեանի ազատ արձակումը ապահովելու համար:*

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՀԵՏ

### ՌՈՒՍ ԳՐԱԳԷՏԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉԸ

*Մինչ Ա.Մ.Ն–ու պալքանեան քաղաքականութեան հլու հնազանդ հետեւորդ եւրոպացի պետավարներ ամէն օր կը ճգնին ՕԹԱՆ–ի ռմբակոծութիւնները արդարացնելու տեղին ցոյց տալ, միւս կողմէ կը քաղմանան տարակարծիք արտայայտութիւնները: Այս վերջինները մեծ մասով տակաւին քաղաքական որոտին չեն պատկանիր, այլ կուգան մտաւորական շրջանակներէ: Անոնք ընդվզում կը յայտնեն ու կը պախարակեն լրատիւականներու տապտեղկատուութիւնը, Սերպիան հարւածելու նպատակին հետ Եւրոպայի ուժերը ակարացնելու միտումը, եւայլն:*

*Եւրոպայի մէջ ամէն օր հնչած պաչտոնական «պիտի»ներու, «պէտք է»ներու քով սկսած են յայտնուիլ այլակարծիք ձայներ, էջեր ալ: Ճահաս կ'ուզուի, օրինակ, հարցումը թէ Քոսովոցիներու մարդկային իրաւունքներու յարգանքին պատճառաբանութիւնը ինչո՞ւ չէ զօրած Թուրքիոյ Քիւրտերու պարագային ալ: Կամ Կիպրոսի Ցոյներուն համար: Կայ հետաքրքրութիւնն ալ գիտնալու թէ մարդկային իրաւունքի ի՞նչ յարգանքի մասին կարելի է խօսիլ երբ այլեւս յստակ է որ ինչ որ ալ ըլլայ միակողմանի այս պատերազմին ելքը, Սերպիոյ նախագահը յաղթած է իր պլխաւոր նպատակին հասնիլ, իր ոչ սերպ ինակիչութենէն պարպելով կոսւսխնձոր հողամասը՝ Քոսովօն: Կըրնա՞յ հաւատացող գտնուիլ որ զաղթականները որոնք ցրուած են բազմաթիւ երկիրներու մէջ, օր մը կը վերադառնան:*

*Քոսովոյի մէջ կատարուածին դէմ զայրոյթի պոռթկում մը ստորագրած է ռուս ծանօթ դրագէտ Ա· Զինովիեւ որ նախկին այլախոհ մըն է ու կ'ապրի Գերմանիա: Ան թիրախ առած է Մոսկուան զոր կ'մբաստանէ միջազգային դրամական հիմնարկին ակնկալուած ողորմութեան սիրոյն լռելու եւ ենթարկուելու մեղքով: Իր գրութիւնը մարտական ոճով էջ մըն է որմէ հատուածներ տուած է «Գուրիէ էնթերնասիոնալ» չաթաթաթերթը:*

*Զինովիեւ կ'ըսէ թէ դիշեր – ցերեկ ահաբեկող սարսափի մը յաճախանքին ենթակայ է, տեսնելով որ արեւմտեան նախարարները գերվինուած իրենց ուժերով անպատիժ կերպով կը սպաննեն Սերպերը, ամրողջ աչխարհի անտարբեր հայեացքին առջեւ: Դժգոհութեան, հակադրութեան, թիւրըմբռնումի խուլ երեւոյթներ կան Արեւմտեան Եւրոպայի ու Ա.Մ.Ն–ու մէջեւ, բայց ատոնք միշտ կը զօտարկուին: Ռուս դրագէտին զայրոյթին յատուկ թիւրախ է Գերմանիան որ կարմիր – կանաչ համախոհութեան կառավարութիւն մը ունենալով հանդերձ, հիթլէրեան քաղքականութիւն կը վարէ: Ամէն օր, ամէն ժամ բոլոր լրատիւակաները միայն ապատեղեկատուութեամբ կը դրաւին. կը ծածկեն իրականութիւնները, կը ձեւազեղծեն զանոնք:*

*Այս կացութիւնը դինք կը մղէ ռուս դրագէտին որ ըսէ թէ Մոսկուա աւելի վճռական յայտնուէր, ռազմատենչ Արեւմուտքցիները իրենց վախէն մանելիք ծակ պիտի չգըտնէին: Սակայն ատոր փոխարէն Մոսկուա աչքերը յառած է Միջազգային դրամական հիմնարկին ողորմութեան, ամէն բան ընելով որ անոր գժգոհութիւն չպատճառէ:*

*Դրագէտին գրութիւնը կ'աւարտի Ռուսաստանի ժողովուրդին ուղղուած կոչով մը որ դինք կը կանչէ ապստամբելու հանդէպ՝ հասարակաց մահացու թշնամիին:*

## ՄԱՄՈՒԼ

*ԳԱՆՆԻ ՓԱՌԱՏՈՆ*

### «LE MONDE»

(19 mai)

ATOM EGOYAN
«LE VOYAGE DE FELICIA» *EST BIEN, A SA MANIERE, UN FILM EXCEPTIONNEL*

«Լը Մոնտ» լայն տեղ կուտայ Ֆիլմին, որու կոչած էր հարցազրոյց մը Ատոմ Եգոյեանի հետ: Սամուէլ Պլումենֆելտ առաւելապէս կը վերլուծէ Ֆիլմին նիւթը եւ գրութիւնը կը խորագրէ· – «Մեր մանկութեան հէքեաթները, արիւնալի տարբերակ» ուզելով մէկ տողով ամփոփել Եգոյեանի չարժանկարին պատմութիւնը: Երիտասարդ Իրլանտուհի մըն է (Ֆելիսիա), յղի է ու Անգլիա կ'ներթայ գտնելու համար ծնելիք զաւկին հայրը որ անդլիացի զինուոր մըն է: Պիտի հանդիպի Հիլտիէի, առանձին մարդ մը որ Պերմինկէմ կ'ապրի, եւ ձեռնարկութեան մը ճամբան կ'ապրի: Ան, գործէն ետք, դիտակով կը դիտէ մօրը (Արսինէ Խանճեան) տեսերիզները: Ինք, միաժամանակ, ճիւաղ մըն է, Պարպ – Պլէօ, գազան մը որ, առեն առեն ճամբու եզրէն պարմանուհիներ կը հաւաքէ, տուն կը տանի, կը քնացնէ ու կը սպաննէ: Այս պատմութեան «կարմիր գլխանոցով աղջիկը» պիտի ըլլայ 17-ամեայ Ֆելիսիան:

Առաջինը է, կը դրէ յօդուածագիրը, որ կուգայ տեղ գտնել ներկային մէջ, դուդպիպութիւն մը կայ այս երկու ժամանակաշրջաններու միջեւ եւ հոգ է Ֆիլմին վարպետութիւններէն մէկը: Յօդուածագիրը խոր վերլուծումի կ'ենթարկէ Եգոյեանի Ֆիլմը, մանաւանդ Հիլտիէի տիպարը ու տեղ մը կը դրէ թէ եզակի ծրագիր մըն է ինչ որ Եգոյեան ուզած է ընել իր տեսակին մէջ եւ Ֆելիսիայի ճամբորդութիւնը ձեւով մը բացառիկ Ֆիլմ մըն է:

Հարցազրոյցով ալ Եգոյեան կը բացատրէ թէ ինչո՞ւ տարուած է Ուիլիըմ Թրեւորի վէպով (որմէ քաղուած է Ֆիլմը): Գրաւիչ գտած է ստեղծուած կացութիւնը մարդու մը միջեւ որ բարդ յարաբերութիւններ ունի իր մօրը հետ եւ այդ աղջկան որ տունէն փախած է եւ կը պիտակցի որ մայր պիտի ըլլայ:

ըլլալուն համար ամօթ զգալու: Ամբողջ աչխարհ ռուսական հակագրեցութեան կը սպասէր, կ'ըսէր· իր կարծիքով ՕԹԱՆ եւս կը սպասէր ատոր ու կը վախնար, քանի որ այդ կազմակերպութեան անդամները վատեր են որոնք կը պատերազմին, որովհետեւ հակառակորդէն հազարապատիկ աւելի զօրաւոր են:

Զինովիեւ Սերպերը հիացումի արժանի կը նկատէ, որպէս մեր երկրագունտին վերջին դիմադրականները: Կ'ուզէ որ Ռուսերը փոխանակ լուռ դիտողներ ըլլալու, դէնք վերցնեն ու կռիւին մասնակցին, նոյնիսկ մեռնի՛ն, իրենց բողոքը արտայայտելու համար: Չի հասկնար ներկայի կացութիւնը որ ծրագրի մը կիրարկումը կը թուի իրեն· կ'ըսէ թէ յաջորդ թիրախը իրենք՝ Ռուսերը պիտի ըլլան այս ընթացքով· Ռուսաստանը քարտէսէն պիտի ջնջուի ու ժողովուրդը կոտորուի: Մինչդեռ եթէ Մոսկուա աւելի վճռակամ յայտնուէր, ռազմատենչ Արեւմուտքցիները իրենց վախէն մանելիք ծակ պիտի չգըտնէին: Սակայն ատոր փոխարէն Մոսկուա աչքերը յառած է Միջազգային դրամական հիմնարկին ողորմութեան, ամէն բան ընելով որ անոր դժգոհութիւն չպատճառէ:

Դրագէտին գրութիւնը կ'աւարտի Ռուսաստանի ժողովուրդին ուղղուած կոչով մը որ դինք կը կանչէ ապստամբելու հանդէպ՝ հասարակաց մահացու թշնամիին:

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

# ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ «ԿԵՆԱՑ ԵՐԳԵՐ» ԳԻՐՔԸ

(Ր. եւ վերջին մաս)

*Ցովհաննէս Թումանեան առիթով մը հետեւեալը գրած է երաժշտութեան նշանակութեան մասին. «Դուք դիտէք, որ ես չատ եմ սիրում հին խօսքը: Եւ ահա մի հին զրոյց, որ սիրել եմ առանձնապէս, էսպէս է ասում: Պատահեց, ասում է, որ մի ժամանակ զազան զարձաւ քնքուշ ու բանական մարդը: Ինչ արին – չարին հնար չեզաւ զազանը նորից մարդ զարձնելու: Վերջը յայտնուեց, որ հնարը միայն երգը – երաժշտութիւնն է: Էս զրոյցը չատ է երկար, ես կարճն եմ ասում, բայց որ ասում եմ, սիրել եմ առանձնապէս, զրանից էլ կ'իմանաք, թէ ինչ նշանակութիւն եմ տալիս երաժշտութեանը»:*

*Անդինէ Մուրատեան իւնք եւս ոչ միայն մեծ նշանակութիւն տուած է երաժշտութեան եւ երգին՝ հասնող սերունդներու, ինչպէս նաեւ ընդհանրապէս ժողովուրդի դաստիարակութեան մէջ, այլեւ այդ առաքելութեան նուիրումը զարձուցած է կեանքի նպատակ: Ան ամբողջ կէս զար նուիրուած է հայ երգին ու երաժշտութեան, տարածման, ո՛չ միայն իւնք մեկնաբանելով եւ հնչեցնելով բեմերէ, այլեւ ուսուցանելով երգն ու երաժշտութիւնը հայկական վարժարաններու աշակերտութեան: Գիտակցելով այն ճշմարտութեան, թէ ազնիւ հոգիներն են որ կրնան հասկնալ երաժշտութեան արժէքը եւ ստեղծել զայն, իսկ փոխադարձաբար՝ երաժշտութիւնն ալ ստեղծող ուժն է ազնիւ հոգիներու, Անդինէ Մուրատեան՝ իբրեւ արուեստագիտուհի եւ դաստիարակ՝ իր ազնիւ ձգտումները արտայայտած է երաժշտութեամբ եւ անոր ուսուցումով ջանացած է ազնուացնել հոգիները իր խնամքին յանձնուած սերունդներուն:*

*Ու այսօր, կէս զարու վաստակով բեռնաւորուած յորելեար արուեստագիտուհին ու մանկավարժը՝ Անդինէ Մուրատեան, մեզի կը հրամցնէ ազգային, հայրենասիրական, ժողովրդական, ազգագրական երգերու հաւաքածոյ մը, տեսակ մը ծաղկաքաղ՝ կատարուած ցայժմ հրատարակուած երաժշտական հաւաքածոներէն եւ երգարաններէն: Ան հայ երգի հարուստ զանձարանէն ընտրած է ամբողջի երգեր, որոնք կը նպատակեն մանուկներու եւ ընդհանրապէս հայ մարդուն մէջ ժողովրդական բառ ու բանի, քնութեան, աշխատանքի, ազգի եւ հայրենիքի հանդէպ սիրոյ զգացումներ յառաջացնելու:*

*«Ապրիլ» հրատարակչատունէն լոյս տեսած երգարանը, որ կը կրէ «ԿԵՆԱՑ ԵՐԳԵՐ» խորագիրը, բաղկացած է 218 էջերէ եւ կը բովանդակէ 106 երգեր, որոնք բաժնուած են 6 զբաղմունքներու տակ՝ հայրենասիրական, յեղափոխական, հոգեւոր, ժողովրդական, աշուղա – դուստանական եւ հեղինակային: Նկատի առած այն՝ որ գիրքը սահմանուած է 9 տարեկանէն վեր դպրոցականներու համար, հեղինակը երգերուն նօթագրութիւնը յարմարցուցած է պատանիներու ճայնածաւալին: Հայերէն լեզուի դժուարութիւն ունեցողներուն օգտակար ըլլալու նպատակով իւրաքանչիւր երգի հայերէն բառերու կողքին տրուած են նաեւ լատինատառ հայերէն բառերը:*

*Իւրաքանչիւր գլուխի տակ զետեղուած երգատեսակներու մասին Անդինէ Մուրատեան տուած է օգտակար դիտելիքներ: Այսպէս, հայրենասիրական եւ յեղափոխական երգերուն յատկացուած բաժնին մէջ խօսելով յեղափոխական երգերու ծնունդին մասին եւ չեշտելով ազատութեան, պայքարի, ոգիի երգերու դերը պատանիներու ազգային դիտակցութեան, ազատախրութեան ոգիի ամրապնդման մարզերուն մէջ, հեղինակը նշած է, թէ՝ «պատանին Հայոց լեզուի ու գրականութեան, ժողովուրդի պատմութեան ժամերուն սորվելով մեր հերոսական պայքարի պատմութիւնը այդ երգերուն դուռ դահեր, ամբողջական կը զառնայ չրջանի իր պատկերացումը»:*

*Հոգեւոր երգերու բաժնին մէջ տրուած են գլխաւոր չարականապիրներու մասին համառօտ ծանօթութիւններ, նչելով որ «հոգեւոր երաժշտութիւնը կը նպաստէ երեխաներու բարոյական կրթութեան եւ ազգային կերտուածքի ձեւաւորման»:*

*Ժողովրդական երգերու յատկացուած բաժնին մէջ հեղինակը կ'անդրադառնայ ժողովրդական երգերու ստեղծման, սերունդէ սերունդ փոխանցման, անոնց հաւաքման, մշակման, տարածման եւ ունեցած ազդեցութեան՝ մեր ժողովուրդին մէջ գեղեցիկ ճաշակը, ազգային ոգին ամրացնելու, ինչպէս նաեւ հայրենիքի, ծնողքի, քնութեան եւ աշխատանքի նկատմամբ սէր արթնցնելու մարզերուն մէջ:*

*Աշուղական – դուստանական երգերու բաժնին մէջ հեղինակը կը խօսի աշուղական արուեստի ամանաններուն, զարերու ընթացքին անոր զարգացման, չօչափած նիւթերուն եւ արժէքին մասին:*

*Դպրոցականներու, ինչպէս նաեւ ընդհանրապէս ընթերցողներու երաժշտական գիտելիքները ամբողջական զարձնելու նպատակով Անդինէ Մուրատեան առանձին բաժինով մը ներկայացուցած է զարերու ընթացքին մեր ժողովուրդին ստեղծած երաժշտական փողային, լարային եւ հարուածային նուագարանները, իրենց բացատրութիւններով եւ նկարներով: Ներդրանը ունի նաեւ երաժշտական եզրերու, ինչպէս նաեւ երգերուն մէջ զործածուած եւ դպրոցականներու համար դժուար հասկնալի նկատուած բառերու բացատրական բառարանները:*

*Եւ վերջապէս, հեղինակը իր աշխատութեան մէջ առանձին բաժին մըն ալ յատկացուցած է երգարանին մէջ ընդգրկուած երգահաններէն 28–ի համառօտ կենսագրականներուն, տալով հետաքրքրական տեղեկութիւններ անոնցմէ իւրաքանչիւրին կեանքին ու գործին մասին:*

*Խնդրք թէ Անդինէ Մուրատեանի հրատարակած երգարանը առաջին իսկ հայեացքով դասագիրք մը կարելի է նկատել, ուղղակի իր նպատակին ծառայող հրատարակութիւն մը: Մանրամասն թերթատելէ եւ քննարկելէ ետք հատորը, անվերապահ կերպով կրնանք վկայել, որ հեղինակը լիովին յաջողած է իր նպատակին մէջ: Թէ ի՛նչ եղած է հեղինակին նպատակը, այդ մասին երգարանի յառաջաբանին մէջ ան հետեւեալը գրած է. «Ոգ եւ Ակնք Փիլիպոս վարժարանին մէջ երկար տարիներու երգի, երաժշտութեան եւ մանկավարժական փորձառութեամբս վըկայած եմ աշակերտներու սէրը եւ հետաքրքրութիւնը երգի հանդէպ: Մանկավարժներու եւ ծնողներու թելադրութիւնները զիս քաջալերեցին եւ մղեցին որ երգարան մը պատրաստեմ ու հրատարակեմ: Կը փորձեմ թէ այս աշխատանքով երգարուեստի բնագաւառին մէջ քայ մը լեցուցած կ'ըլլամ, օգտակար հանդիսանալով մեր նոր սերունդին»:*

*Արդարեւ, կարելի է հաստատել որ Անդինէ Մուրատեանի լոյսի, բծախնդիր աշխատանքի եւ հայ երգարուեստի նկատմամբ իր տածած ջերմ սիրոյ արդասիքը հատանքի եւ հայ երգարուեստի նկատմամբ իր տածած ջերմ սիրոյ արդասիքը հանդիսացող երգարանը իր բովանդակութեամբ, ճաշակով ու որակով ընտրուած երգերով եւ հարուստ բազմակողմանի դիտելիքներով յոյժ օգտակար հատոր մըն է, դաստիարակչական եւ ուսուցողական տեսակէտներով: Հատորը հին դասական, ծանօթ եւ տարածուած երգերու կողքին կը բովանդակէ նաեւ ոչ միայն վերջին տասնամեակին՝ Արցախի ազատագրական պայքարի չունչին տակ ծնունդ առած հայրենասիրական երգեր, այլեւ ցայժմ Սփիւռքի մէջ անծանօթ մնացած կամ հազուադէպ հնչած հայրենի երգահանութեան ստեղծագործութիւններ:*

*Վերջացնելէ առաջ Անդինէ Մուրատեանի «ԿԵՆԱՑ ԵՐԳԵՐ» գիրքին ներկայացումը, հոս անհրաժեշտ է կատարել նչում մը կամ ճշդում մը, երգարանի հայրենասիրական բաժնին մէջ ընդգրկուած «Զարդին» երգին առընչութեամբ: Երգին բառերը գրած է Հրաչեայ Բեզլարեան, իսկ երաժշտութիւնը՝ Ալեքսէյ Հեքիմեան. երկուքն ալ Ղարաբաղցի: 1993–ի Սեպտեմբերին Երեւան կատարած այցելութեանս հանդիպում մը ունեցած էի լրագրող – դրագէտ Հրաչեայ Մաթեւոսեանի հետ, որ այդ օրերուն նոր վերադարձած էր Ղարաբաղէն: Մեր զրոյցի ընթացքին Հրաչեայ Մաթեւոսեան խօսելով Ղարաբաղի մէջ իր ունեցած հանդիպումներուն մասին, յուզիչ դրուագ մը կը պատմէր Հրաչեայ Բեզլարեանի զաւկին մասին: Երբ հարցուցի թէ Հրաչեայ Բեզլարեանը ան չէ՞ որ գրած է «Ղարաբաղին» հոչակաւոր երգին բառերը, Հրաչեայ Մաթեւոսեան պատասխանեց. «Այո՛, լաւ յիշեցիր, ես այդ մասին հետաքրքիր զրոյց ունեցայ Հրաչեայ Բեզլարեանի հետ: Ներան տասայի, Հրաչեայ, դա ի՞նչ բանաստեղծութիւն է, լաւ ես ասել որ Ղարաբաղցին հիւրասէր է, բարի, սրտաբաց, բարեկամ, չինարար, դիտնական ու զօրավար, բայց ի՞նչ է նշանակում՝ «վատ ընկերոջ համար անգամ, կեանքը կը տայ Ղարաբաղցին»:*

*Հրաչեայ Բեզլարեանը ժպիտով պատասխանեց ինձ. «Ես այդպէս չեմ զրել, այլ զրել եմ՝ «Լաւ ընկերոջ համար, անգամ կեանքը կը տայ Ղարաբաղցին». պարզ չէ՞ որ Ղարաբաղցին էնքան էլ չիմար չէ որ իր կեանքը տայ «վատ ընկերոջ համար»: Այս ճշդումը չատ կարեւոր է պարարտ ցիի ընկերասիրութեան ըմբռնումը ձիւրմանկարաններու տեսակէտէն:*

*Անդինէ Մուրատեան մանկավարժներու եւ ծնողներու թելադրութիւններէն քաջալերուած հրատարակած է երգարան մը: Այժմ կարզը զարձեալ մանկավարժներուն եւ ծնողներուն է քաջալերելու հեղինակը, անոր գիրքը տարածելով մէնուրեք եւ օգտակար հանդիսանալով մեր նոր սերունդին, որպէսզի հեղինակը կարենայ իրականացնել իր խոստումը՝ երկրորդ հատոր մը եւս հրատարակելու, այս անգամ 3 – 8 տարեկան փոքրերու համար:*

ՀՐԱՆԴ ԱՃԵՄԵԱՆ

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ

ԵՐԱՋԱՅԻՆ ՀԱԼԷՊԸ

# ՋԱՐԵՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

ԽՄԲ.– 1989 Մայիս 20–ին, այսինքն 10 տարի առաջ, փարիզեան հիւանդանոցի մը մէջ իր մահկանացուն կը կնքէր հրապարակագիր – գրագէտ, հիմնադիր «Նայիրի»ի (նախ Հալէպ, ապա Պէյրութ), հեղինակ բազմաթիւ հատորներու Անդրանիկ Ծառուկեան: Մարմինն ալ ամփոփուեցաւ Պանեէօ–Փարիզիէն գերեզմանատան

Տպուած առաջին քանաստեղծութիւնը ու քաղուած առաջին համբոյրը՝ միեւնոյն համը ունին: Եւ ի վերջոյ կ'ուսենան նոյն ճակատագիրը: Անմոռանալի՛ ապրումներ, անմոռանալի՛ երջանկութիւն՝ մինչեւ որ տեսնենք թէ այդ բոլոր «անմոռանալիները» զարձած են ... մոռցուած, ժպտուն յիշատակ:

Սա ողբմալի քերթուա՞ծն էր, որ երբ ապրեցաւ, կարծեցինք թէ անմահութեան սանդուխին առաջին աստիճանն է որ կը կոխենք: Ու երազային այն աղջիկը, որուն համար դիւերներ լուացուցինք, այս արարա՞ծն է, որ հիմա...

Ոչ: Աղջիկը եւ համբոյրը իրենց տեղը մնան: Ժամանակին անդուէն աւերածութեան վրայ՝ չաւելցնենք նաեւ բառերուն չար անպատասխանատուութիւնը: Բայց ոտանաւորը ոչ ոքի վնաս կրնայ հասցնել, հետեւաբար ներելի է ոգեկոչել տասչափեայ «անմոռանալին»:

Նախակրթարանի 6–րդ դասարանին – զարե՛ր առաջ – մեր զրադարաններէն մէկն էր վիճիլ՝ ամէնէն բառը «ե»ո՞վ կը զրուի թէ «է»ով: «Ե»ականներն ու «է»ականները վկայութիւններ կը հաւաքէին ի նպաստ իրենց տեսակէտին, զանազան ընթերցումներէ, մասնաւորաբար տարեզիրքերէն:

– Ռուբէն Զարդարեան, Գրիգոր Զօհրապ – է–ո՛վ...

– Արփիար Արփիարեան, Երուանդ Օտեան – ե–ո՛վ...

Ցաղթական էր՝ ով որ չատ անուն կարենար յիշել ի նպաստ իրեն: Այդպէս, օր մը, կարկուտի արագութեամբ անուններ կը տեղայինք իրարու վրայ ընկերոջս Օննիկին հետ, երբ իմ կարգիս դոչեցի.

– Ցովհաննէս Ասպետ, Օննիկ Զիֆթէ – Սարաֆ – ե–ո՛վ:

– Այդ երկուքն ալ նոյն մարդն են, բաւ Օննիկ սպազարիւն, մէկ անգամէն կոտրելով համազարկիս թաթը:

– Ո՛չ, տարբեր են:

– Ինչէ՞ն լինչ:

– Փախլաւա:

Այս ալ խաղին մաս կը կազմէր: Հազիւ տարակարծութիւն մը սկսած, զրաւի կուգայինք եւ կորնգնողը դատապարտուած էր վճարելու փախլաւան, սինեման կամ պազպազակը: Կորնգնուցի՛: Բայց այս անգամ դժուար էր մարսել պարտութիւնս: Դատարանին «դրագէտն» էի, իսկ Օննիկը, հակառակ միշտ առաջինը ըլլալուն, չարագրութիւնները լինձի դրել կուտար եւ թմաւարանութեան բոլոր խնդիրներս ինք կը լուծէր, երկրորդ դատարանէն մինչեւ վեցերորդը: Եղածը ուրիշ բան չէր ուրեմն, եթէ ոչ ամօթալի պարտութիւն մը իմ սեփական կալուածէս ներս, ինչ որ կը կրկնապատկէր դառնութիւնս: Նուաստացում մը պարզապէս:

Թէ ինչպէս Օննիկը ինձմէ առաջ կըրնար զիւտած ըլլալ Ցովհաննէս Ասպետին եւ Օննիկ Զիֆթէ – Սարաֆին նոյն անձը ըլլալը՝ դժուար չէր բացատրել: Գրաչէմին հետ մասամբ անուանակից ըլլալ հաւանաբար աւելի սրած ըլլալու էր իր հետաքրքրութիւնը, կամ, պարզապէս պատահմունք մըն էր: Զարմանալին ի՞նչ պարագաս էր: Ի՞նչ հմայունքով այդքան ինքնավստահ կրնայի եղած ըլլալ:

Գիտակից համոզումէն աւելի՝ ենթադիտակցական վիճակ մը ըլլալու էր պատճառը: Արդարեւ, ի՞նչպէս ընդունիլ որ ապպետը, բոլոր վեմ ու վիպային արժանիքներուն խտացումը կազմող բառը, համանիշ ընդունուէր չուկայիկ սապաֆին: Եթէքն ճարուած այս բացատրութիւնը ինքնարդարացումի միխիթարանք մը կըրնար սեպուիլ թերեւս, բայց իրողութիւնը այն էր, որ Օննիկը չահեցաւ ու փախլաւան կերաւ: Ինծի վրայ մնաց սպասել եւ որոճալ փոխվրէժի պատեհութիւնը:

Թէեւ պարտութիւն մը կրած էր Օննիկ բանաստեղծութեան ճամբուն վրայ, բայց առիկա աւելի չատ արկածի մը զնացիր ունէր, քան թէ իսկ կազմէ փոխվրէժի յաղթեցում մը կրնար սեպուիլ: Միչտ կը կրկնէր.

– Բանաստեղծութիւնը ինչ է ոտ: Մտաներուդ վրայ վանկերը կը հաշրես, հաշիւ կ'ընես, կը գրես:

– Հապա տողերուն վերջի յանգե՞րը ինչ կ'ընես:

– Ատոնք գիւրին են, իրենք իրենց կուգան: Օրինակ՝

Հինգ կանգուն կարմիր կտաւ,
Արեւը մարր մտաւ...

– Եթէ այդքան գիւրին կը վարձես, անդամ մը փորձէ:

Մարտահրաւէր մը ըլլի, որպէսզի ըրնայանգով մխասին ոտանաւոր մը գրենք, տեսնենք ո՞վ տակը կը մնայ: Նիւթը ոչոչեցաւ – Արա Գեղեցիկ եւ Շամիրամ: Սերտողութեան պահ մըն էր: Պր. Իւլպէկեանը լաւ սովորութեան գանի մը անպատմ երթեւեկեց նստարանները մի–ջանցքին, բացատրական լուսերիւնը ապահովեց, եւ քաչուած իր ամպիոնը կը կարգար: Մենք Օննիկին հետ մեր անկիւնը մեր ոտանաւորին վրայ էինք: Ես տուած էի առաջին տողը.

Ու Շամիրամ երբ լսեց գեղն Արայիի

Օննիկ, առանց մեծ դժուարութեան փակցուց յաջորդ տողը.

Իր սրտին մէջ ուժեղ կրակ մը ինկաւ:

Քիչ մը տափակ էր եւ անբանաստեղծա-

կան, բայց չէի կրնար առարկել: Որոշեցի նիւթը ընդլայնել եւ հակառակորդս քաշել փորձառուոր դեմին մը, ու գրեցի.

Իսկ ամօթխած Նուարդն այնտեղ
սրտատրոփ՝

Այստեղ բառական անճրկեցաւ Օննիկ, գրեց, ջնջեց, գրեց՝ ու դուրս եկաւ.

Իր Արային աւն կը սպասէր մտահոգ...

Առարկեցի յանդերուն: Սրտատրոփին՝ մահտղը չէր բռներ: Ու յետոյ, իր տողին մէջ ենթական կրկնուած է, «ան»ը աւելորդ է, քանի որ Նուարդը, տէր բային, դեռ ուժին մէջ կը մնայ: Մահտղը յաջողեցաւ անտփոփ ընել, մինչ որ ընդունելի էր, բայց կը դժուարանար «ան»ը դուրս նետել եւ ինք իրեն դէմ կը մղեցնէր: Ինդալաթար ճանչը զօրացուցած էր եւ յուռ դասարանին մէջ կը լսուէր միայն Օննիկին եռանդուն պայքարը մահուներուն վրայ: Փորձեց «ակնդէտ» բառը գետեղել, բայց չեղաւ, վանկերը խանդարուեցան:

Ուսուցիչը գլուխը բարձրացուց, զարմացած, եւ բոլորակի նայուածքով մը նշդելէ ետք ճանչին տեղը, կամացուկ մը եղաւ եւ սկսաւ առաջնորդել ուշին մահուներն վրայ: Ես տեսայ, բայց փոխանակ արմուկովս զգուշացնելու Օննիկը, նստած տեղս չակուեցայ ու քիչ մը ետեւ ձգեցայ, ազատ ճամբայ տալով մօտալուտ հարուածներուն: Օննիկ պատին կողմն էր եւ ուսուցիչը իմ տեղէս պէտք է հանէր իրեն: Կը շարունակէր իր մեխոսութիւնը անիծեալ «ան»ին հետ: Ես կրնայի «դեռ» մը դնել տեղը, եւ տողը կը փրկուէր.

Իր Արային դեռ կը սպասէր
անսփոփ...

Բայց մրցումի մէջ էինք: Ուր տեսնուած է որ մրցակից մը օգնութեան հասնի իր հակառակորդին:

Ուսուցիչը, իմ քովէս ծռած, փլաւ Օննիկին վրայ երկու թեւերով եւ սկսաւ արագ – արագ հարուածել ծոծրակին, գլուխն, թմբուկ զարնելու պէս: Հոս ալ վերջ դաւ Օննիկին դրական գործունէութիւնը: Թող երթայ հանգնայ:

Տարիներ ետք, երբ այլեւս մեծ էինք եւ Պր. Իւլիպէյեանն ալ հանգստեան կոչուած բարի ծերուկ մըն էր, Օննիկ կը սիրէր կրկնել.

– Պարոն, դուք իմ մէջս բանաստեղծ մը մեղուցիք:

– Հոգ չէ, տղաս, կ'ըլլար պատասխանը, ընթերցող մը չհեգուցած եմ: Հայ գրականութիւնը հիմա աւելի շատ կարգացողներու պէտք ունի, քան թէ գրողներու...

. . . . . .

Մեր աւարտական դասարանը – աւելի քան երեսուն հոգի – ընդունած էր բանաստեղծի կոչումս, առանց փաստական տուեալներու, պարզապէս անոր համար թերեւս, որ միշտ բանաստեղծական գիրքեր կ'ունենայի ձեռքս: Բայց հոն եւս բացառութիւն կը կազմէր Օննիկը եւ ամէն չէր փախցներ խայթելու:

– Դուն բանաստեղծ չես կրնար ըլլալ:

– Ինչո՞ւ:

– Որովհետեւ ... թոքախտ չես:

– Ապո՛ւշ...

Որքան ալ կատակով ըսուած, թոքախտի հարցը աւելը մէկ կուղարձիք: Պատճառները կային այդ ուղղութեամբ մտահոգուելու: Պետրոս Դուրեանէն եաք, բոլոր բանաստեղծները թոքախտ էին ու ես բացառութիւն չէի կրնար կազմել – Մկրտիչ Պէշիկթաշլեան, Միսաք Մեծարենց, Մատթէոս Զարիֆեան, Վահան Տէրեան: Անշուշտ կային Վարուժանն ու Սիամանթօն ալ որ թոքախտ չէին, բայց ո՞վ կրնար պնդել թէ թոքախտը պիտի չհաւանէր անոնց ալ եաեւէն, եթէ թուքերը կանխած չըլլային...

Այո, մտածուելիք պարագայ մըն էր, բայց դեռ ժամանակ կար: Թոքախտ ըլլալու համար՝ աղջիկ պէտք էր, իսկ ես ոչ միայն աղջիկի հետ գործ չունէի դեռ, այլ ժամանակս կ'անցնէր մոլեռանդօրէն, երկու բեւեռներու միջեւ – Ֆութպոլը եւ ... պօքսը – որոնք վճռապէս կը ժխտէին թոքախտի հաւանականութիւնը:

Գիտեմ, նեղկայ տատանեալ վիճակս տեսնելով, ոմանք թերհաւատ պիտի ժպտին եւ պիտի չուզեն հաւատալ, բայց այդպէս է: Ֆութպոլի խումբիս ընկերները, փառք Տիրոջ, բոլորն ալ ողջ են եւ պէկյուրթ կ'ապրին – Մարութեան Աբրահամեանը, Զորպաճեան Զաւէնը, Սաաթճեան Կարապետը – եւ որոնք Սուրիա – Լիբանանի մարզական երկնակամարին ասպղերը դարձան, մինչ ես, Ֆութպոլի դասալիք, մուսաներուն խնկարկու եւ թոքախտի թեկնածու՝ ահա թէ ուր հասայ: Գալով պօքսին՝ դարձեալ կատակ չէ – դասընթա՛ց ունիմ – վկայ ... էտիկ պէյը:

Սկսած էի ոտանաւորներ գրել: Ամբողջ տետրակ մը լեցուն էր: Ցոյց կուտայի Օննիկին, կը կարդայի, իրմէ առաջ ես հիանալով գրածներուս եւ սպասելով որ բաժնէ խանդավառութիւնս: Իր պատասխանը միշտ նոյնն էր.

– Տետրակին մէջ ամէն մարդ կրնայ գրել: Մինչեւ որ թերթին մէջ չտպեն, արժէք չունի:

Ահա՛ ուրեմն այն դեռինը, ուր պէտք է լուծեմ վրէժս:

Ծուղակ մը լարողի թաքնամտութեամբ, անդամ մը եւս տետրակս թաւ տալի Օննիկին առջեւ – ինչպէս ցուլին կարմիր լաթ կը պարզեն – եւ ըսի.

– Ինչե՞ր կան ատոր մէջ: Եթէ ուզեմ՝ բոլորն ալ կը տպեն, բայց ես չեմ տար: Պետրոս Դուրեանը 20 տարեկան էր, ես դեռ 16 եմ...

Համեստութեան այս պեղումս անտարբեր թողուց Օննիկը, բայց երկու ոտքով նետուեցաւ ինկաւ ծուղակին մէջ, կլկլնելով իր յանկերգը – չեն տպեր:

– Կը տպեն, ինչո՞ւն ինչ:

– Սինեմա: Չեն տպեր...

– Լաւ, կը տեսնուինք ... սինեման:

Ցետոյ ճշդեցինք պայմանաժամը – մէկ ամիս: Մինչեւ ամիս մը եթէ որեւէ գրութիւն կարենամ տպել թերթի մը մէջ՝ չհաց եմ: Ամիսէն անդին, նոյնիսկ եթէ տպուի, կը կորանցնեմ:

Անցայ գործի: Տետրակս ետ առայ կը թերթեմ հա կը թերթեմ: Ո՞ր մէկը ընտրել: Բոլորն ալ գլուխ – գործոցներ են: Վերջապէս կեդրոնացայ հնչեակի մը վրայ, 15 տող – «Ցոյսին՝ որ կ'ուշանայ»: Ովկիանոսին վրայէն նաւ մը, առագաստները պարզած, կ'երթայ: Ասիկա՝ Ցոյսին նաւն է: Կղզի մըն ալ կայ: Բայց նաւը կղզիին չի մօտենար ու հեռուէն կ'անցնի: Իսկ կղզին՝ որեւէ կղզի մը չէ, այլ ... իմ հոգիս է: Այս չքեղ ստեղծագործութիւնը ընդօրինակեցի մեծ, լայնաձաւալ նամակի թուղթի մը վրայ, գիրերը հատիկ – հատիկ, բառերը հատիկ – հատիկ, իւրաքանչիւր տողին միջեւ մատ մը բացուածքով: Պէկյուրթի մէջ գրական թերթ մը լոյս կը տեսնէր, «Զահակիր», Վարդան Գէորգեանի խմբագրութեամբ: Ղրկեցի ու սպասեցի:

Ա. Ծ.

(Մնացեալը յաջորդով)

## Հռոմի հայ գաղութը տօնեց «Մայրերու Օր»ը

ՀՌՈՄ. –

Կիրակի, Մայիս 9 «Մայրերու Օր» էր Իտալիոյ եւ Եւրոպայի կարգ մը երկիրներու մէջ: Այս տարի, Հռոմի հայ գաղութը (առաջին անգամ ըլլալով) նշեց սոյն տօնը, փոքրիկ հանդիսութեամբ մը:

Նախքան տօնակատարութիւնը, Հռոմի Ս. Նիկողայոս հայ եկեղեցւոյ մէջ, Գերպ. Եղիա Եղիայեան հայածէս հանդիսաւոր պատարագ մատոյց, որու ներկայ եղան մեծ թիւով հայեր ու նաեւ հիւրեր՝ եկած Փարիզէն:

Փարիզի խումբը, Հռոմ եկած էր առաջնորդութեամբ Փարիզի Ս. Ցովհաննէս–Մկրտիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Աւետիս Ա. Քհնյ. Պալըքեանի, այցելելու՝ Վատիկանի թանգարանին մէջ «Հռոմ – Հայաստան» ցուցահանդէսը, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականացման 1700–ամեակի առթիւ:

Պատարագիչը ողջունեց Փրանսահայ հիւրերը անոնց բարի կեցութիւն մաղթելով, եւ ապա չնորհաւորական խօսք մը ուղղեց մայրերուն, անոնց տօնին առթիւ:

Ցաւարտ պատարագին ներկաները ուղղուեցան եկեղեցւոյ քովընտի սրահը, տօնելու մայրերու օրը: Օրուան հանդիսավարը Տիկին Սոնիա Նիւրիկէթլեան ողջոյնի խօսք արտասանեց ներկաներուն, եւ հրաւիրեց գաղութի հայ երիտասարդուհիներէն Օրիորդ Քրիստինէ Ցունանեանը, մայրերու տօնին առթիւ, իր իսկ պատրաստած սրտի խօսքը արտայայտելու:

Ապա բեմ հրաւիրուեցան գաղութի կիրակնօրեայ հայերէնի դասընթացքի հեռուղ մանուկները, իրենց դասատու Օր. Միշէլ Ժանժիլի հետ արտասանելու՝ մայրերու տօնին յատուկ ոտանաւորներ: Տըպաւորիչ էր անոնց ելոյթը, իւրաքանչիւր մանուկ, ձեռքը կարմիր վարդ մը բռնած՝ արտասանեց իր ոտանաւորը, ապա վարդը նուիրեց իր մօրը: Իսկ, 12–ամեայ Տիանա Կապրիէլեան, դաշնակի վրայ նուագեց Եղուարդ Պաղտասարեանի «Ումորէսք» եւ Ալնօ Բաբաջանեանի «Նոքթուրնօ» կտորները:

Երեւան ծնած ու հասակ առած Տիանա Կապրիէլեան հինգ տարեկանին սկսած է նուագել, վեց տարեկանին արդէն ընդունուած էր Երեւանի Զայքովսքի երաժշտական մանկապիտական դպրոցը, մասնակցած է բազմաթիւ մրցոյթներու Հայաստան եւ Եւրոպայի զանազան երկիրներուն մէջ, արժանանալով միշտ մրցանակներու:

Հռոմի հայ գաղութի փոխ–առնօպետ՝ Պ. Ռոպէր Աթթարեան փակման խօսքը արտասանեց, եւ հրաւիրեց ներկաները հիւրասիրութեան մը, որու ընթացքին փարիզահայ հիւրերը եւ Հռոմահայ ներկաները ընտանեկան ջերմ ու սիրալիր մթնոլորտի մը մէջ, առիթը ունեցան իրարու ծանօթանալու եւ խօսակցելու:

Ի դէպ, փարիզահայ խումբը այցելեց նաեւ Վատիկանի ռատիօկայանը ու նաեւ հայկական հաղորդումներու դրասենեակը: Հայկական հաղորդումներու պատասխանատու Միքայէլ Սրկ. Ժանժէյ տեղեկութիւններ տուաւ հայերէն ձայնասփոփումներուն մասին:

Այս առթիւ, Աւետիս Ա. Քհնյ. Պալըքեանի հետ տեղի ունեցած հարցազրոյցին, ան յիշեց, խումբին Հռոմ այցելութեան նպատակը, իր տպաւորութիւնները Ցաւիտենական քաղաքին մասին, ուրախութիւնը յայտնեց հանդիպած ըլլալուն Հռոմի հայ գաղութին հետ ու նաեւ կարգ մը տեղեկութիւններ տուաւ Փարիզի Ս. Ցովհաննէս–Մկրտիչ եկեղեցւոյ ու հայ գաղութին մասին:

Ս. Ն. Ժ.


# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ


ԳԼՈՒԽ Ե·

– Ինչ որ է ... երկու օր ետքը՝ իրիկունը, պանքայի անօրէնը այցելութեան կուգայ Տիկին Սկամպիլեանի: Այս վերջինը երեք հազար ոսկիի ատացագիրը կ'ուզէ: «Ի՞նչ երեք հազար ոսկի, ի՞նչ ատացագիր», – կը գոչէ անօրէնը: «Թորգոմին թերած ու քեզի յանձնած երեք հազար ոսկին», – կը պատասխանէ տիկինը: «Ես կիրակիէն ի վեր Թորգոմը չեմ տեսած՝ հետեւաբար իրմէ ալ որեւէ դրամ չեմ ստացած», – կ'ըսէ անօրէնը: Կրնաս երեւակայել տիկինին յուզումն ու չփոթութիւնը: Իսկոյն ծառան կը զրկէ ու բերել կուտայ Թորգոմը, որ կը ստիպուի խոստովանիլ, թէ դրամ չէ տարած պանքան:

– Հապա ի՞նչ ըրեր է, – հարցուց Արշամ:

– Երեք հազար ոսկին ամբողջն ալ փոքրի մէջ կորնցուցեր է:

– Բայց կարծեմ թ վիճակի է իր անձնական միջոցներով այդ գումարը հատուցանելու:

– Թորգո՞մը ... ո՛չ թէ երեք հազար ոսկի՝ այլ երեք հարիւր զրուշ ալ չի կըրնար տալ: Կործանած մարդ մըն է:

– Հօրմէն այնքան հարստութիւն ժառանգեց:

– Ամէնքն ալ կերաւ:

– Եղբայրը հարուստ է, թո՛ղ ան վնասը տուժէ:

– Երկու եղբայր իրարու հետ չեն տեսնուիր, սրդողած են:

– Այն ատեն ի՞նչ պիտի ըլլայ:

– Ի՞նչ կ'ուզես, որ ըլլայ, Տիկին Սկամպիլեան իր գրպանէն պիտի տայ երեք հազար ոսկին ... բայց խնդիրը այդ չէ, տիկինին վախը այն է, որ թերթերը կ'իմանան իրողութիւնը եւ կը գրեն ու իրենց անունը կ'արատաւորուի:

– Քանի որ ինք վնասը պիտի տուժէ, այն ատեն խնդիր մը չի մնար եւ ո՛չ ոք ըսելիք մը կ'ունենայ:

– Պիտի տուժէ, անշուշտ պիտի տուժէ, քանի որ ինք բացարձակապէս պատասխանատու է, մանաւանդ որ շատ լաւ գիտէր իր եղբօրորդիին նիւթական վիճակը, բայց ե՞րբ պիտի կրնայ այդ երեք հազար ոսկին տալ...

– Ի՞նչպէս երբ... պէտք է անմիջապէս վճարէ:

– Վճարելու համար այդ գրամը պատրաստ ունենալու է:

– Բայց Տիկին Սկամպիլեան հարուստ է:

– Այսինքն բանական կալուածներ ունի, որոնց հասոյթը իր ծախքերուն յատկացած է, իսկ պատրաստ գրամ չկայ մէջտեղ:

– Թո՛ղ կալուածներէն մին ծախէ կամ գրաւի դնէ:

– Ժամանակի կարօտ է ... անշուշտ կարգադրութիւն մը պիտի ըլլայ, ատոր տարակոյս չկայ... միայն թէ պէտք է, որ գործը ծածուկ մնայ, չհրապարակուի ու ճիշդ ատոր համար եկայ քեզ տեսնելու ուղղակի Տիկին Սկամպիլեանի կողմէ եւ խնդրելու, որ ձեր թերթին մէջ ոեւէ ակնարկութիւն չընէք այս խնդրին:

– Ես կը խոստանամ բան մը գրել չատ «Լապտերի» մէջ, մանաւանդ որ թէ՛ տիկինը եւ թէ Թորգոմ Սարուխեան հին բարեկամներ են:

– Շատ չնորհակալ եմ ուրեմն ... Տիկին Սկամպիլեանի կողմէ:

– Միայն թէ խնդիրը ատով չի լմննար, պէտք է երեք հազար ոսկին անմիջապէս հայթայթել, հակառակ պարագային չէք կրնար ամէնուն բերանը գոցել... ազդին գրամն է, ամէն մարդ իրաւունք ունի խառնուելու:

– Անշուշտ պիտի կարգադրեն:

Գուրգէն Գուրգէնեան դիւանագիտական խիստ կնճռոտ խնդիր մը յաջողապէս ի գլուխ հանած ըլլալու զոհունակութեամբ մեկնեցաւ խմբագրատունէն:

Խնդիրը սակայն կարելի չեղաւ ծածկել. կամաց – կամաց, ականջէ – ականջ, լուրը տարածուեցաւ: Թորգոմ Սարուխեան բանական հակառակորդներ ունէր, որոնք չէին ներեր երիտասարդին հպարտ ու արհամարհական վարմունքը, ազնուականի հովերը, մեծախոսութիւնները, մանաւանդ յորմէհետէ իր հարստութիւնն ալ հիւրերը անոնց բարի կեցութիւն մաղթելով, եւ ապա չնորհաւորական խօսք մը ուղղեց մայրերուն, անոնց տօնին առթիւ:

Ցաւարտ պատարագին ներկաները ուղղուեցան եկեղեցւոյ քովընտի սրահը, տօնելու մայրերու օրը: Օրուան հանդիսավարը Տիկին Սոնիա Նիւրիկէթլեան ողջոյնի խօսք արտասանեց ներկաներուն, եւ հրաւիրեց գաղութի հայ երիտասարդուհիներէն Օրիորդ Քրիստինէ Ցունանեանը, մայրերու տօնին առթիւ, իր իսկ պատրաստած սրտի խօսքը արտայայտելու:

Ապա բեմ հրաւիրուեցան գաղութի կիրակնօրեայ հայերէնի դասընթացքի հեռուղ մանուկները, իրենց դասատու Օր. Միշէլ Ժանժիլի հետ արտասանելու՝ մայրերու տօնին յատուկ ոտանաւորներ: Տըպաւորիչ էր անոնց ելոյթը, իւրաքանչիւր մանուկ, ձեռքը կարմիր վարդ մը բռնած՝ արտասանեց իր ոտանաւորը, ապա վարդը նուիրեց իր մօրը: Իսկ, 12–ամեայ Տիանա Կապրիէլեան, դաշնակի վրայ նուագեց Եղուարդ Պաղտասարեանի «Ումորէսք» եւ Ալնօ Բաբաջանեանի «Նոքթուրնօ» կտորները:

Երեւան ծնած ու հասակ առած Տիանա Կապրիէլեան հինգ տարեկանին սկսած է նուագել, վեց տարեկանին արդէն ընդունուած էր Երեւանի Զայքովսքի երաժշտական մանկապիտական դպրոցը, մասնակցած է բազմաթիւ մրցոյթներու Հայաստան եւ Եւրոպայի զանազան երկիրներուն մէջ, արժանանալով միշտ մրցանակներու:

Հռոմի հայ գաղութի փոխ–առնօպետ՝ Պ. Ռոպէր Աթթարեան փակման խօսքը արտասանեց, եւ հրաւիրեց ներկաները հիւրասիրութեան մը, որու ընթացքին փարիզահայ հիւրերը եւ Հռոմահայ ներկաները ընտանեկան ջերմ ու սիրալիր մթնոլորտի մը մէջ, առիթը ունեցան իրարու ծանօթանալու եւ խօսակցելու:

Ի դէպ, փարիզահայ խումբը այցելեց նաեւ Վատիկանի ռատիօկայանը ու նաեւ հայկական հաղորդումներու դրասենեակը: Հայկական հաղորդումներու պատասխանատու Միքայէլ Սրկ. Ժանժէյ տեղեկութիւններ տուաւ հայերէն ձայնասփոփումներուն մասին:

Այս առթիւ, Աւետիս Ա. Քհնյ. Պալըքեանի հետ տեղի ունեցած հարցազրոյցին, ան յիշեց, խումբին Հռոմ այցելութեան նպատակը, իր տպաւորութիւնները Ցաւիտենական քաղաքին մասին, ուրախութիւնը յայտնեց հանդիպած ըլլալուն Հռոմի հայ գաղութին հետ ու նաեւ կարգ մը տեղեկութիւններ տուաւ Փարիզի Ս. Ցովհաննէս–Մկրտիչ եկեղեցւոյ ու հայ գաղութին մասին:

Ս. Ն. Ժ.

մսխած էր ու կարող չէր չուրջը հաւկատակներու եւ չողոքորթներու չքախումբ մը ունենալ: Թորգոմի հակառակորդներուն գլխաւորն էր Աթիկ պէյ, որ բնականաբար տեղի ունեցած դայթակղութիւնը չուտով իմացաւ: Իր առաջին գործը եղաւ վազել երթալ «Լապտերի» խմբագրատունը, կէսօրէն յետոյ, ճիշդ այն միջոցին, ուր պիտէր թէ խմբագիրները չատ գրաղում չունէին, եւ խմբագրատունը այցելուներով լեցուած կ'ըլլար:

– Գրեցի՞ք այս եղած խաղբութիւնը – գոչեց ներս մտնելով:

– Ի՞նչ խաղբութիւն, – հարցուց խմբագրապետը:

– Երեք հազար ոսկիին խնդիրը..

– Ո՞ր երեք հազար ոսկիին խնդիրն է:

– Ի՞նչպէս կ'ըլլայ, որ չէք գիտնար, դուք, որ իրը թէ ամէն բան ժամը ժամին կ'իմանաք ... գիտէք անշուշտ, բայց գործերնուդ չի գար երեւան հանել, որովհետեւ գեղծարարը մեծ ընտանիքէ է, բարձր դասու կը պատկանի, ազդեցիկ ազգականներ ու բարեկամներ ունի... ասդին խեղճ ժամկոչ մը կամ լուսարար մը ըլլի, եթէ քանի մը հարիւր զրուշի գեղծում մը ընէ, մատերնիդ կը փաթթէք, աչխարհ իրար կ'անցընէք, չարաթներով կը գրէք, անդին երեք հազար ոսկին մէկէն կը տանին, ու լուռ կը մնաք ... ո՞ւր է Արշամ էֆէնտին, անիկա իմացած ըլլալու է, բայց իր թերթին մէջ չուզեր գրել, որովհետեւ Գուրգէն Գուրգէնեանը իր բարեկամն է. ասանկ լրագրութի՞ւն կ'ըլլայ:

– Բայց դեռ չըսիր, թէ եղածը ի՞նչ է:

(Շար. 26)

(Շար. Ա. Էջէճ)

*թանակի խմբագրատներուն մէջեւ բանախոսներ տեղի ունեցած են Մայիս 11–ին Սիլոփիի չրջանին մէջ, պատճառ ըլլալով երկու կողմէն ալ բազմաթիւ զոհերու: Քրտական ազբիւրները կը պնդեն որ թըրքական բանակի ուժերը քիմիական կազի դլխանոցներով հրթիռներ արձակած են քիւրտ գինեալներուն վրայ ու պատճառ եղած անոնցմէ 20 հոգիի մահուան: Քիմիական կազով մահացած մարտիկներու դիակները եւ այդ հրթիռներուն դլխանոցներուն բեկորները չուտած-ին որպէս վաստ ներկայացնելով, Քիւրտիստանի ժողովրդական ազատագրութեան բանակին պատասխանատուները կոչ ուղղած են միջազդային հաստատութիւններու եւ ՄԱԿ–ի քննիչ մարմիններուն որ տեղւոյն վրայ աւուդեն կատարուածը եւ դատավճիռ արձակեն: Նոյն ազբիւրները լսելով որ թըրքական բանակը ամէն անդամ որ նեղ կացութեան կը մատնուի բարբարոսութեան կը դիմէ, կը յայտնեն որ անցեալ Հոկտեմբերին ալ Տէրսիմի մէջ թըրքական բանակային ուժեր քիմիական դլխանոցներով ռումբեր արձակած էին:*

*ԳՈՐՍԻԲԱՑԻ ՆԱԽԿԻՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ՝ Պոնէ հերքեց կնոջը յայտարարութիւնը «Լա վուա ամէ Նոր» թերթին, ուր ան ըսած էր թէ ամուսինը յայտնութիւններ ունէր ընելիք նահանդապետ Էրինթաքի ապտնութեան մասին: Կը խորհի որ չմոռցած մնոջ մը խօսքերն են:*

## ՆՈՒԷՐ

*Ի յիշատակ Էօժէնի Գավալճեանի, Յակոբ Սապունճեանի, Մարի Գրպէշեանի, Գրիգոր Սարաֆեանի եւ Անահիտ Արապեանի, Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Ամանահիւղը 1000 Ֆր. կը նուիրէ Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Սեւրանի Տ. Մխսքեան մանկահիւղի դպրոցին:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Կապոյտ Խաչի Ասպիկ մանկահիւղը չնորհակալութեամբ ստացած է 500 Ֆր. փոխան ծաղկեպսակի Անահիտ Արապեանի մահուան առիթով:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ՝
1918 ՄԱՅԻՍ 28

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

# ՁԱՇ - ՓԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*
*Հ.Յ.Դ. «Զաւարեան» խումբին*

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրբենկիլեան"
*մանկահիւղին*

*մանակցութեամբ՝*
ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ–ի
*եւ Անի նուագախումբին*

Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ

Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX

Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

# Bureau d'Information du Haut-Karabagh

## Communiqué

Situé au 34, avenue des Champs-Elysées, le Bureau d'Information Socio - Politique du Haut-Karabagh fonctionne de manière régulière depuis mi-octobre 1998. Le travail le plus important de notre Bureau Officiel de Représentation et de l'Association de Soutien au Haut-Karabagh consiste à développer des relations permanentes avec la presse française, ainsi qu'une communication active au sein des institutions européennes et françaises. Nos contacts permanents avec la coprésdience française du Groupe de Minsk de l'OSCE et le Ministère des Affaires Etrangères facilitent l'échange d'information politique et diplomatique sur la région caucasienne, sur le conflit du Haut-Karabagh. L'Associaiton de Soutien au Haut-Karabagh s'est formée avec l'objectif de soutenir le peuple du Haut-Karabagh en général, et le Bureau de Représentation, en particulier. Le Conseil d'Administration, élu en novembre 1998, est constituée de :

**M. Michel Deryeghiyan, Président, M. Alexis Govciyan, Secrétaire, M. Stéphane Papazian, Trésorier, M. Onnig Antranik Tfenkdjian, Conseiller, M. Gilbert Taros Kerkerian, Conseiller.**

En adhérant à l'Association de Soutien au Haut-Karabagh, en la soutenant en tant que membre actif ou bienfaiteur, vous ferez partie de la volonté de notre communauté plus que réelle pour la reconnaissance et l'indépendance. Vous recevrez également le journal de l'Association, ainsi que des invitations à différents événements ou activités, organisés par nos soins à Paris ou en Province (conférences, colloques, concerts...).

Au nom des autorités du Haut-Karabagh, de nos membres fondateurs et de notre Bureau, nous vous remercions de vous joindre à nous.

— — — — — — — —

BULLETIN D'ADHESION

Nom : .....
Profession : .....
Adresse : .....
.....
Tél. : ..... Fax : .....
E-mail : .....

Je désire adhérer à l'Association de Soutien au Haut-Karabagh

☐ Membre actif
Cotisation annuelle : 500 FF

☐ Membre bienfaiteur
Cotisation annuelle : 5 000 FF

☐ Je fais un don de
Montant : .....

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

## Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻՋ

Շաբաթ, Մայիս 22
Յիշատակ Աշխարհազօրաց
եւ Զօրավարացն Հայոց, որք կատարեցան
ի Հերոսամարտին Սարդարապատի
1918 Ամի,
վասն հաւատոյ եւ հայրենեաց

*Այս առթիւ, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 16·30–ին, կիրակամուտի ժամերգութիւն կը կատարուի եւ Հոգեհանդիստ Սարդարապատի հերոսներուն համար:*

*Կը հրաւիրուինք ամէնքս այդ օր՝ ազօթքով եւ ինքնամփոփ ներկայութեամբ վեր քոնորոգել մեր յարգանքը այդ հերոսներու յիշատակին:*

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28–ին)
Հոչակման 81–րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18–ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու ատենին Հանրապետական Մարթանք կ'ելլայ Հայաստանի Հանրապետութեան եւ բարգաւաճման համար:*

# Fête Paroissiale

LUNDI DE PENTECOTE
24 MAI

AU PROGRAMME :

11h30 : *Culte;*

A partir de 12h : *Repas*
*Spécialités arméniennes;*

Stands :
*Pâtisseries arméniennes*
*Librairie, Brocante, etc...*
*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE ARMENIENNE

55, avenue Victor-Cresson /
28, avenue Bourgain
92130 ISSY-LES-MLX

**le Centre Culturel SAINT MESROB à PARIS**
**expose du 18 au 28 mai**
LES PHOTOS GRANDEUR NATURE DES

# VITRAUX

réalisés par **Reine AVEDISSIAN**
sur le thème :

L'ART ET LA RELIGION,
SYMBOLES DE PAIX
Les sentiments religieux
dans l'Architecture et l'Art
sous les diverses formes
dans les grandes civilisations.

10 bis, rue Thouin — Paris Ve
Entrée libre — Cocktail

**(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)**
Tél. : 01 44 59 23 50
ou 01 40 51 11 90

Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

RENCONTRE avec
**Antoine AGOUDJIAN**
à l'occasion de la parution de son livre
**REVES FRAGILES**
**Arménie**
Photographies Antoine Agoudjian
Texte Gérard Guégan
**VENDREDI 28 MAI à 20h45**
Présentation
Débat
Dédicaces

9, rue de Madrid — 94140 ALFORTVILLE
Tél. : 01 43 76 55 89 - Fax: 01 43 78 66 64

## UGAB — MARSEILLE

# *Colonie de Vacances*

**Pour la 16e fois l'UGAB organise sa colonie mixte pour les enfants de 7 à 14 ans du Vendredi 2 Juillet au Vendredi 23 Juillet**

Elle aura lieu cette année comme l'année précédente
à CHAILLOL LA VILLETTE (Hautes-Alpes).

**Prix :** Voyage (Marseille à Marseille) et activités compris
3 400 Francs pour 1 enfant
6 200 Francs pour 2 enfants

*Pour tous renseignements veuillez contacter l'UGAB au :*
327, Bd. Michelet — 13009 MARSEILLE
Tél. : 04 91 22 10 45 — 06 03 74 16 99

★

# *Pension Familiale de l'U.G.A.B.*

**du Samedi 24 Juillet (à partir de 14h)**
**au Samedi 31 Juillet (au matin).**

**Prix :** Pension complète
250 F / jour ((par personne)
1500 F / 7 jours (par personne).

l'U.G.A.B. recrute des *Animateurs — Animatrices* pour sa *Colonie de Vacances* de juillet avec B.A.F.A. complet, envoyer C.V. + photo au :
327, Bd. Michelet — 13009 MARSEILLE

## ESPOIR POUR L'ARMENIE

organise

# un Voyage de tourisme humanitaire

**DU 12 AU 19 JUILLET**

— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.

*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES

# PÈLERINAGE EN ARMÉNIE

**A L'OCCASION DE LA VISITE HISTORIQUE DU PAPE JEAN-PAUL II**
**LES 2, 3 ET 4 JUILLET**

**Programme:** Participation à toutes les cérémonies. Visite aux lieux saints les plus importants de l'Arménie chrétienne : Khor Virab, St. Etchmiadzine, Ste Hripsimé, Ste Gayané, Haghpat, Odzoun, Sanahine, Noravank, Guéghart, Erevan, Gumri, Garni, Dilidjan, Guétharis, Sevan, Dzaghgatsor.
**Date : VOYAGE DU 1er AU 8 JUILLET**
**Conditions** : Tous frais inclus (sauf visa et taxe d'aéroport à Erevan)
**7 200 F** depuis Paris et la Région Parisienne
**7 400 F** depuis la Province (Lyon, Marseille, Nice)
**Renseignements et inscriptions :**
Par téléphone : **01 40 51 11 90 / 01 44 59 23 50** (de 9h à 18h).
**Les inscriptions seront closes le 10 juin.**

ՈՒՐԲԱԹ
ՄԱՅԻՍ 21
VENDREDI
21 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·645 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.645

*ՔՈՍՈՎՕ*

## ՕԹԱՆ-Ի ՄԷԿ ՆՈՐ «ՍԽԱԼ»Ը ՌՈՒՄԲԵՐ ՀԻԱՆԴԱՆՈՑԻ ՄԸ ՎՐԱՅ

### ԵՐԵՔ ՄԵՌԵԱԼ

### ԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մամուլի Պելճա անկախ գործակալութիւնն է որ հաղորդեց Մայիս 20–ին, թէ նախորդող գիշերը ՕԹԱՆ–ի ռումբերը լինած էին նաեւ Պելկրատի կեդրոնէն ե–րեքուկէս քիլոմեթր անդին Տէմինժէ գտնուղ Տրակիլա Մխոովիչ հիւանդանո–ցը ուր առաջին հաշուեկշիռի մը համա–նայն 3 մեռեալ կար հիւանդներուն մէջ։ Այս ռումբերը կը տեղան, մինչ հոս – հոն խօսակցութիւնները կը չարունակուին, Ջերնոմիրտին կ'երթայ – կուգայ եւ ժապ ներաք ալ լաւատես է եւ չի վարանիր ը–սելու թէ գալ չարթու ամէն բան կը կար–գադրուի։ Եւ եթէ այդպէս է, ինչո՞ւ ռումբերը կը չարունակեն տեղալ աւելորդ և անմեղ զոհեր պատճառելով։ Շերաք, որ Թալեռնի կ'այցելէր, յայտարարեց Մա–յիս 19–ին «Ռուսաստանի եւ զինակիցնե–րու միջեւ յարաբերութիւնները կը յա–ղթահարեն դէպի լուծում մը եւ ելքի մը կը յանգինք գալ չարթու»։ Նոյն օրը, Պել–կրատի մէջ, Միլոսեւիչ եւ Ջերնոմիրտին կը համաձայնէին կարգադրութեան մը շուրջ «ՄԱԿ–ի շրջագօտիին մէջ, ուղղա–կի եւ գործօն մասնակցութեամբ Եուկոս–լաւիոյ, մեկնելով Ժէ – 8–ի սկզբունքնե–րէն»։ Վճռաբանութիւնը երկուքին միջեւ ևօթը ժամ տեւած է։ Մոսկուա վերադար–ձին, Ջերնոմիրտին կը տեղեկացը ԱՄՆ–ու Արտաքին նախարարի կցորդ՝ Թալպոթի եւ Ֆինլանտիոյ նախագահին հետ։

Ամէն կողմ, սակայն, կը բազմանան ՕԹԱՆ–ի այս ռմբակոծութիւնները դա–տապարտող ձայները (Մայիս 24–ին, 2 ամիս կ'ընէ) և անհատ մտաւորականներէ զատ, երկիրներ ալ սկսած են ձայն բարձ–րացնել։

Իտալիոյ Նորհրդարանը, վիճարկումի մը ատարին, Մայիս 19–ին, բանաձեւ մը քուէարկած է հրաւիրելով կառավարու–թիւնը որ նախաձեռնարկ ըլլայ ռմբակո–ծութիւններու դադրեցման։

***

Յունաստանի հանրածանօթ փաստաբա–նը՝ Ափեքսանդր Լիքուրիզոս ապարդիզ կը կարդայ Պ. Քուչնէրի եւ Պերնար – Անրի Լեվիի «հակաերկպութեան առաքեալները» որ իրեն հետ դէմ առ դէմ վիճաբանին Պալքաններու պատերազմին մասին, ուր որ ուզեն, երբ որ ուզեն։ Կ'ուզէ որ այս երկուքը բացատրեն թէ ի՞նչպէս կրնան պաշտպանել ՕԹԱՆ–ի գործած վայրագու–թիւնները։

***

Ծանօթ փիլիսոփայ (Փարիզ Ը. համալ–սարանի դասախօս) Ալէն Պատիու չատ խիստ յօդուած մը ստորագրած է, այս ուղղութեամբ, «Մոնտ»ի մէջ (Մայիս 20) խորագրուած՝ «Սրբազան դինակցութիւնը եւ իր ծառաները»։ Իոր վերլուծումի մը կ'ընէ եւ չատ խիստ է ՕԹԱՆ–ի այս դոր–ծողութեան նկատմամբ։ «Ո՞վ կրնայ մեկ վայրկեան իսկ, հաւատալ կ'ըսէ ան, որ Ամերիկացիներուն եւ ՕԹԱՆ–ի մղած այս պատերազմին նպատակը ըլլայ՝ Իրաւունք, Արդարութիւնը, Մարդկութիւնը։ Ո՞վ կրնայ երեւակայել որ տրամաբանական կապ մը կայ պատերազմի այս նպատակ–ներուն եւ չորեքշաբթի մարդոց ճակատագրին մէջեւ»։ Պատիու դեռ կ'ըսէ – «Սերպ ազ–գայնականութիւնը ոչինչ կ'արժէ։ Բայց, ինչո՞վ ուրիշներէ աւելի դէշ է։ Աւելի տարածուն, աւելի գինուած, առիթներ ունեցած անշուշտ գործադրելու իր ոճրա–յին կիրքը։ Բայց, միայն պայմաններու հարց է։ Երբ, մինչեւ ատամները գինուած Ամերիկացիներուն կողմէ, Խրուշչեւները յարձակեցան Քրաժինայի վրայ, ուր Սեր–պերը մեծամասնութիւն էին, 200 հազար սերպ գաղթական կար, քանի մը օրուան ընթացքին։ Մէջտեղ ելաւ լրագրական բարոյականէ մեր մեծերը Զագրէպի ան–միջական ամբաստանութիւնը առաջարկելու համար»։ Պատիուի տեսակէտը այն է որ պէտք չէր միջամտել։

Ոչ նոյնքան խիստ ոճով, բայց, նոյն ոգիով կ'արտայայտուի Ֆրանսայի նախ–կին դեսպան՝ Կասրիէլ Ռոպէն («Ֆիկարօ» Մայիս 20), յօդուածը խորագրելով. – «Պալքաններ՝ կայսրութեան պատերազմ մը»։ Գրութեան սկիզբէն դեսպանը չի վարանիր ըսելու. – «Զեռնատու էր հաւա–տալ եւ հաւատացնել որ Եուկոսլաւիա կը ամբաստանէր Քոսովոյիները վերկելու համար "ցեղային մաքրագործում"։ Այդ ձեռնատու կացութիւնը չկայ այլեւս։ Ամէն ոք կրնայ նկատել որ ռումբերը ոչ դադ–րեցուցին, ոչ իսկ կասեցուցին Քոսովոյի կեղեքումները։ ... Այդ արդարացումը յետադային հնարուած չքմեղանք մըն էր։ Սկիզբը, ամբաստանութիւններու նպատակն էր տարել Միլոսեւիչը որ ստորագրէ Ռամպույէի համաձայնագիրը, որ, իրրեւ թէ, արդարութեան դրուխ – դործոց մըն էր եւ դիւանագիտութեան վերջին խօսքը։ Բայց, այն պահէն երբ «Իմաճիթէ» հատածներ հրատարակեց, տեսանք թէ այդ–պէս չէր։ Եւ հասկցանք որ ինչու անոր հեղինակները իրար անցած չէին որ բոլո–րին ձեռքն անցնի»։ Քոսովօն պատրուակ մըն է, կ'ըսէ դեսպանը, ծրագիրը աւելի ծաւալուն է, մինչ մեռելանոցը նորաճե–ւութիւն դարձած մարդասիրական յան–կերդներ կը քարոզեն, ՕԹԱՆ–ի ռազմա–դէմները իրենց քարերը կը յաւելացնեն, կայսրութեան սահմանները կը տարածեն Ադրիականի ափերէն մինչեւ Սեւ ծովու ափերը եւ Թուրքիոյ միջոցաւ, կը կապեն եւրոպական քայլերը Մէյնի – Արեւելքի քայլերուն։ Համաչխարհային հաւասա–րակշռութիւնը խախտելու այս սպառնա–լիքին առջեւ, փեքին եւ Մոսկուա հրա–ւիրուած են կամ դինակցելու կամ մէկ կողմ ձգուելու։

Նման տեսութիւններ, ինչպէս ըսինք, բազմաթիւ են այլեւս, մեզք որ յապա–գած եւ իշխանութիւն չունեցող անձերու կողմէ։

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՔԱՑիի հրկիզուած ճաչարանին եւ անոր հետեւանքներուն առեղծած կա–ցութիւնը օրէ օր նոր բարդութիւններ եւ անակնկալներ կը ստեղծէ։ Այսպէս, մինչ նախկին նահանգապետ՝ Պոնէ կը հերքէր կնոջը յայտնութիւնները «Լա վուա տիւ Նոռ» օրաթերթին եւ Տիկին Պոնէ կը հար–ցաքննուէր Գորսիքայի դատաւորին կող–մէ, Պոնէ ձեռագիր նամակով մը սպառ–նալիքներ կ'ընէր։ Արդարեւ, Միտի Լիպրի դրկուած նամակով մը (լոյս տեսած թեր–թին Մայիս 20–ի թիւին մէջ), Պոնէ կ'ըսէ թէ խնդրոյ առարկայ պիտի ընէ երկու նախկին նախարարներ։ Կը չեշտէ. – «Ան բոլոր յայտնութիւններով զորս պիտի ը–նեմ եւ որոնք հրապարակաւ խնդրոյ ա–ռարկայ պիտի ընեն երկու նախկին նա–խարարներ հրկիզուած ճաչարաններու հարցին մէջ, պղտցուցած ազգային հարց պիտի ծագի» (ինչ բառացի կ'ըսէ il va y avoir du sport national)։ Կ'աւելցնէ՝ ճշմարտութիւնը ամէն մէկուն նախա–պատրաստութեան չի հնազանդիր։ Մէյ կողմէ, դորսիքացի ազգայնական՝ Մաթիէօ Ֆի–լիտորի ձերբակալուած եւ Փարիզ փոխա–դրուած է հարցաքննուելու համար, մինչ–դրուած է հարցաքննուելու համար, մինչ–դրուած է հարցաքննուելու համար, մինչ

# Ի՛ՆՉ Կ'ԸՍԷ ՔԱՂԱՔԱԳԷՏԸ

Ընտրութեան պատրաստութեան ներկայի շրջանը կ'ընթանայ ընտրարշաւի քարոզչութիւններով, հանրահաւաքնե– րով, երբեմն փոխադարձ քննադատու– թիւններով, վէճերով, եւայլն: Անոնց մեծ մասին նպատակն է գիժգոհութիւններ, գայրոյթներ ու նաեւ անտարբերութիւն– ներ չահարկելով լաւագոյնը ներկայա– նալ: Բնականաբար, նպատակ ունենալով արժանի նկատուելու քուէներու մեծա– մասնութեան ու դրաւելու իշխանութեան դիրքերը:

Ընտրութիւնը գլխաւոր նիւթն է նաեւ մամուլին: Էջերու կարեւոր թիւ մը կը պրաւեն ընտրութեան պատրաստու– թեան, ընտրարշաւի, ենթադրութիւննե– րու, հարցախոյզներու արդիւնքներուն մասին լուրերը, յօդուածները: Անոնց քով երբեմն հարցախոյզներ ալ տեղ կը գըտ– նեն, կատարուած՝ արժեւորումներ, վեր– լուծումներ, մեկնաբանութիւններ ու դիր– քորոշումներ ունենալու նպատակով: Այդ էջերուն մեծ մասին հրապիրեալը կ'ըլլան քաղաքական դէմքեր, պաշտօնատարներ որոնք ընդհանրապէս գրաւած են իշխա– նութեան կարեւոր դիրքեր:

«Օրագիր» Ապրիլ 24–ի թիւով տեղ ըս– ւած է այդ դասէն Վազգէն Մանուկեանի: Ան թէ՛ իշխանութեան վերին աստիճան– ներուն վրայ գտնուած դէմք է, եւ թէ այսօր որպէս ԱԺՄ–ի վարչութեան նա– խագահ, ընտրարշաւին մասնակից դեկա– վար: Ան պատասխանելով դինք հրապի– րող թերթին ու այլ լրատուիւններու ներ– կայացուցիչներուն, կը խօսի նախընտրա– կան չրջանի երեւոյթներուն, նաեւ Հա– յաստանի արտաքին քաղաքականութեան մէջ ցեղասպանութեան նիւթին, Ղարաբա– ղի հարցին ու հայկական ներկայ իրակա– նութեան համար անոր կրած իմաստին մասին:

Առաջին հատուածը զոր կ'ընէ, դուր– սէն ալ նշմարելին է· 1995–էն ի վեր ժո– ղովուրդը հիասթափ է ու լուրջ փոփո– խութեան յոյս չունի: Կայունութեան պատ– ճառը 1995–ի, 1996–ի եւ 1998–ի ընտրու– թիւնները եղած են: Առաջինին մարդիկ կը մտածէին որ բան մը պիտի փոխուի· բայց ինչ որ կատարուեցաւ ապչեցնող էր: 1996–ին արդէն հրապոյրը պէտք ե– ղան, իսկ 1998–ի ընտրութիւնը «լղոզ– ւած, կաշառուած, անորոշութեան ու խա– բեպայութեան մթնոլորտում տեղի ունե– ցաւ»: Այս բոլորը հասցուցած է հոն որ 1999–ի ընտրութեան մարդիկ աւելի քիչ յոյս կը կապեն:

Ընտրութիւններու պատճառած յուսա– խաբութեան ու անկէ ծնունդ առած ներ– կայի անտարբերութեան մէջ 1995–ի խոր– հրդարանական, 1996–ի նախագահական ընտրութիւններէն ետք 1998–ի Ռ. Քոչար– եանի ընտրութեան ալ բաժին կը հանէ Վ. Մանուկեան, ըսելով թէ Լեւոն Տէր – Պետրոսեանի հեռանալէն ետք այն համո– զումը տիրած է որ կարելի է ընականոն ընտրութիւն կազմակերպել եւ ընականոն նախագահ ունենալ: Բայց սպասումները իրականացած չեն: Ոմանք այսուհանդերձ չեն վհատած· մտածած են որ ո՛վ ալ ըլլայ ընտրեալը, կրնայ այնպիսի քաղաքա– կանութիւն վարել որ ճիշդ ըլլայ: Բայց յետագային պարզուած է որ ընդունելի ոչինչ կայ Ռ. Քոչարեանի վարած քաղա– քականութեան մէջ: Ամէնէն կարեւորը որ անտեսութեան մարզին մէջ կիրարկուած է, կամ պէտք է ըլլայ, դրական արդիւնք չէ տուած: Աւտր հետեւանքով ալ տըն– տեսութիւնը անընդմէջ անկում արձանա– գրած է: Վ. Մանուկեան մաքրագործու– մի այնքան սպասուած հանդրուանին հա– մար լուրջ ցուցանիշ չի նկատեր Վ. Սի– րադեղեանի մեղադրանքն ալ· ատիկա դեռ իրեն համար չի նշանակեր որ Հայաստան փրկուած է «քլանայիզ համակարգից»: Ընդհակառակն, կ'ըսէ ան, «շատ մեծ– շնորհներ ուժեղացան Հայաստանում: Ռ. Քոչարեանը իրավիճակին չի տիրա– պետում»: Ան «շատ գաւառական» կը նը– կատէ երկրին իշխանաւորներուն մեծա– դակը եւ անհամապատասխան՝ երկրին առջեւ դրուած խնդիրներուն:

Զրոյցին մէջ որ կատարուած է Ապրիլ 24–ի նախօրեակին, բաւական տեղ գրա– ւած է ցեղասպանութեան նիւթը: Անկա– խութեան տարիներուն իշխանութիւններէ տարբեր վերաբերում դրած այդ մարդը մինչեւ իսկ Սեւրով – Հայաստան հակա– դրումներ հրահրած էր: Հետաքրքրա– կան է այդ մասին կարդալ Վ. Մանուկ– եանի բառերը· 1988–ին, ինչպէս կ'անդ– րադառնայ ան, երբ Շարժումը սկսած է, բեմին վրայ առաջին յայտնուղները լե– ռնեն ծանօթ ղէմքեր եղած են, 1960–ական թուականներէն: Այսինքն այն սերունդէն որ 1965 Ապրիլ 24–ի ծանօթ ցոյցերով ու պահանջքով փողոց իջաւ: Այդ նախընթա– ցէն եաք Ապրիլ 24–ի մեծագոյն նչումը եղած է 1988–ին, Ղարաբաղ Կոմիտէին ղեկավարութեամբ: Ցետոյ, Մոսկուայի մէջ Ղարաբաղեան բանակցութիւններու ընթացքին տեսած են որ 1915–ը ապրած ըլլալ որպէս Հայ, ուուս կամ խորհ· իշխա– նութեան համար թուրքիայէն վախի հո– մանիշ է, հետեւաբար եւ անկախութեան պաշտպարէն ընդմիշտ հրաժարում: Երբ կը տեսնեն որ Հայ դատին չեչտումը Մոս– կուայի մէջ դիմենք կը հեռացնէ անկա– խութեան հարցէն, քիչ մը կը փոխեն չեչ– տադրումը որպէս մարտավարութիւն: Ցետոյ Կոմիտէէն որոշ դէմքեր այդ փո– փոխութիւնը կ'ընդունին Հայ ժողովուր– դին համար նոր գաղափարախօսութիւն: «Լ· Տէր – Պետրոսեանի շրջապատի մարդ– կանց մի մասը դա սկսեց ընդունել որպէս ազգայնամոլութիւն, որպէս հակասու– թիւն ԻՄ. դարի տրամաբանութեանը» կ'ըսէ Վ· Մանուկեան, աւելցնելով որ Հա– յաստանի քաղաքական գործիչներուն մէջ սկսաւ գոյանալ չերտ մը որուն համար ցեղասպանութիւնը այլեւս քաղաքական խնդիր չէ:

Այս մտածողութիւնէն եաք ինք իր համո– զումն ալ կը յայտնէ նոյն նիւթին մասին· «պահանջատիրութիւն» բառը «ծիծաղե– լի» ու «անհասկնալի» եղած է միշտ իրեն համար: Հարց կուտայ նաեւ թէ ի՞նչ կը նշանակէ Հայ դատ: Դէմ է որ ինչպէս երբեմն կ'ըսէ Հ.Յ.Դ.–ն, Ղարաբաղի հարցը Հայ դատին մէկ մասը նկատուի: Կը չեչտէ որ ատիկա պիտի նչանակէր Ղարաբաղի պարզ, լուծելի խնդիրը դնել աչխարհի համար անհասկնալի խնդրի մը մէջ եւ աւելի բարդացնել լուծումը:

Նիւթը դիտելով Թուրքիոյ հետ յարա– բերութիւններու տեսանկիւնէն, Վ. Մա– նուկեան կ'ըսէ թէ չատ փարդ հարց է անոնց համար 1915–ը նախապայմանը նը– կատել – չնկատելու խնդիրը: Լաւագոյնը կ'ըլլար նախ Թուրքիոյ հետ անտեսական յարաբերութիւն հաստատել, զարգացնել եւ ատոր դուպահեռ բարձրացնել ցեղաս– պանութեան հարցը: Ատիկա կարելի չէ եղած նախ Թուրքիոյ հետաքրքրութեան քացակայութեան, ապա նաեւ Հայաստա– նի ներկայացուցած արժէքին անկումին պատճառով:

Պատասխանելով հարցումին թէ Ղարա– բաղի հարցին լուծումը պարտադիր նա– խապայմանն է անտեսական զարգացու– մին, կ'ըսէ թէ իրեն համար յստակ է մէկ բան· «Եթէ Ղարաբաղը զիչեմ, մենք որ– պէս ժողովուրդ մեր նկատմամբ յարգան– քը կորսնցնելու ենք եւ այստեղ մնացած մէկ միլիոնն էլ թողնելու է այստեղից հե– ռանայ»: Իր կարծիքով ոչ ոք պէտք է կարծէ որ Ղարաբաղը զիչելով կարելի է Հայաստանի խնդիրները լուծել: Աւրդէն անտեսութեան զարգացումը կը նկատէ 70 – 80%–ով հողերանական, 20 – 30%–ով ալ անտեսական ծրագիրներու խնդիր: Իսկ «Ղարաբաղը եթէ կորցնենք, մեր ժո– ղովուրդը ապագայ չունի: Ոչ թէ նրա համար որ շատ կարեւոր է այդ հողակը– տորը: Մենք ինքներս մեզ չենք յարգի, ներքին ոչ մի խթան չենք ունենայ»:

Երբեմն չատեր անհանդիստ ընելու չափ չոր իրապաչտութիւն կայ Վ. Մանուկ– եանի պատասխաններուն մէջ: Այդպէս են օրինակ «պահանջատիրութիւն»ը ծիծա– ղելի, անհասկնալի որակող կեցուածքը երբ այդ միակ բառին յծակով կեանք չա– հողներու, կեանք անցընողներու ատեր թիւ մը ունի հայկական իրականութիւ– նը: Ճիշդ է որ անոնք մարդիկ են որոնք չեն ունեցած եւ չունին վարչապետ, կամ Պաչտպանութեան նախարար Վ. Մանուկ– եանի մը դիրքը որուն գործնական պա– տասխաններ կը պարտադրեն ներկայացող հարցերը: Նոյնը չէ, բնականաբար, Հայ դատի պարագան որուն մէջ անորոչու– թիւն կը գտնէ ինք, հարց տալով թէ «Ի՞նչ ասել է Հայ դատ»: Արդեօք իսկապէ՞ս ահմանումը թէ Հայ դատով կը պար– փակուին 1915–ը եւ անոր առընչակից բո– լո՛ր մարդերը, կը վրիպին իրմէ, թէ գործնականէն անոնց այսօրուան հեռա– տրութիւնն է որ նման սկեպտիկ արտա– յայտութեան կը մղէ պինքը: Բայց քիչ անդին կարելի չէ ամբողջովին համաձայն չըլլալ իրեն, երբ Վ. Սիրադեղեանի մե– պադրանքին մէջ փափաքելի բարեփոխում–



ԵՐԱՋԱՅԻՆ ՀԱԼԷՊՐ

# ՋԱՐԵՆՑ ԴԱՒՈՆԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

(Բ· եւ վերջին մաս)

Երկրորդ չաբաթն էր, նոր եկած «Ջա– հակիր»ը ղրպանս եւ վախը սրտիս մէջ – կը տպե՞ն, չե՞ն տպեր – երբ Օննիկը հա– ռաւ չնչասպառ, թերթը ձեռքին·

– Շահեցա՛ր ... տպեր են...

– Կեցիր, դեռ երկու չաբաթ կայ, ըսի կարծելով որ կը հեգնէ:

– Ծո իրաւ կ'ըսեմ, տպեր են, ահա տես:

Ու բացաւ թերթը: Տպուած էր, արդա– րեւ: Բայց ինչո՞ւ ես չէի տեսած: Հանեցի ղրպանիս թերթն ալ: Ճիշդ էր: Բայց ե՞ս ինչու չէի տեսած: Տպագրական տատե– րու մասին դաղափար չունենալուս՝ կար– ծած էի թէ իմ լսկնկէկ թուղթիս չափովն ալ պիտի դանեմ թերթին մէջ: Անճկալի անհամբերութեամբ չմորուն աչքերս ի՞նչպէս կրնային նչմարած ըլլալ պզտիկ անկիւնն մը սեղմուած պալիկ հնչեակս, որ ամերիկեան սիկառէթի ծրարի մը ծա– ւալը առացած էր: Բայց տպուա՛ծ էր: Անունս ալ տակը: Կուրծքս նեղ կուգար անյայտ ծորակէ մը մէջս հոսող հրճուան– քին...

– Քալէ՛ փախչավային, ըսի Օննիկին:

– Փախչավա չէր, սենեմա էր, Շարաթ օրը կ'երթանք, հիմա դրամ չունիմ, ըսաւ Օննիկ:

– Քալէ՛, ես եմ հրաւիրողը ... Սինե– ման վերջը...

Բաժնուելէ առաջ, Օննիկ ձեւը դուսւ անդամ մը եւս խայթելու·

– Պետրոս Դուրեան դառնալու համար, հիմա մէկ բան մնաց· սպասենք որ Թո– քախտ ըլլաս...

Անպիտա՛նը: Տաք կերակուրին մէջ պաղ ջուր խառնելու համա՛ր՝ մէկ հատիկ էր արդէն...

Թուքախտ կամ ոչ՝ ընկերներուս մէջ բանաստեղծի հանդամանքս նուիրագոր– ծուեցաւ անմիջապէս: Օննիկը, հաւատա– րիմ փոքրաւոր, դիմացը ելլողին ցոյց կուտար թերթը: Կատարեալ պրոպականդա մը դարձած էր իմ հաչտյս, իսկ ես՝ իրրեւ թէ ամօթխած համեստու– թեամբ մը, Թո՛յլ, կը բաղդէի· – «Ձկէ՛ ճանըմ, ատոր ժամանա՞կն է հիմա»· ներքնապէս հրճուելով: Աբիս, Օննիկ, Յարութիւն Աչիկ, առաւել ես՝ 5 հոգիէ կը բաղկանար այն օրերու մեր խմբակը, որուն հերոսը ինքս, բանաստե՛ղծը: Օր մը Աչիկը քովս եկաւ·

– Զափահաս Որբերու ակումբին բա– ցումը պիտի ըլլայ, մեծ հանդէս մը, ես ալ պիտի արտասանեմ: Ինծի կատր մը դիր, սանկ ուժեղ բան մը...

Աոստացայ: Սիամանթօ, Վարուժան, Ռուբէն Սեւակ՝ անոնց գիրքերէն յար– մար բան մը փնտռելով դրազած էի, երբ սատանան չչնջաց ականջիս: Եւ ինչո՞ւ իմ դրածներէս մէկը չտամ եւ Աչիկին ալ կլլեցնեմ որպէս Վարուժան կամ Սիա– մանթօ: Ի վերջոյ, ե՛ս ալ բանաստեղծ մըն եմ: Բայց «ամբողջական երկերուս» տետրակին մէջ «ուժեղ» բան չկար: Բո– լորն ալ արտում – տխուր ստանաւորներ – ինչպէս վայել է Պետրոս Դուրեան ըլլա– լու սահմանուած բանաստեղծին – մանա– ւանդ որ սեւ գողնոցով եւ ճերմակ օձիքով աղջիկը սկսած էր հորիզոնէն բարձրա– նալ...

Գացի պարտէզները, միս միտակ, նըս– տայ ծառի մը տակ, թուղթ – մատիտ ծունկիս, եւ սպասեցի ... Ներչնչումին: Եկաւ: Բայց ոչ սպասած կողմէս: Արեւ– մուտքէն գալու տեղ, եկաւ Արեւելքէն: Անպիտակցաբար, սկսած էի ... արեւե– լահայերէն գրել – գալիս ենք մահի՛ց... գնում ենք վրէժի՛ն ... եւայլն: Սովորա– բար յանգերը կը հաշուէի մատներուս վրայ: Այս անգամ նկատեցի որ տողե– րուս չափը կուտամ ... բռունցքով: Չեմ յիչեր գրածս, բայց վստահօրէն պիտի թէ Աչիկին ուղածն էր – «ուժեղ բան մը», խոչոր տառերով, հնչեղ կշռոյթով, ամբոխավարական թափով: Եղաւ, վեր– ջացաւ: Կարդացի, հաւնեցայ: Բայց ինչ անուն դնել տակը: Սիամանթօ – Վարու– ժան կարելի չէր – գալիս ենք, գնում ենք, Սատրապրեցի ... Եղիչէ Զարենց:

Նոյն իրիկունն իսկ Աչիկը տարաւ մեր հայերէնի ուսուցիչ պարոն Իւլիպէյեա– նին, որպէսզի համամտութիւն տայ եւ փորձերուն հակէ:

– Ի՞նչ ըսաւ, հարցուցի Աչիկին, յա– ջորդ օրը:

– Շատ հաւնեցաւ: Ըսաւ՝ «Անպիտա՛նը, երբեմն ասանկ ազուոր բաներ դուրս կու– տայ»:

Այդտեղ՝ «անպիտանը» անչուչտ Զա– րենցն էր:

Թէեւ հայերէն լեզուի անմահան ուսու– ցիչ, մեր դասախարակին գրական հատա– ռութիւնը բիրտ հարուած մը կ'ընդունէր այդպէս, բայց միւս կողմէ կը փաստէր թէ կատարելապէս յաջողած է իմ ... կազկումա:

Եկաւ հանդէսին օրը: Աչիկը արտա– սանեց եւ ստստիկ ծափահարուեցաւ: Ես, Յարութիւնն ու Արիսին մէջտեղ, նստա– րանին վրայ անէացած էի: Մարդ չէր դիտեր, որ իմ գրածս է: Նոյնիսկ Աչի– կը: Անհամբեր էի, որ հանդէսը վերջանայ եւ ըսեմ: Դուրսը, երբ յայտնեցի Աչի– կին, քայլ մը եւս գնաց, թեւերը լայն– ցուն բացաւ եւ գոչեց·

– Չէ՛ ձօ ... մի՛ ըսեր...

Մեր սոսկալի դաղտնիքը չափած, Աչի– կին հետ սկսանք քալել Նոր Գիւղի դէպի քաղաք, մինչ դաղտիար մը կը հա– սունցնար մտքիս մէջ: Այն օրերու ամէնէն տարածուած եւ կարեւոր թերթը «Յու– սաբեր»ն էր, որ չաբաթը անդամ մը դուս դրական թիւեր կը հրատարակէր, ան– ւանի դրողներու աչխատակցութեամբ: Ինչո՞ւ չղրկեմ «Յուսաբեր»ին: Պէ՛տք է տպեն: Այնքան ծափահարութիւններ պարա՛պ տեղն էին: Ժողովուրդը գնա– հատեց:

Դեռ ժողովուրդ եւ ամբոխ բառերուն տարբերութիւնը յստակ չէր ինծի համար, ու մինչեւ այսօր երբեմն չփոթը կը ըռունակուի, ամէն անդամ որ ամբոխային հոգեվիճակներ դանեմ տեղ մը, ուր ըս– պասելի էր տեսնել ժողովրդային առող– բնադը...

Դարձեալ մաքուր թուղթ մը, հատիկ հատիկ ընդօրինակութիւն՝ եւ ուղղակի նամակատուն, ծրարեալ եւ ապահով– զըրեալ: Տպուեցաւ: Պզտիկ տարերու– թեամբ մը– Զարենցին տեղ, կը կրէր իմ ստորագրութիւնս:

Ակումբ – ընթերցասրահին մէջ, երբ մամխրուելու կը մղէ զարթաղեան ծա– դումով մարդիկը: Իր կարծիքով՝ հակա– սութիւնը խորացնողները անճնական կամ մանր քաղաքական հարցեր լուծելու հա– մար կ'ընեն ատիկա:

Զրոյցին արտայայտութիւն գտած բո– լոր տարրերը կը յանգին Մայիս 30–ի ընտրութեան արդիւնքին սպասումին: Այս բոլորին հետ ոչ չատ բնական զու– ծակցութիւններ, ինչպէս է «Միասնու– թիւն»ը, զանգուածներու ակնկալու– տարբերութիւնը, մեծ մասով լրացնող– րու վրայ հիմնուած ընտրարշաւի գոր– ծունէութիւններ, արդարութեան կամ օրինապահութեան անհամոզիչ փաստե– րուն հետամուտ արարքներ որոնք գլե– խաւոր դերակատարներն են նախընտրա– կան բեմին, պիտի կրնա՞ն այդ սպասու– մին դէմ բանալ առանց այլեւայլի ընդ– նելի հանդրուան մը:

ԱՐՓԻ ԹՈՒՐԱՅԵԱՆ

հայերէն թերթերը փոուած են սեղաննե-
րու վրայ: Մենք, Խաչիկին հետ ի պաշ-
ոնէ զրպահ ենք կը սպասենք ապակե-
զարաններուն անկիւնը, զարանակալ որ-
սորդներու պէս: Եկաւ պարոն Իւլիպէյ-
սորդները, քարւեց մեզ, ու զնաց նստաւ սե-
ղանը, քարւեց մեզ, ու զնաց նստաւ սե-
ղանի մը առջեւ, կռնակը մեզի: Չեզք
կ'ունէ «Յուսաբեր»ը: Մեր սիրտերը կը
տրոփին: Առաջին էջին աչք մը կը նետէ,
կը զարձնէ թերթը, ներսը կը նայի վեր-
վար, ու յանկարծ, ուսերը կը ծռին ղէպի
առաջ, ցնցում մը կ'ունենայ ու այղպէս
կը մնայ պահ մը:

– Տեսա՛ւ, կը կարդա՛յ կոր, կը փափը-
սայ Խաչիկը ականջիս, ու երկուքով պահ-
ւելիք տեղ մը կը փնտռենք:

Վերջապէս չկրնցաւ, նստած տեղէն
զարձաւ մեզի, եւ ցուցամատը սպառնա-
լից ցնցելով վրաս, ըսաւ.

– Անպիտա՜ն, խաբեցիր զիս:

Այս անզամ «անպիտանը» Չարենցը
չէր...

Նոյն տարին, Աբիսը մեռաւ չանթահա-
րիչ ուղեղահատպէ մը: Ինձմէ երկու տարի
աւելի մեծ՝ երկաթէ դնդերներով առիծ
կը էր Աբիս, կարճահասակ՝ բայց
ուժերի պէս պայթուցիկ: Ի՞նչպէս կրնար
մեռնիլ, այղպէս, քանի մը օրէն: Թա-
ղումէն եօթ, տուն չդարձայ: Գացի
դարձեալ պարտէզները, ճիշդ այն ծա-
ռին տակ, ուր դրած էի «Չարենցի» բա-
նաստեղծութիւնը: Բայց այս անզամ,
դատնցքս չէր որ չափ կուտար վանկե-
րուն, ոչ իսկ մատներս կը չարժէին: Ա-
ռաջին մահն էր որ չօչափելի կը դարձ-
նէր ինծի Մահը: Գրեցի, գրեցի, գրեցի...
Անվերջանալի եղերերգ մըն էր ընկերոջս
յիշատակին, հարիւրաւոր տողերով: Ոչ
արդարութիւն, ոչ մաքուրի քաշել ու հա-
ւիկ – հատիկ դրել: Եղածը եղածին պէս
յօրդոր օրն իսկ զրկեցի «Յուսաբեր»ին,
անմիջապէս յետոյ զղջալու համար: Ի՞նչ
անհամեմատութիւն, ի՞նչ թափթփուած-
ութիւն: Բայց ամէնէն տարօրինակը այն
էր, որ տպուեցաւ նոյնութեամբ, եւ
այժմ կը պահվի, բազմաթիւ այլ ոտանա-
տրներու հետ, թերթին հաւաքածոներուն
մէջ:

Թերթի մը հաւաքածոն՝ չերի՞մը ան-
յայտ զինուորին...

Օննիկը մեռաւ հասուն տարիքին՝ սիր-
ուն զարնուած, ինչպէս իրմէ առաջ իր
կրտսերը, Սահեփանը: Ողջութեանը զրած
են արդէն իր մասին, ու նոր բան չկար
ըսելիք: «Մանկութիւն չունեցող մար-
դիկ» զիրքին Յովհաննէսեան է Օննիկ:

Ցաւութիւնը, աչխարհի ամէնէն բարի
ոգին, որ մզկիթի մը վրայ անգամ չէր
կոխած կեանքին մէջ, տխուր պարագա-
ներու բերումով մեռաւ բանակի մը խո-
րը: Բանաստեղծութեան չզլանը անցած
ըլլուն, արձակով ողբացի իր մահը՝
«Այիրի»ի մէջ:

Հեռաւոր անցեալի այն հնդեակէն՝ մը-
նացած ենք երկու հոգի միայն, ես ու
Խաչիկը: Եւ որովհետեւ յայտնի չէ թէ
ո՞ր երկուքէն ո՞ր մէկը միւսէն առաջ
կ'երթայ, պատչաճ էր որ գրուէին այս

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԴԱՇՆԱԿԸ

Հալէպի մէջ տեղացի ու հայաստանցի
երաժիչտներու մասնակցութեամբ նչուած
է Կոմիտասի ծննդեան 130–ամեակը. նոյն
ընթացքին ալ 600 տոլար հանգանակուած
է որով որոչուած է նորոգել Չարենց Թան-
զարանը պահուած Կոմիտասի դաչնակը:
Այդ նուագարանը 1909–ին վարդապետին
նուիրած է Ա. Մանթաչեան: Մինչեւ 1991
դաչնակը պահուած է Էջմիածնի Թանգա-
րանը, ապա փոխադրուած Երեւան: Որոչ-
ուած է որ նորոգուելէն ետք ամէն տարե-
վերջի Կոմիտասի դաչնակին վրայ նուա-
զելու պատիւը տրուի Հայաստանի լաւա-
զոյն դաչնակահարներէն մէկուն: Այդ
պատիւը առաջին ունեցողը պիտի ըլլայ
Սվեզլանա Նաւասարդեան:

⁂

## 1500 ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՅ

Կրթութեան եւ Գիտութեան նախարա-
րութեան մէջնակարգ կրթութեան վար-
չութեան պետ Արա Աւետիսեան ըսած է
թէ երկրին մէջ մօտ 1500 ուսուցիչի պա-
հանջք կայ: Օրէնքով, լիաժամ աչխատող
ուսուցիչ մը պէտք է չարաթը 18 ժամ դաս
ունենայ, բայց յաճախ չի յարգուիր ա-
տիկա եւ կրթական համակարգին հարկա-
ւոր 40 – 42 հազար ուսուցիչին փոխարէն
աւելի քան 61 հազար ուսուցիչ կ'աչխատի
եւ 1500–ի մը պահանջք կայ: Ա. Աւետիս-
եան ըսած է որ կը մտածուի բարձրագոյն
ուսումնարաններու վերի դասարաններուն
ուսանողներուն թոյլ տալ որ աչխատին
դիւղական դպրոցներու մէջ:

⁂

## ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱԽԵԼՆԱՆ

Վերջին տարիներուն աւելցած են անճ-
նասպանութիւնները: Երեւոյթին աւան-
դական պատճառներուն հետ տասը մէջ
կարեւոր դեր կը կատարէ մարդոց ըն-
կերային անապահովութիւնը: Կատար-
ուած հետազօտութեան մը համաձայն զըլ-
խաւոր պատճառներ կ'ըլլան հոդեկան
ճնշումները, կեանքի լմասուին կորուստը,
ընկերային ծանր պայմանները:

---

էջերը, եւ պիտցուէր Չարենց զտնալու
զաղտնիքը:

Կարճ տախտակով առաջին անգամ բեմ
բարձրացած օրէն մինչեւ այսօր, ահա
չուրջ կէս դար կ'ընէ, բեմէն չէ իջած
Խաչիկը ու բեմերու զարդն է, Լիբանա-
նէն եւ, այժմ Ամերիկա: Եւ Խաչիկին
մահմանուն ալ, անչուշտ վրահեց ընթեր-
ցողը, կը մնայ նոյնը – Արարատեան:

Ա. Ծ.

## 120–ԱՄԵԱԿ ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

# «ԳՈՂԹԱՆ»ի եւ Վարժարանի երգչախումբին համերգը

Մայիս 16–ին, Փարիզի Գորթօ սրահը
ծայրէ ծայր լեցուած էր, ունկնդրելու
համար Դպրոցասէր Տիկնանց Վարժարա-
նի 120–ամեակին առթիւ տրուած համեր-
գը, կազմակերպութեամբ վարժարանին
Տիկնանց Մխիթեան եւ Հ. Բ. Ը. Մխի-
թեան:

Բացումը կատարելով, հանդիսավարը՝
Բաֆֆի Պաքեան (Պահչէճեան), առաջին
առթիւ խօսքը տուաւ վարժարանի տնօրէ-
նուհիին՝ Տիկին Ս. Գարակիւլեանի որ
հակիրճ պատմականը ըրաւ դպրոցին, ա-
նոր հիմնարկութենէն 1879 տարւոր:

Ան տարւոնց թէ Պոլսոյ մէջ, 1865–ին,
կը հրատարակուէր Ազգային Սահմանա-
դրութիւնը որու ոգիին ներչնչուած, քա-
նի մը տարի ետք, խումբ մը մտաւորա-
կան Հայուհիները հիմը կը դնէին վարժա-
րանին, որու գլխաւոր նպատակն էր ու-
սուցչուհիներ պատրաստել դաւառի դպը-
րոցներուն համար: 300 ուսուցչուհիներ,
յետագային կը մեկնէին դաւառները, ո-
րոնցմէ ոչ մէկը պիտի վերադառնար
1915–ի Եղեռնի հետեւանքով: 1922–ի ա-
դէտէն ետք, Դպրոցասէրի վարչութիւնը
եւ պատսպարած 500 որբուհիները կը
ստիպուէին ապաստան գտնել օտար եր-
կիրներու մէջ, նախ Սելանիկ, ապա՝
1924–ին Մարսէյլ, հուսկ 1928–ին կը հաս-
տատուէին իրենց սեփական չէնքին մէջ,
փարիզեան Լը Ռենսի արուարձանը: Աւե-
լի քան 70 տարի է, վարժարանը կը շա-
րունակէ իր կրթական առաքելութիւնը:
Նախ աղջկանց, 1975–էն ի վեր երկսեռ է
եւ 1982–ին ալ բացած է մանկապարտէզի
բաժին մը, այսօր 220 աչակերտ ունի եւ
պայմանագրով կապուած է կրթական նա-
խարարութեան: Պետական ծրագրին կող-
քին, կը դասաւանդուին հայերէն լեզու,
մշակոյթ, պատմութիւն, կրօնք եւ ար-
ուեստ:

Իրեն յաջորդեց Հ. Բ. Ը. Մխիթեան
Ֆրանսայի չրջանի նախագահ՝ Տօքթոր
Լուսաբ Ադամեան: Ան յիչեց Բարեգոր-
ծականի հիմնադրութիւնը 1906–ին Պօղոս
Նուպար Փաչայի նախաձեռնութեամբ եւ
որու նպատակն էր օժանդակել Հայերու
մտաւորական, տնտեսական եւ թարմոյա-
կան զարգացման: Շեչտեց կապը որ կայ
Բարեգործականի եւ Դպրոցասէր Վար-
ժարանի միջեւ եւ այն օժանդակութիւնը
որ կազմակերպութիւնը կը բերէ ղըպ-
րոցին, հինգ անգամ աւելի քան ինչ որ
նախատեսուած էր: Ցիչեց նեւթական
դժուարութիւնները եւ կոչ ըրաւ որ բո-
լորը զօրավիգ ըլլան դպրոցին, որպէսզի
ան բարգաւաճի:

Պաչտօնական այս ելոյթներէն ետք,
կարգը եկած էր համերգին: Այս առաջին
բաժնին մէջ, իսկապէս խրախուսիչ էր
լսել դպրոցին աչակերտներու երգչա-
խումբը, որ ղեկավարութեամբ եւ դաչ-
նակի ընկերակցութեամբ Հայկ Սարգիս-
եանի, խանդավառ ներկաներուն հրամ-
ցուց չուրջ 12 երգեր, նաեւ մենակատար-
ներով: Գնահատելի էր մանաւանդ նկա-
տել, որ բոլոր երգերը երգուեցան գոց
այս վտքրիկներուն կողմէ, մինչ մեծերու
երգչախումբերը այլեւս միայն տեսարան-
ով կը ներկայանան հանդիսականներուն:
Ամակնկալ մըն էր նաեւ մանկապարտէզի
հինգ աչակերտներու մասնակցութիւնը:

Կարճ դադարէ մը եւք, կարգը եկած
էր Հ. Բ. Ը. Մխիթեան Գողթան երգչա-
խումբին որ, միշտ Հայկ Սարգիսեանի
խմբավարութեամբ, 15 երգերով չերմ
մթնոլորտ մը ստեղծեց: Համերգը փակ-
ուեցաւ յոտնկայս ունկնդրուած «Մեր Հայ-
րենիք»ով: Հանդիսավարը յիչեց խնա-
մակալ տիկնանց, ի մասնաւորի Տիկին
Ժանին Վարդանեանի, սիրայօժար աչակ-
ցութիւնը, ու թեմ հրաւիրեց անցեալի եւ
ներկայի խնամակալ տիկիններ որոնք
տարիներու երկարքին չէն զլացած իրենց
ժամանակութիւնը: Դպրոցասէրի աչա-
կերտներու երգչախումբը հրապարակ
հանած է նաեւ խտացեալ սալ մը (Սի-
Տի) եւ այդ առընչութեամբ ալ չնորհա-
կալութիւն յայտնուեցաւ հայ թէ Ֆրան-
սայի երաժիչտներուն որոնց չնորհիւ
կարելի եղած է պատրաստել սալը:

Ցաջող ցերեկոյթ մը որ առաջինն է
վարժարանին 120–ամեակի նչումներու
չարքին եւ գնահատելի է Հայկ Սարգիս-
եանի տարած աչխատանքը փոքրերու եւ
մեծերու քով:

«Հայաստանը՝ Ռենսի» խորագրով, ե-
րեք օրերու ընթացքին, Մայիս 28, 29 եւ
30, դանազան այլ ձեռնարկներով ալ պի-
տի ոգեկոչուի դպրոցին 120–ամեակը:

Ա. Մ.

# ՍՏԱՑԱՆՔ

## ՃԱՄԲԵԶՐԻ ՎՐԱՑ

### ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆ

Հրատարակութիւն «Նոր Կեանք»
Մատենաչար թիւ 26
Լոս – Անճըլըս, 1998

---

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

– Ի՞նչ պիտի ըլլայ, կիրակի օրուան պազարէն զոյացած երեք հազար ոսկին Տիկին Սկամպիլեանը Գուրգէն Գուրգէնեանին կը յանձնէ, որ տանի պանքան դնէ, ան ալ կ'երթայ այդ դրամով փոքեր կը խաղայ, ամբողջը կը կորնցնէ:

– Իրա՞ւ կ'ըսես, – զոչեցին մէկ քանի-ներ:

– Տեղն ի տեղօք կ'ըսեմ, անուն կու-տամ կոր նէ՝...

– Մենք բան մը չհմացանք, – ըսաւ Գեր-կոմս:

– Կրնայ ըլլալ, չատ ծածուկ կը պա-հեն կոր... բայց չէնչ օգուտ, վաղը միւս օր ամէն մարդ պիտի իմանայ... խայտա-ռակութիւն խայտառակութեանց, մէկէն մէկալէն աղքատի կամ հիւանդի անունով դրամ հաւաքել ու ամէնքը մէկէն թղթա-խաղի մէջ կորնցնել...

– Բայց Գուրգէն էֆէնտիէն այդ տեսակ բան մը բնաւ չսպասուիր, չիտակը ես չեմ ուզեր հաւատալ, – դիտել տուաւ մէկը:

– Ինչո՞ւ չսպասուիր եղեր, անոր մեծ-խօսկութեանը, հպարտութե՞նը կը նա-յիս...

– Վերչապէս աղնուական ընտանիքի զա-ւակ է:

– Գրպանը ծակ աղնուականութիւնը քանի՞ փարա կ'ընէ:

Նոյն միջոցին տնօրէն Աբշամ էֆէնտի ներս մտաւ: Աթիկ պէյ անոր ալ կրկնեց նոյն խօսքերը, յետոյ աւելցուց.

– Թերթիդ մէջ չգրե՞ս այս զեղծումը, այս խոչոր զողութիւնը, որովհետեւ ե-զածը պարզ զողութիւն մըն է... Թերթե-րուն պատասխանատուութիւնն է գրել, ազգին աղքատներուն, որբերուն, հիւանդներուն դրամը պաչտպանել...

– Գրելիք բան մը չկայ մէջտեղ, – պա-տասխանեց տնօրէնը անտարբեր ձեւով մը:

– Ինչպէ՛ս, աղքատներուն յատկացուած երեք հազար ոսկի խազամոլի մը կոկոր-դը կ'անցնի ու գրելիք բան չէ՞ այս:

– Այդ ըսածդ ես երկու օրէ ի վեր իմա-ցած եմ:

– Աւելի աղէկ...

– Խնդիրը բոլորովին տարբեր է:

– Ի՞նչպէս տարբեր... սո՞ւտ է, ա-նանկ բան չէ՞ պատահած, – զոչեց Աթիկ պէյ:

– Բաներ մը եղեր է, բայց խնդիրը փակ-ուած, կարգադրուած է:

– Ի՞նչպէս կը կարգադրուի, երեք հա-զար ոսկին ո՞ւր է:

– Հոգ մի՛ ըներ, ազգին դրամները չեն կորսուած:

– Վախնամ Գուրգէնեանը բերեր պան-քային յանձներ է դրամները:

– Գուրգէնեանը կամ ուրիչներ, վերջա-պէս այդ խնդիրը փակուած է... Տիկին Սկամպիլեանը յայտարարած է որ երեք հազար ոսկին քովն է ու այս բանական է:

– Հա՛, հա՛, հա՛, Տիկին Սկամպիլեա-նին երեք հազար ոսկին ուրկէ՞ է:

– Այնչա՛փ վալուածներ ունի:

– Ամէնքն ալ գրաւի տակ են:

– Վերջապէս ես ատոր տեղէ պիտեմ, որ Չիլթականի խնդիրը կարգադրուած կամ կարգադրելու վրայ է... պէտք չէ հրապարակով խանդչահել, փոխանակ օգ-տակար ըլլալու՝ վնասակար կ'ըլլայ...

– Ընդհակառակն, պէտք է գրել, որ իրեն դաս մը ըլլայ եւ ուրիչներ ալ զգու-չանան ատանկ բաներ ընելէ:

– Ես այդ կարծիքէն չեմ:

Աթիկ պէյ եւ տնօրէնը բաւական վի-ճաբանեցան՝ առանց կարենալ դիրար հա-մոզելու: Ի վերջոյ Աթիկ պէյ, յուսահա-տած, հեռացաւ երթալ ուրիչ խմբագրա-տան մը մէջ նոյն խօսքերը կրկնելու հա-մար:

Բայց թերթերու հրատարակութեան պէտք չկար, որպէսզի գայթակղութիւնը իմացուի ամէն կողմ, թէեւ միչտ ականջ ականջ ծածկաբար...

Հետզհետէ նոր մանրամասնութիւններ կը լսուէին. Թորգոմ Սարուկեան քէչ մը կ'արդարանար կամ մեղմացուցիչ պարա-գաներ կը ստեղծուէին իրեն համար:

Գուրգէն Գուրգէնեան եկաւ նոր տե-ւակցութիւն մը ունենալու այս առթիւ «Լապտեր»ի տնօրէնին հետ:

– Հիմա յայտնի եղաւ, որ խեղճ տղան չունի, – ըսաւ Գուրգէն՝ Թորգոմ Սարուկեանի ակնարկով:

– Ի՞նչպէս, գրամները ուտողը ինք չէ՞, – հարցուց Աբշամ:

– Այո՛, բայց ինք պարզապէս գող մըն է, դիտես ա՛, Թորգոմը պօն աճփան է, դիւրաւ կը տարուի, մանաւանդ երբ դի-մացինը վարպետզի մէկն է: Այս գոր-ծին մէջ պատասխանատուն բո՛ւն յան-ցաւորը ուրիչն է, ամէն բան տեղն ի տե-ղօք հասկցայ:

– Ո՞վ է ուրեմն բուն յանցաւորը:

– Սա հանած – վարած մէկը կայ, ամէն տեղ կը մտնայ կ'ելլայ, Կովկասէն նոր եկաւ, ձեր խմբագրատունն ալ տեսած եմ մէկ քանի անգամ:

– Չաւկցայ, Շաւարչ Մոսկենցը:

– Այո՛, ճիշդ անիկա, բո՛ւն յանցաւորը ահա՝ այդ անպիտանն է:

– Ի՞նչպէս...

– Էֆէնտիմ, երկուչաբթի օրը, երբ Թորգոմ գրամները գրպանը պանքան կ'երթայ եղեր, Ճամբան Շաւարչ Մոսկեն-ցը դէմը կ'ելլայ եւ կ'առաջարկէ, որ միա-սին մօտակայ օթել մը երթան, ուր իրեն ծանօթ խոստ հարուստ Ռուս մը ե-կած է, փոքերի սիրահար: Թորգոմ կը մերժէ եւ միամտութիւնը կ'ունենայ քսե-լու, որ քովը մեծկակ գումար մը կայ, զոր ստիպուած է տանիլ պանքան յանձ-նելու: Մեծկակ գումարին խօսքը լսելուն պէս ա՛լ Շաւարչ Թորգոմին օձիքը թող չի տար: Կ'ըսէ, որ այդ Ռուսը թէեւ փոքեր չատ կը սիրէ խաղալ, բայց խաղին վրայ դաղափար չունի, թէ միչտ մեծամեծ գու-մարներ կը կորնցնէ, թէեւ առանց հոգ ընելու, վերջապէս այնչափ կը խօսի, որ...

(Շար. 27)

## Ի ՅԻՇԱՏԱԿ

*ՄՈՆՐԷԱԼ – Իր ամուսնոյն՝ վարուժան Մինասեանի մահուան տարելիցին ի յիշատակ, Տիկին Շաքէ Մինասեան – Տէր – Մելքոնեան 100 տոլար կը նուիրէ «Ցառաջ»ին։*

## ՑՈՒՇԱՏԵՏՐ

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ*

*ԿԱՊՈՒՑՏ ԽԱՉԻ Պօսթընի Նայիրի մասնաճիւղի վարչութիւնը, յընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Մայիս 29, ժամը 15–ին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ։*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Ալֆորվիլլի Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութիւնը չնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուիրատուութիւնները Ազատուհի Թաշճեօղլուի մահուան առթիւ. –*

*Պետրոս Մարաշլը 200 Ֆր., Փոյրազ, Համլէթ Աթանասեան 400–ական Ֆր., Թորոս Պատուականեան 500 Ֆր., Արթիւր Արզումանօղլու 200 Ֆր., Մկրտիչ Գիւրճեանօղլու 100 Ֆր., Խորէն Քէչիչեան 200 Ֆր., Նշան Գայան, Մուրատ Ազրաճը 100–ական Ֆր., Արտաշ Գարագիս 200 Ֆրանք, Հայկազեան Թաշճեօղլու, Ազատ Կարապետեան 500–ական Ֆր., Յակոբ Տէմիր, Ս. Տէմիրճրան, Խաչէն Օհաննէսեան 200–ական Ֆր., Գրիգոր Պատուականեան 400 Ֆր., Նուրան Իփէքճի 500 Ֆր., Էլիզ Ճամուճ 400 Ֆր., Ռակիան Տուրմաղիւլէր, Ժիրայր Գարակէօզ 500–ական Ֆր., Արթիւր Պապինաժ 1000 Ֆր., Նշան Պարտաղ 400 Ֆր., Վերժին Տէմիրճեան 300 Ֆրանք, Վահէ Տիշճի 400 Ֆր., Խաչիկ Թօսուն 200 Ֆր., Արտաշ Զաքմաք 100 Ֆրանք, Մուրատ Գարօղլու 200 Ֆր., Նօէ Էօզթաչ 500 Ֆր., Պարոյր Շահսպազ 200 Ֆրանք, Խաչիկ Էօզէլիկիլիը 500 Ֆր., Անդրանիկ Թորոսեան, Գէորգ Ադէմիր 200–ական Ֆր.։*

TELEVISION

**Samedi 22 Mai**
sur **CANAL +**
**«1 an de +» à 12 heures 40**
émission en clair

sujet sur la proposition de loi adoptée le 29 mai 1998 à l'Assemblée nationale et la procédure parlementaire en cours

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 81–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ՝
1918 ՄԱՅԻՍ 28

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՒՑ ԽԱՉԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70–ԱՄԵԱԿ

# ՁԱՁ – ՓԱՐԱՀԱՆԴԷՍ

*կազմակերպութեամբ՝*
*Հ.Ց.Դ. «Զաւարեան» խումբին*

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի
Իսի–լէ–Մուլինոյի "Տ. Սէրէնկիւլեան"
*մասնաճիւղին*

*մասնակցութեամբ՝*
ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ–ի
*եւ Անի նուագախումբին*

Շաբաթ, Յունիս 5, ժամը 20–էն սկսեալ

Palais des Arts et des Congrès
d'Issy-les-Moulineaux
25, avenue Victor Cresson —
92130 ISSY-LES-MOULINEAUX

Les billets sont disponibles chez :
**Alice :** au **01 46 42 90 68;**
**Jacqueline :** au **01 40 95 81 33.**
Pour la réservation des tables et billets:
**Garage Carnot : 01 40 95 14 58**
**Eniz Clamart et Arnouville**
**Auprès de toutes les Khatchouhis.**

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

# Fête Paroissiale

LUNDI DE PENTECOTE
24 MAI

AU PROGRAMME :

11h30 : *Culte;*

A partir de 12h : *Repas*
*Spécialités arméniennes;*

Stands :
*Pâtisseries arméniennes*
*Librairie, Brocante, etc...*
*Animation musicale.*

EGLISE EVANGELIQUE
ARMENIENNE

55, avenue Victor-Cresson /
28, avenue Bourgain
92130 ISSY-LES-MLX

**le Centre Culturel**
**SAINT MESROB**
**à PARIS**
**expose du 18 au 28 mai**
LES PHOTOS GRANDEUR NATURE
DES

# VITRAUX

réalisés par **Reine AVEDISSIAN**
sur le thème :

L'ART ET LA RELIGION,
SYMBOLES DE PAIX
Les sentiments religieux
dans l'Architecture et l'Art
sous les diverses formes
dans les grandes civilisations.

10 bis, rue Thouin — Paris Ve
Entrée libre — Cocktail

**(Exposition visible jusqu'au 28 mai, sur rendez-vous)**
Tél. : 01 44 59 23 50
ou 01 40 51 11 90

Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes — 92130 Issy-les-Moulineaux.

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՌԻՋ

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28–ին)
Հոչակման 81–րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18–ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու աւարտին Հանրապետական Մարթանք կ'ըլլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատութեան եւ բարգաւաճման համար։*

## ՖՐԱՆՍԱՀԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

*Ֆրանսայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը տեղեկացնում է որ ս/թ Մայիսի 30–ին տեղի կ'ունենան Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի ընտրութիւնները։ Այս նպատակով, ՀՀ ընտրական օբյեկտերի համաձայն, արտերկրում ՀՀ դիւանագիտական եւ հիւպատոսական ներկայացուցչութիւններում բացուելու են ընտրական տեղամասեր։*

*Ֆրանսայում բնակուող կամ գտնուող, 18 տարին լրացած՝ ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիները կարող են մասնակցել համամասնական կարգով անցկացուող ընտրութիւններին։*

*Ընտրութիւնները տեղի կ'ունենան ՀՀ դեսպանութեան չէնքում*
*Մայիսի 30–ին, տեղական ժամանակով ժ. 8:00 – 20:00*
*Հասցէն՝*
9, rue Viète — 75017 PARIS.

*Ընտրութիւններին մասնակցող ՀՀ քաղաքացիները ընտրութիւններից առնուազն 5 օր առաջ պէտք է գրաւոր յայտ ներկայացնեն Դեսպանութեան Հիւպատոսական բաժին՝*
*Հեռ. 01. 42. 12. 98. 00 / 02։*

*Յայտում նշւում է ընտրողի (ընտրողների)*
– *ազգանունը, անունը*
– *ծննդեան օրը, ամիսը, տարին*
– *Ֆրանսայում իր բնակութեան հասցէն եւ հեռախօսը*

*այն անձինք, որոնց մշտական բնակութեան վայրը գտնւում է Հայաստանի Հանրապետութեան տարածքում՝ նշում են նաեւ Հայաստանի հասցէն։*

*Ընտրութիւններին պէտք է ներկայնալ անձը հաստատող փաստաթղթով (անձնագրով)։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅՈՒՄ*
*ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ*

## L'ASSOCIATION MACHTOTZ

POUR LA DEFENSE DE LA LANGUE ARMENIENNE

organise un

## SEJOUR LINGUISTIQUE ARMENIEN

## BEYROUTH (Liban) - du 1er au 19 Juillet

**POUR LES JEUNES DE 8 A 16 ANS**

sous le patronage du Rév. Père KEGHAM KHATCHERIAN
*Prélat des Arméniens du Liban*

Les participants seront hébergés individuellement par des familles sélectionnées, dont ils partageront la vie et avec lesquelles ils communiqueront en langue arménienne.

Des cours d'arménien seront organisés à raison de 25 heures par semaine pour les **débutants francophones** par Mme Hilda Kalfayan-Panossian, avec sa **méthode audiovisuelle** et pour les autres niveaux, par des professeurs expérimentés.

L'encadrement et l'assistance aux jeunes participants seront assurés par les responsables de l'Association Machtotz.

Sont prévues plusieurs excursions comme Baalbek, Byblos, Saïda, Aïnjar, Zemmar, Antélias, la visite des musées et des institutions arméniennes, ainsi que des baignades à la mer et du sport, suivant possibilités

**FRAIS DE PARTICIPATION : 5950 F. par personne comprenant le transport aérien, l'hébergement en pension complète, les cours et les excursions.**

**Renseignements et inscriptions (avant le 10 juin) :**
ASSOCIATION MACHTOTZ
**8, rue Lamennais, 92370 CHAVILLE — Tél. / Fax : 01 47 50 97 51.**

## CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Université d'été aux U.S.A.

Le HOM (Hay Oknoutian Mioutioun) de la Côte Est des Etats-Unis organise une université d'été d'études intensives arméniennes dispensées en langue anglaise, de 3 semaines destinée aux jeunes étudiants de niveau universitaire, âgés de 18 à 25 ans et diplômés d'études secondaires.

**Date:** **du 11 juillet au 1er août**
**Lieu:** **Université Bradford à Bradford (Massachussetts)**
**Direction: Dr. Simon PAYASLIAN (directeur du département Histoire UCLA)**
**Programme: Langue — Musique — Histoire — Cinéma — Littérature — Danse — Histoire de l'art et autres...**

**Conditions:**
- Hébergement pris en charge par le HOM Côte Est
- Frais d'inscription, non remboursables, 350 USD plus frais de voyage à la charge du participant.

**Délai d'inscription: 30 Mai 1999 au plus tard**
**Renseignements: Conseil d'Administration de la CBAF: 01. 48. 24. 46. 57.**

A L'OCCASION DES 120 ANS DE L'ECOLE TEBROTZASSERE

# «L'ARMENIE AU RAINCY»

PROGRAMME

**Vendredi 28 Mai, Samedi 29 Mai, Dimanche 30 Mai**

*Durant ces trois jours :*

- Exposition de peintres et sculpteurs d'origine arménienne : Asilva, G. Ayvayan, A. Berlian, J. Kazandjian, K. Kazan, C. Madoyan, M. Matéossian, K. Norikian, R. Sarkissian.
  — Galerie «Weider»; 31, avenue de la Résistance.
- Exposition : «Voyage à travers l'Arménie» et «Rétrospective de l'Ecole Tebrotzassère».
  — Centre Thierry Le Luron; 9, boulevard du Midi.

**Commissaire des expositions : Khatchik Kazan**

**SAMEDI 29 MAI**

- Dédicace d'ouvrages par leurs auteurs :
  A. Agoudjian, B. Bricout-Kasparian, W. Buss, J.-J. Varoujan.
  — Librairie «Notre Dame»; 76, avenue de la Résistance; de 15h à 17h;
  — Librairie «L'Ecritoire»; 29, avenue de la Résistance; de 15h à 17h.
- Défilé folklorique: Troupe «ASTRIG» accompagnée de l'ensemble musical «ARARAT» d'Arménie; avenue de la Résistance; de 17h à 18h.
- SOIREE DE GALA
  Chorale TEBROTZASSERE et Ballets Arméniens «NAVASART»;
  — Centre Culturel Thierry-Le-Luron; à 20 heures 30.
  P.A.F. : Adultes 100 F / Enfants 60 F.

**DIMANCHE 30 MAI**

- Vente de produits arméniens sur le marché de l'avenue de la Résistance: **«l'Arménie au Raincy».**
- Déjeuner traditionnel arménien avec ambiance musicale au Théâtre de l'Espace du Jardin Anglais; à 13h;
  — 65, allée du Jardin Anglais et de Finchley;
  P.A.F. : Adultes 150 F / Enfants 100 F.

*Renseignements & réservations :* Ecole TEBROTZASSERE : 01 43 81 01 72.

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ 22-23
SAMEDI - DIMANCHE
22-23 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅՐԱՏԱՊԱՐ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·646 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.646

## ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 20 / 21)

### ՀԱՊ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԻՍՏԸ

ՀԱՊ-ի երկիրներու Պաշտպանութեան նախարարներու խորհուրդին 32-րդ նիստը տեղի ունեցած է Երեւան, Մայիս 20-ին: Ան բացուած է նախագահ Ռ. Քոչարեանի ողջոյնի խօսքով: Ան ՀԱՊ-ի գործակցութեան կարեւորագոյն կառոյցներէն համարելով խորհուրդը, համոզում յայտնած է որ անոր երեւանեան նիստը դրական դեր կ'ունենայ յառաջիկայի գործընթացին համար:

Նիստէն եւեր մամուլի ասուլիսով մը Հայաստանի Պաշտպանութեան նախարար Վ. Սարգսեան չատ կարեւոր աշխատանք նկատած է նիստի ընթացքին զոյացած համաձայնութիւնները, ստորագրուած փաստաթուղթերը: Ռուսաստանի Պաշտպանութեան նախարար Ի. Սերդիւկով ալ ըսած է թէ պաշտպանական աւելի չօշափելի, գործնական հարցերու լուծումին ձգտելու ապացոյցն է միասնական զօրավարժութիւններու պատրաստութիւնը:

Նոյն օրը Ի. Սերդիւկով ընդունուած է նախագահ Ռ. Քոչարեանի կողմէ. հանդիպումին ներկայ եղած է Վ. Սարգսեան ևս: Քննարկուած են ՀԱՊ-ի զարգացման հեռանկարները, միասնական ապահովութեան պայմանագրին առընչուած հարցեր:

*
**

### ՊԱՊԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՒԼԻՍ 2 - 4

Ցուվ. Պօղոս Բ. քահանայապետը Յուլիս 2 - 4 կ'այցելէ Երեւան: Մայիս 19-ին Վատիկանէն կատարուած հաղորդումին համաձայն նախատեսուած են հանդիպումներ նախագահ Ռ. Քոչարեանի եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ պէմքերուն հետ: Պապը կ'այցելէ Մեծեռնակարեդրի յուշարձանը, Էջմիածին, Աշոցք, Խոր Վիրապ, Եւայն: Քրիստոնէութեան պատմութեան մէջ առաջին անգամն է որ Հռոմի պապ մը այցելութիւն կը կատարէ Հայաստան:

*
**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Ο - ԷՍ - ՍԷ - Ը-Ի ԺՈՂՈՎԻՆ

Մայիս 17 - 19 Սոֆիայի մէջ տեղի ունեցած է Ο-ԷՍ-ՍԷ-Ը-ի ժողովը, 54 երկիրներու մասնակցութեամբ: Օրակարգի նիւթ եղած է միջպետական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու միջեւ գործակցութիւնը, հարաւ - արեւելեան Եւրոպայի հեռանկարները: Հայաստանը ներկայացուցած են Ազգային Ժողովի նախագահ Բաբկէն Արարքցեան եւ Արտաքին Գործոց նախարարութենէն Վարուժան Ներսիսեան ու Վիկտոր Բէյլարով:

*
**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Ο - ԷՍ - ՍԷ - Ը-Ի ԺՈՂՈՎԻՆ

Մայիս 17 - 19 Սոֆիայի մէջ տեղի ունեցած է Ο-ԷՍ-ՍԷ-Ը-ի ժողովը, 54 երկիրներու մասնակցութեամբ: Օրակարգի նիւթ եղած է միջպետական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու միջեւ գործակցութիւնը, հարաւ - արեւելեան Եւրոպայի հեռանկարները: Հայաստանը ներկայացուցած են Ազգային Ժողովի նախագահ Բաբկէն Արարքցեան եւ Արտաքին Գործոց նախարարութենէն Վարուժան Ներսիսեան ու Վիկտոր Բէյլարով:

*
**

### ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան գլխաւորած պատուիրակութիւնը որ Լիբանան մեկնած էր, Մայիս 19-ին Պէյրութի մէջ մասնակցած է Միջին Արեւելքի երկիրներու հայկ. կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն խորհրդակցութեան. այս ժողովը կազմակերպուած է Սեպտեմբերին Երեւան կայանալիք Հայաստան – Սփիւռք փոխյարաբերութիւններու խորհրդաժողովին պատրաստութեան ծիրին մէջ: Հանդիպումին մասնակցած են Սուրիայէն, Լիբանանէն, Եգիպտոսէն, Արաբական Միացեալ Էմիրայութիւններէն, Քուէյթէն եւ Յորդանանէն շուրջ 250 պատուիրակները: Նոյն օրը նախարարը ընդունած է Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հետ: Յաջորդ օրը, Մայիս 20-ին, Վ. Օսկանեան տեսակցած է Հայ Կաթողիկէներու Ցոմհ. Պետրոս ԺԹ. կաթողիկոսի եւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարագէօզեանի հետ: Նոյն օրը Արտաքին նախարարը ընդունուած է Լիբանանի նախագահ՝ Էմիլ Լահուտի կողմէ: Տեսակցութեան նիւթ եղած են երկկողմ յարաբերութիւնները, չբջանային կարգեր, Իսրայէլի ընտրութիւնները, հայկ. կազմակերպութիւններուն եւ միութիւններուն վերընչեալ խորհրդաժողովը: Ապա, Ազգ. Ժողովի նախագահ Նապիհ Պէրրիին ընդունած է հայ նախարարը: Յօսակցութեան նիւթ եղած են միջխորհրդարանական հարցեր եւ Հայաստանի յառաջիկայ ընտրութիւնները: Ասոր յաջորդած է Վարդան Օսկանեանի տեսակցութիւնը վարչապետ Սէլիմ Հոսի հետ: Արձարձուած են Լեռնային Ղարաբաղի նուիրուած բանակցութիւններուն ներկայի իրավիճակը, Հայաստանի ընկերա-տնտեսական պատկերը, բարեփոխումները եւն.: Նոյն իրիկունը տեղի ունեցած են նաեւ հանդիպումներ լիբանանահայ համայնքին, ՀՅԴ, ՌՄԿ եւ ՍԴՀԿ Լիբանանի ներկայացուցիչներուն հետ: Մայիս 21ին, հայաստանեան պատուիրակութիւնը կը վերադառնար Երեւան:

*
**

### ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

Մայիս 20-ին, «Միասնութիւն» դաշինքը տնտեսական իր ծրագիրը ներկայացուցած է մասնագէտներու եւ պատկան անձերու: Հաւաքին մասնակիցները զոհացուցիչ գտնելով հանդերձ զայն, չեզոտած են արդիւնաբերութեան ոլորտէն ներս զերակայ ճիւղերը չեչտելու անհրաժեշտութիւնը, որ ծրագրին մէջ բացակայ է:

Համայնավար կուսակցութեան ընդհ. քարտուղար Ս. Բաղալեան ալ իր ընտրարշաւը չարունակած է Մայիս 20-ին, Արմաւիրի մէջ: Հանդիպումներ ունեցած է Էջմիածին եւ Արմաւիր քաղաքներուն, ինչպէս նաեւ Փարաքար եւ Նորակերտ գիւղերուն մէջ. դատապարտած է ներկայի իշխանութիւններուն ընկերա-տնտեսական սխալ քաղաքականութիւնը: Ան ըսած է նաեւ թէ երեսփոխանութեան թեկնածուները պէտք է բաժնել երկու խմբակի: Առաջինին մաս կը կազմեն ընտրապայքարի արդար եւ ազատ ուղին ընտրածները, երկրորդին՝ խարդախ ճամբով զործել վճռածները ու թեկադրած է ընտրութեան առեն նկատի ունենալ ոչ թէ ճարտար լեզուի եւ զրպանի տարողութիւնը, այլ վերջին տասը տարիներու գործունէութեան արժեւորումը: Ս. Բաղալեան որպէս Արցախի հարցին լուծման ալ երաշխիք վեր առած է «Ռուսաստան – Բելառուս» միութեան Հայաստանի ալ միանալու հարցը: Համայնավարներու իշխանութեան գլուխ գալու պարագային, ան մէկէն մէկուկէս տարի պայմանաժամ նախատեսած է երկրին մէկ դրական զգալի քայլեր նչմարելու համար: «Կոմկոսը իշխանութեան գալով ծայրայեղ բայլերի չի գնալու, վրէժխնդրութեամբ չի զբաղուելու, բանի որ նա վրէժխնդրութեան կուսակցութիւն չի» եզրափակած է ընդհ. քարտուղարը: «Արմէնփրէս» կ'ընդգծէ նաեւ որ Ս. Բաղալեան ամէնուրեք չատ չերմօրէն ընդունուած է:

ԱԻՄ-ի նախագահ Պարոյր Հայրիկեան ալ Մայիս 20-ին հրաւիրած է լրագրողները, անոնց ներկայացնելու համար

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՔԱՑԻ հարցը Ֆրանսայի հանրապետութեան կարծիքին համար Քոսովոյէն աւելի առաջնահերթ զարձած է, յատկապէս բանտարկուած նահանգապետին չբջանակէն հանող իրերայաջորդ եւ հակասական լուրերով: Մայիս 21-ին կը սպասուէր որ դատաւորին կողմէ Պոնչ հարցաքննուի: Իսկ նախորդ իրիկունը Գորսիքայի սպանեալ նահանգապետին՝ Էռնիմեքի հարցով զատաւոր Պրիւկնը մեզադրութեամբ ամբաստանելով քննութեան տակ առած է կղզիին ազգայնական ծանօթ զէմքերէն Մաթիէօ Ֆելիտորին: Ան նախապէս ալ քննութեան տակ առնուած, սպա ազատ արձակուած էր: Նոյն հարցով հակղութեան տակ առնուած են գորսիքացի եօթը ազգայնականներ:

ՔՈՍՈՎՈՅի ամբակածումներուն չափ ակած են նիւթ ըլլալ խաղաղութեան մը բանակցութիւնները: Անոնց հետամուտ զլխաւոր անձերն են Ֆինլանտիոյ նախագահը Ահթիսաարի եւ Իտալիոյ վարչապետը: Այդ բանակցութիւնները արեւմտեան կեդրոններուն մէջ կարեւոր կը նկատուին նաեւ ՕԹԱՆ-ի ճակատին վրայ ներքին ճեղքերէ խուսափելու մտահոգութեամբ: Արդարեւ, եւրոպական մայրաքաղաքներուն մէջ օր օր կը չեչտուի Ռաչինիչի քաղաքականութեան կտրական հետեւորդներ չըլլալու միտումը: Բան մը որ կրնայ ի վերջոյ պատակել ՕԹԱՆ-ի միասնութիւնը: Լուրջ հարց է նաեւ զաղթական զանգուածները ընդունելու, կամ անոնց ապրելի պայմաններ առեղծելու զործը: Այս ուղղութեամբ «Լիպերասիոն» (Մայիս 21) կը զրէր թէ Ապրիլի սկիզբը

(Շար·ը Դ· էջ)

ՀՈԳԵՒԱՆՈՒՍՏԻ տօնին առթիւ, «Ցառագ» լոյս չի տեսներ երկուշաբթի (երեքշաբթի, Մայիս 25-ի թիւ): Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի, Մայիս 26:

ընտրացուցակներու սուզման արդիւնքները: Շեչտած է թէ անոնք աւելի քան մտահոգիչ են: Պնդած է որ ընտրացուցակներուն աւելի քան 20-30%-ը չի համապատասխաներ իրականութեան եւ «կեղծուած է»: Պ. Հայրիկեան ըսած է թէ անոնց մէջ յաճախադէպ են կրկնութիւնները, անչափահասներ արձանագրուած են կեղծուած ծննդեան թուականներով, կան չատոնց արտազաղթածներու անուններ, մահացածներ եւլն.:

*
**

### ԳԱՐՆԱՆ ՉԻԻՆ

Մայիս 19 - 20-ի գիչերը Գեղարքունիքի մարզը տեղացած ձիւնը տարթավայրին մէջ 9 - 10, լեռներու վրայ 12 - 14 սմ. խաւ մը զոյացուցած է: Ցանկարծական ձիւնը զգալի վնաս պատճառած է տնտեսութեան. վնասուած են ելեկտրալարեր, պտղատու ծառեր: Շրջանին ջերմաստիճանը իջած է մինչեւ -2:

Ձիւնը վնաս պատճառած է Սիւնիքի հողամշակութեան ալ:

ԹՈՒՐՔԻԱ

## ՔԻՒՐՏ ՊԱՐԱԳԼՈՒԽ ՄԸ ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Քրտական զինեալ կազմակերպութեան ՓՔԿ-ի զեկավար զէմքերէն Շ. Սաքըք որ ձերբակալուած էր 1998 Ապրիլին, մահուան զատապարտուած է Թուրքիոյ պետութեան ապահովութեան Թիւ 1 ատեանին կողմէ որ կը զտնուի Տիյարպէքիր: Դատավարութեան համար որ սկսած էր 1998 Յունիսին, քիւրտ զեկավարը մերժած էր պաշտպան փաստաբան ունենալ եւ որոշած՝ զործակցիլ Թրքական իշխանութիւններու հետ:

Ան ամբաստանուած էր 191 սպարքով 125 ապահովութեան պաշտօնեաներու եւ 113 քաղաքացիներու մահուան պատասխանատուութեամբ: Իրեն հետ մահուան զատապարտուած է նաեւ եղբայրը Արիֆ: Երկուքին մահապատիժին հիմ կազմած է «Թուրքիոյ հանրապետութեան պատկանող հողերէն մաս մը անջատելու նպատակով սպարքներ զործելու» մեզքը: Երկու եղբայրները ձերբակալուելէ ետք փորձած էին զղջումի օրէնքէն օգտուիլ, զործակցելով իշխանութիւններու հետ, սակայն ատիկա ոչ մէկ օգուտ ունեցած է, հակառակ որ օրէնքը կը նախատեսէ նման յանցաւորները զերծ պահել մահապատիժէն:

Շ. Սաքըք վճիռի նիստին կրկնած է թէ ՓՔԿ-ի չարքերուն մէջ Ալտուլահ Էօճալանի զէմ ամէնէն սպմատական պայքար մղողը ինք եղած է միշտ եւ կը փափաքի չարունակել այդ ուղղութեամբ. ան ըսած է. «եթէ կարելի չըլլայ կանխատրվիլել, Թուրքիա կրնայ վերածուիլ Եուկոսլաւիոյ, քիւրտ ժողովուրդն ալ Ալպանացիներու կացութեան մատնուիլ»:

Ֆրանսական մամուլը լուրը տալով կ'աւելցնէ թէ Շ. Սաքըքի դատավճիռը զափար մը կուտայ Ա. Էօճալանի վախճանին մասին: Այս վերջինին զատավարութիւնը կը սկսի Մայիս 31-ին:

## ԹԱՏՐՈՆ

### «LE NOUVEL OBSERVATEUR»

(20-26 Mai)

ALAIN TERZIAN :
*UN TYCOON BIEN DE CHEZ NOUS*

Շաբաթաթերթը քաւական երկար յօդուած մը նուիրած է չարժանկարի արտադրող՝ Ալէն Թէրզեանի, կցելով նկար մը: Կը զրէ թէ ան յաւուտ զաղտնիք մը ունի: 1982, Մայիս 29-ի առաւօտը, հեռաձայնով իրեն կը հաղորդեն Ռոմի Շնէյտէրի մահը: Վերջն է երազի մը, անսանկութիւնը ծրագրի մը որ քով քովի պիտի բերէր, առաջին անգամ ըլլալով «Փիսինոն»էն ի վեր Ալէն Տըլոն եւ Ռոմի Շնէյտէր: Իրեն պիտի «պակսի» միչտ այդ Ֆիլմը:

Շնած Փարիզ, 1949-ին հայ ծնողքէ, Ալէն Թէրզեան ամէնէն աչխարհաքաղաքացի եւ ամէնէն արմատ ունեցող անձն է: Ան կ'ըսէ. «88 Ֆիլմ արտադրած եմ, բոլորն ալ ամբողջովին Ֆրանսական, լեզու, պերսոնան, թէքնիկին: Կը հաւատամ մշակութային արմատացումին, ոչ՝ տարատեսակումներու, չինծու Ֆիլմերու, զատ օտար տարրերու չարմարցուած Ֆրանսական իրականութեան»:

Մեր այս հարապատ թիֆուն, կը զրէ Ժան - Կասթրիէլ Ֆրէյէ, բայց հպարտ իր ծագումով, արտադրած է «Վիկթէօրները», զարեկամ է Պելմոնտոյի եւ Լըլուչի, 25 տարի է կը ծառայէ սինեմայի որոչ ըմբռնումի մը: Աչառեսուած է ինտելիկենցիային կողմէ որ կը ծաղրէ գեղարուեստական իր հասկացողութիւնը, բայց, ընտրուած է հանրութեան կողմէ:

Ցօդուածագիրը պէտ երկար կ'անդրադառնայ Ալէն Թէրզեանի տեսակէտներուն սինեմայի մասին:

# ԱՐԱ ԿԻԼԼԷՐ՝

## «ՊԻՏԻ ՄԵՌՆԻՄ, ԱՄԷՆ ՄԱՐԴԷ ԱԻԵԼԻ ՏԵՍԱԾ ԸԼԼԱԼՈՎ»

*Արա Կիլլէր լուսանկարչութեան մի-ջազգային շրջանակին ծանօթ անուններէն է: Իր լուսանկարները տեղ գտած են աշ-խարհի մեծագոյն տպաքանակներուն էջե-րուն մէջ: Անոր արդար համբաւին մէջ իրենց կարեւոր դերը ու-նին լուսանկարներու տպաւորիչ ալպոմ-ները որոնք ջերմ ընդունելութիւն կը գտնեն Թուրքիայէն շատ աւելի ընդա-ձակ սահմաններով սիրողներու, գնահա-տողներու շրջանակին: Վերջերս Թուրք մամուլին մէջ քանիցս էջեր նուիրուեցան անոր, չեշտելու համար Հայկական ծա-գումին պատճառով «Պետական արուես-տագէտ»ի տիտղոսին անարժան նկատուե-լու պարագան: Ինք ալ որոշ դառնու-թեամբ արտայայտուեցաւ այդ մասին, հաւանաբար քիչ մը աւելի ամուր գրկած լուսանկարչական իր գործիքը: Յետոյ, եղածը գոնէ մասամբ զարմանելու եւ մա-նաւանդ նման մեծ մը գնահատելու ծուռ չափանիշներու ամօթին Թրքական շըր-ջանակները փրկելու համար անոր ուրիշ պարգեւներ, կոչումներ նուիրուեցան:*

*Այս այժմէականութիւնը պատճառ ե-ղած է ապահովաբար որ «Միլլիյէթ» «Կիրակնօրեայ գրոյցներ»ու Մայիս 16-ի էջը նուիրած է Ա. Կիւլէրին: Հոն տեղ գտած է պատկերազարդ հարցազրոյց մը ուր վարպետը կը խօսի իր ըրածին, աշ-խատելու կերպին, ներչնչումի աղբիւրնե-րուն ու նաեւ շրջածներուն մասին, երբ կ'ըսէ. «ամէնէն գեղեցիկ լուսանկարներս անոնք են զորս չեմ նկարած»:*

*Զրուցավար լրագրողուհին՝ Նիւլիւֆէր Ճէյրահօղլու «դիտող, մանկունակ, գե-ղուն եւ հետաքրքրութիւնը: Ատկէ զուրկ մէկը, ինչպէս աշխարհի մարդոց 90%-ը, կը նայի պարապ պատին: Մինչդեռ կարե-ւորը տեսնուածը իմաստաւորելն է: Լու-սանկարին նախանիւթը կախարդանքն է, հմայութիւնը: Լուսանկարիչը այն անձն է որ այդ կախարդանքը կրնայ գործիքով ու ժապաւէնով գործածել, ինչպէս նկա-րիչը կ'ընէ գոյներով, ներկերով: Այլ խօս-քով՝ ըրածը կախարդութիւն է: Լուսա-նկարչութեան օգտակար կողմը բերած վիպայութիւնն է: Արուեստը պերճանք մըն է. կրնայ եւ չըլլալ: Մարդ կը սորվի լուսանկարել: Բայց ո՛չ արուեստը: Վար-պետ լուսանկարիչներու մօտ անպայման կայ արուեստի գիծը: Ան մէկուն մօտ նախրուածք է, ուրիշի մը քով զգացում, երրորդի մը՝ յանդուգն ստեղծականութիւն:*

*Լուսանկարիչը ինք իրմէ շատ քիչ բան կը դնէ նկարին մէջ: Ան կրնայ շատ բաներ մտածել, շատ յուզումներ ունենալ, սա-կայն միշտ անոնց և գործին միջև տեղ կը գրաւէ գործիքը: Ամէն բան անոր կարե-լիութեան կապուած է. անոր մարդն կ'անցնի: Անգամ մը լոյսը յարմար չըլ-լար, ուրիշ անգամ մը՝ իրերու դիրքա-ւորումը: Այսինքն՝ գրեթէ երբեք ամէն բան լուսագոյն պայմաններու մէջ կը գըտ-նուի:*

*Ա. Կիւլէրը հատած է այն աստիճան ար-հեստավարժութեան որ ամբողջ աշխարհը կը դիտէ քառակուսի չրջանակի մը ընդ-մէջէն: Զի կրնար լուսանկարելիքէն տար-բեր բան մտածել: Աչխարհին անդադար լուսանկարչական գործիքին ոսպնեակէն նայիլ, իրեն տրվեցուցած է տեսնել միւս-ներուն չտեսածները: Այդպէս, օրինակ՝ մինչ ուրիշ մը իրեն խօսակից լրագրողու-հիին մէջ կին մը պիտի տեսնէր, ինք կը տեսնէ անոր ուսերուն թափող լոյսին ու դէմքին վրայ ցոլացածին տարբերութիւ-նը, չրթներուն ծայրամասերուն փայլը, օդերուն չողշողումը: Այդ մանրամաս-նութիւնները ամէն անգամուն զատ զատ տեսնելու համար ալ ինք ուրիշներէ շատ աւելի բան տեսած ըլլալով պիտի մեռնի: Նոյնն է պարագան լաւ բեմադիրներուն, նկարիչներուն:*

*Իր նկարածները մարդիկը չեն, անոնց ապրումներն են: Կը լուսանկարէ կեանքէն դիմանկարներ: Կը զգայ թէ տիպարը ինչ կը մտածէ, ինչ տեսակ մէկն է: Կ'ուզէ որ իր լուսանկարէն մարդուն նկարագիրը ցոլանայ:*

*Ա. Կիւլէրի համար մեծ խնդիրը կը ներ-կայացնէ լուսանկարով լրագրողութիւնը որ չման վիպատազրութիւն է: Լուսանկա-րը ցոյց կու տայ զրուքեամբ անկարելին: Ինք այդ տեսակի լրագրող է: Կը պատմէ թէ ի՛նչ դժուարութեամբ իրագործած է Ինանընէվոյ չրջանի Սաւարաք կղզիին գանկի որսորդներուն մասին կատարած ռըփորթաժը: Ապա կը խօսի ներկայի թէք-նիքներուն տէր գործիքներէն ունեցած տեսլութեան մասին: Անոնց կարգին կը թուէ համացանցը, առճեռն հեռաձայնը, լուսանկարչական տիժիթալ գործիքները:*

*Ա. Կիւլէրը լուսանկարած է բազմաթիւ նշանաւոր դէմքեր: Անոնցմէ աւելի տը-պաւորուած է Փիքասոյէն եւ Թէնեսի Ուիլլիամսէն: Այս վերջինին ծանօթացած է Պոլիս. զայն կը նկատէ բեմական տրա-մախօսութեան լուսագոյն հեղինակը: Կը բարեկամանայ, Թրքական բաղնիք կ'ա-ռաջնորդէ դրագէտը, կը լուսանկարէ: «Թայմզ»ի մէջ լոյս կը տեսնեն նկարները. Ուիլլիամս Պարչելոնայի մէջ գինքը կը ծանօթացնէ Անայս Մանեանիին: Ան ալ մաս կը կազմէ չրջանի հռչակաւոր կինե-րու խումբին զոր լուսանկարած է:*

*Տասնեմեկ անգամ որպէս լուսանկարիչ ներկայ եղած է Գաննի փառատօնին: Մինչ շատ շատեր կը մտածեն որ կիներ պէտք է լուսանկարել հոն, ինք ուրիշ բաներու ալ կ'անդրադառնայ, ինչպէս, օրինակ՝ Ա. Մորավիայի հետ ծանօթանալու, կամ Վ. տը Սիքայի հետ խօսակցելու, Ժ. Գոդթօն, Օ. Ուէլլը տեսնելու առիթներու: Թղթակից – լուսանկարիչներու մեծ մասը այս կարգի դէմքերով չի հետաքրքրուիր:*

*Թուրքիայէն իր վրայ ամենախոր տպա-ւորութիւնը գործած է բանաստեղծ Եահ-եա Քէմալը: Չէ կրցած չհնդ – չնորհք լուսանկարել գինքը: Սակայն, ուրիշ Թուրք գրողներու չատ մօտ եղած է:*

*Արուեստի աչխարհին հետ սերտ կապը կը բացատրէ հօրը դեղարանին միջնոր-դութեամբ: Կ'ըսէ թէ քաղաքական թատրոնի արուեստագէտները դիմայար-դարումի հարկաւոր նիւթերը այդ դեղա-րանէն կը գնէին ու շատեր հօրը հետ բա-րեկամացած էին: Հայրը գինքը շատ յա-ճախ թատրոն կը տանէր: Կ'աւելցնէ թէ յաջորդ սերունդներու կազմաւորումին մէջ մեծ է արուեստագէտներու դերը: Ինք ալ բացառութիւն չի կազմեր. կը Թուէ ծա-նօթ Թուրք գրողներու անուններ – Օ. Վէլլի, Ս. Ֆաիք, Ս. Էյիւպօղլու, «Հալի-քարնասի ձկնորսը» – առանց որոնց Արա Կիւլէրը մը Թերեւս պոյուխիւն պիտի չու-նենար: Կամ պիտի ըլլար ուրիշ մէկը:*

ԱՐՓԻ ԹՈՓՈՁԵԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

# ՏՐՏՈՒՄ ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՐԳԻԶԸ

ՎԵՐԱՏԻՆ ԿԱՐԴԱԼՈՎ «ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ»Ը

— ● —

*Ճիշդ է, թէ այս վոքը հատորը միակը չէ քերթողին գրչին հայրդ: Կայ նաեւ միւս հատորիկը՝ «կեանքի ու մահուան երգեր»ը: Բայց արդէն առաջինը կը նկատի նախադուռը երկրորդին, իբրեւ ապրում կեանքի եւ սիրոյ այրող կարօտի՝ մահ-ւան չարակամ չուքին ներքեւ:*

*Եւ, երբ անգամ մը եւս կը կարդանք անոր տողերը, կրկին ու կրկին կը հա-տատենք, թէ հիւծախտի ճանկերուն մէջ գալարուն քանի մը քերթող մեր ռոմանթիկ քերթողութեան էջերը կը հարստացնեն: Մեծ ցաւին դէմ յանդիման՝ նկարագիր-ներէ, խառնուածքներէ թխող տարբեր կեցուածքներով: Անշուշտ, նկատի կ'ու-նենանք չրջանակն ալ, ինչպէս նաեւ ար-ուեստի աստիճանի նկատելի տարբերու-թիւնը, այս թէ այն կէտը:*

*Մատթէոս Զարիֆեանը կը մնայ զուսպ, հանդարտ, գրեթէ անխռով՝ դառնալով տեսակ մը սթոյիկ մօտեցումի արտայայ-տութիւն: Այսպէս, ճակատագրին հետ հաչտ՝ Մեծ ցաւը անխուսափելի փաստ ընդունելու անոր յայտնապէս ժպտուն դէմքը անկասկած չանցնիր: Եւ, հիանալի չամախանգով ան կ'անդրադառնայ դարա-նամուտ վախճանին: Աստիճանական քայ-լերով կարծես ան նոյնիսկ կը դիմաւորէ «հողին քունը», որ չամբարձնայ ընթաց-քով կը թառի անոր երխտասարդ կողերուն վրայ:*

*Ո՛չ մէկ բողոք, ո՛չ մէկ ըմբոստացում կամ նոյնիսկ դժգոհանք «սեւ ճակատա-գրին» դէմ: Ընդհակառակն, չամախ ժը-պիտ, թէկուզ դառն: Կը խորհրդածէ, –*

Երբ մարդ կուլայ խաղաղութեան
երդին տակ՝
Իր աչքերէն, արցունքի տեղ,
Հոգիին մութ վարդե՛րն են որ
կը մաղուին...
Ու այդ քոյրո՞վ է որ միայն
մարդ կրնայ,
Երբ սկսի բերթուածն հիւանդ երկնքին,
ժպտի՛ր, ժպտի՛ր՝
Ցաւին հետ այս կեանքին...
(Նոր Հիւղակս)

*Եւ կը հեգնէ, –*

Քանի կ'ածի ցաւը մարմնիս,
ժպիտը աչքիս վարդ կ'ըլլայ.
Ցուրտ հոգիիս կ'անցնի մայիս,
Ու լոյս կ'իյնայ եակտիս վրայ...

Ու այս վարդով, այս գարունով,
Կ'երգեմ Ան որ կուգայ.
Ան որ կուգայ, հողին հունով,
Քրնացընել ցաւն հսկայ... (Հեգնանք)

*Այո՛, դալուկ քերթողին աղջիկները միշտ սէր կը ներչնչեն: Սրտառուչ դըր-ւագներու վրայ յամեցող անոր անդրա-դարձները դէպի իր անցուցած երանուէտ օրերը, երազային խաղերը պարմանուհի-ներու հետ, մանկունակ աչքերով խռովիչ աղջիկները Զարիֆեանի համար կը դառ-նան կարեկից «քոյրեր» կամ՝ այլեւս ան-հասելի, անհպելի էակներ: Չէ՞ որ ան կը զգայ, թէ իր ծաղկող մաքուր սէրը «տըժ-դոյն ծաղիկ» մըն է, կամ «հիւանդ կա-րապ» մը, եւ կամ՝ «մեռնող նշոյլ» մը անդօր այրելու.*

Բայց ես իրեն չըսի՞, չըսի՞,
Իրիկուրնէ, մութը չիջած.
Որ ցուրտ հովէն եթէ մսի՝
Այս հոգիովս, ցաւէն շիջած,
Չէի կրնար հուր տալ, չըսի՞... (Չըսի՞)

*Լեզի –անոյշ երազներով օրօրուն բա-խումն սիրտ մըն է «Տրտմութեան եւ խաղաղութեան երգեր»ու հեղինակը:*

*Սիրատենչ սիրտ մը, որ ատ՞ղ կը չիյի դեռ ծաղկուն տարիքին, զալարուե-լով հիւծախտի ճիրաններուն մէջ...:*

Թ. ՄԻՐԻՋԱՆ

# «ԲԱԽՏԸ ԻՐ ՁԻՆ ՊԱՅՏԵՑ...»

*Այս խորագիրով կէս էջի մը մէջ, քա-տական օրաթերթը «Իօգկիւր փոլիթիքա» (Մայիս 18) կը ներկայացնէ Գրիգոր Ճէյհանի վերջին հատորը (Թրքերէն) որ լոյս տեսաւ Պոլսոյ «Արաս» հրատարակչա-տունէն: Հատորը տառացիօրէն խորագրը-ւած է. «Բախտը իր ձին պատեց... ու ինկաւ մեր եանէն»: Հոն ինքնուս հեղինա-կը կը պատմէ Սերաստիոյ Զառա գաւա-ռակի իր մանկութեան դրուագները: Ման-կութիւն որ զուգադիպած է հանրապե-տութեան առաջին տարիներուն: Իրմէ նոյն նիւթով, նոյն հրատարակչութենէն ասկէ առաջ լոյս տեսած էր առաջին հա-տոր մը որ խորագրուած էր. «Զօրակոչի երգերով մեծցայ ես»:*

*Գ. Ճէյհան ներկայիս կ'ապրի Գերմա-նիա: Յայտնի ափսոսանքով կ'ըսէ թէ ձ կրցած ուսումը չարունակելու համար Պոլիս երթալ, բայց կարզալով յատկա-պէս իրապաշտ գրողները, չնայած է ու-սումին պակասը լրացնել: Այդ նախընտ-րութիւնը առիթ եղած է ծանօթանալու, բարեկամանալու կարգ մը ժամանակակից Թուրք գրողներու հետ: Կ'ըսէ թէ ունի հրատարակուած չորս ուրիչ հատոր-ներ ալ. վոքոած է հայերէնէ յարաբե-րութիւնները իրապաշտ ակնոցով մը, ա-ռանց ազգայնամոլութեան ծուղակը իյ նալու, իրական տուեալներու հիմով պատ-մել: Իւրացուցած է ընկերվարական հա-կումները ու այդ պատճառով բաղմից ձերբակալուած:*

*Խօսելով իր մանկութեան չրջանին մա-սին, կ'ըսէ. «Յունգումպալի օրեր էին: Հա-կառակ որ հանրապետութիւնը առանձնա-շնորհումներէ մաբրուած, զօդուած ընկե-րութեան մը մասին կը խօսէր, մեր ման-կութեան շրջանին կը զգայիմ որ մեզի երկարող կակուղ ձեռքերուն մէջ կար եր-կաքեայ ձեռք մը: Սակայն, այդ ընթաց-քին բայլ յարմարցնելու պարտաւոր էինք:*

*... Հակառակ որ Իթթիհատ եւ թե-րաքիի Հայերը անգթօրէն տեղա-հանած ու ափսորած է զանոնք քան-ջնչելու ջանքով, Հայերը յաջողած են կենդանի մնալ: Ատիկա մեծ ադէտ մըն էր: Ժողովուրդները դարերէ ի վեր Անա-տոլուի մէջ յաջողած են միասնաբար ապ-րիլ: Օրինակ՝ Զառայի մէջ Հայեր, Քիւր-տեր, Թուրքեր համերաչխ կերպով կ'ապ-րէին: Մշակութային փոխ – յարաբերու-թիւն կար: Սակայն, կը զգայիմ որ ձՀՓ կուսակցութիւնը այդ կացութիւնը ժողովուրդին աչքով չի դիտեր: Որովհե-տեւ ճոյնիսկ երբ կ'ըսուէր որ մենք յա-ռ բարի էինք, եւայլն, աղբահաւաք ան-գամ չէինք կրնար ըլլալ...»:*

*Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադիր չրջանին պատահածները Գ. Ճէյհան կը բացատրէ Ֆրանսական յեղափոխութեան յատկացած ազդեցութեամբ որ արթնցու-ցած է ազգայնամոլութիւնը եւ հաւատքա-կանութիւնը որ կրօնական յատկանիչ ու-նէր, չնայած է վերածել ազգութեան: «Մ. Քէմալ իսկ երբ ճոյնիսկ անոնցմէ անջատուած է, իր կիրարկումները անոնց ըրածին ամբողջացումը եղած են: Ուզե-ցին առանց փուշի վարդաստան մը ունե-նալ: Ատիկա ըրին պատմութեան, լեզուի չեմ գիտեր ինչի միութեան պատրուակով: Բոլոր ժողովուրդները միակ ինքնութեան մը տակ հաւաքելով»:*

*Գ. Ճէյհան ամէն առիթով կը չեշտէ որ պատմածները ապրուած իրականութիւնը կը ցոլացնեն, երեւակայական ոչինչ կայ անոնց մէջ եւ «ճոյնիսկ քիչ պատմուած է»:*

*Նոյն հատորին մասին ծանօթագրուած էջ մըն ալ ունէր Մայիս 11-ի «Միլլիյէթ»ը:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՒԱՌԷՆ

# ԱԽԱԳՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆ ԻՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԷՔԻՄԵԱՆԻ

Լիոնի եւ շրջանի հայութիւնը յիշատակելի օր մը ապրեցաւ Կիրակի, Մայիս 2-ին: Արդարեւ, այդ օր տեղի կ'ունենար Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Իսահակ Քհնյ. Հէքիմեանի Ա. ստուգութեամբ տիտղոսի տուչութիւնը եւ Սեւ Ծաղկեայ Փիլոն կրելու իրաւունքը: Կատարեան ժամերգութեան ընթացքին արդէն ժողովուրդը ակած էր տեղերը գրաւել, ժընեւէն եղուարդ Սրկ. Դաւիթեան, եւ ուրարակիր Արէթ Թաշուրեան յատկապէս եկած էին մասնակցելու օրուան հանդիսութեան:

Օրուան պատարագը մատուցանեց Իսահակ Քհնյ. Հէքիմեան, արարողութեան նախագահեց Լիոնի եւ Երջանի Հայրապետական Պատուիրակի փոխանորդ Նորվան Եպիսկոպոս Զաքարեան: Ան իր քարոզին մէջ գնահատեց Տէր Հօր ազգանուէր եւ եկեղեցական ծառայութիւնները:

Իսահակ Քհնյ. Հէքիմեան ծնած է Պոլիս 1942-ին եւ յաճախած է Ֆէրիւգիւղի Մկրտչեան հայկական դպրոցը, նոյն ժամանակ ծառայած է փոքր տարիքին սեղանի Սուրբ Վարդանանց Եկեղեցւոյ մէջ: Ան օծուած է Կ. Պոլսոյ Պիւլիւքտէրէի Ս. Հռիփսիմեանց Եկեղեցւոյ մէջ 1976-ին, Հռիփսիմեանց տօնին օրն իսկ ձեռամբ՝ Կ. Պոլսոյ Երջանկայիշատակ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանի: Կարճ ժամանակ մը ծառայելով Պոլսոյ եկեղեցիներուն մէջ, Լիոնի Ազգային Միութեան վարչութեան եւ Դաւիթ Արք. Սահակեանի հրաւէրով եւ Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Սերովբէ Արք. Մանուկեանի բարձր կարգադրութեամբ եկած է Լիոն 1978 Յունուար 6-ին, ատանձնելու համար հոգեւոր հովիւի պաշտօնը:

Ներկայիս 22 տարիներու վաստակ մը ունի ան Լիոնի հայ գաղութին մէջ, յիշենք որ Իսահակ Քհնյ. չնորհիւ իր ունեցած յարաբերութեան Լիոնի հատուցեալ հօտին հետ օգտակար կը հանդիսանայ բոլոր անոնց որոնք իրեն կը դիմեն գործ մը գտնելու նպատակով: Տարիներ առաջ հիմնած էր մանուկներու երգչախումբ մը:

Ծիսակատարութեան մէջ բծախնդիր է արարողութեանց կարգապահութեան: Իր կարեւորագոյն գործերէն մին է այս վերջին տարիներուն իր լոյս ընծայած երկլեզու եկեղեցական օրացոյցը, որ չատ օգտակար է անոնց համար որոնք կը հետեւին հայ եկեղեցւոյ ծիսակատարութեան:

Ամէն Երկուշաբթի առաւօտեան ժամը 10-էն 11 կը պատրաստէ Հայաստան ձայնասփիւռի ալիքներուն վրայ կրօնական յայտագիր մը, երբեմն համագործակցութեամբ Տէսինի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ղեւոնդ Ա. Քահանայ Ցարութիւնեանի:

Նկատի առնելով իր մատուցած բոլոր ծառայութիւնները Նորվան Եպիսկոպոս Աւագութեան տիտղոսի խնդրագիր մը ներկայացուց Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ Գիւտ Արք. Նազլեանի, որ իր կարգին դիմեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ներկայիս ուրախալի է որ Տէր Իսահակը այս տիտղոսին արժանացած է:

Նորվան Եպիսկոպոս իր երախտագիտական զգացումները յայտնելէ վերջ Ամեայն Հայոց Կաթողիկոսին եւ Գիւտ Արքեպիսկոպոսին, կոմիտաս երգչախումբը թնդացուց «Էջմիածին ի Հօրէ» չարականը, որմէ ետք հանդիսաւորապէս կարգացուեցաւ Կոնդակը:

Այս առթիւ, Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Ազգային Միութեան վարչութիւնը Կարպիս Մանուկեան հանդիսասրահին մէջ ընդունելութիւն մը կազմակերպած էր ի պատիւ իրենց ժրաջան հոգեւոր հովիւին, մասնաւոր յայտագիր մը ի գործ դրուեցաւ, ուր նախ վարչութեան նախագահ Պր. Ռոպէր Տօնիկեան զրուցատիւ արտայայտութիւններ ունեցաւ Իսահակ Քահանայի բազմամեայ տարիներու գործունէութեան մասին, ելոյթներ ունեցան, պատուոյ նախագահ Պր. Սեպուհ Սարեան, Դպրաց դասին անունով Խօսք առաւ Գէորգ Սրկ. Բոխանեան ուր կը յայտնէին իրենց ուրախութիւնը:

Վերջին խօսք առնողը եղաւ Իսահակ Աւագ Քահանան, որ իր խորագրած չնորհակալութիւնները յայտնեց իրեն ի պատիւ եղած այս մեծարանքին համար, ըսելով սա պահուս անձին հանդէպ չռայլուած գովեստները անհանգիստ կ'ընեն զիս, սակայն քանի որ այս զաղութին հոգեւոր հովիւն եմ երկար տարիներէ ի վեր, այս գովեստները կը պարտիմ անոնց՝ որոնց գործակցութեան չնորհիւ արժանացայ եւ որուն համար երախտապարտ եմ: Կիրակի, Մարտ 7, Կ. Պոլսոյ Երջանկայիշատակ Ամենապատիւ Շնորհք Արք. Գալուստեանի վախճանման 9-րդ տարելիցն էր: Ես ակնածանք ունեցած եմ Պատրիարք Հօր հանդէպ, ան է որ զիս քահանայ ձեռնադրած է ասկէ տարիներ առաջ, եւ նոյն օրը, ինչ զուգադիպութիւն, Մարտ 7, Կիրակի, Եպիսկոպոսը լինի կը հաղորդէր բարի լուրը, որ եկած էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, լինի համար մեծ օր մը եղաւ Մարտ 7-ը քանի որ Աւագութեան տիտղոսին արժանացայ:

Իսահակ Ս. Քհնյ. Հէքիմեան իր խօսքը վերջացուց չնորհակալութիւն յայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Գիւտ Արք.ի, Նորվան Եպիսկոպոսի որու չնորհիւ նաեւ արժանացած էր Ֆրանսական Պետութեան կողմէ Փալմ Ակատեմիքի շքանշանին: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ազգային Միութեան պատուոյ նախագահին, այժմու նախագահին, վարչութեան եւ հոգաբարձութեան անդամներուն, տարեւաւագներուն, ուրարակիրներուն, կոմիտաս երգչախումբին, կազմակերպութիւններուն (Լիոնահայ Տիկնանց Միութիւն, Կարմիր Խաչ, Կապոյտ Խաչ) բարերարուհի Տիկին Մարգարեան եւ վերջապէս բոլոր անոնց որոնք ղինք պատուած են:

ՎԱԶԳԻՆ ԷՄՔԻՃԵԱՆ

## — ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊԻՅՐՈՒԹի Հ. Յ. Դ. Դրօ վոմիտէութեան ակումբին մէջ, Մայիս 2-ին տեղի ունեցած է Դրօյի (Դրաստամատ Կանայեան) կիսանդրիի (գործ Վարդան Աճեմեանի) բացումը: Կոմիտէին անունով բացման խօսքը արտասանած է Զաքար Քէչիչեան, որ անդրադարձած է լիբանանեան պատերազմի տարիներուն «Դրօ» կոմիտէութեան ընկերներուն վիճակուած պարտաւորութեան՝ թաղերու պաշտպանութենէն մինչեւ Հ. Յ. Դ. Ազգային եւ Յեղափոխական ատեաններու պահպանումը, նաեւ անձնական կեանքի զոհաբերումով: Իր խօսքի աւարտին, Դրօ կոմիտէի հիմնադիրը ընկերներէն եղիչէ Շամլեան կիսանդրիին բացումը կատարած է: Ասոմբ մը պատանիներ երգած են Դրօյի նուիրուած երգը: Ասոք առած է Հրաչ Տանոպեեան եւ ուրուագծած Դրաստամատ Կանայեան՝ մարդը, դաշնակցական գործիչը, պատերազմի դիմուորը, հայկական բանակի զօրավարը, չեչտելով անոր գերը 1918-ի առաջին անկախ Հանրապետութեան ստեղծման մէջ: Օրուան հանդիսութիւնը վարուած է Վրոյր Վ. Տէմիրճեանի «Պահպանիչ»ով:

***

ՊԻՅՐՈՒԹի Համազգայինի Հայապետական բարձրադոյն հիմնարկը այցելած է, Մայիս 3-ին, Հայաստանի դեսպանը՝ Արման Նաւասարդեան, կրթական եւ երիտասարդական հարցերու իր խորհրդակցին՝ Շահան Գանտահարեանի հետ: Զրոյցնիք ընդունած է Հիմնարկի տնօրէնը՝ Երուանդ Փամպուքեան, դաստիարակական կազմի եւ ուսանողութեան կողմէ: Հանդիպումը տեղի ունեցած է գրադարանին մէջ, ուր խօսք առած է նախ Ե. Փամպուքեան, ապա՝ Ա. Նաւասարդեան: Ուսանողութիւնը դեղարուեստական յայտադիր մը ներկայացուցած է:

***

ՊՈԼՍՈՑ Ձ�էմալ Րէչիտ Րէյ համերգասրահին մէջ, Մայիս 6-ին, Մխիթարեան պետութեան կողմէ Փալմ Ակատեմիքի շքանշանին: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ազգային Միութեան պատուոյ նախագահին, այժմու նախագահին, վարչութեան եւ հոգաբարձութեան անդամներուն, տարեւաւագներուն, ուրարակիրներուն, կոմիտաս երգչախումբին, կազմակերպութիւններուն (Լիոնահայ Տիկնանց Միութիւն, Կարմիր Խաչ, Կապոյտ Խաչ) բարերարուհի Տիկին Մարգարեան եւ վերջապէս բոլոր անոնց որոնք ղինք պատուած են:

ՎԱԶԳԻՆ ԷՄՔԻՃԵԱՆ

Սամուէլ Միութեան նորակազմ Դպրոցական երգչախումբը իր առաջին ներկայացումը տուած է: Ասոմբին գլխաւոր պարուսոյցներն են Ժուլիա Մուրատեան եւ Գէորգ Սիմքէչեան, տարազները պատրաստած է Ժանին Փափազեան, երգչախումբին դեկավարն է Տիգրան Գարակէօզեան: Բացումը կատարած է կազմակերպիչ յանձնախումբին առենապետը՝ Հերման Օգինեան, հանդիսավարն եղած է Բիւզանդ Ապաջ որ հայերէն եւ թրքերէն բացատրութիւններ տուած է ամէն մէկ կտորին մասին: Երեկոյթին յաջողութեան մէջ, կարեւոր բաժին ունեցած է նաեւ նուագախումբը: «Բարեկամութեան երգը», «Վարդավառի տօնը», «Ծրտուիլակներու պարը», Հայկական հարանիք մը մաս կազմած են յայտագրին որ ջերմ ընդունելութեան արժանացած է:

***

ՍԷՆԹ ԳԱԹՐԻՆԶի (Գանատա) Հայ կեդրոնի սրահին մէջ, Մայիս 2-ին տօնուած է «Մայրերու Օր»ը կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Արագ մասնաճիւղին: Օրուան խօսքը արտասանած է Տիկին Էլիզ Թաչճեան որ անդրադարձած է տիպար մօր մը առաքինութիւններուն, չեչտելով թէ տիպար մայրը հիմնաքարն է իր տան: Հ. Յ. Դ. Ազդրանիկ կոմիտէի հերթապահը Սեպուհ Թոքաճեան չնորհաւորած է «Մայրերու Օր»ը: Յանձնախումբը «Տարուան մայրը» հռչակած է Տիկին Նըւարդ Ռէգլեմեան: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը:

***

ՄՈՆՐԻԱԼԻ Հայ կեդրոնի Ա. Ահարոնեան սրահին մէջ, Մայիս 9-ին, տօնուած է ՀՕՄ-ի Օրը կազմակերպութեամբ տեղւոյն Սօսէ մասնաճիւղին: Սկզբնական գեղարուեստական բաժինէ մը ետք, Մայտա Գաբրիէլեան զեկուցում մը կատարած է ՀՕՄ-ի միամեայ գործունէութեան մասին, ապա Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգաբարձութեան տեղապահին՝ Վարուժան Սերոբեանի յանձնած է մասնաճիւղին տարեկան նպաստը եկեղեցւոյ դպրոցներուն (28 հազար տոլար):

***

ԹՈՐՈՆԹՈՑի Հայ կեդրոնի Ց. Մանուկեան գրադարանին մէջ, Մայիս 7-ին նչուած է Հայ Հորիզոն հեռատեսիլի հիմնադրութեան 5-րդ տարեդարձը: Հիւրասիրութենէն ետք, բացման խօսքով հանդէս եկած է Հայ Հորիզոն հեռատեսիլի յանձնախումբէն՝ Մատթէոս Տէրտէրեան որ պատմականը ըրած է կայանին:

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

– Թորգոմ տեղի կունայ, – ընդմիջեց Աբշամ, – բայց նորէն յանցաւոր է, զբոսանքը այդչափ դրամով, մանաւանդ ուրիշին պատկանած դրամով փոքերի նըսեւելու չէը:

– Աչուշա, բայց ինչպէս ըսի, խեղճ ոգան քիչ մը դիւրաւ տարուող է, զօրաւոր կամք չունի:

– Յետո՞յ...

– Երկուքը միասին կ'ուղղուին օթէլ, պայմանով, որ Թորգոմ ժամ մը միայն մնայ ու յետոյ երթայ պանքան իր գործը տեսնելու:

– Վասս գիտէ՛ այդ տեսակ պայմանները անգամ մը սեղանին առջեւ նստելէ ետքը:

– Օթէլին մէջ Շաւարշ Թորգոմը կը ներկայացնէ իր ռուս բարեկամին, որուն քով ուրիշ ռուս մըն ալ կայ եղեր: Երկուքն ալ չատ շիք ու չնորհքով մարդիկ, դոնէ Թորգոմին այնպէս կը թուի: Վերջապէս կ'անցնին սեղանին չուրջը: Նախ բախտը կը ժպտի Թորգոմին եւ բաւական կը չահի...

– Ընդհանրապէս առանկ կ'ըլլայ դէմ-բախտաբար, – նկատեց անօրէնը:

– Քանի մը հարիւր ոսկի կը չահի:

– Զգելու ելլելու էր, քանի որ առաջուց ալ պայման դրեր է չատ չմնալու:

– Խեղճ ոգան կ'ամչնայ, մանաւանդ, որ Ռուսերը չքեղօրէն կը պատուասիրեն զիրենք, չամբանեաներով, պատուղներով, աղանղերներով: Եւ ահա բախտը կը դառնայ ու կը սկսի կորնչցնել, սարսափելի gigne մը, որ կը չարունակէ մինչեւ եթքը:

– Եւ երեք հազար ոսկիները կը հալին...

– Կէս գիշերը հասած է եղեր, երբ ա'լ բոլորովին անակնկալած՝ Թորգոմ կը սոխուի խաղը թողուլ ու տուն դալ:

– Իսկ Շաւարշ Մոսկե՞նց:

– Անիկա քանի մը հարիւր ոսկի չահեր է, իսկ մնացածը միւս երկու Ռուսերը:

– Ուրեմն միակ կորնչցնողը Թորգոմ եղած է:

– Այո՛, – պատասխանեց Գուրգէն:

– Պարզապէս գինքը կողոպտած ըլլալու են:

– Կը կարծե՞ս:

– Աւտր քնաւ տարակոյս չկայ:

– Բայց Թորգոմ կ'ըսէ, թէ երկու Ռուսերը չատ ճէնթլմէն մարդիկ էին:

Թորգոմը միամիտ ոգուն մէկն է ... այդ երկու մարդիկը խարդախ խաղամոլներ ըլլալու են ... մանաւանդ, քանի որ դործին մէջ Շաւարշ Մոսկենցն ալ մտած է, յայտնի է, որ Թորգոմը պարկեչտ մարդոց մէջ չէ դտնուեր:

– Իրա՛ւ է, որ այդ Շաւարշը չատ կասկածելի մէկը կ'երեւայ, – ըսաւ Գուրգէն:

– Մարդ մըն է, որ դրամի համար կրող է ամէն բան ընել:

– Վերջապէս խեղճ Թորգոմը խաղի եկած է իր չափազանց միամտութեան երեսէն:

– Իսկ երեք հազար ոսկիին խնդիրը ի՞նչ եղաւ, դրամները արուեցա՞ն, – հարցուց անօրէնը:

– Խնդիրը կարգադրուելու վրայ է, – պատասխանեց Գուրգէն խուսափողական ձեւով մը:

– Դրամը տուող կա՞յ, – պնդեց միւսը:

– Բայց նախ դրամ ուղղ չկայ:

– Ինչպէ՛ս...

– Այդ դրամը անմիջական պէտքերու սահմանուած չէր, այլ իրրեւ պահեստի դրամ պիտի մնար ու տաեն – տաեն, երբ պէտք մը ներկայանար, պէտքին համեմատ պիտի առնուի, այնպէս որ, եթէ Տիկին Սկամպիլեան չանձն առնէ այսպէս հարկ եղած տաեն պէտք եղած դրամը տալու՝ ալ խնդիր չի մնար: Սեպէ, թէ դրամը փոխանակ պանքան՝ տիկինին քով պահ դրուած է:

– Բայց պանքան տոկոս կը վճարէ, – դիտել տուաւ անօրէնը:

– Ալ այսչափ խստապահանջ պէտք չէ ըլլալ:

– Գոնէ Տիկին Սկամպիլեան չանձն առաւ մաս առ մաս դրամը տալու:

– Աչուշա, անչուշա, ալ խնդիր չէ մնացած, ամէն բան կարգադրուած է:

– Իսկ Թորգոմը ի՞նչ կ'ընէ կոր:

– Խեղճը հիւանդ է, տունէն դուրս ելած չունի:

– Իրաւունէ՞ թէ կեղծ հիւանդ:

– Եթէ ճշմարտութիւնը կ'ուզես՝ լրեն խորհուրդ տրուեցաւ, որ քիչ մը տաեն մէկդաեղ չերեւայ:

– Բայց քանի որ խնդիրը կարգադրուած է կ'ըսես...

– Այո, նիւթականը կարգադրուած է, – պատասխանեց Գուրգէն, – մնայ բարոյական մասը կայ, քիչ մը ժամանակ պէտք է անցնի, որ մոռցուի, մանաւանդ որ գործը ծածուկ չմնաց ու ամէնուն բերանն է, թշնամիներ ալ կան, որոնք մատերնին վախթած են ու ելած մատ տեղերնին այս խնդիրին վրայ կը խօսին: Ամէնէն գէշը այն է, որ եղածը Աթթիկ պէյի պէս չարախօս ու hատար մէկու մը ականջը հասեր է ... ալ տեղ չէ մնացեր, որ չերթայ չպատմէ:

– Հոս ալ եկաւ եւ ստիպեց, որ թերթին մէջ գրենք:

– Միւս խմբագրատուններն ալ պտրտեր է նոյն նպատակով, պարզապէս կ'ուզէ վրէժ լուծել Թորգոմէն:

– Իրարու հետ խնդի՞ր ունեցած են:

– Այո, կնկան խնդիր, Թորգոմը Աթթիկ պէյին մէքրէար ձեռքէն առեր է ... հին պատմութիւն: Մէկ կողմէն Թորգոմի դէմ կը փչէ, միւս կողմէ ոգը Տիկին Սկամպիլեանի տունէն պակաս չէ:

(Շար. 28)

(Շար. Ա. Էջէն)

չուրջ 400 հազար դիմում ըլլալով հանդերձ Թրանսացինեքէ, անոնց միայն 2000 – 2500–ը յարմար նկատուած են Քոսովոյէն ապաստանեալներ ընդունելու: Միւս կողմէ ամրակոծութիւնները չարունակուած են Մայիս 20–ի գիշերն ալ, թիրախ առնելով Պելգրատի հրշեմային հեղուկ վառելանիւթի մթերանոցները: Ի. Սոլանա յայտնած է որ ՕԹԱՆ վճռակամ է չարունակելու նոյն ուղղութեամբ, մինչեւ որ բոլոր գաղթականները վերադառնան իրենց բնակավայրերը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ նախկին նախարար Գլօռա Էվէն կրնայ դատական հետապնդումի ենթարկուիլ, վարակուած արեան հարցով: Այդ թղթածրարը կրկին բացուած է դատաւոր Պարթէլլա – Ժէֆբուայի կողմէ: Նախկին նախարարը ամբաստանուած է վարակուած արեան նեբարկումին հետեւանքով մահացած անձի մը ընտանիքին կողմէ, այդ արիւնը հըբապարակէն վերցուած չըլլալուն համար: Նոր դատապարտութեան վտանգ կը սպասնայ նաեւ բժիշկ Կառեթթայի որ արդէն բանտարկութեան պատիժ մը կրած էր: Ան անօրէնն էր արիւնի ապպային կեդրոնին. ներկայիս կ'ամբաստանուի լռելու յանցանքով, քանի որ կ'ըսուի որ գիտակից էր թէ վարակուած արիւն ներբերուած հիւանդներու 20%–ը մահուան բացայայտ սպառնալիքին ենթակայ էր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ – ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ մէջ կը չեշտուի պատանեկան չարագործութեան ալիքը: Գոլորատոյի մէկ լիսէին մէջ Մայիս 20–ին 15 տարեկան աշակերտ մը կրակ բանալով պատճառեցած է 6 պատանիի ծանրօրէն վիրաւորելուն: Իրեն կրցած են արգելք ըլլալ ճիշդ այն պահուն երբ կը պատրաստուէր դէնքը պարպել իր բերնին մէջ ու անճնասան ըլլալ: Պատահարին մասին հետաքննիչէն արտայայտուած եւ ցաւ յայտնած է նախագահ Գլինթըն, չեչտելով որ անհրաժեշտ է բոլոր Ամերիկացիներուն միասնական ջանքը, արգելք ըլլալու համար որ բռնութիւնը ծաւալի վարժարաններու մէջ:

ՀՌՈՄԻ մէջ Մայիս 20–ին ատրճանակի բազմաթիւ կրակոցներով սպանուած է նախկին պետական ենթանախարար ու ներկայի Աչխատանքի նախարարին խորհրդական Մասիմօ տ'Ալեմանա: Ոճրագործները յայտնած են փախուստի դիմել: Ասելի ուշ արարքը ստանձնած է «կարմիր Ջոկատներ» կազմակերպութիւնը:

ԻՍՐԱՑԷԼԻ նորընտիր վարչապետը Եհուտ Պարաք այնպէս կը թուի որ պիտի պարտաւորուի դադրեցնել Լիբանան գտնուղ իրենց զօրախումբերուն հարցով. ատոնց մէկ մասը տեղեկացուցած է որ ներկայի պայմաններուն մէջ չեն կրնար աւելի երկար հոն մնալ, պաշտպանելու համար 10 քիլոմեթր լայնքով ապահովութեան գօտին: Այդ զօրախումբերուն բանբերը յայտնած է թէ միջազգային բարձրաստիճան դեկավարներ ալ համամիտ են մասնակի նահանջի մը:

ՊՈԼՍՈՑ Ցունաց սիեպերական Բարթողմէոս պատրիարքը Աթէնք դարձած է ուր դիմաւորուած է Ցունաստանի Հանրապետութեան նախագահին եւ վարչապետին

## Մայրերու Օրը

*Մարսէյլի Կապոյտ Խաչի Սօսէ Մայրիկ մասնաճիւղի կազմակերպութեամբ Շաբաթ, Ցունիս 5–ին, ժամը 15–ին, Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ «Վէրան Շանթ» սրահին մէջ:*

*Կը բանախօսէ՝*
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՅՈՎՆԱՆՆԵԱՆ

*Հիւրասիրութիւն, գեղարուեստական յատկապիր:*

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGISE ARMENIENNE
DE CHAVILLE

vous invite

au *CONCERT*
*de la CHORALE*

**AKN**

(Direction Aram KEROVPYAN)

*«Chants liturgiques arméniens»*

Le Samedi 29 mai à 20 heures 45

EGLISE STE BERNADETTE
3, Pavé de Meudon — 92370 CHAVILLE

*— Participation aux frais —*


**EREVAN**

**2 vols directs hebdomadaires**
**en Airbus A310**
**de la compagnie**
**ARMENIAN AIRLINES**

**Départ Paris 2690 F**
**Départ Province 2800 F**

Renseignements & inscriptions :

**SEVAN VOYAGES**

**48, Cours de la Liberté — 69003 LYON**
**Tél. : 04. 78. 60. 13. 66;**
**Fax : 04. 78. 60. 92. 26.**

**SABERATOURS**
**19, rue Saint-Roch — 75001 PARIS**
**Tél. : 01. 42. 96. 10. 10;**
**Fax : 01. 42. 96. 18. 77**


*ՀՄՄ*
*Հայ Մարմնամարզական Միութիւն*

*ԿԱՅԾ*
*Նոր Սերունդ Մշակ. Միութիւն*

*կը կազմակերպեն*

## ՃԱՇ — ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

*հովանաւորութեամբ՝*
Հայաստանի Դեսպան
ՏԷր եւ Տիկին ԵՂՈՒԱՐԴ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ–ի

*մասնակցութեամբ՝* հանրածանօթ երգիչ
*ՍՏԻՍ ՀԱՐՄԱՆՏԵԱՆ–ի եւ իր նուագախումբին*

ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 19, ժամը 20·30–էն սկսեալ
*PALAIS DES ARTS ET DES CONGRES D'ISSY* (PACI)
25, avenue Victor Cresson — ISSY-LES-MOULINEAUX

*մասնակցութեամբ նաեւ*
*HARIS LASKARIS–ի (երգիչ) եւ MIKAELIS–ի (bouzoukiste)*

*Օրուան վիճակահանութեան գլխաւոր նուէրն է*
ՓԱՐԻԶ / ԵՐԵՒԱՆ / ՓԱՐԻԶ օդանաւի տոմս մը

*Տեղերը ապահովելու համար դիմել՝*
01 43 78 93 25 / 01 48 78 88 70 / 01 46 45 16 43 թիւերուն:

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28–ին)
Հոչակման 81–րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18–ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու աւարտին Հանրապետական Պաղթանք կ'ըլլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատութեան եւ բարգաւաճման համար:*

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

*ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Պօմոնի Նայիլի մասնաճիւղի վարչութիւնը, ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Մայիս 29, ժամը 15–ին, տեղւոյն Եկեղեցւոյ վերի սրահին մէջ:*


**Centre Culturel**
**SAINT MESROB**

Présentation d'un **DIAPORAMA**
ayant comme thème

**«D'Amassia à la Cilicie en passant par Ani»**

Des lieux chargés de mémoire arménienne, des images bouleversantes à découvrir

par **Edouard TOPALIAN**

Le **Mercredi 26 mai à 20 h 45**

au Centre Culturel SAINT-MESROB
10 bis, rue Thouin — Paris Ve

Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg

Entrée libre — Cocktail


## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes – 92130 Issy-les-Moulineaux.


**Imprimé sur les Presses**
**du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville, 75010 Paris**
**SIRET : 571 027 317 000 15**
**Commission Paritaire : N° 55935**



**ESPOIR POUR L'ARMENIE**
organise

**un Voyage**
**de tourisme humanitaire**

**DU 12 AU 19 JUILLET**

— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.

*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**


A L'OCCASION DES 120 ANS DE L'ECOLE TEBROTZASSERE

## «L'ARMENIE AU RAINCY»

PROGRAMME

**Vendredi 28 Mai, Samedi 29 Mai, Dimanche 30 Mai**

*Durant ces trois jours :*

- Exposition de peintres et sculpteurs d'origine arménienne : Asilva, G. Ayvayan, A. Berlian, J. Kazandjian, K. Kazan, C. Madoyan, M. Matéossian, K. Norikian, R. Sarkissian.
  — Galerie «Weider»; 31, avenue de la Résistance.
- Exposition : «Voyage à travers l'Arménie» et «Rétrospective de l'Ecole Tebrotzassère».
  — Centre Thierry Le Luron; 9, boulevard du Midi.

**Commissaire des expositions : Khatchik Kazan**

**SAMEDI 29 MAI**

- Dédicace d'ouvrages par leurs auteurs : A. Agoudjian, B. Bricout-Kasparian, W. Buss, J.-J. Varoujan.
  — Librairie «Notre Dame»; 76, avenue de la Résistance; de 15h à 17h;
  — Librairie «L'Ecritoire»; 29, avenue de la Résistance; de 15h à 17h.
- Défilé folklorique: Troupe «ASTRIG» accompagnée de l'ensemble musical «ARARAT» d'Arménie; avenue de la Résistance; de 17h à 18h.
- SOIREE DE GALA
  Chorale TEBROTZASSERE et Ballets Arméniens «NAVASART»;
  — Centre Culturel Thierry-Le-Luron; à 20 heures 30.
  P.A.F. : Adultes 100 F / Enfants 60 F.

**DIMANCHE 30 MAI**

- Vente de produits arméniens sur le marché de l'avenue de la Résistance: **«l'Arménie au Raincy».**
- Déjeuner traditionnel arménien avec ambiance musicale au Théâtre de l'Espace du Jardin Anglais; à 13h;
  — 65, allée du Jardin Anglais et de Finchley;
  P.A.F. : Adultes 150 F / Enfants 100 F.

*Renseignements & réservations :* Ecole TEBROTZASSERE : 01 43 81 01 72.

ՀՕՐԵԹՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 26
MERCREDI
26 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅԿԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ցթաթուա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·647 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.647

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

### «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 21 / 25)

### ԱՄՆ-ՒԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 21–ին ընդունած է նոր անկախացած պետութիւններու հարցերով ԱՄՆ Արտաքին Գործերու խորհրդական Ս. Սլոթմանովիչի գլխաւորած պատուիրակութիւնը։ Ամերիկեան խորհրդականը ըսած է թէ իր երկիրը չահադրգռուած է Ղարաբաղի հարցին կարգաւորմամբ եւ պատրաստակամ է աջակցելու բանակցութիւնները։ Կարեւոր նկատուած է յատկապէս հրշնային փոխադարձ վստահութեան ամրապնդումը եւ զոհածակցութիւնը։ Նոյն օրը վիրենք ընդունած է Պաշտպանութեան նախարար վ. Սարգսեան եւս։

*
**

### ԱԶԱՏԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ՝ ԱՐՄԱՏ

Մայիս 21–ին հիմնուած է «Արմատ» ժողովրդավարութեան եւ քաղաքացիական հասարակութեան զարգացման կեդրոնը որուն հիմնադիրները մեծ մասով Ազգային Ժողովի «Հանրապետութիւն» խմբակցութենէն են որոնք ըսած են թէ չեն մասնակցիր Մայիս 30–ի ընտրութեան։ 24 հիմնադիրներէն են Բ. Արարքցեան, երջանիկ Աբգարեան, Աբա Սահակեան, Տէր Յ. Լազարեան, Կարապետ Ռուբինեան, Դաւիթ Շահնազարեան, Ալ. Աբգուեանեան, Վահագն Խաչատրեան, Անահիտ Բախդուր։ Նախագահ ընտրուած է Բ. Արարքցեան, ապա ընդունուած է հռչակաւոր ուր կ'ըսուի թէ անկախութեամբ ընկրած ժողովրդավարացման ընթացքը ամրապնդելու համար անհրաժեշտ է մարդու իրաւունքներուն եւ ազատութիւններուն պաշտպանութիւնը, չրջանին մէջ կայուն խաղաղութեան ապահովումը, հանրութեան մէջ վարոյական չափանիշներու ամրապնդումը, եւայլն։

Նոյն օրը մամուլի ասուլիսով մը նախագահ Բ. Արարքցեան ըսած է թէ իրենք արմատը են այլ ուժերու հետ գործակցելու։ Պատասխանելով Լ. Տէր-Պետրոսեանի հետ գործակցութեան մասին հարցումի մը, ան ըսած է թէ նախկին նախագահը տեսակ է իրենց քայլին, սակայն կը չունակ քաղաքականութենէն միջոց մը հետու մնալու որոշումը անփոփոխ պահել։

*
**

### ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

– Մայիս 22–ին, «Ա. Խաչատրեան» ֆիլհարմոնիք մեծ դահլիճին մէջ Ա.ԺՄ–ն ներկայացուցած է նախընտրական իր ծրագրին ընդհանուր դիծերը։ Կուսակցութեան նախագահ Վազգէն Մանուկեան Հայաստանի իրավիճակը վերլուծելով ըսած է թէ անցնող տարիներուն ոչ թէ ազատականութիւն տեղի ունեցած է այլև «վայրագ չահամոլութիւն եւ թալան» որ կը չարունակուի մինչեւ այսօր։ Իրմէ հետք ելոյթներ ունեցած են նաեւ Արշակ Սադոյեան, Դաւիթ Վարդանեան, Սէյրան Աւագեան։ Նոյն օրը Ա.ԺՄ հանրահաւաք մը կազմակերպած է Զէյթունի հրապարտին, որուն մասնակցած է Արշակ Սադոյեան։

– Թէ 11 ընտրատարածքի թեկնածու, Ազգ. Ժողովի նախագահ Խոսրով Յարութիւնեան Մայիս 21–ին Հայկաոորի չէնքին մէջ հանդիպում մը ունեցած է ընտրողներուն հետ։ Ամիոփում մը ըստ

(Շար.ը Դ. էջ)

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՐՔՍՅԻ սպանուած նահանգապետին Խրիմեան մարզադասաններու խմբակը չորս աղջնականներ խոստովանեցան իրենց մասնակցութիւնը, Մայիս 24–ին։ Երեքտրեակ մարզադասանը, ասկէ առաջ ան որ կրակած է նահանգապետին ծոծրակին վախուսած մէջ է։ Ամէն մէկուն գերը ճշդուած է եւ ղէպքէն 15 ամիս առաջ կարելի եղած է քննութիւնը եզրափակել եւ մարզադասանները չորհուելու։ Ան որ վախուսած մէջ է, զաւակներէն մէկը կրնայ ըլլալ Սլավ – Մարիիմի ընկերվարական նախկին երեսփոխանի մը։ Երէկ վկայութեան չնորհաւորած է քննիչ ոստիկանները եւ չամփանները հրամցուցած, ինչ որ ամանք անտեղի գտած են։

ՕՔԱՆ–ի ամբաստանութիւնները կը չարունակուին նոյն թափով եւ օրէ օր Սերպերու կեանքը կը դժուարանայ։ ՄԱԿ–ի քննիչ յանձնախումբի մը համաձայն հարկ եղած փաստերը կան Քոսովօ հաստատելու համար որ ցեղային մաքրագործում մը կայ։

ԳԵՐՄԱՆԻՈՅ նախագահ ընտրուեցաւ Եոհաննէս Ռաու, 68 տարեկան։ Երկրորդ Սոսիալ – Դեմոկրատն է որ նախագահ կը դառնայ դաշնակցային հանրապետութեան (որ, ի դէպ, իր 50–ամեակը կը տօնէ)։

ԹԻՖԼԻՍԻ մէջ, Մայիս 23–ին, ութ անձեր ձերբակալուած են որպէս կասկածեալներ, որոնք Եվարնածէյի դէմ ահաբեկչական արարքներ կը պատրաստէին։ Կը կարծուի որ այս խումբը կապ ունէր գաղտնի ապատարկութեանց նախկին պետին՝ Իգոր Ձիորկածէյի հետ, որ արդէն ամբաստանութեան տակ է 1995–ին Եվարնածէյի դէմ մահափորձին վարդապետութեան մեղադրանքով։ Եվարնածէյ յայտարարեց թէ պատրաստած դաւը կը ձգտէր ոչ միայն ղինք սպաննելու այլեւ երկիրը ապակայունացնելու եւ թէ դաւադիրներն ալ Մոսկուա են զնդհանրապէս։ Այլ խօսքով Վրաստանի նախագահը Ռուսաստանը կ'ամբաստանէ։

ՇԱՐԺԱՆԿԱՐի Գաննլ փաստաօնի մըրցանակաբաշխութիւնը թեր ու դէմ կարծիքներու դուռ բացած է։ Ոմանց համար բծախնդիր ընտրութեան մը արդիւնք է, դատական կազմը խստացած է դիւրութեամբ։ Ուրիշներու համար պարզեւատրուած ֆիլմերը ամէնէն ողբալիներն են։ Ոակի մրցանակին արժանացաւ պելժիացի եղբայրներու Ռոզեթան, բեմադրութեան մրցանակը ստացաւ սպանացի Ամոտովար, որ իր մրցանակը ձօնեց նաեւ Եղոյեանի եւ Լինչի որոնք ոչինչ ստացան։ Լաւագոյն դերասանուհիները նկատուեցաւ երկու Ֆրանսուհիներ՝ Էմիլի Տէքէն (Ռոզեթա) եւ Սեվերին Գանել (Լ'իւմանիթէ), լաւագոյն դերասանի մրցանակին արժանացաւ Էմմանուէլ Շոթէ (Լ'իւմանիթէ) որ առաջին անգամ կը խաղար։ Ֆիկառօ (Մայիս 24) առանձին դրուագ մը նուիրած էր Ատոմ Եղոյեանի, անոնց չարքին որոնք իրենց դրոչմը դրած են փառատօնին վրայ։ Ան կ'ըսէ՝ «Երբեք չեմ խորհած որ ֆիլմերս մեծ հանրութեան համար կրնան ըլլալ»։

ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ հինգ հոգի եւս մորթուած են վայրագօրէն չարաթաւերջին։ Սպանութիւնները կը չարունակուին նոյն թափով եւ վերջին երեք ամիսներու ընթացքին 500–ի հասած է մեռելներու թիւը։

ԱՌՋԵՒՆ ՀԵՌԱՁԱՅՆԵՐԸ վտանգաւոր են ուղեղի խլիրդի տեսակէտէն, որովհետեւ երկու ուսումնասիրութիւններու (մէկը՝ չուէտական, միւսը՝ ամերիկեան) համաձայն կը նպատեն ուղեղի քաղցկեղային ուռեցքներու զարգացման։

ՃԻՆԱ. ԼՈՒՈՊՐԻՃԻՏԱ, 72 տարեկան, թեկնածու է եւրոպական ընտրութիւններուն Ռոմանօ Փրոտիի դեմոկրատներու ցանկին վրայ։ Սիլեմայէն զատ, դրակատութիւնն ալ թեկնածու մը ունի յանձին մարօքքի՝ Թահար պէն Ճէլունի որ նաեւ դեմոկրատներու թեկնածուն է Հոմի մէջ։

ԱԴՐԲԵՋԱՆի նախագահը Հ. Ալիեւ ԱՄՆ–ու մէջ սրտի վիրաբուժական դարձողութեան ենթարկուելէ ետք ապաքինման չրջան մը կը բոլորէ Անդարայի հանրապետութեան նախագահներու յատուկ առողջարանին մէջ։ Տասնօրեայ հանգիստ մըն ալ պիտի ընէ Միջերկրականի ափին։ Թուրք մամուլը Հ. Ալիեւի ցոյց տրուած ծայրայեղ խնամքը մեկնաբանելով կը գրէ թէ ատիկա կը մատնէ Անդարայի նախատուրմը որուն համաձայն Կովկասի հատասարակըշռութեան պահպանումին համար կարեւոր պատոյն ազդակն է Հ. Ալիեւ։

ԱՄՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ, քառ թուրք մամուլին, կ'իպրոսի համար Զուլեկերիոյ եւ Գանատայի համաձուլնակցութիւններուն օրինակով նոր տահմանադրութիւն մը կը պատրաստեն։ Հաւանական կը նկատուի որ Հոկտեմբերին նախագահ Գլինթընի նախաձեռնութեամբ ՄԱԿ–ի չրջանակին մէջ հանդիպում մը տեղի ունենայ Կիպրոսի հանրապետութեան եւ թրքական մասին նախագահներուն միջեւ։ Սահմանադրութեան պատրաստութեան համար կ'ըսուի թէ համամասութիւն տուած է ճարտարապետական հարցերու ժի – 8 խմբագրութեամբ։

ՔԻՒՐՏԻՍՏԱՆի Ազգային համագումարը Մայիս 24–ին բացուած է Ամստերտամի մէջ, քրտական բոլոր չրջաններէն 175 պատուիրակի մասնակցութեամբ։ Բացումը կատարելով Քիւրտիստանի աքսորական խորհրդարանի նախագահը Ե. Գայա ըսած է որ համագումարին գլխաւոր նպատակն է Քիւրտերու միջեւ երկխոսութիւն հաստատել, վերջ տալ պատերազմներու եւ լուծում վնտռել Քիւրտիստանի խնդրին։

ՔՐՏԱԿԱՆ մամուլը յայտնելէ ետք թէ թրքական բանակի ուժերը ի հարկին քիմիական զէնք կը գործածեն քիւրտ մարտիկներու դէմ, միջազգային հանրութեան ուշադրութեան կը յանձնէ Թուրքիոյ մէջ թոնաւոր կաղերու պատրաստութեան պարագան։ Կ'ըսուի թէ գերմանական, ֆրանսական, զուիցերական հաստատութիւններու բաժնեկիցներ գեղ արտադրող թրքական ինը գործատուներու մէջ կենտրոնական եւ քիմիական թոնաւոր կաղեր կը պատրաստուին։ Տրուած է գործատուներու ցանկն ալ որոնց մէջ կան «Ֆայդէր»ի, «Հէօքսթ»ի, «Ռոչ»ի նման ծանօթ անուններ։

ԹՈՒՐՔԻԱ

## ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՑԸ՝ ՎԱԶԳԷՆ ՊԱՐԸՆ

Շիլլիի (Պոլիս) քաղաքապետը, ինչպէս դրեցինք, նախընտրական իր խոստումը յարդելով վերջ – քաղաքապետի պաշտօններէն մէկը յանձնած է հայ ճարտարապետի մը որ կը կոչուի Վազգէն Պարըն։ Ծնած է 1949–ին Շըրնաք (Հարաւ – արեւելեան Անատոլու)։ Նախակրթարանը հոն աւարտելէ ետք, աշակերտած է Ս. Մաչ Դպրեվանքին տակ չրջանաւարտ ըլլալով յաճախած է Թէքնիք Համալսարան ու վկայուած ճարտարապետական ճիւղէն։ Ներկայիս կը գրաղի նաեւ առեւտուրով։

Քաղաքապետ Մուսթաֆա Սարըկիւլ անոր յանձնած է ժողովուրդին հետ վերյարաբերութեան, մաքրութեան, վարչարարութեան ու հանրօգուտ չինութիւններու քաժինը։ Կ'ըսէ թէ Շիլլիի բնակչութեան մէջ կարեւոր տեղ ունին 18 հազար Հայերը ու հարկ է որ ունենան իրենց հետ նոյն լեզուին տէր խօսակից մը։

Վ. Պարըն անդամ է վարչապետ Պիւլէնթ Եճեվիթի գլխաւորած կուսակցութեան։ Մեր յառաջիկայ թիւերով կուտանք իրեն հետ կատարուած հարցազրոյց մը։

## ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ Ա. ԷՕՃԱԼԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Թուրքիա ապահովութեան անձնախըմբաց եւ բացառիկ միջոցներու կը դիմէ որպէս պատրաստութիւն Ա. Էօճալանի դատավարութեան (Մայիս 31)։ Այդ դատավարութիւնը տեղի կ'ունենայ Մարմարայի Իմրալը կղզիին վրայ ուր արգելափակուած է քիւրտ ղեկավարը։ Պատրաստութիւնները դաւոն եօթը օր առաջ պիտի սկսին։ Դատական Ատեանը որ 132 հոգինոց է, տեղ պիտի գրաւեն կղմներու 12–ական փաստաբանները, ՓՔՒ–ի զոհ պինուորականներու ընտանիքներէն միասին 30 հոգի, տեղացի և օտար մամուլէն միասին 20 թղթակից։ Որոշուած է ատրատահմանեան ոչ մէկ դէտի ներկայութիւնը արտօնել։ Իսկ դեսպանատուներու աչխատակիցներ միասին պիտի կրնան լուռ հետեւողը ըլլալ։

Պետական պաշտօնատարներէ զատ, ոչ ոքի իրաւունք պիտի տրուի տեսագրիչ, լուսանկարչական գործիք, ձայնագրիչ, կամ էլեկտրոնիկ որեւէ այլ տեսակի գործիք ունենալու։ Վրագրողներու թուղթն ու մատիտը անդամ տեղւոյն վրայ պիտի տրուի, կղզիին վարչութեան կողմէ։

Արտօնուած անձերուն համար պիտի պատրաստուին ինքնութեան յատուկ քարտեր եւ ամէն անձ պիտի ենթարկուի աչքի ու մորթի քննութեան, որպէսզի յատուկ կարելի ըլլայ ինքնութիւններու ստուգումը։ Ա. Էօճալան մչտապէս պիտի մնայ ապահով վանդակի մը մէջ որ տունն է ամէն տեսակի յարձակումի, բայց ոումբ։ Ապահովութեան վերջին ծայր բծախնդիր միջոցառումներ կ'ըլլան օդային, ծովային պաշտպանութեան տեսակէտէն։ Մինչեւ իսկ փոխուած են պահակօրքին սովորական թէքնիք գործիքները։

Դատավարութեան տեսագրութիւնը, լուսանկարները, ձայնագրութիւնները աչխարհի լրատուիւններուն պիտի տրամադրուին մեայն թրքական ձայնատիւռ – հեռատեսիլին եւ լուրերու Անատոլու գործակալութեան կողմէ։ Իսկ այս երկու հիմնարկները իրաւունք պիտի ունենան տեսագրելու մեայն ինքնութեան քննութիւնը, առաջին նիստը եւ վերջինը որուն ընթացքին պիտի արձակուի պատմական վճիռը։ Թուրք մամուլը կը յայտնէ թէ այս որոշումը նպատակ ունի տեսիլ չտալու որ Էօճալանի փաստաբանները դատավարութիւնը քաղաքական ցուցադրութեան վերածեն։

# ԹԱՆԷՐ ԱՔՉԱՄԻ «ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՄԱՆԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ» ԱՌԱՋԱՐԿԸ ՅՍՏԱԿ ՆԱԽԱՊԱՏՄԱՆՆԵՐՈՎ

Ա.

Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթին Մայիս 14-ի թիւին վերջին էջը ամբողջութեամբ յատկացուած է Թանէր Աքչամի ատոր-պրութիւնը կրող պրութեան մը ուր ան կը պատմէ ԱԻՄ («Ամերինըն Ինթերնէշընըլ Մակազին») թերթին հրաւէրով ԱՄՆ եւ Գանատա կատարած այցը որ առիթ եղած է հայկական Սփիւռքի այդ ատուար հատուածին հետ հանդիպումներ ունենալու: Թ. Աքչամ այն հեղինակն է որ իր հատորներով չօշափած է Հայերու ցեղասպանութեան նիւթը, նպատակ ունենալով թապուի մը վիճակին հանելու զայն եւ դնելու հայեւթուրք երկխօսութեան մը սեղանին վրայ: Այս առումով ամէնէն ծանօթ գործն է «Թրքական ազգային ինքնութիւնը եւ Հայկական հարցը» (1992) որ թուրք գրողի մը կողմէ ամէնէն համարձակ մօտեցումն մը արդիւնք է, նոյնիսկ երբ դժուար չէ նշմարել որ 1915-ին ցեղասպանական բոլոր յատկանիշները նշելով հանդերձ, հեղինակը կը փորձէ կատարուածը բացատրել Թրքական ազգային ինքնութեան մը նուաճումին յապաղումով:

«Ակօս»ի գրութիւնը կը սկսի հոլանտական հեռատեսիլին (1996-97) պատրաստած փաստագրական մէկ ժապաւէնին նշումով. ժապաւէնը նիւթ ըրած է Թ. Աքչամի տոքթորայի աւարտաճառին պատրաստութեան ընթացքին փրոֆ. Վ. Տաներեանի հետ հաստատած «ակադեմական» կապը ու անկարելի նկատուած երկխօսութեան մը ձեռնարկելու անոնց մղումը: Պատմական խորքով երկխօսութիւն մը որ անհրաժեշտ պայմանն է Հայերու եւ Թուրքերու միջեւ կանխակալ կարծիքները եւ թշնամութիւնները ջնջելու:

*Թ. Աքչամի գրութեան առաջին տողերէն որպէս այդ անհրաժեշտութիւնը իւրացուցած խումբ մը կը ներկայացուին պինք հրաւիրողները որոնք նոյն ժապաւէնին Լոս – Անճըլըս, Սան – Ֆրանսիսքօ եւ Մոնրէալ ցուցադրութեան նախաձեռնած են: Անոնք կ'ըսեն իրենց. «Մենք Սփիւռքի մէջ ապրող նոր սերունդ մըն ենք: Կը հաւատանք որ ցեղասպանութեան մասին նախկին նկատառումէն անդին պէտք է երթալ: Ձիշդ չենք նկատեր որ Ցեղասպանութիւնը որ մեր կեանքին կորիզին վերածուած է, ձեռք առնուի մեր ինքնութիւնը եւ ամէն բան որոշադրող հանգամանքով: Կը հաւատանք որ գոյացած թապուները զանցելու համար հարկաւոր է նոր լեզու մը, նոր խօսելակերպ մը ունենալ: Անոնց գլխաւորն է Թուրքերու, Թուրքիոյ հետ երկխօսութեան ուղիներու որոնումը»:*

*Ժապաւէնին ցուցադրութիւնը տեղի ունեցած է խումբերամ բազմութեան ներկայութեամբ: Ինչ կը վերաբերի այդ բազմութեան հակազդեցութեան, յուշում – արգունք – թաչկինակ երրորդութիւնը տիրական դիծը եղած է անոր: «Ամբողջ շաբաթ մը զգացական անհաւատալի յորձանքի մը մէջ ապրեցայ» կը գրէ Թ. Աքչամ, յիշեցնով ամէն հաւաքոյթի հետեւած յոռետեսիլ երկարաձիգ ծափերը, լացողները, իրեն հետ խօսելու համար հերթի կանգնողները, Թուղթի կտորներու, տոմսակներու վրայ իրմէ առորագրութիւն խնդրողները եւ իրեն զարմանք պատճառած այն յաճախ երեւոյթը որ նոր սերունդին պատկանող Հայեր անգամ, հոգ չէ թէ քանի մը բառով, ուզած են իրեն հետ անպայման Թրքերէն խօսիլ:*

*Ինք ալ իր կարգին կանխակալ կարծիքներով տոն դացած է, յատկապէս ԱՄՆ-ու Հայութեան մոլեռանդութեան մասին: Մտածած է որ Թրքական թշնամութիւնը տարածումն ընդյիմ ունի անոնց մօտ ու խոտորէն պիտի հակազդեն իր ըսելիքին որուն ամէնէն կարեւոր մասը կը վերաբերէր «սահմանային ու հողային խնդիր»ին: Սակայն, անսպասելի կ'ըլլայ տեսնել որ երեք քաղաքներու հանդիպումին ալ ծափերով կ'ընդհատեն իր խօսքը երբ կ'ըսէ. «սահմանային եւ հողային հարցը պարտաւոր ենք նկատել փակուած, աւարտած հարց մը»:*

*Մէյ մը հետամուտ եղած է բացատրելու հետեւեալը. անցեալի պատահարներուն մասին Թուրքերու արտայայտութեան հարկը չեշտելու իր «միակ» պատճառը այն է որ ատիկա պայման է Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան, մարդկային իրաւունքներու արմատաւորումին համար: Ախնչեն, Թուրք պատմաբան – հեղինակը կը փափաքի որ պատմական դէպքերու մասին բայէ ի բայ խօսուի, որովհետեւ ատիկա կը նկատէ դլխաւոր պայմանը որ ներկայի Թրքական հանրապետութեան կարելի պիտի ընէ կազմաւորուիլ որպէս իսկական ժողովրդավար իրաւունքի պետութիւն: Աքչամ ինք անձնապէս բացատրած կերպով ցեղասպանութիւնն կը նկատէ «Իթթիհատ եւ Թերաքքի»ի Հայերու կիրարկած քաղաքականութիւնը: Սակայն, կ'ըսէ նաեւ թէ «Թուրքիոյ ներկայի հարցը չէ պատասխան տալ "ցեղասպանութիւ՞ն էր, թէ ոչ" հարցումին»: Ձիշդ չի նկատեր այդ երկընտրանքին հիմնուած վէճ մը: Հարկաւոր է, կ'ըսէ, որ Հայերը հրաժարին «ցեղասպանութիւնը չընդունողներու հետ չխօսելու» սկզբունքէն: Ապրուածները երկու հաւաքականութեան ալ մեծ ցնցումներու, հոգեբեկումներու պատճառ եղած են, ինչ որ երկու կողմին մօտ լուրջ «հիւանդութեան» մը դոյութիւնը կը նշանակէ: Կացութիւն որ միայն առանց նախապայմանի խօսակցութեամբ մը կարելի է դանդել:*

*Ըսելէ ետք թէ իրենց համար կարեւորագոյն հարցը ապրուածին վախութեան մասին իրենց տեղեկութեան պակասը լրացնել է, կը գրէ. «Պատմութեան մասին ոչ թէ որպէս «սահմաններու եւ հողային հարց», այլ՝ «մարդկային իրաւունքներու հարց» պէտք է խօսակցութեան նախաձեռնել: Մտածել որ գլխաւորաբար Թուրքիա – Հայաստան սահմանը, շրջանի սահմանային հարցերը տակաւին անաւարտ ու անլոյծ, բաց են, «մենք պատերազմ կ'ուզենք» ըսելէ այլ իմաստ չունի: Խօսակցութեան, երկխօսութեան սկիզբը պայմանաւորուած է այդ հարցը աւարտուն, փակ նկատելու կեցուածքով: Հարկ է ներկայի սահմաններուն հիմով, սակայն անոնց նշանակութիւնը նուազեցնող, այսինքն՝ շրջանի յարաբերութիւնները եւրոպականացնող հեռանկար մը զարգացնել»:*

*Ամէն անոնք որոնք առանց որեւէ վերապահութեան կը կարդան Թ. Աքչամի դրութիւնը, պէտք է հաւատան որ թէ՛ հաւաքոյթները կազմակերպողները, թէ վճարումներու մասնակիցները ըսած են թէ իրենց համար վերջին ծայր նոր, չատ տարբեր տեսանկիւնի մըն է իր ներկայացուցածը որուն մասին երբեք չէին մտածած: Ըսած են նաեւ որ կը հաւատան թէ ասկէ ետք «Թուրքերու եւ Թուրքիոյ մասին» այդ տեսանկիւնով հարկ է խօսիլ:*

*Նշելէ ետք թէ ԱՄՆ-ու մեծապոյն թերթերն «Լոս – Անճըլըս Թայմզ»ն ալ հաւաքոյթներուն տեղ տուած է, կը գրէ. «Հելամիտ շատ մը Հայեր ըսին ինծի. "այն պահուն որ Թուրքիա այս դէպքին մասին խօսիլ սկսի, միջազգային մակարդակին վրայ իր ետին պիտի գտնէ հայկական մեծ լոպի մը: Մեր սպասածը միայն «Այո, նման բան պատահած է, սակայն ատիկա շրջանի իշխանութեան՝ Իթթիհատ եւ թերաբիի գործն էր, Թուրքիոյ հանրապետութիւնը ատոր հետ կապ չունի, կը ցաւիմ»ի նման արտայայտութիւն մըն է: Ատով Թուրքիա ոչինչ պիտի կորսնցնէ, բայց շատ բան շահի"»:*

*Էջին վերջին սիւնակին մէջ վերջին յատուկ նշում մը կ'ընէ Թ. Աքչամ, գրելով որ նոյնիսկ Մ. Քէմալ հակառակ չէջանի չատ դժուարին պայմաններուն, այդ ուճիրներուն հետ միջոց մը կրցած էր պահել. զանոնք սահմանած էր որպէս «մեր պատմութեան մէջ ապրուած խայտառակութիւն մը»: Անհրաժեշտ նկատած էր որ յանցագործները պատժուին որպէս քաղաքական արարքի հեղինակ: Իսկ ներկայի Թուրքիան նոյնիսկ իր հիմնադիրին կեցուածքը չէ կրցած օրինակել, ապրուած սխալը դէպքերուն եւ իր միջեւ միջոց մը դնելու գործին մէջ:*

*Վերջին նշումն ալ կը վերաբերի Պոլսոյ եւ Սփիւռքի հայութեան զերոյի մօտ կացին: Մինչ առաջինները քիչ-չատ տեղեակ են Թուրքիոյ զարգացումներուն, մեծամասնութեամբ բոլորովին անտեղեակ են: Իրենց գլխուն մէջ կայ «Թուրք»ի եւ «Թուրքիոյ» պատկերը մը որուն պատճառով Թ. Աքչամի նման անձերու պոյութիւնն խոկ «տարօրինակ» ու «դժուար հաւատալի» կը նկատեն:*

*Թ. Աքչամ վերջերս հրատարակած է տոքթորայի իր աւարտաճառը «Թուրքիոյ մէջ մարդկային իրաւունքները եւ Հայկական հարցը» խորագիրով եւ վերոյիշեալ նիւթերուն մասին շուրջ 40 էջնոց նամակ մը: Ջայն ճօճած է ուրֆացի Հաճի Հալիլին որ ութ հոգինոց հայ ընտանիք մը տարի մը պահած է իր տան ձեղնայարկին մէջ ու փրկած տասդ մահէ: Մեծագոյն փափաքն է որ հատորը սկիզբ դլայ պաղարիւն, լուրջ վիճարկումի մը:*

ԱՐՓԻ ԹՈՓՈՁԵԱՆ

# ԵՐԷԿՈՒԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐՈՒ ՍԵՄԻՆ

*Մարդ արարածին ժամանակի ընթացքին կազմած ընտանիքներն ու հաւաքականութիւնները հետզհետէ բազմանալով պատճառ դարձած են ներքին անհամաձայնութիւններու, վէճերու եւ թշնամութիւններու: Այդ հաւաքականութիւնները որոնք նախապէս կոչուեցան ցեղախումբեր եւ յետագային ազգեր, ունեցան զօրաւոր անձեր որոնք իշխող տարրը կը հանդիսանային, եւ հպատակներ որոնք իշխողին կամքը կամ քմահաճոյքը դործադրելու դատապարտուած էին:*

*Երբեմն հպատակին պարտադրուածը անտանելի կը դառնար ու իր կեանքի գնով նոյն իսկ կ'ուզէր ընդդիմանալ որեւէ միջոցաւ, իր ընկճումը հրապարակել, յարձակելով իշխողին կամ անոր ներկայացուցիչին վրայ. կը մեռցնէր կամ կը մեռնէր: Այդ ըմբոստացող անձը կը կոչուէր ահաբեկիչ երբ չէր յաջողեր իր նպատակը իրագործել:*

*Ահաբեկիչը ինչպէս անցեալին, այսօր ալ իր մարդկային իրաւունքներուն յարգանքի պահանջը հեղնանքով դիմաւորող անատարբերին դէմ պոթիկումին ձեռն է. դպրացունց արարքով մը կ'ուզէ զայն ընդհանուրին ծանօթացնել: Դժբախտաբար երբեմն անկշռահատ ու խելացնոր արարքով ան պատճառ կը դառնայ անմեղ անձերու ալ մահուան, մահ կը սփռէ անհասուած իրաւունքի մը ճանաչման համար եւ կը զոհուի չարիք դործելով, առանց չարագործ մը ըլլալու:*

*Ատոնք անոարդարութեան ապացոյցներ են ու կը վկայեն ամէն տեղ, ինչպէս՝ Իրլանտա, Պասքերը, Հարաւային-Ամերիկայի կարդ մը երկիրներ, Մայրագոյն Արեւելք, Կովկաս, Պալքաններն ու հո՛ն ուր կ'անտեսուին մարդու իրաւունքները:*

*Ատոնց զուգահեռ դոյութիւն ունին լայնատարած եւ ծրագրուած զանգուածային ահ ու սարսափները, որոնց մասին չատ չի խօսուիր, բայց անոնք կը կիրարկուին դարէ ի վեր, այսօր եւ անատարակոյս նաեւ ապագային: Ատիկա տիրապետողներու առթած ահ ու սարսափն է հնազանդեցնելու եւ լռեցնելու համար ըմբոստ հպատակը կամ ստրուկը: Իբր օրինակ կրնանք յիշել մեր դիտցածներէն մէկ քանին:*

*Ֆրխտտսէ առաջ Ա. դարուն եւ անկէ վերջ, այն առենուան արեւմուտքի մէջ ճանչցուած քաղաքակիրթ աշխարհն էր Միջին – Արեւելքը. Պարսկաստանը եւ մանաւորապէս Հռոմէական կայսրութիւնը որուն սահմանները կը տարածուէին պարփակելով Բրիտանիոյ հարաւը, Ֆրանսան, Սպանիա, Ափրիկէի Միջերկրականեան հիւսիսը Եդիպտոսով, վերջ՝ Ցունաստանը, Պալքանները Ռումանիայով եւ Արեւելքը Փոքր Ասիան, Արաբիան, Միջագետքը նաեւ Հայաստանը որուն արեւելեան եղերք երկար կասպից ծովու վրայ, ի բացակայութիւն յետագայի վրանարնակ խաչնարածներուն:*

*Հռոմէական կայսրութիւնը պահանջք ունէր պարծելի եւ նախանձելի, դոր կըրնար հայթայթել հպատակ ժողովուրդը իր հողերով որոնց գլխաւորներն էին Եդիպտոսի բարերեր ափերը եւ Փոքր Ասիան:*

*Ցառնչ բեռան ծանրութեան չտոկացող հաւաքականութիւններ կ'ըմբոստանային եւ, կը փորձէին դիմադրել Լէգէոններու հրամանները. հակազդեցութիւնը կ'ըլլար ազդու եւ ուժգին: Այդ ըմբոստներէն մաս մը կը ձերբակալուէր եւ կարեւոր ճամբաներու երկայնքին, որոշ հեռաւորութիւններով կը խաչուէր, ահ ու սարսափ մտնցնելով մնացեալ ժողովուրդը:*

*Հռոմէական կայսրութիւնը յղփացած ու ապրվանած ըլլալով առատութեան եւ չատկատութեան մէջ, ան ալ իր կարգին պոտը դարձաւ յետագայ նուաճումներու:*

*Իշխողներու սպառումը միշտ ծառացած է վախով հպատակներուն դանդատածները որոնցմէ կ'արժէ յիշել Օսմանեան կայսրութեան դրուագները:*

*Նախքան Պոլսոյ դրաւումը Օսմանեան բանակները ուղղուած են Պալքաններուն, յարձակած են Ցունաստանի, Ալպանիոյ, Պոսնիոյ ու Սերպիոյ վրայ: Վայրագութեան դիմադրելու անկարող քրիստոնեայ Ալպանացիներէն ու Պոսնիացիներէն մեծ մաս մը դլուխնին փրկելու մտօք եսլամացած են, իսկ Սերպերը յամառօրէն դիմադրած՝ անհամար պոհութիւն դնով, բայց ի վերջոյ յաղթուած եւ անճնաւուր եղած են:*

*Օսմանեան կայսրութիւնը որուն քաղաքակրթութեան 700-ամեակը կը ոնծնուի այս օրերս, այն առեն եսթաղանի զոհ հպարտաւոր Սերպերու դանկերով Բրքութեան վայել արուեստի դլուխ գործոց յաղթանակի կոթող մը կը կանդնեցնէ Նիշ քաղաքին մէջ, ահ ու սարսափ ոդելու համար մնացեալ եւ ապագայ սերունդներուն որոնք Օսմանեան տիրապետութեան հինդ դարերուն ընթացքին դառնութեամբ կրեցին այդ կոթողին ազդած հոգեկան ծանրութիւնը:*

*Այդ կոթողը Սերպիոյ ազատագրութենէն մինչեւ Ա. Համաչխարհային պատերազմին աւարտը գոյութիւն ունի եղեր եւ Թուրքիոյ դէմ կռուող դաշնակիցներու կարգին Ֆրանսական յետպատերազմեան չրջանի ընդհանուր պատմութեան դասագրքերու մէջ Թրքական քաղաքակրթութեան նմոյշ այդ դանկերուն պատկերը գոյութիւն ունէր:*

*Թրքական հանրապետութեան ֆէզ գլխարկով, չալվարը տափատով եւ ոբրաթի դաշարը կիրակիով փոխարինելուն առթիւ ՖրանքեւԹրքական սիրառատութեան սկզբնական չրջանին այդ դիրքերը Թէ Թուրքիոյ մէջ արդիլուեցան եւ Թէ Ֆրանսայի մէջ հրապարակէն վերցուեցան:*

*Ձենք դիտեր Թէ Նիչ քաղաքի այդ արուեստի գլուխ գործոցը, Թիթոյի համար նախապէս վարչածեւի պարտադիր եղերքութեան սկզբունքներուն համաձայն, քանդուած է Թէ մնացած. եԹէ քանդուած է 700-ամեակը դանճ մը կորսնցուցած է:*

*Այսօր, դարեր առաջ Թուրքերու դանած Թուրնաւոր սերմերուն հակազդող Սերպերու ծիլերն են որոնք իրենց հակաթոյնը սխալմամբ կը Թափեն ժամանակին իրենք ալ Թուրքերու հարուածը վրան՝ խեղճ Ալպանացիներու վրայ, պատնէք Թուրքերու ժառանգորդը համարելով:*

*Ահ ու սարսափի օրինակներու կարդին կարելի է յիշել նաեւ Պոլսոյ դրաւման չրջանը. չրջան մը երբ Պալքաններն ու Փոքր Ասիան ու Թրակիան դրաւուած էին արդէն, մեր ծնած ու ապրած Սկիւտարն ու Գատըդիւղը մէկէջը ըլլալով:*

*Կը մնար դրաւել պարսպապատ կոստանդնուպոլիսը: Այդ միջոցին Պոլիս կ'պարբենաւորուէր վենետիկեան եւ ձէնովական նաւերով, որոնք Թէ Եւրոպայէն եւ Թէ Սեւ ծովու ափերէն ապրանք կը բերէին Պոլիս: Այդ նաւերուն Ոսկեղջիւրի քարափը մուտքին համար վար կ'նայէր Սարայ Պուրնուէն Ղալաթիա երկարող ու մուտքը արդիլող երկաթեայ չղթան եւ դարձեալ կը զոցէր արդիլելու համար Թրքական նաւատորմիղին մուտքը:*

*Վենետիկեան նաւերը հակայ եւ պինտ ըլլալով, Թրքական փոքր նաւերը չէին համարձակեր անոնց դէմ ելլել Թէ՛ վտրի եւ Թէ ծովուն մէջ: Թուրքերը խորհեցան նախապատ ասիական եղերքը չինուած Անատոլու Հիսարին դէմ եւրոպական եղերքն ալ բերդ մը չինել եւ անկէ Քընդանթի սպառնալիքով կեցնել վենետիկեան նաւերը, քննել ապրանքները կամ մասամբ գրաւել:*

*1451-ի վերջերը Սուլթանին հասցուած երկու հսպարկ աւելի որմնադիր եւ գործաւորներ աւերեցին այդ չրջանի չինութիւնները ու եկեղեցիները եւ անոնց քարերով 1452 Օգոստոս 30-ին աւարտեցին բերդին չինութիւնը եւ բարձունքին վրայ դետեղեցին այն առենուան ամենաջոդ հրետանին. բերդին անունը եղեր է «Պողազ քէսէն» (Նեղուց կտրող) որ յետոյ կոչուեցաւ Ռումէլիհիսար:*

*Նոյեմբերին երկու վենետիկեան նաւ*

րու առաջին անոգքին ազգարաբեցին կանգ առնել եւ կրակեցին, բայց նաւերը չանսացին հրամանին եւ յաջողեցան խոյս տալ: Երկու շաբաթ վերջ երբորդ նաւ մը փորձեց նոյնը ընել բայց Թուրքերը յաջողեցան ընկղմել: Նաւապետը, Անթոնիօ Ռիզզօն եւ քառասունի մօտ նաւաստի եւ պաշտպան գերի բռնուեցան եւ վոխանակ դիմաստուելու բերուեցան եւ ցցամահ ըլլալով չարուեցան Պոլսոյ պարիսպներուն դիմաց, ահ ու սարսափի մատնելու համար քնակչութիւնն ու պետութիւնը:

Սարսափի օրինակներէն կրնանք յիշել նաեւ Սպանիոյ ռակեզարուն, Ամերիկայի գիւտէն վերջ ապանոցի պրահաւոր ձիաուրութիւնը, Ինքաներու դէմ կատարածները, որոնք տասնեակ միայն ունէին եւ սարսափեցան ձիերն ու պրահները առաջին անգամ տեսնելով:

Նոյնքան սարսափազդու էին Բ. Աշխարհամարտին Գերմանացիներու Պելժիոյ եւ Հոլանտայի վրայ իջեցուցած սրատաղ անկարգելատրիները եւ յետագային Անգլիոյ գլխուն թափած երկու հրթիռները:

Այսօր կ'ապրինք քաղաքակիրթ, մարդասիրական ընտրանքներու յարդող շրջան մը: Միջեկլի նախնական միջոցները պատմութեան անցած են, ճարտարարուեստն ու գիտութիւնը առիթ կ'ընծայեն աւելի արագ եւ մեծաքանակ արտադրելու. հաղորդակցութիւնն ու ճամբորդութիւնները կայծակնային. տասը հոգիի գործը տասնապատիկ մարդացած, զէնքերը չատ աւելի ազդու եւ կատարելագործուած, առեւտուրն ու տնտեսութիւնը համաշխարհայնացած եւ տարածին ձեռքը ինկած, երեսուն հարիւրամի գործը մէկ քալլնիքօֆի հասարած է. հետաքրքիլն օրինակ առնելով, ժամանակին քարեզնդակ խաղացող տղաքը կը փորձեն նոյն արագութեամբ հարուածել իրենց դասընկերները: Այսօր նոյն ծախքով եւ աւելի արագ կը գիւտանայ չինարարութիւնն ու քանդումը եւ քանի մը օրուան ընթացքին կարելի կ'ըլլայ գարուր լայնածաւալ անտառներ իրենց բնակիչներով փճացնել:

Այս արագութեան քայլ յարմարցուցած է նաեւ մարդկային ոճը, անհամեմատ թափ առնելով մանաւանդ թերամ երկիրներու մէջ: Աշխարհի տեղծումէն ի վեր, առջին անգամ վերջին քառասուն տարուան ընթացքին կրկնապատկուած է մարդկութեան թիւը. այս ընթացքով եթէ գըսպելու ճարը չգտնուի, մէկը պիտի ըլլայ երկու, երկուքը չորս, չորսը ութ որուն պարտի քայլ յարմարցնել անգործներու, գիտնականներու եւ ըմբռոստներու թիւը: Այսօրուան մօտ վեց միլիառը եթէ նոյն թափով ածի, վա՛յ է եկեր ուրախուն տարի վերջ աշխարհ եկողին. բայց թերեւս պէնթերը չատ աւելի կը կատարելագործուին եւ խաղաղութիւնը կատարեալ կ'ըլլայ ինչպէս այսօր կը փորձուի: Վերջապէս ժողովրդավար կառավարութիւնները չեն պակսիր: Ամէնէն աւելի անոնց հզօրացումին մաղթանքը լաւագոյն ողջոյնն է Իւ. գարուն ուղղուած:

Վ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

## ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀԱՏՈՐ ՄԸ (*)

# Ֆրանսացի երեսփոխաններ եւ հայ բանաստեղծներ

Մարսէյն լոյս տեսած է խիստ չահեկան եւ իր տեսակին մէջ եզակի հատոր մը ուր Ֆրանսայի Ազգային ժողովի աւելի քան 500 երեսփոխաններ ընտրած են իրենց նախասիրած բանաստեղծութիւնը կամ արձակը: «Ժողովրդավարական ծաղկաքաղ» մը որ գաղափար մը կուտայ ճաշակին մասին, անոնց, որոնք աւելի օրէնքներով կը զբաղին քան քերթուածներով: Եթէ անչուշտ, բոլորն ալ անկեղծ են եւ ոմանք չեն ուզած պարզապէս «կուլտուրա» ծախել:

700–է աւելի էջերուն մէջ տեղ գտած են Ֆրանսացի թէ օտար, 280 գրագէտներ, բանաստեղծներ: Տարուած աշխատանքը կը նկատուի «խորհրդարանական ընկերակցութեան» հիմը կազմող ժողովածու մը:

Հետաքրքրական երեւոյթ է այս հատորին մէջ հանդիպիլ ընտրուած կտորներու որոնց հեղինակները Հայ են կամ քերթուածին տուն տուած է Հայերու հետ կապ ունեցող նիւթ մը:

Այսպէս, Փաթրիք Տէվէճեան ընտրած է «Strophes pour se souvenir»ը Արակոնի, որ նուիրուած է անոնց, ինչպէս Մանուչեան, որոնք մեռած են Ֆրանսայի համար եւ որու մէջ, Արակոն մէջբերումներ ունի Միսաք Մանուչեանէ (էջ 31):

Միշել Փէրիքար, իր մահէն քանի մը օր առաջ, ընտրած է Ապոլինէրի «Le Pont»ը (էջ 57):

Քրիսթիան Գիւվիլիէի նախասկրած քերթուածն է Ռուբէն Մոլիքի «Le plus bel amour»ը (էջ 446):

Ռոժէ Մէյլի ընտրութիւնն է «L'amitié»ն Փիէր Թուխմասեանի: (էջ 621):

Հուսկ, Ալֆորվիլի քաղաքապետ – երեսփոխան Ուրնէ Ռուքէ ընտրած է Դանիէլ Վարուժանի «Կարմիր հողը» («Կարդէն ռուժ») (էջ 646):

Հատորին յառաջաբանին հեղինակն է Ազգ. ժողովի նախագահ՝ Լօրան Ֆապիուս, ուր ան կը բացատրէ գաղափարին տուն տուող դրդապատճառները: Կ'ըսէ թէ իրեն չի մնար դատել ընտրութիւնները, ամէն մէկ երեսփոխան իր նախընտրութիւնը յայտնած է առանց դիտնալու իր պաշտօնակիցներու նախասիրութիւնները եւ իսկապէս, արդիւնքը հետաքրքրական է եւ գաղափար մը կու տայ երեսփոխաններու ճաշակին մասին: Կը տեղեկանանք, օրինակ, որ Պալատիւր Ա. Ռէնպոյի «Chanson de la plus haute tour»ը կը սիրէ, Ժիսքար տ'Էսթէն՝ Շ. Պոտլէրի «Mœsta et errabanda»ն, Ա. Սանթիւի՝ Լա Ֆոնթէնի «Les deux taureaux et une grenouille»ը, Ֆր. Ռոյը՝ Պօլ Էլիւարի «Poésie»ը, Ժան Լաքանալ՝ Ռիմպոյի «Le Bateau ivre»ը, Ժան Լիսնար Մարի՝ Վերլէնի «Mon rêve familier»ը, Ժան Փիէռ Քոթ՝ Ռիմպոյի «Les Chercheuses de poux»ը, Ժան Փոլ Տէլասնէրի՝ Ռիմպոյի «Le Dormeur du val

(Շար. Ա. էջէն)

նելէ եաք Ազգ. ժողովի անցեալ գործունէութեան, ան խոստովանած է թէ «աչքաթող արեցինք մարդուն իր սոցիալական պրոբլեմներով», ու թելադրած որ նոր խորհրդարանը յառաջիկայ տարուան ընթացքին զբաղի զլխաւորաբար ընկերային հարցերու լուծումով: Ըսած է թէ այս կառավարութիւնը չյաջողեցաւ իր սահմանած պարտականութիւնները կատարել: «Պետութիւնը ճառ ասելով չի կառուցուիր՝ այլ բարը բարին դնելով» եզրափակած է Խ. Յարութիւնեան:

– Մայիս 22–ին Սիսեանի եւ Գորիսի, 23–ին՝ Ագարակի, Մեղրիի, Քաջարանի եւ Կապանի մէջ Սիւնիքի ընտրողներուն հետ հանդիպումները ունեցած են «ԱԻՄ+ Դաշինք»էն Պ. Հայրիկեան, «Հայրենիք – Սփիւռք Միութիւն» կուսակցութեան հիմնադիր նախագահ Հ. Տէր–Եսայեան եւ դաշինքի այլ անդամներ: Ըստ Պ. Հայրիկեանի, ընտրութիւնը քննութիւն է, որու դասախօսը ժողովուրդն է, սակայն յաւօք, այդ դասախօսը յաճախ կը կաշառուի:

– Մայիս 21–22–ին, ՀՀՇ վարչութեան քանի մը անդամներ Նոյեմբերեանի թիւ 75 ընտրատարածքի թեկնածու Վանօ Սիրադեղեանի հետ միասին հանդիպումներ ունեցած են Ակրում, Աբովեան, Դեբեդաւան, Բագրատաշէն, Ցաղկանակ եւ այլ գիւղերու ընտրողներուն հետ: Նկատելի եղած է որ Վ. Սիրադեղեան խուսափած է խոստումներ կատարելէ եւ ծանրացած է Հայաստան–Ադրբեջան յարաբերութիւններու հեռանկարներուն վրայ, չեշտելով խաղաղութեան դաշինք կնքելու կարեւորութիւնը: ՀՀՇ–ի նախագահը Յայիս 25–ին ալ Իջեւան կ'այցելէր:

– Մայիս 24–ին, կենտրոն համայնքի ՀՅԴ նախընտրական չտապի նախաճեռնութեամբ, Համազգայինի Թատրոնին մէջ մտաւորական ընտրողներուն հետ հանդիպում մը ունեցած է ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Վահան Յովհաննիսեան: Նշելէ եաք թէ իր կուսակցութեան մէջ եղած են թերացումներ, սխալներ, սակայն ան երբեք չէ արատաւորած իր անունը, ըսած է որ անոր թեկնածուներուն մէջ կան իրաւաբաններ, արուեստագէտներ, բայց ոչ՝ կաշառակերներ, արատաւորուածներ: Ժխտական, թելադրած է ընտրական կաշառք վերցնել բոլորէն բայց ձայները տալ ՀՅԴ–ին: Նոյն օրը Ժուռնալիսթ Տան մէջ տեղի ունեցած հանդիպումին մէկուն կողմէ ուղղուած «Տասը տարի առաջ վանս Սիրադեղեանն էլ մօտիս ու ազնիւ մարդ էր: Ի՞նչ երաշխիք որ ՀՅԴ–ն գալով իշխանութեան, չի փոխուի» հարցումին Վ. Յովհաննիսեան պատասխանած է թէ Վ. Սիրադեղեանի եւ իրենց նմաններուն պատասխանատուութիւնը կրող կազմակերպութիւն չկար, քանի իրենք էին այդ կազմակերպութիւնը ստեղծողները, ինչ որ հակառակն է ՀՅԴ–ի պարագային:

– Մայիս 24–ին, Ժուռնալիստի տան մէջ Հայաստանի Երիտասարդական կուսակցութեան նախագահ Մարգիս Ասատրեան նախընտրական հանդիպում մը ունեցած է լրագրողներու հետ: Ան 7–էն 9% ճայն նախատեսած է իր կուսակցութեան համար:

– Հայաստանի Սոցիալիստական կուսակցութիւնը (ՀՍԿ) յայտարարութեամբ մը իր զօրակցութիւնը յայտնած է «Միասնութիւն» դաշինքին:

– Գիւմրիի մէջ շուրջ 40·000 անապուրկ ընտրողներ հաւանաբար զրկուին նաեւ քուէարկելու իրաւունքէն, քանի որ իրենց նախկին հասցէները 11 տարի է դադրութիւն չունին, երկրաշարժէն ի վեր: Անոնք վերստին չեն արձանագրուած իրենց «առժամեայ» տնակներու մէջ զետեղումէն ի վեր:

*
**

## Ս. ԲԱԴԱԼԵԱՆԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնավար կուսակցութեան ղեկավարները Մայիս 21–ին ասուլիսով մը ներկայացուցած են իրենց ընտրապայքարին արդիւնքները: Կուսակցութեան Ա. քարտուղար Ս. Բադալեան ըսած է թէ բոլոր շրջաններուն մէջ ժողովուրդին հետ հանդիպումները ունեցած են, մնացած է Գիւմրին ու Վանաձորը: Իր կուսակցութիւնը ընտրութեան ազատ ու արդար բերքն նպատակելու համար համաձայնութեան եկած է ՀՅԴ–ի ու ԱԺՄ–ի հետ: Համայնավար ղեկավարին կարծիքով, իրենց մրցակից է միայն «Միասնութիւն» դաշինքը: Ան ենթադրած է որ նոր խորհուրդին մէջ իրենց հետ տեղ կ'ունենան «Միասնութիւն»ը, ԱԺՄ–ն, ՀՅԴ–ն:


Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935


## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28–ին)
Հոչակման 81–րդ տարեդարձ

Այս առթիւ, Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18–ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու ատաթին Հանրապետական Մարթանք կ'ընդլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատութեան եւ բարգաւաճման համար:

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Պօսնեի Նայիրի մասնաճիւղի վարչութիւնը, ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Մայիս 29, ժամը 15–ին, տեղական եկեղեցւոյ կից սրահին մէջ:

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGISE ARMENIENNE
DE CHAVILLE

vous invite

au *CONCERT*
*de la CHORALE*

**AKN**

(Direction Aram KEROVPYAN)
*«Chants liturgiques arméniens»*

Le Samedi 29 mai à 20 heures 45

EGLISE STE BERNADETTE
3, Pavé de Meudon — 92370 CHAVILLE

*— Participation aux frais —*

## Offre d'emploi

L' **Ecole Tarkmantchatz** d'Issy-les-Moulineaux cherche une institutrice bilingue (français-arménien) et diplômée (licence d'enseignement).

Envoyer C.V., une photo et photocopies des diplômes à **l'Ecole Tarkmantchatz,** 19, Sentier des Epinettes — 92130 Issy-les-Moulineaux.

## ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՖՈՒԹՊՈԼ

ՆՈՐ ՑՈՑՍԵՐ ՎԱԼԱՆՍԻ ՀԱՄԱՐ

Դ. դասակարգի մրցումներու կարգին Վալանսի Հայ Մարզականը 4 – 1 յաղթեց Ակաէիոյի: Դասաւորման մէջ 18–րդ է 40 կէտով: Գլուխն է միշտ Սէն – Թ'Էթիէնն 68 կէտով եւ 20–րդ ու վերջին պէսքի վրայ կը մնայ Պօվէ 35 կէտով:

Նշենք որ հրաշք մը անհաւանական չէ հայանուն խումբին փրկութեան ու Բ. դասակարգին մէջ իր տեղի պահպանման համար: Արդարեւ Նասիոնալ Ա. դասակարգէն (Գ. դասակարգ) Բ. դասակարգ բարձրանալու յաւակնորդ երեք խումբերէն մէկը, մեծ հաւանականութեամբ պիտի ըլլայ Ակաէիոյի կազէլէքը, որու պիտի մերժուի այդ իրաւունքը 100 հազարէն նուազ բնակիչ ունեցող քաղաքներու Բ. դասակարգի մէջ երկու խումբ ունենալու անկարելիութեան պատճառով: Միայն այդ է որ կրնայ փրկել Վալանսը:

### ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ Ա. ՇՐՋԱՆԸ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՆՑԱՒ

Մայիս 24–ին, Փարիզի մէջ սկսաւ Թէնիսի «Իտալեան Կառաս» մրցաշարքը, որուն կը մասնակցի նաեւ Հայաստանցի մարզիկ Սարգիս Սարգսեան, որ թէեւ կ'ապրի ու կը մարզուի Միացեալ–Նահանգներ:

Առաջին շրջանին ան յաղթեց Ֆրանսացի Լինարի 3 – 1 բաւական յստակ արդիւնքով՝ 6–7, 6–4, 6–2, 6–2: Յաջորդ մրցումը կը խաղար Շորեքշաբթի, Մայիս 26–ին:

### ԿՈՓԱՄԱՐՏ

Յունաստանի Փաթրաս քաղաքին մէջ տեղի ունեցած կոփամարտի միջազգային մրցաշարքին մասնակցած են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները: Անոնցմէ վանաձորցի Վախթանգ Դարչինեան եւ երեւանցի Արամ Ռամազեան չահելով բոլոր խաղերը առաջին հանդիսացած են, իսկ երեւանցի Արթիւր Գէորգեան միայն աւարտականին պարտուած է ու երկրորդ դասուած:

## Մայրերու Օրը

Մարսէյլի Կապոյտ Խաչի Սօսէ Մայրիկ մասնաճիւղի կազմակերպութեամբ Շաբաթ, Յունիս 5–ին, ժամը 15–ին, Պօտանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Լեռան Շանթ» սրահին մէջ:

Կը բանախօսէ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Հիւրասիրութիւն, գեղարուեստական յայտագիր:

**MUSIQUE ARMENIENNE**
sur
**FRANCE CULTURE**
Paris 93.5 Lyon 94.1 Marseille 99.0
**Dimanche 30 Mai de 8h à 8h30**
Extraits de l'**Oratorio** de
**GARBIS APRIKIAN**
**«La Naissance de David de Sassoun»**
dans l'émission de G. Stephanesco
«Foi et Tradition»

**Centre Culturel**
**SAINT MESROB**

Présentation d'un **DIAPORAMA**
ayant comme thème
**«D'Amassia à la Cilicie en passant par Ani»**
Des lieux chargés de mémoire arménienne, des images bouleversantes à découvrir
par **Edouard TOPALIAN**
Le **Mercredi 26 mai à 20 h 45**
au Centre Culturel SAINT-MESROB
10 bis, rue Thouin — Paris V^e^
Métro: Cardinal-Lemoine / Monge
RER: Luxembourg
Entrée libre — Cocktail

A L'OCCASION DES 120 ANS DE L'ECOLE TEBROTZASSERE

## «L'ARMENIE AU RAINCY»

PROGRAMME

**Vendredi 28 Mai, Samedi 29 Mai, Dimanche 30 Mai**

*Durant ces trois jours :*

- Exposition de peintres et sculpteurs d'origine arménienne : Asilva, G. Ayvayan, A. Berlian, J. Kazandjian, K. Kazan, C. Madoyan, M. Matéossian, K. Norikian, R. Sarkissian.
  — Galerie «Weider»; 31, avenue de la Résistance.
- Exposition : «Voyage à travers l'Arménie» et «Rétrospective de l'Ecole Tebrotzassère».
  — Centre Thierry Le Luron; 9, boulevard du Midi.

**Commissaire des expositions : Khatchik Kazan**

**SAMEDI 29 MAI**

- Dédicace d'ouvrages par leurs auteurs : A. Agoudjian, B. Bricout-Kasparian, W. Buss, J.-J. Varoujan.
  — Librairie «Notre Dame»; 76, avenue de la Résistance; de 15h à 17h;
  — Librairie «L'Ecritoire»; 29, avenue de la Résistance; de 15h à 17h.
- Défilé folklorique: Troupe «ASTRIG» accompagnée de l'ensemble musical «ARARAT» d'Arménie; avenue de la Résistance; de 17h à 18h.
- SOIREE DE GALA
  Chorale TEBROTZASSERE et Ballets Arméniens «NAVASART»;
  — Centre Culturel Thierry-Le-Luron; à 20 heures 30.
  P.A.F. : Adultes 100 F / Enfants 60 F.

**DIMANCHE 30 MAI**

- Vente de produits arméniens sur le marché de l'avenue de la Résistance: **«l'Arménie au Raincy».**
- Déjeuner traditionnel arménien avec ambiance musicale au Théâtre de l'Espace du Jardin Anglais; à 13h;
  — 65, allée du Jardin Anglais et de Finchley;
  P.A.F. : Adultes 150 F / Enfants 100 F.

*Renseignements & réservations :* Ecole TEBROTZASSERE : 01 43 81 01 72.

UNION DES COMPATRIOTES DE VAN VASBOURAGAN

*84ème ANNIVERSAIRE DES COMBATS HEROïQUES DE VAN*

## Dîner Dansant

**Samedi 29 Mai à partir de 20 heures 30**
Salle VASBOURAGAN
Maison Arménienne de la Jeunesse et de la Culture
12-14, rue Saint-Basile — 13001 Marseille
Animation musicale : **Disk Jockey « V A N I C K »**
Sous la présidence d'honneur du *Professeur VANICK NAZARIAN*

P.A.F. 200 F par personne Réservations: 04 91 06 58 56 (Mme Bareyan)
04 91 93 32 18 (Mme Gracian)

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

## Université d'été aux U.S.A.

Le HOM (Hay Oknoutian Mioutioun) de la Côte Est des Etats-Unis organise une université d'été d'études intensives arméniennes dispensées en langue anglaise, de 3 semaines destinée aux jeunes étudiants de niveau universitaire, âgés de 18 à 25 ans et diplômés d'études secondaires.

**Date:** **du 11 juillet au 1er août**
**Lieu:** **Université Bradford à Bradford (Massachussetts)**
**Direction:** **Dr. Simon PAYASLIAN (directeur du département Histoire UCLA)**
**Programme:** **Langue — Musique — Histoire — Cinéma — Littérature — Danse — Histoire de l'art et autres...**

**Conditions:**

- Hébergement pris en charge par le HOM Côte Est
- Frais d'inscription, non remboursables, 350 USD plus frais de voyage à la charge du participant.

**Délai d'inscription: 30 Mai 1999 au plus tard**
**Renseignements: Conseil d'Administration de la CBAF: 01. 48. 24. 46. 57.**

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ 27
JEUDI
27 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·648 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.648

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

### ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

«ՄԱՐԹ»ի (Ալիքդի հետազօտական Միութիւն) նախկին նախագահին՝ Ժակ Գրոզմարիի դատավարութիւնը սկսաւ Մայիս 25–ին, բայց, կրնար ընդհատուիլ յաջորդ օրն իսկ, որովհետեւ սրահի անհանգստութեան պատճառով ենթական Գոչէն փոխադրուեցաւ: Ծանօթ է որ Ժակ Գրոզմարի կ'ամբաստանուի ուելի քան 300 միլիոն ֆրանքի իւրացման համար, գումար որմէ օգտուած են նաեւ 24 մեղսակիցներ: Դարուս մեծագոյն դրամաշորթութիւնը կը նկատուի հանրային գիտութեան մարզին մէջ: Արդարեւ, հատուցուած գումարներուն հազիւ 20%–ը յատկացուած է հետազօտութեան, մնացեալը ծախսած է փառաւոր կեանք մը ապահովելու Ժակ Գրոզմարիի եւ իր մեղսակիցներուն: «Գաւառ – Անշէնէ» 1984–էն խնդոյ առարկայ ըրած էր բարեխիղճ կազմակերպութեան մատակարարութիւնը, բայց, տարիներու երկայնքին Գրոզմարի կը յաջողէր միշտ հարցը փակել տալ դատական վարպետութիւններով կամ կառավարական ճնշումներով: Մինչ իր բնակարաններուն մէջ, Գրոզմարի 18 միլիոն ֆրանքի նորոգութիւններ կատարել տուած է, առանց հաշուելու իր անձնական անճնակազմին (սպասուհի, ծառայ, վարորդ եւայլն) աշխատավարձերը: 1996–ին է միայն որ չնորհիւ Հաշուեքննիչ Ատեանին տեղեկագրին կարելի եղած է այս գաղտնի յանդիլ, բայց, Գրոզմարի կը ներկայանայ որպէս խեղճ ծերուկ մը, որ ամսական 23 հազար ֆրանքի թոշակով մը կ'ապրի...:

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԽՈՐԻՒԱՔԻ բուն մարդասպանը՝ Իվան Գոլունա դեռ չէր դատուած Մայիս 26–ին: Ծանօթ է որ դորսիքական մաֆիին մէջ ապաստան գտած է,

(Շար·ը Դ· էջ)

## ՄԱՄՈՒԼ

### «L'HUMANITE»

(22-23 Mai)

Թերթը պատկերազարդ երեք էջ յատկացուցած է Գիւմբրիի երկրաշարժին եւ խոկափէս անոր ազօր ալ չարունակուղ հետեւանքներուն: Կը ներկայացուի քաղաքին քանդուած ֆրանսական վարժարանը որ վերակառուցուած է չնորհիւ ազնոր տնօրէնին՝ Մարթէն Փաչայեանի անխոնջ ջանքերուն: Ապա կ'ըսուի որ քաղաքը որ 1988–ին 210 հազար բնակիչ ունէր, ունի 205 հազար ըստ պաշտօնական ազբիւրներու, մինչդեռ այլ չէջանակներ կուտան 170 հազարի թիւը: Եւ ինչ որ հայկական չէջանակներու անձնաւորէ չէ, կը կրկնուի հոս եւս թէ ապէտէն 11 տարի առաջ տակաւին 15 հազար ընտանիք – աւելի քան 60 հազար հոգի – «առժամեայ» ապաստարաններու մէջ կ'ապրին: Մեծ է գործազուրկներու, արհատագործներու թիւը:

Անջատ անկիւնի մը մէջ տրուած է քաղաքին պատմութեան մասին հակիրճ ակնարկ մը, խորագրուած՝ Կումայրիէն Գիւմբրի, անցնելով Լէնինականէն: Էջէջը աւորագրած է Գրիգոր Գագանճեան. լուսանկարները կը պատկանին Ժիւլիէն Նաթըլէնի:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

### «ԵՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 25 / 26)

### «ՓԷՌՆՕ – ՌԻՔԱՐ» ՆԱԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԿՆԻԾ Է

*Մայիս 25–ին Երեւանի մէջ ստորագրուած է «Փէռնօ – Ռիքար» ընկերութեան կողմէ Երեւանի կոնեակի գործատան գործման վերջնական պայմանագիրը: Ֆրանսական կողմէն ստորագրած է գործադիր տնօրէն Թ. Ժապէյա, իսկ հայկական կողմէն սեփականաշնորհման նախարար Պաւլ Ղալֆայեան եւ Ֆինանսի փոխ – նախարար Արա Ալիկեան:*

*Գործատան սեփականաշնորհումը 1998ին 30 միլիոն տոլարով չահած էր Ֆրանսական ընկերութիւնը: Վարչապետ Ա. Դարբինեան ըսած է որ իրենք համոզուած են որ լուրջ ընկերութեան մը հետ գործ ունին եւ կոնեակի գործատունը կը դառնայ լուրջ ձեռքերու մէջ եւ կարելիութիւնը կունենի Հայաստանի զարգացող գործատուներէն մէկը վերլալու: Իսկ «Փէռնօ – Ռիքար»ի գործադիր տնօրէնը յարկաւոր նկատած է կոնեակի որակին բարելաւումը որպէս յաջողութեան հիմ: Ան աւելցուցած է թէ իրենց նպատակը հայկական կոնեակը միջազգային խմիչք դարձնելն է:*

*«Փէռնօ – Ռիքար» գինիի եւ ոդելից ըմպելիներու աշխարհի հինգերորդ արտադրիչն է, տարեկան 4 միլիառ տոլարի վաճառքով որուն մեծ մասը կը կատարուի Ֆրանսայէն դուրս:*

*
**

### Վ. ՍԻՐԱԴԵՂԵԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

*ՀՀՇ վարչութեան նախագահ Վ. Սիրադեղեան Մայիս 24–ին հեռատեսիլի ելոյթով մը այլ նիւթերու կարգին խօսած է երկրէն մեկնումին մասին. ըսած է թէ անկարելի էր տպրիլ թունաւոր քաղաքական դաշտին մէջ: Վերադարձած է երեք ամիս ետք, նախ հինգ տարու իր դատկին կարօտին պատճառով: Ինչ կը վերաբերի իրեն ուղղուած մեղադրանքներու, Վ. Սիրադեղեան ըսած է թէ չատ լաւ տեղ պէտք է ըլլալ, ապաւինելու համար արտակարգ ընտրութիւններով կազմուած իշխանութեան դատարանին, ապա աւելցուցած՝ «բայց այս է մեր երկրի դատարանը: Հարցի բուն էութիւնն այն է որ իշխանութեան ներկայացուցիչները կը նկատեն թէ իրենք ունին Հայաստանի զարգացող գործատուներէն մէկը վերլալու: Իսկ «Փէռնօ – Ռիքար»ի գործադիր տնօրէնը հարկաւոր նկատած է կոնեակի որակին բարելաւումը որպէս յաջողութեան հիմ: Ան աւելցուցած է թէ իրենց նպատակը հայկական կոնեակը միջազգային խմիչք դարձնելն է:*

*«Փէռնօ – Ռիքար» գինիի եւ ոդելից ըմպելիներու աշխարհի հինգերորդ արտադրիչն է, տարեկան 4 միլիառ տոլարի վաճառքով որուն մեծ մասը կը կատարուի Ֆրանսայէն դուրս:*

*
**

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

*Եւրոպական Խորհրդարանին 10 հոգինոց պատուիրակութիւն Մայիս 27 – 31 կը գտնուի Հայաստան, հետեւելու ընտրութեան ընթացքին: Պատուիրակութիւնը հանդիպումներ կ'ունենայ նախագահ Ռ. Քոչարեանի, Ազգային ժողովի նախագահ Ա. Յարութիւնեանի, կեդրոնական ընտրական յանձնախումբի նախագահին հետ: Ընտրութեան օրը պատուիրակութեան անդամները կը գտնուին գտնազան չրջաններու մէջ:*

*
**

### Ի ՆՊԱՍՏ Ա· ԲԼԷԵԱՆԻ

*Քանի մը քաղաքական կազմակերպութեան ներկայացուցիչներ յայտարարութեան մը հրապարակած են որով Ա· Բլէթիւն մը հրապարակած են որով Ա· Բլէեանի բանտարկութիւնը կը նկատեն քաղաքական հետապնդում: Ըսուածին փաստ կուտան այն որ անոր ձերբակալութիւնն ու բանտարկութիւնը նախաքննութեան տրամաբանութեամբ կատարուած չէր, այլ «ուժի եւ կամայականութեան ցուցադրութիւն»: Ցայտարարութիւնը ստորագրած են Հ. Բագրատեան (Ազատութիւն), Վ. Յակոբեան (Լիպերալ Դեմոկրատ), Դ. Շահնազարեան, (ԻԱ· դար), Շ. Մաթեւոսեան (Շամիրամ), Ա· Յովակիմեան (ՀՀՇ), Լ. Եգորեան («Հայրենիք» դաշինք), Շ· Յարութիւնեան (Ժեղակրօն), Մ· Հայրապետեան (Պահպանողական):*

*
**

### «ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ» ԿԱՌՔԸ ՔԱՐԿՈԾՈՒԱԾ Է

*«Իրաւունք եւ Միաբանութիւն» դաշինքի անդամ, Սահարով Հիմնարկի տնօրէն Ազատ Արշակեան յայտնած է թէ իրենց կառքը քարկոծուած է այն միջոցին երբ ինք կը մասնակցէր 16–րդ Թաղամասի «Լիլլէթ» հեռատեսիլի յայտագրին: Ան աւելցուցած է նաեւ որ հոնկէ մեկնումի պահուն ալ քարակոյտ մը արձակուած է իր ուղղութեամբ, առանց ծանր հետեւանքներ պատճառելու:*

*
**

### «ՀՀԴ»Ի ԵՒ «ՀՅԴ»Ի ՀԱՐՑ ՄԸ

*Մայիս 30–ի ընտրութեանց քուէթերթիկները արդէն տպագրութեան ընթացքի մէջ են: Սակայն, Մայիս 25–ին, կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նիստին անոր անդամ (ՀՅԴ) Համլէթ Արթահամեան յայտարարած է որ քուէթերթիկներուն մէջ Դաշնակցութեան անունը սխալ տպուած է՝ Հայ Հեղափոխական Դաշնակցութիւն (ՀՀԴ) ձեւով, մինչ Հայաստանի մէջ ընդհանուր առմամբ այդ անունով կուսակցութիւն չկայ, ըսած է ան, նշելէ ետք թէ կուսակցութեան անունը միշտ գրուած է «ՀՅԴ» տառադրութեամբ: Ընտրական Յանձնաժողովին եւ ՀՅԴ–ի միջեւ համաձայնութիւն գոյացած է հանրութիւնը գրաւոր եւ բանաւոր մամուլի միջոցով այդ սխալին տեղեակ պահելու չուրջ, կանխելու համար թիւրիմացութիւնները:*

## ՕՐԸ ՕՐԻՆ

### ՊՈԼՍՈՅ ԴՊՐԵՎԱՆՔԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՍՓԻՒՌ ԴՊՐԵՎԱՆՔՑԻՆ

Պոլսոյ Ս· Խաչ Դպրեվանքը նոյն ատեանին շուրջ երկու տասնեակ հայկական վարժարաններու շարքին հինգ լիսէներէն մէկն է 35 տարիէ ի վեր: Այսօր, հաւանօրէն, չեշտուած տարբերութիւն մը չի պահեր դպրոցական ոլորտի միւս անուններէն: Բայց կա՛ր այդ տարբերութիւնը, առնուազն մինչեւ 80–ական թուականներու կէսերը, եակատագրի հեգնանք նկատելու արժանի հակասութեան մը մարմնացումով: Ինչպէս անունն ալ կը մատնէ, կրթական այս հաստատութիւնը ազգ հիմնադիր Գարեգին Պատրիարք Խաչատուրեանի կրկնակի երազին մարմնաւորումը պէտք է ըլլար. առաջինը անվերադարձ կորուստին արգելք դառնալ էր Անատոլուի անկիւնները մնացած «հայ» նոր սերունդին. անոր ոգ ստոյգ սպառնալիքին տակն էր ֆիւրտեւթուրք խառնուրդի մը պտուղը ըլլալու: Երկրորդը՝ փըրկուածներու այդ խումբերէն պէտք է դուրս գային հողին համը պահած, գարգացած կրօնաւորներ. ազգակ մը որուն անհրաժեշտութիւնը ունէր հայ եկեղեցական աշխարհը եւ ունի այսօ՛ր ալ, շատ աւելի շեշտուած կերպով:

Իրականացաւ Խաչատուրեան պատրիարքին երազին առաջին՝ հիմնական մասը: Այսօր ոչ միայն Պոլսոյ, այլ նաեւ աշխարհի չորս ծագերուն մտաւորական, գիտական, առեւտրական, կրթական եւայլն ասպարէզներուն մէջ բազմաթիւ Դպրեվանքցիներ կան: Բայց Ս. Խաչ Դպրեվանքը տուած ըլլալով հանդերձ 3 – 4 կրօնաւոր, Արմաշի մը յաջորդը չեղաւ, կիսատ ձգելով իր հիմնադրին նպատակը: Ատոր պատճառը բացայայտօրէն պէտք է փնտռել «նախանիւթ»ին եւ անոր «մշակումի վայր»ին անհաշտութեան մէջ. այլ խօսքով՝ նիշդ է որ Դպրեվանքին համար ատաղձ ունէր Անատոլուն, բայց 50–ական թուականներու Պոլիսը չունէր Արմաշի օրինակը կրկնելու պայմանները: Ու այս պակասը հզօրագոյն կերպով շեշտուեցաւ երբ ինչ – ինչ պարագաներու բերումով տարուէ – տարի վանք ըլլալու սահմանուած հաստատութիւնը տուաւ առաւելագոյն մտածումէ տիրապետուած սերունդներ: Հետաքրքրական պրպտումի մը նիւթ է այս դիմափոխութիւնը որուն մէջ արտաքին ազդակներու կիրարկած մարտավարութեան չափ դեր ունեցան Պոլսոյ հայկական շրջանակէն ցուցաբերուած վերաբերումներ ալ:

Այս բոլորին անգամ մըն ալ անդրադարձնող ազդակ եղաւ այն համախմբումը որ ամէն տարի իրենց Դպրեվանքի շրջանաւարտներ: Այս տարուան համար ընտրուած վայրը Ալփորվիլն էր: Փարիզեան շրջանի հայաշատ արուարձաններն փոքրիկ տաճարը բառին բուն առումով նեղ կուգար խուռներամ բազմութիւնը պարփակելու: Պատարագիչը՝ Գերմանիոյ առաջնորդ Գարեգին Արք. Պեճեեանն էր, Դպրեվանքի շրջանաւարտ մը, իսկ արարողութեան նախագահողը՝ Շահան Արք· Սվաճեան, Դպրեվանքի հիմնադրութեան օրերէն անոր երթին մասնակից մը, որպէս տեսուչ, ուսուցիչ: Դասին մէջ շապիկ հագուած, արարողութեան գործնապէս մասնակցութիւն կը բերէին ուրիշ Դպրեվանքցիներ, որպէս դպիր: Պատկեր որ ապահովաբար խաչատուրեան պատրիարքին հոգին հրճուեցնող գլխաւոր վրէժն էր, վանք դառնալու նպատակէն շեղած իր գործին արդիչութեամբ:

Եկեղեցիին սրահը, պարտէզը, փողոցը լեցուցած էին շրջանաւարտ սերունդներէ շուրջ հարիւր ներկայացուցիչներ, մօտ տասը երկրէ: Անոնք եկած էին յարգանքի տուրք մատուցանելու գիրենք տգիտութեան, օտարացումի ափերէն շատ ուրիշ տեղ բերած իրենց մեծերուն, յաւէտ մեկնած դասընկերներու յիշատակին: Նաեւ որպէս հաւատարմութեան արտայայտութիւն՝ նստելու եւ միասնաբար մտածելու, որոշելու համար դպրեվանքցիին Դպրեվանքին ընթացքին մէջ իրենց բաժինը: Տարիներու կարօտով բեռնաւոր հանդիպումներ, անոնցմէ ծնած ուրախութիւններ, տրտմութիւններ ու բոլորին համար միայն օրով մը երկար Հոգեգալուստի շաբաթավերջին շատ նեղ սահմաններ արգելք չեղան սուղ ժամանակին կարեւոր մէկ բաժինը ժողով – խորհրդակցութեան յատկացնելու:

Ուշադրութեան կեդրոնը գետեղուած էր Պոլսոյ վարժարանը 1998 – 1999 տարեշրջանի 118 երկսեռ աշակերտներով որոնցմէ 50–ը գիշերօթիկ էին. իսկ 62 աշակերտ ձրի կ'ուսանէր: Միայն այսքանը պատասխանատուութեան լուռ բաժին մը կը հանէր Դպրեվանքի նախկիններուն որոնք առաւելագոյն ստանձնումը ունէին այդ պարտականութեան:

Նոյնիսկ այդ ստանձնումը միս մինակ, լայնօրէն կը բաւէ իր գոյութեան առաջին տասնամեակներուն «ինքնատիպ» նկատուած վարժարանին հունձքն ալ նոյն որակով ներկայացնելու համար: Ինքնատիպ՝ այս անգամ դրականին, օրինակելիին ամէնէն շեշտուած սահմանումով:

Թ. ԱՐՓԻ

# ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԾ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ ՍԵԲԱՍՏԱՑԻԻ ՄԱՀՈՒԱՆ 250-ԱՄԵԱԿԸ

*Մխիթարեան Միաբանութիւնը երեքշաբթի, Ապրիլ 27, երեկոյեան ժամը 8-ին, արժանաւորապէս նշեց իր հիմնադրին՝ Մխիթար Աբբահայր Սեբաստացիի մահուան 250-ամեակը, «Յովհաննէս Պօղոսեան» հանդիսասրահին մէջ:*

*Սրահէն ներս հոծ հաւաքականութեան մը ներկայութիւնը՝ վկայութիւնն էր որ մեր ժողովուրդը դիակ արդարօրէն գնահատել իր ազգային արժէքները, որոնք եղած են ու կը մնան մեր գոյութեան ու գոյապայքարի անփոխարինելի կռուանները:*

*Ընտրանի հաւաքականութիւն մը, որ վստահաբար ունէր պիտակցութիւնը այն ճշմարտութեան որ Սեբաստացի Մխիթար Աբբահօր հոգիով ու գաղափարականով լիցքաւորուած ու ոգեորուն իրերայաջորդ սերունդները Մխիթարեաններու՝ կատարեցին պետականավայել գործ, մանաւանդ մեր պատմութեան այն չրջանին երբ երկաթեայ վարագոյր մը կը բաժնէր սփիւռքաւաւրած մեր ժողովուրդը իր արմատներէն, կենսարար հողէն:*

*Ներկայ հաւաքականութիւնը գիտէր որ մեր հոգեմտաւոր արժէքներուն, աւանդներուն, Գիրին ու Գրականութեան, պատմութեան ու հնադարեան մշակոյթին ոչ միայն պահակն ու պահապանը, այլ զայն մշակողը, քարոզողը, ծանօթացողն ու տարածողը եղած են Մխիթարի ժառանգորդները: Եղած են անոսանան դրօշակակիրը ազգային ու հայրենական դրօշմ կըրող բոլոր արժէքներուն, վահանը՝ այդ արժէքները նեմմացնելու կամ ժամանակի մաշումին ենթարկելու վտանգին դէմ:*

*Հանդիսութեան ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ի ներկայացուցիչ Վարդան Արք. Տէմիրճեան, Լիբանանի Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Մանուէլ Եպիսկոպոս Պաթմագեան, պետական երեսփոխաններ, հայ քաղաքական երեք կուսակցութիւններու ղեկավար դէմքեր, մշակութային միութիւններու ներկայացուցիչներ, զպրոցներու տնօրէններ, մշակոյթի գործիչներ, ղրոցներ, մամուլի ներկայացուցիչներ, Մխիթարեան սաներ եւ բազմաթիւ հոյդրիներ:*

*Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք հանդիսութեան բացումը կատարեց Հ. Գրիգոր Վրդ. Սերէնեան, Վարիչ Լիբանանի Մխիթարեան Մշակութային Միութեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ սոյն ձեռնարկով պաշտօնապէս բացուած կը յայտարարուի Մխիթարեան Միաբանութեան կազմակերպած հանդիսաւոր տօնակատարութիւններու չարքը՝ նուիրուած Մխիթարեան Միաբանութեան հիմնադրութեան 300-ամեակին, Քրիստոսի ծնդեան 2000-ամեակին եւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք ճանչցման 1700-ամեակին, որոնք պիտի իրագործուին մինչեւ 2001 թուական, ընդգրկելով ակադեմական, մշակութային, հրատարակչական եւ գեղարուեստական յայտագիրներ:*

*Այնուհետեւ, օրուան խորհուրդը փոխանցելու հրաւիրուեցաւ Հ. Վահան Վրդ. Օհանեան, որ սպառիչ կերպով ներկայացուց Մխիթարեան Միաբանութեան հիմնադիրը՝ Մխիթար Վրդ. Սեբաստացիի կեանքին ու գործունէութեան նշանակալից հանդրուանները, լուսարձակի տակ առնելով անոր բացառիկ տիպարը հայ ժողովուրդի, հոգեւորականի, առաքեալի, հայրենասէրի, գիտնականի ու հրատարակիչի:*

*Զեկուցարէր Վարդապետը մէջբերելով հայրապետներու, գրողներու եւ Մխիթարեան պատմագիրներ, կամ «կամքէ անկախ» որեւէ այլ պատճառով չզանազանէ անհատ – պետութիւն երկուութեան բաղկացուցիչները: Ընդունելով, խոստովանելով եւ արժանի երախտադիտութիւնը արտայայտելով չափով մատուցանելով Հաճը Հալիլներու ընթացքին, կրնա՞յ բան մը դեղչուիլ 1915-ի իրականութեան ու անոր կապուած պարագաներուն մէջ թուրք պետութեան պատասխանատուութենէն:*

*Թ. Աջեամ կրնար երկխօսութեան հրաւէրը հիմնել աւելի ամուր տուեալներու վրայ որոնք գոնէ անկեղծութեան դրաւական մը կ'ըլլային ի նպաստ իրեն: Երբ կ'լսէ, օրինակ, թէ Հայերու ապատածը (դատելով զինք ունկնդրող ու ծափահարողներէն) պատասխանատուութիւնը իր թիկունքի ձգելու եւ ցաւ յայտնելու արտայայտութիւն մըն է Թուրքիոյ կողմէ որ «այս հարցին հետ կապ չունի», ամբողջովին կը մոռնայ թուրք պետական աւազանին Օսմանեան անցեալը վտարանդող արտայայտութիւնները եւ նոյն կայտռութեան 700-ամեակին մեծաչուք նշումները: Նոյնն է պարագան երկխօսութեան հիմ փնտռելու ջանքին մէջ դիւրաւ օգտագործելի ուրիշ մարզի մը որ անմոռանալանքը կրնար ըլլալ: Ինչո՞ւ, օրինակ, այս կէտը Անգարայի ուշադրութեան չի յանձներ, փոխանակ գոհանալու զգացական կոչերով(2): Հայկական ճակատը իր ամէնէն պաշտօնական շերտով՝ Հայաստանի իշխանութիւններով քանիցս ուղղակի կամ անուղղակի պատրաստակամութիւն յայտնած է պատմութիւնը մէկդի ձգելու եւ երկու երկիրներուն միջեւ որպէս յարաբերութեան նախադայլ, տնտեսական կապեր մշակելու: Ու ծանօթ է որ այդ ուղղութեամբ բոլոր փորձերը անպատասխան մնացած են, պերճախօս փաստ տալով Անգարայի տրամադրութիւններուն:*

*Եւ վերջապէս, նոյնիսկ բնական նկատելով Թ. Աջեամի մղումը որ կը բացատրուի Թուրքիան ժամանակակից արժէքներու տէր դարձնելու մտահոգութեամբ, աւելի տրամաբանական չէ՞ր ըլլար որատոր մէջ հայկական ազդակը գործածուէր ոչ թէ ցեղասպանութեան ընդունելութեամբ, այլ այսօրուան մեկնակէտով: Իրեն անչուշտ չատ լաւ ծանօթ է Պոլսոյ Հայկական հաստատութիւններուն դէմ թուրք պետութեան ընթացքը: Փոխանակ «Առանց նախապայմանի» պիտակով երջատոյն նախապայմաններ առաջարկելու, չատ աւելի տեղին ու մանաւանդ համոզիչ կ'ըլլար որ Թ. Աջեամ մարդկային իրաւունքներու չարպանքին ապացոյց Անգարային պահանջէր հայապատկան վերջին կալուածներն ալ իւրացնելէ հրաժարելու կեցուածքով:*

*Առանց այս ու այս կարգի այլ կէտերու նկատառումին, նորութիւն բերելու նման ջանք ամէնէն աւելի հետեւանքը պիտի ըլլայ. թէ 1915-ին 1·5 միլիոնին բնաջնջումով պարպուած հողերով, այդ զանգուածին անչարժ ու չարժուն հարստութեամբ ճեռնտու դետին տրամադրելու թուրքիոյ հանրապետութեան առաջ Թուրքիոյ հանրապետութեան տեղ ծումին, այսօր ալ նոյն հայութեան ջոռաւելներուն ճիտին պարտք կը դրուի ապահովել այդ հանրապետութեան ժողովրդավար, մարդկային իրաւունքներու չարպանքի տէր պետութեան հանգամանքը: Բան մը զոր Անգարա չէ կրցած ընել երեք քառորդ դարէ ի վեր:*

*Իսկ եթէ ճիշդ է որ Թ. Աջեամի կողմէ անվերապահ կերպով արցունք – ծաղկեպսակ գետեղեցիկ: Նոյնիսկ երբ անընդունելի կը մնայ «Ցեղասպանութեան պնդումը», գոյց տանք որ ցաւակից են» (էջ 13 – 14):*

*Պոլսոյ Հայկական Հաստատութիւններուն դէմ թուրք պետութեան ընթացքը: Փոխանակ «Առանց նախապայմանի» պիտակով երջատոյն նախապայմաններ առաջարկելու, չատ աւելի տեղին ու մանաւանդ համոզիչ կ'ըլլար որ Թ. Աջեամ մարդկային իրաւունքներու չարպանքին ապացոյց Անգարային պահանջէր հայապատկան վերջին կալուածներն ալ իւրացնելէ հրաժարելու կեցուածքով:*

*Առանց այս ու այս կարգի այլ կէտերու նկատառումին, նորութիւն բերելու նման ջանք ամէնէն աւելի հետեւանքը պիտի ըլլայ. թէ 1915-ին 1·5 միլիոնին բնաջնջումով պարպուած հողերով, այդ զանգուածին անչարժ ու չարժուն հարստութեամբ ճեռնտու դետին տրամադրելու թուրքիոյ հանրապետութեան առաջ Թուրքիոյ հանրապետութեան տեղ ծումին, այսօր ալ նոյն հայութեան ջոռաւելներուն ճիտին պարտք կը դրուի ապահովել այդ հանրապետութեան ժողովրդավար, մարդկային իրաւունքներու չարպանքի տէր պետութեան հանգամանքը: Բան մը զոր Անգարա չէ կրցած ընել երեք քառորդ դարէ ի վեր:*

*Իսկ եթէ ճիշդ է որ Թ. Աջեամի կողմէ անվերապահ կերպով արցունք – ծաղկեպսակ գետեղեցիկ: Նոյնիսկ երբ անընդունելի կը մնայ «Ցեղասպանութեան պնդումը», գոյց տանք որ ցաւակից են» (էջ 13 – 14):*

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

---

(1) – «Մարդկային իրաւունքները եւ Հայկական հարցը» «Իմկէ» հրատարակչութիւն – 1999, 633 էջ:

(2) – Նոյն հատորին ծօնագրութեան մէջ Թ. Աջեամ կը գրէ. «Հոսկէ կ'ուզեմ պատմութեան ամէնէն բարձրաստիճան ներկայացուցիչներուն ձայնել. «խնդրե՛մ, երեսան զացէք. ու մեռեալներու մէջտեղ ծաղկեպսակ գետեղեցէք: Նոյնիսկ երբ անընդունելի կը մնայ «Ցեղասպանութեան պնդումը», գոյց տանք որ ցաւակից են» (էջ 13 – 14):

# ԹԱՆԷՐ ԱՔՉԱՄԻ «ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ» ԱՌԱՋԱՐԿԸ ՅՍՏԱԿ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

(Բ. եւ վերջին մաս)

*Ակնբեւ է որ ճիշդ են Թ. Աքչամի հաւաստումները թէ ԱՄՆ-ու եւ Գանատայի իր ելոյթներուն ներկայ բարմուքիւնները մեծ յուզումով, խանդավառութեամբ ընդառաջած են երկխօսութեան իր հրաւէրին: Եւ ոչ միայն անոնք: Նոյն ելոյթներուն եւ անոնց նախորդած «Լուսեթեան պատը» ժապաւէնին ցուցադրութեան ընդրադարձող հայ մամուլի անունները ալ – գոնէ մեր տեսած չափով – դուպահեռ կեցուածքներու վրայ են:*

*Ցանկալի հանգրուանի մը չատ մօտ գտնուելու տպաւորութեամբ ստեղծուած նման խանդավառութիւն մը անհակնալի չէ թեեւս. մանաւանդ եթէ նկատի առնուի 84 տարուան անտեսումը, զլացումը, ուրացումը եւ անոնց ստեղծած անիրաւուածի, արհամարհուածի, նաեւ ամէն յարմար առիթի չարաչար չահարկուածի նուաստացումը որ Հայուն կրած իրը եղաւ: Այս պարագային, նշուած ազդակներուն պէտք է աւելցնել «օտար» ծագումով ամէն տեսակ դիրքէ – քաղաքական չորրորդական դէմք, դրացի նպարավաճառ, մամուլ, եւայլն – արտայայտուած նուազագոյն համախոհութեան, զօրակցութեան, նոյնիսկ հոգեչահ խօսքի նկատմամբ մեր աւանդական հակադրեցութիւնը. արցունքոտ աչքերէ, դողդղացող շրթունքներէ յայտնուած չնորհակալութեան, երախտապիտութեան չուայլ զգացումները: Իսկ Թ. Աքչամի երեւոյթին մէջ կայ աւանդական այս պատկերը աննախընթաց խրտուիլեան հառնող ազդակ մըն ալ որ անոր թուրք լսելու հանգամանքն է: Տուեալ որ արդարօրէն կը զօրէ նոր էջ մը բանալու «Ցեղասպանութեան» գլուխին տակ 84 տարիէ ի վեր կուտակուած աչքախաւանքներու, չանքերու, սպասումներու, ձախողութիւններու մեր բազմութեան մէջ:*

*Այս առաջին քայլէն անդին, ինչ կը վերաբերի Թ. Աքչամի դիրով ու խօսքով ահմանուած նորութեան արժեւորումին, աննախընթաց նկատուածին արձագանգած պզացականէն տարբեր բաներ ալ կարկ է նչմարել ու նկատի ունենալ, եթէ նոյնիսկ անոնց մառնանչումը չատերու համար «տաք ապուրին մէջ պաղ ջուր լեցնել» նչանակէ: Մանաւանդ որ թուրք լրնկերակցութիւն – պատմաբանին ըերած նորութիւնը՝ երկխօսութեան մը ճեռնարկելու հրաւէրը, յուզում կամ խանդավառութիւն ցուցադրող փիկիւրանի դերէն աւելի գործնական յանձնառութիւն մը բաժին կը հանէ մեզի. անչուշտ եթէ չենք ուզեր մեր ամէնէն էական կալուածին մէջ ծափ – արցունք մարմնաւորելով գոհանալ, ինչպէս յաճախ, մէկզի ձգելով մառածումին, խօսքին կալուածները:*

*Թ. Աքչամ հրապարակ կ'իջնէ երկու կարեւոր տեսակէտով. առաջինը՝ երկու ժողովուրդներուն համար ծանրագոյն թապուի մը վերջ տալու նպատակով երկխօսութեան ճեռնարկելու լուծումն է. երկրորդը՝ այդ մառնանչումը որով կը յայտնէ թէ թապուին վերջ տալու իր չանքը կապուած է Թուրքիոյ մէջ իսկապէս ժողովրդավար ու իրաւունքի պետութիւն մը իրականացնելու նպատակին: Այսինքն, իր արարքին մէջ, մօտ ղարու մը անիրաւումը եւ ուրացումը ղարմանելու մղումը կապուած չէ ուզղակի սխալին սրբագրութեան: Այլ, թելադրուած է ներկայի պարմաններէն որոնք քաղաքակիրթ երկիրներու չրջանակին մէջ Թուրքիոյ տեղ տալու համար կը պահանջեն որ ան ըլլայ ժողովրդավար, մարդկային իրաւունքները յարգող, եւայլն:*

*Ըսե՛նք որ այս ենթախորքն ալ իր չատ նչանակութիւնը մեծ չունի, մանաւանդ որ Թուրքիոյ նման երկրի մը դէմ ճապկումի մեր զգաստին ծանօթ ահմանններով: Ի վերջոյ, առաջին անգամը չէ որ դէմ յանդիման կը գտնուինք «ուրիկ»ին, «միւս»ին համար ձեւուած կացութիւններէ մեր գործին ծառայելիք ստացք գտնելու վիճակին:*

*Բայց ինչ որ անընդունելի է ու նաեւ լուրջ ստուեր կը ձգէ անելի մը ճար փորձելու Թ. Աքչամի անկեղծութեան վրայ, նախապայմանի հարցն է: Ան չի բաւականանար երկխօսութեան մը համար «առանց նախապայմանի» պայմանը դնելու, ինչ որ առաջին ժխտում մըն է զաւանած մօտեցումին, կը պահանջէ նաեւ որ հայ խօսակիցը ընդունի հրաժարիլ «սահմանաւին, հողային խնդիրը» նոյնիսկ խօսքի նիւթ ընելէ: Այսինքն, ա՛յս նախապայմանով միայն կարելի կը նկատէ թապուին մասին սեղան նստելու հեռանկար մը: Եւ կարգալ որ իր այս արտայայտութիւնը երեք քաղաքներու լսարաններէն ալ ծափերով ընդմիջուած է...: Հետաքրքրական պիտի ըլլար դիտնալ թէ ինչ բնոյթ հրաւիրողներէն, կազմակերպիչներէն մինչեւ յետին ունկնդիրը, ո՞չ ոք իրեն չէ ուղղած հարցումը թէ ինչ տրամաբանութեամբ «առանց նախապայմանի» հռչակուած երկխօսութեան մը պատրաստութեան փուլն իսկ սկիզբ կ'ունենայ նման նախապայմանի: Կամ, առնուազն, ինչ փոխարինութեան սերոյն պէտք է համաձայն դնուիլ Թ. Աքչամի կանխորոշումին թէ «սահմանային եւ հողային հարցը փակուած, աւարտած համարելու պարտաւոր եւիֆ»: Նման հրահանգ ընդունելու կամակորութիւն մը քօղարկելու համար ապատանիլ նման պահանջքի համար մեր ներկային ոչ ձեռնտու պայմաններուն, արդէն համաձայր է «խօսակիցի»ի մեր արժէքը զերոյի հաւասարեցնելու: Իսկ այն անվերապահ ընդունելութիւնը զոր թուրք մտաւորականը կ'լսէ թէ պատճ է ունկընդիրներէն, նման անդրադարձներու հետ աւելորդ զարձուցած է անոր չա՞տ նրբավարական սպառնալիքն ալ, թէ պնդել ահմանային հարցին վրայ, հոմանիշ է «մենիֆ պատերազմ կ'ուզեն» դոչելու...:*

*Ինչ կը վերաբերի մօտեցումի Բ. ուղղութեան թէ երկխօսութեան հրաւէրը կը մեկնի թուրքիան ժողովրդավար, եւայլն դարձնելու մխտումէն, անով ալ կը մըտինք դեր ստանձնելու մարզի մը մէջ որ տրամաբանօրէն ոչինչով մեզի կ'առընչուի: Այս փուլին եւս ծառայելով թուրքիոյ քաղաքակիրթ արժէքներու տիրանալու հոլովոյթին, ի՞նչ պիտի ըլլայ մե՛ր չահը, երբ որպէս խայծ ներկայացուած երկխօսութեան հեռանկարէն արդէն դեղչուած են մեզի համար էական տարրերը: Եւ անոնք հողային, ահմանային խնդիրները չեն միայն: Թ. Աքչամ ինք ընդունելով հանդերձ, աւելորդ կը նկատէ – յանուն Թուրքիոյ– կատարուածը ահմանելու, որակելու գործն ալ: Կ'լսէ թէ Թուրքիոյ ներկայի հարցը չէ պատասխանել 1915-ին պատահածը «ցեղասպանութի՞ւն էր, թէ ոչ» հարցումին: Աւով կարելի առաւելագոյն յառակութեամբ կը յայտնէ որ խաղը կրնայ ընթանալ միայն Թուրքիոյ նախադծած հունով, անոր չահը միակ նպատակ ունենալու չօժարութեամբ:*

*Այս մօտեցումին մէջ այլեւս երկրորդական կը մնան ուշադրաւ ուրիշ կէտեր. այնոնցմէ է օրինակ, ակնարեւօրէն կամաւոր չփոթը զոր հեղինակը կը դնէ պատասխանատուութեան դիրքին մէջ: Իր ելոյթներուն ու նոր հրատարակուած հատորին (1) նախաբանին մէջ կ'ոգեկոչուի Հաճը Հալիլ անուն Թուրք մը որ 7 – 8 հոգինոց հայ ընտանիք մը մահէն փրկած է, պատրպարելով իր տան ճեռնայարկին մէջ եւ վտանգելով իր անճն ու իրեններուը: Մէկէ աւելի անգամներ Թ. Աքչամ կը չեշտէ նման ուրիշներու ալ գոյութիւնը որոնք եւս խիզրոյ առարկայ տարիներու պատմութեան մաս կը կազմեն եւ որոնց պէտք է արժանին մատուցանել, ընդառաջելով երկխօսութեան կանչին:*

*Պարզ է որ Հաճը Հալիլ միակը չէր այդ օրերու բացառութիւններէն. վերապրող ամէն ընտանիք գրեթէ ունի «Հաճը Հալիլ» մը որ թուրք է, քիւրտ, կամ արաբ: Բայց կարելի՞ է հաւատալ որ այնքան հմտութեան տէր մտաւորական մը, անուշադրութեամբ, կամ «կամքէ անկախ» որեւէ այլ պատճառով չզանազանէ անհատ – պետութիւն երկուութեան բաղկացուցիչները: Ընդունելով, խոստովանելով եւ արժանի երախտադիտութիւնը արտաւելագոյն չափով մատուցանելով Հաճը Հալիլներու ընթացքին, կրնա՞յ բան մը դեղչուիլ 1915-ի իրականութեան ու անոր կապուած պարագաներուն մէջ թուրք պետութեան պատասխանատուութենէն:*

*Թ. Աքչամ կրնար երկխօսութեան հրաւէրը հիմնել աւելի ամուր տուեալներու վրայ որոնք գոնէ անկեղծութեան դրաւական մը կ'ըլլային ի նպաստ իրեն: Երբ կ'լսէ, օրինակ, թէ Հայերու ապատածը (դատելով զինք ունկնդրող ու ծափահարողներէն) պատասխանատուութիւնը իր թիկունքի ձգելու եւ ցաւ յայտնելու արտայայտութիւն մըն է Թուրքիոյ կողմէ որ «այս հարցին հետ կապ չունի», ամբողջովին կը մոռնայ թուրք պետական աւազանին Օսմանեան անցեալը վտարանդող արտայայտութիւնները եւ նոյն կայտռութեան 700-ամեակին մեծաչուք նշումները: Նոյնն է պարագան երկխօսութեան հիմ փնտռելու ջանքին մէջ դիւրաւ օգտագործելի ուրիշ մարզի մը որ անմոռանալանքը կրնար ըլլալ: Ինչո՞ւ, օրինակ, այս կէտը Անգարայի ուշադրութեան չի յանձներ, փոխանակ գոհանալու զգացական կոչերով(2): Հայկական ճակատը իր ամէնէն պաշտօնական շերտով՝ Հայաստանի իշխանութիւններով քանիցս ուղղակի կամ անուղղակի պատրաստակամութիւն յայտնած է պատմութիւնը մէկդի ձգելու եւ երկու երկիրներուն միջեւ որպէս յարաբերութեան նախադայլ, տնտեսական կապեր մշակելու: Ու ծանօթ է որ այդ ուղղութեամբ բոլոր փորձերը անպատասխան մնացած են, պերճախօս փաստ տալով Անգարայի տրամադրութիւններուն:*

*Եւ վերջապէս, նոյնիսկ բնական նկատելով Թ. Աքչամի մղումը որ կը բացատրուի Թուրքիան ժամանակակից արժէքներու տէր դարձնելու մտահոգութեամբ, աւելի տրամաբանական չէ՞ր ըլլար որ ատոր մէջ հայկական ազդակը գործածուէր ոչ թէ ցեղասպանութեան ընդունելութեամբ, այլ այսօրուան մեկնակէտով: Իրեն անչուշտ չատ լաւ ծանօթ է*

---

(1) – «Մարդկային իրաւունքները եւ Հայկական հարցը» «Իմկէ» հրատարակչութիւն – 1999, 633 էջ:

(2) – Նոյն հատորին ծօնագրութեան մէջ Թ. Աքչամ կը գրէ. «Հոսկէ կ'ուզեմ պատմութեան ամէնէն բարձրաստիճան ներկայացուցիչներուն ձայնել. «խնդրե՛մ, երեսան զացէք. ու մեռեալներու մէջտեղ ծաղկեպսակ գետեղեցէք: Նոյնիսկ երբ անընդունելի կը մնայ «Ցեղասպանութեան պնդումը», գոյց տանք որ ցաւակից են» (էջ 13 – 14):

ՀԱՅԿԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ
ՀՈՒՇԱՐԱՆ
1924 - 1925

## ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Գ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Դ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ե.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Զ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Է.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ը.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ժ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԲ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԳ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԴ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԵ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԶ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԷ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԸ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԹ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ի.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԲ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԳ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԴ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԵ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԶ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԸ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻԹ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Լ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԲ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԳ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԴ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԵ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԶ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԷ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԸ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԼԹ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Խ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԲ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԳ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԴ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԵ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԶ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԷ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԸ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ծ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԾԱ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԾԲ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԾԳ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԾԴ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՆԱՏԱՆԻ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է

ՀԱՅ ՀԵՂԱՓՈՓԻԿ 

*Տիկին Քնար Պուռնուքեան,*

*Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Հուրիկ Դաւտեռեան զաւակն ու թոռները,*

*Տէր եւ Տիկին Գալուստ եւ Նիքոլ Ձիմէճեան եւ զաւակները*

*եւ բնտանեկան բոլոր պարագաները*

*յաւուվ կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, քեռայրին եւ ազգականին՝*

## ԱՅԳՎԱՐԴ ՊՈՒՌՆՈՒՔԵԱՆ-Ի

*մահը որ պատահեցաւ Մայիս 22-ին։*

*Յուղարկաւորութիւնը կը կատարուի երկուշաբթի, Մայիս 31-ին, ժամը 15-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ եկեղեցին*

15, rue Jean-Goujon, 75008 PARIS

*ուրկէ մարմինը կը փոխադրուի Cimetière Intercommunal de Clamart; 108, rue de la Porte Trivaux:*

*Որեւէ մահազդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։*

«ԱՌԱՋ». - Մեր ցաւակցութիւնները Տիկին Պուռնուքեանի, Տէր եւ Տիկին Ժիրայր Դաւտեռեանի եւ Տէր եւ Տիկին Ձիմէճեանի։

(Շար. Ա. էջէն)

*թայց, հետապնդումները արդիւնք չեն տուած։ Հետաքրքրական դուրգուրանքի մը կը նկատուի այս յանկարծակի յառնութիւնները 15 ամսուան քաչքչուող քննութենէ մը ետք, ճիշդ այն օրը երբ ընդդիմութիւնը կառավարութիւնը դատապարտող բանաձեւ մը կը ներկայացնէր (Մայիս 25) պոռնիքական հարցին, հրկիզուած ճաշարաններու եւ նոր նահանգապետին ձերբակալութեան մասին։ Բանաձեւը միայն 252 ձայն ստացաւ (289 ձայն հարկաւոր է)։ Քննութեան երկարաձգումը կը բացատրուի զինուորական ոստիկանութեան եւ ոստիկանութեան տեւական մրցակցութիւններով։ Ի վերջոյ, առձեռն հետաձայներով խօսակցութիւններու վերաքննութիւնն է որ թոյլ տուած է կարգ մը ձերբակալութիւններ, ապա՝ խոստովանութիւններ։*

*ՄԱՐՍԷՅԼԻ ՍԷՆ - Շարլ կայսրանը արձակ մը պատահած է Մայիս 26-ի վաղ առաւօտեան, երբ էքսէն հասնող կառախումբը արգելքի մը բախած է։ 17 վիրաւոր կար։*

*ԴԱՂԹԱԿԱՆԱՑ ԲԱՐՁՐԱԴՈՑՆ Մարմինը տարբերութիւններ հաստատած է քոսովոյի եւ ափրիկեցի զաղթականներու մէջեւ, յատակ կերպով նախընտրելով երկրորդները։ Աղտաթեւ, լոս - Անճըլըս - Թայմզ բաղդատական տուեալներ հրատարակած է հիմնուած կազմակերպութեան «վեթերաններու» վկայութեանց վրայ։ Ափրիկեցի զաղթականի մը անուն-դը օրական 66 անթիմի կը նստի, պալքաններու մէջ 11 անգամ աւելի է (7 Ֆր. 30)։ Ափրիկէի կարգ մը զաղթակայաններու մէջ մէկ լժիշկ կայ 100 հազար զաղթականի համար, Մակեդոնիոյ մէջ մէկ լժիշկ պէտք է 700 զաղթականի համար։ Ափրիկեան կարգ մը զաղթակայաններ մինչեւ 500 հազար հոգի կ'ընդունին, սովէ եւ համաճարակէ կը մեռնին, Մակեդոնիոյ մեծագոյն զաղթակայանը 33 հազար հոգիի տպաւորութիւն կուտայ։ Սովէ կամ համաճարակէ ոչ ոք մեռած է, եւլն., եւլն.։*

## ՓՈՒԹՊՈԼ

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԳԱՂՈՒԹԱՑԻՆ ՄՐՑԱՇԱՐՔ

ՂԱՐԱԲԱՂ (ՊՐԻՒՍԷԼ) ՅԱՂԹԱԿԱՆ

*Կիրակի, Մայիս 23-ին, փարիզեան արուարձաններէն Փլէսի-Ռոպէնսոնի մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի զանազան երկիրներէն ժամանած հայկական եւ ֆրանսահայ 14 խումբերու Ֆութպոլի մըրցաշարքը, որու նախաձեռնարկ եղած էր Իսիի Մագումով Հայկ. Մարզական Միութիւնը (Ա.Մ.Օ.Ա.)։*

*Կէս աւարտականներուն հասան Պրիւսէլի «Ախթամար»ը որ 0 - 1 պարտուեցաւ Պրիւսէլի միւս՝ «Ղարաբաղ» խումբէն եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը որ 0 - 2 պարտուեցաւ տրամաբանականօրէն Ա.Մ.Օ.Ա.-էն որ օժտուած էր արհեստավարժ եւ ոչ հայ հինգ մարզիկներով։*

*Աւարտական խաղին Ա.Մ.Օ.Ա. եւ «Ղարաբաղ» վճռորոշ արդիւնքի չկրցան յանգիլ եւ 0 - 0 արդիւնքէն ետք ի վերջոյ բաժակին տիրացաւ «Ղարաբաղ» շնորհիւ փէնալթիներու առաւելութեան։*

*Իրիկուան, Իսի - լէ - Մուլինոյի մէջ, մասնակցութեամբ Մարթէն Եորկանցի եւ իր նուագախումբին, տեղի կ'ունենար երեկոյթ մը որու վերջաւորութեան կը բաշխուէին բաժակները։*

*Դասաւորումը հետեւեալ պատկերը կը պարզէ։ -*

*1.- Ղարաբաղ (Պրիւսէլ), 2.- Ա.Մ.Օ.Ա., 3.- ՀՄԸՄ-Ֆրանս եւ Ախթամար (Պրիւսէլ), 5.- Ա.Մ.Օ.Ա.(2) եւ «Շնորհէ Գալուստեան» (Մարսէյլ), 7.- Ախթամար (Ռէօլն) եւ Երեւան (Հոլանտա), 9.- Էֆ.Սը Ա.Ի.Ա.Կ.Ս (Արնուվիլ) եւ Ախթամար(2) (Պրիւսէլ), 11.- Հ.Մ.Մ.-Ֆրանս եւ Սահակեան (Պրիւսէլ), 13.- Էֆ.Սէ.Արմենիա (Պրէմէն) եւ Երեւան (2) (Հոլանտա)։*

*Նշենք որ ֆեր-փլէ-ի բաժակը, իրաւարարներուն իսկ միաձնական որոշումով, յանձնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ներկայացուցչական խումբին։*

*Հայ երիտասարդները քով քովի բերելու առումով դրական նախաձեռնութիւն մըն էր հակառակ իր կարգ մը թերութիւններուն։ Հարկ է նշել նաեւ որ կարգ մը պատասխանատուներ եւ մարզիկներ պէտք է ցոյց տան առաւել կարպապահութիւն։*

ՇԱՆԹ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*ՄԱՐՍԷՅԼ - ՊՈՒՖ - ՊԷԼ - ԷՒ*

*Պ. Վարդեվառ Ղամպարեան,*

*Տէր եւ Տիկին Խոսրով Յոզեան, զաւակներն ու թոռները իրենց խորին չնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, ծաղիկով կամ վոխան ծաղիկի նուէրներով մասնակից եղան իրենց սուգին*

*ՏԻԿԻՆ ԱԶՆԻՒ ՂԱՄՊԱՐԵԱՆԻ*

(Ծնեալ՝ Խոզեան)

*մահուան առթիւ։*

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ*

*ԿԱՊՈՑՏ ԽՍԱՅի Պօմոնի Նայիլի մասնաճիւղի վարչութիւնը, ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Մայիս 29, ժամը 15-ին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ։*

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGISE ARMENIENNE
DE CHAVILLE

vous invite

au *CONCERT*
*de la CHORALE*

**AKN**

(Direction Aram KEROVPYAN)

*«Chants liturgiques arméniens»*

Le Samedi 29 mai à 20 heures 45

EGLISE STE BERNADETTE
3, Pavé de Meudon — 92370 CHAVILLE

*— Participation aux frais —*

Հ.Բ.Ը.Մ.

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն*

## *Թատերական գերեկոյթ*

*ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 5, ժամը 17-ին*

*Մասնակցութեամբ՝*
*Մխոբեայ Վարժարանի աշակերտներու*
*եւ*
*Հ.Բ.Ը.Մ.-ի թատերական խումբի*
*Մուտքը 30 ֆրանք։*

*
**

*ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 12, ժամը 15-ին*

*Հ.Բ.Ը.Մ.-ի Մխոբեայ Վարժարանի*

## Հանդէս

*- ԵՐԳ*
*- ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ*
*- ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ*

*Մուտքը ազատ է։*

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, rue de Courcelles — Paris 17e
*— Métro: Courcelles —*
Tél. : 01. 42. 27. 12. 26

## Ի ՅԻՇԱՏԱԿ

*Տէր եւ Տիկին Վահէ Խոզեեան Մելիէ Զալոյեանի յիշատակին 200 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ին։*

A l'occasion de la
Coupe d'Europe
des Nations
*EURO* **2000**
**Arménie - France**
**Le 8 Septembre 1999**

**Voyage spécial**
**en ARMENIE**

**à Partir de 3980 F**

(comprenant l'avion+hôtel+tranferts
+excursion+billet d'entrée au stade)

**Pour tous renseignements :**

**SABERATOURS:**
**19, rue Saint-Roch — 75001 PARIS**
**Téléphone : 01. 42. 96. 10. 10.**

**Imprimé sur les Presses**
**du Journal «HARATCH»**
**83, rue d'Hauteville, 75010 Paris**
**SIRET : 571 027 317 000 15**
**Commission Paritaire : N° 55935**

## Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Ուրբաթ, Մայիս 28
Հայ պետականութեան՝
Հայաստանի Առաջին Հանրապետութեան
(1918 Մայիս 28-ին)
Հոչակման 81-րդ տարեդարձ

*Այս առթիւ, Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 18-ին, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուի, որու ատարին Հանրապետական Մարթանք կ'ըլլայ Հայաստանի Հանրապետութեան հաստատունութեան եւ բարգաւաճման համար։*

## *Մայրերու Օր*

*Մարսէյլի Կաթոլիկ Առաջին Սօսէ Մայրիկ մասնաճիւղի կարմակերպութեամբ Նարթի, Յունիս 5-ին, ժամը 15-ին, Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ «Լուռն Շաբթի» սրահին մէջ։*

*Կը բանախօսէ՝*
*ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴ. ՅՈՎՆԱՆԵԱՆ*

*Հիւրասիրութիւն, զեղարուեստական յայտագիր։*

**MUSIQUE ARMENIENNE**
sur
**FRANCE CULTURE**
Paris 93.5 Lyon 94.1 Marseille 99.0
**Dimanche 30 Mai de 8h à 8h30**
Extraits de l'**Oratorio** de
**GARBIS APRIKIAN**
**«La Naissance de David de Sassoun»**
dans l'émission de G. Stephanesco
«Foi et Tradition»

A L'OCCASION DES 120 ANS DE L'ECOLE TEBROTZASSERE

## «L'ARMENIE AU RAINCY»

PROGRAMME

**Vendredi 28 Mai, Samedi 29 Mai, Dimanche 30 Mai**

*Durant ces trois jours :*

- Exposition de peintres et sculpteurs d'origine arménienne : Asilva, G. Ayvayan, A. Berlian, J. Kazandjian, K. Kazan, C. Madoyan, M. Matéossian, K. Norikian, R. Sarkissian.
  — Galerie «Weider»; 31, avenue de la Résistance.
- Exposition : «Voyage à travers l'Arménie» et «Rétrospective de l'Ecole Tebrotzassère».
  — Centre Thierry Le Luron; 9, boulevard du Midi.

**Commissaire des expositions : Khatchik Kazan**

**SAMEDI 29 MAI**

- Dédicace d'ouvrages par leurs auteurs : A. Agoudjian, B. Bricout-Kasparian, W. Buss, J.-J. Varoujan.
  — Librairie «Notre Dame»; 76, avenue de la Résistance; de 15h à 17h;
  — Librairie «L'Ecritoire»; 29, avenue de la Résistance; de 15h à 17h.
- Défilé folklorique: Troupe «ASTRIG» accompagnée de l'ensemble musical «ARARAT» d'Arménie; avenue de la Résistance; de 17h à 18h.
- SOIREE DE GALA
  Chorale TEBROTZASSERE et Ballets Arméniens «NAVASART»;
  — Centre Culturel Thierry-Le-Luron; à 20 heures 30.
  P.A.F. : Adultes 100 F / Enfants 60 F.

**DIMANCHE 30 MAI**

- Vente de produits arméniens sur le marché de l'avenue de la Résistance: **«l'Arménie au Raincy».**
- Déjeuner traditionnel arménien avec ambiance musicale au Théâtre de l'Espace du Jardin Anglais; à 13h;
  — 65, allée du Jardin Anglais et de Finchley;
  P.A.F. : Adultes 150 F / Enfants 100 F.

*Renseignements & réservations :* Ecole TEBROTZASSERE : 01 43 81 01 72.

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

# Séjour à l'étranger

**ETATS-UNIS : Côte Est (camp Haïastan)**

- Du 11 juillet au 25 juillet
  Prix de la pension : 795 USD + voyage + argent de poche
- Du 25 juillet au 8 août
  Prix de la pension : 795 USD + voyage + argent de poche
- Du 8 août au 22 août
  Prix de la pension : 675 USD + voyage + argent de poche

**ETATS-UNIS : Côte Ouest (camp AYF)**

- Du 1er août au 15 août
  Prix de la pension : 600 USD + voyage + argent de poche

**Ces séjours s'adressent aux adolescents de 11 à 15 ans.**

Pour toute inscription, s'adresser au Conseil d'Administration au :

**01. 48. 24. 46. 57.**

**Date limite : 10 juin**

**ATTENTION : Places limitées.**

ՈՒՐԲԱԹ
ՄԱՅԻՍ 28
VENDREDI
28 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

7ԴՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·649 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 74e ANNEE — N° 19.649

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 26 / 27)

### Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ՝ «ԿԱՅ ՄԷԿ ԳԵՐԻՇՆԴԻՐ. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ»

*Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 26-ին ներքին Գործերու եւ Ապահովութեան նախարար Ս. Սարգսեանի, գլխաւոր դատախազ Ա. Յովսէփեանի, Արդարադատութեան, Ուժանիւթի նախարարներուն, Ընտրական յանձնախումբի նախագահին, ներքին Գործերու եւ Ապահովութեան փոխ-նախարարներուն, մարզային վարչութեան պետերուն եւ մարզային դատախազներուն հետ խորհրդակցական հանդիպում մը ունեցած է յառաջիկայ ընտրութեան մասին: Դիմելով անոնց նախադասը ըսած է՝ «դուք էք պետական այն մարմինները, որոնց միջոցով ես պարտաւոր եմ իրականացնել այդ գործունէութիւնը»: Ան ընդարձակ եւ ընդհանուր տեղեկատուութիւն տրամադրած է, նկատի առնելով որ նախագահական այս ընտրութիւնը կարեւոր է, քանի որ առաջին անգամ ըլլալով ընտրութեան մասնակցող կողմերուն թիւը կը գերազանցէ 30-ը եւ ընդհանուր քուէարկութեան ցանկերուն վրայ յաւելուածներ պիտի կազմուին:*

*Ռ. Քոչարեան հրահանգած է խստօրէն յարգել օրէնքը, որպէսզի ընտրութիւնը ըլլայ օրինական, օրինակելի: «Մօտեցումը միանշանակ է. օրէնքը եւ կարգը խախտողները չեն ներուելու եւ կը պատժուեն օրէնքի ամենայն խստութեամբ: Դատապարտեալի նկատմամբ որեւէ ճնշում ուղղակի յանցաւորում է: Մարդիկ պէտք է հասկանան որ եթէ փորձեն ինչ – որ ճանապարհով կեղծել, ապա գործը մտնելու է դատարան եւ ստանալու իր արդարացի լուծումը» ըսած է ան: Աւելցուցած է որ ամէն մէկ դէպք պէտք է քննուի եւ «որեւէ արգելք, որեւէ անձեռնմխելի անձ չկայ եւ չպէտք է լինի: Կայ միայն մէկ գերխնդիր, այն է՝ կազմակերպել օրինական ընտրութիւններ եւ մենք բոլորս պատասխանատու ենք այդ խնդրի իրականացման համար»:*

*Նախագահը նշած է նաեւ թէ փորձած է ուսումնասիրել նախորդ ընտրութիւններու ընթացքին տեղի ունեցած դէպքերը եւ թէ նման պարագաներու պատասխանատու են ցանցի ղեկավարները, առաջարկած է կարելի բոլոր կէտերուն վրայ յատուկ հսկողութիւն սահմանել: Իր համոզումով, սովորաբար կեղծող ուժը կ'ըլլան իխանութիւնները, այսօր անոնք նման քայլերու մխտում չունին: Իսկ եթէ որեւէ պաշտօնեայ այդ ձեւի բան փորձէ, ամենայն խստութեամբ կը պատժուի:*

***

### ՁՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒ ԿՈՉԸ

*Ընտրութեան չմասնակցիլ որոշած քաղաքական ուժերը Մայիս 26-ին Մատենադարանի հրապարակին վրայ հանրահաւաքով մը բացարձակ են իրենց կեցուածքը: «ԻԱ. դար»ու նախագահ Դ. Շահնազարեան, Վ. Խաչատուրեան եւ ուրիշ խօսք առնողներ խստիւ քննադատած են իշխանութեան ընթացքը եւ կոչ ուղղած պայքարելու, նախագահին եւ իշխանութեան հրաժարականը ապահովելու համար: Կազմակերպիչները հանրահաւաքը աւարտած են մասնակիցներու թելադրելով որ Մայիս 30-ին երթան քուէարկելու, սակայն քուէարկեն բոլորին դէմ:*

***

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեան «Արմէնփրէս»ին ալ ղրկուած յայտարարութեամբ մը պարզած է զինք ընտրութիւններուն մասնակցելու մղող պատճառները, նաեւ կոչ ըրած քուէարկելու եւ խախտումներու տեղի չտալու: Բանակէն եւ իր զինակիցներէն ալ խնդրած է ընտրութիւններու ժամանակ իրեն*

ԿՈՍՈՎՕ

## ՄԻԼՈՍԵՒԻՉ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ

### ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՈՂՋՈՒՆԵՑԻՆ ՌՈՒԿՈՎԱՆ

*Լա Հէյի Միջազգային Պատժական Դատարանը ձերբակալման հրամանագիր մը հրապարակեց Սլոպոտան Միլոսեւիչի դէմ, բայց, բուն մեղադրանքը դեռ չէր ճշդուած Մայիս 27-ին: Այսինքն, յայտնի չէր թէ Միլոսեւիչ պիտի հետապնդուի մարդկութեան դէմ ոճիրի՞, պատերազմական ոճիրի թէ ցեղասպանութեան համար: Ամէն պարագայի մէջ, մեղադրանքը կը վերաբերի Քոսովոյի եւ ոչ Պոսնիա – Հերցեկովինի: Լուիզ Արբուր, Միջազգային դատարանին դատախազը մամուլի ասուլիսով մը պիտի տար հարկ եղած մանրամասնութիւնները:*

*Ձերբակալման նման հրամանագիր մը կը նշանակէ որ Միլոսեւիչ երկրէն չի կրնար դուրս ելլել, քանի որեւէ տեղ կրնայ ձերբակալուիլ: Աւելին, արեւմուտքը այլեւս չի կրնար իրեն հետ բանակցութեան նստիլ:*

*Պատերազմին սկիզբէն ի վեր, առաջին անգամ ըլլալով, ՄԱԿ-ը տեղեկագիր մը հրապարակած է սեռային հարաբերական բռնարարքումներու մասին: Հարցին մասնագէտ հոլերոյժ մը՝ Տոմինիք Սերանօ Ֆրթաման տասը օր քննութիւն կատարած է տեղւոյն վրայ եւ 35 կիներէ առած վկայութիւնները ծանրակշիռ են սերպ ուժերուն համար:*

***

*Ռուկովա, որ Իտալիայէն եկած որոշեց Գերմանիա հաստատուիլ (հոն է ալպանական ամէնէն բազմամարդ գաղութը), Մայիս 26-ին այցելութիւն մը կատարած է Մակեդոնիա եւ հանդիպած Պրազատ եւ Սթենքովաչ ապաստան գտած քոսովոյի գաղթականներու: Ընդունուած է մեծ հանդիսաւորութեամբ, ինչ որ փաստն է իր ժողովրդականութեան, մինչ կ'ըսուէր որ Միլոսեւիչի հետ տեսնուելէն ի վեր Քոսովոյի «ընարուած» այս նախագահը պատճառ մը կը նկատուի: Կը թուի որ միայն ՈՒ–ՉԻ–ՔԱ–ն է որ նման դիրք բռնած է եւ ժողովուրդը կը նախընտրէ խաղադարձը այս պարագրլուխը: Ինք, չուզեր բանակցիլ նաեւ ՈՒ–ՉԻ–ՔԱ–ին հետ, ոչ ալ հաշտութեան փորձ ընել անոր պետին՝ Թաչիի հետ, որ գլուխ գլխի տեսակցութիւն մը ուզած էր անցեալ շաբթու: Ռուկովա ոչ Արեւմտեանները զօրակցութիւնը կը վայելէ չափազանց բանակցութիւն վարելու անկախատաչտ չարժումին հետ:*

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

*ՇԻՐԱՔ ԵՒ ԺՈՒՓԿԻՆ իրարու դէմ բուռն արտայայտութիւններ ունեցած են Մայիս 26-ի Նախարարաց Խորհուրդի նիստին, ինչ որ նախապէս մը «չատ զուարճալի տեսարան» որակած է: Փաղովի վերջաւորութեան է որ Շիրաք անդրադարձած է Պետութեան գործելակերպի խախտումներուն, մեքենագրուած թղթիկ մը կարդալով: Ան ըսած է Գորսիքայի հարցին կապակցութեամբ. – «Այս ցաւոտ էջին եաք եւ պետութեան գործելակերպի ծանրակշիռ խախտումներուն բոլոր հետեւանքները քաղելու մտահոգութեամբ, պարտինք պատասխանել գորսիքացի մեր հայրենակիցներուն բաղձանքներուն»: Այս «խախտում» որակումն է զոր Ժոսփէն չէ ընդունած եւ անմիջապէս հակադրած, ինչ որ անսովոր է, որովհետեւ, նիստի աւարտին երբ նախագահը արտայայտուի, ոչ ոք այլեւս պէտք է խօսք առնէ: Կ'ըսուի թէ Ժոսփէն, վերջերս չատ յոյնած ու ջղայնացած է գորսիքական հարցով եւ չէ կրցած ինքզինք զսպել ու ըսած. – «Պարոն նախագահ, կը տեսնեմ որ երրորդ անգամ ըլլալով, հրապարակաւ, կ'անդրադառնաք Գորսիքայի խախտումներու: Ճիշդ է խախտումներ եղան, բայց, ի տարբերութիւն անցեալի դէպքերուն, ոչ վաւերացուեցաւ, ոչ ծածուկ պահուեցաւ: Դատապարտուեցաւ, պատժուեցաւ եւ սրբագրուեցաւ»:*

*Ա. ԼՕՃԱԼԱՆի դատը կրնայ յետաձգուիլ ըստ Թուրքիոյ վարչապետութեան մօտիկ աղբիւրներու: Պատասխանելով լրագրողներու Պ. Էճեվիթ ըսած է որ յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին կառավարութեան կազմը կ'որոշուի ու առաջին գործերէն մէկը պիտի ըլլայ Պետութեան ապահովութեան ատեաններուն կառոյցը փոփոխութեան ենթարկել, սահմանադրական կամ օրէնքի բանաձեւով մը: Վարչապետը յայտնած է նաեւ թէ Լօճալանի պաշտպան փաստաբանները դատին յետաձգումը խնդրած են, պատճառաբանելով որ հարկաւոր ժամանակը չեն ունեցած պաշտպանողականը պատրաստելու: Անգարա նոյն ատեն Սուրիոյ դիմած է, ձեռք ձգելու համար ՓՔՔ–ի դիւանները: Վերջերս մահուան դատապարտուած Շ. Սաքըքի խոստովանութիւններէն յայտնի եղած է որ այդ դիւանները կարեւոր տեղեկութիւններ կը պարունակեն կազմակերպութեան ներքին եւ արտասահմանեան կապերուն, նիւթական աղբիւրներուն մասին:*

*ՀԱՄԱՁՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Ազգային Խորհուրդի նիստին (Մայիս 26), Ռ. Հիւ դժուարութիւններ ունեցաւ համոզելու համար իր ընկերները, որ Ջանք թափեն եւրոպական ընտրութիւններու ընտրապայքարին մէջ, ի նպաստ համայնավար ցանկին: Շատեր չեն ընդունիր որ այդ ցանկը ոչ – համայնավարներ ալ ունենայ, որոնք նոյն տեսակէտները չեն բաժներ: Կուսակցութեան ուղղափառներուն համար այդ ցանկին մէջ ամէն բան կայ, Եւրոսոսալիոյ ամբաստածութեանց կոմմունակիցներ եւ հակառակորդներ, ինչ որ անընդունելի է:*

*ՖՐԱՆՍԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ որոշեց պայքարիլ ալքոլի եւ ծխախոտի դէմ, դանդաղ դասելով թմրեցուցիչներու կարգին: Հակածխախոտ ծրագիրը ներկայացուց Առողջապահութեան ենթանախարար Պ. Քուչնէր: Տարակարծութիւններ կան սակայն նախարարական շրջանակներու մէջ եւ բոլորը համոզուած չեն; Բողոքներ կան նաեւ խոհարարներու, մսառնապետներու, գարեջրագործներու մօտ որոնց համար անհնդունելի է ալքոլը դասել թմրեցուցիչներու կարգին, երկրի մը մէջ ուր գինին իր «մշակութային կոչումն» ունի: Ինչ կը վերաբերի ծխախոտին, Քուչնէր յայտարարութեամբ յայտարարած է որ երեք նախարար համոզած է որ դադրին ծխելէ: Անոնք են. – Տանիէլ Վայան (Մորտրդարանի հետ կապերու նախարար), Մարի – Ժորժ Պիւֆէ (Մարզական) եւ Մարիլիզ Լըպրանչիւ՝ (Ընթանախարար փոքր եւ միջին ձեռնարկութիւններու): Այս պայքարին համար հաստատ կարգ մը միջոցներ ձրի պիտի ըլլան:*

*ԼՐԱ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ հրահանգած են, որ քանդուի մատուռը որ կառուցուած էր երկու չաբաթ առաջ կաթողիկէ պինտրեալ Սվեթոնի կողմէ Աուշվիցի հողին վրայ, արդելափակման կայանին մօտ: Կը թուի որ Ցովհ. Պօղոս Բ.ի այցելութենէն առաջ Վարչատ կ'ուզէ վերջ տալ Աուշվիցի խաչերու պատմութեան, որ պատակտում ստեղծեց կաթողիկէներու միջեւ:*

*ՍԷն – ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳի մէջ, վիրաւորուած է Նիկոլայ Աուլով, 47 տարեկան, ռճրափորձի մը ընթացքին, երբ կը պատրաստուէր իր կառքը մտնել իր զրաստեակը երթալու համար: Ինք թիւ 2-ն էր կազմակերպուած ոճիրի դէմ պայքար տանող բաժանմունքին: Կեանքը վտանգուած չէ:*

*ՀՆԴԿԱՍՏԱՆ ամրակոծած է Գաչմիրի «Թալիբանները», ինչ որ պատճառ եղած է մթնոլորտի սուր լարուածութեան Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ, որոնք հիւլէական նոր երկու պետութիւններն են Ասիոյ: Հնդկաստան կը ամրակոծէ Գաչմիրի Հիմալայեան շրջանի մահմետական մարտուհիները եւ յայտնած է որ գործողութիւններու պիտի չարունակուին եւ ապստամբած Փաքիստանի որ չփորձէ միջամտել:*

*ԱՐՖ.–ի նախկին նախագահին՝ Գրոզմարիի դատավարութիւնը, ինչպէս կը սպասուէր, յետաձգուեցաւ Մայիս 31-ին, ենթակային անհանգստութեան պատճառաւ: Միւտա կը խնամուի Գոչէն հիւանդասենեակը:*

## ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԹԷՆԻՍ

Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԱՂԱՂ ԵՐԹԸ

*Թէնիսի «Ռոլան Կառոս» Ֆրանսական մրցաշարքին Հայաստանի ներկայացուցիչ Սարգիս Սարգսեան Զորեքշաբթի, Մայիս 26-ին ալ ի հաշիւ Բ. շրջանի մրցումներուն կը խաղար Հարաւի Ափրիկէէն Ֆէրէյրայի դէմ որու յաղթած է 3 – 1 արդիւնքով (6/7, 6/2, 6/2, 7/6): Ցաջորդ մրցումը՝ Մայիս 28-ին: Ա. Ազատ ալ յաջողեցաւ, թէեւ բաւական դժուարութեամբ, պարտութեան մատնել Ֆրանսայի Գլէմանը 3–2 արդիւնքով եւ ինք եւս որակուեցաւ Գ. շրջանին համար:*

***

### ԿՌՓԱՄԱՐՏ

*Հայաստանէն երկու կռիւամարտիկներ մասնակցեցան Կրավըլինի մէջ, Ֆրանսայի միջազգային հանդիպումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ չաբթու: Սիրողներու այս հանդիպումներուն, Բագրատ Օհանեան՝ կրտսերներու համաշխարհային ախոյեան (Նոյեմբերին, Պուէնոս–Այրէս) աւարտականին պարտուեցաւ (Մայիս 16) իտալացի Փաօլօ Վիտոզէ (+91 քկ· դասակարգ) եւ արժանացաւ պրոնզէ մետալի: Գիւմրեցի այս մարզիկը Հայաստանի ախոյեան դարձաւ Ապրիլին: Երկրորդ մասնակցողն էր Արդիտ Սիմոնեան որ նաեւ արծաթէ մետալի արժանացաւ, աւարտականին պարտուելէ ետք դուպացի Վիլմար Միրանտայէ (57 քկ·): Թաղ Հայրապետեանի ջանքերով է որ Հայաստանցի այս երկու կռիւամարտիկները, ինչպէս նաեւ անոնց մարզիչը եւ իրաւարար մը հրաւիրուած էին Կրավըլին (Փա–տը–Գալէ):*

# «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՐ ՉԻ ՄՈՌՑՈՒԻ»

Առաջին թիւը այսպէս խորագրուած յօդուածաշարք մը սկսած է հրատարակել քրտական օրաթերթը «Էօզկիւր Փոլիթիֆա» (Մայիս 19). քիւրտ մտաւորական Ա.յարն Տէրէ այդ չարքով իր տպաւորութիւնները կուտայ Հայաստանէն, յատկապէս քրտական կեանքէն: Հոն գացած է որպէս անդամ «Ընդդէմ ցեղասպանութեան» միութեան որ հիմնուած է տարի մը առաջ, Ֆրանքֆուրթի մէջ, հայ, քիւրտ, թուրք, ասորի, լազ նախաձեռնողներու կողմէ: Անոնք ատորագրութիւն հաւաքելու արշաւի մըն ալ սկսած են ու շուրջ 10 հազար ատորագրութիւն հաւաքած, պահանջելու համար որ Թուրքիա ճանչնայ Հայերու ցեղասպանութիւնը:

Գրութիւնը դիմաւորած կը չեշտէ ժողովուրդներու եղբայրական, հաշտ համակեցութիւնը որուն օրինակը կը տեսնէ Հայաստան ապրող քիւրտ փոքրամասնութեան առօրեային մէջ: Անոնք կը վայելեն մշակութային, տպագրական ամէն ազատութիւն, հակադրուելով Թուրքիոյ պատկերին:

Այս չունչով գրուած էջերուն մէջ հետաքրքրութիւն արթնցնող հատուած մըն է այն պարբերութիւնը որ նիւթ ունի Ա-րարատը. ան հրաշափառ իր ներկայութեամբ կ'ընկերանայ այցելուներու առօրեային բոլոր պահերուն, մեծապէս տպաւորելով: Ա. Տէրէ կը գրէ. «Ամէն անգամ որ փողոց կ'ելլէինք, կը տեսնէինք Արարատը: Ի՞նչպէս պատմեմ հիմա այդ հրաշկայական, փառաւոր լերան հազարամեայ աւանդավէպն ու բոլոր այն դիմադրութիւնները, ապրած սէրերը որոնց վկան եղած է դարերու ընթացքին: Արարատը կրկին ու կրկին ծնող մայր է: Ամառ – ձմեռ ձիւնոտ գագաթը ամպած է, ինչպէս հարսներու թագն ու պսակը: Ուր որ նայիս, դիմացդ է ան: Ուրուական մը կամ սէր մըն է թերեւս: Հիմա, իրենց հազարամեայ աւանդութիւններով անոր ստորոտին Էրտական գիւղեր կան: Թշնամիին ասպարէզ կարդալու պէս, թափառաշրջիկներ կը հանգրուանեն անոր անծայր տափաստաններուն վրայ: Ո՛չ մէկ ժողովուրդի թշնամիները այսքան կատաղի եղան. ո՛չ մէկ ժողովուրդ այսքան աստիճան բզկտուեցաւ: Ոչ մէկ ժողովուրդ չորս կողմէն այսքան յարձակումի ենթարկուեցաւ: Ոչ մէկ ժողովուրդ այսքա՛ն երկարատեւ պատերազմներ ապրեցաւ: Ո՛վ գիտէ, թերեւս ալ մեր գոյութեան պատճառն են այս լեռները: Եթէ այդքան հզօր ձգողականութիւն մը կայ մեր եւ լեռներուն միջեւ, ատոր գաղտնիքը անսահման սէր մըն է»:

*Պարբերութեան արթնցուցած հետաքրքրութիւնը Արարատի փառաբանութեան թափը չէ անշուշտ, այլ՝ հոն նշուած ժողովուրդին անհուն ձգտումը եղբայրութեան: Սակայն, այս փոքր մանրամասնութիւնը հաւանօրէն պէտք է պարզաբանել «արկած» մը նկատել ու տարուիլ՝ Երեւանի դովերգութեամբ, հայեւքիւրտ ժողովուրդներուն անկեղծ եղբայրութեան չեշտումով տիրապետուած պատումէն:*

Գրելէ ետք թէ Հայաստանի բնակիչ շուրջ 60 հազար Քիւրտեր 22 քրտական դիւղ, դպրոցներ, համալսարանի քրտական բաժանմունք, Ա. Տէրէ առիթ կ'ունենայ հակադրելու Թուրքիոյ, նաեւ Աղբրբէյճանի կացութեան, լսելու համար «Հայաստանի մէջ տեսանիք ժողովուրդներու բարեկամութիւնը: Հին արմատներու, մշակոյթի տէր նման ժողովուրդի մը հետ բարեկամանալ պէտք է»:

Շարքին Բ. էջը խորագրուած «Անդորր ոստանը՝ Երեւան»: Հայոց պատմութեան դիւսւոր հանգրուաններուն նշումէն ետք – քրիստոնէութիւն, դիւերու դիւտ, եւայլն – կը պատմուին Մատենադարանտրուած այցը, Երեւանի Քրտական տան մէջ կատարուած հանդիպումը: Կայ հատուած տեսակցութիւն մըն ալ Վոլօ Զեթոյէի հետ որ քիւրտ լրագրող մըն է եւ Հայաստանի փոքրամասնութիւններու նախարարը: Լսելէ ետք թէ մեծապոյն վախարար անկախ Քիւրտիստանի մը հիմնուելու տեսնել է, պատասխանելով Հայաստանի փոքրամասնութիւններուն մասին հարցումի մը, կը բացատրէ. «Եռաւոր ազգի պատկանող փոքրամասնութիւններ կան, բայց մեծ մասին թիւը հազար հոգիէն ալ նուազ է: Անկէ աւելի ստուար, մինչեւ տասնեակ հազարաւոր թիւերու հասնող փոքրամասնութիւններ են Քիւրտերը, Ասորիները, Ռուսերը, Յոյները, Վրացիները, Գերմանացիները, Հրեաները, Դաշնակցականները, եւայլն»...:

«Ընդդէմ ցեղասպանութեան» միութեան անդամներուն Երեւան այցին առթիւ, Ապրիլ 24 Թուականիր, երեք էջնոց «Նամակ հայ ժողովուրդին» մըն ալ հրապարակուած է որ բաժնուած է Միջեռնակաբերդ այցելողներու, եւայլն: Ցեղասպանութեան նման մարդկային իրականութեան ծանրագոյն եղելութիւն մը չմոռնալու, անոր դէմ դիրք դրաւելու, անոր ճանաչումը ապահովելու նպատակներուն տէր խմբագրատումի մը համար քիչ մը հիասթափող մակարդակով մը գրի առնուած է ան: Ճիշդ է որ թարգմանութեան համար դրծածուած հայերէնին այլանդակ ընոյթին ալ դեր ունի ատոր մէջ. լրատուածին մասին գաղափար մը ունենալու համար կը բաւէ կարդալ առաջին նախադասութիւնը. «84 տարի յետոյ, Ձեր շարբերի կողքին լինելու գալարուած ցաւի համը կ'ապրինք». ու ինչպէս այս տողը, ամբողջ երեք էջերն ալ լեզուական ներհայկական Բաբելոն մը կը պարզեն, արեւելահայերէն – արեւմտահայերէնի, մեսրոպեան – խորհրդային ուղղագրութիւններու եւ սխալներով հարուստ անկարելի համակեցութեամբ մը: Ինչ կը վերաբերի պարունակին, հաղիւ թէ կարելի ըլլայ աւելի յաջող նկատել: Նամակագիրները, օրինակ՝ կ'ըսեն թէ իրենց գլխաւոր նպատակն է «մեր մէջ բաժնուած այս աշխարհագրական տարածքին վրայ Օսմանեան – Թուրքական գերիշխանութեան կողմից տեղի ունեցելիք ցեղասպանութիւններին արգելք լինել»...: Հակառակ գրեթէ անհասկնալի վլլալու ատիճան անվարժ, աղճատ հայերէնին, նամակով լսուածը այն է որ 1915–ի կոտորածներէն փրկուելու համար Թրքական լուծէն տառապած ժողովուրդները միանական ըլլալէ, գործակցելէ պատ ընելիք չունին: Գրութիւնը կ'աւարտի հայ ժողովուրդէն ներողութեան խնդրանքով:

«Էօզկիւր փոլիթիֆա»ի յօդուածաշարքին երրորդ եւ վերջին էջը խորագրուած է «Երեւանի ձմեռնամիւռը»: Հոն տըրուած է այց մը. նիւթ կ'ընէ յատկապէս քրտական հաղորդումները:

ԱՐՓԻ ԹՈՒԹՈՑԵԱՆ

# ՄԱՐՄԱՐԱ

## ԱՅԴ ՍՓԱՆՁԵԼԻ ԼԵԶՈՒԻՆ

Այսօրուան մեր սիւնակին մէջ ահաւասիկ երեք պատմութիւններ: Երեքն ալ իրական:

***

Ամոգիկ երջահռհռալի Հարիւրամեակի Սիրոյ Սեզանին չուրջ բոլորուած էինք: Մեզի սեղանակից ունէինք Հարիւրամեակի կազմակերպիչ Յանձնախումբի անդամներ ու անոնց բարեկամուհիները: Այդ բարեկամուհիներէն մէկուն աղջնակն ալ միջոց մը միացաւ մեզի: Սիրուն, ուշիմ նայուածքներով աղջնակ մըն էր: Մեր հարցումին պատասխանելով ըսաւ որ ամառած էր Օրթագիւղի վարժարանը:

Մինչեւ հոս ամէն ինչ շատ բնական էր: Բայց անկէ վերջ լսեցինք բան մը որ այնքան ալ բնական չէր: Աղջնակին մայրը մէջառնեց ու հպարտօրէն լուացարեց որ իր աղջիկը երկու ամառ վարժարաններու մէջ քննութիւնը չհաած էր, բայց չէր ուզած ամառ վարժարան երթալ: Ծնողքէն թախանձագին խնդրած էր որ գինքը ղրկեն հայկական վարժարան մը:

– Չիս ամառնե՞ր մէջ ձգել կ'ուզէք: Ես հայկական վարժարան պիտի երթամ, ըսած էր:

Եւ ան հիմա ահաւասիկ, անդին հրելով առիթ մը որ ուրիշներու կոզմէ այնքան թանկագին կը նկատուէր, կը չարունակէր մնալ հայկական վարժարանի մը աշակերտը:

Այս իրական պատմութիւնը ուրախութեամբ լեցուց մեր սիրտը: Եւ մտածեցինք որ այսօրէ միայն աղջնակը չէր որ գովելի էր, գովելի էր նաեւ ծնողքը: Որովհետեւ ծնողքը «հպարտութեան» բաժին մը կը հանէր այս եղելութենէն: Եթէ ուրիշ ծնողք մը ըլլար, պիտի ըսէր.

– Մեր այս խելացի աղջիկը (այսինքն մեր այս ապուշ աղջիկը) գնաց եւ Հայկական վարժարանը ընտրեց, մինչ կրնար ուսանիլ այնքան լաւ երկու օտար վարժարաններու մէջ:

Բայց եթէ այդ աղջնակը այդպիսի ծնողքի մը զաւակը ըլլար, ան արդէն վաղուց վազելով գացած պիտի ըլլար դէպի օտար վարժարաններէն մէկը, նոյնիսկ եթէ կարելի ըլլար, դէպի օտար վարժարաններուն ... երկո՛ւքը միաժամանակ:

Հարիւր ընտանիքէ քանի՞ ընտանիքի կեանքէն ներս այսօր կրնանք գտնել մեր վարժարաններուն նկատմամբ այսպիսի սէր ու հաւատարմութիւն մը:

***

Ամրագրատան մէջ արտառամանէն հիւր մը ունէինք: Մշակոյթի մարդ մը, որ քանի մը օրէ ի վեր քաղաքս կը զբօսնուէր: Այդ քանի մը օրերու ընթացքին ան հետեւած էր մեր հրատարակութիւններուն եւ կը բաժնէր լեզուական ու հայախօսութեան մասին մեր մտահոգութիւնները: Բաւական երկար խօսեցանք Սփիւռքի մէջ Արեւմտահայերէնը պահպանելու դժուարութեան ու հրամայականին մասին: Ըսինք որ Արեւմտեան Սփիւռքին լեզուն Արեւմտահայերէնն է: Սփիւռքի հայ մամուլն ու հայ դպրոցն է որ պիտի պահպանէ ու պիտի ծաղկեցնէ արեւմտահայերէնը, որ այնքան վայլուն մակարդակի մը հասած էր դարասկիզբի մեր գրողներուն ու բանաստեղծներուն շնորհիւ: Այսօր սակայն այդ աքանչելի արեւմտահայերէնը ահաւոր նահանջի մէջ է: Քիչեր միայն կը գործածեն զայն: Իսկ Սփիւռքի հայ մամուլը այսօր աւելի քան յիսուն, եօթանասուն տոկոս՝ արեւելահայերէնով լեցուն է, որովհետեւ մինչ մէկ կողմէ կը պակսին արեւմտահայերէնով գրող սփիւռքահայ յօդուածագիրները, մէկ կողմէ ալ Արեւմտեան կողմն այխարհի՝ կը բազմանան Հայաստանէն հեռացած մտքի ու գրչի մարդիկ, որոնք իրենց արեւելահայերէնով կը լեցնեն թերթերու սիւնակները: Ո՞վ պիտի պաշտպանէ արեւմտահայերէնը: Մանաւանդ Սփիւռքահայ ընթերցողը իրենց պիտի ելլէ նոյն թերթը լեցնող երկու բարբառներով, երբ արդէն մէկ հատին հետ դժուար գլուխ կ'ելլէ:

Երբ այս նիւթերը կը ծեծէինք, մեր հիւրը խնդաց ու ըսաւ.

– Ձեզի բան մը պատմեմ: Ես Եւրոպայի մէջ ճանչցայ ընտանիք մը, որուն կինը Պոլսահայ էր, իսկ ամուսինը Պարսկահայ: Անոնց զաւակը հօրը հետ Պարսկահայերու արեւելահայերէնով կը խօսէր, իսկ մօրը հետ պոլսահայերէնով: Պիտի հաւատա՞ք:

Հաւատացինք: Թէեւ քիչ մը դժուար: Հաւատացինք, բայց չկրցանք հակինալ որ պէտք էր լա՞լ, թէ խնդալ այս պատկերին առջեւ:

***

Այս պատմութիւնը այնքան հետաքրքրական թուեցաւ ինծի, որ յաջորդ օր զայն պատմեցի Հայաստանցի ուրիշ հիւրի մը: Մեր հիւրը բնաւ չզարմացաւ:

– Ես ալ ձեզի ուրիշ բան մը պատմեմ, ըսաւ: Օր մը աչքերուս տեսայ որ Հայաստանի երկու տարրեր մարզերէ եկած երկու ընտանիքներու զաւակները կը խաղային իրարու հետ: Բայց անոնց խօսակցակերպն ու բարբառը այնքան տարբեր էր որ չատ անգամ չէին հասկնար իրարու ըսածը եւ իրենց հայրերուն կը հարցնէին թէ միւսը ի՞նչ ըսել ուզեց սա կամ նա նախադասութեան մէջ:

***

Ահաւասիկ երեք պատմութիւններ, որոնք մեզի զգալի մը կուտան թէ ուրտեղէրէ անցնելու դատապարտուած է Հայոց լեզուն: Ասոնց վրայ հատ մըն ալ մե՛նք աւելցնենք մեր կեանքէն.

Կարճ ժամանակ առաջ մենք ալ մեր տան մէջ զետեղեցինք արբանեակային այն սարքը որով պիտի կարենայինք տեսնել Հայաստանի հեռատեսիլը: Տունիննիները մեծ անհամբերութեամբ կը սպասէին որ թէքնիքագէտը աւարտէր իր գործը ու մենք սկսէինք դիտել Հայաստանի հեռատեսիլը: Մարդը գործը վերջացուց, կոխեց կոճակի մը վրայ ու լուսաւոր պատատին վրայ յստակ ու հիանալի գոյներով երեւցաւ Հայաստանի հեռատեսիլին հաղորդումը: Լուրերու խօսնակ մը օրուան լուրերը կը հաղորդէր: Երբ խօսիլ սկսաւ, մեր ինները իրարու նայեցան: Անդրադարձան որ այսուհետեւ պիտի ըլլայինք ունկնդրել Արեւելահայերէնը, որուն դրեթէ բնաւ վարժուած չէինք: Երկու վայրկեան վերջ քանի մը գրուեցան պատատին վրայ: Մեր ինները դարձեալ իրարու նայեցան: Այս անգամ ալ հասկցան որ այսուհետեւ պիտի ստիպուէին կարդալ Հայաստանեան այլանդակ ուղղագրութիւնով, որ մեզի համար այնքան անհարազատ ու խանդարիչ է:

Այդ օր մէկ կողմէ ուրախացանք, մէկ կողմէ սկսանք մտածել: Սկսանք մտածել ու մենք մեզի հարց տալ թէ օր մը արդեօք հեռատեսիլի նոյն պատատին վրայ պիտի կարենայի՞նք լսել նաեւ Դանիել Վարուժանին ու Միսաք Մեծարենցին քանչելի Արեւմտահայերէնը: Եւ մինչեւ որ այդ երազն ալ իրականանար, Սփիւռքահայը արդէն մոռցած պիտի ըլլար այդ աքանչելի լեզուն:

Ռ. Չ.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐ

(ԺԴ)

Հայաստանի Թղթատարութեան վարչութեան վերջին թողարկումը տասնվեց նոր դրոշմաթուղթեր կը պարունակէ: Առանցքի ինը չարքերու կը պատկանին, երկուքը առանձին արժէքներ են, հինգը յուշաթերթի մը (feuillet) մաս կը կազմեն:

Նախապէս գոյութիւն ունեցող չարքերուն մէջ կը գտնուէին Հայաստանի բնութեան նուիրուածները: Ասկէ ետք ասոնց պէտք է աւելցնել երկու նորեր եւս: Այս անգամ ի պատուի են «Ալեքսանոր» (Alexanor) եւ «Կոլոմաւորի» (Rhetero komarovi) թիթեռնիկները, առաջինը 170 դրամի արժողութեամբ, երկրորդը՝ 250-ի: Երկրորդ չարքին մաս կը կազմեն երկու նամականիշեր՝ մէկը հրաքարին (pyrite) եւ միւսը ակաթին (agathe) նուիրուած (արժէքով 170 եւ 250 դրամ):

Բնութեան թեմայով լոյս տեսնող այս երկու նոր չարքերուն կը միանան երկու հատ եւս ապրային տարազներու եւ ասանդութենց վրայ հիմնուած: Անոնք իսկական նորութիւն մը կը կազմեն. այս անգամ նիւթ են Հայաստանի տարբեր ջրջաններու տարազները, ապրպգրական առանդութիւնները ու տօները:

Տարազներու չարքի 250 եւ 170 դրամ արժող երկու նամականիշեր կը ներկայացնեն Վասպուրականի աշխարհի եւ Արարատեան դաշտի առանդական, իսկական եւ արական զգեստները: Իւրաքանչիւր դրոշմանիշի դարաթին փոքրիկ քարտէսով մը կը նշուի տուեալ գաւառին տեղը պատմական Հայաստանի տարածքին վրայ:

Վերջին չարքը որուն երկու արժէքները (170 եւ 250 դրամ) Europa մակագրութիւնը կը կրեն, նուիրուած է «Տրնդէզի» (Տեառնընդառաջ) եւ Համբարձման տօներուն:

«Տուրք Երախտիքի» չարքին նոր արժէքը այս անգամ ռուս մտաւորական՝ Վլերի Բրուսովին յատկացուած է (90 դրամ):

Երկուհարիւրհինգ դրամի արժողութեամբ առանձին երկու նամականիշեր կ'ոգեկոչեն Ոսնադնդակի Փարիզի միջազգային առաջնութիւնը եւ 1988–ի Հայաստանի երկրաշարժին տասնամեակը:

Թողարկումին վերջին մասը պղեղիկ յուշաթերթիկ մը կազմուած է, քրիստոսնէացման 1700–ամեակին ծիրէն ներս: Հինգ դրոշմանիշերէ բազկացած յուշաթերթը (ամէն մէկը 100 դրամի արժողութեամբ) մեզի կը հրամցնէ Միլանոյի, Լոնտոնի, Նիւ – Եորքի, Փարիզի եւ Պուէնոս – Այրէսի Հայկական եկեղեցիներուն պատկերը: Ապագային, այս նոյն չարքը աշխարհի միւս զաղութներուն եկեղեցիները պիտի ներկայացնէ:

ԿՈՐԻՒՆ

Լիոն

ՄԱՄԼՈՑ ԴԻՒԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

# ՊԱՊԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Վաթիկանը եւ Սուրբ Էջմիածինը համոյքն ունեն յայտարարելու Նորին Սրբութիւն Ցովհաննէս-Պօղոս Բ. Պապի Հայաստանի Հանրապետութիւն կատարելիք այցելութեան մասին:

Պապը կը ժամանի Հայաստան Ցուլիսի 2-ին, Ուրբաթ օրը: Հայաստանում նա կը հիւրընկալուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցու պլխաւոր սրբավայրում: Երօրեայ այցի ընթացքում Պապը կ'այցելի Երեւան եւ ազգեաալ գօտի՝ Գիւմրի եւ Աշոցք: Հռոմի Պապը կը մեկնի Հայաստանից Կիրակի, Ցուլիս 4-ի երեկոյեան:

Պապը Հայաստան է ժամանում Նորին Սրբ Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագոյն Պատրիարք Գարեգին Առաջինի՝ աշխարհասփիւռ Հայութեան հոգեւոր առաջնորդի հրաւէրով: Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը, որ նշանակալից գործունէութիւն է ծաւալել միջազգային էկումենիկ ժողովներում, նախկինում՝ 1996 թ. Դեկտեմբերին եւ 1999 թ. Մարտին, տարբեր առիթներով նոյնպէս այցելել է Պապին՝ Վատիկան:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մէկն է Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներից, որոնք անկախ են Հռոմի Կաթոլիկ եւ Բիւզանդական Ուղղափառ եկեղեցիներից: Այս առումով Հռոմի Պապի այցելութիւնը Հայաստան երկրորդն է ոչ կաթոլիկ ուղղափառ երկիր: Առաջին այդպիսի այցը Հռոմի Պապը կատարեց այն թուականի Մայիսին՝ Ռումանիա:

Չնայած Հռոմի Կաթոլիկ եւ Հայոց եկեղեցիների միջեւ 1500-ամեայ յարաբերութիւններին, Պապի այցը, որպէս Հռոմի քահանայապետի առաջին այցելութիւն դէպի Հայաստան, պատմական է: Այցը ունի բացառիկ առիթ եւ նախորդում է երկու դարակազմիկ իրադարձութիւնների՝ Քրիստոսի ծննդեան 2000-ամեակին եւ Հայաստանի՝ դէպի քրիստոնէութեան դարձի 1700-ամեակին:

Քրիստոսի ծննդից յետոյ 301 թուականին Հայաստանը դարձաւ աշխարհի առաջին քրիստոնեայ ազգը: Այս իրադարձութիւնը ամբողջ աշխարհում կը նշուի 2001 յորելենական թուականին: Ցովհաննէս-Պօղոս Բ. Պապը, որ նախկինում նշել է Հայաստանի եղակի դերը քրիստոնէութեան պատմութեան մէջ, իր այցելութեան ընթացքում կը մեծարի այդ յոբելեանը:

Որպէս ուխտագնաց Հռոմի Պապը կ'այցելի նաեւ Հայոց Եղեռնի զոհերի յուշահամալիր (ի ոգեկոչումն 1,5 միլիոն Հայերի, որոնք 1915 թուականին նահատակուեցին Թուրքիայում՝ Հայերի ցեղասպանութեան ընթացքում):

Այցելութեան ընթացքում Պապը կը հանդիպի Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպէրտ Քոչարեանի հետ: Գարեգին Ա. Կաթողիկոսի հետ կը նախագահի ազօթքի արարողութեանը Սուրբ Էջմիածնում, կ'այցելի Աչոցքի հիւանդանոց, որը կառուցուել է 1988 թ. երկրաշարժից յետոյ՝ Վատիկանի նուիրատուութիւններով:

Պապի այցի ծրագիրը հետեւեալն է.

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՑՈՎՀԱՆՆԷՍ-ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ**
**2-4 Ցուլիսի, 1999 թ.**
**(Ժամերը նշուած են Հայաստանի տեղական ժամանակով)**

**Ուրբաթ, 2 Ցուլիսի, 1999 թ.**

17:00 Ժամանում Երեւանի «Զուարթնոց» օդանաւակայան:

Ողջոյնի արարողութիւն «Զուարթնոց» օդանաւակայանում:

18:30 Ողջոյնի կարճատեւ արարողութիւն Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:

**Շաբաթ, 3 Ցուլիսի, 1999 թ.**
(Էջմիածին, Խոր Վիրապ, Երեւան, Էջմիածին)

09:45 Այցելութիւն Խոր Վիրապ եւ աղօթք (Հայաստանի արեւմտեան սահմանի մօտ գտնուող վանք, որը յայտնի որպէս Հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսաւորիչի բանտարկութեան վայր):

11:00 Քաղաքավարական այց Հայաստանի Նախագահ Ռոպէրտ Քոչարեանին Երեւանում, նախագահական պալատում:

12:15 Այցելութիւն եւ աղօթք Հայոց եղեռնի զոհերի յուշահամալիր Ծիծեռնակաբերդում:

13:30 Պաշտօնական ճաշ Ս. Էջմիածնում՝ մասնակցութեամբ Ցովհաննէս - Պօղոս Բ. Պապի եւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

18:30 Էկումենիկ աղօթքի արարողութիւն Ս. Էջմիածնում: (Արարողութիւնն ընդգրկում է սուրբգրային ընթերցումներ, չարականներ, աղօթք, Պապի եւ Կաթողիկոսի ուղերձներ):

**Կիրակի, 4 Ցուլիսի, 1999 թ.**
(Էջմիածին, Աշոցք, Գիւմրի, Էջմիածին, Երեւան, Հռոմ)

11:15 Կաթոլիկ պատարագի մատուցում Հայաստանի Աշոցքի հիւանդանոցում:

17:45 Այցելութիւն Արեւելեան Եւրոպայի հայ կաթոլիկների առաջնորդ Սրբ. Ներսէս Տէր-Ներսէսեանի նստավայր՝ Գիւմրի:

18:15 Հոգեհանգստեան արարողութիւն Գիւմրիի Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցում՝ ի յիշատակ 1988 թուականի երկրաշարժի զոհերի:

20:00 Հրաժեշտի արարողութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

20:30 Հրաժեշտի արարողութիւն Երեւանի «Զուարթնոց» օդանաւակայանում:

21:00 Մեկնում Հայաստանից Հռոմ:

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

# ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԵԼԷՍԻ ՄԷՋ

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Լոս – Անճելըսի Գալիֆորնիոյ համալսարանի «Տիքսըն» սրահին մէջ, Մայիս 15-ին, տեղի ունեցած է Փոքր Հայքի նուիրուած գիտաժողովը, կազմակերպութեամբ վրոփ. Ռիչըրտ Ցովհաննէսեանի, հովանաւորութեամբ Հայ Կրթական Հիմնարկութեան Հայոց պատմութեան ամպիոնին եւ աջակցութեամբ Հայ Լեզուի ու գրականութեան «Նարեկացի» ամպիոնին: Ներկայ եղած են մեծ թիւով Սեբաստացիներ, մտաւորականներ, մանաւդէաներ: Բացումը կատարած է վրոփ. Ռիչըրտ Ցովհաննէսեան, որ ներկայացնելէ ետք Սեբաստիոյ նահանգի յատկանշական երեսները՝ իրրեւ մշակոյթի օրրան ու յարաբերաբար ապահով շրջան քան Բարձր Հայքը, անդրադարձած է Սեբաստիա ծնած կարեւոր անձնաւորութիւններուն, վանքերուն, բարձրադոյն հիմնարկներուն, բնակչութեան եւ ազատագրական շարժումներուն: Գիտաժողովին մասնակցած են 13 մասնագէտներ Հայաստանէն, Եւրոպայէն եւ Միացեալ Նահանգներէն, ներկայացնելով պատմական ուսումնասիրութիւններ Փոքր Հայքի / Սեբաստիոյ հայութեան մասին, հնագոյն ժամանակաշրջանէն մինչեւ ի. դար:

*
**

ԴԱՇՆԱԿՀԱՅ ԶԱՐԵՎ ԱՆԱՆԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Փասատինա գոլֆի հանդիսարահին մէջ, Մայիս 8-ին, տեղի ունեցած է Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան կազմակերպութեամբ 16-ամեայ դաշնակահար Զարեհ Անանեանի նուագահանդէսը: Ներկայ եղած են աւելի քան հազար հոգի: Շնորհալի դաշնակահարը, նիւ Վէյլի սէնֆոնիք նուագախումբի ընկերակցութեամբ (ղեկավար՝ Ճէյմս Սուիֆթ), մեկնաբանած է Արամ Խաչատուրեանէն, Ռախմանինովէն եւ Մենտելսընէն գործեր, արժանանալով ներկայ հոծ բազմութեան դնահատանքին:

*
**

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՑ ՄԱՍԻՆ ԹԱՊԱԻԷՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, Ապրիլ 29-ին, տեղի ունեցած է դէպի Վասպուրական եւ Կիլիկիա կատարուած ուխտագնացութեան մը ժապաւէնի յուշագրումը, կազմակերպութեամբ Համազգայինի վարչութեան: Բացումը կատարած է Մարինա Քիւրտճեան: Դասախօսած է Կարօ Մոմճեան, պատմական ակնարկ մը նետելով Հայոց հին պատմութեան վրայ: Ապաք առած է տեխատագնացութեան գեկավար Արմէն Արտեհան, նշելով որ ունի բազմաթիւ նման ժապաւէններ, որոնք կը ներկայացնեն Հայաստանի արեւմտեան նահանգները եւ Կիլիկիոյ կարգ մը չրջանները: Ապա ցուցադրուած է ժապաւէնը ներկայացնելով Հռոմկլան, Տիգրանակերտը, Խարբերդը, Պէրճճիկը, Վանը, Աղթամար կղզին եւայլն:

*
**

ՓԵՐԱՀԵՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՃԱՇ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Էնսինոյ Փերահեան ազգային վարժարանի «Ասեհսեան» սրահին մէջ, Մայիս 8-ին, տեղի ունեցած է դպրոցին տարեկան ճաշ – պարահանդէսը, ի նպաստ սաներու Փոնտին: Ցայտագիրը վարած է Անի Տէմիրճեան: Ծօսք առած են չրջանի նոր հովիւ Ռատմիկ Քհնյ. Խաչատուրեան, վարժարանին տնօրէնը՝ Մարզպետ Մարկոսեան, Տնտեսական Մարմնի ատենապետուհի Լինա Դաւիթեան, նշելով որ սաներու Փոնտին համար հանգանակուած գումարով առիթ կը տրուի դպրոցի պատասխանատուներուն, որ յաջորդիկայ ամիսներուն չմեկնին կրթական պահանջները լրացնող, սակայն նիւթական տեսակէտէ դժուարութիւններ չլրացնող որեւէ ճամբորդութիւն: Ստեղծուած խանդավառ մթնոլորտի մէջ հանգանակուած է 50 հազար տոլար:

*
**

«ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ»Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Կլենտէյլի հանրային գրադարանի մէջ, Մայիս 5-ին, տեղի ունեցած է «Գրական Ասպարէզ»ի հերթական հանդիպումը, նուիրուած Սարօ Գէօզալեանի, գիմբեցի, հեղինակ քանաստեղծութիւններու եւ պատմուածքներու: Հեղինակը կարդացած է իր քանաստեղծութիւններէն նմոյշներ: Գէորգ Քրիստինեան վերլուծած եւ արժեւորած է հեղինակին գործերը: Ծօսք առած են Վահրամ Համեան, Անահիտ Եբեմեան, Նորայր Ազալեան, Վահագն Մկրտչեան, անդրադառնալով օրուան հիւրին վաստակին: Երեկոյթը վարած է Գրիչ Դաւիթեան:

*
**

ՓԻԼԻՒՍԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Իկըլ Ռաքի «Ովասիս» ճաշարանին մէջ, Մայիս 2-ին, տեղի ունեցած է Փիլիսի Հայրենակցական Միութեան տարեկան ձեռնարկը: Բացումը կատարած է Հերմինէ Սահակեան: Գրիգոր Շէնեան ներկայացուցած է Կլենտէյլի թաղապետութեան նորընտիր անդամ Րաֆֆի Մանուկեանը, որ իր կարգին խօսք առնելով ուրուագծած է քաղաքապետարանի աշխատանքները: Գնահատանքի խօսքով հանդէս եկած է Հայաստանի Լոս – Անճելըսի նոր հիւպատոս Արմէն Հայրապետեան, վեր առնելով Հայրենակցական միութիւններու օգտակար աշխատանքները, որոնք կը միտին յատկապէս հայ դպրոցներու աշակերտներու կրթաթոշակները տրամադրելուն: Այս առթիւ Տէր եւ Տիկին Ալէքսան Փիլաճեան երկու հազար տոլար նուիրած են Միութեան:

ԼՐԱՏՈՒ


# ՀԱՅ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ


ԳԼՈՒԽ Զ.

– Էյ, ատ՞ա պիտի ըսեմ քեզի, ի՞նչ պէտք ունիմ, դիտես, որ ես Զապէլը աղջկանս պէս կը սիրեմ եւ սիրելուս համար էր, որ փեչերս ժողվեցի ու այս գործը յաջողցնելու աշխատեցայ:

– Ողջ ըլլաս, չնորհակալ եմ:

– Տիկին Սկամպիլեանը այսօր վաղը անպատճառ կուգայ ու այս մասին կը խօսի ձեզի, այս օրերս նորէն չափազանց պրաստած է ազգային գործերով, անոր համար ձկրցաւ գալ:

Ընթերցողը կտահէ անշուշտ, որ խօսողները Զապէլն եւ ռումանահայ Ժորժ Քանարի ամուսնութեան չուրջ կը դառնար: Փոքրի Շանի բարեգործական պազատէն ետքը, ուր երկու երիտասարդները իրար ճանչցած էին, Ժորժ մէջտեղը առեղծած էր կրկին մտաենալու Զապէլին: Տիրան իր աղակցութիւնը բերած էր երիտասարդին եւ նոյնիսկ զայն բերած էր Բարսեղ աղայենց տունը: Ռումանահայը իր կիրթ ու ազնուական ձեւերով չոտով մնեցիներուն համակրանքը չահած էր: Իսկ Զապէլ սիրային առաջին յայտարարութեան իսկ համամտութեամբ պատասխանած էր Ժորժ, որուն թէ՛ առնական դեղեցկութիւնը եւ թէ՛ զուտ եւրոպական կենցաղավարութիւնը չուտով հմայած էին զինքը:

– Զապէլը, անշուշտ, չատ գոհ պիտի մնայ, երբ որ լսէ, թէ այսպէս Պր. Ժորժ պաշտօնական կերպով իր ձեռքը կը խնդրէ, – լսաւ Սիրարփի՝ ակնարկած խօսակցութիւնը չարունակելով:

– Ինչո՞ւ գոհ չըլլայ:

– Կարծեմ երկուքն ալ իրարու չատ սիրահարած են:

– Գիտեմ, որ Զապէլը կը փափաքի այս ամուսնութեան, բայց աւելին չեմ գիտեր:

– Ես կը տեսնեմ կոր, Զապէլն ալ ըզնուած է Պր. Ժորժին, է՛հ, չատ բնական է, երիտասարդութիւն կայ, խելք կայ, ուսմունք կայ, հարստութիւն կայ, ասանկ ամուսին մը ո՞ր աղջիկը չուզեր:

– Շատ ճշմարիտ է, – հաստատեց Մանէնիկ, – միայն մէկ անպատեհութիւն մը կայ:

– Ի՞նչ անպատեհութիւն:

– Աղջիկնիս պիտի առնէ տանի:

– Է՛հ, ի՞նչ ընենք, չե՞ս գիտեր, որ աղջիկները իրենց ծնողքին տունը հիւր կը սեպուին, օր մը չէ նէ օր մը՝ պիտի գան՝ առնեն, տանին:

– Տանիլ կայ, տանիլ ալ կայ, ուր է որ պոլսոյ մէջ հարս երթայ, ուր է որ՝ օտար երկիր:

– Օտար երկիր ըսածդ, Ռումանիա, քիթերնուս տակն է, պոռանք նէ, ձայներնիս կը հասնի:

– Ատուածոյ կամքը ինչ որ է, ան կ'ըլլայ, – եզրակացուց Մանէնիկ:

– Ան չէ ամա Բարսեղ աղան ինչ կ'ըսէ կոր այս ամուսնութեան:

– Բարսեղ աղան կ'ուզէ կոր, որ ըլլայ, միայն թէ ինչ որ պիտի ըլլայ ժամ առաջ որոշուի ըսենայ, կ'ըսէ կոր, կը վախնայ, որ երիտասարդը Զապէլին հետ ժամանակ անցընելէ ետք, օր մըն ալ չդենաւ կը նստի կ'երթայ:

– Չէ՛, ճաներմ, անանկ մարդ չէ... ասկէ զատ ժամանակ անցընել կ'ըսես նէ՝ ի՞նչ ըրին, որ քանի մը անգամ իրարու հետ տեսնուեցան:

– Այո՛, բայց կրնայ ըլլալ, որ Զապէլը սիրահարած կ'ըլլայ անոր, ու օր մըն ալ ճգէ երթայ նէ՝ խեղճ աղջիկը սրտին կը դնէ:

– Աման, դուն ալ, Մանէնիկ հանըմ, անանկ աղջիկներ մնացա՞ծ են, – զոչեց Սիրարփի:

– Իմ աղջիկներս ամէն աղջիկներու չեն նմանիր, տարբեր կերպով մեծցած են:

– Ինչ որ ալ ըլլայ, քանի որ տղան պաշտօնապէս կ'ուզէ կոր ամուսնանալ, ալ հոգ ընելու պատճառ չունիս:

– Բարսեղ աղան ուրիշ վախ մըն ալ ունի, – չարունակեց Մանէնիկ:

– Ի՞նչ վախ...

– Կը վախնայ, որ տղան խոշոր դրամական կարողութիւն մը նետելով Հայոց հին պատմութեան վրայ: Ծօսք առած է տեխատագնացութեան գեկավար Արմէն Արտեհան, նշելով որ ունի բազմաթիւ նման ժապաւէններ, որոնք կը ներկայացնեն Հայաստանի արեւմտեան նահանգները եւ Կիլիկիոյ կարգ մը չրջանները: Ապա ցուցադրուած է ժապաւէնը ներկայացնելով Հռոմկլան, Տիգրանակերտը, Խարբերդը, Պէրճճիկը, Վանը, Աղթամար կղզին եւայլն:

*
**

ՓԵՐԱՀԵՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՃԱՇ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Էնսինոյ Փերահեան ազգային վարժարանի «Ասեհսեան» սրահին մէջ, Մայիս 8-ին, տեղի ունեցած է դպրոցին տարեկան ճաշ – պարահանդէսը, ի նպաստ սաներու Փոնտին: Ցայտագիրը վարած է Անի Տէմիրճեան: Ծօսք առած են չրջանի նոր հովիւ Ռատմիկ Քհնյ. Խաչատուրեան, վարժարանին տնօրէնը՝ Մարզպետ Մարկոսեան, Տնտեսական Մարմնի ատենապետուհի Լինա Դաւիթեան, նշելով որ սաներու Փոնտին համար հանգանակուած գումարով առիթ կը տրուի դպրոցի պատասխանատուներուն, որ յաջորդիկայ ամիսներուն չմեկնին կրթական պահանջները լրացնող, սակայն նիւթական տեսակէտէ դժուարութիւններ չլրացնող որեւէ ճամբորդութիւն: Ստեղծուած խանդավառ մթնոլորտի մէջ հանգանակուած է 50 հազար տոլար:

*
**

«ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ»Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Կլենտէյլի հանրային գրադարանի մէջ, Մայիս 5-ին, տեղի ունեցած է «Գրական Ասպարէզ»ի հերթական հանդիպումը, նուիրուած Սարօ Գէօզալեանի, գիմբեցի, հեղինակ քանաստեղծութիւններու եւ պատմուածքներու: Հեղինակը կարդացած է իր քանաստեղծութիւններէն նմոյշներ: Գէորգ Քրիստինեան վերլուծած եւ արժեւորած է հեղինակին գործերը: Ծօսք առած են Վահրամ Համեան, Անահիտ Եբեմեան, Նորայր Ազալեան, Վահագն Մկրտչեան, անդրադառնալով օրուան հիւրին վաստակին: Երեկոյթը վարած է Գրիչ Դաւիթեան:

*
**

ՓԻԼԻՒՍԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Իկըլ Ռաքի «Ովասիս» ճաշարանին մէջ, Մայիս 2-ին, տեղի ունեցած է Փիլիսի Հայրենակցական Միութեան տարեկան ձեռնարկը: Բացումը կատարած է Հերմինէ Սահակեան: Գրիգոր Շէնեան ներկայացուցած է Կլենտէյլի թաղապետութեան նորընտիր անդամ Րաֆֆի Մանուկեանը, որ իր կարգին խօսք առնելով ուրուագծած է քաղաքապետարանի աշխատանքները: Գնահատանքի խօսքով հանդէս եկած է Հայաստանի Լոս – Անճելըսի նոր հիւպատոս Արմէն Հայրապետեան, վեր առնելով Հայրենակցական միութիւններու օգտակար աշխատանքները, որոնք կը միտին յատկապէս հայ դպրոցներու աշակերտներու կրթաթոշակները տրամադրելուն: Այս առթիւ Տէր եւ Տիկին Ալէքսան Փիլաճեան երկու հազար տոլար նուիրած են Միութեան:

ԼՐԱՏՈՒ

---

ժիտ մը կը պահանջէ:

– Չեմ կարծեր, ինքը չատ հարուստ է եղեր:

– Չե՞ս գիտեր, որ մանչը որչափ աւելի հարուստ ըլլայ, այնքան աւելի դրամօժիտ կը պահանջէ աղջիկէն:

– Շիտակը, այդ մանրամասնութիւններուն մէջ չեմ կրնար մտնել, – պատասխանեց Սիրարփի, – երբոր Տիկին Սկամպիլեանը գայ, անոր հետ կը խօսիք:

Իրիկունը, երբ Բարսեղ աղա եկաւ, Տիկին Մանէնիկ պատմեց Տիկին Սիրարփիի այցելութիւնը եւ անոր ըսածները: Ամուսինը չահ գոհ մնաց:

– Կ'երեւայ, որ այսօր յաջող օր մըն է, – ես ալ աղէկ լուրեր ունիմ Արշակէն:

– Նոր նամակ առի՞ր, – հարցուց Մանէնիկ:

– Այո՛, երկար նամակ մը, մեծ – մեծ յոյսեր ունի, խոշոր հող մը գնելու մասին կը խօսի կոր, կ'երեւայ, որ թուրք հողագործները իրենց հողերը ժամ – ժամ կը ծախեն կ'երթան կոր, պէտք է առիթէն օգտուիլ... քամպակի արտեր կան եղեր ծախու, Արշակ կը գրէ կոր, որ հինգ – վեց հազար ոսկիով կարելի է ամբողջ տարածութեամբ հող առնել:

(Շար. 31)

## «ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

*ԱԼՖՈՐՎԻԼ. – Ս. Մեսրոպ կրթարանի նախապատրաստական դասարանի (Սէ – Փէ) աշակերտներու խումբէ մը 260 Ֆր. իմբագրատուն եւ տպարան իրենց այցելութեան առթիւ։*


## ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

ԱՌԹԻԻ

եւ

Նախաճաշկ
Սրբոց Կուսանացն
Հռիփսիմեանց եւ Գայիանեանց

*կազմակերպութեամբ՝*
*Փարիզի*
*Ս. Ցովհ. – Մկրտիչ Մայր Տաճարի*
*Տիկնանց Ցանճնախումբին*

*կիրակի, Մայիս 30, ժամը 13-ին*

*Ադաջնորդարանի*
*«Նուբհան Ֆրէնկեան» սրահին մէջ*
15, rue Jean-Goujon— Paris 8e

*Ծախքերու մասնակցութիւն՝*
Participation aux frais

Pour tous renseignements appeler :
*Տեղեկութեանց համար հեռաձայնել՝*
01 – 43 _ 59 _ 67 _ 03
01 _ 42 _ 59 _ 23 – 33
*կամ՝*
01 – 46 _ 62 _ 01 _ 29



LA COMMISSION CULTURELLE
DE L'EGISE ARMENIENNE
DE CHAVILLE

vous invite

au *CONCERT*
*de la CHORALE*

**AKN**

(Direction Aram KEROVPYAN)
*«Chants liturgiques arméniens»*

Le Samedi 29 mai à 20 heures 45

EGLISE STE BERNADETTE
3, Pavé de Meudon — 92370 CHAVILLE

— *Participation aux frais* —



MAISON DE LA CULTURE
ARMENIENNE
D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

RENCONTRE avec

**Antoine AGOUDJIAN**

à l'occasion de la parution
de son livre

**REVES FRAGILES**
**Arménie**

Photographies Antoine Agoudjian
Texte Gérard Guégan

**VENDREDI 28 MAI à 20h45**

Présentation
Débat
Dédicaces

9, rue de Madrid — 94140 ALFORTVILLE
Tél. : 01 43 76 55 89 - Fax: 01 43 78 66 64


## Հ.Բ.Ը.Մ. ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻԻՆ

1999 – 2000 ՏԱՐԵՇՐՋԱՆ

*Մելգոնեան կրթական Հաստատութիւնը 73 տարուան պատմութիւն ունեցող երկրորդական երկսեռ, պէչերօթիկ եւ ցերեկօթիկ վարժարան է։ Հաստատութիւնը օժտուած է արդի ուսումնական պահանջքները գոհացնող կառոյցներով՝ տարրաւնծարաններ, համակարգիչներ, գրադարան, մարզական համալիր։*

*Մ. Կ. Հաստատութեան ուսումնական ծրագիրը համապարփակ է։*

● *Հայերէն լեզու, գրականութիւն եւ պատմութիւն։ Այլ նիւթերը՝ անգլերէնով։*

● *Կը դասաւանդուի աշակերտի ծննդավայրի լեզուն (օրինակ՝ արաբերէն, յունարէն, պուլկարերէն, ռուսերէն, ֆրանսերէն)։ Ինչպէս նաեւ այլ օտար լեզուի դասաւանդութիւն՝ բաւարար թիւով խմբակ գոյանալու պարագային։*

● *Հայերէն եւ անգլերէն լեզուներու անթաւարար մակարդակ ունեցող աշակերտներուն՝ մասնայատուկ դասաւանդութիւն։*

● *Ուսումնական ծրագիրը միջազգային չափանիշերու եւ մակարդակներու վրայ հիմնուած է՝ անգլիական GCE "O" Level–ի (Սովորական մակարդակ) եւ "A" Level–ի (յառաջացած մակարդակ), IGCSE–ի, ինչպէս նաեւ ամերիկեան TOEFL, SAT 1–ի եւ SAT 2–ի պատրաստութեան։*

● *Աշակերտները կը պատրաստուին բարձր ճանաչում ունեցող ամերիկեան եւ եւրոպական համալսարաններու ընդունման պայմաններուն համապատասխանող ծրագրով։*

● *Արտադասարանային ծրագրուած գործունէութիւններէն են՝ նկարչութիւն, պարարուեստ, երգչախումբը, փողերախումբը, լրագիրը, թատերականը, սկաուտական եւ մարզական չարժումները։*

● *Հաստատութիւնս իր կարելին կ'ընէ նիւթական սահմանափակ հնարաւորութիւն ունեցող բայց ընդունակ եւ ջանասէր աշակերտներուն համար։*

● *Հաստատութեան վկայականը ստացող չրջանաւարտները հնարաւորութիւնը կ'ունենան իրենց բարձրագոյն ուսումը շարունակելու լաւագոյն համալսարաններու մէջ։ (Ամերիկեան, Եւրոպական, Հայաստանի եւ...)*

*Ցաւելեալ տեղեկութիւններ ստանալու, ինչպէս նաեւ արձանագրութեան համար կրնաք դիմել՝*

**A. G. B. U. —**
**Melkonian Educational Institue**
**Admission Office**
**(Attn. Mrs. I. Guevherian)**

**P.O.Box 21907, CY-1514 Nicosia, Cyprus**
**Tel. : +357-2-422195 / 422204**
**Fax : +357-2-493155**
**E-Mail: agbumei@melkonian.ac.cy**
**www.melkonian.ac.cy**


Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935


## Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՍԷՆԹ' ԱՆԹՈՒԱՆ ՄԱՐՍԷԼ

# ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

*Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ*
*կը պատարագէ եւ կը քարոզէ՝*
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐՃԱԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց

*ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 6*

*Սկիզբ ժամերգութեանց ժամը 9–ին։*
*Պատարագ ժամը 10–ին։*
*Ցաւարտ պատարագի՝*
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱՇ
*Պատուոյ նախագահութեամբ՝*
ՏԻՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՊԱՃԵԱՆԻ
Ատենապետ Շրջանային Խորհուրդի
*ճաշը կը պատրաստուի Լ'Հերմիթաժ ճաշարանին մէջ։*
*Հեռաձայն. –*
04 – 91 – 65 – 56 – 75
*Ապահովեցէք ձեր տեղերը։*

## ՅՈՒՇԱՏԵՏՐ

*ԿԱՊՈՑ ՄԱՍԻ փարիզեան չրջանի միջմասնաճիւղային ժողովը Ուրբաթ, Յունիս 4, ժամը 20·30–ին Փարիզի Հայ Մչակոյթի Տունը*

**17, rue Bleue — 75009 PARIS**

*Բոլոր ընկերուհիներուն ներկայութիւնը անհրաժեշտ է։*

## Հ·Բ·Ը·Մ·

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն*

### Թատերական ցերեկոյթ

ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 5, ժամը 17–ին

*Մասնակցութեամբ*
*Միսրեան Վարժարանի աշակերտներու*
*եւ*
*Հ·Բ·Ը·Մ·–ի Թատերական խումբի*
*Մուտքը 30 ֆրանք։*

*
**

ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 12, ժամը 15–ին
*Հ·Բ·Ը·Մ·–ի Միսրեան Վարժարանի*

### Հանդէս

– ԵՐԳ
– ՀԱՑԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ
– ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

*Մուտքը ազատ է։*

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, rue de Courcelles — Paris 17e
— *Métro: Courcelles* —
Tél. : 01. 42. 27. 12. 26

## Մայրերու Օրը

*Մարաչլի Կապոյտ Խաչի Սօսէ Մայրիկ մասնաճիւղի կազմակերպութեամբ Շաբաթ, Յունիս 5–ին, ժամը 15–ին, Պօսնիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ «Լուսն Շաղթ» սրահին մէջ։*

*Կը բանախօսէ՝*
ԿՈՄԻՏԱՍ ՎԻԴ. ՑՈՎՆԱՆԵԱՆ

*Հիւրասիրութիւն, գեղարուեստական յայտագիր։*


## L'ASSOCIATION MACHTOTZ
POUR LA DEFENSE DE LA LANGUE ARMENIENNE

organise un

## SEJOUR LINGUISTIQUE ARMENIEN
## BEYROUTH (Liban) - du 1er au 19 Juillet

**POUR LES JEUNES DE 8 A 16 ANS**
sous le patronage du Rév. Père KEGHAM KHATCHERIAN
*Prélat des Arméniens du Liban*

Les participants seront hébergés individuellement par des familles sélectionnées, dont ils partageront la vie et avec lesquelles ils communiqueront en langue arménienne.

Des cours d'arménien seront organisés à raison de 25 heures par semaine pour les **débutants francophones** par Mme Hilda Kalfayan-Panossian, avec sa **méthode audiovisuelle** et pour les autres niveaux, par des professeurs expérimentés.

L'encadrement et l'assistance aux jeunes participants seront assurés par les responsables de l'Association Machtotz.

Sont prévues plusieurs excursions comme Baalbek, Byblos, Saïda, Aïnjar, Zemmar, Antélias, la visite des musées et des institutions arméniennes, ainsi que des baignades à la mer et du sport, suivant possibilités

**FRAIS DE PARTICIPATION : 5950 F. par personne comprenant le transport aérien, l'hébergement en pension complète, les cours et les excursions.**

**Renseignements et inscriptions (avant le 10 juin) :**
ASSOCIATION MACHTOTZ
**8, rue Lamennais, 92370 CHAVILLE — Tél. / Fax : 01 47 50 97 51.**



## ESPOIR POUR L'ARMENIE
organise

## un Voyage de tourisme humanitaire

DU 12 AU 19 JUILLET

— VISITES : *Erevan, lac Sévan, Khorvirab, Etchmiadzine, ...*
— HUMANITAIRE : INAUGURATIONS : *de l'école franco-arménienne Daniel Sahagian à Spitak, de la ferme avicole à Vanatzor, du cabinet dentaire au siège de l'association à Erevan et visite de l'atelier de tapis à Gumri*
— 10ème anniversaire d'Espoir pour l'Arménie à la Salle Komitas (Erevan)
— Possibilité de prolonger votre séjour d'une semaine
— Prix : 6 500 FF la semaine, tout compris.

*Renseignements & Inscriptions :*
**Pasteur Gilbert LEONIAN :**
**Tél. : 01 47 36 02 50**
**Fax : 01 46 44 64 04**
**e-mail : eleonian@hotmail.com**



*les Coupons d'Alsace*

**21, av. d'Helvétie**
**25203 MONTBÉLIARD**
**Tél. 03 81 94 38 10**

**Z.I. Les Arbletiers**
**25400 AUDINCOURT**
**Tél. 03 81 35 51 93**

**65, avenue Jean Jaures**
**90000 BELFORT**
**Tél. 03 84 21 62 66**

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ 29-30
SAMEDI - DIMANCHE
29-30 MAI
1999

LE NUMERO : 6,00 F.

# ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻԱՔԵԱՆ (1884-1957)

# HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01.47.70.86.60 FAX : 01.48.00.06.70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ցրտնսա : Տար· 1·250 Ֆ· — Վեցամսեայ : 635 Ֆ·
Արտասահման : Տար· 1·500 Ֆ· (ամէնօրեայ առաքում)
1·350 Ֆ· (շաբաթաթերթի առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

74ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 19·650 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 74e ANNEE — N° 19.650

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ - ՊԵՏՐՈՍ ԺԸ. ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

### ՋԵՐՄՕՐԷՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է ԳՈՒՄԳԱԲՈՒԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Քանի մը օր է, Պոլսոյ իր համայնքին հովուապետական այցելութիւն մը կուտայ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս – պատրիարքը՝ Ցովհ. Պետրոս ԺԸ. եւ այս առիթով, Մայիս 27–ին պաշտօնական այցելութիւն մը տուած է պատրիարքարանը եւ Հրաշափառով առաջնորդուած Մայր Եկեղեցի, ուր ուղերձներ արտասանուած են եւ Պատրիարքն ու Կաթողիկոսը ողջոյրած են:

«Մարմարա»յի Մայիս 28–ի թիւէն կը քաղենք կարգ մը յաւելեալ մանրամասնութիւններ.–

Աւետարանի ընթերցումէն վերջ, որ կատարեց Գրիգոր Քհնյ. Տամատեան, ողջոյնի խօսքը արտասանեց Պատրիարքը, որ մօտաւորապէս կ'ըսէր.

«Կ'ողջունենք Ձեր ներկայութիւնը այս օրերուն երբ արդէն կը մօնէինք Հոգեգալուստը: Ձեր այս այցելութիւնը մեր սիրտերը կը պատրաստէ այն պատմական այցելութեան, զոր Հռոմի Սրբազան Քահանապետը պիտի ընծրհէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ որու ընթացքին տեղի պիտի ունենայ բացառիկ ողջագուրում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու Հռոմի Պապին միջեւ: Հայաստանեայց Եկեղեցւոյ մայր հողին վրայ, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով: Մեր հովուապետները քանիցս այցելութիւններ տուած են Հռոմ, բայց առաջին անգամ է որ Հռոմի Պապ մը Էջմիածին կուգայ: Ուստի պիտի ողջագուրուին Սուրբ Պետրոսի ու Ս. Բարթողիմէոսի այսօրուան յաջորդները:

Պատրիարք Հօր այս ուղերձէն վերջ երկու Հոգեւոր Պետերը ողջագուրուած են իրարու հետ: Յետոյ խօսք առած է Ցովհ. Պետրոս ԺԸ. որ ըսաւ ի մէջ այլոց.–

«Քրիստոսի սիրով կ'ողջունենք Ձեզ: Շնորհակալ ենք Ձեզի ու ձեր համայնքի ներկայացուցիչներուն, որոնք այսքան ջերմօրէն կը չրջապատեն մեզ: Ձեր եղբայրական ու անկեղծ արտայայտութիւններուն համար մեր երախտիքը կը յայտնենք: Ձիշդ է որ կը պատրաստուինք տօնել Քրիստոսի ծննդեան 2000–ամեակը, որպէսզի առանձնք նոր կեանք, նոր փաթքներ: Դժուար է արտայայտել մեր այն զգացումները, զորս ունեցանք այս պատմական Մայր Եկեղեցիին մուտք գործելու ընթացքին եւ երբ քալեցինք դէպի Խորան: Մեր այս հանդիպումը կը զուգադիպի Հոգեգալստեան տօնի հինգերորդ օրուան եւ Հոգեգալուստը մեր բոլորին համար ունի իւրայատուկ իմաստ: Առաքեալները նոր շնորհներով օժտուեցան ու նոր առաքելութիւններու տակ դրուեցան: Մենք ես առաքելներուն նման կոչուեցանք վանք առաքելութեան մը: Մոռնալով անցեալի անհամակացողութիւնները, այսօր ուրախ ենք որ կը տիրէ խաղաղ մթնոլորտ, փոխադարձ գործակցութիւն որ հիմնըւած է փոխադարձ յարգանքի, դնահատանքի ու սիրոյ վրայ: Սիրենք զիրար: Ամէնէն հրամայական պատուէրն է այս: Եւ իմ աղօթքս ու մաղթանքս է որ Ս. Հոգին առաջնորդէ մեզ, որպէսզի իրականանայ Յիսուսի փափաքը, որպէսզի եկեղեցին մի ըլլայ ու մենք օր մը այս նոյն եկեղեցիին մէջ, նոյն զաշտին վրայ միասնաբար կարենանք բեկանել կենդանի հացը որ է Քրիստոսը»:

Ապա եկեղեցականներու թափօրը դէպի Պատրիարքարանի չէնքը առաջնորդուեցաւ «Սիոնի Որդիք Զարթիք» չարականի երգեցողութեամբ:

### ՄԵՆ ԴԱՀԼԻՃԻՆ ՄԷՋ

Մէկ ժամ տեւող այս արարողութենէն վերջ Պատրիարքարանի մէջ ալ ընդունելութիւն մը սարքուեցաւ Հիւր Հովուապետին ու ընկերակիցներուն յ պատիւ: Հոս եւս երկու Հովուապետները արտասանեցին բարի գալուստի խօսքեր, այս անգամ նուազ պաշտօնական չեշտով ու աւելի մտերմիկ մթնոլորտի մէջ:

Պատրիարք Հայրը, որպէսզի Հիւր Հովուապետը միշտ յիշէ այս այցելութիւնը, նուիրեց Էջմիածնի գեղեցիկ պանակէ մը:

## ԿՈՍՈՎՕ

## ՇԻՐԱՔԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԵԼՈՅԹԸ

### ՄԻԼՈՍԵՒԻՉԻ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Մայիս 27–ին, նախագահ Ժապ Շիրաք վեցերորդ ելոյթ մը ունեցաւ Քոսովոյի մասին: Ամէն բանէ առաջ իր խոր դոհունակութիւնը յայտնեց ի լուր Ս. Միլոսեւիչի դէմ արձակուած ամբաստանութեան կա Հէի Պատժական Միջազգային Ատեանին կողմէ: Մայիս 27–ին, մամուլի ասուլիսով մը դատախազը՝ Լուիզ Արբուր կուտար մանրամասնութիւններ չէչնիայի. – «Մայիս 22–ին ամբաստանագիր մը ներկայացուցի Ս. Միլոսեւիչի եւ չորս ուրիշ անձերու դէմ, զիրենք մեղադրելով Մարդկութեան դէմ ոճիրներու համար»: Եւ այս որոշումը, Շիրաքի համար՝ «կարեւորագոյն դէպք մըն է, ան կը հաստատէ օրինականութիւնը մեր տարած պայքարին որու նպատակն է վերջ դնել ցեղային մաքրագործութեան պետական ցուցիչ քաղաքականութեան մը: Այսօր, Միլոսեւիչ աւելի քան երբեք առանձնացած է: Կը մտքեմ որ սերպ ժողովուրդը, եւս կոսլաւ միւս պատասխանատուները, ամբողջովին դիտակցին այն անելին ուր զիրենք տարաւ մարդու մը խելագրութիւնը»:

Բոլորը նոյն դոհունակութեամբ չեն ընդունած այս ամբաստանութիւնը, որովհետեւ կրնայ խոչընդոտ ստեղծել բանակցութիւններու դեռեւ վրայ: Արդարեւ, Մոսկուայի մէջ, կը պնդեն որ Միջազգային Դատարանին այս ամբաստանութիւնը յաւելեալ արգելքներ պիտի ստեղծէ կարգադրութեան գործընթացին տեսակէտէն: Արդարեւ, փորձերը կը շարունակուին եւ Ջերնոմիրդին անգամ մը եւս Պելկրատ կ'երթայ, տեսնուելէ եւս Ֆինլանտիոյ նախագահին եւ ամերիկացի բանագնացին հետ:

Մինչ այդ սակայն, ՕԹԱՆ–ի օդանաւերը կը ռմբակոծեն Պելկրատն ու չրջակայքը:

***

Ռուկովա Փարիզ կը գտնուէր Մայիս 27–ին եւ գանազան տեսակցութիւններ ունեցաւ պետական անձնաւորութիւններու հետ: Նոյն օրը Փարիզ էր նաեւ Թաչի, ՈՒ.Ջ.Ք.Ա.–յի ղեկավարը, եւ երկուքն ալ մերժեցին դէմ դիմաց որեւէ հանդիպում: Բայց, Թաչի ալ տեսնուեցաւ Արտաքին նախարար Վեարինի հետ: Ինք «նախարարապետն է Քոսովոյի առաժամեայ կառավարութեան մը», մինչ Ռուկովա երկու անգամ (1992–ին եւ 1998–ին) նախագահ ընտրուած է քուէարկութեամբ մը զոր Պելկրատ չէ ընդունած:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ֆրանսայի հիւանդանոցներն ալ վտանգաւոր դարձած են եւ չատեր ստիպուած են պահակներու դիմել, հասատատութիւնը պաչտպանելու համար: Բազմաթիւ զողութիւններ, յարձակումներ տեղի կ'ունենան դուրսէն եկած խմբակներու կամ ներսը գտնուղ հիւանդներու կողմէ: 1998–ին 109 յանցագործութիւն եւ 2000 զողութիւն գործուած են միայն փարիզեան չրջանը: Ստիպողական խնամքի բաժանմունքի բժիչկներն ու հիւանդապահուհիներն ալ կ'ենթարկուին յարձակումներու, խոչտանգումներու: Մարսէյլի հիւսիսի հիւանդանոցին այդ բաժանմունքին պետին համար ոստիկանական ներկայութիւնը կրնայ տարհամոզիչ ըլլալ:

## «ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Մայիս 27 / 28)

### ՆԱԽԱԳԱՀԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 30–ի ընտրութիւններուն կապակցութեամբ յայտարարութիւն մը ըրած է, նչելով անոնց կարեւորութիւնը: Ընտրութիւններու ընդհանուր մթնոլորտը բարենպաստ դնահատելէ ետք նախագահը ժողովուրդին կոչ կ'ընէ ընտրութիւններուն գործօն կերպով մասնակցելու եւ կատարելու իրենց քաղաքացիական պարտքը: Կ'աւելցնէ նաեւ որ օրինապանցութիւններ նկատողները պէտք է անմիջապէս դիմեն պատկան մարմիններու եւ իրաւունչ ստանայ իր արժանի դնահատականը:

***

### ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գլխաւոր դատախազութիւնը Մայիս 27–ի յայտարարութեամբ մը մանրամասնօրէն թուած է ընտրարչաւի ու ընտրութեան ընթացքին առընչուած ապօրինութիւններու տրուելիք պատիժները: Պատիժները մեծ մասով դրամական են, կան նաեւ արգելափակման պատիժներ: Յայտարարութիւնը կը նչէ թէ ընտրական նիւթով ապօրինութիւններու առընչուած դատարանի վճիռները վերջնական ըլլալով, բողոքարկումի ենթակայ չեն:

***

### Վ. ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Աչխատանքի այցելութեամբ Մոսկուա գտնուղ Արտաքին գործերու նախարար Վարդան Օսկանեան Մայիս 27–ին տեսակցութիւն մը ունեցած է իր ռուս պաշտօնակիցին՝ Իգոր Իվանովի հետ: Խօսակցութեան նիւթ եղած են երկկողմանի յարաբերութիւնները, կովկասեան համագործակցութիւնը, չրջանի ապահովութիւնը, ինչպէս նաեւ Ղարարաղի հարցը եւ այդ կապակցութեամբ Մինսկի խումբին գործունէութիւնը: Իվանով հայ նախարարին պարզած է նաեւ Քոսովոյի չուրջ տարուղ բանակցութիւններուն վերջին զարգացումները: Նոյն օրը, Վ. Օսկանեան հանդիպում մըն ալ ունեցած է Մինսկի խումբի համանախագահներէն Ռուսաստանի ներկայացուցիչ Եուրի Եուկալովի հետ: Անոնք քննարկած են համանախագահներուն տարածքաչրջան կատարելիք այցելութեան ակընկալութիւնները եւ բանակցութիւններու վերսկսման կարելիութիւնները:

***

### ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՏԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Նախագահ Ռ. Քոչարեան Մայիս 27–ին ընդունած է ԱՄՆ–ու Ազգային ժողովրդավարական հիմնարկին պատուիրակութիւնը: Այս ոչ կառավարական կազմակերպութիւնը 60 երկիրներու կարգին գործառնեակ ունի նաեւ Հայաստանի մէջ, 1995–էն ի վեր, երկրին մէջ ժողովրդավարական համակարգին հաստատումին օգնելու նպատակով: Նախագահը ըսած է թէ իրենք չահագրգռուած են ընտրութեան դէտերու մասնակցութեամբ, քանի որ անցքէ փուլին մէջ գտնուղ երկիրներու համար այդ մասնակցութիւնը չատ կարեւոր է:

***

### ԱՊՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՍՈՒԼԻՍ

«Ընկերային ուժերու եւ մասնաւորականներու Միութիւն»ը Մայիս 27–ի ասուլիսին մասնանչած է ընտրական գործակներուն մէջ արդէն նկատուած ապօրինութիւններ: Միութեան ներկայացուցիչը ամէնէն առաջոց դէպքը նկատած է այն երեւոյթը որ չրջանի մը 2121 ընտրողէն չուրջ 600–ին ծննդեան թուականը նչուած է 1900 Յունուար 1–ը: Ուրիչ պարագայի մը առընչու-

## ՏԻԳՐԱՆ ՀԱՃԵԱՆ

Յաւով իմացանք որ Նիսի ապաքինարանին մէջ, ուր փոխադրուած էր հիւանդանոցէն, Մայիս 27–ի առաւօտեան սրտի սուր տագնապի մը հետեւանքով իր մահկանացուն կնքած է Տիգրան Հաճեան:

Ծնած 1918 Օգոստոսին Էջմէ (Կէյվէ) ողբացեալը փոքր տարիքէն ընտանիքին հետ փոխադրուած է Պոլիս, ուր նախ յաճախած է Կէտիկ փաչայի Սուրբ Մեսրոպեան դպրոցը, ապա անցած կեդրոնական որու վայլուն չրջանաւարտներէն եղած է 1936–ին: Պոլսոյ մէջ նաեւ հետեւած է ճարտարապետութեան Գեղարուեստից վարժարանը, միչտ զանկեալ պարտադրաբար կատարելով պինուորական ծառայութիւն: Որպէս քարթր ճարտարապետ վկայուած է 1948–ին: Երկու տարի ետք կը փոխադրուէր Ֆրանսա, նախ Փարիզ, չրջան մը Տրակինեան, հուսկ՝ վերջնապէս Նիս:

Պոլսոյ մէջ, առաւելաբար զբաղած է հրապարակագրութեամբ, խմբագիր եղած է «Արեւելք» օրաթերթին, աչխատակցած «Ժամանակ»ին և կեդրոնական Սանուց Միութեան «Հանդէս Մշակոյթի»ն: Ֆրանսա հաստատուելէ ետք է որ աչխատած է որպէս ճարտարապետ, չարունակելով աչխատակցիլ մամուլին եւ դիմաւորաբար՝ «Յառաջ»ի:

Հմուտ մտաւորական, զարգացած միտք, բծախնդիր գրիչ, Տիգրան Հաճեան որակաւոր յօդուածներով իր աչխատակցութիւնը բերած է «Յառաջ»ի. յիչենք մէկ քանին՝ կեդրոնական 90–ամեակը, Ազգ. Սահմանադրութիւնը, Ֆրանսայի վարժարանները, Սուրբ Թարգմանչաց թարգաւորութիւնը, երբ քարերը կ'երգեն, եւայլն, եւայլն: Կանոնաւոր կերպով կ'ապահովէր նաեւ թղթակցութիւններ, արձագանգելով չրջանի հայ կեանքին, մինչեւ իսկ հիւանդանոցէն թէ ապաքինարանէն: Իր վերջին յօդուածներն են «Փաստոս Բիւզանդի պատմութեան սեւ էջերը ալ պէտք է կարդալ», «Սփիւռքահայ վարժարաններու համաժողովի հետքերով» (Փետրուար – Մարտ 1999): Ի դէպ, հրապարակագրութենէն զատ, կը զբաղէր նաեւ հայկական կեանքով եւ այդ տեսակէտով մղիչ ուժ մը եղած էր Նիսի մէջ, նախաձեռնողներէն մէկն ըլլալով «Սփիւռքահայ վարժարաններու համաժողովին» (1996): Եկած է նաեւ Փարիզ ու դատախօսած Կեդրոնականի կարմակերպած դատախօսութեանց, օրինակ 1995 Նոյեմբերին Գեղամ Գաւաֆեանի մասին:

Դժուար է սեղմ տողերով ներկայացնել ամբողջ կեանքի մը վաստակը: Ատիթ կ'ըլլայ դեռ խօսելու իր մասին: Ըսենք սակայն, թէ Տիգրան Հաճեանի մահով «Յառաջ» կը կորսնցնէ իր մէկ որակաւոր աչխատակիցը եւ Ֆրանսահայ մչակութային կեանքն ալ ճեռնհաս անդամ մը:

Մեր յաւակցութիւնները Տիկին Հաճեանի եւ պաւակներուն:

---

թեամբ ըսուած է որ «Հայնաւթամթերք»ի անօրէն Գագիկ Ցովհաննիսեանին ի նպաստ քուէի խոստում ունենալու համար անոր վստահուած անձերը հոսանքէ զրկած են Ազատութեան պղտոտային ամբողջ չէնքերը, հոսանք տալով միայն անոնց որոնց բնակիչները համաձայնած են քուէարկել իրենց թեկնածուին:

***

### ԳԷՈՐԳ ՁԱԽՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սասունցիներու բնակավայր Աչնակ գիւղին մէջ Մայիս 27–ին նչուած է Գէորգ Զաուշի եւ Ֆէտայիներուն օրը: Ատիկա առիթ եղած է պարբ փառատօնի մըն ալ որուն մասնակցած են աւելի քան հազար արուեստագէտներ: Ներկայ եղած է Մըշակոյթի նախարար Ռ. Շառոյեան ալ որ խոստացած է փառատօնը դարձնել ամէնամեայ:

# ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

*Մամլոյ Ազատութեան Օրը նշուեցաւ իր հիմնադրութեան թուականին, Մայիս 3–ին, Սրեմտեան եւ կարգ մը այլ երկիրներու մէջ։*

1987–ին է որ Լոնտոնի մէջ հաւաքուած 34 երկիրներու լրագրողներ կը տորպեդէին մամլոյ ազատութեան պայմանագրութիւն մը, որուն տանուտէրեան կ'արժէ որ ամէն տարի հրատարակուի հայրենի մամուլին մէջ, որպէս յուշարար առ որ անկ է։

Երկրագունդին վրայ ամէնէն չատ փընտռուած եւ նաեւ յեղյեղուած երկու բառեր են մամլոյ ազատութիւնը՝ ընդհանուր հակացողութեամբ Ազատութիւն բառին կողքին։ Այդ եզրը ընդհանրապէս մեկնաբանուած է իր տառացի, նախնական ըմբռնումով եւ համաձայն՝ իր կոչտ եւ անողոք երեւոյթներուն։ Մամլոյ եւ լրագրողներուն վրայ ճնշումը պէտք է բերէ, հոգե–ֆիզիքական սահմանները թեւակոխէ՝ որ ահազանգ հնչեցուի ազգային, մանաւանդ՝ միջազգային կազմակերպութիւններու կողմէ։ Սակայն մամլոյ ազատութիւնը կաշկանդող եւ զայն սահմանափակող չատ մը ուրիշ ազդակներ եւս կան, որոնց գոյութիւնը աննկատ կ'անցնի ճերմակ ձեռնոցներու զործածութեան պատճառով, եւ որոնք սակայն չեն դադրիր մամուլին եւ լրագրողին ազատութիւնը կաշկանդող կապեր ըլլալէ։ Եթէ ուզենք մեծ պատատի վրայ ներկայացնել անոնց տարբերութիւնը, պիտի ըսէինք բռնատիրական երկիրներու մամլոյ ազատութեան խափանում եւ ժողովրդավար երկիրներու յատուկ մամլոյ ազատութեան սահմանափակում, առանց նոյն մակարդակի վրայ դետեղելու զանոնք։

⁂

*Նախ՝ մամլոյ ազատութեան կոպիտ կաշկանդումներուն եւ եղերական հետեւանքներուն մասին։*

Թերթերու Համաշխարհային Ընկերակցութեան այս տարուան տեղեկագիրը իր «պատուոյ տախտակին» վրայ կը զամէ անուններըը 13 երկիրներու, ուր մամուլի ազատութիւնը ամէնէն չատ ոտնակոխուած է եւ ուր լրագրողներ խոշտանգուած կամ սպաննուած են։ Նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններէն կը յիշուին Պելառուս, Ղազախստան, Տաճիկիստան եւ Ուզբեկիստան։ Զի յիշուիր Աղրբեջան։ Իսկ «եւրոպական» երկիրներուն մէջ իր արժանի եւ միակ տեղը կը գրաւէ Թուրքիա։

Այս վերջին երկրին մէջ 26 լրագրողներ կը գտնուին բանտերու մէջ։ Փետրուարին երկու լրագրողներ ծանրօրէն խոշտանգուած են ոստիկաններու կողմէ, իսկ օտար լրագրողներու մուտքը արգիլուած է Հարաւային Թուրքիոյ ստիպողական չրջանը։ Համաձայն «Լրագրողներ Առանց Սահմանի (ԼԱՍ) միջազգային ընկերակցութեան, անցեալ տարուան առաջին ութ ամիսներուն երկու լրագրողներ մեռած են տարիականական գործողութիւններու ընթացքին, հինգ՝ խոշտանգուած, 58 յարձակումի ենթարկուած կամ սպառնալիքներ ստացած։ Իսկ ամբողջ տարուան ընթացքին 260 լրագրողներ հարցաքննուած՝ կամ բանտարկուած են։ 1997–էն ասդին Թուրքիոյ մէջ կրկնապատկուած է զրաւուած կամ զրաքննուած լրատուիւններուն թիւը։

Անցեալ տարի աշխարհի մէջ սպաննուած են ընդհանուր քանութ լրագրողներ։ Հարաւային Ամերիկա այն երկրամասն է, ուր ամէնէն չատ լրագրողներ սպաննուած են։ Գոլոմպիա կը գրաւէ առաջին տեղը։

Լրագրողներ կը սպաննուին մանաւանդ երբ իրենք կամ իրենց թերթը նուիրուի հետաքննական լրագրութեան։ Մամուլի ազատութիւնը թշնամին է քաղաքական եւ ընկերային ապականութեան։ Անցեալ տարի սպաննուած լրագրողներուն մեծամասնութիւնը չէ ինկած զինեալ բախումներու ընթացքին, այլ՝ իր պարապանքութեան կիրարկումի ճանապարհին, երբ աշխատած է բանալու ծալքերը քաղաքական ապականութիւններու, նիւթական զեղծումներու եւ պետութիւն – մաֆիա կապերուն։ Ոճիրները կը գործուին որքան պետութիւններու եւ իրենց վարչութիւններուն հրահանգով, նոյնքան դէպ – դինուորական պահակազօրքերու կողմէ, որոնք կը ծառայեն իշխանաւորի մը, ինչպէս նաեւ թմրեցուցիչներու եւ այլ կազմակերպակ ոճիրի խմբակցութիւններու կողմէ։ Այս կարգի հարցերուն մէջ, ինչպէս կը վկայէ Թերթերու Համաշխարհային Ընկերակցութիւնը, ոճրագործները չատ քիչ անգամ երեւան կը հանուին եւ աւելի նուազ անգամ պատիժի կ'ենթարկուին։ Թրքական իշխանութիւնները, օրինակ, ոչ մէկ դիւրութիւն կ'ընծայեն որ քննութիւն փայուի սպաննուած կամ ծանրօրէն խոշտանգուած լրագրողներու պարագային։ Նոյնն է երեւոյթը ուրիշ բռնատիրական երկիրներէ ներս, ինչպէս՝ Զինաստան, Եթովպիա, Պիրմանիա, եւն.։ Աւժանթինի մէջ բազմաստանեակ լրագրողներ յարձակումի ենթարկուած են՝ երբ ուզած են նախագահ Գարլոս Մենէմի եւ իր շրջապատին ապականութիւնը եւ նիւթական չարաշահութիւնները բացայայտել։ Բնականաբար, ոստիկանութիւնը ոչ մէկ յարձակումի հեղինակ երեւան հանած է կամ հարցը լուծած։

Այդ երկիրներուն մէջ, երբ լրագրող մը չպաննուի կամ չբանտարկուի, մամուլն է որ կ'ենթարկուի զրաքննութեան։ Այսպէս, աշխարհի 119 երկիրներու մէջ զրաքննութեան ենթարկուած են 501 լրատուիւններ։ Մամլոյ ազատութեան արգելքներուն մաս կը կազմեն այն բոլոր ուղղակի եւ անուղղակի միջոցները, որոնք նչուած են Պամանագրութեան մէջ, – պետական խորհրդանութիւն, թերթերու ապազրութեան եւ զրաւումի սահմանափակում, լրագրողին ազատ շրջագայութեան սեղմում, կեանքի ապահովութեան պակաս, հաղորդագանգերու հետ հաղորդակցութեան խոչընդոտ, եւայլն։

Հետաքրքրական կէտ մըն է նաեւ հետեւեալը։ ահաբեկիչներուն մօտ ամբողջովին կը պակսի զուարթախոհութեան չմբռնումը։ Ալժերիոյ մէջ, ուր 1993–ին ասդին չորս տասնեակ լրագրողներ սպաննուած են, այդ տարիներուն սպաննուեցաւ նաեւ Սաիտ Մէքթէլ, որ ծանօթ էր որպէս Ալժերիոյ Աբթ Պուխուալտը՝ ամերիկացի զուարթախոհ հրապարակագիրը։ Իսլամական ահաբեկչական կազմակերպութեան գլխաւորը յայտարարած էր հետեւեալ նչանաւանը. «Անոնք որոնք գրիչով կը պայքարին՝ պէտք է մեռնին սուրով»...։

⁂

*Բնականաբար մամլոյ ազատութեան ոտնակոխ երկիրներն են արեմտեան ժողովրդավարութիւնները, ուր՝ մասնաւորաբար Մէյոցեալ – Նահանգներու պարագային՝ երեք հարցեր խոտնակ ներկայութիւն մը կը պարզեն. Ազատութիւն, ազատութեան չարաչահում եւ սահմանափակում։*

Երկրորդ կէտին վերաբերեալ՝ ակնբախ է ազատութեան լիակ գործածութիւնը եւ ազդեցութիւնը։ ահաբեկիչներուն մօտ ամբողջովին կը պակսի զուարթախոհութեան չմբռնումը։ Ալժերիոյ մէջ, ուր 1993–ին ասդին չորս տասնեակ լրագրողներ սպաննուած են, այդ տարիներուն սպաննուեցաւ նաեւ Սաիտ Մէքթէլ, որ ծանօթ էր որպէս Ալժերիոյ Աբթ Պուխուալտը՝ ամերիկացի զուարթախոհ հրապարակագիրը։ Իսլամական ահաբեկչական կազմակերպութեան գլխաւորը յայտարարած էր հետեւեալ նչանաւանը. «Անոնք որոնք գրիչով կը պայքարին՝ պէտք է մեռնին սուրով»...։

⁂

*Բնականաբար մամլոյ ազատութեան ոտնակոխ երկիրներն են արեմտեան ժողովրդավարութիւնները, ուր՝ մասնաւորաբար Մէյոցեալ – Նահանգներու պարագային՝ երեք հարցեր խոտնակ ներկայութիւն մը կը պարզեն. Ազատութիւն, ազատութեան չարաչահում եւ սահմանափակում։*

Երկրորդ կէտին վերաբերեալ՝ ակնբախ է ազատութեան լիակ գործածութիւնը եւ ազդեցութիւնը – մամուլ համաձարակը։ Վերջին ընդվզեցնող երեւոյթը պարզուեցաւ վերջերս Գոլորատօ նահանգի մէկ վարժարանին մէջ պատահած ազգային ողբերգութեան առթիւ, որուն զոհ գացին 15 պատանի – պատանուհիներ, իսկ վիրաւորուեցան նաեւ 60 ուսանողներ, երբ երկու աշակերտներ արագահարուածի կրակոցին տակ բռնեցին աշակերտութիւնը եւ ապա անձնասպան զարձան։ Այդ սուգի օրերուն, ամերիկեան ոստիոյի խօսնակ եւ հեռատեսիլի յայտագիրի առենաւար Հովըրտ Սթէրն, որ հանրածանօթ է իր անորակելի յայտագիրներով, որպէս անձնական խո՛ր մտածում ձայնասփռեց հետեւեալը. «Մամլոյ մը գեղատեսիլ աղջիկներ կը յաճախեն այդ զպրոցը։ Իսկապէս գեղատեսիլ աղջիկներ դուրս կը վախչին՝ ձեռքերնին բարձրացուցած (ոստիկանութեան պահանջն էր)։ Արդեօք այդ տղաքը (երկու ռճրագործները) փորձեցի՞ն սեռային յարաբերութիւն ունենալ գեղատեսիլ աղջիկներէն ոեւէ մէկուն հետ։ Այդ իսկ չըրին։ Եթէ դուն քեզ պիտի սպաննես եւ նաեւ բոլոր միւսները, ինչո՞ւ առնուազն սեռային յարաբերութիւն պիտի չունենաս»...։ Սթէրն ցաւը կ'ապրէր որ մարդասպանները նախ քան ռճիրը՝ չեն բռնաբարած պարմանուհիները։ Վերոյիշեալ պարոնը կը չարունակէ իր պաշտօնը տարեկան 14 միլիոն տոլար աչխատասիրով...։

Ազատ մամուլ կարելի չէ ունենալ եւ պահել առանց դրամագլուխի։ Դրամը կուգայ առաջին կարգին։ Այս հիմնական դրական ազդակը կը առանձնայ ժխտական երանգաւորումներ, երբ մեծ ձուկը կը սկսի ուտել փոքրերը եւ մեծնալով եւ ուռճանալով կը դառնայ իսկական հրէշ մը, առանց թոյլ տալու փոքրին ապրելու – եւ խօսելու – կարելիութիւնը։ Այսօր աչխարհի մէջ կ'իչխեն մամուլի զերապետային կայսրութիւններ, որոնք մշակոյթ կը ստեղծեն – իրենց մշակոյթը։ Այդ կայսրութիւնները կրնան կոչուիլ Մուրտոք, Թայմ Ուորնըր կամ զերմանական Պէրթէլսման։ Մեծ մամուլը, որ հանրային կարծիք ստեղծող ուղեղն է, այսօր կը մրցի թապլոյիտ կոչուած «ժողովրդային», միջինէն վար մակարդակի հրատարակութիւններուն հետ։ Մեծ զրամագլուխը ինք կը հետապնդէ դրամ, որպէս առաջին նպատակ, աւելի՛ ու աւելի դրամ, եւ զլուխ կը խոնարհէ անոր առջեւ։ Կարծիքի մամուլը վերածուած է զբօսանքի եւ հաճոյքի հրատարակութեան, չեղելով հանրային ուչադրութիւնը ազդային ամէնէն էական հարցերէն։ Ցիշեցէք Օ. Ճէյ Սիմբսընի դատավարութեան եւ անկէ ետք՝ նախագահ Գլինթընի գայթակղութեան անվերջ ամիսներուն մեծ եւ ազատ կոչուած լրատուիւններուն ողբալի վիճակը։

Որքան ալ տարակերպական թուի նկատումը՝ ազատ մամուլ չի նչանակեր անպայման եւ միչտ՝ անկախ, արդար, հաւատարակչռուած մամուլ։ Ազատ մամուլը իր սեղմումները ունի եւ նաեւ ժողովուրդին մտածողութեան վրայ ճնշումի իւրայատուկ ձեւերը։ Լրագրողներ իրենք ալ ենթակայ են ներքին ահամանափակումներու եւ կանոններու։ Այլ խօսքով, անոնց ազատութիւնը կաշկանդուած է կարգ մը պարագաններու եւ նիւթերու հրապարակումի պարագային։ Իսկ մեծ հրատարակչութիւնները, որոնք առանձին պետական կառոյցով ընկերութիւններ են, իրենց կարգին կաշկանդուած են քաղաքական եւ առեւտրական չահերով ու նաեւ՝ կառավարական կամ այլ կապերով։ Միչտ տեղ մը կայ, – եթէ հարցը երկրորդական չէ ինչպէս կը թուի ըլլալ Հովըրտ Սթէրներու նման ժողովուրդին ամէնէն նախնական թնազդները գոհացնող յայտագիրներու պարագային–, երբ կը սանձուի ազատութիւն մը։ Իսկ անհատական մտերիմ կեանքի գայթակղութիւններով բուծանող մամուլը կարելի չէ դասել ազատ մամուլի կարգին։

ժողովրդավար երկիրներու մամուլը բնականաբար ենթակայ չէ բռնատիրական ճնշումներու։ Պետական սպասարկութիւնները չեն սպաններ լրագրողները, ոչ ալ ամէնէն առիթ զանոնք հարցաքննութեան կ'ենթարկեն։ Այսուհանդերձ, մամուլը կը գտնուի զրամի կաշկանդիչ տիրապետութեան ներքեւ։ Երբ Ուոլ Սթրիթ կը դրէ Միքրոսոֆթի մասին՝ ընթերցողները նոյնիսկ տեղեակ չի պահեր թէ այդ հրսկան թերթին բարձր դին մը վճարած է օգտագործելու համար իր համացանցը։ Նոյնը կ'ընէ Նիւ Եորք Թայմզ Նէթքէքչիի պարագային։ Իսկ Ուաշինկթըն Փոսթ իր առաջին էջի ճակտին դնելու կը տպէ Աղրբեջանի նախագահ Հայտար Ալիեւի օդակայան ժամանումը, անտեսելով կամ ներսի էջերը հրելով ՕԹԱՆ–ի անդամ կամ Խաղաղութեան մէջ Գործընկեր 40 այլ երկիրներու դեկավարներուն ըսանակարներըը՝ ծառայած կ'ըլլար բազմաթիւ չահերու, որոնց կարգին քարիւղի մեծ ընկերութիւններուն։

Ֆրանսայի մէջ Ալքաթէլը, որ կը զբաղուի հեռահաղորդակցութեան գաղաթը, մեծ մասամբ կախեալ է պետական պատուէրներէ։ Ալքաթէլ ոչ է կարծիք ձեւաւորող կարեւոր թերթերու։ Անչուչա անկէ օ – սաքսոն լրագրութիւնը տարբեր է Ֆրանսականէն։ Հարցը այն է, սակայն, որ լրատուիւնները ենթակայ են ձեռնաւորութեան եւ կը գործածուին որպէս գործիք՝ չահու խմբակցութիւններու կամ պետական վարչամեքենային կողմէ, երբ մամուլին պարտականութիւնն է ըլլալ իշխանութիւնները հաւատարակչռող ուժ եւ անոնց կողմէ ծածկուած իրողութիւնները բացայայտող բեմ։

Մամուլի ազատութիւնը իրաւական պաչտպանութեան եւ նիւթական անկախութեան կողքին՝ կախեալ է նաեւ գիտակից ընթերցողներու գոյութենէն։

Առանց լաւատեղեակ, լուսաբանեալ հանրութեան կարելի չէ երեւակայել ամբողջովին ազատ մամուլ։

Պոսթըն

# ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ 538-ԱՄԵԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Պոլսոյ պատրիարքութեան հիմնումին 538–ամեակը որ կը զուգադիպի Օսմանեան կայսրութեան 700–ամեակին, նչուեցաւ յատուկ հանդիսութիւններով։ Թուրք մամուլը եւս քանիցս անդրադարձաւ նոյն նչանաւներուն։ Իսկ «Միւնիյէթ» Մայիս 22–ի թիւով հարցազրոյց մը հրատարակած է Պոլսոյ Հայոց պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանի հետ։

Նախաբանի տողերուն մէջ ուր ամփոփ տեղեկատուութիւն կայ Թուրքիոյ հայութեան մասին, կ'ըսուի թէ անոր թիւը մօտ է 80 հազարի, մեծ մասը կ'ապրի Պոլիս, ունի զործօն 38 եկեղեցի։ Անատոլուի մէջ կայ, մեծ կամ փոքր, հայկական 12 համայնքական միութիւն։

Պատասխանելով Ե. Պատարի հարցումներուն Մեսրոպ Արք. կը յիչէ Հայաստանի քրիստոնէացումը, Զ. դարուն երուսաղէմի պատրիարքութեան, Ժ. դարուն ալ Ախթամարի պատրիարքութեան հիմնումը. կ'ըսէ թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 1441 թուականէն է։

Պոլսոյ պատրիարքութեան հիմնումը կը նկատէ Ցոյներուն հետ հաւասարակչռութիւն մը հաստատելու մտահոգութեան արդիւնք։ Բիւզանդիոնի մէջ ոչ օրթոտոքստաւար զանգուած մը կար որուն մասին պէտք էր մտածել, կար նաեւ պետական հարկերը հայ հպատակներէն ալ զանձելու խնդիրը։

Ինչ կը վերաբերի Մահմուտ Բ.ի օրով հրապարակուած Թանզիմաթի հռչակագրէն ետք հայ տարրին պալատին հետ հաստատած կապերուն, որպէս համայնք վայելած ինքնավար վիճակին, կարգ մը հայկական կուսակցութիւններու կեդրոնի իչխանութեան ապստամբելուն եւ 1915ին, Մեսրոպ Արք. կ'ըսէ. – «Չեմ հաւատար որ այդ շրջանին Հայերը անկախութեան հետամուտ էին։ Պատրիարքարանը եւ համայնիին մեծամասնութիւնը օսմանեան էին։ Որոշ հատուած մը արեւելքի թալանիներէն, բաղաբական խառնաչփոթ վիճակէն վրդոված, կ'ուզէր որ ապահովութեան պայմաններ հաստատուին։ Փոքր մաս մը միայն, դաշնակցականներն էին որ անկախութեան կը ձգտէին։

Ղեկավարները շրջանի խուճապին մէջ միայն փոքրամասնութեան մը ձգտումները ամբողջ համայնիին վերագրելու սխալը գործեցին։ Հարցը հետեւեալն էր բուն իսկ Օսմանեան կայսրութեան անկումը սկսած ու շատ մը երկիրներ անկախացած էին։ Բնականաբար արեւմտեան կարգ մը ուժեր ալ դեր ունէին։ Նման պատճառներով թուրբերուհայ յարաբերութիւնները սաեցան դէպի անապահովութեան գետին մը։ Ատոր հետեւանքը եղաւ տարագրութեան օրէնքը որ Հայերու պատմութեան մէջ "Մեծ Եղեռն" անուանուած դէպքերուն պատճառ եղաւ։ Այսուհանդերձ, Թուրքիոյ հանրապետութեան նախորդած հայեցութբ յարաբերութիւններուն այս վերջին շերտով ամբողջ պատմութիւնը բացատրել սխալ կ'ըլլայ»։

«Հանրապետութեան ամցքը դժուարութիւն ունեցա՞ւ ձեր եկեղեցիին համար հարցումին պատասխանելով Մութաֆեան պարբերաբ կ'ըսէ. «Ունեցաւ անշուշտ։ Ա. աշխարհամարտը տեղի ունեցած էր, տարագրութիւնը կատարուած։ Այդ կործանումը ազդած էր ամբողջ հաւաբակացութեան։ Հանրապետութեան առաջին հնգամեակիը համայնիը պատրիարք չունէր։ 1927–ին կատարուած ընտրութեամբ սկսաւ բնականոնացման հոլովոյթը»։

Որպէս համայնքային ներկայի տարբերուն գլխաւորը, Մեսրոպ Արքեպիսկոպոս կը նչէ Դպրեվանքի մը բացակայութիւնը եւ 1936–ի յայտարարագրին յարուցած դժուարութիւնները։ Կ'ըսէ թէ ժամանակավրէպ կարգադրութիւն է վերջինը որուն լուծում պէտք է բերել։ «Ինչպէս մզկիթի մը կամ վաբքի մը կարելի է կալուած ճուիրել, պէտք է եկեղեցական վաբքի մը համար ալ նոյն բանը կարելի ըլլայ։ Մինչդեռ, ներկայի կիրարկութեամբ հայկական վաբքերը չեն կրնար կալուածի տիրանալ։ Ատկէ զատ, 1936–էն ետք ստացուած կալուածները փոխանակ իրենց հին տէրերուն ամուսկայ արձանագրուելու, եթէ այդ տէրերը մահացած են, պետական գանձին կը փոխանցուին»։

Հարցազրոյցը կ'աւարտի երկրին ազգային նկատմամբ Մեսրոպ Արք. Մութաֆեանի յայտնած լաւատեսութեամբ եւ աչխարհավար կարգերու նախընտրութեան արտայայտութեամբ։

# ՀԵՐՄԻՆԷ ԵՐԻՑԵԱՆԻ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ ՎԻԵՆՆԱ

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵՐԵԿՈՅԹ ՄԸ

Հերմինէ Երիցեան անձանօթ մը չէ աստղահաս երաժշտասէր հասարակութեան համար: Երգարուեստի անսահման ընդատարին մէջ իր նեռած առաջին եւ որոշէ քայլերը առաջնորդուած են աստղային վարպետներու կողմէ:

Ինչպէս որ՝ Վիեննայի Շէօնպրիւն պալատի չքեղազարդ մատրան մէջ, Մայիս 1-ի երեկոյեան, գաղութիս Եկեղեցական Վարչութեան կողմէ կազմակերպուած երգահանդէսը վերատեսութիւն մըն էր երիտասարդ վիեննահայ արուեստագիտուհիին հետ: Իր հրամցուցած կտորներով ու ասոնց փայլուն մեկնաբանութեամբ, Երիցեան ապացուցանեց որ իր ձայնամարզուելիքը հետապնդած է յամառօրէն եւ իր ձայնի հնչականութիւնն ու կառարողականն արուեստը հասցուցած նախանձելի մակարդակի: Մեկնաբանական ներքերանդները այնքան հարստացած են որ պատիւ պիտի բերէին ոեւէ լիրիկական սոփրանոյի:

Գիտակցելով համերգավայրի կրօնական բնոյթին, Երիցեան իր առաջին չորս կտորները ընտրած էր միջնադարեան հայ հոգեւորական քերթողութենէն՝ (Նարեկացի, Շնորհալի...), Եկմալեանի, Յակոբեանի եւ Դանիէլեանի երաժշտաւորումներով: Ան զանոնք մեկնաբանեց մատեան վերնատունէն՝ խորունկ զգացակալութեամբ: Երգէոնի վրայ իրեն կ'ընկերակցէր գաղութիս հնորհալի դաշնակահարուհիներէն՝ Տիկին Ժպիտ Մարգարեան: Նորվոյալից մթնոլորտը յարմարապէս չրջապատը կը կազմէր եւ աւելի կարժէւորէր անոր ընկալումը:

Իր համերգին առաջին մասը վակեցէ առաջ, Երիցեան մեկնաբանեց երկու ժամանակակից Ֆրանսացի երաժիշտներ՝ Կապրիէլ Ֆորէ եւ Ֆրանսիս Փուլենքէ երբ մեղեդիներ որոնք իրենց քնարականութեամբ աննման կերպով կը ներդաշնակուէին նախորդներուն հետ: Երիցեան զանոնք հրամցուց իր թաւչանման ձայնով՝ խորանին առջեւէն՝ դաշնակի ընկերակցութեամբ անդլիացի արհեստավարժ երաժիշտ Փօլ Հերիսի:

Յարաբերաբար երկար դադարին ընթացքին, հասարակութիւնը հիւրասիրուցաւ Տիկնոջ Յանճնախումբի անդամներուն կողմէ պատրաստուած հայկական համադամներով:

Համերգի երկրորդ մասը գրեթէ ամբողջութեամբ նուիրուած էր հայկական երաժշտութեան, բայց Պրամսի քանի մը երգեր ալ կատարուեցան: Ինչպէս նաեւ, ձեր 20-րդ դարուն յարմար երաժշտութիւն մը:

Մասիկ ըսէք. նուագեցէք դայն դաշնակի վրայ կրթքարով, նոյնիսկ սենքէքիզըրով եթէ կ'ուզէք: Կարծեմ ան միշտ նոյն հըրճուանքը, նոյն յուզումը կը յառաջացնէ: Եւ ես պիտի ուզէի, որ ան, կատարեալ ձեւով ներկայացուած մարդը Աստծոյ մօտեցնէ...

Հ. – Կրնա՞ք բացատրել:

Պ. – Իմ երաժշտութիւնս սիրոյ եւ հաւատքի պատգամ մըն է: Կ'ուզեմ, որ խաղերը, մարդկային ականջէն անցնելէ ետք բարձրանան մինչեւ երկինք: Ահա, թէ ինչի կը ծառայէ երաժշտութիւնը. ոգին հանգստացնելու եւ զԱստուած փառաւորելու: Գիտէք, ես քաղքական եմ: Մեզի համար երգը չատ կարեւոր է, աղօթքի մը նման, որ երկու անգամ կը կրկնուի:

Հ. – Այս քոլորը շատ խանդավառող չեն թուիր:

Պ. – Կը սխալիք. Աստուած հեղինակաւոր եւ վրիժառու ծերունի մը չէ: Ան կը սիրէ, կը հանգարտեցնէ, կը հասկնայ: Քառասուն տարիներու ընթացքին, անոր նուիրուած թափառիկ խանթաթներ յօրինեցի: Անոնց մէջ դրի սրտի բոլոր թափերը, ոգիին բոլոր չարժումները. յոյսը, թիւնը, լայց նաեւ երազը, սէրը եւ մարտահաւոյքը: Կ'ըսեն, թէ ես այն յօրինողն եմ, որուն գործերը ամէնէն աւելի տարբեր են իրարմէ:

Հ. – Ի՞նչպէս կը յօրինէք:

Պ. – Նախ ես չատ ուսումնասիրեցի իտալական եւ Ֆրանսական պարոք երաժշտութիւնը: Առանց այս վերատուքի աշխատանքին վատահաբար ես պիտի չկարենայի այդքան խիտակ երաժշտութիւններ յօրինել: Օրինակի համար, իմ գործերուս մէջ ես չատ ֆոնթրըփուէն կը գործածէի...

Հ. – Ի՞նչ:

Պ. – Ասիկա թեքնիք մըն է, որ ես չատ զարգացուցի: Տարբեր մեղեդիներ իրարու խառնել, որպէսզի անոնք ներդաշնակ կապեր կազմեն:

Հ. – Դուք երաժշտական գործիք մը կը նուագէի՞ք:

Պ. – Ո՛չ, ես երաժշտական «գործիք մը» չէի նուագեր: Կը նուագէի գրեթէ բոլոր գործիքները: Պզտիկ տարիքէս ես սորվեցայ երգել, յարաղաշնակ, ջութակ, ալթօ, սրինգ նուագել: Սակայն ինծի համար թագաւոր գործիքը՝ ան է, որ ամէնէն լաւ ձեւով Աստուծոյ փառքը կը ներկայացնէ, երգէոնն է:

Այս գործիքով ես յանպատրաստից մեծ յօրինումներ կը կատարէի: Ժամեր կը տեւէր: Զեր դարաշրջանին ճաշի կարգ մը երաժիշտներ լաւ վճռռնած են երաժշտութիւն յօրինելու այս միջոցը:

Հ. – Սակայն դուք ինծի՞նչպէս սորված էք:

Պ. – Ես երաժշտութեան մէջ ծնած եմ: Իմ ընտանիքս երաժիշտներու իսկական ցեղախումբ մըն է: Մենք կ'ապրէինք Գերմանիոյ Կեդրոնը, 1695 թուականին, 10 տարեկանիս, ես որբ մնացի եւ իմ մեծ եղբայրս հոգ տարաւ մեզի: Հինգ տարի ետք, ես Լիւնըպուրկ գացի երգչախումբի մը մէջ երգելու եւ երգէոնն ու յարաղաշնակը սորվելու համար: Հոն է, որ ես յօրինեցի իմ առաջին խանթաթը, 19 տարեկանիս: Ցետագային ես երգէոն նուագող դարձայ, ապա երաժշտութեան պատմութեան՝ գերմանական տարբեր քաղաքներու մէջ: Այս ձեւով ես կրցայ հարիւրաւոր գործեր յօրինել: Ապա, 38 տարեկանիս ես հաստատուեցայ Լայպցիկ, ուր անհանդարտ պզտիկներուն դաստիարակեցի երաժշտութիւն եւ լատիներէն լեզու:

Հ. – Կը սիրէի՞ք պզտիկներուն հետ աշխատիլ:

Պ. – Այո՛: Իմ կեանքս լեցուն եղած է պզտիկներով: Ես քանի զաւակ ունեցայ երկու տարբեր ամուսնութիւններէ, Յաճախ կը յօրինէի երբ մէկ – երկու պզտիկ ծունկերուս վրայ կը խաղային: Մեր տունը լեցուն էր երաժշտութեամբ: Վայրկեան մը երեւակայեցէք, մենք կ'երգէինք, յանպատրաստից յօրինումներ կ'ընէինք, նոյն ժամանակ բազմաթիւ յարաղաշնակներու վրայ կը նուագէինք: Ես չատ հպարտ էի իմ զաւակներովս: Իմ որդիներէս չորսը չատ լաւ յօրինողներ դարձան: Ես «երգէոնի պզտիկ դիրքը» գրած էի իմ առջինեկիս համար: Նաեւ «Երկու ձայնով տասնըհինգ պիտեր», «Սկսնակներու համար վեց պզտիկ նախերգանքներ»... դուք տակաւին կը գործածէք այս գործերը, զորս ես երեւակայած էի՝ իմ աշակերտներս աշխատացնելու համար: Դասաւանդել, յօրինել ... ես իմ կեանքս անցուցի պզտիկներուն ... եւ Աստուծոյ մօտ:

Պատրաստեց՝
ՇՈՂԻԿ ՏԷՐ – ՂՈՒԿԱՍԵԱՆ
«Ազդակ»

# Ժ.-Ս. ՊԱԽԻ ԿԵԱՆՔԸ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ ԼԵՑՈՒԱԾ ԷՐ

Երաժշտութեան պատմութեան մէջ կան երկու չրջաններ. Ժան – Սեպաստիէն Պախէն առաջ եւ անկէ ետք: Երեւակայենք պահ մը, թէ ան կը պատասխանէ մեր հարցումներուն:

*
**

ՀԱՐՑՈՒՄ. – Ի՞նչ կը մտածէք արդի երիտասարդներուն երաժշտական հետաքրքրութիւններուն մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. – Ախոռ, որ անոնք դասական կամ պարոք երաժշտութեան մասին չատ չեն խօսիր: Սակայն քոլոր այս արուեստագէտները, որոնք թէքնօ կամ ռափ կը նուագեն, վատահ եմ, որ անոնցմէ չատեր նուագել սկսած են իմ գործերս սորվելով...

Իսկ թէ անոնցմէ ի՞նչ պիտի մնայ երեք դար ետք, ըսեմ, որ ներկայիս, իմ գործերս ամէնէն չատ նուագուող կտորներն են ամբողջ աշխարհին մէջ:

Հ. – Հանճարեղ մըն էք...

Պ. – Ես իմ կեանքս անցուցի աշխատելով: Երաժշտութիւնը հետս էր ամէն օր, ամէն վայրկեան. եկեղեցիին մէջ, իշխաններուն պալատներէն ներս, տանս մէջ, իմ զաւակներուս հետ: Ուզեցի կապել քոլոր ժամանակներու պատկանող գործ մը: 18րդ դարու երաժշտութիւն մը, վաչկատնոյին երգչէրէն, Աբրեմ Ակվազեանի Աշունը եւ Արաքս գետը, Նիկոլ Գալանդարեանի Արդեօք ո՞ւր եսը, Նահապետ Ռուսինեանի նշանաւոր Կիլիկիան՝ եկմալեանի պատչաճեցումով եւ Ալեքսանտր Յարութիւնեանի Հայրենիքիս հետը քոլորն ալ մեկնաբանուեցան երաժշտական բարձր մակարդակի վրայ, հայ հանդիսականներուն չնորհելով իսկական յուզումի պահեր:

Ներկաներու բուռն ծափահարութիւնները ընդառաջելով՝ Երիցեան նոյն ինքնավստահ ոճով յայտարերէն դուրս եկաւ Ալ. Հէքիմեանի երգիր Ինձ համարը, Բարսեղ Կանաչեանի Օրօրը եւ Շուպէրթի Աւէ Մարիան:

Սրտանց կը չնորհաւորենք Վիեննայի Եկեղեցական Վարչութիւնը՝ իր կազմակերպած յաջող երգահանդէսին համար, մաղթելով որ աւելի յաճախակի դառնան նման առիթները:

ՆԵՐԿԱՑ ՄԸ

# ՀԱՑ ՏԻԱՍՓՈՐԱՆ

(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՍՏԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

– 1924 - 1925 –

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Զ.

- Ինծի մնայ նէ՝ ամապարանքով գործ անելու չէ, – դիտել տուաւ Տիկին Մանիկ, որուն քնաւ չէր ժպտեր Կիլիկիա երթալու ծրագիրը:

- Աղէկ, բայց այն տեղն ալ առիթը ձեռքէ կը փախցնենք:

- Ես եթէ քու տեղդ ըլլամ, այդ տեսակ որոշում մը տալէ առաջ քանի մը փորձառու մարդու խորհուրդ կը հարցնեմ:

- Ես փորձառու չե՞մ, – գոչեց Բարսեղ ազա վիրաւորուած չեչտով մը, – ինչ քոհաք խօսքեր կ'ընես, գիս ազու տեղ կը դնես:

- Քաւ լիցի, բայց խոհեմութիւնն ալ ձեռքէ ձգելու չէ, տէ՛ս, երկու աղջիկ ունիս, որոնք կարզուելու վրայ են, Սօնիային ալ ժամանակը կամաց – կամաց կը հասնի կոր, ինչպէս կ'ըսեն՝ էլի ֆուլաղընատը, ատոնք կարզելու համար դրամ պէտք է, մէյ մը անոնք տեղաւորենք, անկէ ետքը դիւրին է, քովերնիս եղած դրամը ուզածնուս պէս կը ծախսենք ... Աշշակ մը կը մնայ մէջտեղ, ան ալ մանչ է, արհեստ ունի, ինքզինքը ինչպէս ըլլայ նէ, կ'ապրեցնէ...

– Ձանըմ, ես ալ անմիջապէս դրամներս հոդի չպահեցուցի, վտանգ Աստուծոյ, բաւական դրամ ունինք աղջիկներնիս տեղաւորելու եւ մենք ալ ապրելու համար:

Երեք օր ետքը, Կիրակի, Տիկին Սկամպիլեան կուգար այցելութիւն տալու Բարսեղ աղայենց՝ Տիրանի ու Ժորժի ընկերակցութեամբ: Կէսօրէն ետքն էր: Երկու երիտասարդները առաջարկեցին նաւակով պտոյտ մը կատարել մինչեւ Ֆէնէր Պահչէ:

– Դուք գացէք, պրօսնեցէք, մենք հոս կը նստինք, – ըսաւ Տիկին Սկամպիլեան, – իրարու հետ խօսակցելով ժամանակ կ'անցունէք, այնպէ՞ս չէ, Բարսեղ ազա:

– Հարկաւ ... Թող երիտասարդները երթան էէյֆ ընեն...

– Միայն թէ չատ ուշ չմնաք, – դիտել տուաւ Տիկին Մանիկ:

Երբ երկու երիտասարդները 3 օրիորդներուն հետ ուրախ – զուարթ մեկնեցան, Տիկին Սկամպիլեան լուրջ դէմք մը առաւ եւ խօսքը երկու ամուսիններուն ուղղելով՝ ըսաւ.

– Հիմա, որ տղաքը գացին, կրնանք մենք մեզի խօսիլ, որովհետեւ չատ կարեւոր խօսք մը ընելու եկած եմ այսօր:

– Կարեւոր կամ անկարեւոր, ձեր այցելութիւնը մեզի համար հաճոյք մը եւ պատիւ մըն է, – փութաց ըսել Տիկին Մանիկ, – եւ չնորհակալ ենք, որ մեզի պատւեցիք:

– Ես ալ չնորհակալ եմ ... Տիկին Սիրարիին կարծեմ քանի մը օր առաջ ձեզի այցելութեան եկաւ:

– Այո, եկաւ, – պատասխանեց Մանիկ:

– Իմ գալուս մասին քաներ մը չըսա՞ւ:

– Ըսաւ, որ այս օրերս մեզի այցելութեան պիտի գաք եղեր:

– Ուրեմն առանց այլեւայլի գանք քուն խնդրին, ես գործնական կին մըն եմ, խօսքէ աւելի գործ կը սիրեմ, Acta non verba, այս է իմ նշանաբանս, որ Կարիպալտիի նշանաբանն էր...

– Աղէկ, տիկին, բայց ես ատկէց բան մը չհասկցայ, – խոստովանեցաւ Բարսեղ ազա:

– Այսինքն, «գործ եւ ոչ խօսք», – բացատրեց Տիկին Սկամպիլեան:

– Շատ աղուոր, շատ աղուոր, անանկ է ա՛, խօսքերէն բան չելլար, գործին նայինք:

– Այսպէս, մէկ խօսքով ու անմիջապէս ըսեմ, որ այսօր եկած եմ Օրիորդ Զապէլի ձեռքը ուզելու իմ ազգականիս պարոն Ժորժ Քանտարի համար:

Երկու ամուսինները իրարու երես նայեցան, իրրեւ թէ ակնարկով խորհրդակցութիւն մը կատարելու համար:

– Չէ՞ք պատասխաներ, – պնդեց տիկինը:

– Քանի որ դուք չարմար կը տեսնաք, մենք առարկութիւն մը չունինք, – ըսաւ Բարսեղ ազա:

– Աս ի՞նչ խօսք է, ես ի՞նչ իշխանութիւն ունեմ ասոր մէջ, աղջիկը ձեր աղջիկն է, նախ պէտք է, որ դուք հաւանութիւն տաք:

– Մենք եթէ համամիտ չըլլայինք, թոյլ չէինք տար, որ Զապէլը այսքան մտերմօրէն տեսնուի Պր. Ժորժին հետ, – ըսաւ Մանիկ:

– Իսկ Զապէլ ի՞նքն ալ կ'ուզէ ամուսնանալ Պր. Ժորժին հետ:

– Այդ մասին իրեն հարցում մը չեմ ըրած, – պատասխանեց Մանիկ, – բայց վատահ եմ, որ պիտի չմերժէ:

– Իրաւունք ալ ունի չմերժելու, – գոչեց Տիկին Սկամպիլեան, – ազգականս ըլլալուն համար չեմ ըսեր, բայց ճշմարտութիւնը այն է, որ չատ քիչ կը պտնուի երիտասարդ մը, որ իր վրայ մխացնէ այնքան յատկութիւններ, ուսմունք՝ պէտք եղածէն աւելի առողջութիւն՝ կատարեալ, գեղեցկութիւն՝ անթերի, նիւթական վիճակը՝ փայլուն, ալ ինչ կ'ուզէք... Բերայի աղջիկները թերթ կ'ըլլային կոր հետը ամուսնանալու համար, բայց ինք գնաց եկաւ Զապէլին հաւնեցաւ ու զայն նախընտրեց, չիտակը անիկա մեծ բախտ մըն է:

– Մեր Զապէլն ալ, չիտակը, եթէ ըսեմ, որ հազարին մէջ մէկ հատ մը կը գտնուի, սուտ խօսած չեմ ըլլար .. աղջիկս ըլլալուն համար չէ, որ կ'ըսեմ կոր, բայց ամէն մարդ ալ կը վկայէ...

– Հիմա աս կարիպալտիին նշանաբանին գանք, – միջամտեց Բարսեղ ազա, – գործ եւ ո՛չ խօսք ... ե՞րբ կ'ուզէք, որ ընենք նշանառութը:

– Մենք պատրաստ ենք անմիջապէս ընելու ... ո՛չ թէ պատրաստ՝ այլ կ'ուզենք, որ անմիջապէս ըլլայ, – չեչտեց Տիկին Սկամպիլեան:

(Շար. 32)

## ԱՐԱՐՈՂ ՊԱՐՈՆ

Սիմոն Պիւսիի ցուցահանդէսի բացման առթիւ, Յունիս 5–ին, ժամը 14–ին Սթոք-Հոլմի «Իշխան Խօժէն» ազգային թանգարանին մէջ, դաշնակահարուհի Անի Կասէր նուագահանդէս մը կուտայ: Ցայտադիր՝ Տէպիւսի, Փուլենք, Սաթի:

ՆԻՍ

*Տիկին Էլիան Հաճեան,*
*Տիկին Տալիթա Ռոժէ – Հաճեան, ամուսինը՝ Փասքալ եւ իրենց զաւակները,*
*Տէր եւ Տիկին Մանուէլ Հաճեան եւ զաւակները,*
*Պր. Շահէն Հաճեան (Մեքսիքօ)*
*եւ ընտանեկան բոլոր պարագաները*

*խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ – հօր, հօրեղբօր, խնամիին՝*

**ՏԻԳՐԱՆ ՀԱՃԵԱՆԻ**

Ճարտարապետ

*մահը որ պատահեցաւ Նիս, Մայիս 27–ին։*

*Յուղարկաւորութիւնը կը կատարուի երկուշաբթի, Մայիս 31, ժամը 10·45–ին, Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցին*

281, boulevard de la Madeleine

*Ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ։ Փոխան ծաղիկի նուէրները թարեսիրական հաստատութեանց։*

*Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։*

**ՅՈՒՇԱՏԵՏՐ**

*ԿԱՊՈՑ ՄԱՋի փարիզեան շրջանի միջմասնաճիւղային ժողովը Ուրբաթ, Յունիս 4, ժամը 20·30–ին Փարիզի Հայ Մշակոյթի Տունը*

17, rue Bleue — 75009 PARIS

*Բոլոր ընկերուհիներուն ներկայութիւնը անհրաժեշտ է։*

**Ա·Բ·Ը·Մ·**

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն*

***Թատերական ցերեկոյթ***

*ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 5, ժամը 17–ին*

*Մասնակցութեամբ՝*
*Միօրեայ Վարժարանի աշակերտներու*
*եւ*
*Հ·Բ·Ը·Մ·–ի Թատերական խումբի*
*Մուտքը 30 Ֆրանք։*

*
**

*ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 12, ժամը 15–ին*

*Հ·Բ·Ը·Մ·–ի Միօրեայ Վարժարանի*

***Հանդէս***

*– ԵՐԳ*
*– ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ*
*– ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ*

*Մուտքը ազատ է։*

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, rue de Courcelles — Paris 17e
*— Métro: Courcelles —*
Tél. : 01. 42. 27. 12. 26

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ**

երկուշաբթի, Մայիս 31

Տօն Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց

*Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։*
*Կը պատարագէ՝*
ՆԵՐՍԵՀ Ծ. ՎՐԴ. ԲԱՊՈՒՃԵԱՆ

**Ս. ԹԱԴԷՈՍ-ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

**ՍԷՆԹ՝ ԱՆԹՈՒԱՆ ՄԱՐՍԷԼ**

## ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՕԾՄԱՆ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

*Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ կը պատարագէ եւ կը քարոզէ՝*
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԼԷՃԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 6

*Սկիզբ ժամերգութեանց ժամը 9–ին։*
*Պատարագ ժամը 10–ին։*
*Յաւարտ պատարագի՝*
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱՇ
*Պատուոյ նախագահութեամբ՝*
ՏԻՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՊԱՅԵԱՆԻ
Ատենապետ Երջանկայիշ Խորհուրդի
*Ճաշը կը պատրաստուի Լ'Հերմիթաժ Հաչարանին մէջ։*
*Հեռաձայն. –*
04 – 91 – 65 – 56 – 75
*Ապահովեցէք ձեր տեղերը։*

**EREVAN**

**2 vols directs hebdomadaires en Airbus A310 de la compagnie ARMENIAN AIRLINES**

**Départ Paris 2690 F**
**Départ Province 2800 F**

**Renseignements & inscriptions :**

**SEVAN VOYAGES**
**48, Cours de la Liberté — 69003 LYON**
**Tél. : 04. 78. 60. 13. 66;**
**Fax : 04. 78. 60. 92. 26.**

**SABERATOURS**
**19, rue Saint-Roch — 75001 PARIS**
**Tél. : 01. 42. 96. 10. 10;**
**Fax : 01. 42. 96. 18. 77**

# Roma – Armenia

**Catalogue sous la direction de Claude MUTAFIAN**

Edition de Luca

(Exposition Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, jusqu'au 16 juillet)

Edition en langue française disponible

à la **Librairie H. SAMUELIAN :**
51, rue Monsieur-le-Prince — 75006 PARIS

Prix 295 F + Frais de port.

**Մայրերու Օր**

*Մարսէյլի Կապոյտ Խաչի Սօսէ Մայրիկ մատնահիւզի կարմակերպութեամբ Շաբաթ, Յունիս 5–ին, ժամը 15–ին, Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Վան Շանթ» սրահին մէջ։*
*Կը բանախօսէ՝*
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՅՈՎՆԱՆՆԵԱՆ
*Հիւրասիրութիւն, գեղարուեստական յայտագիրը։*

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ**

*ՄԱՐՍԷՅԼ. – Հայ Մշակոյթի Տան տարեկան հացկերոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիս 26–ին։*

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
SIRET : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935




**150 Ancienne route de Beaujeu - GLEIZE BP 421**
**69653 Villefranche sur Saône**
**Tél : 04 74 62 47 00 - Fax : 04 74 68 20 09**

CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE

## Séjour à l'étranger

**ETATS-UNIS : Côte Est (camp Haïastan)**

- Du 11 juillet au 25 juillet
  Prix de la pension : 795 USD + voyage + argent de poche
- Du 25 juillet au 8 août
  Prix de la pension : 795 USD + voyage + argent de poche
- Du 8 août au 22 août
  Prix de la pension : 675 USD + voyage + argent de poche

**ETATS-UNIS : Côte Ouest (camp AYF)**

- Du 1er août au 15 août
  Prix de la pension : 600 USD + voyage + argent de poche

**Ces séjours s'adressent aux adolescents de 11 à 15 ans.**
Pour toute inscription, s'adresser au Conseil d'Administration au :
**01. 48. 24. 46. 57.**
**Date limite : 10 juin**
**ATTENTION : Places limitées.**

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES

## PÈLERINAGE EN ARMÉNIE

**A L'OCCASION DE LA VISITE HISTORIQUE DU PAPE JEAN-PAUL II**
**LES 2, 3 ET 4 JUILLET**

**Programme:** Participation à toutes les cérémonies. Visite aux lieux saints les plus importants de l'Arménie chrétienne : Khor Virab, St. Etchmiadzine, Ste Hripsimé, Ste Gayané, Haghpat, Odzoun, Sanahine, Noravank, Guéghart, Erevan, Gumri, Garni, Dilidjan, Guétharis, Sevan, Dzaghgatsor.
**Date : VOYAGE DU 1er AU 8 JUILLET**
**Conditions** : Tous frais inclus (sauf visa et taxe d'aéroport à Erevan)
**7 200 F** depuis Paris et la Région Parisienne
**7 400 F** depuis la Province (Lyon, Marseille, Nice)
**Renseignements et inscriptions :**
Par téléphone : **01 40 51 11 90** / **01 44 59 23 50** (de 9h à 18h).
**Les inscriptions seront closes le 10 juin.**

*ՀՄՄ*
*Հայ Մարմնամարզական Միութիւն*

*ԿԱՅԾ*
*Նոր Սերունդ Մշակ. Միութիւն*

*կը կազմակերպեն*

## ՃԱՇ — ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

*Հովանաւորութեամբ՝*
Հայաստանի Դեսպան
ՏԷր եւ Տիկին ԵԴՈՒԱՐԴ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ–ի

*մասնակցութեամբ՝* հանրածանօթ երգիչ
*ԱՏԻՍ ՀԱՐՄԱՆՏԵԱՆ–ի եւ իր նուագախումբին*

ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 19, ժամը 20·30–էն սկսեալ
*PALAIS DES ARTS ET DES CONGRES D'ISSY* (P A C I)
25, avenue Victor Cresson — ISSY-LES-MOULINEAUX

*մասնակցութեամբ նաեւ*
*HARIS LASKARIS–ի (երգիչ) եւ MIKAELIS–ի (bouzoukiste)*

*Օրուան վիճակահանութեան գլխաւոր նուէրն է*
ՓԱՐԻԶ / ԵՐԵԻԱՆ / ՓԱՐԻԶ օդանաւի տոմս մը

*Տեղերը ապահովելու համար դիմել՝*
01 43 78 93 25 / 01 48 78 88 70 / 01 46 45 16 43 թիւերուն։